

ԷՍՄԱ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



# ՄԿՐՏԻՉ ԽՐԻՍՏԱՆ

Յասարակական-քաղաքական  
գործունեությունը

9(47,925)

3-75

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿADEMԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

ԵՄԱՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

34/28/1

# ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄՅԱՆ

Հասարակական-քաղաքական  
գործունեությունը



ԵՐԵՎԱՆ 2000



ԴՏԴ 941 (479.25)  
ԳՄԴ 63.3 (2 Դ)  
Խ 912 կ

Նվիրում եմ ծնողներին՝  
Հեղիսն և Աշուր  
Կոստանդյանների  
պայծառ հիշապակին

Կոստանդյան Էմնա  
Խ 912 կ Սկրտիչ Խրիմյան: Դասարական-քաղաքական գործունեությունը. -  
Եր.: Զանգակ-97, 2000. - 448 էջ:

Գիրքը տպագրվում է  
ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի  
գիտխորհրդի որոշմամբ

Աշխատությունը նվիրված է 19-րդ դարի երկրորդ կեսի հայ հասարակական-քա-  
ղաքական, գրական-իմաստափրական, հոգևոր ականավոր գործիք. Ամենայն հայոց  
կաթողիկոս Սկրտիչ Ա Վանեցու (Սկրտիչ Խրիմյանի) կամ Ամենայն հայոց հայրիկի.  
Գործունեության ընթացանը:

Դայաստանի Դանքապետության և Ուսաստանի Դաշնության տարբեր արխիվ-  
ներից հայտնաբերված վավերագրերի, ժամանակի մասնվարձությունների և  
պատմագիտական գրականության հիմնա վրա լուսաբանված են Սկրտիչ Խրիմյանի  
կանքի և գործունեության շրջափուլերը, բացահայտված են առաջնա ու դերը հայկա-  
կան հայոց արձարձան, 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի ազգային-ազա-  
տագրական շարժմանների մեջ:  
Սկրտիչ Խրիմյանի ծննդյան 180 ամյակի առթիվ (ապրիլի 4, 2000 թ.) այն լավ  
նվեր է ընթերցող հասարակայնությանը:  
Նախատեսված է պատմաբանների, բանասերների և ընթերցող լայն շրջանների  
համար:

Խ 0503020913  
0003(01)-2000 - 2000 թ.

ISBN 99930 - 2 - 098 - 2

© «Զանգակ-97» հրատ.  
© Ե. Կոստանդյան


ԳՄԴ 63.3 (2 Դ)



Հովանավորությամբ պրն Գէորգ Աթընըզեանի

Ի լիշտակ իր հանգուցեալ տիկնոջը ժընեւ Մարիամ  
Ի գաւակունց Լինուա և Սարւէն Աթընըզեաններու

Շեղինակը խորին շնորհակալություն է հայտնում  
Խարօքարժան հովանավորին



## Ներածություն

19-րդ դարի հայ հասարակական կյանքն ու միտքը տվել է բազմաթիվ ականավոր դեմքեր, ժողովրդանվեր գործիչներ: Դրանց շարքում արժանավոր տեղ ունեն 60-ականների նշանավոր սերունդն ի դեմս Ստ. Նազարյանցի և Մ. Նալբանդյանի, որոնք քննարկում էին իրենց ժամանակի հայ հասարակական կյանքը հուզող բազմաթիվ խնդիրներ: Նալբանդյանն իր գործունեությամբ իրար շաղկապեց մեր ժողովրդի արևելահայ և արևմտահայ հատկածները, տարբեր գաղթօջախներ և հայ հասարակական միտքը բարձրացրեց ռուսական հեղափոխական դեմոկրատիայի մտքի աստիճանին: Պատահական չէ, որ ուսումնասիրողներն այդ ժամանակն անվանում են նրա անունով՝ Նալբանդյանը և նրա ժամանակը:

19-րդ դարի արևմտահայ իրականությունը տվեց մի գործիչ, որը դուրս գալով բուն Արևմտյան Դայաստանից, այն կապեց արևմտահայ մշակութային կենտրոն Կ.Պոլսի հետ, ապա իրար շաղկապեց Արևմտյան Դայաստանի հայաբնակ ամենամեծ նահանգները՝ Վասպուրականն ու Տարոնը: Եղավ Արևմտյան Դայաստանի առաջին պարբերականի՝ «Արծուի Վասպուրականի» խնճագիրը, արևմտահայ գյուղացուն և արհեստավորին հաղորդակցեց գուտտենբերգյան հրաշագործության հետ, մեծ դեր կատարեց արևմտահայության աշխատավոր զանգվածների նարդկային արժանապատվության, ազգային ինքնագիտակցության զգացումներն արմատավորելու գործում: «Առաջին արեղան էր, որ դարձավ պուրիցիստ, իրապարակախոս, առաջին վարդապետն էր, որ մերժեց վանական ամուլ կյանքը և նվիրվեց իր բովանդակ էությամբ աշխատավոր ժողովրդին: Դայկական դեմոկրատիզմը - ռաճկավարական հոսանքը - չի ունեցել թերևս ավելի պերճ ու անաղարտ ներկայացուցիչ, ավելի հզոր ու համոզված ռահվիրա, քան այդ մոլորված արեղան»<sup>1</sup>: Կ.Պոլսի առաջին պատրիարքն էր

1. Մ. Վարանցյան, Հայկական շաբթան շախապատմանը. Ժնև, 1912, էջ 294:

նա, որ ներկայացնում էր ոչ թե Թուրքիայի ծովեզրյա քաղաքների համեմատաբար բարեկեցիկ հայության շահերը, այլ բուն Արևմտյան Հայաստանի հարստահարված ժողովրդի շահերը: Նրա պատրիարքության օրոք էր, որ Ազգային ժողովն առաջին անգամ իր քննարկումների առարկա դարձրեց գավառահայության հարստահարությունների խնդիրը: Երից իրավացի էր Միքայել Վարանդյանը, երբ զարմանում էր, թե «ինչպես տաճկահայոց ծխլված, մանրացած, տափակ միջավայրում և այն էլ այն ժամանակ կարողացավ ծնունդ առնել... այդ լեռը»<sup>1</sup>: Գուցե չափազանցված է այս արտահայտությունը, բայց և պատճառաբանված: Առանց կանոնավոր ուսման ու գիտության, բայց բնատուր ծիրքով և ուշիմությամբ, գեղեցիկ արտաքինով և առավել գեղեցիկ հոգեկան հարստությամբ,- նա իր մեջ անփոփում էր նախնական քրիստոնյայի բոլոր առավելությունները, սակայն նաև մերժում էր քրիստոնեության համակերպության քարոզը, խարազանում իր կարգակից հոգևորականներից «անհամյալք աղերին», ժողովրդի քրտինքը լափող ազգակից և այլազգի ցեցերին: Առաջին կաթողիկոսական թեկնածուն էր, որ ընտրվեց միաձայն՝ և աշխարհիկ, և հոգենոր պատգամավորների կողմից: Առաջին կաթողիկոսն էր, որ համարձակվեց չինազանդվել տիրող պետության՝ ցարիզմի, անձանք Նիկոլայ 2-րդի հրամանին՝ հայ եկեղեցու շարժական և անշարժ գույքը հարթունիս գրավելու մասին, իր թիկունքին ունենալով ազգային կուսակցությունների աջակցությունը, ընդառաջեց համաժողովրդական շարժմանն այդ անօրինականության դեմ:

Մեր ուսումնասիրության թեման է՝ «Ակրտիչ Խրիմյան. կյանքը և հասարակական-քաղաքական գործունեությունը (1820-1907թ.):»:

Աշխատության կատարման համար իինք են ծառայել մի շարք սկզբնաղյուրներ.

**Արխիվային վավերագրեր.** Դրանք պահպանվում են Հայաստանի և Ռուսաստանի տարրեր արխիվային հաստատություններում: Առանձնակի կարևորություն է ներկայացնում Եղիշե Զարենցի անվան Գրականության և Արվեստի թանգարանի արխիվը, որտեղ գտնվում են Սկրտիչ Խրիմյանի, Գարեգին Սրբանձոյանցի, Գյուտ Աղանյանի, Թորոս Ազատյանի, Դ. Աղայանի, Գ. Խալաթյանի և բազմաթիվ այլ մշակութային գործիչների ֆոնդերը: Խրիմյանի ֆոնդում պահպանվում

1. Ա. Վարանյան, 62կ. աշխ., էջ 301:

## Ակրտիչ Խրիմյան. Հասարակական-քաղաքական գործունեությունը

են նրա հարյուրավոր նամակներն ուղղված արևելահայ, արևմտահայ և եվրոպական մշակութային, քաղաքական և հոգենոր գործիչներին: Արժե հիշատակել այդ գործիչներից մի քանիսի անունները. Ներսես Վարժապետյան, Մաղաքիա Օրնանյան, Խորեն Աշրգիան, Մատթեոս Իզմիրլյան, Երեմիա և Սեղրակ Տևանցներ, Բարդուղիմեոս Չամչյան, Խաչատուր Շիրոյան, Գրիգոր Աղվանյան, Գյուտ Աղանյան, Կարապետ Եզյան, Շովիաննես Մկրյան, Խահակ Թաճամշև, Ժամհարյան Եղբայրներ, Առաքել Ծատուրյան, Նոր Նախիջևանի քաղաքագլուխ Բալապանյան, Ղևոնդ Ալիշան, Արսեն Բագրատունի, Փանոս Թերլեմեզյան, Թենտրբերիի արքեպիսկոպոս, պատճառաբան-ճանապարհորդ Լինչ և շատ ու շատ այլ անձանց: Նրանց բոլորի անունների թվարկումը կիսի բազմաթիվ էջեր: Միայն Գարեգին Սրբանձոյանցի ֆոնդում գտնվում է Խրիմյանի ծեռքով գրված 269 նամակ ուղղված իր սանին և զինակցին՝ Գարեգին Սրբանձոյանցին: Իր հարստությամբ աչքի է ընկնում Թորոս Ազատյանի ֆոնդի 12-րդ բաժինը, ուր պահպան են Խրիմյանի և նրա եղբորորդի Խորեն Խրիմյանի նամակներն ուղղված 4.Պոլսի հոգևորական, հասարակական-մշակութային գործիչ Շովիաննես ավագ քահանա Մկրյանին: Դրանց մեծ մասը վերաբերում է Խրիմյանի կաթողիկոսական շրջանի գործունեությանը:

Բազմաթիվ արխիվային վավերագրեր են պահպանվում նաև Հայաստանի Հանրապետության Պատմության կենտրոնական Պետական արխիվի երկու ֆոնդերում՝ 56 և 57 (Կաթողիկոսական դիվան և Սինոդի օրագրություններ): Վավերագրերի գերակշռող մասը վերաբերում է Խրիմյանի կաթողիկոսական գործունեությանը: Դրանք Խրիմյանի ծեռքով գրված անձնական բնույթի և պաշտոնական փաստաթղթեր են՝ ուղղված Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին, Շեյխ-ուլ-խալամին, Ռուսաստանի ներքին և արտաքին գործերի նախարարներին և ցարական արքունիքի բազմաթիվ տարրաստիճան պաշտոնյաներին, պարսից շահին, հասարակական գործիչների և այլոց: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև նրան հասցեագրված նամակներն ու գրությունները: Խրիմյանի ֆոնդ գոյություն ունի նաև Հին ծեռագրերի ինստիտուտում՝ Մաշտոցի անվան Մատենադարանում, որտեղ իիմնականում պահպան են արևմտահայ գաղթականների նամակներն ուղղված ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանին՝ օգնություն ստանալու ակնկալիքներով:

Խրիմյանին վերաբերող արխիվային փաստաթղթեր են պահպան-

Վում նաև Մոսկվայում գտնվող Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվում (ՌԱՔՍ - Արխիվ Բնապահության քաղաքականության այսուհետև ԱԲՊԲ) Գլխավոր արխիվ, Թաղարխիվ, Դեսպանությունը Կ.Պոլսում ֆոնդերում: Այդտեղ են պահպանվում Խրիմյանի ծեռքով գրված նամակներ, ուղղված ռուսական ցարերին՝ Ալեքսանդր 2-րդին, Ալեքսանդր 3-րդին, Նիկոլայ 2-րդին և Կ.Պոլսի ռուսական դեսպան Եվգենի Լովիկովին, ցարական արքունիքի տարրեր բարձրաստիճան անծնավորությունների: Բազմաթիվ փաստաթղթեր իրենցից ներկայացնում են Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության տարրեր գալունի խորհրդականների, հյուպատոսների և փոխհյուպատոսների գրություններ, որոնք շոշափում են Խրիմյան հոգևոր առաջնորդի, Երուսաղեմի աքսորականի և Կաթողիկոսական թեկնածուի գործունեության հետաքրքիր դրվագները: Այդ փաստաթղթերը պարզաբանում են նաև քուրքական սուլթան Աբդուլ Համիդ 2-րդի վերաբերունքը Խրիմյանի նկատմամբ:

Խորհյանի մասին արխիվային փաստաթղթեր կան նաև Ռուսաստանի Կենտրոնական Պետական Ռազմա-պատմական արխիվի (Центральный Государственный Военно-Исторический Архив - аյսուհետև - ЦГВИА) թիվ 450 (Թուրքիա) ֆոնդում:

**Տպագիր սկզբնաղբյուրներ.** Արխիվային փաստաթղթերից բացի սկզբնաղբյուրի նշանակություն ունեն նաև արխիվային փաստաթղթերի ժողովածուները: Ուշագրավ է Գյուտ քահանա Աղանյանի հատարակած «Դիվան հայոց պատմության» ԺԳ (13) հատորը, որը կրում է «Հարստահարությունները Տաճկահայաստանում»<sup>1</sup> խորագիրը: Չնայած այն լույս է տեսել միայն 1915-ին, Թիֆլիսում, սակայն հատորի հրատարակության համար դեռ իր կենդանության օրոք Խրիմյանն էր ավագ քահանային ուղարկել Կ.Պոլիս<sup>2</sup>, քաջատեղյակ լինելով, որ իրեն վերաբերող փաստաթղթերի մեծ մասը պահպում էր իր աշակերտ, հանգուցյալ Գարեգին Մրվանձոյանցի մոտ: Նրա մահից անմիջապես հետո Խրիմյանը հրահանգում է Յովհաննես քահանա Մկրյանին հանգուցյալի սենյակից շտապով վերցնել իրեն, Վասպուրականին, Տարոնին և Յայկական հարցին վերաբերող փաստաթղթերը, պահպանել խնամքով, հարմար ժամանակ՝ իրեն վերադարձնելու համար: Կարողիկոս օծված Խրիմյանը հատուկ առաքելությանը

1. Դիվան Հայոց պատմության, հ. ԺՊ, Թիֆլիս, 1915թ.
2. ԳԱԹ, Գ. Աղանյանի ֆ., գ. 541-542

Մկրտիչ ԽՐԻՍՅԱՆ. Հասարակական-քաղաքական գործունեությունը

Կ.Պոլիս է ուղարկում Գյուտ Աղանյանին, որը տեղում վերցնելով փաստաթղթերի մեծ մասը, 1915թ. լուս է ընծայում իբրև Դիվանի ժահատոր<sup>1</sup>:

Խորիմյանի ճահվան կիսունամյակին Բուտոնուն հրատարակվեց «Ամենայն Դայոց Դայրիկ»<sup>2</sup> ժողովածուն, որի մեջ հեղինակային բազմաթիվ հոդվածների կողքին հրատարակիչ Քյուրոյանը գետեղել է Խորիմյանի ծեռքով գրված բազմաթիվ նամակներ, որոնց բնագրերը ինչինչ ուղիներով հասել են իր ծեռքը: Քյուրոյանն այդ նամակները հրատարակել է մեծ բարեխսղճությամբ, իբրև ժամորագրություն նկարագրված է ողջ փաստաթուղթը: Այդ նամակները վերաբերում են անցյալ դարի 60-ականների վերջերին, բացահայտում են Խորիմյանի գործունեության տարրոնյան, նախապատրիհարքյան շրջանը: Դրանք Խորիմյանի նամակներն են՝ ուղղված ժամանակի պատրիհարք Պողոս Թաքթաքյանին, ապա, նրա հրաժարականից հետո՝ պատրիհարքական տեղապահ Արիստակես Ռափայելյանին: Նամակների մի ժանրակչիոն մասն էլ վերաբերում է Խորիմյանի պատրիհարքական գործունեությանը:

Ժամանակաշրջանի պոլսահայ իրականության, Ազգային ժողովի գործունեության, Խրիմյանի պատրիարքական տարիների, ապա 1885-ից 90-ական թվականներին Ազգային ժողովում նրա ծավալած բուռն գործունեությունն են արտացոլում «Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ»<sup>3</sup> ստվարածավալ հատորները:

Ինքըստինքյան հասկանալի է, որ սկզբնաղբյուրներից առաջինը և գլխավորը Խրիմյանի հրապարակախոսական և գեղարվեստական ստեղծագործություններն են: Դրապարակախոսական հոդվածները սփռված են նրա կողմից խնբագրված «Արծուի Վասպուրական»<sup>4</sup> անսառույն:

Խրիմյանը թողել է հարուստ գրական ժառանգություն։ Դրանք

1. Գ. Արանցանցը այլ փաստաթղթերը երատարակի է անհարկի միջամտուրյանք. դրանք կրծապահմ են երեսն սկզբից, երեսն վերջից: Այլ երրակացուրյանը հանգեցինք, համեմատված ԳԱԱԾ-ի ֆանտեռտ պահևոյ ձևագրեքի հետ:

Ամենայն խալոց ես լիիկ, Պատրի, 1957թ.:

3. Ասենագրաբինը Ազգային ժողովը, Կ.Պոլիս, 1860-1870թ.: Ասենագրաբինը Ազգային ժողովը, Կ.Պոլիս, 1870-1874թ.: Ասենագրաբինը Ազգային ժողովը, Կ.Պոլիս, 1878թ.: Ասենագրաբինը Ազգային ժողովը, Կ.Պոլիս, 1886-88թ.: Ասենագրաբինը Ազգային ժողովը, Կ.Պոլիս, 1888-1890թ.: Ասենագրաբինը Ազգային ժողովը, Կ.Պոլիս, 1890-1896թ.:

4. Արծովի Վասպուրական, 1855-1864pp.

են՝ «Դրամիրակ Արարատեամ»<sup>1</sup>, «Դրամիրակ Երկրին Ավետեաց»<sup>2</sup>, «Մարգարիտ արքայութեան Երկնից»<sup>3</sup> «Դիսուսի վերջին շաբաթ և խաչի ճառ»<sup>4</sup>, «Ժամանակ և խորհուրդ իւր»<sup>5</sup>, «Վանգոյժ»<sup>6</sup>, «Դայգոյժ»<sup>7</sup>, «Դրամատի ընտանիք», (ընտանեկան խրատներ և ամուսնական հորդորներ հայրական)<sup>8</sup>, «Սիրաք և Սամվել» (Ազգային վեպ, բարի հոր կրթական դասեր)<sup>9</sup>, «Պապիկ և թոռնիկ» (Ազգային վեպ, մեծ հոր խրատները իր թոռնիկին)<sup>10</sup>, «Թագավորաց ժողով», Երգիծական քերթված<sup>11</sup>, «Վերջալուսի ծայներ»<sup>12</sup>, «Բարենորոգմանց ծրագիր»<sup>13</sup>:

Ազգբնադրյուրի նշանակությունը ունեն նաև Խրիմյանի կաթողիկոսության շրջանում «Արարատ»-ում լույս տեսած, նրա կողմից գրված բազմաթիվ կոնդակները՝ նվիրված որևէ կոնկրետ անձնավորության կամ պատմական իրադարձության<sup>14</sup>:

Վերը հիշատակված գործերով ամփոփվում են Խրիմյանի գործունեությունը լուսաբանող սկզբնադրյուրները:

**Դուշագրություններ.** Իր վայելած անսահման ժողովրդականության և ծավալած բարդ ու բազմարովանդակ գործունեության շնորհիվ Խրիմյանը դարձել է թե՛ իր ժամանակակիցների, և թե՛ հետագա գործիչների և ուսումնամիջունների ուշադրության առարկան: Ժամանակակիցները, որոնք շփվել են նրա հետ, իրենք էլ մասնակցել հայ հասարակական կյանքի որոշ իրադարձություններին, և այդ ժամանակ, և հետագայում գրել են աշխատություններ, որոնք մեծ չափով անդրադարձում են Խրիմյանի գործունեության որոշ ժամանակահատվածների: Այդ տեսակետից մեծ հետաքրքրություն են ներկայացնում վանեցի եպիսկոպոս, Խրիմյանի կարգակից «եղբայր» Երեմիա Տևկան-

1. Հրամիրակ Արարատեամ, Կ.Պոլիս, 1850ր.:

2. Հրամիրակ Երկրին Աւետեաց, Կ.Պոլիս, 1851ր.:

3. Մարգարիտ արքայութեան Երկնից, Կ.Պոլիս, 1866ր.:

4. Ցիսուսի վերջին շաբաթ և Խաչի ճառ, Կ.Պոլիս, 1876ր.:

5. Ժամանակ և խորհուրդ իւր, Կ.Պոլիս, 1876ր.:

6. Վանգոյժ, Կ.Պոլիս, 1877ր.:

7. Հայոյժ, Կ.Պոլիս, 1877ր.:

8. Դրամիսի ընտանիք, Կ.Պոլիս, 1876ր.:

9. Սիրաք և Սամվել, Կ.Պոլիս, 1878ր.:

10. Պապիկ և թոռնիկ, Էջմիածին, 1894ր.:

11. Թագավորաց ժամալի Էջմիածին, 1900ր.:

12. Վերջալուսի ծայներ, Էջմիածին, 1901ր.:

13. Բարենորոգմանց ծրագիր, Էջմիածին, 1909ր.:

14. Տե՛ս. Արարատ, 1893-1907ր.:

ցի «Տոհմային հիշատակարանների» ձեռագիր հատորները<sup>1</sup>, որոնք պահպում են Մաշտոցի անվան իին ձեռագրերի ինստիտուտում: Այդ հիշատակարաններում մեծ տեղ է տրված Խրիմյանի գործունեության տարրոնյան շրջանին, հակախրիմյանական խմբի ուժգին պայքարին, ուսւ-թուրքական պատերազմի ժամանակ և հետո՝ թուրքական կառավարության հակահայ քաղաքականությանը: Դիշատակարաններում մեծ տեղ է տրված հայ-թուրքական հարաբերություններին և կառավարության՝ այդ ուղղությամբ վարած քաղաքականությանը: Առանձնակի ուշադրություն է դարձված նաև Խրիմյանի՝ պատերազմից հետո Վանում ծավալած գործունեությանը: Իրենց նշանակությամբ ձեռագիր այդ հատորները կարող են դասվել սկզբնադրյուրների շարքը:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Վանի հասարակական և մշակութային գործիչ Համբարձում Երամյանի «Դուշագրծան Վան-Վասպուրականի» աշխատության առաջին հատորը<sup>2</sup>, որը ոչ միայն քննարկում է Վանի նահանգում կատարվող իրադարձությունները, այլև Խրիմյանի պատրիարքական քառամյա շրջանը, ապա նաև 80-ականներին Խրիմյանի ծավալած գործունեությունը: Առանձնապես ընդգծված է Խրիմյանի հոգածությունը Վանի մշակութային լուսավորական մարմինների նկատմամբ (Խնամատար, Սանդիխտյան իգական վարժարան, Ժառանգավորաց և Երկրագործական վարժարաններ): Երամյանի աշխատությունը կարծես լրացնում է անհրաժեշտ մանրամասներով վանեցի մի այլ հեղինակ՝ Ավետիս Թերգիպաշյանը, «Արծիվը իր բույնին մեջ»<sup>3</sup> պատկերավոր խորագիրը կրող գրքում, որը նվիրված է Խրիմյանի գործունեության համեմատաբար փոքր ժամանակահատվածի՝ 1879-ից, Խրիմյանի Վան վերադառնալուն և նրա առաջնորդական գործունեությանը, հրաժարականին և ապա աքսորին: Աշխատության մեջ լավ է բացահայտված Փորբուզայան և Խրիմյան - Կամսարական Եռյակ փոխհարաբերությունը և համեմատացիս գործակցությունը: Այդ Երկու աշխատությունների յուրօրինակ

1. Ա. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր N 4180, Երեմիա Տևկանց «Տոհմային կիշատակարաններ» 3-րդ և 4-րդ հասար, 1850-62րր., ձեռագիր N 4179, նոյմի 5-րդ և 6-րդ հասարները 1863-1866րր., ձեռագիր N 3721 նոյմի 7-րդ հ., 1866-1868րր., ձեռագիր N 4179, նոյմի 8-րդ հ., 1868-1872րր., և ձեռագիր N 4182, նոյմի 11-րդ հ., 1876-1880րր.:

2. Հ. Երամյան, Հուշագրան Վան Վասպուրականի, և. Ա. Ակերտանդիս, 1929ր.:

3. Ա. Թերգիպաշյան, Արձիվի իր բույնին մեջ, Փարիզ, 1938ր.:

լրացումն են դարձյալ վաճեցի Յարություն ճանկույլյանի «Դիշատակ-ներ հայկական ճգնաժամեն» գործի Ա, Բ, Գ մասերը<sup>1</sup>: Դեղինակը «Սև խաչ» գաղտնի կազմակերպության անդամ է, որը ծերբակալությունից խույս տալու նպատակով Վանից հեռանում է Կ.Պոլիս: Երեք մասերում էլ հետաքրքիր մանրամասներ կան Խրիմյանի՝ Վանի և ապա պոլիսյան շրջանի մասին: Լավ են տրված Խրիմյանի հարաբերությունները Արևմտյան Յայաստանի տարրեր ճահանգների գործիչների հետ: Թերևս կարելի է վիճարկել աշխատության խորագիրը՝ «հայկական ճգնաժամ» արտահայտությունը և տարակուսել, թե ինչպես և ինչու արևմտահայ ազատագրական պայքարի եռանդուն մասնակիցը (Գում Գափուի հայտնի ցույցի գլխավոր գործող անձը) այդ պայքարը և շարժումը բնութագրում է իրեւ ճգնաժամ: Վերոհիշյալ աշխատությունները շատ գծերով նման են իրար, պատճական լինելով հանդերձ, նրանք կրում են խիստ ընդգծված հուշագրական բնույթ: Չնայած սուրբեկութիվ նոտաներին, պատճական իրադարձությունները յուրովի մեկնարանելուն և որոշ փաստական անշտություններին, դրանք բոլորն էլ օգնում են Խրիմյանի գործունեության որոշակի շրջանները լուսաբանելուն:

Դուշագրական բնույթ է կրում նաև հնչակյան կուսակցության անդամ Ռուբեն Խանազատի «Դիշողություններ Խրիմյանի մասին»<sup>2</sup> աշխատությունը, որտեղ հեղինակը Խրիմյանին գնահատում է հակառակ դիրքերից: Ի հակադրություն Վարանդյանի, Գյուղալյանի, Գյուլխանդյանյանի և այլոց, որոնք Խրիմյանին համարում են 19-րդ դարի հայ ազգային-ազատագրական շարժման նախակարապետն ու կնքահայրը, Խանազատը բարեկամական հեգնանքով և հումորով է նկարագրում Խրիմյանի «հեղափոխականությունը»: Դա վերաբերում է Գում Գափուի ցույցի նախապատրաստական աշխատանքներին, Խրիմյանի նոտահոգությունները սպասվելիք արյունահեղությանը:

Յավաքչական և ինչ-որ չափով վերլուծական աշխատանք է կատարել Երվանդ Տեր-Սկրտիչյանն իր «Գանձեր Վասպուրականի»<sup>3</sup> ստվարածավալ հատորում, որտեղ քննարկվում են Խրիմյանի գործունեության տարրեր ժամանակահատվածները ոչ միայն իրեն նվիր-

## Մկրտիչ ԽՐԻՄՅԱՆ. Հասարակական-քաղաքական գործունեությունը

ված բաժնում, այլև հայտնի հակախրիմյանական թոլոզ վարժապետին (Դովիաննես Քոլոզյան), Գարեգին Մրվանծոյանցին, Արսեն Թոխմախյանին և Խրիմյանի հետ առնչություն ունեցած վաճեցի տարրեր հասարակական գործիչներին նվիրված բաժիններում: Այդ աշխատության մեջ կան բազմաթիվ փաստական անշտություններ և սխալներ<sup>4</sup>:

Խրիմյանի գործունեության շատ որոշակի և կոնկրետ շրջանի է վերաբերում Ազգային ժողովի երեսփոխան, Բեռլին մեկնած հայ պատվիրակության անդամ Ստեփան Փափազյանի «Պատգամավորի մը հուշատետրը»<sup>2</sup> հուշագրությունը, որն Արշակ Չոպանյանը հրատարակեց իր խմբագրությամբ Փարիզում լույս տեսնող «Անահիտ» ամսագրում: Այդ հուշերի հեղինակը քննադատում է Խրիմյանի բեռլինյան շրջանի գործունեությունն այն բանի համար, որ վերջինս խախտում էր Կ.Պոլսի պատրիարքի, անձանք Ներսես Վարժապետյանի հրահանգները և ցանկանում էր Բեռլին հրավիրել Նուբար փաշային բարեփոխումների իր ծրագիրը պաշտպանելու համար:

Խրիմյանի կապն արևմտահայ տարրեր գավառներում գործող գաղտնի ազատագրական կազմակերպությունների հետ արտացոլված է Յ. Նշլյանի «Առաջին կայծեր»<sup>3</sup> հուշագրական աշխատության մեջ: Դեղինակը Կարինի «Պաշտպան հայրենյաց» գաղտնի կազմակերպության Գերագույն խորհրդի անդամներից է: Իր և Խրիմյանի նամակներից բերված քաղվածքներով նա բացահայտում է Արևմտյան Յայաստանի տարրեր գավառների հասարակական գործիչների հետ ունեցած Խրիմյանի սերտ կապերն ու առնչությունները:

**Աշխատություններ. ճախախորհրդային շրջան.** 1884թ. արևմտահայ վիպագիր և հասարակական գործիչ Ծերենցը լույս ընծայեց մի փոքրիկ աշխատություն՝ «Կաբողիկոսություն և Խրիմյան»<sup>4</sup> խորագրով: Այն նպատակամոված էր համայն հայությանն ամբողջական պատկերացում տալ «Խրիմյան մարդու, խմբագրի, քարոզչի, առաջնորդի, պատրիարքի» ծավալած գործունեության մասին, որպեսզի գևորգ Դ-ի մահից հետո ի թիվս այլ հոգևորականների, կաթողիկո-

1. Հ. Շամկույս, Հիշատակներ ხայկական ճգնաժամն, մասն Ա, Բ, Գ, Կ.Պոլս, 1913թ.:  
2. Խան-Ազատ Ռ., Հիշողություններ Խրիմյանի մասին, Թիֆլիս, 1908թ.:  
3. Երվանդ Տեր-Սկրտիչյան, Գանձեր Վասպուրականի, Պոստն, 1966թ., Մ.Խրիմյանի բաժինը (այլ զբիթ էջ 164-229):

1. Խրիմյանի գործունեության վերաբերյալ բազմաթիվ սխալներ կան այլ աշխատության 178, 182, 188, 189, 196, 200 և այլ էջերում:

2. Անահիտ, 1906թ., թիվ 10-11-12 (Ստեփան Փափազյանի «Պատգամավորի մը հուշատետրը»):

3. Յ. Մ. Նշլյան, Առաջին կայծեր, Պայտարքի ասպարան, 1930թ.:

4. Ծերենց, Կաբողիկոսություն և Խրիմյան, Թիֆլիս, 1884թ.:

սական թեկնածու առաջադրված Խրիմյանն ստանար ողջ հայության համընդիանուր քվեն: Աշխատության մեջ բարձր գնահատականի է արժանացել մասնավորապես Խրիմյանի տարոնյան և պատրիարքական շրջանների գործունեությունը:

Խրիմյանի կենդանության օրոք լուս տեսավ նրա մասին գրված մի այլ աշխատություն, որը նվիրված էր Խրիմյանի գործունեության որոշակի և կարծ մի ժամանակահատվածի՝ նրա ընտրությանը իրեւ կաթողիկոս: Դա Համբարձում Առաքելյանի աշխատությունն էր<sup>1</sup>: Դեղինակն իրեւ պատգամավոր մասնակցել էր նրա ընտրությանը և «Մշակ» լրագրի 1892թ. 54, 55, 56, 57 թվերում գրել էր ընտրության համառոտ պատմությունը: «Այդ ընտրությունը հայ ազգի կյանքի մեջ մի խոշոր պատմական երևույթ լինելով ... նրա համար, որ նա համագային էր, որի նշանակության չափն ապագա պատմությունը կորոշ»: Դեղինակը թերթի հոդվածը որոշ հավելումներով և փոփոխություններով լուս ընծայեց այն «իրեւ նյութ ավանդելով ապագա պատմագրին»<sup>2</sup>: Աշխատության նախարանում հեղինակն անդրադառնում է ցարական կառավարության 1836-ին ընդունած «Պոլոյենի»-ից հետո կատարված կաթողիկոսական ընտրություններին, ապա հանգամանորեն շարադրում Խրիմյանի ընտրության մանրանասները:

Խրիմյանի կաթողիկոս ընտրվելուց անմիջապես հետո, չսպասելով նույնիսկ ցարի կողմից հաստատմանը, Մ. Ա. Գարբիելյանը հեռավոր Նյու Յորքում լուս ընծայեց «Խրիմյան Հայրիկ» աշխատությունը, որը ժամանակակցի հիացական ներքողն է իրօյա հոգևորականի, հասարակական բոլոր շերտերի համակրանքը վայելող գործիչի մասին<sup>3</sup>:

Խրիմյանի գործունեության առաջին գիտական գնահատականն է տրված Միքայել Վարանդյանի «Հայկական շարժման նախապատմությունը»<sup>4</sup> Երկիհատորանոց աշխատության մեջ, որի հիմնական նպատակն է պարզաբանել հայ ազգային-ազգատագրական պայքարի ակունքները: Քննարկելով Թուրքայի Եվրոպականանալու ճիգերը, թանգիմարյան շրջանը և սահմանադրական պայքարը, հեղինակը մեծ չափով անդրադառնում է Խրիմյանի՝ հայ գավառում ծավալած գոր-

1. Հ. Առաքելյան, Խրիմյան Հայրիկի կարողիկասական ընտրությունները, Թիֆլիս, 1893թ.:

2. Նայն տեղամաս, Նախարար:

3. Ա. Ա. Գարբիելյան, Խրիմյան Հայրիկ, Նյու-Յորք, 1892թ.:

4. Ա. Վարանդյան, Հայկական շարժման նախապատմությունը, Ժնև, 1912թ., Հ. 1, հ. 2:

ծունեությանը, Արևմտյան Հայաստանի տարածքի առաջին պարբերականի՝ «Արծուի Վասպուրականի» հրատարակությանը, խնճագրի հիմնադրած «Ժառանգավորաց» վարժարանի, նրա շրջանավարտների, այսինքն՝ հայր և ծագ արծիվների ծավալած գործունեությանը: 1-ին հատորի էջ 242-320 էջերը նվիրված են բացառապես Խրիմյանի գործունեության բացահայտմանը, իրեւ հայ դեմոկրատական մտքի կարկառուն ներկայացուցիչ, ողբից ու հառաջանքից մինչև բողոքի ու պայքարի հրավիրող ըմբռատ գործիչը՝ «այն ժամանակվա հայության խիորմը»: Համեմատելով Խրիմյանին Ալիշանի հետ, հեղինակը գերադասում է առաջինի գործունեությունը, «Նվազ բանաստեղծ, բայց ավելի ինքնատիպ ու խորունկ, ավելի հզոր մտայնությամբ ու պայքարով»: Նույն աշխատության 2-րդ հատորի մի ստվար բաժինը ևս նվիրված է Խրիմյանին, այս անգամ նրա խաղացած դերին Ազգային Սահմանադրության հաստատման մեջ<sup>5</sup>: Աշխատությունը գրված է Խրիմյանի նկատմամբ մեծ սիրով, հարգանքով և ակնածանքով: Նույն հեղինակի «Դայ Յեղափոխական Դաշնակցության պատմության»<sup>6</sup> առաջին հատորը փաստորեն նախկին աշխատության տրամաբանական շարունակությունն է: Աշխատության առաջին մասը դարձյալ նվիրված է Խրիմյանին, գնահատական է տրվում նրա գործունեությանը իրեւ հայ ազգային-ազգատագրական շարժման «ուժ-գաղափարի», «խթան-գաղափարի» ստեղծիչ: Ապա, ՀՅԴ-ի կազմավորումից տասներեք տարի անց, քննարկվում է այդ կուսակցության և Խրիմյանի մղած պայքարը ցարիզմի դեմ 1903թ. հունիսի 12-ի օրենքի կիրառման ժամանակ:

Խրիմյանի գործունեության մի քանի շրջաններ է քննարկում Սարուխանը «Հայկական խնդիրն և Ազգային Սահմանադրությունը Թուրքիայում»<sup>7</sup> գիտական արժեքավոր աշխատության մեջ: Խրիմյանի պատրիարքության, ոուս-թուրքական պատերազմի, Սան Ստեֆանոյի դաշնագրի նախապատրաստության, Խրիմյանի՝ Ազգային ժողովուն ծավալած եռանդուն գործունեության, հայ պատվիրակության՝ Եվրոպայում հայկական հարցը արժարժելուն, իմակերիալիստական պետությունների միջև եղած հակասությունների և հատկապես անզլո-

1. Ա. Վարանդյան, Հայկական շարժման նախապատմությունը, Ժնև, 1912թ., 2-րդ հ., էջ 39:

2. Ա. Վարանդյան, «Հ. Յ. Դաշնակցության պատմություն», 1-ին հ., Փարիզ, 1932թ.:

3. Սարուխան, Հայկական խնդիրն և Ազգային Սահմանադրությունը Թուրքիայում (1860-1910), Ա. Խատոր, Թիֆլիս, 1912թ.

ռուսական հականարտության քննարկմանն է նվիրված այդ աշխատությունը: Քննարկելով Բեռլինի վեհաժողովի ընթացքը, հեղինակը բարձր է գնահատում Խրիմյանի գործունեությունը, որ ժողովրդական նարդու հոտառությամբ իրավացիորեն հակված էր Նուբարի ծրագրի իրականացմանը:

Խրիմյանի գործունեության համարոտ, զուսպ ու ժլատ, բայց ամփոփ գնահատականն է տվել հայ եկեղեցու նշանավոր գործիչ Մաղաքիա Օրմանյանը «Ազգապատում»<sup>1</sup> կոթողային աշխատության Յոր հատորում: Աշխատության մեջ մեկնարաբանված են Խրիմյանի գործունեության համարյա բոլոր շրջանները՝ շաղկապատճեն հայ եկեղեցու պատճության հետ: Բացասական գնահատելով Խրիմյանի վարչական ունակությունները (որի հետ այնքան էլ համաձայն չենք), Օրմանյանը նշում է. «Անձ մը, որ մեծ գործեր արտադրած չեմ, որ հետևեն, մեծ հետք թողած չեմ ...և տակավին անբասիր մնացած է և համարձակածայն գովեստներով իշխատակված է»: Այդ առեղծվածին Օրմանյանը գտնում է ճիշտ պատասխան. «Ինքն գտիշն և ստեղծիչն եղած է ազգասիրական և հայրենասիրական զգացումներուն, որոնց մով ազգը տոգորվեցավ 50-60 տարիներեւ ի վեր ...և նոր առավելություն բերավ հայ տարրին վրա»<sup>2</sup>: Ինչպես ասում են, մեկնարանություններն ավելորդ են. այս տարողունակ գնահատականի մոտ խամրում են բոլոր բացանական հատկանիշները:

Խրիմյանի կապը հայ ազգային-ազատագրական շարժման հետ, ավելի ճիշտ, որպես այդ գաղափարի ստեղծիչ և իրական շարժման նախակարապետ թեզն է ապացուցում Գ.Գյոզալյանը «Դայ քաղաքական մտքի զարգացումը և ՀՅ Դաշնակցությունը»<sup>3</sup> աշխատության մեջ: Ենդինակը, վերլուծելով արևմտահայ իրականության քաղաքական կյանքի զարգացման տենդենցները, հանգում է այն ճիշտ եզրակացության, որ Կ.Պոլսի և արևմտահայ գավառների հասարական-քաղաքական կյանքի զարգացումն ընթանում էր տարբեր ուղղություններով. «Թրքահայ մտավորականության դեկավար շրջանակները մշակում են երկու գործելակերպ. խաղաղ, հառաջադիմական,

1. Մ. Օրմանյան, Ազգապատճ, հ. Գ, Երևանիմ, 1927թ., (Խրիմյանի մասին զբված է սկսած էջ 4167-5335-ը ընդմիջումներով):

2. Նային տեղամաս, էջ 5335 (Հայոցիկ կարելի է նշել, որ այլ հսկայածավալ աշխատության մեջ սպանել են վաստական որաշ անձնությաններ):

3. Գ. Գյոզալյան, Հայ բաղարական մարի զարգացումը և ՀՅ Դաշնակցությունը, Փարիզ, 1927թ.

որ ազգության ապագան տեսնում էր մշակութային ինքնագործունեության մեջ, ընթացական կամ Ռուսիանից<sup>4</sup>: Ամբողջ աշխատությունը շարադրված է այս երկու մտածելակերպի հակադրությամբ: Երկու գործելակերպի ներկայացուցիչները տարբեր էին և իրար անհաջորդակից թե ծագումով, թե դաստիարակությամբ և թե հասարակական աշխատանքի միջավայրով: Գավառը կարող էր ստեղծել միայն Խրիմյանին, Կ.Պոլսը՝ Օտյանին կամ Ռուսիանին»<sup>5</sup>: Ամբողջ աշխատությունը շարադրված է այս երկու մտածելակերպի հակադրությամբ, որի հետ համաձայնել չենք կարող: Խրիմյանի մոտ լուսավորական-մշակութային գործունեությունն ազգային-ազատագրական շարժման առաջին աստիճանն է, առանց որի անհնար է պատկերացնել ազատագրական շարժումը: Ինքը՝ Խրիմյանը, գործելով գավառում, սերտ հարաբերություններ է հաստատել Կ.Պոլսի սահմանադրականների հետ, մանավանդ՝ Գ.Օտյանի, որի առաջարկով էլ ընտրվեց Կ.Պոլսի պատրիարք: Խրիմյանի ուղին մինչև «Երկար շերեփի» գաղափարի հասունացումն անցնում էր այդ առաջին մտայնության ներկայացուցիչների հետ համագործակցված:

348/4

Տասնամյակներ անց Գյոզալյանը կրկին անդրադարձավ Մկրտիչ Խրիմյանին, այս անգամ նրան նվիրելով ամբողջ աշխատություն՝ «Խրիմյան հայրիկ» (Գաղափարների աշխարհը)<sup>6</sup>: Երկրորդ՝ բացատրող խորագիրը, ցույց է տալիս, որ ողջ աշխատությունը նվիրված է Խրիմյանի հայացքների վերլուծությանը: Այդ բոլորն արվում է, քննարկելով նրա գորական-գեղարվեստական, կրոնա-բարոյախոսական ստեղծագործությունները:

Դայ-քրդական հարաբերությունների տարբեր փուլերում հայ գործիչների՝ ճամանակիրապես Մ. Խրիմյանի ծավալած գործունեությանն է անդրադարձում Կարող Սասունին իր «Քյուլդերու և հայերու ազատագրական շարժման փուլերն ու անոնց փոխհարաբերությունները»<sup>7</sup> հոդվածաշարում: Այդ հոդվածաշարը լրացվեց և իրեւ աշխատություն լույս տեսավ «Քյուրդ ազգային շարժումները և հայ-քրդական հարաբերությունները (Ժե դարեն մինչև մեր օրերը)»<sup>8</sup> ընդիմանուր խո-

1. Գ. Գյոզալյան, Հայ բաղարական մտքի զարգացումը և ՀՅ Դաշնակցությունը, Փարիզ, 1927թ. էջ 68:

2. Գ. Գյոզալյան, Խրիմյան հայրիկ (Գաղափարների աշխարհը), Պեյքոր, 1954թ.:

3. Կ. Սասունի, Քյուրաքար և հայերու ազատագրական շարժմանները փալերը և անոնց փոխհարաբերությունները (առաջ, Հայքենիք, Բռնառն, 1929, Ն 1, 2, 1930, Ն 3, 4, 5, 6):

4. Կ.Սասունի, Ծարդ ազգային շարժմանները և հայ-քրդական հարաբերությունները (Ժե դարեն մինչև օրերը), Պեյքոր, 1969թ.:

ուագրով: Աշխատության երկու տարբերակներում էլ հեղինակը բացահայտում է Խրիմյանի գործունեության տարբեր ժամանակահատվածներում հայ-քրդական հարաբերությունների նկատմամբ ունեցած տարբեր վերաբերմունքը: Խրիմյանի գործունեության տարոնյան շրջանին է վերաբերում Կարո Սասունու «Պատմություն Տարոնի աշխարհի»<sup>1</sup> ստվարածավալ աշխատության մի ծանրակշիռ մասը, որտեղ հանգանանորեն լուսաբանվում է Խրիմյանի գործունեությունը Տարոնում իրեն Սր. Կարապետ Վանքի վանահայր և Տարոնի հոգևոր առաջնորդ: Վերոհիշյալ Վանքի միաբանության մղած պայքարը վաճահոր դեմ հեղինակը, մեր կարծիքով, մեկնաբանում է սխալ և միակողմանի: Չժխտելով այդ պայքարի տնտեսական բնույթը, հեղինակը նրան տալիս է տեղային բովանդակություն, ըստ որի, տարոնցիները, իբր, չեն հանդուրժում դավաճան Մերուժանի հայրենակից վասպուրականցի վանահորը:

Տարոնյան շրջանի Խրիմյանի գործունեությունն է լուսաբանվում նաև Սարգիս և Միսակ Բդյանների «Դարազատ պատմություն Տարոնո»<sup>2</sup> աշխատության առաջին մասում:

Միայն Խրիմյանին է վերաբերում Թորգոն Եպիսկոպոս Գուշակյանի (թ. Ե. Գ.) «Խրիմյան հայրիկ» (իր ծննդյան 100-ամյակի առթիվ)<sup>3</sup> գրված աշխատությունը: Առաջին բարձրաստիճան հոգևորականն էր, որ դրվատանքով է արտահայտվում Խրիմյանի մղած պայքարին հետադեմ կղերի դեմ՝ «ծովության և անհոգության վարշամակի մեջ» գտնվող այդ սքեմավորների դեմ, որոնք քանի անգամ «քսություններով և դավերով» Խրիմյանին մատնեցին բուրքական կառավարությանը: Աշխատության մեջ առավելապես լավ է լուսաբանված Խրիմյանի պատրիարքական շրջանի գործունեությունը:

Խրիմյանի հասարակական հայացքների քննարկմանն է նվիրված Ե. Ֆրանգյանի «Հայ միտքը. Խրիմյան Հայրիկ»<sup>4</sup> աշխատությունը: Շեղինակը զարգացնում է յուրօրինակ, ինքնատիպ միտք, Խրիմյանին

1. Կ. Սասունի, Պատմաբան Տարոնի աշխարհի, Պեյքար, 1957թ.: Այդ աշխատաբանը մեջ ենթանակը ակել է Սր. Կարապետում լոյս տեսած «Արձիվի Տարոն» երկշաբարաքերքի մի բանի համարների վերատպությունը. որոնք բացակայում են Հայաստանի Ազգային գրադարանի ֆանքի հումքածությունը:

2. Բդյան Միսակ, Բդյան Սարգիս, Հարազատ Պատմաբան Տարոն. Գափիրեն, 1962թ.:

3. Թ. Ե. Գ. «Խրիմյան Հայրիկ» (իր ծննդյան 100-ամյակի առթիվ), Փարթի, 1925թ.:

4. Նոյն տեղում, էջ 37:

5. Ե. Ֆրանգյան, Հայ միտք. Խրիմյան Հայրիկ, Գափիրեն, 1925թ.:

դիտարկելով իբրև «մտատիպար մի բարձր քահանայի», որի բերանով խոսում է «հայ կյանքի և իրականության, հայ ժողովրդի և պատմության իմաստությունը»<sup>1</sup>: Ծեշտը դնելով բացառապես նրա ստեղծած աշխատությունների կրոնա-քարոյախոսական, աշխարհայացքային հարցերի վրա, հեղինակը թյուրիմացություն է համարում Խրիմյանի վարչական-հասարակական գործունեության տարբեր շրջանները, մասնավորապես կաթողիկոսությունը. «Նրա կաթողիկոսությունը պիտի համարել մի թյուրիմացություն, մի վրիպում նրա կյանքում: Դրա մեջ չէր և այդտեղ չպետք է որոնել նրա մեծությունը, նրա հմայքը: Ընդհակառակը, կաթողիկոսանալով նա մի հայտնի չափով նվաստացավ որպես բարոյական հեղինակություն, որպես մտքի և հոգու մեծություն: Բնածին առաջքալը և գիտության դերվիշը ծնված չէր վարչական գործունեության համար»<sup>2</sup>: Անենկին չժխտելով Խրիմյանի գործունեության փիլիսոփայական (հեղինակի խոսքերով՝ իմաստափրական) երանցները, մենք համարձակում ենք չիամածայնվել հեղինակի հայտնած մտքերի հետ, մասնավորապես Խրիմյանի հասարակական գործունեության նկատմամբ:

Խրիմյանի հասարակական հայացքների վերլուծությունն է կատարվում նաև հանգուցյալ կաթողիկոս Վազգեն Ա-ի «Խրիմյան Հայրիկ» որպես դաստիարակ»<sup>3</sup> աշխատությունը գրված է 1943-ին, երբ հանգուցյալ հայրապետը դեռևս աշխարհական էր, չէր ընդունել կուսակրոնություն և կրում էր իր մկրտության անուն ազգանունը՝ Կարապետ Պալճյան: Աշխատության մեջ քննարկված են Խրիմյանի լուսավորական, ընկերային, իմաստափրական հայացքները: Վերլուծության են ենթարկվում Խրիմյանի ըմբռնումներն իսկական և կեղծ քաղաքակրթության մասին, նրա վերաբերմունքն իմապերիալիստական պետությունների վարած քաղաքականության նկատմամբ: Շեղինակի խոսքն ընդիմջվում է ընդարձակ մեջբերումներով, որը հնարավորություն է տալիս Խրիմյանի աշխատություններին անծանոթ ընթերցողին՝ լիովին պատկերացում կազմել նրա մասին: Իր գնահատականների մեջ Կարապետ Պալճյանը հասնում է չափազանցությունների (մեր կարծիքով). «Սխալած պիտի չըլլամք, եթե ըսենք, թե մեծագույն հեղափոխականը մեր մեջ Խրիմյան Հայրիկ

1. Ե. Ֆրանգյան, Հայ միտք. Խրիմյան Հայրիկ, Գափիրեն, 1925թ., էջ 5:

2. Նոյն տեղում, էջ 6-7:

3. Կարապետ Պալճյան, Խրիմյան Հայրիկ որպես դաստիարակ. Պարթի, 1943թ.:

կիանդիսանա, թե իր գրականությամբ, թե իր կենդանի խոսքով, թե իր գործով<sup>1</sup>: Յեղինակը բարձր է զնահատում Խրիմյանին որպես դաստիարակ, ուսուցիչ, մանկավարժ, որպես «հայր հայ, մանկավարժության»<sup>2</sup>:

Խրիմյանի գործունեության 80-ական թվականների վերլուծությունն է կատարում Ար. Գյուլխանդանյանը «Նոր կյանքի արշալույսին»<sup>3</sup> հոդվածաշարում, անդրադառնալով անցյալ դարի 80-ականների գաղափարական և հեղափոխական՝ ազգային-ազատագրական շարժումներին, տալով հայ քաղաքական նորի զարգացման շրջափուլերը և ազատագրական շարժումների սկզբնակետում ամենակարևորուն դեմք հաճարելով Խրիմյանին, իսկ «80-ական թվականները՝ մեր պատմության դարձակետ»:

Խրիմյանի արտակարգ ընդարձակ կենսագրությունն է տվել Հայկ Աճեմյանն իր «Դայոց հայրիկ»<sup>4</sup> երկիատոր աշխատության մեջ: Այն բաժանված է գլուխների ըստ Խրիմյանի ապրած տասնամյակների: Դրանք քննարկվում են ժամանակին լույս տեսած պարբերականների հոդվածներով, բնութագրվում են խրիմյանական և հակախրիմյանական խմբավորումները:

Խրիմյանի գործունեության համբամատչելի շարադրանքն է տվել Արշակ Չոպանյանը հայ գործիչների դիմապատկերների շարքում, ուր կենսագրական հիպանցիկ տեղեկություններից հետո, անցնում է նրա ստեղծագործությունների վերլուծությանը<sup>5</sup>:

Յուրօրինակ մեկնաբանություն է տալիս հայ ազատագրական շարժմանը և Խրիմյանի գործունեությանն Արտակ Դարբինյանը «Դայ ազատագրական շարժման օրերեն»<sup>6</sup> աշխատության մեջ, որը հիմնականում նվիրված է Արմենական կուսակցության ստեղծման պատմությանը: Իրեն դրան նախորդող շրջան պատմում է Խրիմյանի Վանում ժավալած գործունեության նաև 80-ական թթ., նրա և Փորուգալյանի հաճագործակցության նաև և հանգում ծիշտ եզրակացության. «Խրիմյան ասկե 40-50 տարի առաջ խորապես այն հա-

1. Կարապետ Պալճյան, Խրիմյան Հայրիկ որպես դաստիարակ, Պարբեր, 1943թ., էջ 12:
2. Նոյն տեղում, էջ 16:
3. Ար. Գյուլխանդանյան, Նոր կյանքի արշալույսին (Տես Հայրենիք, Բուստի, 1938, N 1, N 2 (մայմբեր, դեկտեմբեր):
4. Հայկ Աճեմյան, Հայոց Հայրիկ, Թափրիզ, 1929թ.:
5. Արշակ Չոպանյան, Դեմքը (Սկսախ Խրիմյան), Փարիզ, 1924թ.:
6. Արտակ Դարբինյան, Հայ ազատագրական շարժման օրերեն, Փարիզ, 1947թ.:

մոզման եկած էր, թե հայերը թուրքի մեջ ինքնապաշտպանության պետք է դիմեն ամեն բանն առաջ. ան ուզեց արթնցնել հայ ժողովորի ինքնագիտակցությունը, բայց նա բնավ չըսավ, թե փութեկոտությամբ, կուսակցական մրցակցությամբ և տղայական ցույցերով կարելի պիտի ուզա ժողովուրդն ապստամբության մղել»<sup>1</sup>: Միանգամայն ճշմարիտ այս զնահատականն առավելապես վերաբերում է Մկրտիչ Փորբուգալյանի ցուցանոլ և անհարկի արարքներին: Սակայն հեղինակը նրան դատապարտելու փոխարեն, նրա գովեն է անուն և տարբերակում մտցնելով արևնտահայերի և արևելահայերի միջև, քիչ անց ավելացնում, թե արմենականները պայքարում են «Կովկասից Վան մտած խակ, անձեռնահաս, ինքնամոլ, «գործիչների» արկածախմոյիր գործելակերպին դեմ»<sup>2</sup>: Մեզ թվում է, առանց անունները տալու, դա դաշնակցության գործիչների հասցեին շպրտված քար է:

1880-ական թվականներին հայ-քրդական դաշինք ստեղծելու ուղղությամբ Խրիմյանի ծավալած գործունեությունն է քննարկում Մ. Ավետյանը «Դայ ազգային ազատագրական հիմնամյա (1870-1920) Հուշամատյան և զորավար Անդրանիկ»<sup>3</sup> աշխատության մեջ:

1957-ին Խրիմյանի մահվան 50-ամյակի կապակցությամբ լույս տեսան արքեափսէկոպոս Սիոն Մանուկյանի<sup>4</sup> և Անդրանիկ Փոլաղյանի<sup>5</sup> աշխատությունները նրա մասին: Սիոն Մանուկյանը քննարկում է Խրիմյանի կյանքի տարբեր հատվածները, նրան ներկայացնելով իրուն «ուսուցիչ-դաստիարակ», վարդապետ, գավառի լուսավորիչ, ազգային գործիչ և հրապարակագիր, գրող-հեղինակ, պատրիարք Կ. Պոլստ և կաթողիկոս ամենայն հայոց»<sup>6</sup>: Երկրորդ հավուր պատշաճի գրված աշխատություն է և ոչ մի նոր փաստ չի ավելացնում Խրիմյանի գործունեության վերաբերյալ:

Այլ դիրքերից և այլ տեսանկյունից է գնահատվում Խրիմյանի գործունեությունն Արշակ Ավագյանից կողմից «Պատմություն Մալաթիո

1. Արտակ Դարբինյան, Հայ ազատագրական շարժման օրերեն, Փարիզ, 1947թ., էջ 106:
2. Նոյն տեղում, էջ 125:
3. Մ. Ավետյան, Հայ ազգային ազատագրական հիմնամյա (1870-1920) Հուշամատյան և զորավար Անդրանիկ, Փարիզ, 1954թ.:
4. Սիոն Մանուկյան, Հայոց հայրենիք (1820-1907) մահվան հիմնամյակին առիվ, Պատմաս-Այրևան, 1957թ.:
5. Անդրանիկ Փոլաղյան, Խրիմյան Հայրիկ, մահվան 50-րդ աարևիցի առիվ, Նյու-Յորք, 1957թ.:
6. Մ. Մանուկյան, նշվ. աշխ, էջ 6:

## ԵՄՍ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

հայոց»<sup>1</sup> ծավալուն աշխատության մեջ: Նրա մեջ սկզբից դրական է գնահատվում Խրիմյանի լուման մշակութային ասպարեզում, նշվում է, որ նրա «Ժառանգավորացի» սաները ողջ Արևմտյան Հայաստանում, ինչպես նաև Մալաթիայում, կատարում էին ժողովրդանպաստ գործունեություն<sup>2</sup>: Դրանից հետո միանգամայն աննպաստ կարծիք է հայտնում «հայ անփորձ վարիչների» (այսինքն՝ ազգի ղեկավարների) մասին: Քննարկելով Բեռլինի կոնգրեսի ընթացքը, քննադատուն է Ներսես Վարժապետյանին և Խրիմյանին. «Դայերը հաճապատասխան միջոցներ ծեռք չառան հանդարտեցնելու համար սուլթան Համիդի գայրույթը: Ընդհակառակը, զայն ավելի գրգռեցին սխալ ըմբռնված հայրենասիրությամբ: Կասկածի տակ դնել չեմ ուզեր այդ ծախող քայլ առնողները: Անոնցները ունաց հայրենասիրությունը և ազգասիրությունն ամեն տարակույն դուրս են, սակայն նույնպես անտարակուսելի են անոնց անգիտակցականությունը, համբակությունը, անխորհուրդ շրջահայեցությունը և անհեռատեսությունը: Այս միամիտներու և երազատեսներու գլուխն էր Խրիմյան, որ Հայաստանի իրական կացությունը ամենեն մոտեն տեղյակ եղող նարդերեն մեկը եղած էր, քայլ ինչպես կերևի, չի կրցած երկրին վիճակը և անոր մեջ հայոց դիրքը և մանավանդ ուժը հասկնալ և ըմբռնել»<sup>3</sup>: Մեկնաբանություններն ավելորդ են: Փաստորեն պատմաբանը ժխտում է ազգային ազատագրական շարժումը և պահարակում հայ գործիչներին սուլթանի գայրույթը գրգռելու համար:

Խրիմյանի գործունեությունն է լուսաբանում նաև արևմտահայ պատմաբան Լևոն Չորմիսյանը «Համապատկեր Արևմտահայոց մեկ դարու պատմության»<sup>4</sup> Բ հատորում: Բարձր է գնահատում Խրիմյանի և Սրբանձտյանի դերը Վասպուրականի և Տարոնի ազգային զարթոնքի մեջ, տեղի մյուս հայրենասեր գործիչները համարվում են Խրիմյանի հոգով ու շնչով սնված սերունդ: Այդ նույն աշխատությունը լի է հակասական մտքերով և եզրակացություններով: Սկզբուն տարրերակիում են գավառական ծագում ունեցող հոգևորականությունը և օսմանյան մայրաքաղաքի բարձրաստիճան հոգևորականությունը, իրավացիորեն նախապատվությունը տրվում է առաջին խնդիրն: Աշ-

1. Ա. Այսպայչյան, Պատմաբան Մալաթիա Խայր, Պեյքար, 1961թ.:

2. Նոյն աելում, էջ 700, 717, 813:

3. Նոյն աելում, էջ 851-852:

4. Լ. Չորմիսյան, Համապատկեր արևմտահայոց մեկ դարու պատմության, Բ Խայր, Պեյքար, 1974թ.:

## Մկրտիչ ԽՐԻՄՅԱՆ. Հասարակական-քաղաքական գործութեարյուն

խատության վերջում հեղինակը մեղադրանք է շպրտում ողջ հայ հոգեւորականության վրա և հանգում անընդունելի եզրակացությունների. «Դայ եկեղեցականներու քաղաքական կարճատեսությունը շատ սուղի նստեցավ հայության: Ասոնք դիրին հիմքերը թուրք պետության դեմ պայքարին, անզիջող դիրք նը գրավեցին, խուսափեցան թուրք վարիչներու հետ ուղղակի հարաբերություն մշակելե, կռվախնճորի մը վերածեցին 61-րդ հոդվածը, երբ կրնար նաև գործակցության միջոց նը դառնալ, ոչ թե գոհացուցիչ պայմաններ պատրաստելով կեղեքված բազմություններին, այլ գոնե պակասեցնելով կամ ջնջելով պատեհությունները կեղեքումներուն և հարատահարություններուն»<sup>1</sup>: Մեր կարծիքով դա հակագիտական թեզ է, որն այժմ օգտագործում են առավելապես թուրք պատմաբանները: Այդ մասին կիսումի համապատասխան տեղում: Այդ թեզին կարելի է պատասխանել «Դիվան Հայոց պատմության» ԺԳ հատորի կազմողի՝ ազգային-պահպանողականի պիտակով որակված Գյուտ Աղանյանցի «Երկու խոսք» առաջարանով. «Սիստեմատիկ սպանություն և թալան, խմբական բռնի կրոնափոխություն, իրավագրկություն, լլկանք, առևանգում և բռնաբարություն հրեշային չափերով, անարդար հարկահանություն, սրբապղծության ամենազայիր տեսակներ, հարստահարություն, գաղանություններ և ամեն տեսակ անլուր բարբարոսություն ոչ թե անհատական բացառիկ երևույթներ են եղել Տաճկաստանում հայերի վերաբերմանք, այլ ամենօրյա համաճարակներ»<sup>2</sup>: Կարելի է պատասխանել նաև Վարանդյանի 1912-ին գրված «Հայկական շարժման նախապատմությունը» աշխատության հետևյալ տողերով. «Գտնվեցան վերջին դժբախտ քանամյակում գրողներ, որոնք հանդեպ ներկայի՝ ներքողեցին ցավով ու ափսոսանքով հին բարի ժամանակը, նախահեղափոխական շրջանի բարիքները, թուրքական ռեժիմի քաղցրությունը, հայաստանյան մեղմ ու բարօր վիճակը ... Թող նրանք կարողան «Արծուի Վասպուրականին»: Թող նրանք կարդան Սրբանձտյանից ցնցող նկարագրությունը հայկական գավառների ամենօրյա կացության, այս անպաճույք տողերը, ուր տեսնում ենք մի ահավոր ու հրեշավոր դրամայի ներկայացում, մի դիվային չարչարանք, որին մատնված էր միլիոնավոր ժողովուրդը և որի մեջ նա անհույս, շղթայակիր գալարվում էր ու նեռնում ամեն օր և ամեն ժամ»<sup>3</sup>:

1. Լ. Չորմիսյան, Համապատկեր..., Բ Խայր, Պեյքար, 1974թ., էջ 415:

2. Դիվան Հայոց պատմության, Ա. ԺԳ, էջ 11:

3. Ա. Վարանդյան, Հայկական շարժման նախապատմությունը, էջ 307:

**ՈՌՍԱԼԵԳՈՒ ԱԺԽԱՍՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.** Խրիմյանի գործունեությանն անդրադարձել են նաև ռուսալեզու հեղինակները, դրանց թվում նաև այն օտարերկրյա ուսումնասիրուները, որոնց գործերը լույս են տեսել ռուսերեն: 1895-96թթ. թուրքական կառավարության կողմից Արևմտյան Հայաստանում սանձագերձված կոտորածները համաշխարհային առաջադիմ հասարակայնության մեջ առաջարին բողոքի և ցասումի ալիք: Եվրոպական երկրների մեծ մասում տեղի ունեցան ցույցեր, հանրահավաքներ, մեծ լսարան ընդգրկող հրապարակային դասախոսություններ, որոնց վարողները հայտնի գիտնականներ էին, մեծ հեղինակություններ: Ֆրանսիացի պատմաբան Ալբեր Վանդալը 1897թ.-ին լույս ընծայեց «Հայերը և թուրքական բարենորոգությունները»<sup>1</sup> աշխատությունը, որը 2-րդ հրատարակությամբ լույս տեսավ 1903թ., իսկ 1908-ին այն թարգմանվեց ռուսերեն և լույս տեսավ Սանկտ Պետերբուրգում: Թարգմանիչը հայ էր՝ Ալավերդյանց, որը հայկական բարենորոգությունների հարցը ռուս հասարակայնության ուշադրության կենտրոնում պահելու նպատակով թարգմանում է այս աշխատությունը, ուր քննադատվում է Թուրքիայում նոլեզնող «Վատթար ռեժիմն ու վարչությունը, որը կործանման է հասցել մի ողջ ժողովրդի: Կանխամտածված պարբերական կոտորածներ մի ողջ ժողովրդի, ահա մի տեսարան, որ մեզ է նատուցում Արևելքը երկու և կես տարվա ընթացքում»<sup>2</sup>: Աշխատության թարգմանիչն իր կողմից ավելացնում է ընդարձակ ծանոթագրություններ, որոնց հիմնական բովանդակությունը Խրիմյանի գործունեության գնահատականն է, անենայն հայոց կարողիկոսի վերջին ջանքերը Հայկական հարցի լուծման ուղղությամբ, 1907թ. Հայագա գործուղած նրա պատվիրակությանը: «Նա դիմում է ողջ քաղաքակիրք պետությունների արդարության ու մարդասիրության զգացումներին: Մի ոտքով կանգնած լինելով գերեզմանում, նորին սրբազնությունը չի ցանկանում հեռանալ այն աշխարհը՝ իր պարտքը չկատարած իր դժբախտ ժողովրդի առաջ»<sup>3</sup>: Ժլատ ու հաճառուտ այս խոսքերում արտահայտված է մտավորականության ներկայացուցիչների հարգանքը, Խրիմյանի վայելած մեծ ժողովրդականությունը:

1. Альбер Вандал, Армения и турецкие реформы, перевод с французского М. Я. Алавердянц, СПБ, 1908г.

2. Նոյն տեղում, էջ 5:

3. Նոյն տեղում, էջ 6:

1896թ. Մոսկվայում լույս տեսավ գիտական աշխատությունների մի ժողովածու՝ "Պոլոյն արման առ Թուրքիա ու առ այլ պետական մասնակիություններն ին գետեղել բելգիացի իրավագետ Ռուբեն Շեկմենը, ամերիկացի Ֆրեդերիկ Դեվիս Գրինը, իռլանդացի Էմիլ Դիլոնը (Խարկովի համալսարանի պրոֆեսոր), անգլիացի հոգևորական Մալկոլմ Մակկոլը և ուրիշներ: Գրքի խմբագիրն էր պրոֆեսոր Կամարովսկին: Հեղինակների և նրանց բարձրացրած հարցերի բազմազանության շնորհիվ գիրքն արագորեն սպառվեց, իսկ 1897-ին իրականացավ նրա երկրորդ, լրացակված հրատարակությունը: Գրքում կա երկու հավելված: առաջինը նվիրված է հայ առաջելական եկեղեցու հայրապետներին՝ սկսած Գրիգոր Լուսավորչից: Այդ հավելվածում զատ արժանապնդ գնահատվում է նաև ժամանակի կաթողիկոսը՝ Մկրտիչ Խրիմյանը, գործունեության ամփոփ գնահատականով և լուսանկարով: Երկրորդ հավելվածն ընդարձակ է և նվիրված է միայն Խրիմյանին, համառոտակի քննարկված նրա գործունեության բոլոր փուլերը: Առանձնակի սիրով է տրված պատրիարքական գործունեության գնահատականը. «Միշտ շիտակ, ուղղամիտ և արդարադատ, ժողովրդի շահերին նվիրված Խրիմյանը քայլվեց այս աշխարհի հզորների քաղաքական շահերին և ստիպված իրաժարական տվեց, արժանանալով նույնիսկ իր քաղաքական հակառակորդների խորը հարգանքին»<sup>2</sup>: Այդ հավելվածը ուս ընթերցողին մանրանասն ծանոթություն է տալիս Խրիմյանի և հոգևորական, և քաղաքական գործունեության մասին, նրա ժողովրդավարական գործելակերպի, Բ.Դուան կողմից կրած հալածանքների, Հայաստանի ապագայի և նրա հարատևության նկատմամբ ունեցած անխորտակ հավատի մասին: Այդ գործում է նաև Ֆրեդերիկ Դեվիս Գրինի հոդվածը, որտեղ հեղինակը պատմում է Խրիմյանի հետ ունեցած իր աննոռանակի հանդիպման մասին: Հեղինակը զարմանքով և հիացմունքով է գրում կաթողիկոսի անկուտրում հավատի և նրա՝ հանդիպման վերջում արտասանած խոսքերի մասին, որը մեջբերում է լատինական շրիֆտով՝ հուսահատելու չենք (Husahadely chenk) - նշելով, որ այդ խոսքերով կարող են առաջնորդվել բոլոր պայքարողները<sup>3</sup>:

1896 թվին դարձյալ Մոսկվայում լույս տեսավ «Բրատская помощь

1. Положение армян в Турции до вмешательства держав, Москва, 1896г.

2. Նոյն տեղում, էջ 120:

3. Նոյն տեղում, էջ 311:

пострадавшим в Турции армянам»<sup>1</sup> ստվարածավալ հաստործ, որը նույնպես ունեցավ երկրորդ իրատարակություն՝ 1898-ին: «Положение»-ի բոլոր հոդվածները և հավելվածները նտան այս ժողովածուի մեջ, հարստացվելով հայ գրականության, գիտության, արվեստի, պարբերական մանուլի վերաբերյալ ակնարկ-վերլուծումներով և հայ պոեզիայի ու արձակի լավագույն նմուշներով: Պարբերական մանուլը քննարկող հոդվածի հեղինակը հանգամանորեն անդրադառնում է Խրիմյանի հրապարակախոսական գործունեությանը, «Արծուի Վասպուրականի» ամսագրի հրատարակության պատմությանը, իրավացիորեն նշում է, որ Վերջինս և հրատարակիչ էր, և խնբագիր, և գրող, և քարոզիչ, և ուսուցիչ-մանկավարժ: Հեղինակի բարձր զնահատականին է արժանանում Խրիմյանի դաստիարակած սաների առաջին սերունդը, որոնք «հետագայում դարձան նշանավոր մարդիկ»<sup>2</sup>: Խրիմյանի վայելած մեջ հեղինակությունն է արձանագրում այն փաստը, որ այդ ժողովածուի 2-րդ բաժնում իրեն աշուղական երգ տրված էր նրան նվիրված «Դայրիկ, հայրիկ, քո հայրենիք» երգի ուսւերեն բարգմանությունը<sup>3</sup>:

Խրիմյանի գործունեությանը բավականին ընդարձակ անդրադառնում է ուսւ պատմաբան Ի. Ի. Գոլոբորոդկոն, Թուրքիային նվիրված իր արժեքավոր աշխատության մեջ<sup>4</sup>: Քննախույզ հայացք նետելով Թուրքիայում ապրող ազգությունների վրա, հեղինակը եզրակացնում է. «Օսմանյան կայսրությունում հայերն զբաղեցնում են աչքի ընկնեղ տեղ: Չին աշխարհի հնագույն ժողովուրդներից նեկը, հայերն իրենց պատմության ընթացքում ապրել են շատ ծանր շրջադարձեր. մեկ բարձրացել են ազգային հզորության և ծաղկումի գագաթը, մեկ էլ իշել այլազգի նվաճողների իրավագուրկի ստրուկների աստիճանին»<sup>5</sup>: Հեղինակը տալիս է կայսրության մեջ ապրող հայերի թվաքանակը, անդրադառնում նրանց տնտեսական, քաղաքական և իրավական կացությանը, մանրամասն քննարկում է հայոց Ազգային Սահմանադրության համար նղովող պայքարում տարբեր հասարակաշերտերի վերաբերմունքը: Այդ պայքարի մեջ հեղինակն առանձնակի տեղ է հատ-

1. Братская помощь пострадавшим в Турции армянам, Москва, 1896г., II-ое издание-1898г.

2. Նշվ. ժողովածում, էջ 601:

3. Նշվ. ժողովածում, 2-րդ բաժին, էջ 132-133:

4. И. И. Голобородко, Турция, 2-ое изд., Москва, 1908г.

5. Նայեն անդամն, էջ 218:

## Միրտիչ ԽՐԻՄՅԱՆ. Հասարակական-քաղաքական գործությունը

կացնում երիտասարդ դեմոկրատ մտավորականությանը, որոնց շարքում առաջինն ընդգծված է Խրիմյանի դերը: Վերլուծելով Ազգային ժողովի նիստերը, հեղինակը դիտողություն է անում նրա կազմի վերաբերյալ, նշում, որ 220 երեսփոխանների մեջ մասը Կ. Պոլսից էին և շատ քերն էին արևանտահայ գավառի ներկայացուցիչներ, այսինքն՝ իր համաձայնությունն է արտահայտում պատրիարք Խրիմյանի՝ սահմանադրության վերաբերնության համար ներկայացված պահանջին: Գոլոբորոդկուն քննարկում է նաև Խրիմյանի հրատարակած «Արծուի Վասպուրականի»-ն իրեւ արևանտահայ գավառի առաջին տպագիր օրգան, ապա անփոփում Խրիմյանի ողջ գործունությունը. «Մշակութային-ազգային շարժման գլուխ երկար ժամանակ կանգնած էր անձնուրաց Սկրտիչ Խրիմյանը, հետագայում պատրիարք, ապա կաթողիկոս անենայն հայոց: Նրա անունը կարմիր թելով անցնում է արթնացող Դայաստանի ողջ պատմության միջով»<sup>1</sup>: Գոլոբորոդկոյի այս աշխատությունը շահեկանորեն տարբերվում է խորհրդային շրջանի ռուս պատմաբաններ Երեմեկի<sup>2</sup> և Շերենետի<sup>3</sup> աշխատություններից, որովհետև Վերջիններս «դասակարգային նոտեցում» ցուցաբերելու հիվանդությանք արտակարգ հաճակրանքով են արտահայտվում «խեղճ թուրք ժողովրդի մասին», որը ոչ արհեստավոր է, ոչ առևտրական, որի վգին է ծանրանում զինվորական գործի լուծը»: Այստեղ արդեն մեկնաբանություններն ու բացատրություններն ավելորդ են: 1911թ. Մոսկվայում ռուսերեն լույս տեսավ Ալ. Զիվիլեգովի «Թուրքահայաստանի պատման»<sup>4</sup> աշխատությունը, որն սկսվում է հայկական հարցի սկզբնավորումով, Խրիմյանի դեկավարած պատվիրակության ծավալած գործունեության մանրամասն քննարկումով և դրան տրվում է համապատասխան գնահատական:

1996թ. Անկարայի համալսարանի «Օսմանյան պատմության հետախուզության կենտրոնը» լույս ընծայեց թուրք պատմաբան Էրդալ Իլտերի «Դայ Եկեղեցին և ահարեկչությունը»<sup>5</sup> 176 էջանոց աշխատությունը, որն աղավաղում է պատմական փաստերը, տարբերություն չի տեսնում Սան Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ և Բեռլինի վեհաժողովի

1. И. И. Голобородко, Турция, 2-ое изд., Москва, 1908г., стр. 232.

2. Д. Е. Еремеев, Этногенез турок, Москва, 1971г.

3. В. И. Шеремет, Османская империя и западная Европа вторая треть XIX в., Москва, 1986г.

4. Ал. Джиковегов, Будущее Турецкой Армении, Москва, 1911г.

5. Erdal Ilter, Ennenki kilesi ve teror, Ankara, 1996.

61-րդ հոդվածների միջև, խուսափում է բացահայտել հայ ազատագրական շարժումների պատճառները, այդ շարժումների սկզբնավորողը համարում հայ բարձրաստիճան հոգևորականությանը, ներկայացնում «Խրիմյան - Վարժապետյան - Իզմիրլյան եռյակ հրոսակապետությունը, որը պատճառ դարձավ հայկական հարցի արժարժան»: Այդ աշխատությունը գրախոսել է ֆրանսահայ անվանի պատմաբան Արթուր Պեյլերյանը «Թուրքական նոր տեսություններ հայկական հարցի մասին»<sup>1</sup> հոդվածով, որտեղ մեկ առ մեկ նշվում է երկու մասից բաղկացած այդ աշխատության բոլոր փաստական սխալները, քննադատում նտացածին եզրահանգումները: Գրախոսը գրքի հեղինակին անվանում է «հրծիգ պատմաբան, որը օսմանյան կառավարության և գավառներու պաշտոնյաներուն բիրտ վարչության գործելակերպ արդարացնելու համար երևակայական տվյալներ է ստեղծել»<sup>2</sup>: Թուրք պատմաբանը սխալ է ներկայացրել պատճառ-հետևանքային կապը և մեղադրել «օսմանյան դրախտի» մեջ ապրող հայ ժողովրդին ու բարձրաստիճան հոգևորականությանը, որ դարեր ի վեր «հավատարիմ հպատակ» լինելուց հետո հանդգնեց դիմել ազատագրական շարժումների: Դրան կարելի է պատասխանել նույն այդ թուրք պատմաբանի բնորոշմանը՝ «հեռատես և խելացի» հոգևորական Մաղաքիա Օրմանյանի խոսքերով, որ օսմանյան կառավարության վարած հայահալած քաղաքականությունը պատճառ եղավ, որ «խղճուկ աղաչավորը» (ինա-հայ ժողովորդը) դարձավ անհնագանդ և զենքի դիմեց:

**Խորհրդահայ պատմագիտություն.** Խորհրդահայ պատմագիտությունը Խրիմյանին անդրադարձավ բավականին ուշ: Թերևս բացառություն էր կազմում վաստակաշատ պատմաբան Լեոյի «Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը»<sup>3</sup> երկաստոր աշխատությունը, որում գիտնականը հետևելով Պոկրովսկու գոեհիկ-սոցիոգիական դպրոցին, նիհիլիստական վերաբերնունը է դրսնորում ազգային-ազատագրական շարժումների նկատմամբ, հասարակական բոլոր երևույթները մեկնաբանում դասակարգային տեսանկյունից: Այդ ուսումնասիրության մեջ Խրիմյանի գործունեության որոշ

1. Աքրար Պեյլերյան, Թուրքական նոր անսություններ և այլ հանդիսական հարցերի մասին (անս, Պատմա-բանասիրական հանդես, 1997թ., N 1, էջ 33-40):

2. Նշվ. աշխ., Պատմա-բանասիրական հանդես, 1997, N 1, էջ 35:

3. Լև, Թուրքահայ ենթափոխության գաղափարաբանությունը, հ. Ա, Փարլի, 1934, հ. Բ, Փարլի, 1935:

դրվագների նկատմամբ արտահայտած ընդունելի կարծիքներից բացի, ժողովրդական այդ գործիքը և արևմտահայ ողջ ազատագրական շարժումն արժանանում են բացասական գնահատականի, համարվում դրսից ներմուծված<sup>4</sup>:

Լեռյից հետո մի ժամանակահատված (քան տարի) խորհրդահայ պատմաբանները չանդրադարձան Խրիմյանի գործունեությանը: Դրա պատճառը ոչ թե նրա նկատմամբ ցուցաբերած անտարբերությունն էր, այլ տիրող ռեժիմը, որը չէր հանդուրժում ոչ հեռու անցյալի ազգային գործիքների, առավելապես հոգևորականների մասին դրական խոսքը: Ստալինի մահով փշրվեց լրության սարույցը: Ականավոր պատմաբան Աշոտ Չովիաննիսյանի «Նալբանդյանը և նրա ժամանակը»<sup>2</sup> կոթողային աշխատության առաջին հատորում քննարկվեցին Միքայել Նալբանդյանի առընչություններն արևմտահայ ազատագրական շարժման և սահմանադրական պայքարի գործիքների հետ, այդ ֆոնի վրա վերլուծվեց Մկրտիչ Խրիմյանի ծավալած գործունությունն արևմտահայ գավառում: Այդ աշխատության մեջ Խրիմյանը և նրա սան ու զինակից Գարեգին Մրվանձտյանը գնահատվում են որպես գավառահայ բուրժուազիայի «տեղական առևտորի և ապրանքայնացող գյուղատնտեսության պրոգրեսիվ մղումների» արտահայտիչներ: Խորին ակնածանքով վերաբերվելով անվանի գիտնականի գիտական ժառանգությանը, հանդգնում ենք չիամածանվել նրա այդ կարծիքի հետ: Խրիմյանը և Մրվանձտյանը, մեր կարծիքով, լայն դեմոկրատիայի շահերի արտահայտիչներն են<sup>3</sup>:

1955-ին լույս տեսավ Մկրտիչ Ներսիսյանի «Հայ ժողովրդի պայքարը թուրքական բռնապետության դեմ»<sup>4</sup> արժեքավոր աշխատությունը, որն (ինչպես ցույց է տալիս աշխատության խորագիրը) ամբողջությամբ նվիրված է 19-րդ դարի 2-րդ կեսի արևմտահայ ազգային

1. Զենք կարագ չիամածանել Խրիմյանի դլվանազնական գործունեաբայան մասին արտահայտած Լեոյի զննահատականի ներա, այն, որ հանձին նրա նվլուպական դլվանագնաների նեա պետք է բանակեցիք ժամանակը պարզ ու անխարդախ ներկայացնելով լրությունը, որը հույս ուներ բարե ազգերին հասականալի՝ «զայի լեզվավ» աշխատանքը կիանգեցներ դրական արվանքների. «Արտահայտած ճիշտ խոսքը պատկերացնելու համար հայ դլվանազնապորյանը, որ առաջին անգամ զնամ էր Եվրոպս թիսմարկների դոները ծեծելու»: (Տե՛ս ճշգ. աշխ., հ. Ա, էջ 85):

2. Աշ. Հայինանիսյան, Նալբանձտյանը և նրա ժամանակը, հ. 1, Ե., 1955թ.:

3. Այդ թեզը իիմնափարել ենք «Աշա Հայինանիսյանը և արևմտահայության պատմության մի բանի հարցեր» հաղլածում (անս, Լբաբեր հաս. զիտ., 1998, N 2, էջ 34-42):

4. Ա. Ներսիսյան, Հայ ժողովրդի պայքարը թուրքական բռնապետության դեմ, Երևան, 1955թ.:

ազատագրական շարժմանը, նրա գաղափարախոսությանը և գործիչներին: Այդ աշխատության մեջ Խրիմյանը, առավելապես նրա աշակերտ Գ. Սրբանձտյանցն արժանանուն են միանգամայն ճիշտ գնահատականի:

Դետաքրքրությունը Խրիմյանի գործունեության նկատմամբ շարունակվում է նաև հետագա տարիներին, երբ գիտնականը Խրիմյանի կողմից գրված փաստաթղթերը գետեղում է իր խմբագրությամբ լույս տեսած «Դայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում»<sup>1</sup> փաստաթղթերի ժողովածուի մեջ, ապա Ռուսաստանի Արտաքին քաղաքականության արխիվից հայտնաբերած Խրիմյանի մի այլ նամակ հրապարակում Պատմա-քանասիրական հանդեսում<sup>2</sup>:

Խրիմյանի և նրա աշակերտ Գ. Սրբանձտյանցի գործունեությունը քննարկվել է նաև Վ. Պարսամյանի «Դայ ժողովրդի պատմության» 3-րդ հատորում<sup>3</sup>. այդտեղ հեղինակը շեշտը դնում է հետադիմական ուժերի դեմ նրանց մղած պայքարի վրա:

Խրիմյանի գործունեության կաթողիկոսական շրջանին է անդրադեմ Դ. Մուրադյանը «Դայաստանը ռուսական առաջին ռևոլուցիայի տարիներին»<sup>4</sup> աշխատության մեջ: Դեղինակն իրավացիորեն ընդգծել է նրա «հնօրյա ժողովրդական գործիշ» լինելը և նրա տարբերությունը մյուս բարձրաստիճան հոգևորականներից: Ա. Համբարյանը «Ազրարային հարաբերությունները Արևմտյան Դայաստանում (1856-1914)»<sup>5</sup> աշխատության մեջ մեծապես օգտագործել է Խրիմյանի և Սրբանձտյանցի հայտնած հավաստի տեղեկությունները, գնահատել նրանց ժողովրդանվեր գործունեությունը «գավառ» հորջորջվող բուն Արևմտյան Դայաստանում: Նույն հեղինակի գրչին է պատկանում «Դայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին»<sup>6</sup> արժեքավոր աշխատությունը, ուր

1. Գеноցիդ արման в Османской империи, II-ое дополненное изд., под редакцией М. Г. Нерсисяна, Ереван, 1982г., стр. 13-14.

2. Ներսիսյան Մ.Գ., Խրիմյան Հայրիկի լիմանը Նիկոլայ 2-ին (1907) և արլիվային այլ նյութեր Հայութին և նայ կամավորների մասին (1913-1915թթ.), տես ՊԲՀ, 1994, N 1-2, էջ 165-166:

3. Հայ ժողովայի պատմություն, հ. III. (Վ. Պարսամյանի խմբ.), Երևան, 1967:

4. Գ. Ա. Մուրադյան, Հայաստանը ռասական առաջին մամլության տարիներին, Երևան, 1964թ.:

5. Ա. Ա. Համբարյան, Ազրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում, Երևան, 1965թ.:

6. Ա. Ա. Համբարյան, Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին, Երևան, 1990թ.:

հանգամանորեն քննարկվում է Խրիմյանի հայացքների աստիճանական զարգացումը:

Խրիմյանի պատրիարքական շրջանի և 80-ական թվականների գործունեության է անդրադարձել Ռաֆիկ Ջովհաննիսյանը «Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը (19-րդ դարի 70-80-ական թվականներ)՝<sup>7</sup> աշխատության մեջ, ուր հեղինակը բարձր է գնահատել պատրիարք Խրիմյանի ժողովրդավարական ընթացքը, արժեքավորել նրա պայքարը Կ. Պոլսի էֆենդիիական դասի դեմ:

Խրիմյանի գործունեությունը լուսաբանվել է նաև Յ. Ղազարյանի «Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870թթ.»<sup>8</sup> աշխատության մեջ, ուր հեղինակը Խրիմյանին և նրա սան Գարեգին Սրբանձտյանցին դասում է ազգային-պահպանողական հոսանքի գործիչների շարքում:<sup>9</sup> Դեղինակը և «նալին է խփում և մեխին», ընդգծում է նրանց առաջադիմական պայքարը, բայց նրանց ուսերին բողնում «պահպանողականության բեռը» (իր խոսքերով): Այս արտահայտությունն իր մեջ պարունակում է բացասական երանգավորում: Ժամանակակից հայ պատմաբանների կողմից ազգային պահպանողական հոսանքն արժանանում է դրական գնահատականի:

Խրիմյանի գործունեության կաթողիկոսական շրջանը մեծ շափով լուսաբանված է Վահե Երկանյանի «Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում (1870-1905)»<sup>10</sup> աշխատության մեջ, ուր հեղինակը քննարկում է 1894-ից սկսած Խրիմյանի ծավալած գործունեությունը, նրա պայքարը ցարական տարբեր մակարդակի աստիճանավորների դեմ ցարիզմի կողմից փակված հայկական դպրոցները վերաբացելու ուղղությամբ: Գնահատավոր է նաև Խրիմյանի դերը 1903թ. հունիսի 12-ի օրենքի դեմ հայ ժողովրդի մղած պայքարում:

Կաթողիկոս Խրիմյանի սերտ կապը հոչակավոր ծովանկարիչ Ջովհաննես Այվազովսկու հետ լուսաբանվել է պատմաբան Վ. Միքա-

1. Ռաֆիկ Հովհաննիսյան, Արևմտահայ ազգային-պահպանական շաբժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը (19-րդ դարի 70-80-ական թթ.), Երևան, 1965թ.: 2. Հ. Ղազարյան, Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870թթ., Երևան, 1967թ.:

3. Հեղինակը տեսակ շիմերով, որ Հ. Սփածյանը առանց նշելու հեղինակի իմբոնությունը «Ազգի Տարբանայուն» տպանական Սրբանձտյանի հոգվածների արտասարքը է Մերլիմ, խմբագրին ի վերաբարձր Սրբանձտյանի հոգվածը և դրանով բնորոշում Սփածյանին իրեն հեղափոխական-ցամանկարչությամբ:

4. Վահե Երկանյան, Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում, Երևան, 1970թ.:

## Եմա ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

յելյանի «Ղրիմի հայկական գաղութի պատմություն» (1801-1917թթ.)<sup>1</sup> աշխատության մեջ: Վեհափառի վայելած հեղինակության և ժողովրդականության մասին է վկայում անվանի նկարչի կողմից նրան երկու դիմանկարները կերտելու պարագան:

Խրիմյանի գործունեությանը որոշ չափով անդրադարձել է նաև Յ. Վարդանյանը «Արևմտահայերի ազատագրության հարցը և հայ հասարակական-քաղաքական հոսանքները 19-րդ դարի վերջին քառորդում»<sup>2</sup> աշխատության մեջ:

1976-ին լույս տեսավ. Ծ. Պ. Աղայանի «Դայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից»<sup>3</sup> ստվարածավալ աշխատությունը, որի երկրորդ գլխում հայկական հարցի քննարկման ժամանակ հեղինակն անդրադառնում է Եվրոպա մեկնած Խրիմյանի ղեկավարած պատվիրակության գործունեությանը և շեշտում «հայ կղերա-ամիրայական գործիչների անձարակությունը»<sup>4</sup>: Մեզ թվում է, տեղին չէ ժողովրդական գործչին տված նման գնահատականը: Աշխատության երրորդ գլխում հեղինակը, խոսելով արևմտահայության ռուսական կողմնորոշման մասին, վկայակոչում է վանեցիների՝ ռուսական ցարերի անունով ուղարկված խնդրագրերը (1880 և 1882 թվերին), առանց նշելու, որ դրանց հեղինակը Խրիմյանն է:

1981 թ. լույս տեսավ ՀՀ ԳՎԱ Պատմության ինստիտուտի հրատարակած «Դայ ժողովրդի պատմություն» բազմահատորյակի վեցերորդ հատորը<sup>5</sup>, որտեղ հայկական հարցը և ազատագրական շարժումները լուսաբանելու ընթացքում ըստ ամենայնի գնահատվում է Խրիմյանի դերը: Ի պատիվ հատորի հեղինակային կոլեկտիվի, լավ է լուսաբանվել նաև կաթողիկոս Խրիմյանի մղած պայքարը ցարական բյուրոկրատիայի դեմ 1903 թ. հունիսի 12-ի օրենքի գործադրման ժամանակը:

Մ. Միխիթարյանի «19-րդ դարի 2-րդ կեսի արևելահայ պարբերական մանուկի պատմությունից»<sup>6</sup> աշխատության մեջ լուսաբանված են Խրիմ-

1. Վ. Միքայելյան, Ղրիմի հայկական գաղութի պատմություն (1801-1917թթ.), Երևան, 1970թ.

2. Հ. Վարդանյան, Արևմտահայերի ազատագրության հարցը և հայ հասարակական-քաղաքան գույքի փաստական սխալները Խրիմյանի գործունեության մեջ տես

3. Ծ. Պ. Աղայան, Հայ ժարովով ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1976թ.:

4. Հայմ անդրուս, էջ 76:

5. Հայ ժարովով պատմության, հ. VI, Երևան, 1981թ.:

6. Մ. Միխիթարյան, 19-րդ դարի 2-րդ կեսի արևելահայ պարբերական մանուկի պատմությունից, Երևան, 1976թ.:

## Մերտիչ ԽՐԻՄՅԱՆ. Հասարակական-քաղաքական գործունեությունը

յանի լուսավորական գործունեության որոշ դրվագներ, ցույց տրված նրա կապը արևելահայ հասարակական գործիչների հետ: Մանրակրկիտ քննարկվում է 19-րդ դարի 2-րդ կեսի արևելահայ պարբերականների, մասնավորապես «Փորձի» և «Արձագանքի» վերաբերմունքը Խրիմյանի՝ 80-ական թվականներին ծավալած գործունեության, ինչպես նաև կաթողիկոսական շրջանի վերաբերյալ:

Խրիմյանի կապը նոր Նախիջևանի գաղութի հասարակական գործիչների հետ, նրա պայքարը ցարական կառավարության կողմից փակված դպրոցները վերաբացելու և դպրոցական կանոնադրություն ստեղծելու ուղղությամբ, դրանց հարակից այլ հարցեր քննարկվել են Վ. Բարիտուդարյանի «Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1861-1917թթ.)»<sup>1</sup> աշխատության մեջ:

Քանի որ Խրիմյանը եղել է Գ. Միքաննույնից ուսուցիչը, ապա նաև գինակիցը, վերջինիս գործունեության տարբեր շրջանները պայմանավորված են եղել ուսուցչի՝ արևմտահայ կյանքում տվյալ ժամանակ գրադեցրած դիրքով: Այդ պատճառով տողերիս հեղինակի «Գարեգին Մրվանձոյանց» (կյանքը և գործունեությունը)<sup>2</sup> աշխատության մեջ, թեև ոչ մանրամասներով տրված է նաև Խրիմյանի գործունեության համառոտ, բայց անփոփ գնահատականը, այն որ և՛ ուսուցիչը, և՛ սանն ու գինակիցը արևմտահայ ժողովրդական զանգվածների շահերի արտահայտիչներն էին:

Ուսու-թուրքական պատերազմի, Սան Ստեֆանոյի և Բեռլինի դաշնագրերի, այդ ընթացքում հայ գործիչների, նրանց շարքում նաև Խրիմյանի գործունեությունն է քննարկվում Զոն Կիրակոսյանի «Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը. 19-րդ դարի 70-ական թթ.»<sup>3</sup> և «Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը. 19-րդ դարի 80-ական թվականներ»<sup>4</sup> աշխատություններում:

Խրիմյանի գործունեության տարբեր շրջաններ են քննարկվել Հայկագ Պողոսյանի «Սասունի պատմություն»<sup>5</sup> և «Վասպուրականի պատմությունից. 1850-1900թթ.»<sup>6</sup> աշխատություններում:

1. Վ. Բարիտուդարյան, Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1861-1917թթ.), Երևան, 1985թ.:

2. Է. Կոստանդիան, Գարեգին Մրվանձայանց (կյանքը և գործունեությունը), Երևան, 1979թ.:

3. Զոն Կիրակոսյան, Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը. 19-րդ դ. 70-ական թթ., Երևան, 1978թ.:

4. Զոն Կիրակոսյան, Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը. 19-րդ դ. 80-ական թթ., Երևան, 1980թ.:

5. Հ. Պաղասյան, Սասունի պատմություն, Երևան, 1980թ.:

6. Հ. Պաղասյան, Վասպուրականի պատմություն, 1850-1900թթ., Երևան, 1988թ.:

Խրիմյանի գործունեության կաթողիկոսական շրջանն է բնութագրված Լիդա Գևորգյանի «Մոլոր» ամսագիրը<sup>1</sup> աշխատության մեջ: «Մոլոր» խմբագիր Արասխանյանը հայ հոգևորականի փայփայած իդեալը տեսնում էր Խրիմյանի մեջ և «առիթը բաց չէր թողնում նրան խնկարկելու», գտնելով, որ Խրիմյանը «միշտ հաճակրելի է եղել առաջադիմականներին»<sup>2</sup>: Այդ դիրքերից էլ գնահատվում են Խրիմյանի ջանքերը հոգևորականության կազմի վերափոխության մեջ: Նույն աշխատության մեջ այդ ամսագրի նոր շրջանը (խմբագիր՝ Լ. Սարգսյան) տրամադրության հակառակ մոտեցում է ցուցաբերում Խրիմյանի «Երկար շերեփի» քարոզի, զենք ու արյունով ազատության հասնելու քարոզի նկատմամբ, որակելով այն իրեն «խիզախ անմտություն, ազգակործան խաղ իրենի հետ»: Դասկանալի է, որ չենք կարող համաձայնել խմբագրի այդ կարծիքի հետ:

19-րդ դարի 2-րդ կեսի հայ ժողովրդի պատմության մեջ Խրիմյանի ունեցած մեծ դերի վկայությունն է այն փաստը, որ նրա պաշտպանությամբ հանդես է եկել Շաֆֆու նման մեծ հեղինակությունը, որը «Մշակի» էջերում բազմաթիվ հոդվածներով հանդես է գալիս հրաժարված պատրիարքի գործունեության բարձր գնահատումով և քննադատության սլաքներն է ուղղում Կ. Պոլսի Ազգային ժողովի՝ Քաղաքական ժողովի անդամների դեմ: Այդ հարցերն ու պայքարն իրենց արտացոլումն են գտել Լիդա Գևորգյանի «Գրիգոր Արծրունին և նրա «Մշակը»<sup>3</sup> աշխատության մեջ: Ինչպես նշում է հեղինակը, անվանի գրողը Խրիմյանի բարոյական պահվածքը արժեքավորելու համար չի գտնում այլ խոսք, քան «կոմունիստ» բառը, այն ամենահարմարը համարելով «անձնական շահը հասարակականին գոհող, վերջին կոպեկը կարույալին նվիրող, սեփականությունը արհանարիող ասկետ հոգևորականի համար»<sup>4</sup>:

«Զնյութնահայ պարբերական մամուլը» (1839-1860)<sup>5</sup> աշխատության մեջ Միքայել Դակորյանը քննարկում է Զնյութնիայի հետադիմական մամուլի օրգանների բացասական վերաբերմունքը Կ. Պոլսի Սպածյանի «Մեղուի» նկատմամբ այն բանի համար, որ վերջինս համարձակվել է հանդես գալ Մկրտիչ Խրիմյանի պաշտպանությամբ: Այդ

1. Լիդա Գևորգյան, «Մոլոր» ամսագիրը, Երևան, 1982ր.:

2. Նշվ. աշխ., էջ 172:

3. Լիդա Գևորգյան, Գիրգոր Արծրունին և նրա «Մշակը», Երևան, 1996ր.:

4. Նշվ. աշխ., էջ 219:

5. Ա. Ն. Հակոբյան, Զնյութնահայ պարբերական մամուլը, Երևան, 1984ր.:

աշխատության 2-րդ հատորը՝ «Զնյութնահայ պարբերական մամուլը (1861-1880)»<sup>1</sup> քննարկում է Զնյութնիայի դեմոկրատական մամուլի վերաբերմունքը Մկրտիչ Խրիմյանի ծավալած գործունեության նկատմամբ: Դրանցից աչքի է ընկնում Գրիգոր Զիլինկիրյանի «Ծաղիկը», որի էջերում լույս տեսած «Խրիմյան և վանորեից խորհուրդ», «Մշո խնդիր և Խրիմյան» և այլ բազմաթիվ հոդվածներ անարգանքի սյունին են գամում բոլոր նրանց, ովքեր «հանցագործ պայքար են ծավալում Խրիմյանի դեմ»: Դեղինակի կարծիքով Զիլինկիրյանի այս դիրքորոշումը «համընկնում է Նալբանդյանի այն վերաբերմունքին, որ դրսևորվեց «Ազգային թշվառությունում»:

Փաստորեն Խրիմյանը դառնում է այն նշանածողը, որի թշնամիներն ու բարեկամները որակավորվում են հետադիմական և առաջադիմական պիտակներով<sup>2</sup>:

Դայ ժողովրդի ազատագրական շարժման մեջ ունեցած Խրիմյանի մասնակցությանը և հայ-քրդական հարաբերություններում նրա խաղացած դերին է անդրադառնում Ս. Կ. Պողոսյանը «Գոյատևման պայքարի քառուղիներում»<sup>3</sup> ու «Բրդերը և հայկական հարցը»<sup>4</sup> աշխատություններում:

Խրիմյանի գործունեության պատրիարքական շրջանի գնահատականը առանձնապես լավ է տրված Ա. Ա. Խառատյանի «Արևմտահայ մամուլը և գրաքննությունը Օսմանյան Թուրքիայում»<sup>5</sup> և «Դասարակական միտքը Զնյութնիայի հայ պարբերական մամուլը (1840-1900)»<sup>6</sup> աշխատություններում: Առաջինի մեջ հստակորեն արտացոլված է պատրիարք Խրիմյանի ժողովրդավարական դիրքորոշումը, դեմոկրատական մամուլի պաշտպանությունը ժողովրդի ծոցից դուրս եկած և Ազգային ժողովում նրա շահերի արտահայտիչ պատրիարքին: Դակոր Պարոնյանի «Մեղուն», որը Յ. Սվաճյանի «Մեղուի» ավանդությունների շարունակողն էր, հայ էֆենդիների համար պայքարի շնորհիվ քանիցս դադարեցվում է օսմանյան գրաքննության կողմից պատ-

1. Ա. Ն. Հակոբյան, Զնյութնահայ պարբերական մամուլը (1861-1880), Երևան, 1987ր.:

2. Նոյեն տեղում, էջ 102:

3. Ա. Կ. Պողոսյան, Գոյատևման պայքարի բառությունը, Երևան, 1988ր.:

4. Ա. Ա. Պատոսյան, Քրդերը և Խայլբական հարցը, Երևան, 1991ր.:

5. Ա. Ա. Խառատյան, Արևմտահայ մամուլը և գրաքննությունը Օսմանյան Թուրքիայում, Երևան, 1989ր.:

6. Ա. Ա. Խառատյան, Հասարակական միտքը Զնյութնիայի հայ պարբերական մամուլը (1840-1900), Երևան, 1995ր.:

ոիարք Խրիմյանին պաշպանելու համար: Յակոբ Պարոնյանը և նրա խմբագրած «Մեղուն» արտահայտում էին արևմտահայ գավառի և Կ.Պոլսի աշխատավորության մղած պայքարը ամիրայական վերնախավի և իշխանամետ հոգևորականության դեմ հանուն հրաժարված պատրիարքի: Երկրորդ աշխատությունը Զմյուռնիայի հասարակական կյանքի ալեբախումների արտացոլումն է, որոնք յուրովի արծագանքում էին օսմանյան նայրաքաղաքի հայ հասարակական կյանքի խմբումներին: Այդ պայքարի բովում թրծվում էր տեղի՝ դեմոկրատ մտավորականությունը և արտահայտում Խրիմյան գործի և պատրիարքի նկատմամբ տածած մեծ հաճակրանքը: Այդ պայքարում էլ տարբերակվում էին հասարակական հոսանքների արտահայտիչ մամուլի զանազան օրգանները:

Խրիմյանի և Թումանյանի հարաբերություններն են լուսաբանված գրականագետ Լուսիկ Կարապետյանի «Դովիաննես Թումանյանի հասարակական գործունեությունը»<sup>1</sup> աշխատության առաջին գլխում, ուր արտահայտված է ամենայն հայոց բանաստեղծի անվերապահ հարգանքն ու խորը ակնածանքն ամենայն հայոց հայրապետի նկատմամբ, որը չփոխվեց նույնիսկ այն ժամանակ, եթե Թումանյանը որոշ հարցերում համաձայն չէր կաթողիկոսի դիրքորոշմանը: «Դայկական հարցը»<sup>2</sup> աշխատության մեջ Լենդրուշ Խուրշուդյանն անդրադարձել է Բեռլինի կոնգրեսին ներկայացած հայ պատվիրակությանը, ապա Մկրտիչ Խրիմյանի «Երկարե շերեփի» քարոզին, ժողովրդի՝ սեփական ուժերով ազատագրվելու գաղափարին, որպես ազատագրական շարժման նոր փուլի սկիզբ: Խրիմյանի բեռլինյան և կաթողիկոսական շրջանի որոշ փուլերն են քննարկված Դրաշչիկ Սիմոնյանի «Անդրանիկի ժամանակը»<sup>3</sup> Երկիատոր աշխատության առաջին հատորում: «Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը 1878թ. Բեռլինի վեհաժողովին նախորդող ժամանակաշրջանում»<sup>4</sup> և «Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը 1878թ. Բեռլինի վեհաժողովում»<sup>5</sup>

1. Լուսիկ Կարապետյան, Հովհաննես Թումանյանի հասարակական գործունեությունը, Երևան, 1992թ:

2. Լենդրուշ Խուրշույան, Հայկական հարցը, Երևան, 1995թ.:

3. Հրաչյակ Սիմոնյան, Ամբողջիկ ժամանակը, գիրք Ա, Երևան, 1996թ.:


4. Գ. Ա. Գալոյան, Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը 1878թ. Բեռլինի վեհաժողովին նախարդող ժամանակաշրջանում (առև. Լրաբեր հաս. գլխուրյանների, 1996, N 3):

5. Գ. Գալոյան, Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը 1878թ. Բեռլինի վեհաժողովում (առև. Լրաբեր, 1997, N 1):

հոդվածներում Գ. Ա. Գալոյանն անդրադառնում է նաև Մկրտիչ Խրիմյանի գործունեությանը համապատասխան ժամանակահատվածներում:

Նորայր Սարուխանյանի «Դայկական հարցը մինչխորհրդային հայ հասարակական քաղաքական մտքի և պատմագիտության մեջ»<sup>1</sup> աշխատությունը լուսաբանում է Մկրտիչ Խրիմյանի գործունեության որոշ փուլերը, նրա դերը հայկական հարցի արծարժման՝ մինչխորհրդային հասարակական մտքի և պատմաբանների գնահատության մեջ:

Ինչպես տեսանք, խորհրդային և հետխորհրդային պատմաբաններից ոչ մեկը դեռևս ամբողջական աշխատություն չի նվիրել Խրիմյանի կյանքին և հասարակական-քաղաքական, հոգևորական գործունեությանը, այլ անդրադարձել են նրան այնքան, ինչքան թույլ է տալիս իրենց հետազոտած թեմայի շրջանակները: Սփյուռքում լույս տեսած աշխատությունները, որոնք ամբողջությամբ վերաբերում են Խրիմյանին, գրված են բացառապես նրա ստեղծագործությունների հիմքի վրա, երբեմն օգտագործվել է նաև այնտեղ գտնվող արևմտահայ ճանուլի որոշ օրգաններ: Այդ հեղինակները հնարավորություն չեն ունեցել օգտագործել Հայաստանում գտնվող ողջ արխիվային հիմքը: Մեր աշխատության աղբյուրագիտական հիմքը և բազան հարուստ արխիվային վավերագրերն են, որոնք պահպանվում են ինչպես Երևանում, այնպես էլ Մոսկվայում: Կոնունիստական կուսակցության մենատիրության վերացումից հետո անհրաժեշտություն էր զգացվում նորովի գնահատել իր ժամանակաշրջանի ուշագրավ այդ ժողովրդական գործի կյանքն ու գործունեությունը, ցույց տալ նրա արժանավոր տեղը 19-րդ դարի Երկրորդ կեսի հայոց պատմության բարդ ու հակասական բավիրներում:



## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

# ՄԿՐՏԻՉ ԽՈՐԻՄՅԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ

19-րդ դարում Արևմտյան Դայաստանը շարունակում էր մնալ Օսմանյան կայսրության կազմում: Այն բաժանված էր 6 նահանգների, որոնք դարձին կեսին կոչվում էին Ելայեթներ, իսկ երկրորդ կեսից վերանվեցին Վիլայեթների կամ փաշայությունների: Դարկ է նշել, որ թուրքական արքունիքը 19-րդ դարի ընթացքում, առանձնապես երկրորդ կեսին անընդհատ փոփոխություններ էր մտցնում երկրի վարչական կազմի մեջ, նպատակ ունենալով փոխել Արևմտյան Դայաստանի ժողովրդագրական կազմը:

19-րդ դարի երկրորդ կեսին թուրքիայում դեռևս իշխողը ֆեոդալական-ավատատիրական հարաբերություններն էին: Երկիրը ֆեոդալական կապանքներից ազատելու, բուրժուականացնելու, եվրոպականացնելու ճիգերն էին արտահայտում 1839 և 1856 թթ. բարենորդումների և բարեփոխումների ծրագրերը, որոնք իրենց հռչական հենց առաջին օրերից դատապարտվեցին անիրագործելի մնալու: Թուրքական կայսրությունը կրոնի դոգմաների վրա հենված միապետություն էր, որի գոյության ու ամրության հիմքը Դուրանն ու Շարիաթի սկզբունքներն էին: Դրանց տրամադրուեն հակառակ էին «Դատտը Շերիֆի» և «Դատտը Դումայունի» հռչակած սկզբունքները, ըստ որոնց կայսրության բոլոր քաղաքացիներն իրավահակասար էին ճանաչվում պետության առաջ՝ անկախ լեզվի, ազգության և կրոնի, իրավունք էին ստանում ընդունվել պետական ծառայության, սովորել ուսումնական հաստատություններում և այլն: Քանի որ Շարիաթը հայտարարում էր, թե քրիստոնյան «գյավուր էր» և իրավունք չուներ դատարանում վկայություն տալ մուսուլմանի դեմ, հակասություն էր ստեղծվում մու-

## ԵՄՀԱ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

սուլմանական դոգմաների և մանիֆեստների հոչակած սկզբունքների միջև։ Այդ պատճառով էլ Թանգիմարի ծրագրերը մնացին թղթի վրա։ Սակայն թանգիմարյան շրջանն իր հետ բերեց արտաքուստ եվրոպական միտումներ։ Պետական ապարատում ստեղծվեցին նախառարություններ, նահանգների գինվորական կառավարիչների փոխարեն կազմվեցին քաղաքացիական մարմիններ, որոց միջոցառումներ նշակվեցին երկրի մշակութային կյանքի վերափոխման ուղղությամբ։ Չնայած ծեռնարկված միջոցառումներին, դրանք մնացին անիրագործելի, սակայն թանգիմարյան հովերի շորշովները թույլ տվեցին հապատակ ազգություններին, առավելապես քրիստոնյա համայնքներին, ստեղծել իրենց կանոնադրությունները, ներքին կանոններ նշակել, որոնց համաձայն, հպատակ քրիստոնյա ազգերը նախկինում տարբեր սուլթաններից ստացած արտոնագրերի հիման վրա կարգավորում էին իրենց հարաբերությունները պետության տարբեր մարմինների հետ և տվյալ ազգի ներսում։

Դարի երկրորդ կեսի արևմտահայ հասարակական կյանքն ալեկոծող երևույթներից ամենաուշագրավը սուլթանական նայրաքաղաքում Ազգային սահմանադրության համար մղվող երկարատև պայքարն էր, որն սկսվեց 50-ականների կեսից և ավարտին հասավ 1860-ին, ներկայացվելով սուլթանի հաստատման։ Երեք տարի շարունակ ձգձելով հաստատել այդ կանոնադրությունը, թուրքական արքունիքը շանադրաբար «թլփատեց» այն և միայն 1863-ին ներկայացրեց Կ.Պոլսի Շայոց Ազգային ժողովին։ Չնայած իր մեծադղորդ անվանը, արևմտահայերի Ազգային սահմանադրությունն իրական և իրավական ուժ չէր ներկայացնում, չէր ապահովում հայ ժողովրդի ազգային ու սոցիալական զարգացումը կայսրության սահմաններում և իր մեջ չէր պարունակում մի հոդված, որն ի վիճակի լիներ պաշտպանել հայ գյուղացու արդար վաստակը թուրք բեկերից ու թուրք հարկադրությունը դրական երևույթ էր։ նա ներկայացնում էր թուրքուականացող երիտասարդության պահանջները, պայքարում իր դարն ապրած ֆեռդալական, պատրիարքական և անիրայական դասի ոտնձգությունների դեմ, սահման էր դնում նրանց չարաշահումներին, պաշտպանում էսնաֆության՝ արիեստավոր դասի իրավունքները և տեղալիս նրան ազգային կյանքի դեկի մոտ։

Սահմանադրության ոգուն համապատասխան, Կ.Պոլսի հայոց պատ-

## ՄԼԻԹԻ ԽՐԻՄՅԱՆ. Հասարակական-քաղաքական գործունեությունը

րիարքը և նահանգներում տեղերի հոգևոր առաջնորդներն ընտրվում էին ժողովրդի կողմից հաստատված ժողովներում (Կ.Պոլսում՝ Ազգային ընդհանուր ժողով, տեղերում՝ գավառական ժողովներ)։ Դրանք վերահսկում էին պատրիարքի և հոգևոր առաջնորդների գործունեությունը, ընտրում ժողովրդական թեկնածուներին։ Սակայն Սահմանադրության սկզբունքները հաճախ մնում էին անիրագործելի։ Գավառներում տեղական հարստահարիչները միացած բարձրաստիճան հոգևորականության որոշ ներկայացուցիչների հետ, արգելակում էին սահմանադրության գործադրմանը։ Մինչև Սահմանադրության հոչակումն ու վավերացումը, ապա դրամից հետո մի տևական ժամանակահատված, Կ.Պոլսի հայոց պատրիարք էին ընտրվում թուրքիայի ծովեզրյա քաղաքների՝ Կ.Պոլսի և իզմիրի բարձրաստիճան հոգևորականության ներկայացուցիչները։ Կտրված Արևմտյան Շայաստանից, անտեղյակ գավառահայ ժողովրդի տառապանքներին ու կրած անլուր հարստահարություններին, նրանք արտահայտում էին այդ քաղաքների համեմատաբար ապահով հայ բնակչության շահերն ու ակնկալիքները։

1869թ. Կ.Պոլսի Ազգային ժողովում տեղեր գրաված բուժուական առաջավոր սկզբունքներ հետապնդող երիտասարդության ներկայացուցիչներն իրենց դեկավար Գրիգոր Օսյանի առաջարկով, Կ.Պոլսի պատրիարքական գահի թեկնածու առաջադրեցին և ընտրեցին՝ Արևմտյան Շայաստանի երկու հայաշատ նահանգներում՝ Վասպուրականում ու Տարոնում իր հասարակական գործունեությամբ ժողովրդի անվերապահ համակրանքը շահած մի գործի՝ Մկրտիչ Խրիմյանին։ Նրա անունն անբաժանելի միահյուսվեց 19-րդ դարում արևմտահայությանը հուզող բոլոր հրատապ խնդիրներին, դարձավ խորհրդանշի և չափանիշ ժողովրդական զանգվածների շահերի նվիրվածության, հայրենասիրության...

\* \* \*

Վասպուրականը, չնայած հայության թվական գերակշռության և հարաբերական մեծամասնությանը, 19-րդ դարի առաջին կեսին արդեն կորցրել էր իր ազգային միատարրությունը։ Այնտեղ ապրում էին հիմնականում երեք ազգեր՝ հայեր, քրդեր ու թուրքեր։ Զայը երկրի բնիկ ազգն էր, հազարավոր տարիներ ապրել էր իր պատմական հայրենիքում, ստեղծել իր բարձր մշակույթը։ Ամեն քայլափոխին հան-

Թուրքը Հայաստանում իշխում էր քաղաքականապես, նրա ծեռցին էին պետական, վարչական ապարատը, դատարանը: Թուրքերը ձևավորվել էին որպես ազգ Փոքր Ասիայի տարածքում և դարերի ընթացքում իրենց մեջ էին ծովել տեղաբնիկներից շատերին՝ հայերին, հույներին, քրդերին, մեծ ու փոքր այլ ցեղերի<sup>1</sup>: Իշխող ազգությունն իրեն նպատակ էր դրել երկրում վերացնել ազգային ներհակությունները, այլ ազգերին իր մեջ ծովելու ճանապարհով: «Թուրքիան թուրքերի համար» կարգախոսն աստիճանաբար դառնում էր գերիշխող: Գոյություն ուներ միասնական օսմանյան հայրենիք, պետք է լինի նաև միասնական օսմանցի ազգ. մի ազգ և մի հայրենիք: Այդ նպատակին հասնելու համար Բ.Դուռը մեծ հմտությամբ վարում էր տարբեր ազգություններին պառակտելու քաղաքականություն: Դարի առաջին կեսին քրդական ցրված ու պառակտված ուժերը փորձ արեցին համախմբվել և ստեղծել քրդական միություն: Բեղրիսան բեյի, Օրեյդուլայի շարժումներն այդ նպատակի իրականացման առաջին ծիգերն էին: Թուրքական կառավարությունը մի համառ հետևողականությամբ ջախջախեց այդ կենտրոնախույս ուժերին, իսկ դարի երկորդ կեսից քրդերի նկատմամբ կիրառվեց բոլորովին այլ քաղաքականություն: Սիրաշահելով քուրդ ռազմական ավագանուն, հրահրելով նրանց կրոնական մոլեռանդությունը, թուրք պետականության ներ-

կայացուցիչները ցանկանում էին քրդերին գործիք դարձնել իրենց ծեռքին՝ կայսրության արևելյան նահանգները քրիստոնեական կերպարից զրկելու, Արևմտյան Հայաստանը հայաբափ անելու գործում։ Ուսումնասիրողներից մեկի դիպուկ արտահայտությամբ, այդ երեք ազգերի հարաբերությունները բնորոշվում էին հետևյալ կերպ. «Թուրքը երկրի հրավական տերն էր, քուրդ՝ իրական տերը, հայը՝ հայրենիք ունեցողը և իրավագործը»<sup>1</sup>։ Այս երեք ազգություններից ամեն մեկի առաջ կանգնած էր օրփա հրամայականը։

Կորցրած պետականությունը, հայրենիքի անշուր ներկան հակադրելով անցյալի հզոր իշխանների ու թագավորների, միացյալ Դայստանի գաղափարին, ժամանակի հասարակական գործիչները ցանկանում էին ժողովրդի մեջ անթեղված ազատության կայծերը բռնքել, արթնացնել ազգային ինքնազիտակցության ու արժանապատվության զգացումը: Այդ գործում իր մեծ ավանդն ունի Մկրտիչ Խորիմյանը:

Սկրտիչ Խորհմանը ծնվել է 1820թ. ապրիլի 4-ին Վան քաղաքի Յայնկուսներ թաղում, Կրօնցոց կամ Խորհմոց տանը: Տարազագործ հայրը զբաղվում էր նաև վաճառականությամբ, իր պատրաստած հագուստները Վանից տանում էր վաճառելու Ղրիմում. այստեղից էր նրանց ազգանունը: Մանուկ Սկրտիչ դաստիարակության գործը հանձն է առնում նրա հորեղբայրը՝ Խաչատուրը, որն ուներ կտավի արհեստանոց, ուր նի քանի երեխաների, դրանց թվում նաև Մկրտչին, սովորեցնում էր իր արհեստը՝ կտավագործությունը: Նենց այստեղ էլ Սկրտիչը տառածանաչություն է սովորում: Յորեղբայրը Սկրտիչի վրա ունեցավ մեծ ազդեցություն իր բարեպաշտությամբ, բարոյական բարձր հատկանիշներով, ընթերցասիրությամբ: Նա աճուրիի կյանքն ընտրեց, որդեգրեց Մկրտչին: Սակայն հորեղբայրը երկար չափեց: 17 տարեկան էր Մկրտիչը, երբ (1837-ին) գրկվեց իր հորեղբայրից: Այդ ժամանակ կորուստը պատաճին արտահայտեց հետագայում՝ 1876 թվին, երբ հորեղբայր հիշատակին նվիրեց «Խաչի ճառ» կրոնա-բարոյախոսական գործը. «Դու մեռար, դեռ ողջ էին ծնողքս և երիցագույն եղբայրս, բայց ես յայնժամ զգացի, թե սիրո և դաստիարակության գրկեն որբացած են: Ոչինչ մեծ ժառանգություն աշխարհին հարս-

տուրենեն չքողիր քո հոգի Մկրտչին. ոչ ոսկի, ոչ արծաթ, այլ մի Աստվածաշունչ և մեր սուրբ նախնյաց մի քանի ճատյաններ, զոր հաճախ կարդալ տալով՝ ընտանի լեզվով կը բացատրեիր ինձ...»<sup>1</sup>:

Վանում այդ ժամանակ կանոնավոր դպրոց չկար: Կրթության փափազը պատանի Մկրտիչն տանում է դեպի վանական անապատները՝ Լիմ և Կտուց կղզիները:

Աշխարհիկ դպրոցի բացակայության պայմաններում հայկական վանքերը դեռ վաղ միջնադարից ծառայել էին իրեն ճատենագրության, գրչագրության, մանրանկարչության, ընդհանրապես հայ դպրության պահպանության քիչ թե շատ կանոնավոր օջախներ: 19-րդ դարում այդ վանքերը, մեծ մասամբ կորցրել էին լուսավորություն տարածողի իրենց դերը: Սակավ բացառությամբ վանքերում միաբանությունն զքաղվում էր ոչ թե հայ մշակույթի զարգացման գործով, այլ առավելապես բնակչությունից հոգևոր հարկեր հավաքելով, հարստություն դիմելով: Նրանց մեջ միայն հազվադեպ ընտրյալներն էին կատարում ժողովրդին սպասարկելու իրենց առաքելությունը:

Վանական անձուկ մթնոլորտը, լճացած կյանքը, չեր կարող բավարարել այնպիսի մի եռանդուն բանաստեղծական նկարագրի տեր անձնավորության, ինչպիսին Խրիմյանն էր: Ծուտով նա հեռացավ այդ մենաստաններից և հայտնվեց Վանում: 1842թ. ամռանը երեք ընկերների հետ միասին պատանի Մկրտիչը 5 ամիս շարունակ շրջագայում է հայրենի Վասպուրականի հանարյա բոլոր գավառներում. Թիմար, Արծեշ, Ալջավազ, Ալվար, Կարճկան, Կարկառ, Մոկս, Գավաչ, Ջայոց Չոր, Շատախ, Նորդուզ, Աղբակ: Այդ ժամանակահատվածը շատ վճռորոշ եղավ Խրիմյանի համար: Ջայրենի եզերքի գեղեցկությունը, պատճական ճարտարապետական հուշարձանները հապարտությունը կորով էին ներշնչում պատանիներին, իսկ հայության ժամը վիճակը, քաղաքական ու սոցիալական իրավագործությունը խորը թախիծ ու վիշտ առաջացնում նրանց հոգում, դրդում պատրաստվել՝ նրանց վշտերին սպեղանի դնելու համար: Որոշ ժամանակ անց, Խրիմյանը մեկնում է կայսրության մայրաքաղաք՝ Կ.Պոլսի, որն արևմտահայության հոգևոր-մշակութային կենտրոնն էր և մագնիսի նման դեպի իրեն էր ծգում ուսման ժարավի երիտասարդներին: Երկու տարի կոշկակարությամբ պահպանելով իր գոյությունը, Մկրտիչը մեծ հափշ-

1. Ա. Խրիմյան, Խաչի ճառ, գ. տպագր. Եջմիածին 1894թ., էջ Ա:

## Մկրտիչ ԽՐԻՄՅԱՆ. Հասարակական-քաղաքական գործունեությունը

տակությամբ գրադպում է նաև ինքնակրթությամբ, կապեր հաստատում տեղի հանրահայտ մտավորականների հետ:

Դայրական տան կարոտը նրան վերստին վերադարձնում է Վան (1846թ.), ուր վախճանվել էր հայրը: Անսալով այրիացած մոր թախանձնքներին, նա ամուսնանում է Սկիլյան գերդաստանի օրիորդ Մարիամի հետ: Սակայն նրան վիճակված չեր վայելել ընտանեկան կյանքի բարիքները: 1847թ. վերջերին գինվորագրությունից խուսափելու համար, Վանում թողնելով նորատի կնոջն ու նորածին դստերը, իր ընկերոջ՝ Ագրիպաս Դարայանի հետ անցնում է Պարսկաստան, ապա Ավարայրի դաշտով, Արաքսի ափերով մտնում է Այրարատ, Շիրակ, հասմում Ալեքսանդրապոլ: Այնտեղ 6-7 ամիս մնալուց հետո, 1848թ. գարնանը մեկնում է Թիֆլիս, ապա Բարումից ճանապարհով է Կ.Պոլսի: Այնտեղ էլ անհանգիստ ոգին դադար չի առնում: Նա ծեռնարկում է երկրորդ ճանապարհորդությունը, այս անգամ դեպի Երուսաղեմ՝ քրիստոնեական եկեղեցու համար սրբագործված վայրերը: Այդ ճանապարհորդությունները մեծ հետք թողին երիտասարդ Մկրտչի վրա: Կյանքն ամենամեծ դպրոցը եղավ, ուր համար ինքնազարգացումը, տքնածան աշխատանքը տվին իրենց արդյունքը: Այդ ժամանակ Կ.Պոլսի հայ գաղութի ազգային կյանքում նկատվում էին խլրտումներ, դրական տեղաշարժեր: Դասարակական կյանքում ազդեցիկ դիրք գրավող մի շարք անձնավորություններ սկսում են հովանավորել գրականության և դպրոցական ասպարեզի գործիչներին: Կազմակերպվել էր այսպես կոչված Խասգյուղի օջախը, որը խորհում էր ազգի բարոյական վերածնության մասին: Եվ պատահական չէ, որ Խրիմյանը գրավեց նրանց ուշադրությունը<sup>1</sup>:

1848 թվին Խրիմյանը Կ.Պոլսի Խասգյուղի աղջիկների նորաբաց վարժարանում դառնում է ուսուցիչ: Ջայրենախոս ճառերով, ազգաշունչ գրույցներով երիտասարդ ուսուցիչը Կ.Պոլսի նորազարթ երիտասարդության ուշադրությունը բևեռում է «Խայաստանի» վրա: Նորընծա «հայաստանի վարժապետը» հայրենասիրության մոլեռանդ քարոզիչ էր, աշխանող անձնավորություն: Ծուտով նրա հետ սերտ կապեր են հաստատում օսմանյան մայրաքաղաքում ապրող ազդեցիկ Օստյան և Այվատյան ընտանիքների անդամները: Այդ ընտանիքներում Խրիմյանը մասնավոր դասեր է տալիս, մանկավարժությու-

1. Խ. Մարտիրոս, Խրիմյան (կենսագրական տեսության), Թիֆլիս, 1892, էջ 10:

Նո դառնում է Խրիմյանին ամենից շատ ծգող աշխատանքներից մեկը, իսկ դպրոցների վիճակը բարելավելը և նոր դպրոցների հաստատումը՝ կյանքի նպատակներից մեկը: Այդ հատկանիշները հաշվի առնելով, 1851թ. Կ.Պոլսի հայոց պատրիարքարանը նրան հանձնարարում է մեկնել Կիլիկիա, ուսումնասիրել կրթական գործի վիճակը տեղում, իոդ տանել գործը բավարար հիմքերի վրա դնելու համար: Նա պետք է պատրաստեր մի տեղեկագիր Կիլիկիայի կրթական վիճակի վերաբերյալ, որպեսզի պատրիարքարանը միջոցառումներ մշակեր: Կիլիկիայում Խրիմյանը երկար չմնաց: Մեկ տարի տևեց այդ աշխատանքը: Ժամանակակիցները տարբեր կարծիքներ արտահայտեցին նրա շուտափույթ վերադարձի մասին: Ոճանք գտնում են, որ Խրիմյանը չհաշտվեց Սսի կաթողիկոս Կիրակոսի հետ, չնայած վերջինս աշխատում էր նրան պահել իր մոտ: Իսկ ոճանք էլ գտնում են, որ նա վերջացրեց իր առաքելությունն ու վերադարձավ Կ.Պոլսի<sup>1</sup>:

Օսմանյան կայսրության նայրաքաղաքի հայ գաղթօջախը փոթորկված ծովի նման ենթարկվում էր ալեբախումների: Կաթոլիկ նիսիոներները սադրանքներով ու քսություններով որոն ու երկպառակություն էին սերմանում լուսավորչական դավանանքի հայերի շրջանում, գրադպում մարդորսությամբ: Դա մեծ հարված էր հասցնում ազգային համախմբմանը, միասնությանը: Երիտասարդ Խրիմյանն անսալով օրվա պահանջներին, մի փոքրիկ բրոշյուր հրատարակեց «Ընդդեմ պապականության» խորագրով, ուր խարազանում էր Հռոմի պապի գործակալներին, ազգային միավորման ու միասնականության հրավեր անում բոլոր դավանանքների հայերին:

Խրիմյանը երկար չի մնում Կ.Պոլսում: Դայրենի եզերքը ծգում է, և նա բողնելով Կ.Պոլսը, վերադառնում է Վան: Շանր վիշտ էր սպասում նրան, ճահացել էին նայրը, կիճը, աղջիկը: Այլևս նրան ոչինչ չէր կապում աշխարհիկ կյանքի հետ: Ի սկզբանե հոգևոր հակումների տեր երիտասարդը որոշում է ընդմիշտ նվիրվել հայոց եկեղեցու ծառայությանը: Դոգևոր սպասավորն ավելի լայն հնարավորություններ ուներ հասարակական գործունեություն ծավալելու համար, քան աշխարհիկ անձը: Դոգևորականի վեղարը կարող էր հաղթահարել բազմաթիվ խոչընդոտներ<sup>2</sup>: Եվ ընտիր ուսուցիչն ու քարոզիչը, խանդակառ հայրենասերը 1854 թվի փետրվարին Աղթամարում կուսակ-

1. ԳԱԹ. Հ. Առաքելյանի թ., գ. 182, էջ 4:

2. Խ. Մալամաման, նշվ. աշխ., էջ 15:

րոնություն է ընդունում, Վանի հոգևոր առաջնորդ Գաբրիել Շիրոյանի կողմից ծեռնադրվում է վարդապետ: Մարտի 25-ին նա իր վարդապետական առաջին քարոզն է կարդում Վանում: Քարոզի բնաբանն Աստվածաշնչից վերցրած խոսքեր էին. «Դովիվ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց յուր»: Դա աստվածաբանական քարոզ չէր, այլ հայրենասիրության ջերմ ներքոյ, մի հոգեցունց կոչ ու հրավեր, որ թմրած մտքերին ու ոգիներին արթնություն էր կոչում, կրթություն, լուսավորություն և դաստիարակություն պատգամում: Անդրանիկ այդ քարոզի բնաբանը եղավ նրա կյանքի ուղղու խորհրդանշը: Մեծ հիացնունք տածելով Ս. Ղազար կղզու Մխիթարյան միաբանության ազգություն ծեռնարկումների հանդեպ, Խրիմյանը ցանկանում էր Աղթամարը դարձնել Հայաստանի վենետիկ, այդ վանքում հիմնել տպարան և վարժարան, բայց լճացած, միապաղադ ու մեղկ առօրյային տվոր միաբանությունը թշնամանքով և փշերով դիմավորեց Խրիմյանին<sup>3</sup>: Աղթամարում իշխողը ոչ թե աստվածավախ ոգին էր, կամ հայրենի հարուստ դպրության ավանդների շարունակումը, այլ կրօնավորների միջև տիրող ընչաքաղցությունը, կաշառակերությունն ու ագահությունը. «Միակ բանը, որ այդ բարոյական ավերակույտին մեջ կշարժեր դեռ, գահի և գավազանի կորիվն էր, որ տասնամյակ հետո, 1864-ին պիտի վերջանար Պետրոս Բլբյուլի եղերական վախճանումով»<sup>4</sup>: Սկսվեցին հալածանքները, և Խրիմյանը դարձյալ հայտնվեց Կ.Պոլսում, որտեղ սկսվել էին. նոր ալեբախումներ: 1848թ. ֆրանսիական հեղափոխության ազդեցության ներքո, Փարիզից վերադարձած մի խումբ ազատամիտ երիտասարդներ գլխավորում էին հայ գաղթօջախի հասարակական կյանքը, մի հզոր ու բարձ հոսանք առաջնում արևմտահայության մեջ, որը հետագայում հայտնի դարձավ սահմանադրական շարժում անունով: Շարժման ղեկավարներն էին Նիկողայոս Պալյանը, Նահապետ Ռուսիանը, Գրիգոր Օսյանը՝ «Եղերեն ալ ծշմարիտ հայրենասերներ», որոնք ամիրայության ու կղերեցն աղջիկական շարժում անունով: Շարժման ղեկավարներն էին մղած մղած իրենց պայքարում բնավ չժխտեցին ազգականության դեմ մղած իրենց պայքարում բնավ չժխտեցին աղջիկական շարժում անունով: Խրիմյանն առաջին ժել առաջադեմ հոգևորականների կերպարներ: Խրիմյանն առաջին ժամանակից համակրեց շարժմանը, մասնակցեց նրանց գաղափարական հավաքաներին: Նրա այդ բարեկամները գրկարաց ընդունեցին

1. Խ. Մալամաման, նշվ. աշխ., էջ 15:

2. Թ. Ե. Գ. «Խրիմյան Հայրիկ», էջ 22:

նորընծա վարդապետին: Օտյան և Այվատյան գերդաստանի անդամները գուրգուրանքով շրջապատեցին նրան: Նա քարոզիչ կարգվեց Ուսկյուտարի ս. Աստվածածին Եկեղեցում. այս անգամ նրա քարոզի բնաբանն էր. «հուր էկի արկանել»: Եվ իսկապես նա իր կրակոտ խոսքերով վառում ու բորբոքում էր քարոզը լսող ժողովրդի հոգին: Կ.Պոլսի հայկական Եկեղեցիներում հավաքվում էր մեծ բազմություն, նրանց շարքում էին նաև սուլթանի արքունիքի հայազգի բարձրաստիճան պաշտոնյաները: Անվախ Խրիմյանը քարոզի ժամանակ դիմում է արքունի վառդապետ Յովհաննես Բեյ Տատյանին. «բավ է արքունիքին վառդ մատակարարել», նրա ամբարած վառդից անհրաժեշտ է «քիչ մըն ալ Յայաստանի հայերուն» տրամադրել, նրա թշնամիների դեմ գործածելու նպատակով: Մի այլ քարոզի ժամանակ նա դիմում է Պալյան ամիրայական տոհմի անվանի շառավիդներից մեկին՝ արքունի ճարտարապետ Կարապետ Պալյանին. «...Բավ է, որ սուլթանաց համար պալատներ շինեն, եկուր քեզ Յայաստան տանեմ, ին մեր նախնայց ավերակներ շատ կան. եկուր նորոգե մեր փլած և կիսավերակ ամրոցներ, բերդեր և պալատներ»<sup>1</sup>:

Կ.Պոլսի Եկեղեցիներում «Յայաստան և հայրենասիրություն» քառող վարդապետը հուգում է գաղթական հայերի սրտերը, նրանց «մարած ոգիները վառվում են հայրենասիրական կրակով»: Պանդուխտ և գաղթական հայերը հաղորդակից են դառնում հայրենաբնակ ժողովրդի ծայրաստիճան աղքատ, տառապանքներով լի կյանքին: Մյուս կողմից Խրիմյանը տեղի մեծահարուստների ուշադրությունը հրավիրում է մի այլ ցավոտ հարցի վրա: Յայաստանի տարրեր գալաքաներից Կ.Պոլսիս պանդխտության Եկածներն իրենց չարքաշ կյանքն են հյուծում Կ.Պոլսի Խաներում: Խրիմյանը փաստերով ցույց է տալիս, որ Բերայի ընդարձակ հայկական գերեզմանատունը ծայրեժայր լցվել է պանդուխտ հանգուցյալներով: Խրիմյանը կոչ է անում հայ հասարակական գործիչներին՝ դիմակայել պանդխտությանը:

Սակայն Խրիմյանը չէր բավարարվում քարոզներով: Քարոզը նա համենատում էր առավոտյան ցողի հետ, որն արկի առաջին իսկ ճառագայթներից կարող է գոլորշիանալ և վերանալ: Ժողովրդի գիտակցության արբանացման համար հարկավոր էին առավել ներգործող միջոցներ, դրանցից առաջնայինը տպագիր խոսքն էր, պարբերական

1. Հ. Աճեմյան, «Հայոց Հայրիկ», 1 հ., էջ 212: գ. Գյուգաւան, «Մ. Խրիմյան» (Պալյափարների աշխատաթիվ), էջ 27:

մամուլը: Մայրաքաղաքի ազդեցիկ գերդաստանների նյութական օժանդակությամբ և գաղթօջախի հայ բնակչության բարոյական քաջալերանքով 1855թ. հունիս ամսին լույս է տեսնում «Արծուի Վասպուրական» ամսագիրը<sup>1</sup>: Նրա տիտղոսաթերթին գրված էր. «Արծուի Վասպուրական, թուցյալ հայրենասեր թեոք յԱրծունի գահեն ի Վան Տոսպ. Ա. տարի, թիվ 1, հունիս, խնբագիր հայրենախոս Մկրտիչ Վարդապետ Խրիմյան, Կոստանդնուպոլիս»: Պարբերականը լույս էր տեսնում Արարյան երեք եղբայրների տպարանում: Չորս թիվ այդտեղ հրատարակելուց հետո Խրիմյանին հաջողվում է գնել տպագրական մեջենա և սեփական տպարանի հիմք դնել Ուսկյուտարի ս. Խաչ Եկեղեցում: Մի ամբողջ տարի՝ 1855-ի հունիսից մինչև 56-ի հունիսը, կանոնավոր հրատարակում է «Արծուի Վասպուրական»-ը:

\* \* \*

Հասարակական գործունեության հենց առաջին տասնամյակում Խրիմյանի անունը լայն ճանաչում է ստանում իրեն գրող: Նրա գրական առաջին թորովանքը 1848-ին «Բազմավեպ»-ում լույս տեսած բանաստեղծությունն էր՝ Նվիրված հայր Արսեն Բագրատունուն, որն ուներ մի երկար խորագիր. այն փաստորեն պատմում էր բանաստեղծության բովանդակությունը. «Խրիմյան վանեցի Մկրտիչ Վարդապետին գովեստը մեր նախնեաց տաղաչափությունը նորոգող Բագրատունի հ. Արսեն Վարդապետին»:

Զինվորական հարկից խուսափելու, նաև Արևելյան Յայաստանը՝ Այրարատը, Եջմածինը տեսնելու ջերմ փափառվ կատարված ճանապարհորդության անջնջելի տպագորությունների տակ նա գրում է «Յրավիրակ Երկրին Արարատյան» հայրենասիրական պոեմը, որը լույս տեսավ 1850-ին Կ.Պոլսում: Խորապես կրելով Միհիթարյան միաբան Արսեն Բագրատունու «Յայկ դյուցազն» պոեմի ազդեցությունը, Մկրտիչ Խրիմյանը իր պոեմը գրելու առաջին շարժադիթը համարում է «հայրենյաց սերը»: «Զորություն սիրո հայրենյաց այնչափ բռնացավ իմ վերա, մինչև հան և հափշտակեաց յինէն ի պանդխտելոյս ոգին իմ և սիրտ և տարաւ այսպիսեռ ի հայրենին և անդ ի ցանկալի

1. Համբարձում Առաքելյանը և Լեռն Խրիմյանի մասին գրված իրենց նիացյալ ձեռագիր աշխատաթիվ մնջ սխալում են, զբախվ. թե պարբերականը բանի որ սկզբուն լույս էր տեսնում Կ.Պոլսում, այն կազմե «Բյուզանդիայի արձիվ» և միայն Վարագ փախադրվելուց հետագա վանվեց «Արծուի Վասպուրական»:

Վայրս նորին ճեմեցուցեալ զիս շատ լացոյց», - գրում էր հեղինակը պոեմի ներածականում:

Արշակ Չոպանյանը այս պոեմում հեղինակին համարում է «հայրենիքի պատվիրակ մը, որ օտար երկինքներու տակ ծնած հայերը կիրավիրե երթալ իրեն հետ այցելել նախահարց երկիրը, սքանչացնամբ դիտել անոր բնական գեղեցկություններն ու իինավուրց իիշատակարաններու պատկառելի ավերակներ, որ հոն կքնանան մոռացության ճոխիրներուն տակ»<sup>1</sup>:

Պոեմը բաղկացած է 4 նվազից<sup>2</sup>: Առաջին նվազը նվիրված է Արարատյան դաշտի, Աստվածաշնչյան սուրբ լեռան՝ Արարատի և Եջմիածնա սուրբ կաթողիկեի նկարագրությանը: Այդ երկու մեծ սրբությունների ստորոտում ապրում է աշխատասեր մի ժողովուրդ, որն իր քրտինքով ոռոգում է հողը, սուրբ հավատը պաշտպանում է իր ողջ գոյության ընթացքում մղած «մարտնչումներում»: Նկարագրվում է հայրենի եզերքի գեղեցկությունը, մայր գետը՝ Երասխն իր ձկնավետ ջրերով, շրջակա դալար անտառները: Յեղինակի աչքից չի վրիպում նաև Արարատի՝ 1848թ. հրաբխային ժայթքման հետևանքով ավերված Ակոռի գյուղը:

Երկրորդ նվազում նկարագրվում է Վաղարշապատն ու Անին, հայոց նայրաքաղաքներն իրենց հզորության և անկճան շրջափուլերում: Յեղինակը բացատրում է հայրենիքի հզորության թուլացման պատճառները կրոնական զգացման խաթարման և ազգային բարոյական ոգու անկումով: Խրիմյանը ողբում է այդ անկումների համար և քաղաքական ու ընկերային կյանքի վերելքի կոչում իր հայրենակիցներին:

Երրորդ նվազը պատմում է Եջմիածնում և նրա մերձակամներում գտնվող քրիստոնեական սրբավայրերի մասին: Յեղինակի նկարագրությունը և հավատքի ուժգնությունը հասնում է մի բարձրակետի, եթե նկարագրում է Յոռմից Քախսած կույսերի հիշատակին կառուցված կոթողները՝ Յոհիվսիմեի, Գայանեի և Շողակաթի վանքերը, դրվատում այդ կույսերի առաքինությունները, հոգու ամրությունն ու գորությունը: Յետաքրքիր համեմատություններով է նկարագրվում Արտաշատի Խոր-Վիրապը: Այնուեւսէ հեղինակը հրավիրում է ընթերցողներին իր

1. Ա. Զավանյան. Հեմքեր. Փարիզ. 1924, էջ 116:  
2. Պատմն աւելցավ նաև 2-րդ Երաստարակություն, 1878-ին, որի ժամանակ հեղինակը ամփացրեց առաջնորդ միներական գործականությունները:

Տ-ը նվազը՝ նվիրված Տարոնին, որը ճանաչվում բախտավորություն ունեցած տևակի հոգեությունությունը մասնաւոր միներական գործականությունները՝ 1862-ին:

ետևից այցելել հայոց Յորդանանը՝ Եփրատ գետը, որի ջրերում հայությունը մկրտվեց քրիստոնեական սուրբ հավատով: Յեղինակի ուշադրությունից չի վիրպում Սուրբ Գրիգոր Լուսավորչի ճգնության քարայրը՝ Մանեա այրը:

Յեղինակի խորը պատկառանքն ու սերն առավել հորդանում է, եթե նկարագրում է Օշականը՝ սուրբ Մեսրոպի հավերժության հանգստավայրը, նրա կողմից բացված դպրոցը, ուր «ուսումնասեր հայ մանկութին կընդունին եռամեծ վարդապետին» Մեսրոպի օրինությունն ու խրատը՝ անկորուստ պահել հայեցի դպրության գանձերն անգին»:

Իր հերենորդներին Խրիմյանն առաջնորդում է նաև Շավարշանա դաշտը՝ Տղմուտի ափերին տված Ավարայրի ճակատամարտի վայրը, ուր լսվում են Եղիշեի «աղոյ մրճունջները», ուր արյունախառն շամբերը ներկվել են Վարդանի և նրա զինակիցների արյունով:

Չորրորդ նվազը Վասպուրական աշխարհին նվիրված մի ծոն է. նկարագրվում են նրա «գեղազգարծ տեսարանները» ծիծաղախինդ Վանա ծովը, Շամիրամի բերդը, Այգեստանը, Արտամետի բուրաստանները: Յեղինակը մեկ առ մեկ նկարագրում է Վասպուրականի հոչակավոր վանքերը, իրենց սուրբ նշխարներով՝ Կոնկալանքը, Վարագավանքը, Գալիլեան, Թողիկի ճգնարանը և այլն: Ոգեղեն արժեքների գեղեցկությանը հետևում են հայրենի եզերքի աննման նկարագրությունները: Սակայն այդ նկարագրությունները ինքնանպատակ չեն: Յեղինակը, որ լցված է հայրենիքի սիրով, հրավիրում է Երկրից դուրս այլ վայրերում ապրող հայությանը՝ Վերադարձալ հայրենիք, շենացնել և կենդանացնել հայրենիքը և փոխադարձաբար նրա նորոգող շնչով Վերակենդանանալ «ի ծոց հայրենյաց»:

Յեղինակին ոգեսրողը երկու հզոր դրդապատճառներ են՝ հայրենակիրություն և զորեղ քրիստոնեական հավատափորություն: Զարմանալ միայն կարելի է, թե երեսնամյա Երիտասարդի հոգուց ինչպես է ճառագել և դուրս ժայթքել հավատի լույսը, մանավանդ, որ նա դեռևս աշխարհական էր և իրեն չէր նվիրել հայ Եկեղեցուն: Ահա թե ինչու Խրիմյանի այս պոեմն առավել բարձր գնահատականի արժանացավ ուսումնափորող բարձրաստիճան հոգեուր գործիչների կողմից: «Դայրիկի մատենագրական երախայրիքը կարելի է ըստ թե իր բանաստեղծական տաղանդին ամենեն կարկառուն գործն է նույն ատեն»<sup>1</sup>, գնահատում է հետագայում Թորգոն եպիսկոպոս Գուշակյանը:

1. Թ. Ե. Գ., «Խրիմյան Հայրիկ» (իր ծննայան 100-ամյակին առիր): Էջ 19:

«Դրավիրակ Արարատյանը» ջերմ ընդունելության արժանացավ պոլսահայ գաղութում: Ոգևորված Խրիմյանը ծեռնամուխ եղավ նոր «Դրավիրակի» ստեղծմանը: Դա «Դրավիրակ Երկրին ավետյաց» պոեմն էր, որն ամփոփել էր իր մեջ Երուսաղեմ կատարած ճանապարհորդության տպավորությունները: Սուրբ վայրեր կատարած ճանապարհորդությունը նրա առաջ պարզեցին մի քանի խնդիրներ: Երիտասարդ ուխտավորը երազում էր Երուսաղեմում գտնել նտավորական բարձր մակարդակ, որի ծարավն ուներ իր օժտված հոգին: Մեծ էր նրա հուսախարությունը, երբ զգաց, որ այդ մենաստանը չի կարող հագուրդ տալ կրթության իր անհագ ծարավին: Դրա փոխարեն մենաստանի խաղաղ առանձնության մեջ նա Երկներ իր Երկրորդ քերպածը, որ լույս տեսավ ուխտագնացության ավարտից հետո, 1851-ին՝ դարձյալ Կ.Պոլսում: Քերպածն աչքի է ընկնում երեք հատկանիշներով. սուրբ գրքերի իմացություն, կրոնական ջերմ զգացում և հոգեկոր ներշնչում: Սակայն զարմանալի է այն հանգամանքը, որ այդ աշխատության ստեղծողը սովորական աշխարհական անձ է, զարմանում ես, որ հոգեկանի սքեմը դեռ չընդունած անձը կարող էր այդպիսի ջերմեռանությամբ ստեղծել քրիստոնեական վարդապետությանը նվիրված նման մի քերպած: Նման պարագայում օրինաչափ և միանգամայն բնական էր նրա կյանքի հետագա ընթացքը: Այս Երկրորդ քերպածը բաղկացած է յոթ երգից, որոնց մեջ դրսևորվում է հայ մատենագիտության Խրիմյանի քաջիմացությունը՝ Ուսկերեանից մինչև Յանձնապատումը, մինչև իր օրերի հեղինակներն ու գիտնականները: Սակայն աշխատությունն ավելի կշահեր, եթե նրա հեղինակը ծանոթ լիներ Եվրոպական գրականության այդ ճյուղին:

Երկու հրավիրակների բնորոշ գիծը հեղինակի մոտ շեշտված Երկու առաքինությունների միացումն էր՝ հայրենասիրություն, ազգասիրություն, ցեղի պաշտանումք և կրոնական զգացում, հավատի զորություն, նվիրվածություն. աստվածաշնչյան պատգամներին: Այդ գժերն առավել շեշտվեցին Խրիմյանի հրապարակախոսական գործունեության ընթացքում:

\* \* \*

1855թ. հունիսից Պողոս Օտյանի մեծ օժանդակությամբ սկսեց հրատարակվել «Արծուի Վասպուրական» ամսագիրը Մկրտիչ Խրիմյանի խմբագրությամբ: Ամսագրի տարեկան արժեքը 40 դուրուց էր,

մեկամսյա տետրակինը՝ 4: Այն ուներ գործակալներ Պոլսում և Զմյուռնիայում, Կարինում և Վանում, որոնք ամեն կերպ նպաստում էին նրա բաժանորդագրության ու տարածմանը: Ամսագրի անվանումն անգամ ցույց է տալիս, որ խմբագիր հրատարակիչը նտադիր է քնավորվել օսմանյան մայրաքաղաքում, այլ գործունեությունը շարունակելու է Յայաստանի ամենախոշոր հայաբնակ նահանգներից մեկում՝ Վասպուրականում: Մի ամբողջ տարի՝ 1855թ. հունիսից մինչև 1856թ. հունիսը Խրիմյանը համար ու հետևողական աշխատանք էր տանում ամսագրի հրատարակությունը Վասպուրականում իրականացնելու համար: Նախապատրաստական այդ շրջանը հատկանշական էր որոնումներով և դեգերումներով: Այդ ընթացքում հրատարակում է ամսագրի 12 համար: Յոդվածների մեծ մասը գրում էր խմբագիրը: Բուն վերմագրերից բացի հոդվածներն ունեին բնութագրող անվանումներ՝ բանախոսություն, բարոյական, դաստիարակություն, հայրենասիրական և այլն: Ամսագրի ծրագրային հոդվածի մեջ Խրիմյանը հայտնում էր, որ իր նպատակն էր «գրել ու խոսել զիայրենյացն, զնորին ճոխ բարգավաճությանցն, զվերջին դժբախտ վիճակացն, զիայրենաշեն քաջացն հայոց, զառաքինի հարցն հոգեկոր և որ ինչ առ հայրենիսն վերաբերին»<sup>1</sup>:

Խմբագրի ուշադրության կենտրոնում հայ պանդուխտների ծանր վիճակն էր Կ.Պոլսում և այլ վայրերում: Պանդիստությունը և զաղթականությունը համարելով արևմտահայ կյանքի չարիքներից ամենածանրը, երևույթ, որի պատճառներն իրավացիորեն նա բացատրում էր Երկրի քաղաքական անկայուն վիճակով, հայ գյուղացու և արհեստավորի սոցիալական անտանելի կացությամբ, նա պայքար է մղում պանդիստությունը կանխելու, արևմտահայ գավառը հայաքափ անելու դեմ, կոչ անում զաղթաշխարհի հարուստ և ուներ անհատներին՝ իրենց լուման ներդնել հայրենաբնակ ժողովողի տառապանքների բեթևացման գործում: Նա ծշմարիտ հայրենասիրությունը համարում է «բուն հայրենյաց Երկրի մեջ բնակվելը» և հրավեր է հղում «տարաշխարհիկ հայկազուններին» վերադառնալ հայրենիք և շենացնել մեր նախնիներից ժառանգություն ստացած Երկիրը: Նա գերադասում է հայրենի «փշալից դաշտերը», պանդիստության ծաղկալից բուրաստաններից:

Տարբեր հարցեր է բարձրացնում որոնումների մեջ գտնվող խմբա-

1. Արծուի Վասպուրական, 1855, թիվ 1:

գիրն ամսագրի պոլիսյան շրջանում: Նա իր ընթերցողներին սկսում է ծանոթացնել հայկական գավառների և հայաբնակ տարրերի վայրերի հայ բնակչության կացության հետ: Կիլիկիակատարած ուղևորությունների ժամանակ, ափսոսանքով պատճելով հայկական վերջին պետականության անկնան նախն, նա իր խոհերն է կիսում ընթերցողների հետ, ցույց տալիս պետականությունը կորցրած հայ ժողովրդի ցիրուցան վիճակը: Նրա հոդվածները վերաբերում են ազգի ապագայի հետ կապված ամենահրատապ հարցերին: Դրանցից ամենակարևորը Խրիմյանը հաճարում է ազգային դպրոցների անմիջաբար գոյությունը բարելավելու ուղիների որոնումը: Դպրոցի հետ մեկտեղ Խրիմյանի մտահոգության առարկան է դառնում լեզվի խնդիրը: Նա քննարկում է աշխարհաբար և գրաբար լեզուների, նրանց զարգացման ուղիների հարցը: Այդ քննարկումով Խրիմյանն իր մասնակցությունն է բերում 19-րդ դարում մեծ ուժով բռնկված գրապայքարին, ընդգծելով իր դեմոկրատական հակումները: Դատկանշական է, որ իրեն վարդապետ նախապատվությունը տալով գրաբարին, իրեն հասարակական գործիք գտնում է, որ ամսագրերը և պարբերական հրատարակությունները պետք է գրվեն «աշխարհիկ լեզվով, պարզ ու մաքուր ոճով»: Ըստ խմբագրի պարզությունը պարտադիր է համարվում «ամսաթերթին և լրագրաց հրատարակիչներուն»: Ակնրախ է խմբագրի ժողովրդական միտունը՝ թերթն ու գիրքը մատչելի և հասկանալի դարձնել հասարակ ժողովրդին<sup>1</sup>: Այդ նպատակով էլ Խրիմյանը պայքարում է դպրոցներում միասնական դասագիրը հաստատելու, դասագրքերը պարզ և հասկանալի շարադրելու համար:

Ամսագրում տեղ են գտնում նաև կրոնական բովանդակություն ունեցող հոդվածներ, ուր հեղինակ-խմբագիրը չափանիշ ընդունելով քրիստոնեական սոցիալիզմին հատուկ դրույթներ, ելնելով ավետարանական դրույթներից, պաշտպանում էր աղքատներին ու գրկվածներին:

Խմբագիրը ծիգ ու ջանք է գործադրում «Արծուին» տալու իր ժամանակի մյուս պարբերականների նմանությունը, աշխատում է ամսագրի հրատարակությանը նաև այլ հեղինակների, բայց դա նրան դեռևս չի հաջողվում: «Արծուի» հրատարակության պոլիսյան շրջանում Խրիմյանը կատարում է ծանր ու տառապալից աշխատանք՝ նախապատրաստելու վերադարձը հայրենիք,

1. Արծուի Նախապատրական, 1855, թիվ 1, էջ 15:

իր խոսքերով՝ «Ասիո վերջին եզերքեն (Կոստանդնուպոլիսից) Հայաստանի կեդրոն» փոխադրելու համար ծառացած էին բազմաթիվ խոչընդոտներ: Սակայն համառ և աննկուն խնբագիրը նկատում է: «Բոլոր դժվարությանց պիտի հայրենասիրության եռանդն, մշտատև աշխատություն, անխռովություն սրտի, համբերություն ծախորդությանց, զորավոր դիմադրություն հակառակ հողմոց, երկրախորհուրդ խոհեմություն ծեռնարկյալ գործոց»<sup>2</sup>:

«Արծուին» խնբագիրը պատրաստ է դիմագրավել բոլոր դժվարություններին. նա հայտարարում է, որ եթե Արծուի նման թռչել չկարողանա, ապա գետնի վրա՝ թռւյլ ու ուժասպառ թռչունի կամ մարախի պես թռչուտելով, մի կերպ, բայց անպայման կիասնի Հայաստան: Խրիմյանի մտահոգության առարկան գավառահայ ժողովուրդն է, մանավանդ Տարոնը, Վասպուրականը, Մոկքը, այնտեղի «անտերունչ ժողովուրդը», նրա «գյուղացի մանկտինները», որոնց մեծ մասն չքավոր ըլլալով կը կարոտին թերթիկ մը թղթոյ քերականին»:

Խմբագրի կարծիքով, դպրոց, ուսում, վարժապետ, ազգասիրություն հասկացություններն ու հաստատություններն առավել անհրաժեշտ են գյուղացուն, որովհետև գյուղացիությունը ժողովրդի ամենաստվար մասն է: Նա մորմոքվում է, տառապում և բողոքում, որ գյուղացիության և ընդհանրապես ժողովրդի համար մտահոգվող գործիներ չկան, չկան Մովսեսներ, որոնք իրենց անձը մինչև մահ նվիրաբերեն ժողովրդին: «Ցանկալի իմ Հայաստան, քո սեր կատիաբե զիս ... Նոր Մովսեսիկ մը ըլլալ, թեև փոքր, ամենատկար և ծանրախոս, թեպետ անարժան գտնվելով հրաժարել պետք է այս մեծ անունեն, բայց ... լի հուսով կիավատանք, որ ինքն (Աստված) հաջողէ ու կատարէ մեր փափագը, որ միայն մեր հայրենակից գյուղաբնակ եղբարց լուսավորություն համար է»<sup>2</sup>:

1855թ. լույս է տեսնում ամսագրի 6 համար: Քանի որ ամսագրի հրատարակությունն սկսվել էր հունիս ամսին, տարին վերջանում է թիվ 7-ով: Սակայն 1856թ. խնբագիրը չի սկսում նոր համարական 7-ով: Այդպիսի հունվարի 1856թ. այդպիսով հունվարյան «Արծուին» կրում է «Ա տարի թիվ 8» նշումը:

Խրիմյանը տենդագին նախապատրաստվում էր. և հոդվածներով, գործունեությամբ, բանիվ ու գրչով. նրա մեծ ցանկությունն էր վեհական գործունեությամբ:

1. Արծուի Նախապատրական, 1855, թիվ 5, էջ 74:

2. Նույն տեղամ, էջ 80:

## ԵԼԼԱԿՈՍՏԱՆԴՅԱՆ

րադառնալ և գործունեություն ծավալել Արևմտյան Հայաստանի կենտրոնական նահանգներից մեկում, գերադասելի է՝ Վասպուրականում։ Նրա նպատակն էր Վասպուրականի վաճքերից մեկում վառած կանթեղով լուսավորել ոչ միայն Վասպուրականը, այլ հայաբնակ ուրիշ վայրեր ևս։ Սակայն վաճքերում ծվարած միաբանությունները իրաժարվում են դրանից, վաճքերը չեն ուզում դաշնալ լուսավորության օջախներ։ Հայկական պետականության անկումը ողբալուն, Արշակունյաց, Բագրատունյաց դինաստիաների կործանումը սգալուն հետ հավասար, գուցե և ավելի ուժգին Խորիմյանը մորմքում է հայոց վաճքերի անշուր վիճակի համար։ «Ողբամ զձեզ վաճորայք և մենաստանք հայոց աշխարհին, որք երբեն ճեմարան շնորհաց էիք ...զբիսուն շնորհաց գիտության իրեն զգեստ հորոյալ յականց վանորեից, վտակ վտակ բաժանեալ ծավալեին ի ծարավոտ երկիրս հայոց ...Բայց այդ համայն վաճորայք լրյալ ամայացան»<sup>1</sup>։

Ամսագրի հրատարակությունը շարունակվում է մինչև 1856թ. մայիս ամիսը ներառյալ, դա թիվ 12 «Արծուին» էր։ Այդ թվի առաջին հոդվածը կրում է. «Դարձ Արծույն պանդխտելու ի Բիւզանդիոնին յաշխարհն իւր հայրենի Վասպուրական» խորագիրը, որի մեջ հեղինակ խմբագիրն ուրախությամբ հայտնում է ի լուր իր ընթերցողների, որ «Արծիվը» պատրաստվում է իր թոհջքը շարունակել հայրենի Վասպուրականում, որ բնակվելու է այնտեղ մի որևէ մենաստանում։ Հոդվածում Խորիմյանը շնորհակալություն է հայտնում «Բիւզանդիոնից» իրեն հյուրընկալելու առիվ, արտահայտում իր ուրախությունը հայրենիք վերադառնալու համար և կոչ անում «տարաշխարհիկ հայկագուներին», աշխարհի տարրեր վայրերում ցրված հայության բեկորներին, վերադառնալ հայրենիք, ուր «աղաղակս բառնան առ ծեզ անշունչ քարինք ավերակաց Հայաստան երկրին»։ Խմբագիրն արտահայտում է իր տեսակետը ծշմարիտ հայրենասիրության մասին, գտնելով, որ այդ զգացումը պարտավորեցնում է «հայրենյաց թշվառութենե չփախչիլ, չէ թե միայն Վարդանա կամ Վահանա պես բուն հայրենյաց երկրի մեջը բնակելով կը պարտավորվինք ամեն տեսակ թշվառությունները հայրենակից եղբարց հետ կիսելու»։ Իսկ եթե կան անձնավորություններ, որ չեն կարող վերադառնալ հայրենիք, ապա նրանք պարտավոր են սատար լինել հայրենաբնակ եղբայրներին,

1. Արծուի Վասպուրական, 1856, թիվ 8, էջ 116։


## Մկրտիչ ԽՐԻՍՏՅԱՆ. Հասարակական-քաղաքական գործութեուրյուն

քանի որ նրանցով է կանգուն երկիրը՝ հայրենիքը։ Նույն 12 թվում էլ խմբագիրը ծանուցանում է ընթերցողներին, որ կարծ ժամանակով դադարեցնելու է ամսագրի հրատարակությունը, մինչև փոխադրվեն Վան, այնտեղ փոխադրեն տպարանը և շարունակեն կիսատ թողած գործը։

Դայ պարբերական մանուլի պատմության մեջ «Արծուի Վասպուրականի» պոլիսյան շրջանը աչքի չի ընկնում նորարարությամբ։ Սակայն նա ուներ իր յուրահատուկ տեղը, որ ճանապարհ հարթեց Արևմտյան Հայաստանի տարածքում մանուլի հրատարակության համար։



Վարագա վանքը



ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

# Ա. ԽՐԻՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՐԿԳՈՒՄ

1856թ. հունիսից Կ.Պոլսում դադարում է «Արծովի Վասպուրականի» հրատարակությունը: Օսմանյան մայրաքաղաքում ծեռք բերելով փայտյա և երկաթյա տպագրական մեքենա, տառեր, անհրաժեշտ քանակության թուղթ, նույնիսկ թանաք, 1856-ի աշնանը Խորխյանն իր երկու մտերիմ ընկերների՝ Տիգրան Գալֆակճյանի և Միքայել Ռուբինյանի հետ ճանապարհվում է Վասպուրական: «Արծվի» խմբագիրը ձգտում է իրականացնել իր վաղեմի երազանքը՝ Աղթամարա վանքը Միսիթարյանների օրինակով դարձնել Յայաստանի Վենետիկ, այնտեղ իհմնադրել տպարանը և ծավալել մշակութային լուսավորական գործունեություն: Բայց այս անգամ ևս Աղթամարի միաբանությունը, կաթողիկոսի գլխավորությամբ, արգելք եղան այդ նպատակի իրականացմանը: Իր հավանությունը չտվեց նաև Վասպուրականի հոգևոր պարզնորդ Իգնատիոս Եպիսկոպոսը:

Կ.Պոլսի ազդեցիկ հովանավորների՝ Պողոս Օտյանի (Գրիգոր Օտյանի հայրը) և Այվատյան գերդաստանի աջակցությամբ, Կ.Պոլսի հայոց պատրիարք Հակոբոսի կոնդակով և Բ.Դուան ֆերմանով Խրիմյանը դառնում է Վանի մերձակայքում գտնվող Վարագա վանքի վանահայր (1857թ. հունվար): Վանքը հանվում է Վասպուրականի հոգևոր արածնորդի իրավասությունից:

Վարագա վանքի միաբանությունը Խրիմյանին դիմավորում է դժո-  
հությամբ: Նրա ծեռնարկած առաջին իսկ քայլերն արժանանում են  
շրջակա հետադեմ խավերի, մի խուճ աղաների և լճացած հոգևո-  
րականների զայրույթին: Դալածանքի և դժոհության պատճառը կրում  
էր տնտեսական բնույթ: Վարագա վանքն ուներ հարուստ հասույթներ,  
որոնք յուրացնում էին տեղի մեծահարուստ էֆենդիները, գործակ-  
ցելով միաբանության հետ: Վասպուրականի հարուստները գրկվել էին

իրենց զվարճատեղի-ուխտատեղից, Վարագա վանքից, որի եկամուտներն օգտագործում էին իրենց զվարճությունների, թեֆերի, ուրախ ժամանցների համար: Նորեկ վարդապետ վանահայրը խստությամբ հետևում էր վանքի կարգ ու կանոնին, ստացված հասույթներին: Սակայն այդ գործը մեծ ջանքեր էր պահանջում նրանից: Գրիգոր Աղվանյանին ուղղված նամակներում վանահայրը պատմում էր, թե ինչպես Վասպուրականի մեծահարուստները, որ մինչ այդ անարգել օգտագործել են Վարագա եկամուտները, գրփել և յուրացրել, հաշիվ են պահանջում Խրիմյանից: Վասպուրականի հոգևոր առաջնորդը չէր հաշտվում վանքն իր իրավասությունից հանելու փաստի հետ և պահանջում էր վանահորից վանքի եկամուտներից բաժին հանել առաջնորդարանի ծախքերը հոգալու համար. «Երբ պիտի մոռանան իշխանավորները Վարագա լեռան ներքև կերած խորովածները: Երբ պիտի մոռանան Վարագա եկամուտ, որ իրենց իրեւ այգի մը, չիֆթիկ եղած էր, սեր, պանիր, յուղ, ոչխար ծրի կշարունակվեր իրենց տուներնին»<sup>1</sup>, - գանգատվում էր Խրիմյանը, մեծահարուստներից պահանջելով գրփելու փոխարեն սատար կանգնել դպրոցին ու տպարանին:

Որ իսկապես Խրիմյանի բարեփոխումներն առաջացրել են Վասպուրականի ուներմների թշնամությունը, հավաստում է ինքը՝ վանահայրը: Նարեկա վանքի վանահայր Յովսեփ վարդապետին ուղղված մի նամակում, սրտապանուելով նրան մի քանի թշնամիների առկայությունից, Խրիմյանը նշում է. «Ապա ինեղծ Խրիմյան ինչ ընե, երբ որ ամբողջ քաղաքի մը հզոր իշխանները հանդերձ եկեղեցականներով իր դեմ կանարտնչեն»<sup>2</sup>:

Խրիմյանը բարեկարգեց վանքը, հասույթները հատկացրեց դպրոցի և տպարանի գործունեությանը: «Դյուսիսափայլի» թղթակիցը (Մելիքադեմ՝ ապագայի վիպասան Շաֆֆին), որ եղել էր Վարագում, վայելել նորընտիր վանահոր հյուրընկալությունը, գրում էր. «Ոչ մի անգամ չէի տեսած ազգասիրական հոգին այդպես կենդանի, որպես այդ արժանապատիկ կրոնավորի մեջ. մի կողմից թշնամիների ահագին բազմությունը, նյոււ կողմից արծաթի պակասությունը չին կարողացել հատանել նորա հույսը, շիջուցանել նրա ազգասիրության կրակը: Խղճալին ամեն հալածանք, ամենայն թշնամություն, մինչև

1. ԳԱԹ, Խրիմյանի ֆ., գ. 143, էջ 8:

2. Նայն աելում. գ. 158, էջ 43:

անգամ մահ հանձն առած էր յուր իղձը ի կատար հասուցանելու համար»<sup>1</sup>:

Դալածանքն ու դավերը հասան այն աստիճանի, որ թշնամիները վարձկան քրդերի միջոցով մի քանի անգամ մահափորձ կազմակերպեցին նրա դեմ: Սակայն այդ բոլորը որևէ չափով չկանգնեցրին և չփատեցրին Խրիմյանին: Նրա անկոտրում կամքը և անընկելի ոգին սովորել էին դիմակայել ամեն տեսակ փորձությունների:

Դետաքրքիր է, որ նրան հալածողների և թշնամիների շարքերը ստվարացնում էին նաև ներձակա այլ վանքերի վանահայրերը, որոնց համար Խրիմյանը մի անհանգիստ ոգի էր, որ եկել էր խանգարելու իրենց վանական անդորրը: Այդ վանահայրերի մեջ աչքի էին ընկնում Նարեկա վանքի վանահայր Յովսեփ վարդապետը և Աղթամարա միաբանության անդամ, վանահայրության փոխանորդ, հետագայում ապօրինի ճանապարհով Աղթամարի կաթողիկոս օծված Խաչատուր վարդապետը: Առաջինի նկատմամբ Խրիմյանը համենատարար գուսապ վերաբերմունք է ցուցաբերում, ցանկանալով նրան հեռու պահել թշնամանքից, ատելությունից, հորդորում «ճշճարտությունը սիրել» և «վանքին բարեկարգության համար ջանքեր չխնայել»<sup>2</sup>:

Այլ էր վերաբերմունքը Խաչատուրի նկատմամբ: Ուժգին հանդիմանելով նրան իր նկատմամբ գրպարտություններ տարածելու համար, Խրիմյանը նշում է, որ այդ բոլորը ավելի հեշտացնում են իր գործը, ժողովուրդը իրեն է հավատում և «համբերության պսակներ հյուսում Խրիմյանի գլխին»: Սակայն այդ ամենին Խրիմյանը չի պատասխանում ատելությամբ և կրօպվ, ինչպես իր թշնամիները. «Արծիվը այդ օրինակ թշնամաց փոխարեն թշնամությամբ չի հատուցաներ գքեզ, վասգի ինքն կիհավատա, որ վրեժմնիիր մը կա երկինքը...»<sup>3</sup>: Իր այդ երդյալ թշնամուն անգամ Խրիմյանը հանողում է հաջողությամբ վարել իրեն հանձնված հոգևոր պաշտոնը, այնտեղ «բարեկարգություններ հաստատել», Խաչատուրին հասկացնելով, որ «Վատահամբավության նետերը Արծվո թեկերը չեն կրնար վիրավորել»: Խրիմյանը միևնույն ժամանակ անաշառորեն գնահատում է այդ վարդապետի գործնական հատկանիշները և ցանկանմ է դրանք նպատակամդել ազգօգուտ գործերի. «Թե որ խղճիդ ականջները լսելու արթուն է,

1. «Հյուսիսափայլ», 1860, թ. 11, էջ 407:

2. ԳԱԹ, Խրիմյանի ֆ., գ. 158, էջ 42:

3. Նայն աելում. գ. 142, էջ 2:

ուրախ պիտի ըլլամ, որ քեզի պես գործունյա և կառավարիչ եղբայր մը շահեցա, իսկ եթէ ոչ, պիտի տրտմիմ, որ գրած խրատներս օդին մեջը պիտի ցնդեն»<sup>1</sup>:

\*\*\*

Վաճահայրն ուներ հեռահար նպատակներ և մեծ ծրագրեր: Ժամանակ էր պետք տպարանի աշխատանքները կարգի գցելու համար: Այն ժամանակվա պայմաններում դա յուրօինակ խիզախություն և հերոսություն էր: Աշխատանքները շարունակելու համար Խրիմյանին հարկավոր էին օգնականներ: Թեկուզ տպագրական գործը վարելու համար անհարժեշտ էին բանինաց երիտասարդներ: Օգնականներ նա կարող էր պատրաստել երիտասարդներից, նոր սերնդից, միայն դպրոցի միջոցով: Դրա համար էլ 1857թ. մարտ ամսին նա դնում է «Ժառանգավորաց» վարժարանի հիմնաքարը: Դասատվությունն սկսվում է նույն տարվա օգոստոսի մեկից: Այդ դպրոցը նորություն էր Արևմտյան Հայաստանի տարածքում: Այն գիշերօթիկ էր, նախատեսված 25 աշակերտի համար: Երկիրը մի շինություն էր դա, որի վերնահարկը մաքուր կահավորված ննջասենյակներն էին: Դպրոցին կից կար սեղանատուն, խոհանոց, գիշերօթիկին անհարժեշտ այլ շինություններ: Դասասենյակները կահավորված էին գրասեղաններով, նստարաններով, գրատախտակներով, բնագիտական դիդակտիկ նյութերով, քարտեզներով: Դպրոցին կից կար բանգարան, ուր պահվում էին 270 հատոր հին ու նոր ծեռագիր մատյաններ:

Ծիշտ է, «Ժառանգավորացը» հոգևոր դպրոց էր, սակայն դասանկող առարկաների մեջ հաստատուն տեղ էին գրավել նաև աշխարհիկ գիտելիքները: Դասավանդվող առարկաների թվում նշվում է սրբազն պատմություն, ընդհանրականի տեղեկություն (քնագիտություն), եկեղեցական երաժշտություն, ճարտասանություն, քերականություն, թվաբանություն, աշխարհագրություն, հասարակ գործյուն, հասարակ ընթերցում և այլն<sup>2</sup>: Ըստ «Ժառանգավորացի» տնօրենի, պարտադիր չէր, որ բոլոր շրջանավարտները դառնան հոգևորականներ: Սակայն պարտադիր էր նրանց բոլորի մշակութային գործունեությունը: Ուշադրության արժանի են «Ժառանգավորացի» առաջին շրջանավարտները: Նրանք, համարյա բոլորը, հայտնի դար-

1. Գլւթ. Խորիմյանի ֆ. գ. 142, էջ 3:

2. Արձուի Դաստիարական. 1859, նայտ, էջ 115:

ծան իրենց հասարակական, մշակութային-լուսավորական գործունեությամբ<sup>1</sup>, եղան ազգային-ազատագրական շարժման ակտունքներում, կապող օղակ դարձան արևելահայերի և արևմտահայերի միջև, իրենց գգալի լուման ներդրին հայ հասարակական կյանքում: Վարագա դպրոցը, նրա տնօրենն ու ուսուցիչները, սամերը մեծ ակոս բացեցին արևմտահայ մշակութային կյանքում և եղան ժողովրդական լավագույն ավանդույթների արմատավորողներն ու զարգացնողները: «Ժառանգավորացի» սաները մեծ նասնակցություն ունեցան հրատարակչական և տպագրական գործերի մեջ: Նրանք և հոդվածներ են գրում, և բանաստեղծություններ հորինում, և խմբագրում ընկերների գրած հոդվածները, և գրաշարություն անում, և բանվորություն: Դայստանի սրտում հիմնադրված այդ դպրոցում աշխատանքային դաստիարակությունը տալիս է ամենալավ պտուղները: Վարագա «Ժառանգավորացի» բացի Խրիմյանը աշխատանքներ է տանում շրջակա վաճառքներում և վարժարաններ հիմնելու, լուսավորական գործը ծավալելու համար: Վարագա վաճի միաբանության անդամ Մատթեոս հայր սուրբին Խրիմյանն ուղարկում է մերձակա վաճառքերի վարժարանները բարեկարգելու, այնտեղի իրավիճակը ստուգելու և իրեն հավաստի տեղեկություններ հաղորդելու վարժարանների, աշակերտների քանակի, ուսումնառության առարկաների, ունեցած դասագրերի մասին: Ուսուցիչներին խրախուսելու համար Խրիմյանը խոստանում է առատ վարձատրություն վաճի հասույթներից: Մատթեոս վարդապետի հետ Խրիմյանը Նարեկա և Աղթամարա վաճերի վարժապետներին ուղարկում է դասագրքեր, որ «Երկար ժամանակ դիմանալով ծախցին կողմանն ինայողություն ըլլա»:

Նրա պատվերով առավել շնորհալի աշակերտները պետք է փոխադրվեին Վարագա «Ժառանգավորացը», ուսումը այնտեղ շարունակելու համար<sup>2</sup>: Աստիճանաբար Խրիմյանի շուրջը համախմբվում են նրա օգնականները և նրանց ամենօրյա օգնությամբ, տարի ու կես անց հնարավոր է դաշնում Վարագում շարունակել «Արծուի Վասպուրականի» հրատարակությունը:

1. Նշում ենք բարի անունները. Արշամ Գրիգորյան, Գայրեղին Մրգանեալյանց. Արշամի Գրիգորյան, Գայրեղին Արքանաման, Հրայր Սիմեոնյան. Երևանի Գևորգյան, Համայակ (ոքք). Ներսոս Տ. Մովսիսյան, Եղիշե Շահրաբյան. Միկոյան Համբարձումյան, Մատիզ Մատրոսյան, Հարերի Մարգարյան, Վահան Պատրիարքի. Էլոն Մատթեոսյան, Միասկ Շահեն, Միքայ Սղիբոցի. Թարոս Պարոյան, Արամայիս Մարգարյան:

2. Գլւթ. Խրիմյանի ֆ. գ. 142, էջ 3:

«Արծուի» աշխատանքների բովում հասունանում է և առնականանում գործիչների մի բոլոյ: Նրանք ուսուցչի օրինակով իրենց կյանքը նվիրաբերում են Հայաստանում լուսավորության տարածմանը: «Արծուի» էջերում հասունանում է Խորիմյանի հավատարիմ սան և զինակից Գարեգին Մրվանծոյանցի գոհը: Մեծ էր «Արծուի Վասպուրականի» Վարագյան շրջանի ները մամուլի պատմության մեջ:

\*\*\*

Պատմական հանգամանքների բերումով հայ պարբերական մանուլը սկզբնավորվել էր մայր երկրից դուրս, հայ գաղթօջախներում: Արևմտահայ մշակութային կյանքի կենտրոններն էին՝ Կ.Պոլիսն ու Զմյուռնիան, ուր հրատարակվում էին պատկառելի բվով պարբերականներ: Խորիմյանն առաջին գործիչն էր, որ ծեռնարկեց տպագրության արվեստի լույսը հասցնել բուն Արևմտյան Հայաստանի տարածքը: Խորիմյանի այդ ծեռնարկն իսկական խիզախություն էր: Պատահական չէր, որ նրա գործունեության արծագանքները հասնում են նաև ռուս հետազոտողին, որը գրելով հայկական լեռնաշխարհի վաճքերուն տպարան հաստատելու մասին, միակ օրինակը նշում է Խորիմյանի գործունեությունը Վարագա վանքում. «Նրա (Խորիմյանի - է. Կ.) «Արծուի Վասպուրական» ամսագիրը, որը լույս էր տեսնում Վարագա վանքում, նրա կրակոտ քարոզները հնչում էին Հայաստանի քաղաքներուն ու գյուղերուն, ինչպես Առաքյալի ծայնը, որը կոչ էր անուն վերածնության: Խորիմյանը և նրա աշակերտները միշրճվեցին ժողովրդի մեջ, և հյուղակներուն ու դաշտերուն օգտագործում էին բոլոր արիթմերն աշխատավոր ժողովրդի ուշադրությունը գամելու հասարակական գործերի և կարիքների վրա»<sup>1</sup>:

1858թ. հունվար ամսից վերսկսվեց «Արծուի Վասպուրականի» հրատարակությունը: Անսագիրն ընդլայնել էր իր գործակալների շարքերը<sup>2</sup>: Այժմ նրանք գտնվում էին Արևմտյան Հայաստանի բազմաթիվ կենտրոններում՝ Վանում, Կարինում, Բաղեշում, Օսմանյան կայսրության հայաբնակ Վայրերում՝ Կ.Պոլսում, Զմյուռնիայում, Տրապիզոնում, Բերայում նաև Պարսկահայքում՝ Սալմասում: Ուշադրություն է գրավում այն հանգամանքը, որ 1858թ. Սալմաստի գործակալն է դառնում Հակոբ Միրզոյան Մելիք-Հակոբյանը՝ ապագա վիպասանը,

1. Ի. Ի. Գոլոբորոդկո, Տուրցիա, Մոսկվա, 1908թ., ստ. 232.

2. Այլ բառն այն ժամանակ ուներ այլ իմաստ. դրանք ամսագրի բաժնաբարձրացնը և առածումն ապանուող մարդիկ էին:

Ռաֆֆին, «իբրև միանգամայն գործակալ Պարսկաստանի հայոց»: Կարինի գործակալ Խաչատուր Ներսիսյանցը գործակալն էր նաև «Շուլսաստանի հայոց»: Ինչպես տեսնում ենք, խմբագիրը մտադիր էր իր ամսագիրը դարձնել Արևելյան և Արևմտյան Հայաստանի ընթերցող հասարակայնությանը կապող օղակը: 1858թ. թիվ 1-ում «Նախարան առ ընթերցող» հոդվածում Խորիմյանը ներկայացնում է իր ծրագիրը, գործունեության նպատակները: Նյութերի դասակարգումը նա բաժանում է մի քանի մասերի՝ հետևյալ խորագրերով.

ա) հանդես աստվածապահության - պարունակելու են հոդվածներ հավատի, եկեղեցու, հոգևորականության, հայ եկեղեցու նշանավոր գործիչների մասին:

բ) Ղանդիսարան հայրենաշեն առաքինյացն հայոց - հերթականությամբ պետք է մեծարվեն հայ քաղաքական գործիչները՝ «Նախնի քաջագունք մեր... նոցին հայրենազարդ գործոց ըստ ամենայն հաճագանաց ճառագրելով»:

շ) Տեսարանք հայրենի աշխարհաց - մանրամասն նկարագրելու է Հայաստանի գյուղերը, քաղաքները, վանքերը, մենաստանները, եկեղեցիները:

դ) Բուրաստան բարոյական առաքինությանց - մեծ մասամբ բարոյախոսական հոդվածներ:

ե) Թանգարան հայկական դպրության - պարունակելու է ինքնուրույն գեղարվեստական գործեր, բարգմանություններ, հին մատյաններից վերցված հիշատակարաններ: Այս ծրագիրը որոշակի պատկերացում է տալիս ընթերցողին ամսագրի հետապնդած նպատակների մասին, սակայն խմբագիրը քաջ գիտակցում է նաև, որ այդ դասակարգումով կարող է սեղմել ընդգրկվելիք նյութերի շրջանակը, այդ պատճառով դրանց հետևում է մի վերապահություն: «Իսկ եթե պատահեսցի երբեմն այնպիսի նյութ ինչ, որ ոչ այդափ վերաբերի առ իինգ սեռս հիշյալ հոդվածոց, զայն ևս արժան համարինք ի վերջո թերթին հրատարակել»<sup>3</sup>:

«Արծվի» 1858թ. թիվ 1-2-ում հաջորդաբար խմբագիրը հոդված է տպում «Սատարք և բարերարք Վասպուրական Արծույն» խորագրով, որը փաստորեն հանդեսի հիմնադրման պատմությունն է: Համառտակի այն հետևյալն է: Պոլսի եկեղեցիներում «Հայաստան և հայրենասիրություն» քարոզող խմբագիրը այնպես է հուզում Հայաստա-

3. «Ըմբուի Կատարական», 1858, թիվ 1:

նի գավառների խճանկարը երևակող պոլսեցի գաղթականների սրտերը, որ նրանց «մարած ոգիները վառվում են հայրենասիրական կրակով»: Խրիմյանի քարոզները գաղթական հայերի սրտերը լցնում են ջերմությամբ հեռավոր հայրենիքի նկատմամբ, և նրանցից առավել եռանդուն գործիչները կազմում են մի ընկերություն, կենտրոն ունենալով Ուսքյուտարի Սուրբ Խաչ եկեղեցին: Պողոս Պետրոսյան աղան իր ընդարձակ տան մի սենյակը տրամադրում է Խրիմյանին, որը նրա նոր հրատարակվելիք ամսագրի անունով կոչվում է «Արծիվյան սենյակ», ուր հավաքվում էին և խորհում «հայրենյաց հառաջադիմության» համար: Ահա այդ խճի հայթայթած գումարով է գնվում տպագրական մամուլը և սկսվում ամսագրի հրատարակությունը: Դենց այդ սատարողների խումբն էր, որի օգնությամբ Խրիմյանը վերադարձավ հայրենիք ու իր «մշտնջենավոր» բունը հաստատեց Վարագա վանքում: Այդ հոդվածով խճագիրը հնարավորություն է ստանում հրատարակել «Արծվանվեր ընկերության պանծալի անունները»<sup>1</sup>: Դա մի պատկառելի ցուցակ էր, որն իր մեջ ներառնում էր 68 անձ, որոնց տված գումարը հավասար էր 43.850 դրամուշի: Սակայն հրատարակված ցուցակի մեջ չեն նշնում հայրենի Վասպուրականի ոչ մի ազգասեր և աջակից՝ «Արծվոյն հայրենակից երևելի և ազգասեր անձիքներէն և ոչ մէկն». նրանց անունները հրատարակվում են նույն՝ 1858թ. թիվ 2-ում: Դրանք 18 անձնավորություն են, որոնք օգնել են «Արծուին» 7.650 դրամուշի: 1858 և 1859 թթ. ամսագրը լույս է տեսնում կանոնավոր, յուրաքանչյուր տարի՝ 12 համար:

1859թ. թիվ 1-ում ժամուցելով Վարագյան շրջանի «Արծուի» երկրորդ տարվա սկիզբը, խճագիրն իր շնորհակալությունն է հայտնում Պոլսի, Տփխիսի, Կարինի, Պարսկաստանի «Երախտավոր բարերարներին», որոնց խրախուսանքով և աջակցությամբ հրատարակվում է ամսագիրը: Նա հայտարարում է նաև, որ գլխավորապես երկու նպատակ է հետապնդել ամսագրի հրատարակությամբ, այն է՝ լուսավորություն տարածել և քաղաքական միասնության կոչել Արևելյան և Արևմտյան Հայաստանի հայերին: Նույն խճագրականում Խրիմյանն ընթերցողներից և բաժանորդներից ներողություն է խնդրում ամսագրի էջերը սպրդած վրիպակների և թերությունների համար, մի քանի հանգանանքներով բացատրելով դրանք.

1. Տպարանը գործում է այնպիսի վայրում, ուր տպագրական գոր-

## Մկրտիչ ԽՐԻՄՅԱՆ. Հասարակական-քաղաքական գործութեարյութը

ծը չունի ավանդույթներ, աշխատակիցները՝ տպագրիչները, ծովողները, գրաշարները, անփորձ պատմիներ են:

2. Աշխատողների թվի սակագությունը և նրանց բազմագրադությունը,

3. Հեռավորությունը Կ.Պոլսից, որտեղից միայն հնարավոր է հայթայթել տպագրության համար անհրաժեշտ նյութերը՝ «գլազապար, գրուղթ, զմելան»:

4. ճանապարհների և ընդհանրապես հաղորդակցության միջոցների վատքար վիճակը, որի պատճառով ուշ են հասնում թղթակցությունները, ժամանակին չեն առաքվում ամսագրի թվերը բաժանորդներին:

5. Տպագրական մեքենայի փոքր չափը և գործերի մեծ ծավալն ու ընդգրկումը:

Վարագա տպարանում հաճախ հետ էր ընկնում ամսագրի հրատարակությունը և դրա փոխարեն տպվում էին գյուղական աշակերտներին անհրաժեշտ գրքեր՝ «քերական և հեզարան» այն ժամանակվա համար մեծ տպաքանակով (2000 օրինակ), իսկ այդ հանգանաքն իրավացիորեն առաջացնում էր ամսագրի բաժանորդների դժգոհությունը:

Ամսագրի Վարագյան շրջանը շահեկանորեն տարբերվում է «Պոլսիս շրջանից»: Յոդվածների հեղինակների շրջանակն ընդլայնվում է: Յոդվածների հեղինակներ են դարձնում Վարագա դպրոցի և ուսուցիչները, և սաները: Դետաքրքիր է քննարկել Վարագյան առաջին փուլի ամսագրի բաժինների բովանդակությունը:

«Դանդես աստվածապայտության եկեղեցաշեն հարցն» բաժինը, ինչպես ցույց է տալիս անվանումը, նվիրված էր քրիստոնեական կրոնի դոգմաներին, լուսավորչական եկեղեցու դերին, հայ հոգևոր հայութի գործունեությանը, հայ եկեղեցու սուրբեր համարված անցյալի կաթողիկոսներին, եպիսկոպոսներին, նրանց հայրենասիրական գործերին: Տարբեր համարներում, ըստ հերթականության, ամսագիրն ընթերցողներին ծանոթացնում է Թաղենու Առաքյալի, Գրիգոր Լուսավորչի, նրա որդիների՝ Արիստակես, Վրթանես, Յուսիկ, Դանիել հոգևորականների կատարած գործերին, ապա ընթերցողի աչքի առաջ պարզվում է Ներսես Մեծ, Սահակ Պարքե կաթողիկոսների գործունեությունը: Առանձին սիրով, հարգանքով և երկյուղածությամբ գործունեությունը: Առանձին սիրով, հարգանքով և երկյուղածությամբ է լեցուն Մեսրոպ Մաշտոցին նվիրված հոդվածը<sup>1</sup>, ուր ընդգրկում է

1. «Արծուի Վասպուրական», 1858, թիվ 1, էջ 13-15:

նրա կատարած մեծ գործն իբրև հայ գրերի գյուտի հեղինակ, առաջին հայկական դպրոցների հիմնադիր և ուսուցիչ: Ապա հերթականությամբ հոդվածներ են նվիրվում «սուրբ թարգմանիչներին»՝ Մաշտոցի աշակերտներին, մեծարվում է Մովսես Խորենացին իբրև «քերթողահայր, ակնարբեր հայացի դպրության»<sup>1</sup> գնահատվում է «վսեմախոս պատմագիր Եղիշեն»<sup>2</sup>, Եզնիկ Կողբացին իբրև ընտիր աստվածաբան, Դավիթ Անհաղթը՝ հայ փիլիսոփան<sup>3</sup>: Ինչպես տեսնում ենք նշված անուններից, «Եկեղեցաշեն հայրեր» անվանումների տակ գովերգվում և գնահատվում են հայ մշակույթի մեծերը, իր ժամանակի դիրքերից գնահատվում է նրանց պատկառելի ավանդը, նրանք մեծարվում են իբրև սուրբերի շարքն անցած դեմքեր՝ չափանիշ ունենալով ժողովրդի գոյատևման մեջ իրենց ունեցած դերը: Օրինակ՝ Մաշտոցը «արդարն հաց հոգեպարար պարզեցավ կարոտյալ մանկտվոյն հայոց» և ոչ միայն մանուկներին: Մաշտոցի գործով հայ ժողովուրդն ստացավ իր գոյապահպաննան թիվ առաջին գենքը. «Եկեղեցին Յայաստանեաց պայծառանայր, ընթերցվածքս լսելի լինեին ունկս ժողովրդյան, տաղը Մովսիսագիր մատենից՝ հայաբարբար հնչեին, դպրոցը բանային, մանկունք կրթեին, քաջաքաջ ուսման ասպարեզ խիզախնեին»:

Ապա հոդվածներ են նվիրվում Գյուտ կաթողիկոսին, Յովիաննես Մանդակունուն, որը հայ Եկեղեցու գործունեության կանոններն ու ծեսերը հաստատեց, «ճարտար բանահյուս» Կոմիտաս կաթողիկոսին: Յոդվածների հերոսներ են դառնում միջնադարի գիտական նտքի ներկայացուցիչներ Անանիա Շիրակացին, Թեոդորոս Քոթենավորը, Մովսես Քերթողը: Յայ արհեստավորի և երկրագործի համար այս հոդվածներն ունեին մեծ նշանակություն: Դրանք ցույց էին տալիս, որ մեր հոգևոր առաջնորդները «սուրբերի շարքը դասված մեր մեծերը» ժողովորդի ժողից դուրս եկած մարդիկ էին, որոնք բարձր պահեցին իրենց ժողովորդի անունը, համընթաց քայլեցին ժամանակի գիտական նտքի հետ:

«Յանդես աստվածապաշտության Եկեղեցաշեն հարցն» բաժինը շարունակվում է մինչև 1860թ. թիվ 2-ը ներառյալ: Թիվ 1-ի և 2-ի այդ բաժնի հոդվածները նվիրված էին համեմատաբար նոր ժամանակների հոգևորականներին: Թիվ 1-ի հերոսը ներսես է (Աշտարա-

1. «Արծովի Վասպուրական», 1858, թիվ 9:

2. Նույն տեղամ, 1859, թիվ 10:

3. Նույն տեղամ, 1858, թիվ 12:

կեցի) կաթողիկոսն է, որի ժամանակ զարկ է տրվում հայ մանուկների դաստիարակության գործին, վկան՝ նրա կաթողիկոսության օրոք Եջմիածնի ճեմարանի բարվոք վիճակը, նրա անվան դպրոցն արևելահայ մշակութային կենտրոն Թիֆլիսում: Խնբագիր հեղինակը կոչ է անուն հայ մանուկներին՝ «զարթիք ի թմրութենէ, սրափեցարուք յափշութենէ յիմարութեան, յոտին կացեալ դիմեցէք յԱրարատ, շուրջ կացեալ բոլորեցեք առ սեղանս իմաստութեան ...ծծեցեք զկաքն դաստիարակութեան, բողեք զանուսումն բարս անզգամութեան, խնդրեցեք զիմաստութիւն, որով կեցցե և երջանիկ լիցի Յայաստան»<sup>1</sup>:

1860-ի թիվ 2-ի այդ բաժնի հոդվածը Խրիմյանը նվիրել է իր ժամանակի իրադարձություններին՝ արևմտահայերի Ազգային սահմանադրության հաստատմանը: Յոդվածի Վերնագիրն է «Ազգային նոր սահմանադրությունը և հայրենասեր հիմնադիրը նորին»: Յեղինակն արժանին հատուցելով Կ.Պոլսի ժամանակի պատրիարք Սարգիս Եպիսկոպոսին, ուշադրությունը կենտրոնացնում է տեղի հայության այն ընտիր ներկայացուցիչների վրա, որոնք կրթություն են ստացել «դրացի Եվրոպայում», «Երկարյա կուաններով» ջախճախում են տգիտության շղթաները և նոր «զինվորական գունդ կազմելով» պատրաստվում են արշավել Յայաստան: Ողջունելով Սահմանադրության հաստատումը, խնբագիրը խոստանում է մի այլ հոդվածով քննարկել Սահմանադրությունը և հանդես գալ առաջարկություններով: Ցնծություն արտահայտելով Ազգային սահմանադրությունը արևմտահայ կյանքում հաստատելու համար Խրիմյանը գտնում է, որ դրանով հայ ժողովուրդը դասվեց քաղաքակիրք ժողովուրդների շարքը: Նա գգում էր, որ սահմանադրությունը հեռու է կատարելությունից, որ «պարունակող հոդվածներուն կարգը ավելորդ կամ պակաս բաներ գտնվին ալ», սակայն հուսով էր, որ ժամանակի ընթացքում հեղինակները ծեռք կրերեն փորձառություն և վերացնության միջոցով «սահմանադրության փոքր մանկահասակ մատենիկը օրավուր հանճարեղ գրիչներուն զորությամբ ածելով՝ յուր վերջի հսկայահասակ կատարելության չափ կհասնի»<sup>2</sup>:

Այդ բաժնի հոդվածների մեծ մասի հեղինակը, խնբագիրն է Խրիմյանը, սակայն կան նաև հոդվածներ ստորագրված Ա. Ս. Ա (Մկրտիչ Աստոմյան), նաև Արտամետցյանը: Երկուսն էլ Վարագա ուխտի ան-

1. Արծովի Վասպուրական, 1860, թիվ 1, էջ 6:

2. Նույն տեղամ, թիվ 2, էջ 35:

դամներից էին, Խորհմյանի գինակիցներն ու գաղափարակիցները, ժառանգավորացի ուսուցիչները: Բոլոր հոդվածների նպատակամղվածությունը մեկն էր՝ հայ եկեղեցու դերի գնահատումը հայապահպանության հաճար մղվող պայքարում, երբեմն նաև նրա ապաշնորհ ներկայացուցիչների քննադատությունը (բավականին մեղմ ու վախվորած), հայ մշակույթի գործիչների և գիտական մտքի մշակների գովարանումը: Հեղինակների ոճը չի տարբերվում իրարից, թերևս միայն անստորագիր հոդվածները, որոնք անվերապահորեն Խորհմյանին են, աչքի են ընկնում մեծ զգացնուքայնությամբ, ծրագրային առաջարկություններով: Ինչ վերաբերում է մյուս հեղինակներին, ապա եթե հոդվածի տակ ջնշենք մեկի անունը և գրենք մյուսինը, չի փոխվի ոչինչ: Զգացվում է, որ այդ հեղինակները կատարում են խմբագրի պատվերները և իրենց ոչինչ չեն թույլ տալիս, որ հակասի խմբագրի ոգուն:

**«Հանդիսարան հայրենաշեն առաքինյաց»** խորագիրը կրող բաժինը հոդվածներ է պարունակում նվիրված Հայկ Նահապետին, Արամ Նահապետին, Արա Արամյանին (Արա Գեղեցիկ), «անդրանիկ թագակալ արքա Հայոց Պարույրին», «Մեծն Տիգրան Երվանդյանին», Վաղարշակ թագավորին, Արշակ 1-ին և 2-րդին, Արտաշեն 2-րդին, Վուանշապուհ Արշակունուն, Աշոտ Բագրատունուն, Սմբատ Բագրատունուն, Աշոտ Երկարին և Աշոտ Ողորմածին, Գագիկ Բագրատունուն, Կիլիկիայի հայ իշխանական տների ներկայացուցիչ Կոստանդին, Ռուբեն և Թորոս Ռուբենյաններին: Այդ բաժինը ևս շարունակվում է մինչև 1860թ. թիվ 2-ը ներառյալ: Ինչպես անունների թվարկումից է երևում, այդ հոդվածները պատմական և գիտական ծճմարտացիությամբ այնքան էլ աչքի չեն ընկնում: Փաստորեն իրար էին խառնված հայկական թագավորության մի քանի դինաստիաները՝ Երվանդունիները, Արտաշեսյանները և Արշակունիները: Հեղինակներն իրենց նպատակ չեն դրել պարզել նշված պատմական անձնավորություններին վերաբերող բոլոր դրվագները, ծշտումներ մտցնել եղած կամ հայտնի փաստերի մեջ, համեմատել տարբեր պատմական աղբյուրները և դրանից հանել սեփական եզրակացությունը, մի խոսքով, քննական մոտեցում հանդես բերել պատմական դեմքերի և դեպքերի նկատմամբ: Այդ բաժին հոդվածների հեղինակը 1858թ. թիվ 1-ից թիվ 5-ը ներառյալ Խորհմյանն է: Դրանց հատուկ է ջերմ հայրենասիրությունը, անցյալի հիեալականացումը, հայ առաջին թագավորների և պետական այրերի ա-

ռաքինի և հայրենասիրական վարք ու բարքի գնահատականը, Հայաստանի հզոր պետականության գովերգումը և կոչ իր ժամանակի հայությանը՝ օրինակ վերցնել քաջ նախնիներից, շենացնել ամայացված երկիրը, որպեսզի նվաճեն նրանց հետնորդները կոչվելու իրավունքը:

«Հայկ Նահապետ հայոց» հոդվածում Խորհմյանը, գովերգելով Հայկի ազատափրությունը, բռնակալ Բելին հաղթելու անկոտրում կամքը, դիմում է իր ժամանակակիցներին. «Զայն արծակյալ գոչեն առ ծեզ որդիք և Հայկա հողացյալ ոսկերք, մի թողունք աննշան ամայանալ գեղաշեն դաստակերտին իմ Հայկոծորոր, որ ցորչափ շինությամբ կանգուն կացցե հավերժական պարծանք են հայրենյաց...»<sup>1</sup>:

«Արամ հայրենասեր Նահապետ» հոդվածում գովերգվում է «յուցազնածին» հերոսը, որովհետև նա գերադասում է մեռնել, քան թույլ տալ օտարներին «կոխել զահաման բնակասնունդ երկրին, զոր ծիգ աղեղամբ և նետիւք չափյալ ժառանգ եթող ինքյան քաջահավան յուր Հայկ»<sup>2</sup>: Այս հոդվածին ևս հատուկ է իր ժամանակակիցներին դիմելու միտումը, որ կանգուն պահեն հայրենին, չնորանան «զայրենավանդ բարբառ»: Խորհմյան այդ անում է ստեղծելով յուրատեսակ գեղարվեստական պատկեր, իր հեղինակային խոսքը դնելով անցյալի հերոսների շուրջերին:

Եկեղեցական պատմությամբ հավատարիմ խմբագրի հեղինակը քննադատում է այն հայ թագավորներին, որոնք ծառացել են հայ եկեղեցու բռնությունների դեմ և պետական իշխանության հզորացման համար երբեմն դիմակայել են եկեղեցու կենտրոնախույս ծգոտումներին: Արշակի և Պապի գնահատման հարցում Խորհմյանը չէր կարողանում դուրս գալ եկեղեցական պատմաբանների և գործիչների ազդեցությունից, այդ պատճառով էլ անհծում, կշտամբում և նզովում էր Պապին. «Երանի թե սատակյալ լիներ հիշատակ նորին յերկրեն հայոց ըստ մաղթելոյն Դավթի, որով գեթ չբերեր ամոթանս Թորգոնածին պարզերես որդվոց»<sup>3</sup>:

Մեզ հաճար անընդունելի այս հոդվածներն անգան այն ժամանակա պայմաններում ունեին դաստիարակիչ մեծ նշանակություն, նրանց մեջ գովերգվում էր հայրենասիրությունը, միաբանությունը,

1. Արծորի Վասպուրական, 1858, թիվ 1, էջ 9:

2. Նայեն տեղում, թիվ 2, էջ 40:

3. Նայեն տեղում, թիվ 5, էջ 110:

նգովզում դավաճաններն ու երկպառակության որոմը սերմանողները, «դժոխածին վասակներն ու վեստ-սարգիսները», նրանց «անիծապարտ չար գործերը»: Խրիմյանը ողբում է ոչ միայն հայ պետականության կորուստը, այլև առավել ուժգնությամբ մորմոքում հայոց կրոնի ազատության անկումը «դիվապատկեր Նիկոլներու և անոնց ննանյացը խորամանկությամբ և աստվածամարտ չարությամբ»: Դիվապատկեր Նիկոլը ռուսական ցար Նիկոլայ առաջինն էր, որի օրոք հայ Եկեղեցին կորցրեց իր համեմատական ազատությունը և ռուսական արքունիքում ժրագրվեց և հայ իրականությանն ու Եկեղեցուն պարտադրովեց «Պոլոյշենի»-ն, իբրև դիմադրձ գործողություն ընդիմ հայ Եկեղեցու անկախության ծգտումների, և հայ պետականության վերստեղծումը առնիշտ վերացավ ռուսական կայսեր «ողորմած կամոք»: Այդ հոդվածներով Խրիմյանն ընթերցողներին ներշնչում էր ազգային արժանապատվություն, երբեմն էլ նույնիսկ սնապարծության ոգով, բայց այդ երանգներն անխուսափելի էին տիրող ռեժիմի պայմաններում, երբ բռնապետությունը կլանում էր փոքր ազգերի ֆիզիկական ու հոգեսոր ուժերը:

1858թ. թիվ 6-ից այս բաժնի հոդվածները գրում է Վարագա միաբանության անդամ, «Ժառանգավորացի» ուսուցիչ Տիգրան Գալիքակճյանը: Նրա մոտ ևս տիրապետում էր նույն սկզբունքը. անցյալի հզոր պետականությանը հակադրել ներկայի՝ պետականությունից զորկ, տարբեր լուծերի տակ իր գոյությունը մի կերպ քարշ տվող ժողովրդի անհույս կացությունը: Ընթերցողի աչքի առաջ շարունակվում է թագավոր հերոսների շարքը: Նեղինակի բանադրանքին է արժանանում Տիգրանի որդի Տիրանը, որն ապստամբեց իր դեմ և չարիքներ հասցրեց Հայաստանին: Գալիքակճյանի հոդվածներն աչքի են ընկնում քրիստոնեական կրոնի նկատմամբ մեծ նվիրվածությամբ և ջատագովությամբ: Չնայած այս բաժնը նվիրված էր հայ աշխարհիկ պետերի մեծագործությունների գովերգմանը, սակայն Գալիքակճյանի գրչի տակ այս հոդվածները դառնում էին աստվածապաշտության քարոզներ, կարծես թե փոխարինելով առաջին բաժնին՝ Եկեղեցական հայրերի վարքագրությանը: Բայց նրա հոդվածներին ևս հատուկ է կրքոտ հայրենասիրությունը, ամեն մի աշխարհիկ պետի՝ Հայաստանի հզորացնան գործում ներդրած ավանդի գնահատումը: Այսպես օրինակ, մեծ գնահատականի է արժանանում Վուանչապուի թագավորը՝ Մեսրոպ Մաշտոցին և Սահակ Պարթևին աջակցելու համար: «Վուանչապուի

ազգի մը սիրտը, միտքը հագեցնող կենդանության և սնունդ տալու միջոց եղող հավիտենական անկորուստ և անսպասելի կերակուր մը ընդիհանուր ազգին նատակարարելու հոգ տարավ»<sup>1</sup>: Նեղինակը լավ է հասկանում, թե այդ հոգեսոր սնունդը ինչ մեծ նշանակություն ունեցավ մեր ժողովրդի հարատևության համար և այդ պատճառով Վուանչապուի թագավորին արժանի է համարում «մեծ երախտագիտության, շնորհակալության, օրինության և ոսկե արձան կանգնեցնելու», որպես այդ ակտի քաղաքական նշանակությունը խորապես գնահատող գործի:

Մարզպանական Հայաստանի ոչ մի քաղաքական գործիչ չի գրավում հանդեսի աշխատակիցների ուշադրությունը:

Արշակունիների անկումից և հայ պետականության կործանումից հետո մի մեծ ժամանակահատված դուրս է մնում ամսագրի խմբագրի ուշադրությունից: Ապա այդ բաժնի հերոսներն են դառնում Բագրատունի դիմաստիայի աշխարհիկ տերերը՝ Աշոտ, Սմբատ, Աշոտ 2-րդ (Երկար), Արաս Բագրատունիները, ամեն մեկն իր առաքինություններով, հայ պետականության հզորությանը նպաստած իր ավանդներով: Ըստ հեղինակի, պետք չէր բացասական խոսքեր ասել հայ իշխանական տների մնացորդների մասին, որպեսզի ընթերցող գյուղացին և արիեստավորը միայն դրական օրինակներ ունենան իրենց առաջ: Այդ պատճառով գովարանվում էր այն թագավորը, որն իր հպատակների բարորության մասին էր հոգում. դրվատանքի էր արժանանում Գագիկ Բագրատունին, որն իր «առատարտությամբ արքունական հարկերը քիչցուց և շատերն ալ բոլորովին տուրքե ազատ ըրավ»: Անարգանքի սյունին են արժանանում այն երդմնազանց իշխանները, որոնք հայոց շքեղ մայրաքաղաքը՝ Անին հանձնեցին հույներին: Ողբալով Բագրատունի դիմաստիայի անկումը, հայ պետականության վերացումը Հայաստանի տարածքում, մյուս թիվը ընթերցողին պատճում է Կիլիկիայի հայկական պետականության ստեղծման մանրանասները: Օսմանյան լժի տակ հեծող ժողովրդի համար նման բովանդակության հոդվածներն ունեին անժխտելի դրական նշանակություն: Նրանք ցույց էին տալիս մեր ժողովրդի հարատևության գաղտնիքը, գոյապահպաննաման նրա անկորուստ կամքը: Այդ հոդվածներով Խրիմյանը ցանկանում էր ժամանակի հրամայականին համապատասխան՝ զարկ տալ ժողովրդի դիմադրձ կարողություննե-

1. Աբծոի Վասպուրական, 1859, թիվ 1, էջ 8:

րին, որպեսզի աննկուն մնա ազգային ոգին: Դայրենիքը փլատակներից շենացնելու, հանգած ծուխը նորից ծխեցնելու գործն իր վրա պետք է վերցներ հայկական երիտասարդությունը, որին վստահված է նաև ազգի աճեցման և բազմացման գործը: Ներշնչված այդ գործի կարևորությունից, Խրիմյանը դիմում է հայ երիտասարդությանը. «Ապա ժողովեցարուք, արիք ի վայրավատին բաժանմանն, եթե ոչ անձանք գեր անձկարեաց սրտին սիրով, արիք, ելեք իրեւ հզոր, զի բափե զգինի, հասեալ շուրջ փարեցարուք զանմահ հիշատակոք ձեր նախնյաց»<sup>1</sup>:

Խրիմյանը հեռու է վաճում ողբն ու կականը, բավ են այրիացյալ Ասիի, Դվինի, Վաղարշապատի ու Գառնիի, Մանազկերտի ու Տիգրանաշենի, հայկական հարյուրավոր շեների ու ավանների փլատակները, պետք է վերանորոգել հայրենիքը, որովհետև գալիս են նոր ժամանակներ: Խրախուսելով ժողովրդին, որ անդարձ կորել են Շուլիանոսի, Ջազկերտի և Լենկեմուրի ժամանակները, Խրիմյանը ոգևորված հայտարարում է. «Արևն քաղաքակրթության ի հորիզոն երկնից բարձրացավ. չիք բարբարոսական բռնակալություն կամաց»<sup>2</sup>:

Վարակիչ էր այդ հավատը և խրախուսիչ, սակայն և տարակուսելի. Օսմանյան բռնակալության պայմաններում ինչ խոսք կարող էր լինել բռնակալության վերացման մասին: Գուցե այս անգամ նա ցանկալին մատուցում էր իրեւ իրականություն, կամ գուցե 1856-ի «Դատուր Շումայունի» հրովարտակը պատրանքներ էր ստեղծում հայ գործիշների մոտ և նույնիսկ գավառի հարստահարությունների ականատես Խրիմյանը հայտարարում էր քաղաքակրթության արևի ծագման մասին:

Դրապարակախոս Խրիմյանի գործունեությունը շատ բարձր է զնահատել Միքայել Վարանդյանը. «Մի ծայն միայն ինչում էր բարձր ու խրոխտ այդ վեհերոտ, մեղկացուցիչ լոռության մեջ, ինչում էր մարդկային արժանապատկության լիակատար գիտակցությամբ... Զայնը ինչում էր Վասպուրականից, Վարագա բարձունքներից, ուր թառել էր «արծիվը» գուտտենքերգյան մեքենան շալակած և ուսկից նա բափահարում էր անդադար իր հզոր թևերը, արծակում էր սուր ծիչը դեպի հայոց աշխարհի մշուշապատ հորիզոնները, լալիս էր իր հարազատ ժողովրդի հետ, մարմնացնում էր նրա տաճանքն ու նա-

1. Արծոի Վասպուրական, 1859, թիվ 5, էջ 110-111:

2. Նույն աելում:

## Մերտի ԽՐԻՄՅԱՆ. Հասարակական-քաղաքական գործունեությունը

հատակությունը և շեփորում նրա հուսահատ բողոքը խավարի և բռնության համատարած ուժերի դեմ: Խրիմյանն էր: Այն ժամանակվա հայության խիղճը, նրա հղեցրի սգավոր ու ցավատանջ թարգմանը: «Վասպուրականի Արծիվը» գուցե միակ հեղափոխական իրողությունն էր հայկական հորիզոններում, միակ օրգանը հայրենիքի մեջ, որ նրա անհամար փլատակները ողբալով հանդերձ կովի, ընթոսացման հրավեր էր կարդում նոր սերնդին»<sup>3</sup>: Սակայն կարծ տևեց պատրանքների շրջանը:

Ընթերցողների համար մեծ էր այդ բաժնի հոդվածների նշանակությունը: Դայ պետականության բացակայության պայմաններում ժողովրդին ցույց տալ իր հերոս նախնիների կատարած սխրանքները, նշանակում էր դաս տալ ժամանակակցին, նրան պատրաստել պայքարի, նրա մեջ վառ պահել ընդվզումի գաղափարը:

«Տեսարանը հայրենի աշխարհաց» բաժննը նպատականդված էր ընթերցողին ծանոթացնել վաստմական Դայաստանի բոլոր վայրերի հետ. «Արծուի Վասպուրական» յուր գլխավոր պարտքը համարած է բոլոր Դայաստանին փառազուրկ տիխուր վայրաց վրայոք աշխարհագրական տեղեկություններ տալով անոնց իին ու արոի վիճակը ըստ կարեաց նկարագրել և իրեւ պատկեր տիխրադեմ հայրենակարուտ համագոյաց աչքին դիմաց դնել»<sup>4</sup>: Ապա հետևում են հոդվածներ, որոնք նկարագրում են հայկական վաճքերը, մենաստանները, եկեղեցները, քաղաքները, գյուղերը: Ընթերցողի աչքի առջև հառնում է «լայնածավալ Դայաստանը իր սրտահույզ տեսարաններով, իր տիխուր ու վեհապանծ փլատակներով, Մեսրոպների, Վարդանների դեռ խոսուն ստվերներով»<sup>5</sup>: Այդ շարքում տեղ են գտել հոդվածներ, որոնք վերաբերում են նաև Օսմանյան Թուրքիայի հայաբնակ վայրերին, ինչպես նաև Արևելյան Դայաստանի բնակվայրերին: Այսպես, հոդվածաշարեր են նվիրվում Վարագի վաճախների համալիրին<sup>6</sup>, Վան-Տուա նահանգի հուշարձաններին, գավառներին, նշանավոր գյուղերին (Արտամետ, Զվատան, Բերդակ, Ավանց, Լեզք), այնտեղ գտնվող վաճքերին:

Այդ հոդվածները փաստորեն արձագանքեցին նոր-նոր քայլեր ա-

1. Մ. Վարդանյան, Հայկական շարժման նախապատրյունը. Ժն., 1912, էջ 202-203:

2. Արծուի Վասպուրական, 1858, թիվ 1, էջ 16:

3. Մ. Վարդանյան, նշվ. աշխ., էջ 296:

4. Արծուի Վասպուրական, 1858, թիվ 6, 7, 8, 9:

## ԵՄՅԱ ԿՈՍՏԱՆԴՅԱՎԱՆ

նող հայ հնագիտությամբ, ժողովրդագրությանը և ազգագրությանը, և իրենց մնայուն տեղն ապահովեցին հետագայում այդ ասպարեզում գոված աշխատությունների մեջ:

Արևելյան Հայաստան կատարած ճանապարհորդությունից հետո (իրան կամդրադառնանք քիչ հետո) հողվածներ են լույս տեսնում նվիրված Երևանին, արևելահայության մշակութային կենտրոն Տփխիսին, Սյունյաց աշխարհին, Ղարաբաղին և Շուշի քաղաքին: Վերջին հողվածների նպատակն էր արևմտահայությանը մանրամասն տեղեկություն տալ արևելահայության կացության, իրավիճակի, ուսումնական բաժնի դրվածքի, այնտեղ գործող ընկերությունների, վանքերի մասին: Ամսագիրը, խմբագիր նպատականդվածությամբ, պետք է կատարեր հայ ժողովրդի երկու հատվածները իրար կապողի պատվավոր առաքելությունը: Եվ դա մասամբ հաջողվում էր Խրիմյանին: Արևմտահայությունը ժանոթանում էր այլ տերության հպատակության ներքո գտնվող իր եղայրներին:

Արևմտյան Հայաստանի պատմական վայրերի նկարագրությունները, վանքերի ստորագրությունները մեզ համար մանավանդ այժմ ունեն անգնահատելի արժեք, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ դա մեզնից բռնությանը խլված պատմական հայրենիքի մի մասի հավաստի նկարագրությունն է, վանքերի արձանագրություններով, ճարտարապետական կառույցների մանրամասներով:

**«Քուրաստան բարոյական առաքինությանց»** բաժինը, ինչպես ցույց է տալիս խորագիրը, բարոյախոսական հողվածներ են, որոնք գովարանում են բարությունն ու առաքինությունը, հայրենասիրությունն ու անձնագործությունը, քաջությունն ու ազնվությունը, համբերությունն ու հանդուժողականությունը և ընդհակառակը՝ անարգանքի սյունին գամում չարությունն ու անբարոյականությունը, դավաճանությունն ու ուխտադրությունը, եսասիրությունն ու օտարամոլությունը, վախկոսությունն ու նենգությունը և մարդկային այլ ստոր կրքեր, հակումներ: Հաճախ այդ ամենն արվում էր Ավետարանից բերված կամ Աստվածաշնչից քաղված օրինակներով, առօրյա կյանքում հանդիպող փաստերով ու ընդհանրացումներով:

Այդ բարոյախոսական հողվածները նոր կարդալ սովորող հայ գյուղացուն ուսուցանում էին ամեն կերպ պայքարել գոյատևան համար, բացել նոր դպրոցներ ու վարժարաններ, հաստատ մնալ հայրենի երկրի վրա, չըռնել աստանդականի ցուպը, շենացնել նախնիներից

## Մկրտիչ ԽՐԻՍՅԱՎԱՆ. Հասարակական-քաղաքական գործություններ

ժառանգություն ստացած երկիրը: Այս բաժնի հեղինակ աշակերտները հորդորում էին հայ մեծասուններին իրենց ունեցվածքից բաժին հանել հայրենիքը կանգուն պահող գյուղացիներին, օգնել նրանց գրագետ դասնալ, հասնել «դարուն լուսավորության աստիճանին»: Ազգապահանության համար մղվող պայքարուն ազգի միաբանությունը նրա հարատևության ամենաառաջին գործոնը համարող գործիչները ծգտում էին չտեսնելու տալ ազգի ներսում գոյություն ունեցող սոցիալական անհավասարությունը, հորդորներով ու կոչերով ցանկանում էին պահպանել ազգի միասնությունը:

Դետաքրքրությամբ էր ընթերցվում ամսագրի «Բնական գիտելիք» բաժնը, որն ընթերցողներին ծանոթացնում էր բնական երևույթներին՝ երկրաշարժին (գետնաշարժ), անձրևին, կարկուտին, երաշտին, դրանք առաջացնող պատճառներին: Բնական այդ երևույթները ամսագիրը ցանկանում էր մեկնաբանել իր ժամանակի գիտության օգնությամբ, ժխտում էր երևույթների սնուտիապաշտական պարզաբանումները, որոնք «կաղտոտեն բոլոր նորագարք պատանյաց խեղճ մտքեր ...ողորմելի պատանիք սխալ դաստիարակության մեջ մոլորյալ և պաշարյալ կմնան չար սխալմունքը յուրյանց մտացը մեջ խորունկ արմատացած»: Այդ պատճառով էլ հեղինակ խմբագիրը պարզաբանում է նմանատիպ հարցերը «արդի բնագիտաց և աշխարհագրաց կարծիքներով»: Փաստորեն «Արծուիի» վարագյան առաջին շրջանի թվերը հետապնդում են առավելապես լուսավորական նպատակներ: Վասպուրականի հայությունը, որ երբեք չէր ունեցել տպագիր պարբերական, այժմ սովորում էր կարդալ, դատել, մտածել: Խմբագիրը ստիպում էր իր ընթերցողներին ընթանալ կյանքին համընթաց և պահանջներ առաջադրել:

Ամսագիրը սովորեցնում էր գյուղացուն միանալ, ընկերություններ կազմել, որոնք կիեշտացնեին նրա իրավիճակը ծանր հարկապահնության օրերին, անբերդի տարիներին: Խրիմյանը խորհուրդ էր տալիս Հայաստանի գավառներում ստեղծել չորս տիպի ընկերություններ: Դրանք էին՝

ա) **հարկավճար ընկերություն**, որը պետք է կազմակերպվեր ամեն գյուղի կամ թաղի մեջ արքունի հարկահավաքներին դիմակայելու նպատակով:

բ) **Խնայաշահ ընկերությունը** կարող էր կազմվել նույն արհեստի անձնավորություններից, որոնք օրվա առանձին ծախսերից մի փոքր

գումար ավելացնելով և հավաքելով որոշ ժամանակ անց կարող էին օգնել ընկերության նեղն ընկած անդամներին:

գ) **Աղքատասիրաց ընկերությունը** կարող էր ստեղծվել եկեղեցներին կից, ուր տեղի ժողովուրդը շաբաթական վաստակից 1/40-ը նվիրելով ընկերությանը կարող էր հոգալ աղքատների հոգսերը:

դ) **Ընթերցասիրաց ընկերության** անդամները տարվան վաստակի 1/100-ը վճարում են ընկերությանը, ստեղծում նի դրամագլուխ, որով գնում են ազգային հին ու նոր գրքեր, լրագրեր, դրանք դնում են մի պատշաճ տեղ, որպեսզի կարողանան օգտվել դրանցից: Դժվար է ասել, թե Խրիմյանի այդ խորհուրդներն ու առաջարկները ինչ օգուտներ էին տալիս գյուղացուն և ինչքանով էին գործադրվուն: Սակայն աներկրայորեն պարզ է, որ աշխատավոր գյուղացիության կյանքը բարելավելու հոգսերով տարված Խրիմյանը ցանկանում էր դժվարություններին դիմագրավելու ուժ ներշնչել նրանց<sup>1</sup>:

**«Թանգարան Յայկագյան դպրության»** բաժինը իր առաջ դրել էր երկու նպատակ. առաջինը՝ հրատարակել վանքերում պահված ձեռագիր հիշատակարաններից հայ ժողովրդի պատմության վերաբերյալ արժեքավոր հատվածներ և երկրորդը՝ գեղարվեստական գրականության ննուշներ հրատարակել թե արդեն հրատարակված գրքերից և թե անսագրին աշխատակցող հեղինակների ստեղծագործություններից: Այսպես, հատվածներ են տպվում թերդակ գյուղի հին գրչագիր Յայսմագուրքից, Կենդանանց գյուղի գրչագիր Ավետարանից, Վարագա վանքի ընտիր գրչագիր Եսայու մեկնությունը, Յարանց վարուց հիշատակարանից, Շուշանց գյուղի գրչագիր մեծ ավետարանից և բազմաթիվ այլ հիշատակարաններից: Խմբագիրը հիշատակարանների այս հատվածների ընտրությունն ու հրատարակությունը կատարում էր խիստ նպատակային: Յրատարակվում էին այն հոդվածները, որոնք վերաբերում էին հայ ժողովրդի պատմության որևէ նշանակալի դրվագի, ողբերգական կամ հերոսական անցքի ու իրադարձության: Դրանք փաստորեն նպատականոված էին հայ ժողովրդի պատմության դասեր տալ հասարակ ժողովողին, հաղորդակից անելով նրան բազմադարյան գոյապայքարի և հարատևության գաղտնիքին:

1. Մի ասանամակ անց, 1868-ին նոյն գործանությունն էր ծափակել նրա սաներից մեկը՝ գարեգին Մրգանձայսանցը, որը խարսրդներից անցել էր զործնական բայերի և փոքրությունը գոյացածքների ամերով ստեղծել փախատիկան բանի, զարկ առ երկրագրծության գարգանանը (տես Է. Կոստանդյան, Գարեգին Մրգանձայսանց, էջ 169):

Այլ էր երկրորդ տեսակի գրվածքների բնույթը: Դրանք իր ժամանակին հրատարակված գեղարվեստական գրականության ննուշներ էին, ժառանգավորաց վարժարանի աշակերտների ստեղծագործական փորձերը, գրական թորովանքները: Դայտնի և անհայտ անունների մի շարք է մեր առաջ բացում այդ բաժինը: Իրենց գրական թորովանքներն սկսող աշակերտները, ոգեշնչված ուսուցչի կերպարով, կյանքով ու գործելակերպով, ցանկանում են իրենց նվիրաբերել հայրենիքի վերաշինության, ազգատության, վերաստեղծման սուլր գործին: Արսեն Թոխմախյան, Պաղդասար Գասպարյան, Եղիշե Մեսրոպյան, Յայշյա Մարգար և վերջապես ամենից նշանավորը՝ Գարեգին Մրգանձայսանցը՝ հայ բանահյուսության, բանագիտության, ժողովդրագորության և ազգագրության մեծ երախտավորը: Արսեն Թոխմախյանը հետագայում դարձավ հեղափոխական, ազգային-ազատագրական շարժման անվանի գործիչ և, դժբախտաբար, ունեցավ եղերական վախճան: Նրանց ստեղծագործությունները չհարստացրին հայ գրականությունը մնայուն ննուշներով, դրանք ուղղակի համապատասխանում էին ժամանակի գաղափարական մթնոլորտին: Այդ բաժնի ամենամեծ նշանակություն ունեցող հոդվածը ապագա ականավոր վիպասանի՝ Ռաֆֆու (Յակոբ Մելիք-Յակոբյան) նամակներն են՝ ուղղված խմբագրին: Նախքան նամակները հրատարակելը խմբագրիրը ընթերցողներին ծանոթացնում է նամակագրի անձին, նշելով, որ նա ստվորում էր «Տփխիսի մեծահոչակ Ներսիսյան դպրոցում, որից հետո վերադարձել է իր հայրենի Սալմաստ քաղաքը և «մեծափույթ ջանքերով» աշխատում է հայրենակիցների մեջ տարածել ուսման սերը: Նամակագրին իր խորը հարգանքն է արտահայտում «Գերիմաստ հոր», նրա «հրավիրակների» նկատմամբ, նշում այդ ստեղծագործությունների «մագնիսական ծգողությունը», ընթերցողի մեջ ազգասիրական հուր վառելու ունակությունը: Յակոբ Մելիք-Յակոբյանը իր ուրախությունն է հայտնում, որ Խրիմյանը թողել է «մայրաքաղաքի պատիվներն ու զվարծակի կյանքը», գնացել, միսրճել է արևմտահայ գավառը՝ իր հայրենակիցներին «տգիտության խավարից» դուրս բերելու նպատակով: Նա քաջ գիտակցում է այդ գործի ողջ դժվարությունը, անհամար խոչընդոտներ հաղթահարելու անհրաժեշտությունը, բայց հանողված է, որ խմբագրը կարող է տոկալ, «համբերությանը ընդունել ամեն տեսակի վշտեր, տառապանքներ, հայիոյանքներ»: Ռաֆֆին ցանկություն է հայտնում մշտական գրագությունը:

ուություն պահպանել խճագրի հետ, նրանից լուրեր ստանալ ժառանգավորաց վարժարանի և անսագրի հաջողությունների ու դժվառությունների մասին: Այդ նամակը, փաստորեն, Խրիմյանի գործի առաջին լուրջ գնահատականն էր: Ապագա վիպասանը, թեև հեռու, մեծ ուշադրությամբ հետևում էր Խրիմյանի գործունեությանը, քաջ գիտակցում դրա կարևորությունը: Չի ուշանում և երկրորդ նամակի հրատարակությունը, որով նամակագիրն իր անձկությունն է արտահայտում նամակի պատասխանի ուշանալու համար, հետաքրքրվում է, թե «որպիսի սաստկությամբ նորությունը կը ճարտնչի հնության հետ»: Այդ երկու հասկացությունների հակամարտությունը համարելով բնական երևույթ, Մելիքզադե-Շաֆֆին հայ ազգի թուլանալն ու տկարանալը բացատրում է հոգևորականների անտարբերությամբ և ապաշնորհությամբ: Նա ներողություն է խնդրում խճագրից հայ հոգևորականությամբ մեղադրելու համար, ապա բացատրում է իր միտքը. «Նախնի ամձնանվեր սուրբ հարք, Սուրբ Սահակ, Սուրբ Մեսրոպ աշխատում էին ազգին մտաց լուսավորության համար», իսկ ժամանակակից հոգևորականները «ծույլ անպիտան կյանքը դյուրությամբ անցուցանելու համար», ապաստանեցին վանքերում, որոնք դարձրին մեկ-մեկ դյուակներ: Այդ ապերախտ հովիվները իրենց ազգը թողել են անտեր: Բայց վերջինս (ազգը) հարգանքով է վերաբերվում նրանց և կերակրում է իր ճակատի քրտինքով: Նամակագիրը ժամանակակից վարդապետներին համարում է «խավարի արբանյակներ», որոնք դեմ են լուսավորության տարածմանը: Շաֆֆին քաջատեղյակ էր այն սուր պայքարին, որով ընթանում էր Խրիմյանի գործը Վարագում, Վանում, Վասպուրականում: (Չետագայում այդ միտքը իր գեղարվեստական արտացոլումը գտավ «Կայծեր» վեպի գլուխմերից մեկում): Նամակագիրն իր կարծիքն էր արտահայտում, որ լուսավորության գործը պետք է վերցվի հոգևորականների ծեռքից և աշխարհիկ ուսումնականները «չպիտի թողուն, որ նույն վանական եղբայրները միշտ անհոգության վարշամակին մեջ պահեն իրենց հանձնված ազգը»: Առավել հետաքրքիրը նամակին տված խճագրի մեկնաբանությունն է: Ներողություն խնդրելով իր լծակից հոգևորական եղբայրներից, Խրիմյանը գտնում է, որ, հիրավի, հայ հոգևորականությունն արժանի է դատապարտության և պարսպանքի, որովհետև «դաստիարակաց շավեն բոլորովին խոտորելով» հեռացել են ծշմարիտ քրիստոնեական կրոնի պահանջներից: Ազգի և ժողովրդի երջանկության համար

## Ակրտիք ԽՐԻՄՅԱՆ. Հասարակական-քաղաքական գործուելությունը

Խրիմյանը գտնում է մի անհրաժեշտ պայման՝ հոգեոր և աշխարհիկ ղեկավարների միաբանությունը: «Տրդատ և Գրիգոր», - ահա նրա հավատամքը: Խրիմյանի քննադատությունը թեև խիստ, սակայն չի կրում ոչնչացնող շեշտադրություն: Դոգենորականության նրա քննադատությունը կրում է բարելավելու նպատակ: Խրիմյանը ելնում է ավետարանական ծշմարտությունից, եկեղեցու սպասավորների առաջ դրված Քրիստոսի պահանջներից՝ «Դուք եք լույսը աշխարհի», «Դուք եք աղը Երկրի», բայց դրա փոխարեն նրանք դառնում են «շիջած ճրագներ», ժողովրդին լույս տալու փոխարեն նրան պահում են տգիտության խավարի մեջ և քանի որ նրանք «հեղգությամբ, տգիտությամբ անհամ դարձեր են», ուրեմն արժանի են «ոտից կոխան ըլլալով իրև անպիտան և ոչինչ համարվել»<sup>1</sup>:

Չետաքրքիր է մի հանգամանք: Խրիմյանի և Շաֆֆու ծանոթությունը չսահմանափակվեց միայն այդ նամակներով և խճագրի կողմից դրանց հրատարակությամբ: Նույն 1858-ին Շաֆֆին Պարսկաստանից անցավ Արևմտյան Հայաստան, շրջագայեց Տարոնում և Վասպուրականում, անձանք եղավ Վարագա վանքում, երեք ամիս շարունակ վայելեց Խրիմյանի և նրա մտերիմների հյուրընկալությունը: Այդ բոլոր իրադարձություններն իրենց գրական կերպարանքն ստացան «Աղբանարա վանքը» հոդվածում, որը լույս տեսավ 1860-ին «Հյուսիսափայլում»: Հոդվածը ուշադրության է արժանի մի քանի հանգամանքներով: Ամենից առաջ Շաֆֆին իր խոհերն է կիսում ընթերցողների հետ ազգային լուսավորության խնդիրների վերաբերյալ, իր ծրագիրն առաջադրում՝ ժողովրդի մեջ լուսավորություն տարածելու գործը աշխարհիկ գործիչների ծեռքը հանձնելու մասին: Ապա նկարագրում է Արևմտյան Հայաստանի ամենախոշոր վանքերից մեկը՝ Աղբանարա վանքը, որի վանահայրը կրում էր Աղբանարա կաթողիկոսի բարձր կոչումը, իսկ վանքը իր խոշոր տիրույթներով համարվում էր կաթողիկոսություն: Սակայն հօչակավոր այդ վանքի հսկա հարստությունները ծախսվում էին միաբանության և վանահոր կողմից, առանց փոքրինչ նպաստելու ժողովրդի լուսավորության գործին: Դրանից երկու տասնամյակ անց, երբ Գարեգին Մրվանձտյանցը նկարագրում է կաթողիկոսի վեհարանը, այն հակադրում է վանքում գոյությունը հազիվ պահպանող խղճուկ դպրոցի և ցնցոտիածածկ աշակերտների ողոր-

1. Ըրծուի Պատմութական, 1858, թիվ 7, էջ 199:

մելի կացությանը: Եթե այդպես էր տասնամյակ անց, ապա կարելի է պատկերացնել իրական կացությունը Շաֆֆու ճանապարհորդության ժամանակ: Վանքի նիշաբանությունը, վանահոր գլխավորությանը, խիստ անհանգստացած էր Խորհյանի վարագյան գործունեությունից, տպարանի առկայությունից, պարբերականի իրատարակությունից: Երկու վանքերի համեմատության դեպքում ժողովուրդը նախապատվությունը տալիս էր Վարագին: Վախ կար, թե կնվազեին Աղթամարի հասույթները: Այդ պատճառով նույնիսկ Վարագից հեռու գտնվող վանքի միաբանությունը վանահոր գլխավորությանք պայքար սկսեց Խորհյանի դեմ: «Քո Մկրտիչ վարդապետն ալ, հողը անոր գլխին, ան ապերախտը բողավ անապատը, իր կրթված, իր սնված սուրբ տեղը, ուզեց տպարան ու դպրոց հաստատել, լուսավորություն տարածել, իհմա ան է, որ չարվադարի նման տարին մի անգամ կվագե դեափի Պոլիս ամիրաներից օգնություն խնդրելու, մեծ պարտքերուն տակ է ընկած, անխելք գործ, անիմաստ բան: Այ թշվառական, ով քեզի կստիպեր քո չափեն դուրս շալակ վեր առնուլ, ոտոյ կոտրվի տակը մնաս: Վանքի խորշերում մի կտոր հաց չկա՞ր, որ ուտեիր, քո աղոթքիդ, ժամ ու պատարագիդ լինեիր: Այդ գործերեղ ինչ կը թափվի, որ դու հավաքես: Ազգը կլուսավորվի, թող մի քիչ ալ խավարի ու անդունդ գնա, քեզ ի՞նչ փույք: Բոլոր Վասպուրականը քեզ թշնամի ես արել, չգիտես՝ ինչ է շինածդ: Վարագումը տպարան ու դպրոց է հաստատել, թուի, կործանվի տպարանն ալ, դպրոցն ալ... Կը տեսնենք, որ Արծուի վերջն ալ, ինչպես կը թոցնեն նրան իր ծտերուն հետ դեափի Բյուլամնդին: Յո հայոց ազգը, մեր բոլոր սրբերեն անիծյալ ազգը, վերջը պիտի կործանվի, թե քարոզես, թե չքարոզես: Մեռած իհվանդի բերանը միշտ դարձան լեցրու, տեսնենք կը կենդանանա՞»:

Այսպես էին խոսում Աղթամարա ճիշտանության անդամները վանքն այցելության եկած ճանապարհորդ գրողի՝ Ռաֆֆու հետ, գանգատվում Խրիմյանից նրա գործունեության համար: Սակայն Ռաֆֆու համակրանքը աներկայորեն հալածվող և ճիշտ աստանդական «Արծվի» խմբագրի՝ Խրիմյանի կողմն էր: Խրիմյանի գործունեությունը «իրեն խնբագիր-հրատարակիչ, գրող և քարոզիչ, և ուսուցիչ» բարձր է գնահատվել ռուս ուսումնասիրողների կողմից. «Արծուի Վասպուրականի» ծրագրու և բովանդակությունը բավականին ընդգրկուն է. կրոնա-բա-

Իշխող նման նտայնության պայմաններում իսկապես աներևակայելի արգելքներ եր հաղթահարում Խրիմյանը: Սակայն նրան առավելապես նեղողը նյութական միջոցների պակասությունն էր: Վերը բերված մեջբերումից, անգամ վանականների խոսակցության մեջ ընդգծվում է այդ հանգամանքը, որ Խրիմյանը տարին մեկ «վազում էր» Պոլիս՝ տեղի նեծահարուստներից օգնություն խնդրելու: Պարբերականում լույս տեսած խմբագրական բազմաթիվ հոդվածներում նա զանգատվում էր դրամի պակասությունից, ներողություն խնդրելով ընթերցողներից ամսագիրը անկանոն լույս ընծայելու, հրատարակման ժամկետները խախտելու համար: Նա պատճում էր, որ հաճախ Պոլիս է մեկնել նյութական միջոցների հայթայթելու, «հազիվ քանի նզ փակեթ թուղթ իր ամսաթերթերուն համար առած»: Նա ցանկանում էր ամսագրից բացի տպարանում հրատարակել ժողովրդի առօրյա կարիքները հոգալու գրեթե՝ Մաշտոց, ճաշոց, Ավետարան, ընթերցարան, բայց այդ գործը հնարավոր չէր իրականացնել, որովհետև ոչ ոք չի պատկերացնում, թե «որչափ գումար դրամ պետք են այդ խոշոր խոշոր գրքերու տպագրության ծախուց»: Դրամի և նյութական այլ միջոցների խիստ պակասից գանգատվում էր Խրիմյանը «Արծուի» հրատարակության գրեթե բոլոր տարիներին իրու առաջնորդող գրված այն հոդվածներում, որոնք ինքն անվանում էր «նախադրություն»: Իր ընթերցողներին նա հայտնում էր, որ ծավալած լուսավորական գործունեությունը չի սահմանափակվում տպարանով և դպրոցով: Նա չէր կարողանում իր ողջ ուժերը տրամադրել այդ ոլորտներին, որովհետև ստիպված էր բահ ու փայտ ծեռքն առած հողերի և փոշիների մեջ նորոգել Վարագա մենաստանի հին ավերակները, հողագործի նման գրչի տեղ մած բռնել և աշխատել ագարակներում: Սակայն այդ բնագավառներում ևս Խրիմյանը նո-

1. Братская помощь пострадавшим в Турции армянам, стр. 601.

րարար է. Պոլսի ազգայիններից ստացած գումարով նա Եվրոպայից երկարե գութան է ներմուծում, Արևմտյան Հայաստանի անասելի ծանր երթևեկության պայմաններում, հասցնում Վարագ և ինքը սովորելով սովորեցնում հայ գյուղացուն արորը փոխարինել գութանով, զարկ տալ գյուղատնտեսության զարգացնանք: Այդ բոլոր գործերը դրամ էին պահանջում, դպրոց - գիշերօթիկ, տպարան, վաճքի հոգսեր... Վաճքի հասույթները չեն ծածկում այդ ծախսերը. «Աղքատության հարկն ստիպող է և ամեն պարագայի մեջ կը խոնարհեցնե ու կազմության բարձրաբռիչ արժիվն, մինչև նայինք, երբ պիտի Ժիր ազգասիրի մը ծեռք իր թևերուն ուժ տալով միշտ իր թռչները բարձրության մեջը պահե»<sup>1</sup>.- Երազում և մտորում էր գործիքը: Խրիմյանն արդեն հոգմել էր տարին մեկ Պոլիս գնալուց և գաղթօջախի ազգայիններին ծեռք մեկնելուց: Այս անգամ Խրիմյանը որոշում է ծեռնարկել մի այլ ճանապարհորդություն: Տակավին անփորձ երիտասարդ նա եղել էր Արևելյան Հայաստանում, այժմ ուրիշ էր. այլ հոգսերով էին ծանրաբեռնված նրա միտքն ու հոգին: ճանապարհորդությունը նրան հնարավորություն կտար վճռել երկու խնդիր. կազմակերպել մեծ հանգանակություն և հարաբերություններ հաստատել արևելահայ հասարակական գործիչների հետ, խորհրդակցել ազգին հուզող հարցերի շուրջ: Երկար ճախապատրաստական աշխատանքից հետո սկսվում է ճանապարհորդությունը, որի պատճառով էլ 1860թ. երկու թիվ հրատարկվելուց հետո, դադարում է «Արծուի Վասպուրականի» վարագյան շրջանի առաջին շրջափուլը:

Ճանապարհորդությունն սկսվում է 1860թ. նոյեմբերի 10-ին: Խրիմյանի ուղեկիցներն էին իր մերձավոր զինակիցները՝ Գարեգին Սրվանձտյանցը, Քրաչյա Սևիկյանը, Երեմիա Տևեկանցը, նրա հետ էր նաև Նարեկա վաճքի վանահայր Շովեսի վարդապետը (վերջին մեկնում էր դարձյալ հանգանակության, սակայն իր վաճքի համար):

Սկզբունք նրանք ժամանում են Եջմիածին, արժանանում կաթողիկոսի ընդունելությանը, նրանից կոնդակ վերցնում հանգանակություն կատարելու համար: Նրանք շերմ հյուրընկալության են արժանանում Երևանում, ծանոթանում տեղի հասարակական գործիչների հետ, սերտ հարաբերություններ հաստատում առանձնապես երիտասարդության

1. Արծուի Վասպուրական, 1860, թիվ 1, էջ 4:

հետո<sup>1</sup>: Մասնավորապես Խրիմյանը հետաքրքրվում է Արևելյան Հայաստանի ուսումնական գործի մակարդակով, կազմակերպված հասարակական ընկերություններով, նրանց հետապնդած նպատակներով: Առանձնապես ջերմ ընդունելության են արժանանում Խրիմյանն ու իր ուղեկիցները Թիֆլիսում՝ արևելահայության մշակութային ամենամեծ օջախներից մեկում: Մոտավորապես մեկ ամսի Թիֆլիսի տարբեր եկեղեցիներ տրամադրվում են Խրիմյանին: Առավոտյան և երեկոյան ժամերգության պահերին մի կողմ թողած Յայսմավուրքն ու Ավետարանը, նա հայրենասիրական քարոզներ է կարդում, ժողովրդի մեջ արքնացնում քաջ նախնիների, անցյալի փառավոր պատկերները, նրա ուշադրությունը հրավիրում ներկայի վշտու և անկումային վիճակի վրա: Եկեղեցու թեմից առաջին անգամ էին հնչում այդպիսի քարոզներ, ավետարանական հեզության և հաճրերության փոխարեն այդ տարօրինակ վարդապետը շանթեր էր տեղում վաշխառուների, տգետ հոգևորականների, ժողովրդի քրտինքը լափող ու կլանող ցեցերի գլխին<sup>2</sup>: Թիֆլիսի հայ պարբերականները ողջունում են Հայաստանի սրտից «խարրիկներ» թերող այդ բարձրաբռիչ Արծվին: «Կռունկ Հայոց աշխարհին» ամսագիրը 1860 թ. վերջին 12 թվում և 1861-ի թիվ 1-ում հոդվածներ է նվիրում և մեկնաբանում Խրիմյանի հայրենաշունչ քարոզները: Գարեգին Սուրայանը (հետագայում Մելքիսեդեկ վարդապետ, ապա Եպիսկոպոս) մեծ ոգևորությամբ է գրում այդ արժանավոր վարդապետի մասին: «Այս վրա երկրորդ կիրակին է, որ տեղվոյս եկեղեցական տաճարների սեղաններն դղրդում են մի հայրենասեր հոգվով վառված նորանկ վարդապետի նորօրինակ քարոզությամբ: ...Այս վրա երկրորդ կիրակին է, ասում են, որ Թիֆլիզու հայ ժողովուրդը շարժված ու ոգևորված իրան հայրենյաց հիշատակովը՝ խոսելու, դատելու և հարցադրելու, և բաղդատելու առարկա է շինել իրան անցյալ և ներկա կյանքն և իրան վաղեմի ու

1. Ուշագրավ է, որ անդի երիտասարդության ակնառու ներկայացուցիչները Խ. Արավանի աշակերտներն էին. նրանցոց մեկը՝ Նահապետ Արամասյանը մինչ այս հսմայլականներ էր անեղեկ Սիրայի Նալբանդյանի ենա, որն սպայում էր Պոլսի, սպերծ մասացել նրան, ովերովի այլ անակցությունը (Տես՝ Աշ. Հովհաննեսյան, Նարանցյանը և նրա ժամանակը. հ. 1, էջ 338): Այդ նույն անձնակարգ բրիտա ասքիներ նամակացական կայ պահպանեց Սրբանձայանի և Խրիմյանի ենա (ան, Գ. Ալթ, Գ. Արքանձայանցի ֆ., բաժին 2, գ. 70, 71), ապա հասարակական զարժմանը նաև առաջարկեց նամակ ներկայաց Արևմտյան Հայաստան և հետագայում իր աշխառներն էր ապամ «Արծվիկ Տարոն» երկշարաբարերքոտ: Ավելի ոչ ճան կոսակրթություն ընդունեց և դարձավ Աւանդ վարդապետ Արամայան:

2. Բանքեր Երևանի համալսարանի, 1970, թիվ 1, էջ 128:

այժմյան վիճակն: ...Ո՞վ է արդյոք այս արժանապատիվ վարդապետն, որ ազգային կյանքին քաջ ծանոթ լինելով, նրա վշտերի և ուրախությունների աղբյուրներն իմանալով, ազգի սրափության և ժամանակի ոգուն հարմար խառնում է աստվածասիրության քարոզի հետ և հայրենասիրության քարոզ և ճանապարհ է ցույց տալիս ազգայնությանը՝ կանգնել բարեպաշտության և բարոյականության վրա»: Դեղինակը գտնում է, որ այս վարդապետը խկապես գործում է իր կոչմանը համաձայն, փշրում է փառասիրության, ծովության և հեղգության, անձնապաշտության կուռքերը, «համարձակ լսելի անում իրան ձայնը ընդդեմ ամենայն ազգակործան աղետների և սկզբունքների»<sup>1</sup>: Մուրադյանն ընթերցողին ծանոթացնում է Խրիմյանի անձնավորության, նրա ծավալած գործունեության, գրական վաստակի հետ: «Արծուիի» հոդվածներից քաղած նյութերի հիման վրա նա արևելահայությանը ծանոթացնում է Արևմտյան Հայաստանի առաջին տպագիր օրգանի, նրա քարոզած գաղափարների, Խրիմյանի հիմնադրած «Ժառանգավորաց» դպրոցի, այնտեղ դասավանդող առարկաների, դպրոցում տիրող մթնոլորտի, դաստիարակության մերողների վրա: Դոդվածագրի ուշադրությունը գրավում է այն հանգամանքը, որ աշակերտների ուսումնառությունն ընթանում է աշխատանքային դաստիարակության ոգով: Դասերից հետո սաներից ոմանք մշակում են վանքի պարտեզը, ոմանք տպարանում գրաշարություն են անում, ոմանք մուր են քսում, նյուտները մանուլներն են աշխատեցնում և տպում «Արծուիի»: Դոդվածագիրը իր համակրանքը և համաձայնությունն է արտահայտում դաստիարակության նման մերողների նկատմամբ, գտնելով, որ այդ բանը գալիս է մեր իմաստուն ապուապապերից, մեր նախնիներից: «Այս է խկական եղանակ մեր նախնյաց դաստիարակության՝ զրոսանաց և ուսման պարապու ժամերն անգամ գործածել օգտակար մարզողության մեջ»<sup>2</sup>:

Թիֆլիսի հայությունը սիրով ընդունում ու շերմությամբ է արձագանքում Խրիմյանի մասին գրված հոդվածներին, առավել մեծ հետաքրքրություն ցուցաբերում Թիֆլիսի եկեղեցիներում հնչեցրած նրա քարոզների նկատմամբ, որոնցից ամեն մեկը վերածվում էր հայրենասիրական ոգեցունց ցույցի: Իբրև Խրիմյանի գործունեության արժանի գնահատական, քաղաքում բացվում է հանգանակություն՝ հօ-

գուտ նրա ազգանվեր ծեռնարկությունների: Տեղի մեծահարուստները գեներալ Երեմիա Արծրունու նախաձեռնությամբ, սկսում են գումարներ հավաքել:

Բանավոր քարոզներին գուգընթաց Խրիմյանը արևելահայ մշակութային կենտրոնում հանդես է գալիս գրավոր խոսքով: «Կոռունկ»-ում լույս է տեսնում նրա «Զայն Վասպուրական Արծվույն» հոդվածը, որի մեջ քննարկվում են լուսավորության և առաջադիմության խնդիրները, դատապարտվում հայ կղերը իր անհոգության և անգործության համար: Դայությանը հոդվածագիրը ներկայացնում է տգիտության ամայի դաշտում սպառվող ու հյուծվող բանակի տեսքով. «Մինչև երբ նոցա աչք ծեր գալստյան նայելով հայի ու մաշի, դուք, *լույս աշխարհի* (ընդգծումը Խրիմյանին է - է.կ.) անվանյալ կղերք, մինչև ե՞րբ իբրև լուսեղեն սյուն մի ծևանալով՝ չինիք առաջնորդ և չերթաք բանակին հառաջ. մինչև երբ 4-րդ դարու գիտության լուսափայլ դրոշակը ծովության, անհոգության վարշանակի մեջ ծալելով՝ չքարձրացնեք իբրև քաջ դրոշակիր գինվոր մի հառաջ խիզախելով: Մեր հույս և համբերություն հատավ, ծեր օգնականության ծեռքը մեզի պետք չէ»<sup>1</sup>:

Համարձակորեն խարազանելով հայ կղերին, վարդապետ Խրիմյանը առանց վարանելու հարց է բարձրացնում կղերից ետ վերցնել այն դերը, որ դարեր շարունակ վերապահվել էր նրանց՝ ժողովրդի լուսավորության գործը և այն հանձնել աշխարհիկ ուսումնականներին. «Մերժենք միանգամայն բոլոր կղերաց դասը, պարսավանք, բամբասանք, նախատինք կարկուտի պես թափենք նոցա գլխուն»<sup>2</sup>, - ժողովրդի դատաստանի ծայնն է հնչեցնում Խրիմյանը իր կարգակիցների ականջին և ապա հավելում, եթե հոգևորականությունը շարունակի մնալ այդ խորը թմրության մեջ, ապա անընդհատ նվազող հայությունը հայրենի լեռների և ծորերի մեջ «կորսված պիտի տեսնեմք գայլերեն ու զանազան գազաններեն հափշտակված»: Դատապարտող այս գրավոր խոսքը ուժեղացնում է բանավոր քարոզների ազեցությունը:

Քանի գնում այնքան նպատակավաց են դառնում Խրիմյանի քարոզների թեմաները: Լավ ծանոթանալով է շմիածնի վեհարանում տիրող վարք ու բարքին, Թիֆլիսի հայկական թեմի հոգևոր առաջնորդ

1. Կառունկ հայոց աշխարհի, 1860, թիվ 12, էջ 1007-1008:

2. Նույն տեպում:

Սարգիս Զալայյան եպիսկոպոսի գործունեությանը, Խրիմյանի քարոզներն սկսում են՝ շոշափել նաև նրանց հետ կապված հարցեր։ Ապա Խրիմյանն անցնում է տիրող պետության՝ ցարիզմի գաղութային քաղաքականության, փոքր ազգերին ծովելու տենդենցի քննադատությանը։ Նրա շնորհալի կենսագիրն ու զինակիցը՝ Գարեգին Սրբանձույանցը, որ ուղեկիցն ու ականատեսն էր եղել ողջ ճանապարհորդության, մեկ տարի անց, Կ.Պոլսի. «Մեղվում» հանդես եկավ անստորագիր հոդվածով, արևելահայերենով գրված «ճանապարհորդություն Մկրտիչ Վարդապետ Խրիմյան ի Ռուսահայք»<sup>1</sup> խորագրով։ Այդ մեծածավալ հոդվածը ճշգրիտ հաշվետվություն էր տալիս ընթերցող լայն հասարականությանը Խրիմյանի ճանապարհորդության մանրամասների վերաբերյալ, մեկ առ մեկ նշում տարբեր վայրերում Խրիմյանի կարդացած քարոզների բովանդակության և ազդեցության մասին։ Միևնույն ժամանակ հոդվածագիր աշակերտը զարմանում էր ուսուցչի խիզախության և համարձակության այդ աստիճանի համար, տարակուտում, թե ինչպես պատահեց, որ տեղական ցարական բարձրաստիճան չինովնիկները ահավոր խոչընդուներ բարձրացնելով Խրիմյանին էլ Արովյանի նման «սև կառեթով Սիակերիա» չափսորեցին, նման «ազատաբաղ» քարոզների համար։

Խրիմյանի համարձակ քարոզների լուրջ հասել էր Կ.Պոլսի նրա բարեկամներին։ Նրանցից Նշան Օտյանը նամակով գգուշացնում էր Խրիմյանին՝ ախորժակը չափավորելու համար։ «Գուցե օր մը բուպամսըզ քեզ փախուցանեն և դու ի դատարկ ելանես»<sup>2</sup>։

Խրիմյանի ճանապարհորդության և քարոզների մասին իր «Տոհմային հիշատակարանում» գրում է նաև նրա ուղեկիցներից մեկը՝ Երեմիա Տևկանցը։ Վերջինիս դիրքորոշումը լիովին տարբերվում է

1. Սևալու, 1862 թ., N 176-179։ Հետաքրքիր է մի հանգամտեր։ Հայաստանի Հանրապետության տարածքում պահպանվող այս ամսագիրը բարու թիվում պահան էր թիվ 178-ի վերջը և թիվ 179-ի սկզբը։ Ի՞նչ էր պատահեն, ինչո՞ւ բար գրապարաններում պահան են նոյն էջերը։ Որոնման մեջ պահպանները մեզ տարան Գրականության և արվեստի բանգարանի Գարեգին Սրբանձայանցի ֆոնդը ծնուազքերը։ Այլ ֆոնդի 4-րդ բաժնամ մենք գտանք մեզ հետաքրքրու խոլգածի Սրբանձայանցի մասակիրը, որի ընթերցանը մեզ համար հստակեցրեց մի բանի կենսառու հարցեր։ Տպագրված «Սեղան» Արևելյան Հայաստանում արժանացել էր ցարական զբարձության «ջերմ» ուշայրությանը և հոդվածը կրծատվել էր այն էջերամ, որը քննադատվել էր ցարիզմի 4-րդ բաժնամունքի լրտեսական զարծունաւորյանը, նշալի նրա ու ծառայությունները առաջադեմ գործիքին Սիրիք արտերելու զարծուն։ Կրծատված մասամ էր նաև էջմանին վեևսաբանում պիտի գելին ու շվայր բարեկի քննադատաւորյանը, եպիսկոպոսների կաշառակերպությունը (առև ԳԱԹ, Սրբանձայանցի թ., 4-րդ բաժին, զավերագիր N 47)։

2. ՀՀ ՊԿՊԱ, թ. 57, գ.1, գ.172, թ. 3։

Գ.Սրբանձույանցի վերաբերնունքից։ Եթե Սրբանձույանցը հիացած նկարագրում էր «Արծվի» համարձակությունը, նրա՝ թերությունները սրատես աչքով դիտելու և ձաղկելու ունակությունը, անհանդուժողականությունը անազնիվի, վատի, տնարդիի նկատմանը, ապա Տևկանցը քննադատում էր Խրիմյանին հենց դրանց համար։ «Նորա (Խրիմյանի - Ե.Կ.) Տփիսիսի մեջ բռնած ընթացքի համար շատ մեղադրեցի զինքն, թե՝ ոչ ապաքեն զվեհափառն և բոլոր միաբանությունը էջմիածնի արտաք կարգի սեր, հարգանք և պատիվ ցույց տվին քեզ։ Էր վասն էջմիածնա հոգևորական դասն յատեան քաշելեն հետո Մեղուի մեջ սարսափելի կերպով հարվածեցիր. Էր վասն կառավարության դեմ խիստ լեզու գործածելով պատճառ տվիր զքեզ Ռուսաստաններ հեռացնելու»<sup>1</sup>։

Այդ ճանապարհորդությանը տարիներ անց անդրադարձել է նաև «Մշակը», որի խմբագիրը հրատարակության է հանձնել իր հոր՝ Երեմիա Արծրունու հուշերը<sup>2</sup>։ Գեներալ Արծրունին պատմում է Խրիմյանի քարոզների գտած ժողովրդականության և իր նախաձեռնած հանգանակության մասին՝ հօգուտ Խրիմյանի և Նարեկա վանքի վանահայր Շովսեփի վարդապետի։ Հուշերում պատմվում է նաև, թե ինչպես մի քարոզի ժամանակ Թիֆլիսի Եկեղեցիներից մեկում Խրիմյանի մոտ բացահայտվեցին հոգեկան հիվանդության նշաններ, քարոզն անկապ դարձավ, որի պատճառով մեծ արագությամբ դատարկվեց Եկեղեցին ու ժողովրդի մեջ սառեց ջերմությունը Խրիմյանի նկատմանը։ «Դարաբերությանց անկանոնության պատճառով» «Մշակը» Վան հասավ Երկու տարի ուշ՝ 1880-ին։ Գարեգին Սրբանձույանցը Երկրորդ անգամ անդրադարձել է այդ ճանապարհորդությանը, այս անգամ իր ուսուցչի անբասիր անունն ու պատիվը բարձր պահելու համար։ Գրիգոր Արծրունուն ուղղված մեծածավալ նամակում Սրբանձույանցը կրկին ընդգծում է Խրիմյանի քարոզների նպատակառողջվածությունը, նրա հայրենասիրական ոգին, նրա հետապնդած խնդիրներն ու նպատակները։ «Խրիմյանը չէր եկած իրեւ բեռն ծանրանալու ժողովրդյան վրա՝ նվիրատվություններ միայն հավաքելու։ Նա եկած էր տալու և աշնելու. Նա կը քարոզեր, կը գրեր, կայցելեր, և կը համարձակիմ ասել՝ թե աննշան և անարդյուն չմնացին նորա խոսքերը, և տպագործությունը գործեց ժողովրդյան և այս միակ պատճառը,

1. Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր N 4180, էջ 201։

2. Մշակ, 1878, թիվ 215։

որ այնքան խանդագին ընդունելություն և սեր զարթուց քաղաքիդ ազգայնոց և Խրիմյանին մեջ»: Նամակի հեղինակը միաժամանակ արժեքավորում և գնահատում է Թիֆլիսի հայության ազգասիրական և հայրենասիրական եռանդը, որ հասկացավ և գնահատեց Խրիմյանի գործունեությունը, որոնք արտահայտվեցին «պարբերական ազգային հրատարակությանց» մեջ լույս տեսած հոդվածներում: Նախկին աշակերտը, այժմ գինակիցը իր դատափետող խոսքն է ուղղում Թիֆլիսի այն ժամանակվա հոգևոր առաջնորդի՝ Սարգիս Զալայյանի և այլ բարձրաստիճան հոգևորականների դեմ, որոնց «Էնտրիգայի և քսությունների գոհը» դարձավ Խրիմյանը:

Վերոհիշյալ փաստերի համադրումից գալիս ենք այն եզրահանգման, որ առավել արժանահավատը Սրբանձտյանցի «Նկարգրությունն» է, ուր գնահատվում է Խրիմյանի ողջ գործունեությունը: Կասկածից դուրս է, որ նրա սուր լեզուն, որով խարազանվում էին ոչ միայն Թիֆլիսի հոգևորականները, այլև Եջմիածնի միաբանությունը, ապա հանդնում էր քննադատական խոսքեր հնչեցնել անգամ ցարական կառավարության հասցեին, դուրս չեր գալիս քննադատվածներից ոչ մեկին և այդ բոլոր ուժերը միավորված աշխատեցին հնարավորին չափ արագորեն հեռացնել Խրիմյանին Թիֆլիսից: Նրան նույնիսկ չհաջողվեց ստանալ հանգանակության ժամանակ ստորագրված գումարները: Չեռնունայն և «դատարկ գրապանով», խոնչացած «Արծիվը», որից վերցվել էին կարողիկոսի կոնդակը, շարունակեց իր ճանապարհորդությունը: Նա անցավ Ղարաբաղ, հյուրընկալվեց Շուշիում, այնտեղ ևս ժողովրդի կողմից արժանանալով ջերմ ու սրտառուչ ընդունելության: Սակայն տեղի եպիսկոպոսին հասավ վեհափառի նամակը: «Լուաք գիւրիմյան Սկրտիչ վարդապետն եկեալ այդը (ի Ղարաբաղ), պատվիրենք մի տալ տեղի մտանելու ի քաղաք ձեր, այլ վաղվաղակի առաքեսցիք այսր յԵջմիածին...»<sup>1</sup>: Խրիմյանը ենթարկվում է վեհափառի հրամանին և մեկնում Եջմիածին, որտեղ արդարանալու ցանկությամբ խնդրում է վերջինիս «ատյան բացել, ընության ատյան»: Այդտեղ էլ նրան հայտնում են, որ Թիֆլիսից հաղորդած դանուների համաձայն, նրա քարոզները կրել են հակապետական բնույթ, ուղղված են եղել ընդհանրապես հոգևորականության և մասնավորապես նրանց բարձրաստիճան ներկայացուցիչների դեմ և այդ պատճառով էլ նա պետք է պատժի: Խրիմյանը հեռանում

է Եջմիածնից, դառնացած իր կարգակից եղբայրների արարքներից: Մի քանի օր նա մնում է Երևանում: Այս անգամ էլ Երևանցիները գրկաբաց ընդունում են նրան. խնդրում քարոզներով հանդես գալ Եկեղեցիներում, սակայն Խրիմյանը հրաժարվում է: Սկսվում է տունդարձի ճանապարհը: Երեք օր նա ապաստանում է Նախիջևանում, տեղի հայությունը նրան աննախադեպ ընդունելություն է կազմակերպում, քարոզները ունկնդրում հիացմունքով և հափշտակությամբ: Դաշնորդ հանգրվանը Ագուլիսն էր, որտեղ ևս ընդունվում է մեծ շուքով և ջերմ սիրով: Երեք շաբաթ շարունակ նրա քարոզները վերածվում են ջեղեղ տոնախմբությունների: Ինչպես պապակած հողն է կլանում կարկաչական առվակի ջուրը, այնպես տեղի հայությունը ըմբոշխնում ու վայելում է նրա համով-հոտով, սուր հումորով լի խոսքը: Նա նույն Արծիվն էր, հանդուգն ու խիզախն, խարազանում էր տգիտությունն ու անազնվությունը, քսությունն ու ճատնությունը: «Եղ վիճակին հասար և տակավին կը հարկանես, տակավին կը մաքառես կեղծափորությանց ընդեմ, կը խփես, հայոց հայր, փարիսեցվոց ճակատին: Կաղորենք, որ միշտ այդպես լինես, ինչպես անվախ, նույնպես անճահ անե քեզ Աստված: Սակայն դու էր դորությամբ ոչ եպիսկոպոս կառող ես դառնալ և ոչ էլ փող հավաքել կամ պարտք չունենալ»<sup>1</sup>, նշում էր «Մեղուն» նրա ճանապարհորդության ավարտից հետո: Խակ ճանապարհորդության ընթացքում Սվաճյանը իր թերթում հաճախակի էր անդրադառնում նրա ճանապարհուներին, ընթերցողներին հաղորդում, թե որ վայրում ինչպես ընդունվեց նա, նրան որակում «իրեշտակ Դայաստանի» կամ «առաջայլ Դայաստանի» էպիտետներով: Դրանց մեջ ցայտուն դրսնորվում է արևմտահայ դեմոկրատի խոր հարգանքը գավառահայության ծոցից դուրս եկած և նրա շահերն արտահայտող վարդապետի նկատմամբ:

Ծիշտ դուրս եկան Սվաճյանի ենթարկությունները: Խրիմյանը Թիֆլիսից հեռացվեց այնպիսի արագությամբ, որ չհասցրեց հավաքել հանգանակությունը ստորագրած հաճապատասխան գումարը: Նա լիովին դատարկածեն հեռացավ Արևելյան Դայաստանից: ճանապարհի կեսից՝ Պարսկահայքում նրան ուղեկցողների կազմը փոխվեց: Խրիմյանը իր երկու աշակերտներին՝ Գարեգին Սրբանձտյանցին և Միքայել Ալեքսանյանցին թողեց Սալմաստում, Դակոր Մելիք-Դակորյանի (Ռաֆֆի) հայրական տանը, իսկ ինքը առանց դադարի, շարունակեց ճա-

1. Գլւթ, Խրիմյանի թ., գ. 158:

նապարհը: Նրա վերոիիշյալ աշակերտներն իրենց հետ ունենալով Խրիմյանի հանձնարարական նամակները՝ ուղղված երեմիա Արծրունուն, Շանքարծուն Էնֆիածյանին և Պետրոս Սիմեոնյանցին, դարձյալ ուղղութեցին Թիֆլիս՝ «Ժառանգավորացի» օգտին ստորագրած հանգանակության գումարները հավաքելու, «Արծուի Վասպուրականի» ամսագրի նոր շրջանի բաժանորդագրություն անցկացնելու նպատակով: Վերոիիշյալ անձնավորություններին ուղղած նամակներուն Խրիմյանը գանգատվում է, «նեղություններից, ունեցած պարտքերից» և «ունայն ու դատարկածեն» մնալուց: Իր աշակերտներին հանձնելով Երեմիա Արծրունու հովանավորությանը, Խրիմյանը գրում է. «Աղեկ հասկցա փորձով, որ մեր կողմեն Ռուսաստան եկող վարդապետները հալածանք պիտի կրեն, ինչպես մեք, խոհենություն հանարեցինք մեր աշակերտները դրկել, որպեսզի իբրև աշխարհական անձինք ազատարար շրջեն այդ կողմերը: Բայց լավ գիտեն, թե ձեր վեհ թնոց խնամակալությունը Արծվո ճետերը կպաշտպանե, դարձյալ նույն Արծիվ հալածող ոխերին թշնամիները այդ ին սիրուն ծագերն ալ կիալածեն, ուստի ամենայն վստահությամբ Զեր հզոր խնամոց կիանձնեն ատոնք, որ առանց կասկածանաց համարձակությամբ իրենց անձներ պաշտոն առաջ տանեն և Զեր շնորհիվ ողջությամբ վերադառնան կրկին Վարագա բույն»<sup>1</sup>:

1861 թ. հուլիսի 16-ին Խրիմյանը վերադառնում է Վան և շարունակում իր գործունեությունը: «Ժառանգավորաց» վարժարանն այդ տարի տալիս է իր անդրանիկ շրջանավարտները, որոնք գնում էին ուսուցչի հետքերով:

1861 թ. նոյեմբերի 22-ին «Ժառանգավորացը» մեծ հանդես է կազմակերպում, ուր նշվում են առաջին շրջանավարտների հաջողությունները: Այդ հանդեսին իր հեղինակավոր խոսքն է ասում նաև վանահայրը, խմբագիրը, ուսուցապետը՝ Մկրտիչ Խրիմյանը: Ավանդելով ուսուցիչներին և նյուու աշակերտներին այդ ավարտական հանդեսները նշել ամեն տարի, հայր Արծիվը գնահատում է իր աշակերտների կատարած գործը. «Իբրև մշակ ձեր քրտինքը ցողեցիք և իբրև ժառանգ այսօր կվայելքք... շինվեցավ այս տուն ձեր ձեռքով, ձեր քրտինքով: Այս, ձեր արյան կաթիլներով սույն ուսումնարանի հիմունք կազմված են, բայց ձեզ համար է այս ամեն... Մենք առհասարակ ուսումնարանը շինեցինք, բայց ուսումնարանն ալ մեզ շինեց. նա մեզի

1. ԳԱԹ. Խրիմյանի ֆ., գ. 158, էջ 11-12:

ժառանգություն, մենք նովազ հայրենյաց ժառանգ պիտի ստանամք»<sup>2</sup>: Այդ ելույթն ուներ և ծրագրային նշանակություն. այն մի հայացք էր ապագային ուղղված: Խրիմյանը լավ հասկանում էր իր կատարած գործի արժեքը եկող սերունդների համար և պատվիրում իր ավարտած սաներին՝ առաջ տանել Արծվի գործը, շարունակել այս ամենուրեք: Ինչպես «Ժառանգավորացում», այնպես էլ նոր բացվելիք բոլոր վարժարաններում Խրիմյանը պատվիրում է «գլխավոր ուսանելիք նյութը դարձնել հայրենասիրությունը»: «Այս մեր առաջին պարտքն է, այս մեր վերջին նպատակն է, աստուծով ապրել հայրենյաց համար, հուսով մեռանել հայրենյաց համար»<sup>2</sup>:

Այդ ավանդներին ու պատվերներին ականջալուր եղան վարժարանի առաջին շրջանավարտները: Նրանք բոլորը կրոնավոր չդարձան, ուսուցիչ, գորոդ, տեղագրող, հեղափոխական գործիչ, սակայն բոլորն էլ իրենց ուժերը նվիրաբերեցին ժողովրդի ազգային ինքնագիտակցության արթնացմանը, լուսավորության գործը առաջ տանելուն, նոր ծիլեր գցող ազգային ազատագրական պայքարին:

\* \* \*

ճանապարհորդության ավարտից հետո նորից վերսկսվեց «Արծուի» հրատարակությունը: ճանապարհորդությունը բեկումնային եղավ անսագրի և խմբագրի համար: Անենից առաջ ընդլայնվեցին ամսագրի տարածման շրջանակները: Այժմ գործակալներ կային արևմտահայ ու արևելահայ նշանավոր կենտրոններում. Վան, Բաղեշ, Մուշ, Կարին, Տրափիզն, Պոլիս, Տփիսիս, Գանձակ, Ղարաբաղ, Ալեքսանդրապոլ, Նոր-Բայազետ, Երևան, Նախիջևան, Վերին ու Ներքին Ագրովիսներ, Թավրիզ, Սալմաստ... Այդ վայրերի աչքի ընկնող հասարակական գործիները դարձան ամսագրի երկրպագուները, խմբագրի և նրա սաների համախոհները: Այս վերջիններս իրենց հերթին ազդեցություն թողեցին Խրիմյանի վրա և այդ բոլորն արտահայտվեց «Արծուի Վասպուրականում»: Վարագյան այս երկրորդ շրջանի ամսագրին աչքի է ընկնում ավելի բարձր մակարդակով, բարձրացրած հարցերի նպատակաւացությամբ, համահայկական խնդիրներ քննարկելու և լուծելու կարողությամբ: Առավել հետաքրքիր դարձան Խրիմյանի հոդվածները, սուր և որոշակի՝ հարցադրումները: 1861 թ. առաջին թվում

1. Գ. Խ. Խրիմյանի ֆ., գ. 158, էջ 38:

2. Նոյն տեղում:

«ծանուցումն առ ընթերցողս» խմբագրականի մեջ Խրիմյանը հաղորդում է իր ճանապարհորդության ավարտի մասին, նշում, որ քանի անգամ «Արծիվը ծերանում է» (ակնարկում է անսագրի երկարատև ընդմիջումները), բայց դարձյալ երիտասարդանում է և զարդարվում նոր փետուրներով, պատրաստվում նոր թրչքների: «Ի՞նչ է Արծվույն ծերություն և հնություն, ուրիշ բան չէ, բայց միայն չքավոր աղքատությունը»<sup>1</sup>: Երեք անգամ անխոնջ խմբագիրը արհանարիելով Արևատյան Շայաստանի երթևեկության վատքար պայմանները, ճանապարհվել է մերք Կ.Պոլիս (2 անգամ), մերք Արևելյան Շայաստան իր «Ճագերի համար կուտ հայթայթելու», ամսագրի հրատարակությունը շարունակելու: Նույն հոդվածում Խրիմյանը գրում է իր ծրագրերի, հրատարակվելիք հոդվածների, նպատակների մասին: Խմբագիրը «պիտի աշխատի առավելապես այնպիսի հոդվածներ հրատարակել, որ Ազգիս Միության, հայրենյաց շինության, եկեղեցյաց բարեգարդության և հայ մանկույն լուսավորության կվերաբերին»<sup>2</sup>: Դրա համար էլ նա կոչ էր անում մյուս հայ պարբերականների խմբագիրներին բանալ հայերի ականջները, «ազգ, հայրենիք, դպրոց, լուսավորություն և հառաջադիմություն» ախտրելի բառերի ընկալման համար: Քետագա համարների մեջ անընդմեջ տպվում են խմբագրի մեջ հետաքրքրություն ներկայացնող մի քանի հոդվածներ: «Խորհրդաժություն Վասպուրական Արծվույն իր ճանապարհորդության մեջ», «Շայկազանց հառաջադիմության կեղրոն բուն հայրենիքն է», «Շոգի և զգացողություն հայկազանց Ռուսաստանի», «Ժողովրդական դպրոց», «Ազգային երկպառակություն», «Ազգային կեղրոնական վարչություն», «Շայկազունք հայրենյաց կամ ազգային գավառական վարչությունը», «Անհամածայն և անմիաբան գաղափարը հայկազանց», «Շայրենյաց նոր հառաջադիմության համար մա՞րդ պետք է, թե Սահմանադրությունը» խորագրերով հոդվածները ծրագրային եղան ամսագրի ողջ հետագա ուղղության համար: Այդ հոդվածներով Խրիմյանի հրապարակախոսությունը բարձրացավ ավելի բարձր աստիճանի, ընդգծվեց հեղինակի ժողովրդական ոգին: Ամսագրի աշխատանքները վերսկսվելուց անմիջապես հետո Արևելյան Շայաստան կատարած ճանապարհության մասին «Խորհրդաժություն Վասպուրական Արծվույն յուր ճանապարհորդության մեջ» հոդվածում խմբագիրը ցանկանում է վճռել

1. Արծուի Վասպուրական. 1861, թիվ 1, էջ 1:

2. Նույն անքամ, էջ 2:

մի հարց. ինչ հարաբերության մեջ են հայ ժողովրդի երկու՝ արևելյան և արևմտյան հատվածների բնակչությունը իրար հետ, արդյոք «նույն ազգասիրության սիրտ հոգին կը կրեն...՝ ի՞նչ կխորհին, ի՞նչ կմտածեն և ի՞նչ կխոսեն», ինչ «ճարտարապետական կանգուն» են գործածում հայրենյաց ավերակները վերաշինելու համար, այսինքն՝ ինչ միջոցներ են առաջադրում Շայաստանի անկախության և միավորման համար: Թողնելով իր այցելած մյուս վայրերը՝ Թիֆլիսը, Գանձակը, Սյունիքը, Գողթան գավառն ու Պարսկահայքը, խմբագիրը նախ ընթերցողների հետ ցանկանում է կիսել իր խոհերը Արարատյան աշխարհի, եջմիածնի վերաբերյալ, խոստանալով գրել ոչ թե կրօնվ և աչառու, այլ միայն «ճշմարտության լեզվով»: Այդ պայմանին հավատարիմ հոդվածագիրը նախ նկարագրում է Արարատյան երկրի անկուսային վիճակը. չկան նախկին փառահեղ մայրաքաղաքները, վերացել է պետականությունը: Մնացել է միայն համայն հայության եկեղեցական մարմինը՝ եջմիածնի ամենայն հայոց հայրապետությունը, որը հայության սիրտն է: Հոդվածագրի կարծիքով այդ «սրտի» արյան շրջանառության ճանապարհը փակ է և թույլ չի տալիս հայոց երակների մեջ արյուն հոսի: Խրիմյանը եջմիածնում մնացել էր 7 օր, շփել միաբանության հետ, ճանաչել նրա դրական ու բացասական կողմերը, չեր ցանկանում բացեիրաց, ի լուր ողջ ազգի հայտարարել եջմիածնում տիրող մբնոլորտի մասին, մտածելով, որ դա բացասաբար կազդեր ողջ հայության եռանդի, տրամադրության, հավատի վրա: Երբ համենատում ենք այս հոդվածը Գ.Արվանձույանցի «Ուղևորություն Ակրտիչ վարդապետի Խրիմյան ի Ռուսահայք» հոդվածի հետ, տեսնում ենք, որ ուսուցի հոդվածը անհամենատ մեղմ է, առավել զգույշ ու չափավոր, քան նույնիսկ «Կռունկում» հրատարակված իր սեփական հոդվածը: Առանց քննադատելու, նա շարադրում է, որ եջմիածնում հանդիպել է «տասնեն ավելի սրբազն եպիսկոպոսների և վարդապետների», որոնք ազգային պատմության հմուտ գիտակներ են, հայրենասեր անձնավորություն է ամենայն հայոց կաթողիկոսը՝ Կ.Պոլսի նախկին պատկերավոր արտահայտությամբ, առաջադիմությունը փակված է բանտի մեջ և դրա պատճառները թե արտաքին են և թե ներքին, թե հայտնի և թե գաղտնի... Սակայն պատճառներից ամենազիստավորը տնտեսականն է, նյութական պակասությունները, աղքատությունը: Շակասելով ինքն իրեն, հաջորդ

նախադասության մեջ նա նշում է, որ մեր նախնիներն առավել ծանր վիճակի մեջ էին, սակայն ինչպես է, որ մենք ունենք այնքան հարուստ գրականություն, հայտնի մատենագիրներ: Ուրեմն՝ վերևում նշված աղքատությունը որոշիչ չէ: «Մի կարծիք և մի հուսար, միայն հացով ազգային առաջադիմության կառքը առաջ վարելու»: Բավական չէ նաև կաթողիկոսի շերմ ցանկությունը: Առավել անհրաժեշտ է «հայրաբետանոցին միաբանության հոգին նորա հոգվույն հետ միանա, չեմ գիտեր միացա՞ծ է, պիտի միանա», թե ոչ: Եշնարտությունը արդյունքեն հայտնի է, եթե միացած լիներ, անշուշտ Մայր Սիոն Այրարատու ամուլ չեր մնար, այլ պիտի ծնաներ բարյաց բազմաթիվ զավակներ»<sup>1</sup>: Զիգզագ ուղիներով խրիմյանը պատմում է էջմիածնում տիրող անմիաբանության և նրա վատ հետևանքների մասին: Սակայն նույնիսկ միասնության դեպքում էլ գործն առաջ չեր շարժվի, եթե նրանց օգնության չիասնեն «Տաճկաստանի և Ռուսաստանի վիճակվոր եպիսկոպոսները»: Ինչպես տեսնում ենք, այս հոդվածում ժողովրդի լուսավորության գործը (քննադատելով հանդերձ) խրիմյանը վերապահում է հոգևորականությանը, միաժամանակ «երկրորդական լուծը» հատկացնում է աշխարհիկ առաջնորդներին: Եթե Գրիգոր Լուսավորիչն իրեն օգնական ուներ Տրդատին, Սահակ Պարթևը՝ Վռանշապուհին, Ղևոնդ Երեցը՝ Վարդանին, ապա ո՞ւր են հայ իշխանական տների մնացորդները: ճիշտ է, գոյություն չունի հայ պետականությունը, ուրեմն, հայոց հայրենիքի վերակառուցման գործը պետք է մտահոգի առավելապես աշխարհականներին: Խրիմյանը կոչ է անում Պոլսում ու Թիֆլիսում, Պարսկաստանում ու Հնդկաստանում բնակվող հայ իշխաններին, իրավիրուն նրանց Այրարատ, որպեսզի նրանք ի նշան միության ծեռք ծեռքի տան, համբուրեն Յայրապետի աջը և «հայրենյաց շինության համար խորհուրդ բանան»: Իբրև այդ խորհրդածությունների եզրակացություն, նա արձանագրում է: «Յայրապետական համատարած արևուն դեմ բռնող թանձր վարագույրը անմիաբանության հոգին է, հայրաբետական լուսավոր ծրագը գրվանին տակ դնող՝ դարձյալ նույն անմիաբանության հոգին է, հայրաբետական սրտի ճանապարհ փակողը՝ դարձյալ նույն անմիաբանության հոգին է: Ալ մեղադրանք չմնաց»<sup>2</sup>:

Յոդվածի շարունակությունը լույս է տեսնում հաջորդ համարում

1. Արծուի Վասպորտական, 1861, թիվ 1, էջ 10:

2. Նոյնի անգամ, էջ 15:

նույն խորագրով: Այս անգամ խմբագիրն իրեն նպատակ է ղեկա պարզել, թե «հայրենյաց կործանյալ տաճարը վերստին կանգնելու համար» արևելահայերն ու արևմտահայերը ենում են նո՞ւյն չափանիշներից, «միկնույն ճարտարապետական լարո՞վ կչափեն հիմունքները», թե տարրեր են նրանց մտածողության ձևերը: Համեմատելով երկու ինքնակալությունների տակ գտնվող հայության ներքին ծգությունները, հեղինակը զայխ է այն եզրակացության, որ նրանք փոքր զանազանությամբ ունեն նույն մտքերն ու ծգությունները: Առաջադիմության և լուսավորության ասպարեզում Խրիմյանը անկողմնակալությամբ առաջնությունը տալիս է արևելահայերին, որոնք թեև ոչ բոլոր քաղաքներում ունեն կանոնավոր ազգային ուսումնարաններ, բայց համարյա բոլոր քաղաքներում ունեն զարգացած ուսումնարաններ: Իսկ Արևմտյան Յայաստանում (չիաշված Կ.Պոլիսը, որն Արևմտյան Յայաստան չէ) պետք է «Դիոգենեսի լապտերով ուսումնական փնտրել, որոնց թիվը դժբախտաբար խիստ սակավ է»<sup>1</sup>: Ըստ հոդվածագրի, երկու հատվածների հայությունն էլ համաձայն է մի բանում, որ ազգային առաջադիմությանը կարելի է հասնել միմիայն ուսման և լուսավորության միջոցով: Յոդվածի երկու մասում էլ «ճարտարագետի»՝ այսինքն ազգի լուսավորության գործի դեկավարի և գործադրողի պաշտոնը խրիմյանը հատկացնում է հոգևոր դասին, իսկ աշխարհականները պետք է միանան նրանց և հանդես գան օժանդակողի դերում: «Ո՞վ կիավատա, որ առանց այս երկու մասի միության հայրենի տաճարի շենքը կատար հասնի»<sup>2</sup>:

Արդար համարելով աշխարհիկ առաջադեմ գործիչների քննադատությունը եկեղեցու նկատմամբ, Խրիմյանը միկնույն ժամանակ չի համաձայնվում նրանց այն մտքի հետ, թե ազգի լուսավորության գործը առաջ պետք է վարի ոչ թե եկեղեցին, այլ աշխարհիկ մտավորականությունը: Փատորեն այդ պնդումով, Խրիմյանը շեղվում էր այն սկզբունքից, որ մշակել էր մի քանի ամսիս առաջ Արևելյան Յայաստանում «Զայն Վասպորտական Արծույն» հոդվածում: Ըստ երևույթին դրա պատճառը Յայաստանի Արևելյան և Արևմտյան հատվածների պայմանների տարրերությունն էր: Սակայն հոգևոր դասի բացասական հատկանիշների քննադատությունը չմեղմացավ. «Արդարեւ տգիտությունը մեր բերան փակեց (մեր ասելով ի նկատի ունի

1. Արծուի Վասպորտական, 1861, թիվ 2, էջ 37:

2. Նոյնի անգամ, էջ 40:

## ԵՄԱ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

հոգևորականությանը - Ե.Կ.), անհոգությունը մեր ականջները խլեցուց, ծովությունը մեր ոտքի առաջադիմությունը կապեց»: Խորիմյանը հույս է հայտնում, որ հոգևորականությունն անսալով ժողովորդի քննադատությանը, կուղղվի և իր ծեռքը կվերցնի «ճարտարապետի» իռավունքը:

Վերջացնելով իր հոդվածը, խմբագիրը առաջադրում է մի հարց՝ պարզել, թե արևելահայերն ու արևմտահայերը ու՞ր և որ հոդի վրա են ուզում իրականացնել հայրենիքի վերաշինության գործը: Բանավիճելով այդ ժամանակ տիրող տարբեր տեսակետների հետ, Խորիմյանը հայտարարում է, որ բուն Հայաստանի տարածքից դուրս գոյություն չունի հայրենիք: Միաւ և վնասակար է այն գաղափարը, թե պոլսեցին Բոսֆորի եզերքին, թիֆլիսեցին՝ Քույի ափին, Ղնդկաստանի հայ գաղութի բնակիչը Գանգեսի մոտ են խորհում վերակենդանացնել հայրենիքը: Իբրև նման կործանարար նտածողության արդյունք նա մատնացույց է անում լեհահայոց 40.000 բնակիչ ունեցող գաղութի կորուստը: Բուն հայրենիքը իրավացիորեն համարելով ազգային գիտակցության, ազգապահպանման կարևոր գործոն, Խորիմյանը սրտի ցավով նկատում է, որ «Հայը յուր հայրենյաց մեջը անհայրենիք կրնակի» և այդ միտքը ճիշտ էր (իհարկե որոշ վերապահումներով) հայության երկու հատվածների համար, աչքի առաջ ունենալով պետականության բացակայության փաստը: Մյուս հոդվածում Խորիմյանը շարունակում է խորհրդածությունները և սկսում այն մտքից, որով ավարտել էր նախորդը: «Հայկազանց հառաջադիմության կեղրոն բուն հայրենիքն է» խորագիրը կրող հոդվածը զարգացնում է այն միտքը, թե հայրենիքը բնապատճական հասկացողություն է: Հայրենիքն այն վայրն է, որի վրա առաջացել է հայ ժողովուրդը, ուր իր գոյության և ժողովորդի հարատևման համար պայքարել են մեր նախնիները սկսած առասպելական (նախապատճական) շրջանից (Հայկ ու Բելի, Արա Գեղեցիկի ու Շամիրամի), Արտաշեսյանների ու Արշակունյաց դինաստիայի հայ պետականության ժամանակաշրջանից, Արծրունյան, Բագրատունյաց շրջանից մինչև մեր օրերը: Հայ ազգի թվական գերակշռությունը իր պատմական հայրենիքում չնայած աստիճանաբար նվազել է և դրանում մեծ դեր են խաղացել թշնամական արշավանքներն ու գաղթականությունը, սակայն հարատևող հայության մեծ մասը դեռ ապրում է իր հայրենի տարածքի վրա. «Այրարատ, Բարձր Հայք, Տարոն, Վասպուրական և այլ նշանավոր

## Մկրտիչ ԽՐԻՍՏՅԱՆ. Հասարակական-քաղաքական գործունեությունը

նահանգները հայոց բազմության կեղրոն կը համարվին»<sup>1</sup>: Գաղթավայրերում ապրող հայությունը, որը դեռևս չի ուժվել, առանձնապես «Հունաստանի և Կովկասյան երկիրներու մեջ», փոքր-ինչ սկսել են շարժվել և խլրտալ, իսկ բուն միջնաշխարհի հայությունը «դեռ թմրության մեջ ինկած, յուր աչքերը տգիտության թանձր մթոյն վարագույրը պատեր է, կտրած է բոլորովին սրտեն կենդանական շարժման տրոփյունը, այսինքն հայրենասիրական զգացումն»: Հայկական նահանգներում ապրող, տգիտության մեջ խարիսափող ժողովրդի վիճակը Խորիմյանը համեմատում է «Պրոպատիկի ավագանի մոտ ընկած անդանալույթ հիվանդի հետ», որի օգնության աղաղակներին ոչ ոք չի արձագանքում: Ինչ դեղեր են պետք այդ անդանալույթ հիվանդին (ժողովրդին) բուժելու համար: Դեղինակի տված դեղատոմսն է՝ դպրոց, ուսում և ուսուցիչ: Իսկ ինչ բժիշկներ են պետք, որ հիվանդին բուժեն այդ դեղատոմսով. «Երկու դաս բժիշկներ պետք են. հոգվույն համար Սահակ, Մեսրովը և խրախուսիչ Ղևոնդ... իսկ մարմնույն համար անձնվեր Վարդան, Վահան, Մուշեղ և աստնց նման հայրենասեր իշխանաց խումբ»: Այդ երկու կարգի բժիշկները պետք է ոչ միայն բուժեն հիվանդին, այլև վերաշինեն փլած ու ավերակ հայրենիքը: Ղևոնդն ու Վարդանը ծեռք ծեռքի տված ոչ թե Ավարայր պետք է մեկնեն, այլ լուսավորության ճառագայթներով հալածեն տգիտության խավարը: Սակայն Հայաստանը զուրկ է այդ երկու կարգի բժիշկներից և առաջնահերթ խնդիրն է՝ պատրաստել այդ բժիշկներին, որոնց Խորիմյանն անվանում է «Հայրենիքի վերանորոգման ճարտարապետներ», որի ճանապարհն է նշում է հեղինակը:

Ընդգծելով հանդերձ հոգևորականության որոշակի դերը ժողովրդի լուսավորության գործում, խմբագիրը նատնանշում է, որ նոր ժամանակի հոգևորականները խոտորել են մարդկային, ծշմարիտ քրիստոնեական, ավետարանական ուղիներից, այդ պատճառով էլ անհրաժեշտ է ծավալել մեծ աշխատանք՝ ինքնակատարելագործվելու, ինքնանաքրման, հոգևորականների նոր սերունդ պատրաստելու, որ պեսզի վերջիններս հաջողությամբ առաջ տանեն ժողովրդի լուսավորության գործը: Այդ պատճառով մեծ անհրաժեշտություն է՝ բացել Եկեղեցական դպրոցները<sup>2</sup> հոգևոր դասի տգիտությունը վերացնելու, նրա հոգին ու միտքը կրթելու և ուսուցիչների սերունդ պատրաստելու

1. Արծովի Վասպուրական, 1861, թիվ 2, էջ 44:

2. Խ. Մասմայան, Եջիկ աշխ., էջ 42:

համար: Որտե՞ղ պետք է հիմնվեն Եկեղեցական դպրոցները: Վաճառքում.- պատասխանում է Խրիմյանը: Դայոց վաճեթերը պետք է դառնան լուսավորության շիջած կանքեղները վերստին վառողները: Վաճառքում գտնվող միաբանությունները ոչ թե պետք է վարեն ծովյլ ու մեղկ կյանք, այլ դառնան լուսավորության հնոցները: Փաստորեն այդ հոդվածներով Խրիմյանը շարունակում էր իր առօրյա պայքարը հայ հոգևորականության մի մասի դեմ՝ այլ միջոցներով: Գնահատանքի ու հարգանքի տուրքը նատուրելով իին և միջին դարերի մեր հոգևորականներին, որոնց կառուցած վաճեթում հիմնվել են կաճաներ և համալսարաններ, որտեղ իրենց գիտական աշխատություններն են արարել Դավիթ Անհաղթն ու Գրիգոր Տարեացին, Անանիա Շիրակացին և ուրիշները, հեղինակ խնճագիրը կոչ է անում իր լժակից Եղբայրներին՝ վաճել վաճեթի աշտանակների ծրագները, հայոց աշխարհից վաճել տգիտությունը: Առաջին գործարար քայլը պատկանում է ամենայն հայոց հայրապետին: Յեղինակը առաջարկում է նրան Եջմիածնի «մեծահարուստ վաճին ծոցը» բանալ մի դպրոց գոնե 100 աշակերտի համար<sup>1</sup>: Եկեղեցական դպրոց պետք է բացել Սանահինում ու Դաղպատում, Գանձասարում, Տարեւում և Անդրասում, Գողթան գավառի սուրբ Թովմայի վաճերում, Տարոնի սուրբ Կարապետի, Առաքելոց վաճերում, Շոփիաննավանքում, Ծոփիաց նահանգի չորս վաճերում և բազմաթիվ այլ վայրերում: «Մեր աշխատասեր նախնիք որչափ ծրագակալ աշտանակներ կանգնել են Յայաստանեայց Եկեղեցին և յուր զավակները լուսավորելու համար»<sup>2</sup>:

Յեղինակի կարծիքով, յուրաքանչյուր հոգևոր թեմ պետք է ունենա իր ժառանգավորաց վարժարանը, ուր պետք է ուսանեն և ծրի կրթություն ստանան առավելապես ազգի «որք և անխնան տղաքները», որպեսզի նրանք պապայում ազգի բարերարությանը պատասխանն ազգին, Եկեղեցուն և հայրենիքին նվիրաբերած հավատարիմ և անձնվեր աշխատանքով:

Եթե իին ու միջին դարերում գիտությունը, ուսումը, լուսավորությունը հոգևորականության մենաշնորհն էր, ապա «նոր ժամանակները» շահեկանորեն տարբերվում են նրանով, որ ժողովուրդը իր ծեռքը

1. Հնուարքիք է այն փաստը, որ այլ հարգածից միայն 13 տարի անց Գևարգ Դ կարպիկոսի օրը, 1874-ին Եջմիածնում բացվեց Գևարգյան ճնշաբանը, որը մեծ գործ կատարեց լուսավորաբան, գիտության և տուուցական կայլեր ստատուստեկության բնագավառություն:

2. Արծովի Վասպուրական, 1861, թիվ 2, էջ 50:

պետք է վերցնի այդ գործը: Իսկ դրա համար անհրաժեշտ է դպրոցներ բանալ ժողովրդի բոլոր խավերի համար: Այդ գործը իրականացնողը պետք է լինի **Ժողովրդական դպրոցը**<sup>1</sup>: Անհրաժեշտ է հզորացնել «Ծնկերական ոգին», որովհետև ժողովրդական դպրոցները կարող են բացվել և գոյատևել Ծնկերությունների և հոգաբարձությունների օժանդակությամբ և միջոցով: Ժողովրդական դպրոցները պետք է բացել Յայաստանի բոլոր գավառներում, առավելապես գյուղերում, որովհետև ժողովրդի մեծ մասը գյուղաբնակ է: Յեղինակը նշում է այն փաստը, որ Յայաստանից դուրս, գաղթօջախներում բացվել են ժողովրդական դպրոցներ, մասնավորապես մատնացույց է արվում Կ.Պոլիսը իրեւ արևմտահայ մշակութային կենտրոն: Սակայն այնտեղ բացված դպրոցները փոքր սպեղանի են մեծ վերքի համար: «Գաղթական հայոց հառաջաղիմական քայլը հայրենյաց երկոտանի կաղությունը չի բժիշկեր և դուրս վառած ծրագը անկարելի է, որ ընդարձակ տան մի կենտրոնը լուսավորե, վասնի դեռ մեր անբախտ Յայաստանին նահանգաց կամ գավառներու մեջը խիստ քիչ ժողովրդական դպրոցներ հաստատված կան և այն ևս միայն նշանավոր քաղաքներու մեջը, որոնցմեծ շատերու կառավարությունը կամ հառաջաղիմական քայլը կուգենելու կընթանա»<sup>2</sup>:

Գերագնահատելով ուսման և լուսավորության դերը, հեղինակը Յայաստանի թշվառության առաջին պատճառը համարում է «տգիտության ժանտ դահիճը», որը չի կարելի հաղթահարել, եթե բացակայում է «Ծնկերական ոգին», հասարակության օգտին աշխատող **մարդը** (ընդգծումն իրենն է - է. Կ.): Քանի բացակայում է այդ ոգին, հույս չկա, թե Յայաստանում կրացվեն ժողովրդական դպրոցներ: Խմբագիրը քննադատում է հայ հոգևոր և աշխարհիկ նեծերին, որոնք իրենց անմիաբան ընթացքով, շահախնդրական ոգով «գայթակղության քար եղած են ազգային առաջադիմության ոտքին»: Մարգարեի նման Խրիմյանն ուսուցանում է իր ընթերցողներին. «Յայրենյաց լուսավորության իսկական պատճառ ժողովրդական դպրոցն է, այս դպրոցները յուրաքանչյուր գավառի մեջ հաստատող Ծնկերական հոգին է, այս հոգին վառող ու կազմող հոգևոր առաջնորդաց և քաղաքական իշխանաց միաբանական կամքն է», սակայն այդ գործուների բացակայության պատճառով 4 միլիոն արևմտահայերից «դեռ ամենափոքը

1. Խ. Մարտիրոս, նշվ. աշխ., էջ 42:

2. Արծովի Վասպուրական, 1861, թիվ 3, էջ 68-69:

## ԵՄա ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

մասն հազիվ գրել ու կարդալ գիտե»: Արևմտահայ գավառներում ժողովրդական դպրոցների բացակայության պատճառը համարելով ժողովրդի աղքատությունը, Խրիմյանը կախարդական շղթայի օղակների նման աղքատությունը և տղիտությունը համարում է մեկը մյուսով փոխապայմանավորված գործոններ, աղքատ են, որովհետև տղետ են, տղետ են, որովհետև աղքատ են: Քանի դեռ հայ մանուկը ականջը խուլ կապահի ժամանակի պահանջներին, չի հաղորդակցվի նորին, հայերը դեռ երկար կիհագնեն ուրիշի գործած կտավը, որովհետև իրենց ունեցած նախնադարյան գործիքներով չեն կարող մրցել եվրոպականի հետ: Այսպիսով, ընդգծվում է ուսման ուժիլիտար նշանակությունը:

Խրիմյանը ժողովրդական դպրոցների գարգացման հետ է կապում արհեստների, վաճառականության զարգացումը: Ժողովրդական դպրոցների «փակված դռները» բանալու համար պետք է ծեռնարկել բոլոր միջոցները և սերտ կապ պահպանել եկեղեցական դպրոցի հետ: Միայն այս երկու դպրոցների անխափան գործունեությամբ է, որ հնարավոր է Հայաստանի բարգավաճումը:

Այդ հոդվածները փաստորեն եղան ոչ միայն խմբագրի խորիդածությունները, այլև Հայաստանի վերաշինության նրա ծրագիրը, հայ դպրոցի նկատմամբ ունեցած նրա հայացքները: Պետականությունից գուրեկ հայ ժողովրդի համար դպրոցը, եկեղեցին, լուսավորությունը դառնում էին այն վճռորոշ գործոնները, որոնց օգնությամբ ժողովուրդն ապահովում է իր ազգային գոյությունը և ապագան: Այն ժամանակավա պայմաններում լայն մասշտաբներով դնել ժողովրդական դպրոցի զարգացման խնդիրը և նրա հետ կապել նաև վաճառականության, առևտության արհեստների զարգացումը, նշանակում էր հետևողականորեն պաշտպանել առաջադիմական հայացքներ: Սակայն այդ ամենով հանդերձ, նա մնում էր իր ժամանակի թեկուզ և առաջադեմ, բայց և այնպէս հոգևորականության դիրքերի վրա: Նա զգում էր իր կարգակիցների, հայ հոգևորականության և ընդհանրապէս համաշխարհային կրոնական ինստիտուտի հետադիմական վիճակը և դիրքորոշումը, հաճախ էլ հայ լուսավորչականությունը և Հայաստանեայց եկեղեցու գաղափարախոսությունը համեմատելով Խճնատիս Լոյլայի և ծիզվիթների հայացքների հետ, նա ընդգծում է հայ եկեղեցու դեմոկրատական սկզբունքները: Այս հոգևորականության բացասական հատկանիշների՝ տղիտության, կաշառակե-

## Մկրտիչ ԽՐԻՄՅԱՆ. Հասարակական-քաղաքական գործունեությունը

րության նրա քննադատությունը հետապնդում էր ոչ թե ոչնչացնող նպատակներ, այլ բարեկարգող և բարեփոխող: Նա գտնում էր, որ հայ եկեղեցու բարեկարգումից է կախված հայ ժողովրդի իրավիճակի բարեկարգումը:

Ուշադրության արժանի է «Արծուի Վասպուրականում» լույս տեսած մի այլ հոդվածաշար ևս, ուր քննարկվում է արևմտահայոց Ազգային սահմանադրության, Ազգային Կենտրոնական վարչության, գավառական վարչության, դրանցում ընտրված պատգամավորների հետ կապված խնդիրներ: Այդ հոդվածներն աչքի են ընկնում դատողությունների ու հարցապնդումների հրատապությամբ, պրոբլեմների լուծման սկզբունքայնությամբ: «Ազգային Կեդրոնական վարչություն» հոդվածում խնդրագիրը քննարկում է Սահմանադրությամբ ընտրված Ազգային ժողովի, նրա կենտրոնական վարչության հետ կապված հարցերը: Չողվածի սկզբում հեղինակը հետադարձ հայացք է նետում հայ պետականության ժամանակ եղած վարչական մարմիններին՝ բազավորական, բդեշխների և նախարարական ատյաններին իրեւ քաղաքական իշխանություն կրողներ: Իսկ հոգևոր իշխանության մարմիններն էին կաթողիկոսի համագումար ատյանն ու 400 եպիսկոպոսների թեմական ատյանները: Կայ պետականության կործանման հետ մեկտեղ անվերադարձ անհետացել են քաղաքական իշխանության մարմինները: Հարատևող չորս միլիոն հայության համար դեռևս գործում է երկու մեծ ատյան՝ Սյունիոդոսի (Սինոդի - Է.Կ.) ատյանը Եջմիածնում կաթողիկոսի նախագահությամբ և Ազգային ժողովը Կ.Պոլսում պատրիարքի դեկավարությամբ: Յրաժարվելով քննարկել Եջմիածնի Սինոդին վերաբերող հարցերը, այն համարելով արևելահայ լրագրողների պարտքը, իր ուժից վեր համարելով ճանապարհորդի թռուցիկ ակնարկով այդափիսի լուրջ խնդիր քննարկելը, այնումենայնիվ Խրիմյանը համառոտակի բնութագործ է Եջմիածնի Սյունիոդոսի ատյանը «ավելի հոգևորական քան թե քաղաքական կամ Ազգային»: Այդ քննութագրումով Սինոդը հակադրվում էր Կ.Պոլսի Ազգային ժողովին, որն ըստ Խրիմյանի, Ազգային է կամ քաղաքական: Եջմիածնի Սինոդն իրավունք չունի ազգային դատաստանական վեճեր քննարկելու, մինչդեռ Կ.Պոլսի Ազգային ժողովն ունի այդ իրավունքը: Այդ նախարանից հետո հեղինակն անցնում է Ազգային ժողովի, Կենտրոնական վարչության հետ կապված խնդիրների քննարկմանը:

Անընդհատ նամակագրական կապ պահպանելով Կ.Պոլսի սահ-

մանադրականների հետ, գլխավորապես նրանց դեկավարների հետ, Խրիմյանը Վասպուրականում պատմում է իր ընթերցողներին Սահմանադրության սկզբունքների, Ազգային ժողովի կառուցվածքի մասին: Այն, որ Ազգային ժողովը բաղկացած է կրոնական և քաղաքական ժողովներից, ըստ Խրիմյանի չի ներկայացնում Սահմանադրության մեջ սկզբունքը: Այդ ժողովներն ուներ հայ ժողովուրդը դեռևս 400 տարի առաջ, երբ Բ.Դուռը Դովակին 1-ին պատրիարքի օրոք հայ ազգին շնորհել էր որոշ արտօնություններ: Խրիմյանը գտնում է, որ մեծ տարրերություն կա այն ժամանակվա ժողովի և իր ժամանակվա Սահմանադրապես ընտրված ժողովի միջև, որովհետև այն ժամանակ «ճարտամիտ արհեստավորը, կամ խելոք աղքատը մասն չուներ նույն ատենին իբրև արժանավոր անդամ ընտրվելու»<sup>1</sup>: Եվրոպայից հասած ազգատարեր հողմների շնորհիվ ընտրված Ազգային ժողովը վայելուն է Խրիմյանի մեծ համակրանքը: Խրիմյանն իր ընթերցողներին պատմում է Սահմանադրական պայքարի, 1860 թ. Սահմանադրության, նրա թշնամիների, եղած մատնությունների մասին, որոնք առիթ դարձնելով Բ.Դուռն արգելեց Սահմանադրության գործադրությունը և այն դարձրեց իր վերաքննության առարկան: Այդ բոլորի մասին Խրիմյանը տեղեկություններ էր ստանում Կ.Պոլսում գտնվող իր համախոհներից: Նշան Օտյանն իր նամակներում հաղորդում էր սահմանադրական պայքարի ելևէների մասին: «Այժմ Պոլս Ազգային ծանր խնդիրները ապուրի պես կեփին: Ազգին խավարյալ և կործանարար մասը զահմանադրությունը կործանելու փորձերն հաջողցուցին, գացին Բ.Դուռն կասկածելի ցուցին, զրապարտեցին... որով Բ.Դուռը այժմ Սահմանադրությունը մերժեց, չընդունեց, Սեղուն և Մյունատին դադրեցրուց»<sup>2</sup>: Տեղեկատվությունը հետզհետե կրում է տագնապալի բնույթ, հաղորդում են Բ.Դուռն կողմից կազմված հանձնաժողովի գործունեության մասին, որին հաջողվեց հիմնովին տապալել սահմանադրությունը, այնպես փոփոխել նրա սկզբունքները, որ ընդունելություն չի գտներ լայն ժողովրդական զանգվածների կողմից<sup>3</sup>:

Խրիմյանը հեռու էր Բյուզանդիոնից, բայց այդ հեռվից էլ նա ընկալում էր օսմանյան մայրաքաղաքում կատարվող ողջ իրադարձություններն իրենց կնճռուտ հանգույցներով և հակասություններով:

1. Արծուի Հասպուրական, 1861, թիվ 5, էջ 132:

2. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գործ 125, թ. 12:

3. Նոյն տեղում, էջ 18:

Իր ընթերցողներին նա բացատրում էր Ազգային Սահմանադրության անկման, նրա թշնամիների կատաղության բուն պատճառները: Սահմանադրական պայքարի բովում նա նկատում է հակոտնյա շերտերի գոյությունը: Գյուղացուն և արհեստավորին հասկանալի լեզվով նա բացատրում էր, որ հարուստներին դուր չի գալիս սահմանադրության այն սկզբունքը, եթե «արդարության քվեն մարդիկներուն արժեք չափելով՝ արժանի կտեսնա զգոն և ճարտարամիտ աղքատներն ալ ազգային վարչության անդամ ընտրելու»<sup>1</sup>:

Սահմանադրության անկման պատճառներից մեկն էլ այն է, որ մինչ այդ ազգային գանձարանից անարգել օգտվող հարուստների մի խումբ էֆենդիներ, ամիրաներ և հոգևորականներ ամեն ծիգ ու ջանք բափեցին, որ խորտակեն նոր սահմանադրության զգուշավոր օրենքները, որոնց շնորհիվ «Երկաթե նիգով» փակել էին ազգային զանձարանի դրաները: Գյուղության և հափշտակության նոլուցքով տարված, ազգի հարստությունը իբրև սեփականություն օգտագործելու համար, նրանք ծեռնամուխ եղան խորտակելու սահմանադրությունը: Այդ նպատակով նրանք անվանարկեցին սահմանադրությունը երկու կողմից, առաջին՝ սահմանադրությունը ներկայացրին իբրև «Դայատանեայց եկեղեցվո» օրինաց հիմունքները խախտող գաղտնի մեքենա» և երկրորդ՝ օսմանյան պետության ընդդիմադիր մի մարմին՝ «պետություն պետության մեջ»: Ահազանգը հնչել էր հայ հոգևորականության և թուրք պետական պաշտոնյաների ականջին, որոնց հարվածներին էլ ենթարկվեց սահմանադրությունը: Սակայն Խրիմյանը հավատում է ծշմարտության հաղթանակին: Եվրոպական ազգերի օրինակով նա բացատրում է իր ընթերցողներին, որ ամենուրեք ազգային հեղափոխությունների ժամանակ լինում են նատնության, քսության և մահապարտության դեպքեր: Մերկացնելով ամիրաներին և էֆենդիներին, նզովելով սահմանադրության «ընտանի թշնամինուն», Խրիմյանը հոդվածն ավարտում է քրիստոնեական սիրո քառով ուղղված ժողովրդին, ամիրաներին, իշխաններին, արհեստավորներին և ռամիկներին՝ «ամեն հասակի և աստիճանի մարդկանց, որպեսով ծեռք ծեռք տան, որովհետև ազգի բոլոր ուժերի միասնությանը միայն կծնվի «ազգային առաջադիմության բարիքը»: Փաստորեն այդ քարոզով Խրիմյանը նահանջում էր իր դիրքերից: Ըստ երևությին այդ եզրակացությամբ նա ցանկանում էր փրկվել մատ-

1. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գործ 125, թ. 19-22:

նիշների հարձակումներից, որպեսզի «Մեղուի» և «Մյունատիի» նման իր ամսագիրն էլ չդադարեցվեր գրաքննիչի կողմից: Բացի այդ, Խրիմյանը սերտ հարաբերության մեջ էր գտնվում Պոլսի սահմանադրականների հետ, որոնք արդեն վարում էին տատանվող քաղաքականություն: Այդ բոլորով հանդերձ հոդվածը մեծ նշանակություն ունեցավ Պոլսում մղվող պայքարի բովանդակությունը արևմտահայությանը ծանոթացնելու գործում: Այն ջերմությամբ ընդունվեց նաև Կ.Պոլսում: Սվաճյանն շտապեց արտատպել այդ հոդվածը, իսկ Նշան Օտյանը դարձյալ արծագանքեց Խրիմյանին. «Արծվոյն վերջին չորս թիվերը եկան: Դիմում մեծ Ազգային կերունական վարչության վրա գրած հոդվածը մեծ ուշադրությամբ և զմայլմամբ կարդացի: ...Այս հոդվածը գլուխ գործոց է (ընդգծումն իրենն է - Է.Կ.) ...Ասանկ վսեմ, ազդու և բարձր գրված մը շատոնց է կարդացած չունեի, կեցցե Խրիմյան և իր ազգասեր ոգին»<sup>1</sup>:

Դոդվածում արծարծված հարցերի գաղափարական շարունակությունը հանդիսացավ մեկ տարի անց, 1862-ի թիվ 6-ում հրատարակված «Դայկագունք հայրենյաց կամ ազգային գավառական վարչությունը» հոդվածը: Չնայած խորագիրը խստանում էր պատմել գավառական վարչությունների մասին, այնուամենայնիվ այն գլխավորապես նվիրված էր Ազգային կենտրոնական վարչության քննադատությանը, քանի որ ըստ հեղինակի այդ մարմինն է ազգային կառավարության կառքի առանցքը, որի շուրջն են պտտվում կառքի անհիմները, այսինքն՝ գավառական վարչությունները: Դեղինակը գտնում է, որ եթե ծանր իիվանդ է «առաջնորդական գլուխը» (ակնարկում է կենտրոնական վարչության կազմալրույժ վիճակը), ապա մարմնի մյուս անդամները ևս առողջ լինել չեն կարող: Ըստ Սահմանադրության Ազգային կենտրոնական վարչությունը գտնվում էր Կ.Պոլսում, սակայն վարում էր ողջ Արևմտյան Դայաստանի հոգկոր, դատական և քաղաքական գործերը: Խրիմյանը գտնում էր, որ այդ վարչությունն ի վիճակի չէ վարելու ողջ Արևմտյան Դայաստանի գործերը, ժողովը խարիսխում է երկառակության և խռովությունների մեջ: Սահմանադրապես ընտրված Ազգային ժողովի անդամների մի մասը, նախկին հեղինակները դաշն կնքած նրա թշնամիների հետ, անլության են դատապարտում Ազգային կենտրոնական վարչությունը: Ժողովի և Սահմանադրության դեմ պայքարում են և կղերա-աղայական պահ-

պանողական մտայնության գործիչները և ժողովում ընտրված է ֆենիի անդամները: Այդ պատճառով Ազգային ժողովը երերում է և ընկնում: Խմբագրի ուշադրությունից չեր վրիպում, որ Կ.Պոլսի «Կեդրոնական Ազգային ժողով» կոչվածը, որի պատվիրակների մեծ մասը գաղթօջախի երևելի անդամներն են, չեն ներկայացնում արևմտահայ գավառաբնակ ժողովրդի շահերը, և քանի դեռ նրա աշխատանքները չեն ընկնել հունի մեջ, ապա ավելի վատթար վիճակում են ազգային գավառական վարչությունները:

Այդ հանգանաճները հայաստանաբնակ ժողովրդին բացատրելուց հետո, գավառահայության շահերի արտահայտիչ խմբագիրը կոչ է անում ազգային գավառական վարչություններին՝ ստանձնել ազգի վերքերը դարձնողի պատվավոր պաշտոնը. «Քժիշկ հայրենյաց մահճին մոտ պետք է, իսկստ ուշ և անագան կիասնեն վարչության դեղերը մինչև ի Դայաստան»<sup>1</sup>: Կղերա-աղայական և պահպանողական հոսանքի մատնությունների և քսությունների պատճառով Սահմանադրության գործադրությունը արգելվում է թ. Դուան կողմից: Այդ պատճառով խմբագիրը իր ահազանգն է հնչեցնում հայկական հորդաններում. «Արթնեք, Դայկա որդիներ, արթնեք, նախատես զգուշությամբ պահապան ու պաշտպան պատրաստենք ամեն կողմեն շուրջ փակելով Սահմանադրության նորածին մանկանը, որպեսզի առանց երկյուղի կամ կասկածանց ամեն դժվարություններ թևակրիսելով անցնի և մեր հայրենյաց մեջ հաստատելով յուր օրինաց գահը՝ թագավորեարդարությամբ և մշտնշենավոր խաղաղությամբ»<sup>2</sup>: Դեղինակն ափսոսանքով է նշում, որ սահմանադրության հեղինակները «Վոսփորի եզերքից են»: Ըստ նրա, ավելի լավ կլիներ ժողովրդի համար, եթե «սահմանադրության հայ պատգամավորները Սասիսի գլխեն վարիչնային կամ Այրարատու դաշտեն ելնեին», այսինքն՝ բուն Դայաստանի տարածքից: Այդ դեպքում նրանք ավելի լավ կիհնանային հայրենաբնակ ժողովրդի հոգմերը: Ժողովրդի փրկությունը պետք է որոնել հենց իր մեջ:

Ինչքան լավ հոդվածներ լինեն սահմանադրության մեջ, եթե չկա այն գործադրող մարդը, անհատը, ապա սահմանադրությունը ոչինչ է: Սահմանադրության գործադրությունը պետք է լինեն ժողովրդին առաջնորդողները, նրա ծոցից ելած ուժեղ անհատները: Նրանք պետք

1. Արծուի Վասպորական, 1862, թիվ 6, էջ 169:

2. Նոյմ աւգուստ, էջ 174:

Է ուսման լույսով լուսավորված մարտիկներ լինեն, «Մովսեսներ», առաջյալներ: «Դայրենյաց նոր հառաջադիմության համար մար՞դ պետք է, թե սահմանադրությունը» հոդվածում նա զարգացնում է այն միտքը, թե սահմանադրությունն ինքնին, առանց գործադրողի, մեռած տառ է, «Օրենքն ըստ ինքյան խեղճ և ողորմելի է, ոչ մի ազդեցություն չունի, գավազանի մի նման գետին կիյնա, եթե զորավոր ծեռք մը զինքն չքոնե և չպաշտպանե»<sup>1</sup>: Դոդվածագիրը բողոքում է այն մտայնության դեմ, թե սահմանադրական կարգերը եվրոպական ազգերի համար են և ոչ թե «ասիական անկատար ազգերի համար»: Բացահայտելով այդ մտայնության սնանկությունը, Խրիմյանը մերկացնում է այդ կարծիքը տարածողներին: Սահմանադրության գլխավոր հոդվածը քվեարկության և անաչար ընտրության օրենքն է, որն իրավունք է տալիս հանձնարեղ աղքատին անցնել վարչության գլուխ և ազգային խնդիրներ լուծելու մեջ առաջ անցնել հարուստներից: Այս հարցադրման մեջ ամենից լավ են արտահայտված Խրիմյանի ժողովրդավարական սկզբունքները՝ սահմանադրությունը ժողովրդին և ազգին ծառայեցնելու ջերմ փափազը: Խրիմյանն անընդհատ բացատրում է գավառաբնակ իր ընթերցողներին, որ սահմանադրական պայքարի ետևում տարբեր շերտերի պայքարն է: Պայքարի ընթացքում հաղթում են նոր հայացքները, կյանքի հետ համընթաց քայլողները: Այդ հոդվածներով բոլորվում և ամբողջականանում է «Արծուի Վասպուրականի» Վարագյան երկրորդ շրջանի Խրիմյանի հրապարակախոսությունը: 1862-63 տարեշրջանում ամսագրի էջերում լույս տեսան այնպիսի հոդվածներ, որոնք անմիջականորեն արձագանքում էին Զեյթունի հերոսական ապստամբության իրադարձություններին («Ակսենք մեր գործ, նորեն սկսենք»), ոգերում ժողովրդին՝ չիուսահատվել ապստամբության պարտությունից, կազմ ու պատրաստ լինել՝ սկսած գործը հաղթական վախճանի հասցնելու համար: Ֆիշտ է, հոդվածի հեղինակը ինքը՝ Խրիմյանը չէր, այլ նրա նախկին սանը և մերձավորագույն գինակիցը՝ Գարեգին Սրբանձոյանցը: Եթե հաշվի ենք առնում այն հանգամանքը, որ հոդվածը լույս էր տեսնում խմբագրի անմիջական հավանությամբ, ապա պարզ է, որ այդ հոդվածում արտահայտված էին նաև Խրիմյանի հայացքները, մտորումներն ու խոհերը հայ ապատագրական շարժման և նրա շարժիք ուժերի վերաբերյալ: Նույն 1862-63թթ. «Արծուի» էջերում լույս տեսավ դարձյալ

Սրբանձոյանցի «Շիճական հայոց կյանք ի Դայաստան» ստվարածավալ հոդվածը, որը հուզիչ և սրտառուց նկարագրություն էր հայ գյուղացու ողբալի կացության ծնված օրից մինչև գերեզման, նրա կախումը պարտատերերից և վաշխառուներից, նրա հարստահարյալ և զուրկ դրությունը, պետական հարկահավաքների անօրինությունները, հայ գյուղացու քայքայումն ու հողագրկությունը և պանդխուտությունը դեպի Կ.Պոլիս: Ֆիշտ է, գրական ավելի ակնհայտ ձիրքերով էր օժտված Սրբանձոյանցը, բայց նրանք նույն գինանոցից էին վերցնում իրենց գենքերը և նույն էր նրանց գաղափարական քուրան, ուր կոփկում և ծովակում էին նրանց հայացքները, դա Խրիմյանի հայրենասիրական շունչն էր և նրա ստեղծած «Ժառանգավորացը»:

1862-ին «Արծիվը» հրատարակվում է լրիվ՝ 12 թիվ, իսկ 1862-63 միացյալ թվով հրատարակվում է ևս 6 ամիս, 1864-ին ևս լույս է տեսնում ամսագրի 6 թիվ: Այդ կիսատ հրատարակություններն ունեին իրենց օրյեկտիվ պատճառը: 1862-ին ամսագրի խմբագիրը և գլխավոր աշխատակիցը՝ Մկրտիչ Խրիմյանն ու Գարեգին Սրբանձոյանցը հեռանում են Վարագից, մեկնում Տարոն, ծեռնամուխ լինում առավել պատասխանատու և պատվավոր, բայց և դժվարին գործի: Այդ հեռվից նրանք չեն կարող գործնական օգնության հասնել Վարագում լույս տեսնող ամսագրին: Առանց դադարման մասին հայտարարության, այլևս լույս չի տեսնում «Արծուի Վասպուրական» ամսագիրը: Այն մեծ դեր կատարեց Վասպուրականի հայության հոգևոր արթնացնան գործընթացում: Բուն Դայաստանի տարածքում հրատարակված այդ առաջին պարբերականը իր էջերում բարձրացրեց համագային խնդիրներ, որոշակիորեն պաշտպանեց լայն դեմոկրատիայի՝ գյուղացիության և արհեստավորության շահերը: Քննարկված հարցերի բազմազանությամբ, համագային պրոբլեմների առաջարման հրատապությամբ և սրությամբ, «Արծուի Վասպուրականին» դարձավ իր ժամանակի առաջադեմ պարբերականներից մեկը և ժողովրդականացրեց Խրիմյանի ու Սրբանձոյանցի անունները:

1. Արծուի Վասպուրական, 1862, թ. 8, էջ 226:



Գարեգին  
Մրկանձտյան  
(Խմբագիր  
«Արծուիկ  
Տարոն»-ի)



## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

# Մ. ԽՐԻՍՏՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐՈՆԻՄ

Տարոնը Արևմտյան Դայաստանի հայաշատ տարածքներից էր: Երկրի աշխարհագրական դիրքը, Սասունի կիսանկախ վիճակը, պատմական անցյալի վերհուցք, Մամիկոնյան տան հզորության գիտակցությունը, Խութեցի Յովնանի, Սասնա ծռերի բոլոր սերունդների մասին հյուսված ավանդագեպերը բերներերան պատմվում էին տարոնցիների մեջ, ստիպում նրանց հոգում վառ պահել ընդգույնի և ընդուսության ոգին, խնամքով անթեղել ազատության կայծերը, հարմար պահին ժայթելու և պոռկալու նպատակամղումով:

Տարոնում էր գտնվում Սուրբ Կարապետի հռչակավոր վանքը, որի նոտակա անցյալը, նրա վանահայր Յովնանի գործունեությունը ստիպում էր տարոնահայությանը խորին իր ներկա վիճակի վրա, հանենատության եզրեր և ելք որոնել անելանելի վիճակից: Տարոննցու ներկան, իսկապես, հուսահատ էր և անտանելի: Անհետացած հայ ֆեռդալական տներին փոխարինելու էին եկել քուրդ ցեղապետերը՝ դերերեյիները կամ թոռունները, որոնց մեջ վառ էր ավարառուի ռազմատենչ բնազդը, թալանի ախորժակը:

Ստվար և հոծ հայ զանգվածից հետո քուրդ բնակչությունը երկրորդն էր իր թվաքանակով, իսկ թուրքերը բնակվում էին մեծ մասամբ քաղաքներում՝ Մուշում և Բիթլիսում. նրանց ծեռքին էին գտնվում քուրդ պետական պաշտոնները և թուրքական բանակի գորահրամանատարների աստիճանակարգը:

Հայ ժողովուրդը տնքում էր պետական հարկերի ծանրությունից, տառապում հարկահավաքների անօրինություններից. դրան գումարվում էին նաև քուրդ ցեղապետերի կողմից սահմանված հարկերը, ոչլաղությունը, խաֆիրությունը: Քուրդ ցեղապետերը ճորտական կախման մեջ էին գտել հայ գյուղացուն, նրա հետ վարվում էին իբրև ստրուկ «ռայայի» հետ, նրան վաճառելու, գնելու, սպանելու, առաջին

գիշերվա ազատ իրավունքով: Դայության հարստահարությունները հասնում էին ահավոր չափերի:

Հարստահարություն հասկացության տակ պետք է նկատի ունենալ բռնություններ, սպանություններ, իրդեհումներ, առևանգումներ, հողերի գրավում, անասունների կողոպուտ, միով բանիվ՝ օրինականցված ցեղասպանություն: Այդ ամենը կատարվում էր մեծ մասամբ քուրդ ցեղապետների միջոցով, սակայն նրանք փաստորեն գործիք էին Մուշի և Բաղեշի թուրքերի, պետական պաշտոնյանների ծեռքին:

Նման չարիքներին դիմագրավելու համար անհրաժեշտ էր կազմակերպել ժողովրդին, արթնացնել նրա դիմադրական ոգին, դիմակայելու ուժը: Այդ գործի կազմակերպումը իր վրա է վերցնում Կ.Պոլսի Ազգային ժողովը, որն գրադպում էր հայաշատ կենտրոնների բանին հոգևոր առաջնորդների ընտրության դժվարին գործով: Պոլսի «փափկակենցաղ» հոգևորականները չեն ցանկանում լքել իրենց տաքուկ անկյունները, ինուանալ կայսրության մայրաքաղաքից և արևմտահայ գավառում կիսել տեղի հայության կյանքի դժվարությունները:

Մկրտիչ Խրիմյանի՝ Վասպուրականում ծավալած հայրենանվեր գործունեության համբավը հասել էր Տարոն, Մուշ: Բանիմաց հոգևոր առաջնորդից գորեկ տարոնահայությունը իր ցանկությունը՝ հանրագրերի ձևով արտահայտեց Կ.Պոլսի ժողովի առաջ: Կ.Պոլսի Ազգային առժամանակյա խառն ժողովը անսալով տարոնահայության խնդրանքին, Խրիմյանին նշանակեց Տարոնի հոգևոր առաջնորդ և Սուլը Կարապետի վանքի վանահայր<sup>1</sup>, նրա վրա թողնելով Վարագա վանահայրությունը ևս: Ստանալով ժամանակի պատրիարքական տեղապահ Ստեփան արքեպիսկոպոսի կոնդակը և Բ.Դուռն իրովարտակ ֆերմանը, Խրիմյանը պատրաստվեց մեկնել Տարոն: Ուղևորվելուց առաջ նա մեծ բժախմորությամբ կարգավորեց Վարագա վանքի գործերը: Վանահոր փոխանորդ կարգվեց Մեսրոպ վարդապետը, «ժառանգավորաց» վարժարանի տնօրինությունը հանձնվեց Եղիշէ Եպիսկոպոսին, առաջախճ և ավագ միաբաններից կազմվեց ուսումնական խորհուրդ: Ստեղծվեց նաև տնտեսական խորհուրդ, որը պետք է հոգար վանքի, վարժարանի, տպարանի հոգսերը: Խորհուրդն ուներ իր նախագահը, փոխանորդը, գանձապահը, հաշվապահը, ծախսա-

1. Վանքը եածակեց էր գետես վայ միջնադարից, այլուղ վանահայր էր եղիշ հայտնի վիվտիս Զենքը Գրակը: Այս պատճառով այն եածախ կրչվում էր Գրակս վանքը: Աշխարհագրական լիբրի պատճառով (վանքը գտնվում էր Խնճակյան լեռների վրա) այն կրչվում էր նաև Խնճակյան վանքը: Սուլը Կարապետ անվանումը վանքը ստացել էր ավելի ուշ:

րարը և քարտուղարը<sup>1</sup>: Դամալրվեց նաև «Արծուի Վասպուրական» ամսագրի խմբագրական կազմը, որպեսզի հայր Արծվի բացակայությունը չանրադառնար ամսագրի հրատարակության վրա: 1862 թ. թիվ 11 «Արծուին» իր էջերում ավետիս հետեւ տարոնահայությանը նոր հոգևոր առաջնորդի գալատյան առիթով՝ «Արծիվ գնաց ի Տարոն»: Ամսագրի հրատարակությունը առանց Արծվի շարունակվեց մինչև 1864թ.:

Այդ նախապատրաստական աշխատանքներից հետո միայն, վերցնելով Վարագա վայտյա տպագրական մեքենան, իրեն ուղեկից և զինակից ունենալով մերձավորագույն սանին և «արժանընտիր աշակերտին»՝ Գարեգին Սրվանցտյանցին, Խրիմյանը ճանապարհվեց Մուշ: Ականատես և ժամանակակից Երեմիա Տևկանցի վկայությամբ «ի 1862-ի օգոստոս ամսու 30 հասանե ի Մուշ ի վաճս սուլը Կարապետի վարյալ զպաշտոն յուր»<sup>2</sup>: 1862 թ. աշնանը Խրիմյանն արդեն անցել էր իր պարտականությունների կատարմանը:

Դայոց պատմության մեջ հռչակված Սուլը Կարապետի վանքն ուներ մեծ հարստություն՝ գյուղեր, արոտավայրեր, անասուններ, շարժական և անշարժ գույք<sup>3</sup>: Վանքի հարստությունը բազմապատկվում էր նաև աշխարհի բոլոր ծայրերից եկող հայ ուխտավորների պատկառեկի նվիրատվություններով: Այդ բոլորով հանդերձ վանքն անբարեկար էր: Նրա հսկայական հարստությունը ծախսվում էր մի խումբ հոգևոր և աշխարհիկ ֆեռդաների կողմից, միաբանության պորտաբույժ վարդապետների, վանահոր, նրա փոխանորդի, մերձակա գյուղերի ռեխսների, աղաների և համփաների կողմից: Վանքի հարստությունից իրենց բաժինն ունեին նաև քուրդ շեյխերն ու բեկերը, որոնց հրամանով և «օրինությամբ» հաճախ կատարվում էին հարսանիքներ և եղծվում պասկներ:

Վանքը բարեկարգելու միտունով՝ Պոլսի պատրիարքարանը դեռևս տասը տարի առաջ որոշեց վանահայր և հոգևոր առաջնորդ նշանակել դրսից, դա Յոզեփի հոգևոր առաջնորդ Մատթեոս վարդապետն էր, հռչակված իր առաջնորդությամբ և ազնվությամբ: Միաբանության անդամները փշերով դիմավորեցին նրան և մահափորձ կազմակերպեցին նրա դեմ: Վախեցած վարդապետը շտապեց հեռանալ, և միաբանությունը հանգիստ շարունակվեց իր գործը:

1. Գ.ՎԹ. 2. Անաքեսանի թ., գ. 182, էջ 10:

2. Մատթեոսաբան, մետաքը 4177, էջ 44:

3. Գ.ՎԹ. 2. Անաքեսանի թ., գ. 182, էջ 11. Մուլու, 1863, թիվ 197:

## ԵՄԱ ԿՈՍՏԱՆԴՎԱՆ

Նրանց անդորրը խռովվեց նաև 1859-ին, երբ վիճակի առաջնորդ և վաճահայր նշանակվեց Կ.Պոլսի պատրիարքական փոխանորդ, Կեսարեցի Կարապետ ծայրագույն վարդապետը: Նորընտիր վաճահոր և միաբանության անդամների միջև ծագած տարածայնությունները հանգեցրին ուժգին խռովությունների: Դրանց վերջ տալու նպատակով 1862-ին պատրիարքարանը ետ է կանչում Կարապետին և նույն տարվա հուլիս ամսին Խրիմյանն ընտրվում է Տարոնի հոգևոր առաջնորդ և Սուրբ Կարապետ վաճքի վաճահայր:

Ահա այդպիսի վիճակի մեջ էր Տարոնի առաջնորդությունը, երբ Խրիմյանը հասավ Տարոն և արքունի հրովարտակով ու պատրիարքական կոնդակով ծեռնամուխ եղավ իր նոր պաշտոնին: Խրիմյանը չէր էլ պատկերացնում, թե ինչ էր սպասում իրեն Տարոնում: Իզուր չէր ժամանակի կաթողիկոս Մատթեոս Կոստանդնուպոլսեցին կաթողիկոսական կոնդակով շնորհավորում Խրիմյանին և միևնույն ժամանակ գգուշացնում չափից ավելի «ծանր բեռ շալակելու համար», քանի որ նրա վրա էր մնում նաև Վարագա վաճահայրությունը, իսկ այդ հոչակավոր վաճքը չպետք է թողնվեր բախտի քնահաճույքին: Ամենայն հայոց հայրապետը պատվիրում էր «զերկուտին և գուլու գործել ի միուն բարեկարգության, օրսատօրե պայծառացուցանել ի պարծանս ազգի և եկեղեցվո», դրա համար ամենակարող Աստծուց խնդրելով նորընտիր վաճահորը շնորհել «զկարողություն և զորություն խոհական ընթացիք հպատակ լինելու ի պաշտամանդ»<sup>1</sup>:

Վաճքի միաբանությունը Խրիմյանին արժանացրեց նույն ընդունելության, ինչ դրսից ընտրված նախորդ երկուտին: Խրիմյանն ուշադրություն չդարձրեց այդ հանգանաճի վրա:

Առաջին գործը, որ ծեռնարկեց նորընտիր վաճահայրը, տնտեսական խորհրդի կազմակերպումն էր, որով խիստ հսկողություն սահմանվեց վաճքի հասույթների վրա, որպեսզի դրանք օգտագործվեն ազգօգուտ ծեռնարկումներում: Նա կազմեց վաճքի բարենորոգումների ծրագիր, իսկ Մուշում, ժողովրդի հավանությամբ, հաստատեց Ազգային ժողով՝ բաղկացած 12 անդամից: Ազգային ժողովի նախագահ և իրեն փոխանորդ նշանակում է Մամբրե վարդապետ Մամիկոնյանին: Վերջինս Խրիմյանին ընդդիմադիր խմբից էր: Երեմիա Տևկանցը նրա մասին գրում է. «Մամբրե վարդապետ Մամիկոնյան դարանամուտ լիով նմա, հարուցաներ ներքին և արտաքին խոչ և խութ

## Մկրտիչ ԽՐԻՄՅԱՆ. Հասարակական-քաղաքական գործունեությունը

ընդդեմ նորա, քանզի ինքն իսկ ցանկայր ժառանգել այն պաշտոն առաջնորդական և վաճահայրական»<sup>2</sup>: Դիվանագիտական այդ քայլով Խրիմյանը ցանկանում էր հաշտության ծեռք կարկառել իր ընդդիմադիրներին՝ միասնական ուժերով հարստահություններին դիմակայելու համար: Սակայն այդ նրան չհաջողվեց:

Աշխարհիկ և հոգևորական վերնախավը չէր ուզում գրկել իր հասույթներից<sup>3</sup>: Ուսումնասիրողներն այդ հակամարտությունը մեկնաբանում են տարբեր կերպ: Կարո Սասունին հպանցիկ նշելով տնտեսական գործոնը, շեշտը դնում էր Խրիմյանի դրսեկ լինելու հանգամանքի վրա. իբր Մամիկոնյանների շառավիղ տարոնցի հոգևորականների համար անընդունելի էր վասպուրականցի վարդապետի ղեկավարությունը, որը, ըստ նրանց, դավաճան Մերուժանի շառավիղներից էր<sup>4</sup>: Մեր կարծիքով, միաբանության և նորեկ վաճահոր միջև ստեղծված հակասության հիմքը տնտեսական գործոնն էր: Ժամանակակիցը այդ պայքարին տալիս է հետևյալ մեկնաբանությունը. «Վարդան, Մովսես և Ստեփան աղայը, պէտք և բռնավորք աշխարհին հարստությունը Գլակա վանից բաժանորդ գոլով որկիցն եղանակով շորթեին ի եկամտից վանուցն, յորժան իշխանություն և վաճահորություն ի ծեռն միաբանից լիներ, իսկ յորժան Մատթեոս, Գրիգորիս, Կարապետ և Խրիմյան արտաքուստ գային վաճահայր լինեին, պատառ նոցա փոքրանար և շահ նոցա նվազեր... Իսկ Խրիմյան անմիջապես զշահս նոցա իսպառ ցամաքեցույց, ուստի նոցա բոլոր զորությանը զինեցան ընդդեմ նորա»<sup>5</sup>: Երեմիա Տևկանցի այս վկայությունը ապացուցում է, որ տնտեսական գործոնը գերակշռողն էր պայքարի մեջ: Սակայն դա սովորական արոռակովիվ չէր, որ մղում էին երկու տարբեր խմբակցությունները իրենց ներկայացուցչին վաճահոր պաշտոնում հաստատելու համար: Դա պայքար էր երկու տարբեր սոցիալական խմբավորումների միջև. ժողովրդի ժողից դուրս եկած վարդապետը պայքարում էր ժողովրդի շահերի համար, ընդդեմ սեփական և այլազգի ցեցերի: Կառավարական պաշտոնյաները դաշն են կնքում ընդդիմադիր խմբակցության միաբանների հետ՝ Խրիմյանին հեռացնելու կամ մեջտեղից վերացնելու համար: Այդ նպատակով

1. Մատենայարան, ձեռագիր 4177, էջ 44:

2. Խ. Մատթեոս, նշվ. աշխ., էջ 56:

3. Կ. Սասունի, Պատմության Տարոնի աշխարհի, էջ 203:

4. Մատենայարան, ձեռագիր 4177, էջ 72:

5. Գլուխ. Խրիմյանի ֆ., գ. 158, էջ 2:

միաբանության անդամ վարդապետները Խրիմյանին ներկայացրին վաճառքի տնտեսության հաշիվը այն տեսքով, որ այդ հարուստ վաճառքն ունի 100000 դոլարու պարտը և այն ծանրանալու է նորեկ վաճառքոր վրա: Դրանով ակնկալվում էր Խրիմյանին վախեցնել և իր կողմնակիցների հետ միասին փախցնել վաճառքից: Սակայն այդ միջոցն ապարդյուն անցավ:

Տարոնի հոգեկոր առաջնորդի պաշտոնը հոգեկոր պաշտոն լինելու հետ միասին քաղաքական պաշտոն էր: Առաջնորդն էր կարգավորում իր վիճակի ժողովրդի և կառավարական պաշտոնյաների փոխհարաբերությունները, ժողովրդի գանգատներն ու բողոքները հղում պատրիարքարան և Բ.Դուռ: Խրիմյանն ինքն իրեն հարմար չէր համարում քաղաքական գործունեության համար և իր միակ նպատակը համարում էր ժողովրդի լուսավորության սրբազն գործին ծառայելը<sup>1</sup>: Սակայն նա ընդառաջել էր Տարոնի ողջ ժողովրդի խնդրանքին, ուրեմն սեփական ցանկությունը ոչինչ էր ժողովրդի շահերը պաշտպանելու համեմատությանք: Իր առաքելությունը կատարելու համար անհրաժեշտ էր բացել ժողովրդի աչքերը, սրափեցնել նրան «մահանձնան քնից», ազգային ինքնագիտակցության զգացումը սերմանել նրա մեջ: Այդ նպատակն իրականացնելու միջոցներն էին դպրոցն ու նամուլը, տպարանն ու պարբերական հրատարակությունները:

\* \* \*

Սուլը Կարապետի վաճում բացվում է նոր «Ժառանգավորաց» վարժարան, որի տնօրենն ու գլխավոր ուսուցիչը Խրիմյանի հրահանգով դառնում է նախկին սանը, այժմ զինակիցը և հավատարիմ գործները՝ Գարեգին Սրվանձտյանցը: Այս «Ժառանգավորաց» Վարագա վարժարանի հետ համեմատած ուներ առավել աշխարհիկ թեքում, ուսուցիչների գերակշռող նասը աշխարհականներ էին, դասավանդող առարկաները՝ առավելապես աշխարհիկ գիտելիքներ:

Մի քանի ամս անց՝ 1863-ի ապրիլից վաճում սկսվում է հրատարակել «Լրատար Արծվիկ Տարոնո» Երկշարաթերթը, որի տիտղոսաթերթին նշված էր՝ «Թռուցյալ թեոք Վասպուրական Արծվոյն»: Այս խոսքերով «Լրատարը» հայտնում էր իր հավատարմությունը «Արծուի Վասպուրականի» գաղափարներին, ազդարարում իր սերտ կապը Հայր Արծվի հետ: Լրատարի խմբագիրը Հայր Արծվի արծվիկն

1. ԳԱԹ, Խրիմյանի ֆ., գ. 141, էջ 11:

էր, «արծվո ճետը»՝ դարձյալ Գարեգին Սրվանձտյանցը: Մեծ դեր կատարեց «Արծվիկ Տարոնոն», հայաշատ այդ վայրի առաջին տպագիր պարբերական օրգանը: Փոքրածավալ այդ Երկշարաթաթերթը լույս էր տեսնում ժողովրդին հասկանալի, աշխարհաբար լեզվով, բացում նրա աչքերը, նրան դրդում պայքարել շահագործողների՝ «գայլերի ոհնակի դեմ»: «Արծվիկը» ներկացնում էր կառավարական տեղական պաշտոնյաների կանայականությունները, ժողովրդի բողոքի ծայնը հենցենում Օսմանյան մայրաքաղաքի հայության և Բ.Դուռ ականջին: Լրատարը քննադատում էր նաև հայ հոգեկանության որոշ ներկայացուցիչների քսությունները, գեղծումները, ազգային հարատությունը վատնելու և գրիելու անհագ կիրքը, միջոցների մեջ խտրություն չնելու, սպանությունների և կաշառքի միջոցով դիրքի և հոգեկան բարձր աստիճանի հասնելու զարգելի գործերը:

Խմբագիրը թերթի նպատակն էր համարում «գյուղացվույն քան քաղաքացվույն» խոսք հասկացնելը, ազգության և հանրության շահերով նրան մտահոգելը: «Արծվիկի» սրտահույզ կոչերը և հորդորները մեծ ազդեցություն էին ունենում գյուղացիության վրա: Երկշարաթերթի էջերում տպվեց մշեցիների աղերսագիրը ուղղված կ.Պոլսի հայոց պատրիարքարանին: Տարոնի բոլոր հայկական գյուղերի գյուղացիության, գյուղապետերի անունից գրված այդ «ողբախառն աղերսը» փաստորեն տեղի հայ բնակչության իրավիճակի ցնցող պատկերի նկարագրությունն էր, սրտակեղեք ճիչը, որն ավելի շատ ըմբոստ բողոք էր, քան խորագրում նշված «աղերս»: Բավական է նշել, որ հողվածի հիմնական լեյտոնուտիվը «ալ դանակը մեր ոսկորին հասած է» արտահայտությունն էր: Յոդված-աղերսագիրի հեղինակը բացահայտ նշում է, որ ժողովրդի տառապանքի բուն պատճառը նաև ազգի ներսում գյուղություն ունեցող հակասություններն են, այսինքն՝ մոտենում է դասակարգային ներհակությունների գաղափարին: «Արտաքին ծեռք չէ զմեզ չարչարող, նենք կտանջվինք մեր ծեռքեն, կչարչարվինք մեր ազգեն, իրենց փառաց համար զմեզ կգոհեն, իրենց շահուն համար զմեզ կվաճառեն»<sup>1</sup>: Պատահական չէ այն հանգանանքը, որ Յառություն Սվաճյանը արտատպեց այդ հողվածն ամբողջությամբ իր «Սեղվում»<sup>2</sup>, տարոնահայության աղերսը, մրմունցն ու բողոքը հնչեցնեց մայրաքաղաքի համեմատաբար ապահով կյանքով ապրող հա-

1. Արծվիկ Տարոն, 1863, N 3:

2. Մելու, 1863, N 208, 210, 212:

յության ականջին: Դրանով Սվաճյանն իր համերաշխությունն էր արտահայտում հոդվածի հեղինակին:

Ուսումնասիրողների շրջանում տարբեր կարծիքներ են արտահայտվել այդ հոդվածի վերաբերյալ: Ենոն և Համբարձում Առաքելյանը այդ հոդվածը համարում են Խրիմյանի հեղինակության արդյունք<sup>1</sup>: Մեր կարծիքով հոդվածի հեղինակը Գարեգին Սրվանձտյանցն է, որը «Արծվիկի» փաստական և անվանական խմբագիրն էր: Այդ է ապացուցում նաև գրելառը: Այլ խնդիր է, որ Սրվանձտյանցի թերթը և նրա գրած համարյա բոլոր հոդվածները վայելում էին Խրիմյանի վստահությունը և դրանք գրվում էին Խրիմյանի անմիջական պատվերով և հանձնարարությամբ:

\* \* \*

Խրիմյանը չէր կարող իրեն կաշկանդել խմբագրի կամ ուսուցչի գործունեությամբ: Նա, իհարկե, հսկում էր և տպարանի, և դպրոցի աշխատանքներին, բայց նրա գործունեության ոլորտը ավելի լայն էր: Նա իր առաջին գործն էր համարում «կարելի եղածին չափ տարունեցվող հույսը պսակել, այսինքն, աղքատին իրավանց պաշտպան կենալ, օգնության հասնել տնանկին, փրկելով զիրենք կեղեքիչներուն ծեռքեն»<sup>2</sup>:

Տարոնահայությունն ըստ արժանվույն գնահատեց իր նոր հոգևոր առաջնորդին, որը հանձն էր առել ամեն զոհողություն ու հալածանք և անվարան առաջ էր տանում ժողովրդին օգնելու գործը: Այդ տարիներին տարոնահայությունն էր, որ Խրիմյանին տվեց նրա ողջ կյանքի ընթացքում ուղեկցող պատվանունը՝ Շայրիկ ... Նրա ժամանակակից Երեմիա Տևկանցն այսպես է գրում. «Մեծագույն մասն ժողովրդյան աշխարհին ի կողմն Խրիմյանի էին, պաշտեին և պաշտպանեին զնա և զիտումբն նորա»<sup>3</sup>:

Խրիմյանը ծավալում է եռանդուն գործունեություն տարոնահայության վիճակը քուրդ ցեղապետերի, քուրդ պաշտոնյաների, նաև հայազգի ցեցերի հարստահարություններից գեր փոքր-ինչ թեթևացնելու համար: Պայքարի միակ զենքը քողքն էր, որին լծվեց Խրիմյանի ողջ խումբը. ինքը՝ հոգևոր առաջնորդն ու վանահայրը, Մուշու

## Մերուի ԽՐԻՄՅԱՆ. Հասարակական-քաղաքական գործունեությունը

հաստատված քաղաքական ժողովը, «Արծվիկ Տարոնո» երկշաբաթաթերթը: Նրանք պահանջում էին բարեկարգություն, Ազգային Սահմանադրության գործադրումը գավառներում, բարենորոգումներ: Խրիմյանի և Սրվանձտյանցի կազմակերպած բողոքագրերը նկատելի հետք թողին տարոնահայության ազգային ինքնազիտակցության զարգացման, նոր գաղափարների ձևավորման վրա: Ակսվեց մի երկարատև պայքար «անիրավության և սանձարձակ բռնության դեմ»<sup>4</sup>:

Խրիմյանի առաջնահերթ խնդիրը հայ գյուղացու վգին ծանրացած թաշիր հարկի գանձման նորմալացումն էր: Ըստ օրենքի, թաշիրը պետք է գանձվեր ժողովրդից նրա ստացած թերթի և եկամտի 1/10-ի չափով: Բայց արքունի հարկահավաքները վաղուց եղծել էին այդ օրենքը: Դարկը, համարյա միշտ, գանձնվում էր ավելի մեծ չափով և բնատուրքի փոխարեն դրամ էին պահանջում այն ժամանակ, երբ թերթի արժեքը մի քանի անգամ բարձրացել էր: Ծայրաստիճան հուսահատված ժողովուրդը գտնվում էր քայքայնան եզրին: Ծատ դեպքերում գյուղացիները հրաժարվում էին նույնիսկ քանչարեղենին մշակությունից, որովհետև նրանից գանձվող տուրքը ավելի շատ էր, քան նրանից ստացվող օգուտը<sup>5</sup>: Այդ հանգանանքը խիստ վնասում էր երկրագործության զարգացմանը: Անշահութաբերության պատճառով գյուղատնտեսական զանազան կուլտուրաներ այլևս չեն մշակվում:

Կառավարական պաշտոնյաներն ու հարկահավաքները իրենց գործունեության ընթացքում աջակցություն էին ստանում տեղի հոգևոր առաջնորդներից: Սակայն նորեկ հոգևոր առաջնորդը ննան մերձեցման չէր գնում: Ավելին, Խրիմյանը ոչ միայն չի օժանդակում Բաղեշից Սուչ Եկած հարկահավաք Շեքի Էֆենդուն, այլև կազմակերպում է իր առաջնորդության սահմաններուն գտնվող գյուղապետներին՝ միասնաբար իրաժարվել թաշիրը դրամով վճարելուց: Սակայն գյուղապետների միաբանությունը շատ շուտով քայքայվում է՝ Խրիմյանի թշնամի խմբակցության, Սուլը Կարապետի միաբանության և Տարոնի աղայական վերնախավի սաղրանքներով: Նրանցից ոմանք քուրդ գյուղագամին հաղորդում են, որ իրենց կազմակերպողը հոգևոր առաջնորդն է: Թուրք պաշտոնյան իր մոտ է կանչում Խրիմյանին, սպանում, որ իրեն չօժանդակելու դեպքում նա բողոքագրի կուղարկի Բ. Դուանը և հոգևոր առաջնորդին կմեղադրի պետական գանձարանին վնաս

1. Գլ. Հ. Առաքելյանի Փ., գ. 182, էջ 13:

2. Նոյն մերժման, Խրիմյանի Փ., գ. 141, էջ 11:

3. Մատենադարան, ձեռագիր 4177, էջ 72:

1. Կ. Սասունի, Պատամարյան Տարոնի աշխատիքի, էջ 231:

2. Դիլիմ Խայոց պատմաբան, Խասոր ԺԴ, էջ 467:

հասցնելու և դավաճանության մեջ: Դարկահավաքի քսություններով և իրահրումով Մուշ է գալիս օսմանյան մյութեսարիֆը, որին Մուլր Կարապետի վանքի միաբանությունը դիմավորում է ամբաստանություններով. «Դորժան լուսան միաբանք, թե կուսակալն հայսալ ի Մուշ ավան, ի ծերունի Մեսրոպ վարդապետեն և ի լուսարար ծերունի Դարություն վարդապետե սկսյալ մինչև արեղան իսկ, ի նոյեմբեր ամսո 3 ընդ արշալույսն առավոտյան ի ծին աշտանակյալ մտին ի Մուշ, հանդիման եղեն կուսակալին առաջնորդությամբ Մամիկոնյան Վարդան աղային, Կոնճոյան Մովսեսին և սկսան մատնել և գրպարտել զիսրիմյան..., ասելով, թե Խրիմյան ունի կազմյալ ի մեջ քաղաքի գաղտնի ժողով ընդդեմ տաճկական ժողովին, ի ռուսահայոց կասկածավորս բերյալ բնակեցուցանե ի մեջ վանա, ժողովուրդն ի ապստամբության գրգռե, արգելու տալ զմաքս և տասանորդ և այլ անլուր բանս...»<sup>1</sup>:

Այդ մատնության լուրը լսող գյուղացիները հարձակվեցին վարդապետների վրա, որոնք նազապուրծ փախսան և թաքնվեցին իրենց խցերում: Գործն ավելի բարդացավ, եթե վերոհիշյալ մեծահարուստ Մամիկոնյան Վարդան աղան հավաքեց «Արծվիկ Տարոնոյի» հոդվածները և աչառու թարգմանությամբ, նաև հայերեն բնագրերով Բիթլիսում հանձնեց գայմագամին՝ Խրիմյանին և նրա խմբակցությանը ներկայացնելով իրեն քաղաքականապես անբարեհույս անձնավորություններ: Միտունավոր թարգմանված հոդվածներում շեշտը դրվում էր նրանցում արտահայտված ազգային ազատագրական գաղափարների վրա և Խրիմյանը ներկայացվում էր իրեն ժողովրդին ապստամբության գրգռող անձնավորություն, որը ժողովրդին ուժի է հանում օսմանյան պետության դեմ, հորդորում նրանց մեկնել Զեյթուն, որն այդ օրերին ապստամբության դրոշ էր բարձրացրել:

\* \* \*

Հակառակորդ հոգևորականները ավելի գործուն քայլեր են ծեռնարկում վասպուրականցի առաջնորդին Տարոնից խապար հեռացնելու համար: Գործի է դրվում իին և փորձված միջոցը՝ մահափորձը: «Արծվիկը» գումում է. «Անցյալ շաբթու, մայիս 22, երեքշաբթի ժամը 3-ին (գիշերը) Մուլր Կարապետ վանքի առաջնորդարանի լուսամուտից ուղղությամբ երկու իրացան արձակվեցան պարսպի դուրսեն: Բայց, բարեբախտաբար, գուցե և խորհրդաբար, տանիքի վրայեն

1. Մասականադարան, ձեռ. 4177, էջ 53:

անցան գնդակները: Կյա անակնունելի դիպվածը խռովեցուց ամենուս սիրտերը... Սույն փորձը կրկնվեցավ կիրակի գիշերը ժամը 4 և կեսին... Արծիվ, որո իբր ճակատագիր և ականջաց սովորական եղած են գրեթե այդպիսի ծայներ, անսասան և անզարհութելի հոգվով ու դեմքով «ի քեզ, տեր, հուսացա» կերգե և գործերը կշարունակե, թե կուգեն, թող թնդանոթներ որոտացուցանեն և լեռներ դղրդեն... Դին հնարքները ներգործություն չունին այժմ»<sup>2</sup>:

Թշնամիների ատելությունը Խրիմյանի նկատմամբ այն աստիճանի էր, որ նրանք չեն զարդում անգամ քուրդ ավազակի իբրև վարձկան մարդասպան օգտագործելուց: Վերջինս չի կարողանում կատարել սպանության պատվերը և ծունկի չոքելով Խրիմյանի առաջ, խոստովանում է ամեն ինչ: Սակայն թշնամիները դարձյալ չեն ընկրկում: Մահափորձը, նորից անհաջող, կատարվում է երրորդ անգամ՝ մայիսի 29-ին: Խրիմյանը, որ մինչ այդ էլ ցանկանում էր Պոլիս մեկնել վարժարանի և տպարանի համար դրամ հայթայելու նպատակով, 1863 թ. մայիսի 30-ին վաճքից մեկնում է Կարին, որոշ ժամանակ այնտեղ մնալուց հետո Պոլիս ուղևորվելու համար: Այդ ընթացքում Բ. Դուռ էր հասել Բիթլիսի գայմագամի ամբաստանությունը Խրիմյանի վերաբերյալ և բուրքական արքունիքը պատրիարքարանի միջոցով Խրիմյանին կանչում է Կ.Պոլիս՝ քննելու նրան ներկայացրած մեղադրանքները: Այդ բոլորը պատճառ դարձան, որ 1864-ին քաղաքական մատնությամբ ժամանակավորապես արգելվեց «Արծվիկի» հրատարակությունը: Կ.Պոլսում իրատարակվող «Ժամանակը» գուժեց ողջ արևմտահայությանը. «Խրիմյանի համար սոսկալի մատնություններ եղան, որոնք միայն Խրիմյանի չեն վերաբերիր, այլ ընդհանուր ազգին: «Արծվիկ» թերթին մատնությունը ու անոր խափանումը, տպարանի և վարժարանի ցրվիլը դեռևս մոռացված չեն, ասոնք փո՞ք հանցանքներ են և նույնիսկ Սահմանադրության դեմ աքացի հարված»<sup>2</sup>:

Երկու ամիս ու կեսից ավելի Խրիմյանը մնում է Կ.Պոլսում: Դեռևս Բ.Պուտը չէր հաստատել հայոց Ազգային սահմանադրությունը, իսկ պատրիարքը մենակ, առանց Ազգային վարչության և Ընդհանուր ժողովի չէր ցանկանում քննություն անցկացնել: Միայն դրանց հաստատումից հետո Խրիմյանին հաջողվում է տեղեկագիր հանձնել պատ-

1. Արծվիկ Տարոն. 1863. թիվ 5 (առթիվ 1):

2. Ժամանակ. 1864. թիվ 47, էջ 168:

## Եմա ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

րիարքին և Ազգային Սահմանադրական վարչությանը: Այդ ծավալուն փաստաբուղը պատմում է Խրիմյանի Տարոնում ծավալած գործունեության, օսմանյան պետական պաշտոնյաների, նահանգապետի և հարկահավաքների կատարած ապօրինի գործերի, միևնույն հարկը մի քանի պատիկ և մի քանի անգամ հավաքելու, հայ և քուրդ աղաների՝ գյուղացիությանը անողորմ շահագործելու և հայ հոգևորականության որոշ ներկայացուցիչների կողմից պաշտպանություն գտնելու մասին: Այդ փաստաթղթով Խրիմյանը փայլուն տրամարանությանը արդարանում է, ինչն իր կողմից մեղադրելով Բիթլիսի գայնագամին, որ ժողովրդին կեղեցելով՝ վերջինս առավել մեծ հարված է հասցնում արքունի գանձարանին, քանի որ քայլայված գյուղացին դառնում է անվճարունակ. «Երանի թե Բարձրագույն Դուռը այս արդար բաղդատություն ըներ, թե որքան մեծ է Խրիմյանի հավատարմությունը, քան գգայնագամին, մինչդեռ նա առերես միայն տերության գանձը առիթ բռնելով բարձրանալ կուգեր, բայց անիրավ միջոցներով, այսինքն, գեղացին գրկել և Մշո ողջ գեղերը ավերակ դարձունել հարստահարության նոր հարվածով մի, չնտածելով բնավ, թե ներկային այս կերպ գրկանաց օգուտը որչափ վնասակար է տերության գանձին, մինչդեռ գեղացին հարստահարվելով ուժեն կթափի, երկրագործություն, մած և արոր կդադրին և հետևապես տասանորդական տուրքը վերջի նվազման կետ կհասնի: Այս տեղն ահա կերևի հայտնի, թե որու՝ ծառայությունը, հավատարմությունը արժանավոր է, գայնագամին, թե Խրիմյանին»<sup>1</sup>:

Այդ տեղեկագիրը տպվեց Կ.Պոլսի հայ պարբերականներում և մայրաքաղաքի հայ գաղութին ներկայացրեց գավառի հակասահմանադրականների կատաղի պայքարը, նրանց միջոցների մեջ խտրություն չդնելու հանգամանքը: Այդ ընթացքում պատրիարքարանը մայրաքաղաք է կանչում ընդդիմադիր վարդապետներին՝ վանական խնդիրները քննարկելու համար: Արքունիքի և պատրիարքարանի աչքուն անեղ ճանաչված վանահայրն ու հոգևոր առաջնորդը ցուցաբերում է քրիստոնեական ներողամտություն և մեծահոգարար ներում է խռովար վարդապետներին ու միասին վերադառնության ներում:

Նորից վերսկսվում է լուսավորական հայրենանվեր գործունեությունը: Սատնության պատճառով ժամանակավորապես դադարած «Արծվիկը» վերստին սկսվում է հրատարակվել, ընդլայնելով իր թոփչքի

## Մկրտիչ ԽՐԻՄՅԱՆ. Հասարակական-քաղաքական գործունեությունը

ոլորտները, իր ծայնը հասցնելով մինչև Արևելյան Շայաստան: Սկսվում է «Արծվիկի» գործունեության նոր շրջանը: Այդ առթիվ գրված խմբագրականը գնահատում է երկշաբաթերթի ծառայությունները ողջ տարոնահայության համար. «Բավական մեծամեծ քարեր գլորեց, փոքրիկ, բայց պաշտոնը, տեղը և պարտը մեծ էին իրեն, մեծ և դժվար...»: Ոգեւորված հակասահմանադրականների դեմ մղված պայքարում հայթանակով դուրս գալուց, Խրիմյանի խումբը վերսկսում է հայրենասիրական, ազգային-լուսավորական աշխատանքները: Մեծ գործ է կատարվում Տարոնի առաջնորդության մեջ գտնվող գյուղերում, ապա նաև վանքերում վարժարաններ բացելու ուղղությամբ: Անենօրյա քրտնաշան աշխատանքի շնորհիվ Տարոնում կազմակերպվում են բազմաթիվ ընկերություններ՝ Մուշեղյան, Խորենյան, Սերսիսյան, Բարեսիրաց, Թարգմանչաց և այլն: Անեն մի ընկերություն իր առաջ դնում է մի նպատակ. «Նպատակնին է ազգի օգտին նատակարարել, որ՝ դպրոցին գիրք և ուրիշ պետքեր գնել, որ՝ աղքատներ հազգնել, անձար պարտապաններ ազատել, որ՝ վանորեից և եկեղեցյաց պայծառության, շինման կամ նեղ վիճակի մը մեծ նպաստել և այլն»<sup>1</sup>: Խրիմյանի խումբը մեծ համառությամբ առաջ է տանում դպրոցաշինության գործը Տարոնում: Բացատրական աշխատանք է տարվում գյուղացիների մեջ, նշվում ուսման և կրթության անհրաժեշտությունը և տնտեսական, և քաղաքական նկատառումներով. քրդի, բարբարուի, թեկուզ և պետական պաշտոնյաների չարաշահումների դեմ բողոքելու, «քռնության և անիրավության» գերի չմնալու, հողը կատարելագործված միջոցներով մշակելու, «պատիկ արտե մը» շատ բերք ստանալու համար: Դրա հետ միասին Խրիմյանն իր գինակիցներով աշխատանք է ծավալում Տարոնում Ազգային սահմանադրությունը գործադրելու ուղղությամբ, որը թույլ կտար գյուղացուն և արհեստավորին մասնակցություն ունենալ ազգային-հասարակական կյանքում: Սակայն նրանց համար ակներև էր, որ Ազգային սահմանադրությունը դեռևս չի գտնվող Արևելյան Շայաստանի բնակչության վիճակը: Քննադատական խոսք է ուղղվում Կ.Պոլսի Ազգային վարչության անդամների, այնտեղ ծվարած փափկակենցաղ հոգևորականության հասցեին, որոնք անտարբեր էին Շայաստանի և հայ-

1. Գրձվիկ Տարոն, 1865, թիվ 38:

րենաբնակ ժողովրդի վիճակի նկատմամբ: Դեպի ժողովուրդը և գավառը գնալու հրավեր կոչերով խրիմյանն իր խճռով հիշեցնում էր ավելի ուշ երևան նկած ռուս նարոդիկներին: «Դեռ չտնասանք Պոլսու ծայնով ազգասեր և ոսկիով փառասեր անձինքներեն մեկ քանիսը այցելության աչքով և ոտքով պտտեին ի Դայաստան, դեռ չունին Դայաստանի վրա ուղիղ գաղափար: Աշխարհ ճը կանցնի, կպոռանք, կպոռանք, բայց մեր ազգասերներ, որ ամարանոցներ կերթան, որ Եվրոպա օդափոխության, որ պաշտոննեն հրաժարական կուտա, որ կերպ-կերպ վայելչասիրությանք կզվարճանա: Մրրազաններ, գավառներ գնացին ծեռաց: Վարչություն, Դայաստանի մեջ մեկ հայուն կյանք չմնաց, չմնաց, չմնաց...»<sup>1</sup>:

Որոշ ժամանակ անց ընդդիմադիրները վերսկսում են իրենց նախկին քայքայիչ աշխատանքը: Այս անգամ նրանք կարողանում են իրագործել իրենց մտադրությունը: Նրանց հաջողվում է զենքի ուժով դրւու հանել խրիմյանին վանքից<sup>2</sup>: Խրիմյանի եղրորորի խորեն խրիմյանը այսպես է նկարագրում իրադրությունը. «Պուլանըխի, Խնուսի և Մշո դաշտի ժողովուրդը հավաքվեցին և բանակ կազմելով ուղեցին խրիմյանին առաջնորդել վանքը: Բայց վանքի մեծ ազարակին մեջ պաշարվեցան զինված քրդերեն և դաս մը հայերեն, որոնք խրկված էին հոգևորականության կողմեն արգիլելու համար Դայրիկին վանք մտնելը»<sup>3</sup>: Դեպքերն այնպիսի ընթացք ստացան, որ փոխադարձ հրածգություն սկսվեց և սպանվողներ եղան: Ավելորդ արյունահեղությունից խուսափելու համար խրիմյանն արգելեց գյուղացիներին շարունակել պայքարը: Ապա թողելով ամեն ինչ, նա մեկնում է Կարին՝ այնտեղից Տարոնի հոգևոր գործերը վարելու, Կ. Պոլսի Կենտրոնական վարչությանը դիմումներ հղելու նպատակով: Դա 1865թ. ամռանն էր: Այս անգամ արդեն մեկընդիշտ փակվում է «Արծվիկ Տարոն» երկշարաբերը, փակվում է Սուլը Կարապետի «Ժառանգավորացը», Տարոնի մյուս վանքերում բացված վարժարանները: Այնքան հաջողությանը սկսված լուսավորական մեծ գործը ներքին և արտաքին թշնամիների հարվածների տակ ընդհատվում է:

Դակառակորդները ցանկանում էին արատավորել խրիմյանի անբիծ անունը: Նա մեղադրվում է Սուլը Կարապետի ունեցվածքի, մա-

1. Արծվիկ Տարոն, 1864, N 28:

2. Խ. Սարամյան, նշված աշխատարյունը, էջ 61:

3. Գ. Ա. Խ. Խրիմյանի Ֆ., 2-րդ բաժին, գ. 14, էջ 54:

նավանդ արծաթեղենի հափշտակության մեջ: Մինչ Խրիմյանը Կարինում էր, նրա օգնականներն ու գինակիցները՝ Երենիա Տևկանցն ու Գարեգին Մրվանձոյանցը մեկնում են Կ. Պոլսի հոգևոր առաջնորդի վրա կատարված ամբաստանությունները հերքելու, նրա անմեղությունը հաստատելու և վերադարձը պահովվելու համար: Կ. Պոլսում նրանք դիմումներ են հղում պատրիարքին, Քաղաքական և Կրոնական ժողովներին, հանդիպումներ ունենում ակնառու և հանրահայտ հասարակական գործիչների հետ: Վանորեից խորհրդին ուղղած իր մանրամասն հաշվետվության մեջ Մրվանձոյանցը գրում էր, թե ինչքան արծաթե սպասքներ ինչ նպատակի համար ուղարկվել են վաճառվելու. դրանք կատարվել են մեծ մասամբ վաճիք նախկին պարտքերը վճարելու համար, պարտքեր, որ վաճիք նիաբանությունը բռնությանը փաթաթել էր նոր վաճառի վգին:

Անգործ չէին նաև հակառակորդները, որոնք իրենց հաղթանակը պայահովվելու համար կեղծ հանրագրեր են պատրիարքում, հեռագրեր հղում Բ. Դուռ և պատրիարքարան, Խրիմյանին մեղադրելով դարձյալ պետական դավաճանության մեջ: Նրանք չեն խորշում իրենց քստմնելի արարքները գունազարդել ժողովրդի շահերը հետապնդողի դիմակով, շարունակելով և խորացնելով իրենց ազգակործան ընթացքը: Աղյայական և հոգևոր վերնախավը ժողովրդի ժողից դուրս եկած վարդապետին վարկաբեկելու համար հեռագրում է. «Մենք՝ Մշո հայ ազգս երեք տարինե հետե կգրենք, թե զիւրիմյան չենք ուզեր մեր մեջ, քանզի տերության անհավատարիմ և ազգին վտանգավոր մարդ է. այսքան վարդապետը վկայեցին, դարձյալ չլսեցիք. Վերջապես մենք մեր ուզածն ըրինք և ինքը մեկնեցավ, դուք կպաշտպանեք զնա, միթե Մշո երկիր և ազգ մը ծախսած եք անոր, չենք ուզեր, ազատեք զնեզ... Վերջին ծայնիկ կրողոքնենք՝ Խրիմյան չենք ուզեր»<sup>1</sup>: Դեռագիրը շարունակում էր սպառնալ, որ եթե պատրիարքարանը պաշտպանի Խրիմյանին, իրենք պատրաստ են Կարինում դատ վարել նրա դեմ՝ Կարին կուսակալի և Բ. Դուռ աջակցությամբ: Կ. Պոլսում գտնվող Խրիմյանի պաշտպաններ Երենիա Տևկանցն ու Գարեգին Մրվանձոյանցը գրում են, որ իրենց թափած ջանքերն անարդյունք են անցնում, որովհետև սահմանադրությանը ընտրված Ազգային վարչությունը ներսից քայլավում էր պահպանողականների հարվածներից:

Ուսուցչին ուղղած նամակում Գարեգին Մրվանձոյանցը իրեն հա-

1. Գ. Ա. Խ. Խրիմյանի ֆ., 2-րդ բաժին, գ. 6:

տուկ պատկերավորությամբ գրում է. «Վարչություն չի կրնար զքեզ պաշտպանել. պատրիարք թեզ բարեկամ չէ, ոստիսմերդ այս երկրի փոքր, բայց հզորագույն մասն են. մի՞թե դատապարտված ես դու այդպիսի դատապարտելի տարրու մը մեջ զոհ լինել, զոհ առանց արդյանց. օդի մեջ շենքի հիմն կղնես, պոլսեցոց վստահելդ է ատիկա. ապառաժներու վրա գուբան կլծիս, Մշո երկիրն է ասիկա»<sup>1</sup>:

Ի վերջո, Խրիմյանն ինքն էլ մեկնում է Կ.Պոլիս, սեփական ուժերով պաշտպանելու իր դատը: Ամիսներ շարունակ նա դիմումներ է հղում զանազան հասարակական գործիչների, Ազգային վարչությանը, պատրիարքին: Վերջինս չէր ցանկանում դրական լուծում տալ Սուրբ Կարապետի վանքի միաբանության և վանահոր վեճին: Խրիմյանը պատրիարքից պահանջում է վանքի բարեկարգություն և հրաժարական է ներկայացնում մինչև իր պահանջների կատարումը: Այդ մասին Երենիա Տևկանցը գորում է, «Դայրիկի գործոց դեռ օրինավոր լուծումն տված չէ: Ինքը բարեկարգություն պահանջելու կերպով հրաժարական տված է: Պատրիարք հրաժարականն ընդունելու թեև պատրաստ է, բայց սաստիկ երկյուղի մեջ պաշարվելով... առ երևոյս կխոստանա բարեկարգության առաջարկելիք խնդիրներն ընդունելու, այսինքն դեպի Գլակա վանքն բարեկարգիչ մը հանելու և ոչ վարդապետսն ի Պոլիս բերելու»<sup>2</sup>: Վերջապես պատրիարքը չի ընդունում Խրիմյանի հրաժարականը և Կարնո հոգենորդ Դարություն Վեհապետյանին իրեն քննիչ ուղարկում է Տարոն՝ Մուշ և Սուրբ Կարապետի վանք: Քննության արդյունքները հօգուտ Խրիմյանի էին: Վեհապետյանը տեղեկագիր է ներկայացնում պատրիարքարանին և Ազգային վարչությանը, հաստատելով Խրիմյանի անմեղությունը, նրա հավատարմությունը սահմանադրական ոգուն, բարձր գնահատելով նրա ջանքերը այդ հոչակավոր վանքը բարեկարգելու ուղղությամբ: Նրա ջանքերը այդ ամենից, պատրիարքարանի հրահանգով խռովարար վարդապետներից 6 հոգի, դիմադիր հոսանքի դեկավարը՝ Արիստակես Ղլճյանը, Խորեն Շահնազարյանը, Եսայի Ղևոնյանը, Դակոր Գրիգորյանը, Գաբրիել Խաչատուրյանը, Կարապետ Եսայանը աքսորվում են Երուսաղեմ: Այդ հանգամանքը ծանր տպավորություն է թողնում երկու խմբակցության ներկայացուցիչների վրա հավասարապես: Աքերկու խմբակցության ներկայացնությունների վրա հավասարապես: Աքերկու խմբակցության ներկայացնությունների վրա հավասարապես:

1. Գ.Ա. Սրբանձայանցի ֆ., 2-րդ բաժին, գ. 6:

2. Մատենադարան, ձեռագիր 3721, էջ 57:

ների հսկողությամբ և ծանր տառապանքների ենթարկվելով, հասնում են Երուսաղեմի Ս.Հակոբյանց վանքը՝ ապաշխարելու: Այդպիսի պատճի ենթարկելով ընդդիմադիրներին, պատրիարքարանն, այնուամենայնիվ, չի ընդունում սկզբունքային որոշում՝ Խրիմյանին իր հոգենոր պաշտոնում վերահաստատելու համար: Դառնացած այդ ամենից, Խրիմյանը հրաժարական է ներկայացնում վանահայրությունից, սակայն քաղաքական ժողովը այն չի ընդունում, այլ գտնում է ինդրի լուծման կոնդրոնիսային ուղի: Սուրբ Կարապետի վանահայրությունը անջատվում է Մշո առաջնորդությունից, Խրիմյանի վրա է մնում Վարագա և Սուրբ Կարապետի վանքերի վանահայրությունը, իսկ Երեմիա Տևկանցը նշանակվում է Մշո հոգենորդ: Սակայն Խրիմյանը դեռևս չի վերադառնում Սուրբ Կարապետի վանք: Վանահայրության փոխանորդ նշանակելով Գաբրեգին Սրվանձտյանցին, Կ.Պոլսում նա ձեռնամուխ է լինում հրատապ խնդիրների լուծման:

Տարունում իրար ետևից կողոպտվում էին հարուստ վանքեր: Կողոպտողները չնայած քուրդ հասարակ պավագաներ էին, սակայն նրանք հովանավորվում էին Կարնո քուրք պաշտոնյաների կողմից: Սուրբ Հովհաննավանքը կողոպտվում է մինչև Վերջին արծաթը, Սլիքանա եկեղեցում կատարվում է սրբավողություն. քուրդ ավատատերը խաչը գցում է շան պարանոցին և շրջեցնում գյուղացիների աչքի առաջ: Իր բողոքագրերն է պատրիարքարանին հղում Սրվանձտյանցը, դատ պահանջում պետական պաշտոնյաների դեմ, իսկ Խրիմյանը Կ.Պոլսում պատրիարքարանի միջոցով աշխատում է փոխել մոլեռանդ թուրք պաշտոնյաներին, մանավանդ Կարնո կուսակալին, քննիչ ուղարկել Տարոն, նրա հետ իրեն ուղեկից դմելով հայ հասարակական գործիչների:

Կ.Պոլսում Խրիմյանը չի դադարում հոգալ Տարոնի, մանավանդ Սրբ.Կարապետ վանքի դպրոցների մասին: Նա հայքայթում է անհրաժեշտ դասագրքեր՝ մայրենի ընթերցարան, թերական, հեգարան և սնողուկներով առաջում ժամանակավորապես Կարինում գտնվող Գ.Սրվանձտյանցին, մեկ առ մեկ թվարկելով, թե ո՞ր գրքից, ինչ քանակությամբ, ո՞ր վարժարանին պետք է հատկացնել: Միևնույն ժամանակ հայությանը խորհում էր փակված պարբերականների՝ «Արծվի» և «Արծվիկի» փոխարեն հրատարակել նոր պարբերական Կարինում կամ Սրբ.Կարապետի վանքում: Այդ նպատակով լուրեր է պահանջում

1. Գ.Ա. Սրբանձայանցի ֆ., 2-րդ բաժին, գ. 371, 373:

Կարինի տաճկական տպարանի վիճակի մասին, որպեսզի իմանա, թե ինարավո՞ր է արդյոք, այն գնել և հայկական տառեր տեղադրել: Խրիմյանը քաջ գիտակցում է այդ գործի ողջ կարևորությունը: Ամենից առաջ նա ջանում է տպարան հաստատել Կարինում, գտնելով, որ այդ գործում «Կարն ժողովրդոց համար բարոյական օգուտներ կան, զոր այժմ կարող չեն բացատրել»<sup>1</sup>:

Տպարանի հաստատությունը անհրաժեշտ էր ոչ միայն պարբերականի հրատարակության համար, այլև դասագրքեր և տետրեր տպելու, որոնք կարելի կլիներ ուղարկել «շրջակա գավառները» և մատչելի գներով մատակարարել դպրոցներին: Բայց իհմնական գործը պետք է լիներ նոր շաբաթաթերթի հրատարակությունը, որի ծրագիրն անգամ հեռակա կարգով կազմում է Խրիմյանը, հուշելով իր շնորհաշատ սանին՝ Գարեգին Մրգանձոյանցին, որ այդ շաբաթաթերթը պետք է կատարի նույն դերը, ինչ Վարագա «Արծիվը»: «Այս շաբաթաթերթը նույն պիտի լինի ինչ որ Վարագայն, միայն թե յուր առանձին քանի մը հրահանգներ ունիմ, հետո կգրեմ», - այսպիսի հրահանգ է տալիս ուսուցիչը աշակերտին, միևնույն ժամանակ մեծ հմտությամբ մատնանշելով շաբաթաթերթի հրատարակության թույլտվությունն ստանալու ուղիները: Նա քաջ գիտակցում է, որ այդ գործին հակառակորդներ կան և հայ մեծահարուստներից և թուրք պաշտոնյաներից: Տեղին էր նրա մտավախությունը: Չնայած ուսուցիչը և աշակերտի՝ Խրիմյանի և Մրգանձոյանցի թափած ջանքերին, նրանց չհաջողվեց ոչ տպարանի հաստատումը, ոչ էլ նոր պարբերականի հրատարակությունը:

\*\*\*

Կ.Պոլսում գտնվող Խրիմյանը ծավալեց եռանդուն գործունեություն պատրիարքարանի օգնությամբ տարոնահայության հարստահարությունները նվազեցնելու, գաղթին և պանդսությանը դիմակայելու ուղղությամբ:

Խրիմյանին առավել մտահոգող հարցը Տարոնի երնիկական-ազգային դիմագիծը պահպանելու խնդիրն էր: Նա տեսնում էր, որ Մշո մեջլիսի թուրք պաշտոնյաները մյութեսարիֆի գլխավորությամբ այնպես են հարստահարում հայ գյուղացուն և արիեստավորին, որ նա այլևս ի վիճակի չէ ապրել իր պատճական հայրենիքում, անհամբեր

1. Գլմթ. Գ. Մրգանձայանցի ք., 2-րդ բաժին, գ. 372:

սպասում է գարնանամուտին, որ խմբեր կազմած դիմի գաղթի. «Դասավ այն վերջին կետ, որ պիտի թողու ժողովուրդ յուր բնակասնունդ հայրենիքը և տարագիր երթա օտար աշխարհներ, ուր դյուր կան հանգիստ ստանալու կիրուսա»:

Տարոնահայության տարբեր գյուղերի ներկայացուցիչներ արդեն եղել էին Անդրկովկասուն, ներկայացել Քաղաքացիական մասի կառավարչական և տեղ խնդրել ապրելու համար: «Ուսիի մասին մեջը (իբրև գաղտնիք և խորհուրդ կիայտնին այս) գտնվող ողջամիտ և ազգաեր հայերը շատ կերպով խոսեցան և համոզեցին զմեզ, որ այդ վնասակար գաղթականությանց առաջքն առնվի: Բնավ չի կարծեք, որ վարդապետական քարոզով կամ համոզական ձևերով Մշո հուսահատ ժողովուրդը իր մտադրութենեն ետ պիտի մնա: Այս գաղթականութենեն ետ մնալու միջոցը միմիայն Մշո երկրեն հարստահարությունները ջնջելն է և այս միջոցն ևս յայնժամ կիաջողի, երբ հետզինտ վճռակի հրամանագրերը որևէ կիսական տեղվույս կուսակալին վրա»<sup>1</sup>: Վերոհիշյալ տողերը վերցված են Կ.Պոլսի պատրիարք Պողոս Թագթագյանին ուղղված Խրիմյանի նամակից, որով վերջինս ստիպում էր պատրիարքին հարաբերության մեջ մտնել Բ.Դուան հետ, շահագրգռել թուրքական արքունիքի ներքին գործոց նախարարին, որպեսզի նա իր վճռական խոսքն ասի տեղի թուրք կառավարական պաշտոնյաներին, որոնք բարենորդումների անվան տակ մի չարագործ պաշտոնյայի փոխարինում են առավել հնուտ մի պազակով: Կուսակալը՝ Բ.Դուան բարձր ներկայացուցիչը, մեծ խոստումներ է տալիս Խրիմյանին՝ «Ես ամեն հարստահարիչի ծեռքեր պիտի կտրեմ»: Կանահայրը, որ այդպիսի շռայլ խոստումներ շատ էր լսել իր բազմափորձ կյանքի ընթացքին, մտորում է և իր կասկածներն է կիսում պատրիարքի հետ. «Այս, Մուշ շինել, քանդված աշխարի մը վերանորոգել՝ դյուրին չէ, մանավանդ, երբ նույնիսկ քանդողներուն ծեռքով շինել կուզե Բ. կուսակալն, այսինքն բնիկ կարնեցի կաշառակեր Վահիք պեյի ծեռքով, զոր... նյութեսարիֆ ընել կուզե Մշո նահանգին»<sup>2</sup>:

Կ.Պոլսից Կարին գալով, այնտեղ մեծ աշխատանքներ է տանում Խրիմյանը, ուսումնասիրում թուրք պաշտոնյաների գործունեությունը և իր դիտարկումների արդյունքները տեղեկացնում պատրիարքին, որ Մշո հարստահարիչները ոչ միայն և ոչ այնքան բացահայտ գողերն

1. Ամենայն Հայոց Խայրիկ, էջ 152:

2. Նույն տեղում, էջ 154-155:

ու ավագակներն են, այլ՝ նրանց գործողության մեջ դնողները, նրանց հիվանավորները. «Մշո գալտնի ավերիչները չեն Մշո մեջ կրնակին, միայն, այլ ավելի ևս Կարճո մեջ»<sup>1</sup>: Թուրքական կառավարության խոստացած բարենորոգություններն իրականացնող հանձնաժողովի անդամներն ընտրվել են «մոլեռանդ տաճիկներ», գողերին գողակիցներ: Կասկածելի անձինք ամիսներով պատ շրջում են, իսկ Կ.Պոլսու հայոց պատրիարք Թագթագյանը իր հղած տեղեկագրերը և դիմումները անհետևանք թողնելու և բազմաթիվ այլ պատճառներով հրաժարական է ներկայացնում Բ.Դուանը: Օգտվելով հայոց պատրիարքարանի անիշխանական վիճակից, թուրք պաշտոնյաները ոչ միայն չեն կատարում խոստացված բարենորոգությունները, այլև առավել սաստկացնում են հարստահարությունները: Անհանգիստ և անդադրում Խրիմյանն այժմ իր տեղեկագիր դիմումները ուղղում է Կ.Պոլսի պատրիարքական տեղապահ Արիստօնակես Եպիսկոպոս Ռափայելյանին և Խառն Ժողովի անդամներին, նրանց դրդելով Բ.Դուանը ուղղել նորանոր դիմումներ՝ դարձյալ գաղթականության դեմն առնելու հանար: Նույն հարցի կարգավորման նպատակով Խրիմյանն անեն անգամ գտնում է նոր խոսք, նոր ծև և պահանջում «կայսերական բարեխնամ կառավարությունից», որ վերջինս «բառնա այս ամեն հարստահարությանց առիթները զայս աշխարհեն և չքողու այս աշխատասեր, գործունյա, հավատարիմ հպատակները, որ երթան օտար տերությանց ծառայեն»<sup>2</sup>:

1860-ականներին Խրիմյանի ծավալած գործունեությունն ու մղած պայքարը մասն էր այն պայքարի, որ սկիզբ էր առել դեռևս 50-ականներին և շարունակվել մյուս տասնամյակում և որ ժամանակակիցներին հայտնի դարձավ սահմանադրական շարժում անունով: Այդ կարգավորման մասնակից էին նաև հոգևորականները, նրանք ևս բաժնված էին երկու բանակի՝ սահմանադրության կողմնակիցներ և թշնամիներ, իրենց արտահայտությամբ՝ սահմանադրականներ և հակասահմանադրականներ: «Մեծամասնություն էին Եկեղեցականաց, ազնվականաց և հարստաց ընդդեմ լինելով զսահմանադրության, կոչեցան խավարյալք, իսկ նոր Եկեղեցականք, գիտնականք և վարժապետք, ազատ սկզբանց և սահմանադրության հարյալք, կոչեցան լուսավորյալք»<sup>3</sup>: Խրիմյանը, ինչպես Պոլսում, այնպես էլ գավառում

## Մերժիք ԽՐԻՄՅԱՆ. Հասարակական-քաղաքական գործունեությունը

նոր սկզբունքների, ժողովրդավարության կողմնակիցն ու արտահայտիչը, սահմանադրականների կամ լուսավորյալների առաջնորդն էր և գաղափարախոսը: Կ.Պոլսի ազդեցիկ հոգևորականների մի ստվար մասը, նրանց մեջ նաև հետագայում Ամենայն հայոց կաթողիկոս ընտրված Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցին, մի խուլ և գաղտնի հակառակություն ունեին Խրիմյանի և նոր սկզբունքների հետևող հոգևորականների դեմ:

Նույն հակասությունն էր նաև Սք.Կարապետի միաբանության անդամների և վաճառիր միջև: Աքսորված վարդապետները և նրանց կողմնակիցներն անընդհատ դիմումներ էին հղում Ազգային ժողովի երեսփոխաններին, առաջ քաշելով մի քանի պատճառաբանություններ, նրանք և «զղջում» էին, և ներում հայցում, և մեղադրում հակառակ խճակցությանը՝ անհաշտ վերաբերմունքին տոն տալու հանար: Այդ բոլորի հետևող թաքնված էր նի նպատակ՝ ազատվել աքսորից: Ի վերջո, նրանք վերադարձան Կ.Պոլսիս, հավատարմության երդում տվին Կենտրոնական վարչությանը: Խրիմյանը, որ այդ ժամանակ Կ.Պոլսում էր, երկրորդ անգամ ներում է նրանց և միասին վերադառնում են. վարդապետները՝ Սուլը Կարապետի վաճառք, իսկ Խրիմյանը՝ Կարին: Այդտեղից նա ակնդետ հետևում էր Տարոնում ծավալված իրադարձություններին: Նրա աչքից չի վրիպում Մշո պատրիարքական փոխանորդ Միհիթար վարդապետի հակաժողովրդական ընթացքը:

Խրիմյանի վաճքից հեռանալուց հետո ժողովուրդը սեփական փորձով հանողվեց Խրիմյանի և նոր փոխանորդի՝ Միհիթար վարդապետի միջև եղած հսկա տարբերության մեջ: Ժողովուրդը բողոքի իր ծայնն է բարձրացնում և դիմումներ հղում: Բողոքներից մեկի մեջ տարոնահայությունն արտահայտում է իր անթաքույց բացասական վերաբերմունքը Միհիթար վարդապետի նկատմամբ. «Որ պիտի առաջնորդե, ինքն ծամփա չգիտե, որ պիտի ուղղե, ինքն անուղիղ է, որ պիտի ուսուցանե, ինքն տգետ է, որ պիտի լուսավորե, ինքն խավար է»:

Խրիմյանը ժողովրդի ծայնը լսելի է դարձնում Կ.Պոլսում, պահանջելով Միհիթարին հեռացնել այդ կարևոր հոգևորական պաշտոնից և նրա փոխարեն Սուլ ուղարկել Գրիգորիս Աղվանյանին: Վերջինս Արծիվյանների խմբից էր և վաճահայրը ենթադրում էր, որ նրա գործելակերպը պետք է համընկնի ժողովրդի շահերին:

1. Ամենայն Հայոց Խայրիկ, էջ 157:

2. Նույն աւելաց:

3. Մասնաւարամ, ձևագիր 4177, էջ 40:

## ԵՄԱ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

1868-ի մայիսին Կարինից և Պոլսից հետո, մի քանի ամսով Մկրտիչ Վարդապետը վերադառնում է հայրենի բույնը՝ Կարագա վանքը:

Երկար տարիներ նա բացակայել էր իր արծվաբույնից. ժամանակներ էին անցել, շատ ջրեր էին հոսել: Նրա բացակայությամբ դադարել էր հրատարակվել «Արծուի Վասպուրականին», փակվել էր «Ժառանգավորացը»: Պոլսում նրան տագնապալի լուրեր էին հասել Վարագա միաբանության երկապառակությունների, ներքին և արտաքին թշնամների գործունեության մասին:

Վարագում Խրիմյանն սկսում է իրագործել բարենորոգումների: Նոր ծրագիր: Վասպուրականի վաճքերը կառավարելու համար ստեղծվում է Վանորեից խորհուրդ, որի համար Խրիմյանն ավետիս է տալիս իր մտերիմներին: «Վանորեից խորհուրդը անցած օրը կազմվեցավ խառն ժողովով. ութ անդամ ընտրվեցան՝ չորս վարդապետ, չորս աշխարհական: Վասպուրականի ամեն մի մասնավոր վաճքերը այս խորհուրդը պիտի կառավարե և բարեկացն»<sup>1</sup>: Այդ խորհուրդի կանոնադրությունը կազմում է Խրիմյանը:

Վարագա վաճահայրը նոր շինարարություններ է սկսում վաճքի համալիրում: Վաճքապատկան հողերը մշակելու համար Կարապետ Կակազյանը նշանակվում է «Երկրագործության տեսուչ լիազոր իշխանությամբ»: Վաճահայրը մտածում էր, որ դա կտար ավելի շոշափելի արդյունքներ, հնարավորություն տալով վաճականներին գրադարձել միայն հոգեռ-լուսավորական գործունեությամբ:

Վարագից Խրիմյանը ուշի-ուշով հետևում էր Սուչում և Սուլը Կարապետի վաճքում կատարվող իրադարձություններին. Իրահանգներ տալիս՝ բացել նոր Վարժարաններ, Սուլը Կարապետի վաճքի Վարժարանը համալրել ընդունակ և ուշիմ աշակերտներով, որոնց պետք է ընտրեին շրջակա գյուղերի Վարժարաններից: Խրիմյանը խորհուրդ էր տալիս ընտրությունը կատարել նախնական քննություն անցկացնելու միջոցով<sup>2</sup>:

\* \* \*

Իր երկարատև կյանքի ընթացքում հոգեռը (կրոնական) թեմաներով քազմաքիվ հոդվածներ է գրել Խրիմյանը: Բայց աստվածաշնչյան թեմաներին նա անդադառնում է երկու անգամ: Դա ուներ իր պատ-

## Մկրտիչ ԽՐԻՄՅԱՆ

ճառները: Կարգակից հոգեռականների դեմ մղած պայքարի յուրօրինակ անդրադարձ էին այդ աշխատությունները, 1866-ին՝ «Մարգարիտ արքայության երկնից» և 1876-ին՝ «Խաչի ճառ»: Դրանցում հեղինակը ցույց է տալիս իր ընդդիմադիր հոգեռականներին, թե ինչպես են նրանք խոտորել ուղիղ ճանապարհից, ինչպիսին է պարտավոր լինել մտատիպար հոգեռը առաջնորդը: «Մարգարիտը» Մատթեոսի Ավետարանի խրիմյանական մեկնությունն է: Մեկնության մեջ արտացոլվում է Խրիմյան մարդու, հոգեռականի, հասարակական գործչի ժողովրդասեր ու մարդասեր ոգին, ժողովրդավարական գաղափարախոսությունը: Խրիմյանի մեկնության առարկան է դառնում ոչ թե Մատթեոսի ողջ ավետարանը, այլ նրա երեք՝ V, VI, VII գլուխները: Ինչու՝ ոչ ամբողջությունը: Ճեղինակն այսպես է մեկնաբանում այդ պարագան: «Այն նպատակով որոշեցի միայն այս երեք գլուխս, վասնզի սոցա մեջ կը պարունակին գրեթե մեծ մասմաք Ավետարանի ծշմարտության բարոյական և փրկավետ օրենքներն, ուր Մովսիսին օրինաց թերություններն Շխուս կը լու գերահրաշ կատարելությամբ»<sup>3</sup>:

Այս գործը Խրիմյանը համարում է «Շխուսի Վարդապետության համառոտ դասեր», որը անհրաժեշտ է եկեղեցու որդիների և դպրոցական մանկանց հոգեռը կրթության համար: Եվ քանի որ նրա ընթերցողները պետք է լինեն մանուկները և հասարակ ժողովուրդը, իր մեկնությունները Խրիմյանը տալիս է պարզ, հստակ, դյուրըմբռնելի պատմելածով: Աշխատության «Նախաշավիդ» բաժնում հեղինակը գնահատում է Ավետարանի կատարած ները մարդկային հասարակության պատմության մեջ. «Ինչ որ Ավետարան գործեց, կարող չեղան գործել իին ու արդի աշխարհի մեջ ոչ իշխանությանց գենք, ոչ իմաստափրաց գյուտք: ...Չիկա բնավ գիրք մի կամ մարդկային հանճար և իմաստություն, որ կարողանա մարդոց ստահակ հոգին ուղեւ, դաստիարակել և բարվոքել, միշտ ի չարն արձանացածն՝ ի բարին վերածել, բայց միայն Ավետարան»<sup>4</sup>: Մեր նախնիները երկյուղածությամբ պաշտել են Ավետարանը. բազմաթիվ գիտնականներ և հոգեռականներ տվել են Ավետարանի իրենց մեկնությունները: Դրա ապացույցներն են Շայաստանի վաճքներում, գյուղերում ու քաղաքներում տարածված «բյուրավոր գրչագիր Ավետարաններ և նոցա մեկնությունը մագաղաթներու վրա վայելու ծաղկենկարներով գրված»: Ժողովրդի

1. Մարգարիտ արքայության երկնից, 1894 (Գ. ապագրություն), Էջմիածին, էջ 2:

2. Նույն տեղում, էջ 2:

1. ԳԱԹ, Գ. Սրբանձայանցի ֆ., 2-րդ բաժին, գ. 388:

2. Նույն տեղում, էջ 390:

մեջ այնքան մեծ է եղել Ավետարանի հեղինակությունը, որ համարվել է նույնիսկ բուժիչ գիրք: Ըստ Խրիմյանի Ավետարանը բուժում է ոչ միայն և ոչ այնքան «մարմնո ախտերը, այլ առավել հոգվույն ախտերը կապաքինե»:

Աշխատության սկզբում Խրիմյանը խիստ հաճառու ներկայացնում է Մատքեռոսի ավետարանի երեք գլուխների սեփական շարադրանքը: Ապա հեղինակը մի բաժին է նվիրում Մովսեսի՝ այսինքն հրեական կրոնի և Յիսուսի վարդապետության համեմատությանը: Դրա մեջ դրսեռորդում է Խրիմյանի մեծ մարդասիրությունը, ներողանտությունը, լուսավոր հայացքը կյանքի նկատմամբ: Նա մերժում է Մովսեսի դաժանությունը, աներկբայրորեն ընդունում Քրիստոսի մարդասիրությունը. «Մովսեսին հրովարտակ պատուիասի արյունով դրոշմված ողջ Եգիպտոսի անդրանիկներն կցարդեն: Յիսուսի ավետարանին հրովարտակ հանուր աշխարհին ներողություն կրերե: Ի՞նչ համեմատություն կա. մեկին մեջ մահ, մյուսին մեջ կյանք»<sup>1</sup>: Եթե Մովսեսը Եգիպտացիներին կաշկանդեց խավար գիշերի մեջ, Յիսուսը «ծշմարիտ լուսով» լուսավորեց ողջ աշխարհը: Մովսեսը միայն Խրայելի ժողովրդի ազատության համար էր ջանում, Յիսուսը՝ առանց խտրության բոլոր ժողովուրդների համար էր մտահոգվում. «Մովսեսը ազգասեր է, Յիսուս մարդասեր. Մովսես մարդկային ընդարձակ սիրո պայման կամփոփէ միայն հրեական ազգին վրա, ուստի կպատվիրէ օտարազգի թշնամին մահու չափ ատել և ընտանի ազգակից սիրել: Այսպես չէ Յիսուսին պատվեր, այլ բարձր և գերագույն: Յիսուս մարդկային ընկերության սիրուն չափ չի դներ այս կամ այն ազգին վրա ամփոփելով: ...Կիրամայե առանց խտրության սիրել այն ամենայն, որ մարդ է և ընկեր»<sup>2</sup>: Յիսուսի այս պատվիրանը Խրիմյանը համարում է «Ավետարանի ուսման դասերեն ամենեն բարձրագույնը»:

Քայլ առ քայլ համեմատության մեջ է դրվում Մովսեսի և Յիսուսի ամեն արարչագործություն, երկու անձնավորությունների բնավորության գծեր և առաջնությունը տրվում է Յիսուսին: Կարելի է վիճել Խրիմյանի համեմատության տարբեր դրույթների հետ. համաձայնել կամ չհամաձայնել, եթե շարժվում ենք այսօրվա չափանիշներով, մանավանդ չհամաձայնվել Յիսուսի, նաև Խրիմյանի «Մի կալ ընդդեմ չարին» տեսակետին, դրան հակադրելով Մովսեսի «ակն ընդ ական,

ատամն ընդ ատաման» կարգախոսը, սակայն չի կարելի չընդունել, որ համեմատությունների բոլոր ոլորտներում Խրիմյանը ելնում է բարոյականության բարձր չափանիշներից, դրանք ավանդելով հայ հավատացյալներին: Խրիմյանին մտահոգողը մարդկային առողջ հասարակությունն է, առողջ՝ թե հոգով և թե մարմնով: Այդ պատճառով էլ մեծ մարդասերը չի ընդունում Մովսեսի հավատանքը. «Աչքին տեղ աչք, ատամին տեղ ատամ միշտ վճարելով՝ մարդկային ընկերություն կույր և ատամնաթափ կկացուցաներ: Օրինաց խստություն այսպես մարմին պատժելով՝ հետզիետե ինդանդամ կըներ ողջ մարդիկ. պատուիասի երկյուղ թեպետ և չարություն կարծել կուզեր մարդկային ընկերություննե, այլ վրեժխնդրության հոգին խապահ կարող չէր հանել մարդոց ոխակալ սրտեն»<sup>1</sup>: Այս մտքերը թե ուղիղ, և թե այլաբանական ընդունելու դեպքում էլ Խրիմյանը ելնում էր մարդկային բարձր չափանիշներից:

Ուշադրություն են գրավում Մատքեռոսի Ավետարանի V, VI, VII գլուխների վերաբերյալ Խրիմյանի «Տեսությունները»: V գլխի տեսությունը հեղինակն անվանում է դաս. դաս Ա, դաս Բ, այդպես հերթականությամբ, ժողովրդին հասկանալի, մատչելի լեզվով իր բացատրություններն է տալիս ավետարանական պատգամներին՝ «Երանի աղքատաց հոգով», «Երանի սգավորաց», «Երանի հեզլոց», «Երանի ողորմածոց» և այլն, մեկ առ մեկ առանձին վերնագրերով իր դասերն է տալիս հեղինակը, մինչև դաս Ժ (10): Ապա Խրիմյանն իր խոսքն ուղղում է Եկեղեցու սպասավորներին, դարձյալ ելենով պատարանական կարգախոսներից՝ դուք եք աղ երկրի, դուք եք լույս աշխարհի: «Ողբալ պետք է այստեղ, ովք պաշտոնակից եղբարք. Քրիստոս զմեզ լույս կանվանե, մեք տգիտությամբ խավար դարձանք, իբրև լույս և ճրագ՝ Տեր որոշեց զմեզ ուրիշներ լուսավորելու, մեք մեր աղոտ լույսով նույնիսկ մեր անծն լուսավորելու բավական չեմք: Քրիստոս զմեզ աղ կկոչե, մեք մեր ընդարձույս և եկամուտ անհամությամբ անպիտան համարվեցանք, չունիմք իրավունք բողոքել, թե ժողովուրդն հանդիպությամբ ուժից կոխան առնելով կանապատվե զմեզ իրապարակներու մեջ, այլ պետք է ուշադրելով մտաբերենք և մեզեն ինքնադատ լինելով վճռենք այս դատաստան, թե մեր անպատվություն մեր տգիտության երեսեն է»<sup>2</sup>: Վեցերորդ գլխի մեկնությունները Ավետարա-

1. Մայզաքիլա..., էջ 67:

2. Նույն տեղում, էջ 48-49:

## ԵՄՅԱ ԿՈՍՏԱՆԴՅԱՎՆ

նական պատվիրաններն են, որ Դիսուսը լրացնում է Մովսեսի օրենքի թերությունները: Նա գգուշացնում է բոլոր հավատացյալներին՝ չխառնվել փարիսեցիներին և կեղծավորներին, սրբությանը կատարել եկեղեցու ծեսերը:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Տերունական աղոթքի խրիմյանական մեկնությունը: Զարմանալ և հիանալ կարելի է հեղինակի հնարամտության վրա, թե ինչպես այդ աղոթքի ամեն մի միտքը առանձին-առանձին դառնում է խոհերի, մտորումների և յուրահատուկ մեկնաբանության առարկա, խորագիր ամեն մի փոքրիկ գլխի համար՝ «Դայր մեր, որ յերկինս ես», «Զիաց մեր հանապազօրդ տուր մեզ այսօր», և այդպես մինչև վերջին միտքը:

Յոթերորդ գլխի մեկնությունները, առավել քան որևէ մեկը, բացահայտում է խրիմյանի ժողովրդասիրությունը և դեմոկրատական մտածելակերպը: Այն ունի ընդգծված կողմնորոշում՝ հաճակրանք դեպի սոցիալապես ցածր աստիճանի վրա գտնվող խավերը, բացասական վերաբերնունք՝ բռնակալների և հարուստների նկատմամբ: Դասարակական կյանքում մարդկային հարաբերությունների հիմքը համարելով պարտականության և իրավունքի փոխադարձ պայմանավորվածությունը, խրիմյանը «աշխարհիս բռնակալաց և զորավորաց» օրենքն է համարում անփոխադարձ իրավունքը, որը պարտը չի ճանաչում, որ «միշտ առնել գիտե առանց տալու»: Այդ անփոխադարձությունը «աշխարհիս բռնակալաց և զորավարաց իրավունքն է», որը խախտում է Աստծո պատվիրանները և նույնիսկ բնության օրենքը: Նրանց նշանաբանն է՝ «Եվ օրենադրություն բռնություն մեր եղիցի»: Դրանց ելնելով նրանք անխնա շահագործում են ու հարստահարում աղքատներին և անզորներին: Խրիմյանը բռնական է համարում, երբ կենդանական աշխարհում հզորների կերակուր են դառնում թույլերն ու անկարողները. այսպես՝ ճնճղուկը և մյուս փոքրիկ թռչունները բազեի դրսն են, ինչպես ծովի փոքրիկ ծկները՝ «դլվին ծկան»: Նա տարբերակում է, որ դա պայքար է տարբեր տեսակների միջև: Սակայն նրա ժողովրդասեր ոգին ընդգում է, երբ բնության թագն ու պսակը՝ մարդը, գրկում և հարստահարում, գիշատում է իր նմանին՝ մի այլ մարդու: Ըստ խրիմյանի Աստված «մարդկային ընկերության համար հավասարություն է գերե»: Դավասարության կարգախոսին խրիմյանը տալիս է Աստվածային պատվիրանի տեսք՝ բռնակալներին դիմակայելու համար: «Արդարություն բռնավ իր ընկերին

## Մկրտիչ ԽՐԻՄՅԱՎՆ. Հասարակական-քաղաքական գործությունը

վնաս չի կամիր, արդարություն՝ հացն իր ճակտին քրտինքով կուտե, արդարություն ինչ որ պարտը ունի, կվճարե ընկերին, արդարություն յուր և ընկերին իրավունք հավասար կկշռե, անիրավ գրկանաց կողմն երբեք չի հականիտեր: Մեկ խոսքով՝ արդարություն պարտուց և իրավանց դատավորն է, ամբարիշտ անիրավներուն պես ոչ բյուր խորհուրդների կընդունի, ոչ ժանտ արուներու վրա կնստի, յուր կամք՝ միշտ Աստուծո օրենքն է, յուր վճիռ՝ յուր խղճին ծայնն է»<sup>1</sup>: Նա հայտարարում է, որ Աստվածային այդ պատվիրանի իրագործումը մարդկային հասարակությունը կազատի բազմաթիվ աղետներից և աշխարհիս երեսից կվերացնի «գրկանք և թշվառություն»:

Այդ ամենը համարելով՝ «Դիսուսի քարոզած բնական օրենքի գորությունը», խրիմյանը իր ողջ մեկնությունն ու բացատրությունը գնահատում է իրեւ «փոքրիկ նշանախնեց»: Իրեւ աստվածային պատգամ ներկայացրած սոցիալական հավասարության իր պահանջից հետո խրիմյանն անցնում է Մատթեոս Ավետարանիչի մյուս պատվիրանների մանրամասն բացատրությանն ու մեկնությանը: Եթե չես ուզում դատվել, մի դատիր, մի տես եղրորդ աչքի շյուղը՝ անտեսելով քո աչքի գերանը, սրբությունը մի տվեք շներին, մի արեք մարդկանց այն, ինչ չէիք կամենա ծեզ անեին և դրանց նման մարդկային բարոյականության տարբեր պահանջներ: Նշանարիտ քրիստոնյա համարելով Դիսուսի այդ պատվիրանները կատարողներին, խրիմյանը նշում է, որ Դիսուսի անցած փշոտ ու տատակոտ ճանապարհը արդարների համար է և ցավի սիրտ արձանագրում է, որ նրանց թիվն ավելի փոքր է, քան օրինախախտների, փարիսեցիների, խարերաների թիվը. «Ահա բանակներով կղիմեն փառասեր բռնակալներ, աղքատին վրա տիրապետող ամբարիշտ իշխաններ, տկարին և անզորին իրավունք հափշտակող հարստահարիչ գրկողներ, բազմախորտիկ սեղանին վրա միշտ հղվացող՝ կարու Ղազարոսին փշրանք զլացող քարասիրտ մեծատուններ, ոսկին իրեւ Աստված պաշտող աշխարհիս ընչաքաղ ագահներ»<sup>2</sup>: Դրանց բոլորին համարելով աշխարհիս ընչաքաղ ագահներ, խրիմյանը գտնում է, որ նրանք քրիստոնյա չեն, այլ դժոխքին արժանի արարածներ: Փաստորեն, Ավետարանի և Աստվածային պատգամների քողի տակ խրիմյանը քննարկում է հավերժ կենդանի, անժամանցելի, վեհ մարդկային գա-

1. Մարգարիտա..., էջ 125-126:

2. Կույց աելուած, էջ 130:

դափարներ, որոնք իրենց թարմությունը չեն կորցրել մինչև օրս:

Փոքրիկ այդ գրքույզը վայելել է ընթերցող ժողովրդի ուշադրությունն ու համակրանքը, առաջին հրատարակությունից՝ 1866-ից մինչև 1894-ը ունեցել է չորս հրատարակություն, կարողացել է ճեղքել յոթ տասնյակի երկարե վարագույրը և հասել է մեզ՝ այսօրվա ընթերցողին, որպեսզի կատարի իր ծշմարիտ առաքելությունը ոգու սովի մեր օրերում, մարդկանց դաստիարակի և ներշնչի վսեմ մարդկային իդեալներ... Այդ գրքույզի հետ է կապված մի սրամիտ պատմություն:

Առաջին հրատարակությունից երկու տարի անց, երբ 1868-ին Խրիմյանը Եջմիածնում եպիսկոպոս պետք է ծեռնադրվեր ժամանակի կաթողիկոս Գևորգ Դ-ի կողմից, սովորության համաձայն նա պետք է թանկագին նվերներ մատուցեր միաբանության անդամներին: Այդ մասին իրեն հարցնողներին նա պատասխանում է, որ միաբանության յուրաքանչյուր անդամի պետք է նվիրի մի շար մարգարիտ: Որքան մեծ է լինում նրանց զարմանքն ու զայրույթը, ոմանց էլ զվարթ ծիծաղը, երբ նորընծա եպիսկոպոսը նրանց նվիրում է այս փոքրիկ գրքույզից մի-մի օրինակ, ի վայելուն արժանավորներին և ի դաս ընչառաղցներին:

\* \* \*

1868-ի սեպտեմբերին Խրիմյանը Երեմիա Տևկանցի հետ մեկնում է Եջմիածին եպիսկոպոս ծեռնադրվելու: Դա նրա երրորդ ճանապարհորդությունն էր Արևելյան Հայաստան: Գր. Աղվանյանին դրած իր նամակում նա հաղորդում է, որ իր ցանկությունը ոչ այնքան եպիսկոպոս ծեռնադրվելն է, որքան կրկին անգամ ճանապարհորդել Արևելյան Հայաստանում, ծանոթանալ արևելահայերի հասարակական կյանքին, սերտ կապեր հաստատել նրանց հետ, մտքեր փոխանակել իրենց հուզող խնդիրների շուրջը<sup>1</sup>: Սակայն Ամենայն հայոց կարողիկոսը ի չիք է դարձնում Խրիմյանի այդ ձգտումը: Այն բանից հետո, երբ Խրիմյանը եպիսկոպոս է ծեռնադրվում «ի վերա տանն Տարոն», իսկ Տևկանցը՝ Խարբերդի վիճակի վրա, Գևորգ Դ-ն ստիպում է նորընծա եպիսկոպոսներին անմիջապես ետ վերադառնալ իրենց թեմերը, նրանց զրկելով Եջմիածնից բացի այլ վայրերում լինելու հնարավորությունից: Իր այդ քայլը կաթողիկոսը պատճառաբանում է,

## Մկրտիչ ԽՐԻՄՅԱՆ

որ ժողովրդի վիճակը առանց հոգեկոր առաջնորդի առավել ծանր կլինի: Նրանք միասին վերադառնում են Կարին:

Արդեն ծմեռ էր, Տարոն ուղևորվելը այն ժամանակվա երթևեկության պայմաններում համարյա անհնարին էր: Բայց Կարինում Խրիմյանը գուր ժամանակ չի վատնում. նա սպասում է երգորսի նոր նահանգապետի գալստյան, որպեսզի տեսակցություն ունենա նրա հետ, ստիպի որոշ քայլեր ծեռնարկել տարոնահայության հարստահրությունները մեղմացնելու ուղղությամբ: Այդ նպատակով նա հրահանգում է Տարոնում գտնվող Գարեգին Սրբանձտյանցին շուտափույթ Կարին ուղարկել «Մշո աշխարհին վերաբերյալ ամեն թուղթերը, խնդիրները, մազպարանները, ինչ-որ կա», նոր նահանգապետին ներկայացնելու համար, «պահանջելով դարման և դատաստան»<sup>2</sup>: Դրա նաև նա Երեմիա Տևկանցը արձանագրում է իր «Տոհմային հիշատակարաններում»: «Ուստի գրեցաք Գարեգին վարդապետի գրել ընդարձակ տեղեկագիր հարստահրության և առաքել առ մեզ, զի մատուցուք առ կուսակալն և խնդիրեցաք ի ննանե դարման աղետաբեր չարյաց»<sup>3</sup>: Գարեգին Սրբանձտյանցը մեծ բարեխղճությամբ կատարում է իրեն տրված հանձնարարությունը. գրում է մի ստվարծապալ տեղեկագիր, ուղարկում ուսուցչին և իր կողմից խնդրում այն հրատարակել տալ Կ.Պոլսի «Մանզումեի Եֆիար» հայատառ թուղթերեն լրագրում: Երեմիա Տևկանցը վկայում է, «Իբրև ի բաց գտեղեկագիրն Գարեգնի Յայրիկն և ընթերցավ, անպատշաճ դատեցավ առաքել առ խճբագիրն, թե հույժ անաշառ և բացահայտ գրյալ է զամենայն ինչ, գուցե կառավարությունը սրտմտեսի ընդ այս»<sup>4</sup>:

«Մանզումեն» հրատարակում է Սրբանձտյանցի տեղեկագիրը, որը լրույն է տեսնում ծավալուն հոդվածաշարով «Մշեցվոց վրա ընդհանուր տեսություն մը»: Խորագրով<sup>5</sup>:

Հոդվածաշարը մեծ ազդեցություն գործեց պոլսահայության և օսմանյան կառավարող շրջաններում<sup>6</sup>: Վեզիր Ալի փաշան թարգմանել է տալիս հոդվածը թուղթերեն, առաքում այն Կարնո կուսակալին, որպեսզի վերջինս ծանոթանալով հոդվածի բովանդակությանը, տեղեկություն հաղորդի նրա հավաստիության մասին: Կուսակալն ստիպ-

1. Գ.Ա.Թ, Գ. Սրբանձտյանի ֆ., 2-րդ բաժին, գ.391:

2. Մատենադարան, ձեռագիր 4179, էջ 51:

3. Նույն տեղում:

4. Մանզումեի Եֆիար, 1869, թիվ 892, 895, 898, 902, 918, 921, 923:

5. Է. Կոստանդնուպոլիս, Գարեգին Սրբանձտյանց, էջ 98:

ված պատասխանում է, որ հոդվածաշարի բովանդակությունը համապատասխանում է իրականությանը, իսկ հարստահարություններից ցուցակը նույնիսկ թերի է:

Պատասխանն ստանալուց անմիջապես հետո մեծ վեզիր Ալի փաշան իրաման է հղում Կարնո կուսակալ Խսմայիլ փաշային՝ անհապաղ գտնել ու բանտարկել Յովհաննավանքի կողոպտիչներին, անձանք այցելել Մշո մյութեսարիֆություն, կալանավորել Յասնանցի և Զիադանցի բոռուններին և մյուս ոճրագործներին։ Իբրև քննիչ Մուշ են մեկնում Օսման պեյն ու Կ.Պոլսի Ազգային ժողովի անդամ Խորածանյան Դանիել Էֆենդին։ Սակայն թուրք քննիչը, քողարկելով Մշո մեջիսի անդամների չարաշահումները, բոլոր հարստահարությունները բարդում է քրդերի վրա։ Այդ տեղեկատվության հիման վրա աքսոր են ուղարկվում 70 քուրդ ազդեցիկ աղաներ։ Ալի փաշայի նման գործելակերպ հետապնդում էր Եվրոպական դեսպանների աչքին արդարության ջատագով երևալու նպատակ։ Փաստորեն Խրիմյանը և իր սանը կարողանում են ոչ միայն Կ.Պոլսի Ազգային ժողովի, այլև թուրքական արքունիքի բարձրաստիճան պաշտոնյաների ուշադրությունը իրավիրել Տարոնի վրա, ստիպել նրանց՝ ծեռնարկել բարենորոգչական ինչ-որ քայլեր։ Սակայն, քրդերի հետ ունեցած իրենց հարաբերությունների ժամանակ, ինչպես Խրիմյանը, այնպես էլ ժամանակի հասարակական մյուս գործիչները, համոզվում են, որ քրդերը գործիք են պետական պաշտոնյաների ծեռքին և հայերը գուր հույսեր են կապում Բ.Դուան հետ։ Իր եղենագործություններով հոչակված պավակապետ Իրոն պատմում է Խրիմյանին, որ բոլոր պետական պաշտոնյաների մոտ ունեն իրենց հովանավորները, որոնց միջոցով նրանք ստանում են ազատ գործելու հնարավորություն։ «Դորժան պատահմանք անկանհնք ի ծեռս կառավարչաց և կալանավորինք ի բանտ, խորհրդական և հավատարիմ ծառայք զանենայն հնարս մեքենայության ի ծեռնարկյալ ազատեն ի պատժապարտութենե և ի բանտե»<sup>1</sup>:

Տարոնահայության եպիսկոպոսը իր ուշադրությունը բեկորում է նաև մի այլ կարևոր խնդրի կարգավորման վրա։ Դա հայոց վանքերը հարկերից ազատելու պարագան էր։ Կ.Պոլսի պատրիարքական տեղապահին ուղղած իր նամակներում Խրիմյանը փաստարկներով ապացուցում է, որ Օսմանյան կայսրության հաստատումից ի վեր, թուր-

քական սուլթանները ֆերմաններով հաստատել են հայոց, ինչպես նաև այլ ազգերի հոգևոր հաստատությունները հարկերից ազատ լինելու հանգանանքը։ Այդ իրավունքը առավել ևս պետք է շեշտվեր թանգիմարի արտոնված հավասարության կարգախոսներով։ Սակայն ժամանակի ընթացքում հայոց վանքերի մեծ նասք դարձել է հարկատու, մինչդեռ Խրիմյանը գտնում է, որ «Տերությունը վերջին թանգիմարի օրենքով յուր ամեն կարգի հպատակները հավասարության պայմանի մեջ դրած է, տաճիկի թեքքեն և հայոց վանքերը միևնույն իրավանց տեր պիտի ըլլան, այսօր հայոց վանքերը արմտյաց տասանորդ և ոչխարի տուրք կվճարեն, բայց տաճկաց թեքքեները այս տուրքերը չվճարելեն հետո, Մշո երկրին մեջ ամեն մեկ իրենց սեփական գեղեր ալ ունին, որոնց տասանորդ իրենք կառնեն»<sup>1</sup>։

Խրիմյանը գտնում է, որ պետք է հետանտել և նորից վերականգնել նախկին իրավունքները։ Այդ իրավունքը պահանջել է պետք և ոչ թե խնդրել։ Խրիմյանի ընթոստ հոգին չի հանդուրժում, որ հայոց իր խնդիրը ոչ թե պահանջում է իրավունքով, այլ «իբրև ստրուկ մի յուր հին սովորության համեմատ թախանձել ու աղաքել պարտի»։ Նա պահանջում է պատրիարքական տեղապահից վերականգնել հայոց վանքերի արտոնյալ իրավունքները, դա հայ հոգևորականների պարտքն է։ «Իրավունքը ինքնին կմեռնի, եթե իրավանց տերերը բարձիթողի ընելով լրեն միշտ»։

Հայոց վանքերի իրավունքների շերմեռանդ պաշտպանը մատնաշում է ոչ միայն թուրք հոգևորականների արտոնությունները, այլև կաթոլիկների հոգևոր առաջնորդ Յասունյան եպիսկոպոսին սուլթանի կողմից տված նոր հրովարտակը, որը արտոնում է. «Եկեղեցեաց և վանորեից վերաբերյալ թե այգի, թե պարտեզ, թե արտորայք և թե մարգերուն, ջաղացներուն կամ եկեղեցեաց սեփական ծրագի գործարանաց (մոմխանե) և եկեղեցիներուն և անոր զանձերուն և ծառոց թե պտղատվոց և թե անպտղոց և ոչխարաց (աղնաձ) երբեք խառնվելու կամ պահանջողություն չըլլա»։ Յասունյանը այս հրովարտակի բարձրանությունը ուղարկում է բոլոր վայրերում գտնվող կաթոլիկ եպիսկոպոսներին, որոնք այդ ամենը արձանագրել են տալիս տվյալ «Վալիության դիվանում»։ Խրիմյանը տարակուտում է. ինչպես կարող է պատահել, որ Բ.Դուանը նման արտոնություն շնորհի հարյուր հազարից բաղկացած կաթոլիկ համայնքի հոգևոր հաստատություններին

1. Ամենայն Հայոց եայլիկ, էջ 167։

և «կզլանա երկու և կես միլիոն ժողովրդի գլուխ հայոց պատրիարքին»: Այդ պատճառով նա դրում է պատրիարքական տեղապահին տեր կանգնել հայոց հոգևոր հաստատությունների իրավունքներին և նաման հանձնարարականներ հղել արևմտահայ գավառների հոգևոր առաջնորդներին: Այդ նկատառումով նա գովեստով է արտահայտվում Ուչքիլիսեի վանքի վաճահայր Յովիաննես Վարդապետի նախին, որի շանքերով Բագրևանդի վանքերը ազատվել էին աղճամից և թաշիրից:

Չնայած Խրիմյանի դրումներին և պատրիարքական տեղապահի դիմումներին, հայ առաքելական եկեղեցու հոգևոր հաստատությունները կորցրին իրենց այդ արտոնությունները: Սակայն Խրիմյանը շարունակեց իր պայքարը այդ ուղղությամբ 70-ական թվականներին ևս, երբ ինքը բարձրացավ Կ.Պոլսի հայոց պատրիարքի գահին:

Նորընծա եպիսկոպոսի անենակարևոր գործը Կարնո նահանգապետին ուղղած իր դիմումն էր, որի մեջ կային գործուն առաջարկություններ տարոնահայության կյանքը բարելավելու ուղիների մասին: Այդ փաստաբուղբը նեզ է հասել Գյուտ քահանա Աղանյանցի հրատարակած «Դիվան հայոց պատության» ժԳ հատորից: Դրատարակիչը այն վերնագրել է «Խրիմյան Յայրիկի բողոքագիրը Մշո հայ ժողովրդի հարստահարությունների նկարագրով»<sup>1</sup>: Դրատարակիչը ծանոթագրություններում նշում է, որ բողոքագիրը թվական չունի: Մեր հետազոտությունները պարզեցին գրության ճշգրիտ թվականը, նույնիսկ ամիսը: Դա հնարավոր դարձավ համադրելով Խրիմյանի նամակները Երեմիա Տևեանցի «Տոհմային հիշատակարանների» ութերորդ հատորի բովանդակության հետ<sup>2</sup>: Բողոքագիրը նորընծա եպիսկոպոս Կարնո կուսակալին է մատուցել 1869թ. հունվար ամսին և այդ նախին հաղորդում է Կ.Պոլսի պատրիարքական տեղապահ Արիստակես եպիսկոպոս Ռաֆայելյանին. «Դարստահարության գլխավոր ճյուղերուն վրա ընդարձակ տեղեկագիր ճը շինելով մատուցի որ Եկող Բ.կուսակալին, որուն պատճենը դրկած եմ ի պատրիարքուն կողմէ դեռ զորավոր ծեռնարկություն մի կամ քարան: Բ.կուսակալի կողմէ դեռ զորավոր ծեռնարկություն մի կամ հրաշք մի տեսնված չէ. միայն առատ հույսեր կուտա. «Ես Մուշին համար եկած եմ, ես Մուշ պիտի շինեմ, ես ամեն հարստահարիչ

1. Ոեր օրոնումները պատկեցին հաջաղաբարմբ. բայրագրի բնագիրը հայտնաբերեցինք գլմ-ի Գ. Արթանձայանի ֆանդի Վ բաժնի 4-րդ գործի մեջ:

2. Անանձայան, ձեռագիր 4179. Ամենայն Հայոց հայրիկ, էջ 154 (29 հունվարի 1869թ. նամակը):

ծեռքեր պիտի կտրեն» և այլն, և այլն: Դավատանք այս խոսքերուն և համբերենք»<sup>3</sup>:

Մանրամասն անդրադառնանք այդ բողոքագրին, քանի որ նրա մեջ արտահայտված են Խրիմյանի մտահոգությունները Տարոնի հայ գյուղացիության հարստահարությունները գեր փոքր-ինչ մեղմացնելու ուղղությամբ:

60-ական թվականներին Խրիմյանը և իր գինակիցները կարծում էին, որ գյուղացուն անելանելի վիճակի հասցնողը ոչ թե կենտրոնական իշխանությունն է, այլ գավառական անխիղ պաշտոնյաները: Դեռևսաբար, նրանք կարծում էին, որ Բ.Դունը և պատրիարքարանին ուղղված բողոքները, տեղեկագրերը, բարենորոգման ծրագրերը և առաջարկությունները կարող են ունենալ դրական նշանակություն, որովհետև պատրիարքարանի միջնորդությամբ արդարադատ կառավարությունը կարող է հետ կանչել իրենց պաշտոնը չարաշահող վակիներին, մյութեարիֆներին և այլոց: Սակայն եթե չիներ անգամ հույսը կենտրոնական կառավարության բարի կամեցողության նկատմամբ, այնուամենայնիվ անհրաժեշտ էր բողոքել ու դրուել, որպեսզի հարստահարվող հայությունն անմոռունչ չինազանդվեր իշխողի ու ուժեղի կամքին: Խրիմյանը միջոցներ է որոնում գյուղացիության վիճակը թերևացնելու ուղղությամբ: Նա բողոքում է, որ «Մշո Երկրի պես շահութաբեր և արդյունավետ» Երկիրը, որը կարող էր լցնել պետական գանձարանը իր առատ հարկերով, հարստահարությունների պատճառով գտնվում է այնպիսի վիճակում, որ չկանուա նաման «թշվառ, խեղճ, բարձիքողի եղած» Երկիր:

Թանգիմարի բարենորոգումները դեռևս մուտք չեն գործել Մուշ, և ինչպես քանի տարի առաջ ապստամբ քուրդ ավատատերերը չեն ենթարկվում կենտրոնական իշխանությանը, իսկ ժողովրդին վերաբերում էին իրեն իրենց ստրուկ և գերի, նույն է նաև իինա. բարենորոգումների ծրագիրը մնացել է թղթի վրա, - հայտարարում է Խրիմյանը, գտնում, որ Տարոնում գյուղուն չունի «ոչ տերության աչքը»: Նա ուրախությամբ արձանագրում է, որ Դատտը Յունայունի «արդարության պայմանները» հավասար են հայտարարել բոլոր դավանանքները. «Խալան յուր մզկիթին մեջ իսլամ ճանչցվի, քրիստոնյան

1. Ամենայն Հայոց հայրիկ, էջ 154:

## Եմա ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

իր եկեղեցին մեջ քրիստոնյա, իսկ այս աղոթարանեն դուրս խլան և քրիստոնյա առհասարակ հպատակության օրինաց առջև իրեն հավասար եղբայր և ժառանգորդ երկրին և տան մեջ»<sup>1</sup>:

Սակայն այդ հիմնական օրենքը ևս մնացել է թղթի վրա: Բողոքագրի հեղինակը նշում է, որ տեղական պաշտոնյաները՝ գավառապետը իր ժողովներով «մեղապարտ են Աստուծուն և տերության օրենքին առաջ», քանի որ կաշառակերությամբ պղծում են օրենքները, հովանավորում են հանցագործներին: Խրիմյանը բարձր է զնահատում ժողովրդի, մասնավորապես գյուղացիության վաստակը. «Երկրի մի իշխանություն և հաստատություն ժողովուրդն է. տերության վաստակ և փառք ժողովուրդն է, մասնավանդ գեղարճակ երկրագործ աշխատանք և հավատարիմ ժողովուրդը»<sup>2</sup>: Այդ պատճառով հեղինակը իր պարտըն է համարում որոնել, գտնել և նատնանշել այն սկզբնադրյուրները, որոնք պատճառ են դառնում գյուղացիության ունեցրկմանն ու քայլայնանը, երկիրն անայացնող ավերիչ գաղթին:

Դարստահարությունների առաջին աղբյուրը Խրիմյանը համարում է Արևոտյան Դայաստանում բնակություն հաստատած քրդական զանազան ցեղերին, մասնավորապես Դասնանցի և Զիբրանցի ցեղերի ցեղապետներին, որոնք իրականացնում էին Մշո փաստական իշխանությունը և պաշտպանություն էին գտնում պետական պաշտոնյաների կողմից, նրանց հետ կիսելով ժողովրդից հափշտականները: Այդ թոռուններին նախորդ կուսակալները ծերբակալեցին և բանտարկեցին կարնո բանտում: Բայց նրանք հնտորեն կարողացան ազատվել բանտից: «Այս թոռուններուն երեսեն ժողովրդոց քաշած գրկանքները կարող չեմ մի առ մի գրել. թռնություն, գողություն, հափշտակություն և բազմադիմի ոճրագործությունը իրենց սովորական իին արվեստն է, քանի որ իրենց կյանք թափառական է և իրենց սահման լեռներուն ազատ վայրերն են, վրան մի և ծի մի բավական են իրենց»<sup>3</sup>:

Դատկանշանական է այն հանգամանքը, որ Խրիմյանը հարստահարությունների և չարիքների աղբյուրը համարում է թռուններին՝ ցեղապետներին, ոչ թե թռուրդ ռայային, որոնք հայ գյուղացու ննան «իրեն գերի և ծառա են թռուններուն ծեռք»: Այս հարցում ընդգծվում է Խրիմյանի ժողովրդական ոգին. նա նույն աստիճանին է կանգ-

## Մկրտիչ ԽՐԻՄՅԱՆ. Հասարակական-քաղաքական գործունեությունը

նեցնում երկու ազգերի շահագործողներին մի կողմից, և այդ ազգերի հարստահարվող գյուղացիությանը մյուս կողմից:

Դարստահարությունների այդ աղբյուրը վերացնելու համար Խրիմյանն առաջարկում է աքսորել «ամենազորեղ առաջնորդներին», կտրել իրենց գինական ուժից, իսկ մյուսներին՝ «տեղին տեղ նաճ տալով, կրեել զիրենք շինական աշխատության մեջ»<sup>4</sup>: Խրիմյանը բացահայտում է, որ պետության քաղաքականությունը քրդերի նկատմամբ սխալ է, քանի որ կարծում են, թե վերջիններս պատերազմի ժամանակ կարող են կանոնավոր բանակի շարքերում կրվել պետության թշնանիների դեմ: Նա հայտարարում է, որ «արևելյան պատերազմի ատենը» (ակնարկում է 1853թ. Ղրիմի պատերազմը) քրդական քան հազարից ավելի հեծելազորը թնդանոթի ծայնից «խուճապահար իրար անցան, թող տվին թշնանեաց կրակին առաջ կանոնավոր զորաց բանակը, իրենք դեպի փախուստ դարձան»:

Դարստահարության աղբյուրներից մյուսը պետության տասանորդ հարկի վարձակալներն են, որոնք բազմաթիվ օրինախախտումներ են կատարում հարկագանձման ընթացքում: Ցուրաքանչյուր բերքի տեսակից իր ժամանակին հարկը վերցնելու փոխարեն, հարկահավաքը չափում էր բերքը, բայց գանձումը հետաձգում մինչև ծնուան սկիզբը, երբ բերքի տվյալ տեսակը կրկնապատիկ կամ նույնիսկ եռապատիկ բանկացել է, այդ ժամանակ հարկահավաքը բերքի փոխարեն դրամ է պահանջում եռապատիկ թանկ գներով: Այդ բանը գյուղացուն հասցնում է լիովին ունեցրկման և քայլայնան. նա չի կարող որևէ տեղ թռողքել, քանի որ տասանորդի հարկը վարձակալողը Մշո կառավարության անդամներից որևէ մեկն է: Գյուղացու դրությունը առավել ծանրանում է հարկահավաքների ծառաների, ուղեկիցների, ողջ շքախմբի հասցրած վնասներով: «Պեսք չէ մոռնալ այդ վարձակալներուն ծառայից հասուցած գրկանքները, որը հնծոց և կալի ժամանակները գեղերու մեջ նստելով, որչափ կծանրանան խեղճ գեղացվող վրա իրենք իրենց ծիերով մեկութեն: Ոչխարաց տուրք ժողովող վարձակալաց վարմունքը, Մշո կառավարության դրնեն այլ և այլ գործոց համար գեղեր գնացող ծառայից վարմունքը, ասոնք

1. Դիլիմ հայոց պատճերյան, և. ԺԳ, էջ 466: Նույն կարձիր էր արտաևայան նաև Դ. Արքանձայանց «Մշեցված վրա լինիանոր տեսություն մը» հայլածաշաբաթ, պատմել թուրք սազմական ավագանուն, իսկ նրանց ծառաներին դարձնել նսաւելսաց, վարժեցնել երկրագրություն:

2. Նույն տեղամ, էջ 464:

3. Նույն տեղամ, էջ 465:

## ԵՄԱ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

առհասարակ սահմանված օրենքին դեմ հակառակ վարպելով ծիոց և իրենց կերակուրներն պետք է որ ձրի լինին»<sup>1</sup>:

Դարստահարության երրորդ աղբյուրը երկրից գաղթած, հեռացած անձնավորությունների տուրքը մնացողներից գանձելու՝ օրենքի ուժ ստացած սովորույթն է: Կան գյուղեր, որոնք առաջներում եղել են բարգավաճ և բազմամարդ: Կյանքի անողոք հարվածների տակ գյուղացին թողել է իր տունն ու տեղը, իր հայրենի երկիրը և գաղթել այլ վայրեր: Տեղում մնացած բնակչությունը ճնշվում է գաղթածների հարկերի ծանրության տակ: Թուրքական անկանոն վարչությունը չէր կարող, ավելի ճիշտ չէր ցանկանում պարզություն և հստակություն նոցնել այդ հարցերում:

Խրիմյանը պահանջում էր վիճակագրական հաշվումներով վճռել այդ խնդիրները և գյուղացուն ազատել այդ տառապանքից: «...Ուղորմելի գեղացիները գնացող գաղթականաց ծանր-ծանր բեռանց տակ կինշվին, մինչդեռ իրենք իրենց չքավորութունն իրենց բաժին տուրքը կարող չեն վճարել, ինչպես կարելի է և ինչ իրավունք է ուրիշի բաժին ինկած տուրքն ևս վճարել»<sup>2</sup>:

Տարոնի հոգևոր առաջնորդի համարձակությունը հասնում է այն աստիճանի, որ գործելով Մուշում, առանց երկնչելու, բացահայտ ու բացարձակ մատնանշում է Մշո մեջլիսին՝ չարիքների և հարստահարությունների ամենամեծ աղբյուրը համարելով նրա վատրաք վարչության գործունեությունը: Այդ պետական աստիճանավորներին Խրիմյանը համեմատում է ապստանք քուրդ ցեղապետների հետ, որոնք իրենց անսանձ, անզուսպ և կատարի բարեերով ավերում էին երկիրը, ուժի կոխան դարձնում, անարգել սրի քաշում ժողովրդին, իրենց պատասխանատու չիամարելով պետական ոչ մի մարմնի, անգամ Բ. Ռուսն առջև: Ահա Խրիմյանի առաջարկության հիմնական մեխը. «Մշո երկրի մեջ հիմնական բարեկարգություն հաստատելու համար անշուշտ արմատեն կամ նույնիսկ գլխեն սկսելու է, և այս գլուխ արմատը նույնիսկ Մշո կառավարությունն է յուր ամեն հանգամանոք»:

Խրիմյանը թուրք պետական աստիճանավորներին քննադատում է մանավանդ այն բանի համար, որ նրանք չեն աշխատում բարելավել գեր իրենց ազգակից ժողովրդի վիճակը: Նա նշում է, որ «Ղուրանի

Մկրտիչ ԽՐԻՄՅԱՆ. Հասարակական-քաղաքական գործունեությունը

որդիքը Ավետարանի որդվոց հետ առհասարակ կճնշվին և կիարստահարվին շատ անգամ»: Մշո գավառական իշխանություններն իրենց ազգասիրական պարտքը չեն հանարում ազգակից ժողովրդի վիճակի բարվոքելը:

Կարինի նոր նահանգապետին հանձնելով այդ բողոքագիրը՝ Խրիմյանը թերահավատ էր նրա կարողությունների և ցանկությունների նկատմամբ, սակայն նա բողոքում էր, որովհետև չէր կարող չքողոքել, որովհետև նրա բնավորության անհարիր էին հյու հնագանդությունը չարին և բռնավորին, որովհետև նա իր առաջ խնդիր էր դրել բարձրացնել ժողովրդի ազգային գիտակցության զգացումը, մղել ժշողովրդին դեպի սոցիալական պահանջներ:

1869թ. ողջ ձմեռը Խրիմյանը ննաց Կարինում, այնտեղից հետևելով և Վարագա, և Գլակա վանքերում կատարվող դեպքերին: Դումիսի սկզբներին Խրիմյանն արդեն Տարոնում էր և վարում էր Սուլը Կարապետ վանքի վանահայրությունը, ծեռնամուխ լինում բարեկիխուսմների իրականացմանը: Վանքապատկան հողատարածություններում երկրագործությանը զարկ տալու նպատակով մի հմուտ մասնագետ նշանակվում է երկրագործության տեսուչ:

Տարոնում ևս Խրիմյանը չի դադարեցնում հանդիպումները օսմանյան պաշտոնյաների հետ: Նահանգապետի հետ Կարինում ունեցած տեսակցության արդյունքն այն է լինում, որ վերջինս Խրիմյանի հրավերով գալիս է Տարոն: Խորածանյան Ղանիել Էֆենդու և մի քանի վարդապետների ուղեկցությամբ Խրիմյանը ընդհանուր է գնում նրան մինչև Մատրավաճը: Վայի փաշան նրա խնդրանքով ընդունում է Մշո դաշտի գյուղապետներին, զրույց ունենում, հուսադրում, որ կօգնի հարստահարություններին դարձնան որոնելու խնդրում: Սրամիտ Խրիմյանը այդ մասին նամակում հայտնում է. «ճարին տեղն էր Եփրատին եզերը: Աստված տա, որ այս հուսալի ճարին ծայն ջրին ծայն չըլլա»<sup>1</sup>: Բոլոր դեպքերում Տարոնի Յարիկը մտածում էր, որ անհրաժեշտ է խրախուսել նոր նահանգապետի այդ քայլերը և հանձնարարում էր Կարինում գտնվող իր սանին՝ Գարեգին Սրբանծտյանցին գովաճնական հոդված գրել «Մանգումեի Եֆիարում»:

«Ժամանակ անց դարձյալ գլուխ են բարձրացնում հակասահան հետադիմական ուժերը: Տասնամյակի սկզբին Խրիմ-

Թ. Գ. Մրիւնձայանցի Ֆ., Ա. թ., գ. 402:

1. Հիման հայոց պատմության, Ա.Ժ.Դ., էջ 468:  
2. Նույն տեղում:

## ԵՄՍ ԿՈՍՏԱՆՈՅՑՎՆ

յանին ընդդիմադիր գյուղապետները միավորվում են վանքի միաբան-ների հակախրիմյանական խմբի հետ և միասնական ուժերով պայքար ծավալում ժողովրդի հաշվին իրենց շահույթներն ապահովելու համար: Նահանգապետ փաշայի ներկայությունն իսկ չի կասեցնում նրանց մեջ գործը: Դարձյալ գործի են դրվում Խրիմյանին վարկարեկելու հին ծևերը՝ կեղծ հանրագիր-հեռագրերը: Վաճահայրը երկար է խորհում Մխիթար վարդապետին և գյուղապետներին հակահարված տալու ուղիների մասին: Սակայն քրիստոնեական ներողամտությունն ու խոհեմությունը հաղթում են: Նա չի ցանկանում թուրքական պաշտոնյայի միջոցով հարված հասցնել հայ վարդապետին: «Մխիթար վարդապետը այս վերջի հեղափոխության մեջ պարագլուի կայնելով պիտի հուզե որչափ ուժ ունի: Շատ կմտածին այս կետին վրա, եթե թողում այնպես և համբերեն, նա իր չարությունը հառաջ մնելու է անձանձիր կերպով, իսկ եթե քաղաքականության ծեռքով Մշո երկրեն դուրս հանելու ծեռնարկություն ընեմ, այդ միջոցն իրենց սեփական միջոցն է, զոր չեմ ուզեր ի գործ դնել: Ուստի պիտի թողում դարձյալ, որ չարությունը իր ասպարեզը բանա, հավատալով, թե ծշմարտությունը պիտի հաղթե»<sup>1</sup>: Նման վարվելակերպով նա պացուցում է, որ իսկապես Քրիստոսի նվիրյալ պաշտոնյա է՝ ազնիվ, վեհ, ներողամիտ:


Նահանգապետ փաշան դիտողություն է անում դավադիր գյուղապետներին, սակայն չի բանտարկում. այդ տույժին արժանանում են մի քանի տեղական թուրք և թուրդ աղաներ: Նույնիսկ այդ գյուղապետների համար Խրիմյանը տրտմում է. «Այդ մարդիկ թե ազգային նկատմանք, և թե կառավարության՝ միշտ հանցավոր են: Դոքա ամբողջ Մշո երկրին՝ սուրբ Կարապետի վանուց մեծամեծ վնասներ հասուցին. դոքա շատ անգամ բարիքներ տեսան և դարձյալ ապերախտեցին ամեն կերպով. մենք իրենց դեմ անհիշաչարությամբ վարվեցանք, այլ իրենք չզգաստացան»<sup>2</sup>:

Խրիմյանի հոգին տագնապ է ապրում, երբ իմանում է, որ Մուշից մի խունք գյուղապետներ և վարդապետներ Կարին են կանչվել պատասխանատվության: Նա ահազանգ է հնչեցնում Կարինում գտնվող Սրբանձտյանցին, որպեսզի վերջինս տեղեկություններ հավաքի՝ նրանց անհրաժեշտ օգնություն ցուցաբերելու նպատակով: Ամառվա ամիսներն անցան այդպիսի տագնապներով, իսկ սեպտեմբերին Կ.Պոլսից

## Մկրտիչ ԽՐԻՄՅԱՆ. Հասարակական-քաղաքական գործունեությունը

լուր է հասնում, որ Խրիմյանն ընտրվել է Կ.Պոլսի Հայոց պատրիարք:

Քարոյական չափանիշներով արդյունավետ եղավ Խրիմյանի տարունյան գործունեությունը: Ժողովրդի ամենամեծ գնահատականին նա արժանացավ Տարոնում՝ Հայրիկ պատվանունին: Վասպուրականյան և տարոնյան շրջանի նրա գործունեության յուրատեսակ գնահատականն էր Կ.Պոլսի պատրիարքի բարձր պաշտոնում ընտրվելը:



1. Գ.Ա. Պրվանձայանի ֆ., 2-րդ թ., գ. 410:

2. Նույն անդամ, գ. 415:



## ԳԼՈՒԽ ԶՈՐՌՈՐԴ

# ԿՈՍՏԱՆՊԵՏՈՎՈՒԽ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԸ

1866թ. Բ.Դուռը «առժամանակ» դադարեցրեց 1863թ. հաստատված ազգային սահմանադրության գործադրումը: Ազգային վարչության Քաղաքական և Կրոնական ժողովների փոխարեն ընտրվեց Առժամանակյա Խառն ժողով, որը վարում էր ազգային գործերը պատրիարք Պողոս Եպիսկոպոսի ղեկավարությամբ: Սահմանադրության դադարման ժամկետը Բ.Դուռը սահմանել էր ճնտավորապես երկու ամիս, սակայն անցել էր երկու տարի, և արքունի հրովարտակը չէր շտապում վավերացնել արևմտահայերի «թլքատված» սահմանադրությունը, որը սուլթանի մեծ եպարքոս Ալի փաշայի պատկերավոր արտահայտությամբ «քառակուսի» անիվ էր և գործելու անընդունակ:

1868 թվին Պողոս Թաքբաքյան պատրիարքը հրաժարական է ներկայացնում, որն ընդունվում է Բ.Դուռ կողմից: Ժամանակավոր տեղապահ է հաստատվում Արհստակես արքեպիսկոպոս Ռաֆայելյանը, որը վեց ամիս անց ներկայացնում է իր հրաժարականը:

1869թ. հուլիսին Բ.Դուռը հրահանգում է Կ.Պոլսի Ազգային ժողովին ձեռնամուխ լինել պատրիարքական ընտրության, դրա համար հրավիրել Ընդհանուր ժողով: Դարձը քննարկվում է Ընդհանուր ժողովի 1869թ. հուլիսի 31-ի նիստում, որտեղ էլ կազմվում է պատրիարքական թեկնածուների՝ տասը հոգուց բաղկացած առավել արժանավոր հանարվող Եպիսկոպոսների ցուցակը: Ընտրությունների ժամանակ առավելագույն քվե են ստանում Վասպուրականի հոգևոր առաջնորդ Եպիսկոպոս Խգճատիոսը և Վարագա ու Սր. Կարապետի նորընծա Եպիսկոպոս Մկրտիչ Խորիմյանը: Ընտրության երկրորդ փուլում Կ.Պոլսի պատրիարք է ընտրվում Վասպուրականի զառամյալ առաջնորդը՝ Խգճատիոս Եպիսկոպոսը, որը, սակայն, առանց արժանանալու պատրիարքական օծման, շուտով կնքում է իր մահկանացուն:

## Եմա ԿՈՍՏԱՆԴՅԱԼ

Ընդհանուր ժողովում դարձյալ օրակարգի հարց է դառնում պատրիարքական ընտրությունը:

1869թ. սեպտեմբերի 4-ի նիստում խառն ժողովի նախագահ Գրիգոր Օտյանը պատրիարքական ընտրության վերաբերյալ իր ելույթում նաև նավորապես նշում է. «Ազգը կուգե, որ պարզ, անխարդախ և գրագետ եպիսկոպոս մը պատրիարք ըլլա: ...Ես կառաջարկեմ մեկը, որ շատերուն սրտին համաձայն է, որ ազգին ալ սիրելին է և որ ծշմարիտ հայու զավակ և ոչ նվազ փառք է մեր եկեղեցվույն: Խրիմյանը...»<sup>1</sup>: Դազիվ էր Օտյանը արտաքերել այդ ազգանունը, երբ որոտընդուտ ծափահարությունները թնդացնում են Կ.Պոլսի Մայր եկեղեցու կամարները: Ժողովին ներկա խորոն բազմությունը և ժողովի անդամ ազգային երեսփոխանները այդ ծափահարությանը արտահայտում էին իրենց ջերմ համակրանքը հայության մեջ համընդհանուր ճանաչման արժանացած ազգանվեր գործչի նկատմամբ:

Ընտրության լուրը Խրիմյանն ստացավ այն ժամանակ, երբ դեկտեմբերի էր Կարինի և Մուշի ճանապարհներին, աշխատում էր կարգավորել Տարոնի խառնիխուրն գործերը, շարունակում էր հալածվել Ար.Կարապետի միաբանության կողմից:

Ինանալով պատրիարք ընտրվելու լուրը, Խրիմյանն շտապ վերջացրեց իր գործերը, իրաժեշտ տվեց Տարոնի և Վասպուրականի բնակչությանը և ճանապարհվեց սուլթանական կայսրության մայրաքաղաքը:

Արևմտահայությունը ցնծությամբ ընդունեց Խրիմյանի պատրիարք ընտրվելու լուրը. մեծ էին ժողովրդի հույսերը, ակնկալումներն ու ծգումները: Նորընտիր պատրիարքի ճանապարհն անցնում էր Արևմտյան Շայաստանի տարածքով. ամենուրեք նա արժանանում էր տեղի բնակչության բացառիկ ջերմ ընդունելությանն ու սրտագին մադրանքներին: Գավառահայությունը Տարոնի Ավագաղբյուր գյուղի մի ծերունի նահապետի շուրբերով պատվիրաններ է տալիս իր ծոցից դուրս եկած պատրիարքին՝ նրանից պահանջելով իրենց հուզող հարցերն ու խնդիրները, մասնավորապես հարստահարությունների հարցը բարձրացնել Ազգային ընդհանուր ժողովի, Ազգային Վարչության նիստում: Այդ պատվիրաններն ու պահանջները Խրիմյանը համարում էր իր ապագա գործունեության սրբազն պարտքը:

1. Աւելագրաբինը Ազգային ժամանակ, 1860-1870թթ., էջ 404:

## Մկրտիչ ԽՐԻՄՅԱՆ. Հասարակական-քաղաքական գործունեությունը

ճանապարհորդությունը, որ սկսվել էր 1869թ. հոկտեմբերի 3-ին, երբ Խրիմյանը Մուշից ճանապարհվեց Կարին, ավարտվեց նոյեմբերի 6-ին՝ Օսմանյան Թուրքիայի մայրաքաղաքում:

\*\*\*

Կոստանդնուպոլսում Խրիմյանն արժանացավ աննախադեպ ընդունելության<sup>1</sup>: Նրան խանդավառ դիմավորում էր կազմակերպել Կ.Պոլսի բազմահազարանոց հայ գաղութը: Նորընտիր պատրիարքին դիմավորում էր նաև Բ.Դուան ներկայացուցիչը:

Կաղամերիկ բանաստեղծ Պետրոս Դուրյանը, որ ապրում էր ու ներշնչվում օսմանյան մայրաքաղաքի հայության ոգևորությամբ, բանաստեղծություն է նվիրում նոր պատրիարքի գալստյան առթիվ: Դա Դուրյանի առաջին տպագիր բանաստեղծությունն էր և կրում էր «Ի դիմաւորութիւն Խրիմեան Շայրիկին» խորագիրը: Բանաստեղծության հեղինակը գնահատում է Խրիմյանի ժողովրդանվեր գործունեությունը առավել և այն պատճառով, որ նա մի համեստ հոգորական է, ոչ թե բագավոր կամ դյուցազն:

**Նա կարիամարիէ ծիրամի փառքեր,**

**Նա սև է հագէր:**

Դամեստ հոգևորականին ժողովուրդը այդպիսի ընդունելության է արժանացնում, ըստ Դուրյանի, երկու հանգամանքով. առաջինը՝ Խրիմյանը «մեր հայ եղբարց արցունքն է քավեր» և երկրորդը՝ ի դեմս նորընտիր պատրիարքի հայությունը տեսավ իր «ազատութեան փող հնչեցնող մարգարէին»<sup>2</sup>:

1869թ. նոյեմբերի 12-ին բացվում է Ազգային Ընդհանուր ժողովը Կ.Պոլսի Մայր եկեղեցում: Ազգային երեսփոխանները գործող սահմանադրության օրենքներին համապատասխան նորընտիր պատրիարքից պահանջում են ուխտել սահմանադրության օրենքներին հավատարիմ մնալու, դրանք անշեղորեն կենսագործելու համար: Առաջին այդ նիստից սկսվում են ներկայությունները Խրիմյանի և Ազգային ժողովի երեսփոխաննության մի մասի միջև: Պատրիարքն ընդվառ է այն իրավիճակի դեմ, ըստ որի սահմանադրությունը «Ուխտի բեռը միայն պատրիարքի կոնակին դրած է, և երեսփոխանք ազատ են անկից»<sup>3</sup>: Նա բացատրում է, որ սահմանադրության հաստատումից

1. Խ. Մալամյան, ճշգ. աշխ., էջ 64:

2. Ամենայն Հայոց Հայրիկ, էջ 137:

3. Աւելագրաբինը, 1860-1870թթ., էջ 410:

առաջ միայն պատրիարքն էր ուխտում, որովհետև նա միայնակ էր վարում ազգային գործերը: Ըստ սահմանադրության ընտրվում են պատրիարքի գործակիցները՝ Քաղաքական և Կրոնական ժողովները, որոնք էլ սահմանափակում են պատրիարքի գործունեության ոլորտները: Այդ պատճառով էլ Խրիմյանն առաջարկում էր Ազգային Ընդհանուր ժողովի անդամներին, որ սահմանադրությամբ ընտրված Ազգային Վարչության անդամները ուխտեն իր հետ միասին: Այդ հարցի շուրջ առաջանում են երկար վիճաբանություններ: Երեսփոխանության մեջ նաև ստիպում է Խրիմյանին չհակառակվել սահմանադրության օրենքներին և ուխտ անել. «Մինակ իմ ուխտելովս սահմանադրությունը չապահովիր, հետևապես կուգեմ, որ ինձի հետ խորհրդակից և գործակից եղող մարմիններն ալ ուխտակից ըլլան»<sup>1</sup>, - պատասխանում է Խրիմյանը, բայց ստիպված տեղի տալիս և Ազգային ժողովում պառակտում չառաջացնելու համար համաձայնում կատարել ուխտի արարողությունը: «Ես արդեն այդ ուխտ ըրեք եմ Դայաստանի մեջ, Մշո դաշտին մեջ, իմ մերկ և բոլոտն զավակաց առջև, իմ հարստահարյալ ժողովոյանս քով, այդ կը կրկնեմ նորեն»: Կ.Պոլսի Մայր Եկեղեցու բենում պատրիարքը երդվում է՝ հավատարիմ մնալ Դայաստանեայց Սուրբ Եկեղեցու դավանությանը, ավանդություններին, ապա՝ հավատարիմ մնալ ազգային սահմանադրության հիմնական սկզբունքներին և ոգուն, հավատարիմ մնալ «Օսմանյան քարեխնամ տերության ...որուն շահը նույնն է մեր ազգին շահուն հետ»<sup>2</sup>: Մինչդեռ Ազգային Երեսփոխաններից ոմանք պահանջում են, որ պատրիարքը կետ առ կետ գործադրի սահմանադրության բոլոր օրենքները, Խրիմյանը ցուցաբերում է ծկունություն և երդվում հավատարիմ մնալ սահմանադրության հիմնական սկզբունքներին: Դայականությունը տարեգիրներից ամենահմտութը՝ Մատաքիա Օրմանյանը, բարձր է գնահատում նրա դիվանագիտությունը: «Նշանավոր և կնճռոտ պարագա մըն էր իրմեն պահանջած սահմանադրության անթերի պահպանության ուխտը, քանի որ սահմանադրությունը առկախ վիճակ մը ուներ և . դժվար էր այդ վիճակը համաձայնեցնել անթերի պահպանության ուխտին հետ: Խրիմյան այդ կնճիռը լուծեց իր ուխտը սահմանափակելով և քանավորագույն դատեց սահմանադրության հիմնական և անփոփոխելի սկզբանց հավատարիմ կենալու ուխտը

1. Առանազմարթմբ... 1860-1870թ., էջ 413:

2. Նայն անդամ, էջ 414:

## Մերուիչ ԽՐԻՄՅԱՆ. Հասարակական-քաղաքական գործունեությունը

տալ, որով ցույց տվավ իայ աշխարհին, որ քաղաքագիտության մասին առաջինն է իայ Եկեղեցականաց մեջ»<sup>1</sup>:

Ի՞նչ էր իրենից ներկայացնում Կ.Պոլսի պատրիարքությունը: Իրենից առաջ պատրիարքարանը բանտ ու սեղանատուն էր: «Խրիմյանի սիրտը չէր կրնար հանդուրժել ոչ բանտին, որ ոստիկանության դժնեության մռայլը կը դներ Ազգին Տանը ծակատին վրա, և ոչ ալ սեղանատան, որ հացկատակներու բույն մը կազմակերպեր հոն: Երկուքն ալ ջնջվեցան իսկույն»<sup>2</sup>:

Պատրիարքարանը կոչված էր տնօրինելու և հոգալու ամբողջ արևմտահայության և Մերձավոր Արևելքի գաղթօջախների հայության առօրյա, ազգային, քաղաքական, դատաստանական գործերը: Սահմանադրությամբ Կ.Պոլսում ընտրված Ազգային ժողովը Օրենսդիր մարմին էր, բաղկացած 140 երեսփոխաններից, գործադիր մարմինը Քաղաքական և Կրոնական ժողովներն էին, որոնք, ըստ սահմանադրության, պետք է բաղկացած լինեին քսան աշխարհիկ և համապատասխանաբար քսան բարձրաստիճան հոգևորականներից: Քաղաքական ու Կրոնական ժողովները կազմում էին Ազգային Վարչությունը, որը պատրիարքի հետ միասին պետք է գործադրեր այն բոլոր օրենքները, որոնք հաստատվում էին Ազգային ժողովի կողմից:

Ազգային Երեսփոխանները, ժամանակակիցներից մեկի դիպուկ արտահայտությամբ, «անվարձ և անբոշակ» աշխատողներ էին, որոնք հավաքվում էին շարաթական մեկ ամգամ և մի քանի ժամվա ընթացքում քննարկում էին երկու և կես միլիոնից ավելի արևմտահայության առաջ ծառացած բարդ ու կնճռոտ բազմաթիվ կենսական խնդիրներ:

Մինչև Խրիմյանի պատրիարք ընտրվելը, չնայած գավառներից տեղացող բազմաթիվ բողոքներին և հանրագրերին, Ազգային ժողովը չէր ցանկանում իր օրակարգի խնդիրը դարձնել գավառահայության հարստահարությունները, քննարկել նրանց իրավագուրկ վիճակը: «Խրիմյանն առաջին պատրիարքն էր, որ գործնական քայլերի դիմեց Կ.Պոլսի Ազգային վարչությունը «սահմանադրական ազգի» վարչություն դարձնելու ուղղությամբ: Մինչև Մշո նախկին առաջնորդի հայտնվելը պատրիարքարանում, արևմտահայ գավառը ոչ թե ազգային ժողովի գործունեության օրինկոտն էր, այլ ավելի շուրջ՝ պոլ-

1. Մ. Օրմանյան, Ազգապատմ, էջ 4255:

2. Թ. Ղ. Գ., Խրիմյան Հայրիկ, էջ 55:

## Եմա ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

սարնակ բուրժուական խմբակցությունների շահախմբությունների ու նեղ դասային ծգտումների բավարարման միջոց»<sup>1</sup>: «Պատահական չէ այն հանգամանքը, որ սահմանադրությամբ նախատեսված 140 երեսփոխանից 70-ը պետք է լինեն գավառի ներկայացուցիչները, սակայն այդ թիվը չվավերացվեց, սկզբում դարձավ քառասուն, ապա սկսվեց հետզհետև կրծատվել: Այդ սակավաթիվ երեսփոխաններն էլ ընտրվում էին ոչ թե գավառից, այլ դարձյալ Կ.Պոլսից: Ազգային ժողովում տոն տվյալը Պոլսի և ծովամերձ քաղաքների էֆենդիների դասն էր, որը նինչ Խրիմյանը իր ծեռքն էր հավաքել նախորդ պատրիարքներին և Ազգային ժողովի ղեկը: Կ.Պոլսի համեմատաբար փոքրաթիվ հայ բնակչության շահերը գերադասվում էին ողջ արևմտահայության շահերից և շարաթը մեկ անգամ հավաքվող Ազգային ժողովն զրադում էր գաղթօջախի համեմատաբար մանր ու նեղ խնդիրներով:

Խրիմյանի ընտրությամբ Բ.Դուռը դարձյալ թույլատրում էր սահմանադրության գործադրությունը՝ միայն Ազգային ժողովում վերացնելուց հետո: Նորընտիր պատրիարքը ցանկանում էր սահմանադրության վերաբերնությունը տանել այնպիսի հունով, որ հաստատվեին օրենքներ, որոնցով առավելություն տրվեին գավառահայության ներկայացուցիչներին և գավառական հարստահարությունների խնդիրը դառնար Ազգային ժողովի քննարկման գլխավոր հարցը: Խրիմյանը ցանկանում էր, որ Ազգային ժողովի երեսփոխանների գերակշռող տարրը լինեն գավառի արհեստավորության և ժողովրդական խավերի ներկայացուցիչներ, որոնց վրա հենվելով կարող էր իրագործել իր մտահղացումները: Այդ պատճառով էլ իր ուխտելուց հետո, անմիջապես հաջորդ նիստին նա հայտարարում էր, որ աններելի հանցանք է ժամանակ վատնել անպտուղ վիճաբանությունների վրա. «Այսօր մեր ազգային վիճակը և մանավանդ գավառացվոց վիճակը չեն ներեր, որ ժամանակի կորուստ ընենք. պետք է որ ես գործեմ շարունակ և իմ շրջահայացությունս դարձնեմ դեպի Մշո և Վանա դաշտերուն մեծ ցրվյալ դժբախտ ժողովրդոց վրա և անոնց տառապանքն կայսերական կառավարության ներկայացնելով, շնորհիվ նորին խնամոց, անոնց արտասուբքները սրբեն ժամ առաջ, անկե ետև կարգը կուգա ուրիշ մեծ մեծ գործերու»<sup>2</sup>:

Մաղաքիա Օրմանյանը հետադարձ հայացք նետելով Խրիմյանի

1. Ա.Ս. Խառատյան, Արմատահայ նամուլը և գրաքննությանը Օսմանյան Թուրքիայում, էջ 117:

2. Առենազմութիւն..., 1860-1870թ., էջ 417-418:

## Ալեքսանդր ԽՐԻՄՅԱՆ. Հասարակական-քաղաքական գործունեությունը

պատրիարքական գործունեությանը, բացասական է համարում այն հանգամանքը, որ նորընտիր պատրիարքը իր գործունեության մեխն է դարձնում գավառահայ ժողովրդի վիճակի բարելավումը: «Ենքն գավառի գավակ, գավառական կյանքի անձնանվեր, գավառի ժողովրդի վիճակով տոգորված և գավառացի տարին բարվեցումը միայն իրեն նպատակ ըրած, գավառեն զատ բան չխոսեցավ, գավառեն զատ բան չլսեց, բայց դժբախտաբար այդ նպատակին մեջ ալ արդյունավոր չեղավ...»<sup>1</sup>:

Բավական է նշել, որ գավառ հորջորջման տակ հասկացվում էր բուն Արևմտյան Ղայաստանը, որպեսզի հասկանանք, թե ինչի մեջ էր մեղադրվում Խրիմյանը հայ եկեղեցու պատմագրի կողմից:

Խրիմյանի համար հեշտ չէր հաղթահարել Պոլսի էֆենդիների դիմադրությունը: Պատրիարքարան մտնելուն պես նրա վրա թափվեցին անթիվ ու անհամար, մեծ ու փոքր, կարևոր և երկրորդական խնդիրներ: Պատրիարքարանի աշխատակիցները երկար ժամանակ չէին վարձատրվել, ազգային սննդուկը դատարկ էր, իսկ պատրիարքարանի վրա ծանրացած էր 800,000 դուրուշ պարտը:

Պարտքատերերը սկսեցին նեղել Խրիմյանին, պահանջել իրենց ապառիկները: Անվճար էր մնացել Սուլթան Փրկչի Ազգային իիվանդանոցը: Ազգային այդ հաստատության հացի և մթերքի մատակարարը սպառնում էր այլև ոչինչ չտալ, մինչև չստանա իր բոլոր վճարները: Այդ իրավիճակը կաշկանդում էր պատրիարքին, նրան կանգնեցնում դժվարին խնդիրների հրատապ լուծման առաջ: Խրիմյանն զգում էր, որ անկաշկանդ գործելու, գավառներին շուտափույթ օգնության հասնելու հաճար ժամանակավորապես պետք է դադարեցնել ամեն ինչ և անհապաղ գտնել պարտքի վճարման ամենահարմար ձևը: Ինչպես ժողովրդի իսկական ընտրյալ, դժվարության պահին նա դիմեց ժողովրդին:

1870թ. մարտի 21-ին Կ.Պոլսում հրատարակվող հայերեն լրագրերի մեծ մասը տպեց պատրիարքի նամակը ուղղված մայրաքաղաքի հայությանը. «Առ իմ սիրելի ժողովուրդ, կիրակի առավոտու պահուն կը հրավիրեմ զեեզ ի Մայր եկեղեցին, նույն ին ուխտի բենեն դարձյալ պիտի ուխտեմ այլև նոր ուխտ, և պիտի խոսին ծեզ հետ ազգային այն մեծ խնդրույն վրա, որ վաղուց տարիներեւ ի վեր անլուծելի ա-

1. Ա.Մ. Օքմանյան, Ազգապատմ, էջ 4255:

ոեղծված մի դարձեր է հայոց ազգին համար, խնդիր մի, որ կաշկանդեր կապեր է զիս և վարչական անիվ: Ժողովուրդ, այլև չկամին խարել այսօր և վաղ... և հանդուրժել. կամ պետք է լուծեք այս խնդիր, կամ թողուք, որ լուծվիմ: Դավատացեք, այս է խրիմյանին անկեղծ և անխար ուխտ»<sup>1</sup>:

Կարդալով հրավերը, Կ.Պոլսի հայ գաղթօջախից ավելի քան վեց հազար մարդ հավաքվեց Գում-Գափուի Մայր Եկեղեցում: Քարոզի ժամանակ պատրիարքը ժողովուրդին պատճեց պատրիարքարանի անելանելի վիճակի մասին, նրա վրա ծանրացած հսկայական պարտքի, դրա պատճառով բարձիթողի արված բազմաթիվ գործերի մասին: Խրիմյանի հորդորը ցանկալի ազդեցություն ունեցավ: Գաղթօջախում ծայր առան հանգանակություններն ու ստորագրությունները. հայ Եկեղեցու Կ.Պոլսի պետք շրջում էր մայրաքաղաքի հայկական թաղերում, հորդորում հարուստ էֆենդիներին՝ իրենց լուսան ներդնել պատրիարքարանի պարտքերը մարելու գործում: Դավաքվեց մի պատկառելի գումար, և թեև պարտքը չնարեց, սակայն ճնշող բեռք զգալիորեն թեթևացավ:

Ըստ օրենքի պատրիարքի ընտրությունից հետո ազգային գործերը վարող խառն ժողովը պետք է հրաժարական ներկայացներ, իսկ դրան պետք է հաջորդեր Ազգային ժողովի երեսփոխանների, ապա Քաղաքական և Կրոնական ժողովների անդամների նոր ընտրությունները, այսինքն՝ պետք է ծևավորվեին Օրենսդիր և Գործադիր մարմինները: Խառն ժողովի հրաժարականը Ազգային ժողովին ներկայացնելու ժամանակ նախագահ Գրիգոր Օտյանը ազգային երեսփոխաններից պահանջեց կատարյալ վստահություն նորընտիր պատրիարքի նկատմամբ, քանի որ «պատրիարքական գահուն վրա բազմած է ազգին սիրելի պատրիարք մը. պատրիարք մը, որ տերության սիրելին է այսօր, պատրիարք մը, որ դեռ այդ աթոռին վրա չքարծուած, հասարակաց հրամանն ու համակրությանը մեջ բարձրացած էր, պատրիարք մը, որ որչափ գրագետ, այնչափ ալ քաղաքաց էտ, որչափ եռանդուն, այնչափ ալ խոհուն և որ նշանավոր ծառայություններ կրնա ընել և պիտի ընե Ազգին»<sup>2</sup>: Իզուր չէր Օտյանը Ազգային ժողովից պահանջում խրիմյանի նկատմամբ վստահություն ոչ թե խոսքով, այլ «կատարյալ վստահություն, հրական վստահություն

պատրիարքին հաճար, որ համայն ազգին ընտրելին է»: Ժամանակին և տեղին էր այդ պահանջը, որովհետև արդեն իսկ երևում էին այն ներհակությունները, որոնք առաջացել էին պատրիարքի ուստեղու օրից և հետզհետև խորանում էին Ազգային ժողովում և Ազգային վարչության մեջ բուն դրած «ազգային ջոջերի» և գավառից ժամանած «խընպըլ» պատրիարքի միջև:

Պատրիարքը ցանկանում էր դիմել վճռական գործողությունների. անհրաժեշտ էր շտապ կարգով վերաբննել սահմանադրությունը, նրանից հեռացնել կյանքի կողմից մերժված և անընդունելի հոդվածները, վերականգնել Արևմտյան Շայաստանի հայության կորսված իրավունքները, արևմտահայության այն ստվար զանգվածի, որ մայրաքաղաքի գաղթօջախի կողմից որակավորվում էր իրեն գավառահայություն: Սակայն վերաբննությունից առաջ պետք էր կատարել նոր ընտրություններ՝ Ազգային Ընդհանուր ժողովի, Քաղաքական և Կրոնական ժողովների նոր կազմ ստեղծելու համար: Խրիմյանն շտապեցնում էր, պահանջում արագացնել գործադիր մարմնի ընտրությունը. «Երեք ամիսի մոտ է, որ պատրիարքական գահուն վրա նստած եմ, սակայն դեռ չի կրցա ունենալ ին քով խորհրդական մարմին մը, որով կարենայի ազգային գործերը տնօրինել, որոնք հետզհետև դիզգելու վրա են: Զիս նավապետ կոչեցիք ազգային ալեկոծյալ նավուն, և նավն ինձ հանձնելե ետև ամենքնիդ ալ փախչելով՝ զիս միայնակ թողուցիք, կը նայիմ չորս կողմս, բայց նավաստի մը չեմ գտներ...»<sup>1</sup>:

Վիճաբանություններն Ազգային ժողովում ծգծվում էին, առանց որևէ վճռական գործողությունների հանգեցնելու: Գործելու վճռականությամբ լի պատրիարքը անդադար պահանջում էր ազգային երեսփոխաններից անհապաղ որոշել Ազգային Վարչության անդամների ընտրության եղանակը, կատարել ընտրություններ և ծեռնամուխ լինել ազգային հանգուցային խնդիրների լուծմանը. «Մշո դաշտին մեջ հարստահարյալ ժողովրդոց առաջ, նույնիսկ բարբարոս քրդաց առաջ ուստեղ են ին խինդի մեջ ժողովրդոց վիճակը բարվոքել. այս ուխտիս վրա պետք է հաստատ մնամ, ուստի չեմ կրնար մեկ վայրկյան մ, ալ համբերել, կուզեմ, որ ինձի գործակից մարմին մը տաք, ընտրությունը դուք ըրեք, և ինչպես որ կուզեք, այնպես ըրեք, ես չեմ կրնար ընտրել, այս գործը ծերն է: Միայն մեկ բան մը կա, որ պիտի ընեմ ես. գավառական մասնաժողով մը պիտի հաստատեն

1. Առենագրություն..., 1860-1870թ., էջ 429:

2. Ասենագրքին..., 1860-1870թ., էջ 419:

մայրաքաղաքիս մեջ, որուն ընտրությունը գավառայնոց կողմնեն պիտի ըլլա. Ես միայն ընտրության եղանակը պիտի ցուցնեմ, զուտ գավառական խնդիրները այս մասնաժողովին պիտի դրկեն քննության համար, և անոր տեղեկագրույն համեմատ, պետք եղածը պիտի կարգադրեմ իմ գործակից ժողովներու ծեռող»<sup>1</sup>: 1869թ. դեկտեմբերի 9-ի Ազգային ժողովի Գ նիստում ունեցած այս ելույթը արտահայտում էր ժողովուդասեր պատրիարքի մտահոգությունները, որոնումները: Այդ ելույթն ուներ նաև ծրագրային նշանակություն. նա հայտարարում էր իր անվարան վճռականությունը բուն Արևանյան Հայաստանի հայ բնակչությանը հուզող խնդիրներով գրաղվելու մասին: Պատրիարքի կշտամբանքներն ու հորդորները անհետանք չանցան: Նույն թվի դեկտեմբերի 20-ի նիստում որոշում ընդունվեց ընտրություններ կատարելու մասին: Բացարձակ քվեի առավելությամբ քաղաքական ժողովի անդամ ընտրվեց սկզբուն ընդամենը չորս հոգի: Ընտրությունները ծգձգվում էին, քանի որ ընտրվելու համար առաջադրված թեկնածուները կամ չէին ստանում ծայների հաճապատասխան քանակություն, կամ ընտրվելուց անմիջապես հետո հրաժարվում էին իրենց պաշտոնից: Պատրիարքին մնում էր երեմն համոզել հրաժարական ներկայացուած երեսփոխաններին, երբեմն ինքնուրույն որոշումներ կայացնել որևէ խնդրի վճռան համար:

Ընտրությունները, որ սկսվել էին 1870թ. հունվարի 23-ից, շարունակվեցին մինչև օգոստոսի 21-ը: Ընտրությունների ավարտից հետո Բ.Դուռը երկար ժամանակ թույլտվություն չէր տալիս Ազգային ժողով քացելու համար: Քաղաքական ժողովը ստիպված եղավ մի քանի անգամ դիմել Բ.Դուռնը և 8 ամիս ամլության ու անգործության դատապարտված Ազգային ժողովը օգոստոսի վերջին վերսկսեց իր աշխատանքները:

Նորընտիր Ազգային ժողովի և Խրիմյանի առաջ զամբած բազմաթիվ խնդիրներից իրենց լուծմանն էին սպասում առավել հրատապները՝ սահմանադրության վերաքննության խնդիրը, Սսի և Աղթամարի կաթողիկոսությունների խնդիրը, գավառական առաջնորդությունները կանոնավորելու, գավառական հարստահարությունները քննարկելու խնդիրները: Այդ հարցերի քննարկման և լուծման ժամանակ Խրիմյանը ժողովրդի շահերից ելնելով էր մոտենում յուրաքանչյուր հարցի քննարկմանը և ընդունվող որոշումներին:

**Ազգային Սահմանադրության վերաբերնությունը.** Այդ խնդրի իրականացման համար Ազգային ժողովն ընտրեց Վերաբնիչ հանձնախումբ՝ բաղկացած յոր անդամից (մեկ Եպիսկոպոս, մեկ քահանա և հինգ աշխարհական անդամ): Նախագահ նշանակվեց Նահապետ Ռուսինյանը: Վերջինս պատրաստեց իր գեկուցագիրը՝ «Տեղեկագիր» և 1870-ի օգոստոսի 28-ին ներկայացրեց ազգային ժողովի քննարկման: «Ընդհանուր տեղեկություններ» բաժնում ի թիվս այլ հարցերի բարձրացվում էր հետևյալ հարցը. «Տաս տարի է Սահմանադրություն ունինք... տաս տարի է, որ երեսփոխանական ժողով ունինք և դեռ կապասենք գավառական երեսփոխանաց գալուստը. սահմանադրությունը գավառաց մեջ դեռ ի գործ չէ դրված և չենք իշխեր հարցնել, թե պոլսեցիք այսօր ինչ շահեցան անոր տասնամյա գործածութենն: Այս, չուրացվիր, շոշափելի են այս չարիքը, բայց ու՞ն արդյոք պետք է բնտուել այս չարյաց պատճառը. զի ուր գտնենք զանի, դարձանն ալ հոն պիտի տեսնենք»<sup>1</sup>: «Գավառացի» պատրիարքի ցանկության հաճապատասխան էր կազմված սահմանադրության Վերաբննության հանձնախմբի տեղեկագիրը, որի մեջ շեշտը դրվում էր գավառի երեսփոխանության ընտրության, գալուստի և գործունեության վրա: Վերաբնիչ հանձնախումբն առաջարկում էր Ազգային ժողովի կազմը 120 հոգուց. քսանը՝ հոգեորական, հարյուրը՝ աշխարհական: 120 երեսփոխանների լրիվ կեսը պետք է լինեին Կ.Պոլսի թաղերից ընտրված երեսփոխանները, մյուս կեսը հատկացվում էր ողջ Արևմտյան Դայաստանի բնակչության ներկայացուցիչներին: Փաստորեն օսմանյան մայրաքաղաքի հարյուր հազարանոց գաղթօջախը պետք է ունենար ողջ Արևմտյան Դայաստանին հավասար իրավունքներ և ներկայացուցչություն: Սակայն այս թվերին էլ հանձնայն չեղավ Ազգային ժողովը, որը ծեռնամուխ եղավ ներկայացրած տեղեկագրի քննարկմանը: Քննարկումից հետո իր անքավարարությունը հայտնելով տեղեկագրի նկատմամբ, ժողովը որոշեց Սահմանադրությունը քննարկել մաս առ մաս: Սահմանադրության վերաբննության ողջ ընթացքը ցույց տվեց, որ աշխատանքի այդ եղանակը դատապարտված է անհաջողության: Այդ հանգանանքը լավ էին հաշվի առել գործունեության նման եղանակ առաջարկող էֆենդիները: Այդ առաջարկություններն

1. Առաջնազգութիւնը... 1870-1874 թ., էջ 17:

ԵՐԱ ԿՈՍՏՎՆԴՅԱՆ

արվել էին բացառապես ոչ կառուցղական նպատակներով։ Ազգային ժողովի ատենագրությունների միջոցով մանրանասն ուսումնափրելով նրա նիստերի ընթացքը, համոզվում ենք դրանում։ Ազգային ժողովի բոլոր նիստերում իբրև օրակարգի գլխավոր հարց դրվում է Սահմանադրության վերաբննության հարցը, սակայն նիստերի ընթացքում առաջ էին քաշվում բազմաթիվ մեծ ու մանր խնդիրներ, մասնավորապես Սսո և Աղթանարա կաթողիկոսների գործունեության խնդիրը։ Ժողովները վերջանում էին երկարատև և անպտուղ վիճաբանություններով, անընդհատ հետաձգելով վերաբննության խնդիրը և նրա քննարկումը։ Սեպտեմբերի 25-ին, եթե կոնկրետ դրվում է վերաբննության հարցը, Ազգային ժողովի պատգամավոր Ստեփան Փափազյանը հանդես է գալիս առաջարկությամբ, որում առավել «ստիպողական» և հրատապ էր հանարկում Սսի և Աղթանարի կաթողիկոսության խնդիրների քննարկումը, քան Ազգային սահմանադրության վերաբննությունը։ Իզուր էր Ազգային ժողովի պատգամավորներին շտապեցնում պատրիարք Խրիմյանը։ Նա առաջարկում էր, որ վերաբննելի հոդվածները ընդհանուր ժողովի կողմից ընդունվելուն պես, անմիջապես դրվեն գործունեության մեջ։ Ժողովում հաստատուն տեղ գրաված ընդդիմադիր հոսանքը առարկում էր, որ իին Սահմանադրությունն ընդունված և հաստատված է կայսերական իրանականությունը, իսկ նոր ընդունվողները՝ ոչ, հետևապես վերաբննված և ընդունված նոր հոդվածները դեռևս գործադրել չի կարելի։ «Խրիմյանի անհողող կամքի և անվիատ ստիպումների շնորհիվ նույն տարվա (1872թ.) սեպտեմբերին կազմվեց գավառների համար հատուկ Սահմանադրական հրահանգ»<sup>1</sup>։ Այդտեղ մանրանասն ցույց էր տրվում, թե Սահմանադրությունը ինչպես պետք է հարմարեցվի գավառի (այսինքն՝ Արևմտյան Հայաստանի) պայմաններին, ինչպես պետք է ընտրվեն տեղերի ընդհանուր և Վարչական ժողովները, Առաջնորդները, Քաղաքան խորհրդները։

Սահմանադրության Վերաքննության հարցը ծգծվեց Խրիմյանի պատրիարքության ողջ ընթացքում և եղակ այն գլխավոր պատճառներից մեկը, որ պատրիարքը Ազգային ժողովին ներկայացրեց իր հրաժարականը: Խրիմյանի պատրիարքության ժամանակ Ազգային ժողովի ատենապետն էր Ստեփան Ասլանյանը, որի նասին արևատահայ մեծ երգիծաբանը գրում էր. «Ատեն եկավ, որ հայտնեց, թե

Սահմանադրության վերաքննությունը ազգային շահերուն հակառակ էր»<sup>1</sup>: Պարզ է, եթե ժողովի ատենապետը դեմ է Սահմանադրության քննարկմանը, ապա նա իր ողջ ջանքերը պետք է գործադրեր հարցի քննարկումը խափանելու համար: Փաստորեն գործելով Սահմանադրության անունից, Կ.Պոլսի Եֆենդիական դասը, հակասահմանադրականները դաշն կնքած ծախողում էին արևմտահայության ազգային գործերի ժողովրդավարական ընթացքը: Խրիմյանից պահանջելով կետ առ կետ գործադրել 1863-ին սուլթանի կողմից վավերացված Սահմանադրության հոդվածները, նրանք փաստորեն անլության էին դատապարտում Ազգային ժողովի նիստերը: Իզուր չէր, որ նույն ատենապետին ազգային ջոշերի շարքը դասած Պարոնյանը իր պաշտպանության տակ էր առնում ժողովրդի շահերի արտահայտիչ պարուիրքին և Ստեփան Ավլանյանի մասին սարկազմով գրում. «Յուր ատենապետության օրովն էր, որ հաջողեցավ Խրիմյանը վար առնել Սահմանադրության կետերը, ստորակետները, բութերը չգործածելուն հաճար, որոնց անգործադրելի ըլլալն ինքն ալ հաստատեց վերջեն յուր պատրաստած ծրագրով»<sup>2</sup>: Ի վերջո Սահմանադրության վերաքննության խնդիրը ծախողվեց Ազգային ժողովում, և ընդդիմադիր խմբի կողմից Խրիմյանն արժանացավ «հակասահմանադրական» հորջործմանը: Ազգային Վարչության մեջ Խրիմյանի նկատմամբ գոյություն ունեցող ընդդիմությունը 70-ականների սկզբին արտահայտվեց նաև մանուկի էջերում: 1870-74թթ. արևմտահայ մանուկի օրգաններ «Օրագիրը», «Փունջը», «Դայրենիքը» և «Սամուլը» գտնվում էին Խրիմյանին հակառակորդ բանակում: «Մասիսը», «Արևելյան փողը», «Մանգումեի Եֆքիարը» և «Մեղուն» պաշտպանում էին Խրիմյանին<sup>3</sup>: Փաստորեն Խրիմյանին կողմ և դեմ վերաբերմունքով սահմանազատվում էին դեմոկրատական և կղերա-աղայական վերնախավը և նրանց շահերի արտահայտիչ մանուկի օրգանները:

**Սսի կաթողիկոսության խնդիրը.** Ազգային ժողովին երկար ժամանակ գրադարձրեց այդ հարցի քննարկումը: Սսի կաթողիկոսական արուր ապօրինի զավթել էր Նիկողոս Եպիսկոպոսը և ինքնիշխան վա-

1. Σ. Τιμονίου. Επική λέξη. h. 1. τε 213.

## 2. Նոյն պես:

3. Տես մասնակից Ա. Ա. Խաչատրյան, Արևմտասիայ մասնութ և զբարձրությանը Օսմանյան թուրքիացին. էջ 120:

րում էր տեղի ազգային գործերը: Կիլիկիայի հսկա թեմը չէր ենթարկվում ոչ մի պատրիարքության, ոչ էլ Եջմիածնի ամենայն հայոց կաթողիկոսին. փաստորեն, դարեր շարունակ նա եղել էր Եջմիածնի հակաբոռը: Կրոնական այդ պառակտումը ավերիչ հետք էր թողել ազգային հասարակական կյանքի վրա: Դանձն առնելով վճռել Սսի կաթողիկոսի ընտրության հարցը, ետ կանչելով ինքնիշխան, ժողովրդի մեջ խռովություններ սերմանող, հուզող և ալեկոծող անարժան Նիկողոս Եպիսկոպոսին, Կ.Պոլսի Ազգային ժողովը այդ մի ակտով ցանկանում էր վճռել մի քանի խնդիրներ: Դեմք այդ խնդիրների լուծման համար էլ տեղի ունեցան երկարուծից վիճաբանություններ Ազգային ժողովում:

Նախ՝ վիճաբանություններ սկսվեցին այն հարցի շուրջը, թե ո՞վ պետք է ընտրի Սսի կաթողիկոսին, վիճակի ժողովու՞՞ղը, թե՝ Ազգային ժողովը: Այդ հարցի լուծումը խլեց երկու ամիս: Ազգային երեսփոխաններից մեկը դիպուկ բնութագրեց. «Եթե որ մենք չկրնանք լուծել այս խնդիրները, կարծեմ խնդիրը մեզի պիտի լուծե»: Վերջապես կայացվեց որոշումը, որի համաձայն կաթողիկոսին պետք է ընտրի ժողովուրդը, իսկ վավերացումը կատարի Կ.Պոլսի կենտրոնական վարչությունը: Այդ որոշումից քիչեցին նոր վիճաբանություններ այն հարցի շուրջը, թե ինչ պետք է հասկանալ կենտրոնական վարչություն ասելով՝ Ընդհանո՞ւր թե Խառն ժողով: Նման վիճաբանությունները ցույց են տալիս, թե ինչ գրախոսություններով էր ժամանակ վատնում երկու և կես միլիոն հայության բախտը վճռող Ազգային ժողովը: Վիճաբանություններին վերջ դրին պատրիարքի սրահության կոչող խոսքերը. «Վիճաբանությունը... սահման մի պիտի ունենա»<sup>1</sup>:

Վերջնականորեն որոշում հանվեց, որ Սսի կաթողիկոսի վավերացումը կատարի Ազգային ժողովը:

Կ.Պոլսի պատրիարքարանին մեծ դժվարությամբ հաջողվեց դադարեցնել Սիսն ալեկոծող խռովությունները: Կառավարության աջակցությամբ պատրիարք Խրիմյանին հաջողվեց ետ կանչել Կիլիկիայի կաթողիկոսական գահը զավթած Նիկողոս Եպիսկոպոսին. Սիս ուղարկվեց Սիմոն Եպիսկոպոսը՝ կաթողիկոսական ընտրությունները կազմակերպելու և անցկացնելու համար: 1871թ. հոկտեմբերի 21-ին Սսի մակարական գահը հավաքվում են Ադանայում, առաջադրում չորս թեմի երեսփոխանները հավաքվում են Ադանայում, առաջադրում չորս

1. Այս մասին մանրամասն տես՝ Գ.Ա.Թ., Հ. Առաքելյանի ֆ., գ. 182, էջ 45. նաև՝ «Փոք», 1877թ. N 4, նաև՝ Առաքելյանի 1870-74թթ., էջ 117:

եպիսկոպոսներից բաղկացած կաթողիկոսական թեկնածուների ցուցակ: Բոլոր թեկնածուներն էլ Եջմիածնում ծեռնադրված, նրա գերակայությունն ընդունած եպիսկոպոսներ էին: Զայների մեծամասնությունն ստանում է Մկրտիչ Եպիսկոպոսը, նրա վավերացումը դրվում է Ազգային ժողովի առաջ 1871-ի նոյեմբերին: Այդ նիստում Գրիգոր Օտյանի ելույթը և առաջարկությունը ընդգծում են այն կարևորությունը, որ ուներ Կիլիկիայի կաթողիկոսի վավերացումը: Նա նշում է, որ դարեր շարունակ Սսի կաթողիկոսը եղել է Եջմիածնի հակաբոռը, այսինքն չի ընդունել Անենայն հայոց կաթողիկոսության գերակայությունը. այսինքն՝ «ապստամք է, ուրեմն այդ կաթողիկոսությունը կարգավորյալ անիշխանություն է, գայթակղություն մը, անպատվություն մը»<sup>2</sup>: Օտյանն առաջարկում էր վերացնել ոչ թե Սսի կաթողիկոսությունը, այլ նրա հակաբոռ լինելու հանգամանքը: Պատրիարքն իր հանձնությունը մեծագույն խոհեմությամբ վավերացնում են Եջմիածնին ենթակա Եպիսկոպոսի ընտրությունը կաթողիկոսի պաշտոնում, Վերացնելով նրա հակառակ և ապստամք վիճակը: Իր ելույթում Խրիմյանը պատճական դեր է հատկացնում այդ ընտրության ու վավերացմանը: «Այս ընտրությամբ Դայաստանեաց Եկեղեցվու մեջ չորս հարյուր տարինե ի վեր կանգնված պառակտնան և խորության ամբարտակ կը կործանի... Կիլիկիո ժողովուրդը Ս.Եջմիածնի աթոռնեն ծեռնադրյալ Եպիսկոպոս նը իրենց կաթողիկոս ընտրելով խորության ամբարտակն իրենց ծեռող կործաննեցին, և երկու արոռոց մեջ հաստատվելիք հարաբերությանց գործը: Ես, որ Եջմիածնի Եպիսկոպոս և Անենայն հայոց Ս.կաթողիկոսի փոխանորդն եմ, այս ընտրության մեջ Մայր Աթոռող հակառակ բան մը չեմ տեսներ բնավ, այլ ազգային Եկեղեցվու միության ապահովությունը, ուստի կառաջարկեմ, որ վավերացումը կատարվի»<sup>2</sup>: Այդ նիստում պատրիարքի առաջարկությունը պաշտպանեց Կ.Պոլսի ազգեցիկ Եպիսկոպոսներից մեկը՝ Խորեն Նարակը իր ելույթում: Թվում էր, որ կարելի էր վերացնել նաև Սսի կաթողիկոսությունը, քանի որ վերացվում էր նրա հակաբոռությունը: Այդտեղ էլ միջամտեց Գ.Օտյանը՝ ցուցաբերելով քաղաքական գործին հատուկ խոհեմություն և շրջահայեցություն: «Սիս պետք է պահպանել՝ Եջմիածնը պահպանելու համար», - հակասական կաթութեցյալ դրույթով, նա մատնանշեց, որ ցարական գերիշխանության տակ գտնվող Եջմիածնը, Ա-

1. Առենագրաբինը..., 1870-74թթ., էջ 94:

2. «Մասն», 1871թ., N 1166:

մենայն հայոց կաթողիկոսությունը, որի անկախությանը մեծ հարված էր հասցել 1836-ին հաստատված «Պոլոյքենիո»-ով, ամեն րոպե գտնվում է գոյության վտանգի առաջ: Իսկ եթե իր գոյությունը պահպանի Սսի կաթողիկոսությունը, ցարական բյուրոկրատիան կվախենա, որ Ամենայն հայոց կաթողիկոսությունը կարող է նաև տեղափոխվել Կիլիկիա. այդ ակտով Ռուսաստանը կվորցներ իր ազդեցությունը արևմտահայության վրա, հետևապես, շահագրգոված է Եջմիածնի՝ իբրև հայոց կաթողիկոսության կենտրոնի գերակա գոյությամբ: Կ.Պոլսի Ընդհանուր ժողովը ձայների մեծանանությամբ հաստատեց և ընդունեց այդ հանգանանքը, վավերացրեց Մկրտիչ կաթողիկոսի ընտրությունը:

Թվում էր, վերջապես լուծվել էր այն թնջուկը, որ երկար տարիների ընթացքում հուզել էր ողջ արևմտահայությանը, այդ հարցին նվիրված երկարատև վիճարանություններով ալեկոծել Ազգային Ընդհանուր ժողովը, խառնակել Կիլիկիայի հայության միտքն ու եռանդը: Սակայն Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Դ-ն բոլորովին այլ կարծիք էր: Ըստ երևույթին, բարձրաստիճան հոգևորականներից ոնանք՝ միացած պատրիարքին ընդդիմադիր էֆենդիներից մի քանիսի հետ, կաթողիկոսին այլ տեղեկություններ էին հաղորդել: Այդ դավերի հետևանքը եղավ Գևորգ կաթողիկոսի հեռագիրը՝ ուղղված Կ.Պոլսի պատրիարքին, որով նա պախարակում էր Կ.Պոլսի իր փոխանորդին՝ Մ.Խրիմյանին, Եջմիածնի նվիրական ավանդություններին դեմ գնալու համար: Դամանան բովանդակությամբ մի կոնդակ-հեռագիր Վեհափառ հայրապետն ուղղում է Կիլիկիայի նորընտիր կաթողիկոսին, նրա ընտրությունը համարելով ընթառություն Եջմիածնի դեմ: Դենց այդ օրերին կոնդակ ստացվեց Նար-Պեյի անունով, ուր Գևորգ Դ-ն, ստանալով Նար-Պեյի նամակը, իր զարմանքն էր արտահայտում, թե ինչպես է նրա աչքից վրիպել, «դավ խարդախությանց և գաղտնածածուկ լարանք»: Կոնդակից պարզ երևում էր, որ չնայած Ազգային ժողովում ընեցած իր դրական ելույթին, Նար-Պեյը կաթողիկոսին գրած իր նախակում եղելությանը տվել էր այլ մեկնաբանություն: Կաթողիկոսի կոնդակը, նրանում արտահայտված դժգոհությունը հուզումների նոր ալիք բարձրացրեց Ազգային ժողովում: Խրիմյանը ցանկություն հայտնից մեկնել Եջմիածնին, անձամբ հաշվետվություն տալ վեհափառին, նոր կայացնել իրենց հավատարմությունն ու հնազանդությունը Արարկայացնել իրենց հավատարմությունն ու հնազանդությունը:

որարքի այդ ցանկության իրականացումը: Այս անգամ Խրիմյանը մի հանգանանալից նամակով աշխատեց ցրել կաթողիկոսի անհիմն կասկածներն ու երկյուղները. նա հիմնավորում էր այն հանգանանքը, որ այդ ընտրությամբ Սսի կաթողիկոսը պատասխանատու է դառնում Կ.Պոլսի պատրիարքարանի առաջ, իսկ վերջինս ենթակա է կաթողիկոսությանը, հետևաբար Սսի կաթողիկոսը ենթակա է Ամենայն հայոց կաթողիկոսին: Դա նշանակում էր՝ ոչ մի սուբյեկտի կողմից միտում չկա ոտնձգություններ կատարել Ամենայն հայոց կաթողիկոսի իրավասությունների նկատմամբ: Սակայն այդ նամակը չգոհացրեց Դայոց հայրապետին, իսկ Ազգային ժողովում և նրանից դուրս ընդդիմությունը պատրիարքին ընդդիմադիր մամուլի օրգանների հետ միասին «Փունջի» ղեկավարությամբ հարձակումներ սկսեցին Խրիմյանի դեմ, նրան մեղադրելով հայ եկեղեցու և Եջմիածնի շահերը ոտնահարելու մեջ: Դրան հաջորդեց Գևորգ Դ-ի նամակն՝ ուղղված պատրիարքին, որը լի էր մեղադրանքներով և հանդիմանություններով: Այդ նամակը դարձավ Ազգային Ընդհանուր ժողովի քննարկման առարկա: Վիճաբանություններն այդ հարցի շուրջը տևեցին մինչև 1873թ., մինչև ծանծացած պատրիարքը առկախ բողեց հարցը, հաստատված համարելով Ազգային ժողովի որոշումը Սսի կաթողիկոս Մկրտիչի վավերացման վերաբերյալ, բողեց նրան Կիլիկիայի վիճակում՝ ժողովորդի մեջ վերստին կրքեր ու դժգոհություններ չքորոքելու հաճար: Նման կերպ լուծվեց Ազգային ժողովի նիստերը տարիներ շարունակ գրադեցնող այդ կնճռոտ հարցը:

\*\*\*

**Աղթամարի կաթողիկոսի ընտրության հարցը** Ազգային ժողովի ըննարկման առարկա էր դարձել դեռևս Խրիմյանի պատրիարք ընտրվելուց առաջ, 60-ականների կեսերից: Բանը նրանում էր, որ Աղթամարի եպիսկոպոս Խաչատուր Շիրոյանը իր նախորդի՝ Պետրոս Բյուլբյուլի կենդանության օրոք բռնությանը իրեն օծել էր կաթողիկոս «ի վերա տան Աղթամարա», ապա վարձու մարդասպանի միջոցով սպանել էր տվել նրան: Արևմտահայ նամուլը, մասնավորապես գավառահայ առաջին երկշաբաթերթը՝ «Արծվիկ Տարոնո»-ն տպագրում է այդ բռքը, գումում եկեղեցու բարձրաստիճան սպասավորի քատմնելի արարքի նախին: Խաչատուր կաթողիկոսի ապօրինությունների հարցը տասնյակ տարիներ գրադեցրեց Ազգային ժողովի նիստերը: Խրիմ-

## ԵՐԵՎԱՆԻ ԿՈՍՏԱՆԱԴՅԱՆ

յանի պատրիարքության օրոք Աղթամարա կաթողիկոսը հրավիրվեց Կ.Պոլիս, նրա ընտրության ապօրինությունը քննարկելու և անհրաժեշտ վճիռ ընդունելու համար: Սակայն վերջինս չսպասեց քննարկումների ավարտին և մեկնեց Աղթամար: Խրիմյան պատրիարքին ևս չհաջողվեց ավարտին հասցնել խաչատուր Շիրոյանի կաթողիկոսության խնդրի քննարկումը: Միայն Ներսէս Վարժապետյանի պատրիարքության օրոք, ժամանակի գործիչներից մեկի՝ Մատթեոս Մանուրյանի դիպուկ արտահայտությամբ «Ներողագիր» շնորհվեց նրան և վերջինս շարունակեց իր ազգադավ գործունեությունը դեռ երկար տարիներ, մինչև 1895թ., երբ հայ հեղափոխական գործիչները կազմակերպեցին նրա ահարեկումը նույն ընթացքի պատճառով: Նրա մահից հետո Աղթամարի կաթողիկոսի նոր ընտրություն չկատարվեց և 12--րդ դարից ի վեր հաստատված կաթողիկոսությունը (1113թ.) վերացավ. նրան ենթակա թեմները անցան Կ.Պոլսի պատրիարքարանին:

\*\*\*

Խրիմյանի պատրիարքության օրով Ազգային ժողովի նիստերը երկար ժամանակ հոգեցին գավառի հոգևոր առաջնորդների ընտրության խնդիրները: Առանձնակի ուշադրության է արժանի Վանի և Բրուսայի հոգևոր առաջնորդների ընտրության խնդիրը, որոնց շուրջը բարձրացած վիճաբանությունները արտահայտում էին հայ հասարակության մեջ գտնվող տարբեր սոցիալական ուժերի ներհակությունները:

Վաճռում դեռևս 1860-ական թվականներից պատրիարքական փոխանորդ կամ հոգևոր առաջնորդի տեղակալն էր (Գաբրիել Շիրոյանի փոխանորդը) Պողոս վարդապետ (ապա Եպիսկոպոս) Մելիքյանը: 1860-ին, երբ Միքայել Նալբանդյանը գտնվում էր Կ.Պոլսում, Ազգային ժողովը մայրաքաղաք է կանչում Պողոս վարդապետին՝ նրա վրա եղած մեղադրանքները քննելու: Պողոսը փախչում է դատն ավարտելուց առաջ: Կրոնական ժողովը վճիռ է արձակում՝ արգելել Պողոսին հոգևոր պաշտոն վարելը մինչև արդարանալը: Փաստորեն Ազգային ժողովն անկարող է գտնվում իրեն ենթակա մի հոգևորականի ըստ արժանվույն պատժելու, այլ գգուշացնում է Ամենայն հայոց կաթողիկոսին, որ «հիշյալ վարդապետը կերպով մը Եպիսկոպոսության աստիճան ծեռք բերելու փորձ չընե»<sup>1</sup>: Նույնիսկ այդ գգուշացնումը Ազգային ժողովի անկարողության խոսուն վկայությունն է:

1. Ասհմագրութիւնը Ազգային ժողովոյ, 1860-1874թթ., էջ 39: Պողոսյան-ապօրույսան պայքարի մասին ամենամասն՝ Եղուստանլյան, Գարեգին Մրգանձանց, էջ 101-107:

## ՄԻԹԻՒ ԽՐԻՍՏՅԱՆ. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԲԱՂԱՔԱԿԱՆ գործունեությունը

Ողջ Վասպուրականը փոթորկված էր: Տեղի հայությունը բաժանված էր երկու խմբավորումների՝ Պողոսի կողմնակիցները՝ պողոսյան և հակառակորդները՝ ապօրույսյան: Դամակրությունների և հակառությունների այդ շղթան հասնում էր մինչև օսմանյան կայսրության մայրաքաղաքը: Պահպանողական մտայնության ներկայացուցիչները, Վաշխառուները, համեմատաբար ունենոր Վերնախավը Պողոսի հենարանն էին: Նրան ընդդիմադիր հոսանքը գավառի արհեստավորական խավն էր, գյուղացիությունը, ժողովրդական լայն զանգվածները, որոնք իրենց մաշկի վրա էին զգացել քուրդ ցեղապետների, հայ վաշխառուների և Պողոսի դաշինքի ողջ սարսափը:

Վանեցի ականատեսը սրանտորեն գրում էր, որ ամբողջ արևմտահայությունը բաժանված էր Պողոսյան և Ապօրույսյան խմբավորումների. «Ամեն ոք գիտեր թե Գևորգ Դ կաթողիկոս, Վեհապետյան, Չամչյան, Մանկունի Եպիսկոպոսները Պողոսյան էին, թե Նար-Պեյ, Օրմանյան, Աշքաբեյ» Ապօրույսյաններ: Աշխարհականներեն, ամենուն հայտնի էր, թե Նորատունկյան, Ունճյան, Յուսուֆյան, Կյուլպենկյանները Ապօրույսյաններ էին, մինչդեռ Մաքսուտ Միհոն պեյ, Նուրյան՝ Պողոսյան»<sup>1</sup>:

Պողոսին հաջողվում է Տրավիգոնով անցնել Վան և Վարչության կամքին հակառակ, նորից վարել հոգևոր առաջնորդի պաշտոնը: Անցնում է տասը տարի: Պատրիարքական գահ է բարձրանում Մկրտիչ Խրիմյանը, որն ականատես և մասնակից էր եղել Վանի երկու խմբակցությունների՝ պողոսյանների և ապօրույսյանների միջև մղված երկարատև պայքարին, հասարակ ժողովրդի կրած գրկանքներին, Պողոսի և նրա կողմնակից վաշխառուների՝ Մարությանի, Պանիրյանի, Խաչաղանյանի չարաշահումներին, քուրդ ցեղապետների՝ Պողոսի հովանավորությանը գործած եղեռնագործություններին:

Ազգային սահմանադրությունը, չնայած սուլթանի կողմից վավերացվել էր 1863-ին, դեռևս չէր գործադրվում բուն Արևմտյան Հայաստանի տարածքում: Գավառից դուրս եկած պատրիարքը իր ջանքերն է գործադրում Ազգային սահմանադրությունը տեղերում գործադրելու, ազգային գործերը սահմանադրական սկզբունքներով վարելու համար: Սահմանադրության գործադրիչը, ըստ սահմանադրության, պետք է լիներ տվյալ թեմի կամ վիճակի հոգևոր առաջնորդը: Սակայն Խրիմյանը Վան-Վասպուրականում իբրև Սահմանադրության հայության կամքի կաթողիկոսության խոսուն վկայությունն է:

1. Ա. Թերգիալաշյան, Արծիվը իր բայրին մեջ, էջ 188:

գործադրիչ ուղարկում է իր սանին՝ Գարեգին Մրվանձտյանցին, որն այդ օրերին վարում էր Տարոնի Սր. Կարապետ վանքի վանահայրության փոխանորդի պաշտոնը: Այդ բանը նշանակում էր դնել հոգևոր առաջնորդի՝ Պողոսի հեռացման հարցը: Պատրիարքի սանն ու զինակիցը առանց երկնչելու մեկնում է Վան՝ նոր հոգևոր առաջնորդի ընտրությունները կազմակերպելու, ազգային սահմանադրության սկզբունքները հայաշատ այդ նահանգում արմատավորելու համար: Պողոսը երդվյալ հակասահմանադրական էր այդ պայքարի դեռ առաջին օրերից, որովհետև վարչական բարենորոգումները սահման էին դնելու նրա չարաշահումներին, կտրելու էին նրա շահույթի աղքյուրները<sup>1</sup>: Վանում Մրվանձտյանցը անհաջտ պայքար է մղում Պողոսի և պողոսյանների դեմ, պատրիարքին ուղղած նանակներում մանրամասն հաշիվ տալիս նրա գործած չարիքների նախին, միջոցներ առաջարկում նրան հեռացնելու համար: Սակայն Ազգային ժողովում ուժեղ դիմադրություն էր ցույց տալիս Պողոսին պաշտպանող էֆենդիական վերնախավը: Այդտեղից ճնշում էին գործադրում և պատրիարքի, և Վանի հայության վրա, ստիպելով Պողոսի անունը մտցնել առաջնորդական ընտրելիների ցուցակի մեջ: Ղալաքիո օջախը, որ իր մեջ նիավորում էր պահպանողական խմբավորումներին և պատրիարքի ընդդիմության դեկավարն էր, տոն էր տալիս Խրիմյանի դեմ ծավալված պայքարին, հովանավորում պատրիարքին հակառակորդ մանուկի գործունեությունը<sup>2</sup>: Խրիմյանն ստիպված դիմում է կտրուկ միջոցների: Նա իրաճայում է Պողոսին՝ հեռանալ Վանից, հաստատվել ուչքիլիսեի վանքում: Իսկ Ազգային ժողովում պարզ ու որոշակի նա հայտարարում է Պողոսի կողմնակիցներին, թե Վերջինիս անունը չպետք է մտնի ընտրելիների ցուցակի մեջ: Դա առաջացնում է ընդդիմության ուժեղ հակագործողությունը. նրանք հարծակում են կազմակերպում պատրիարքարանի վրա: Պատրիարքը դիմում է կառավարության օգնությանը և նրա միջամտությամբ Պողոսին հեռացնում Վանից: Իրենց դիրքերն ամրապնդելու համար պողոսյանները և անձանք Պողոսը պատրաստ էին պատրիարքին մեղադրել պետական դավաճանության մեջ<sup>3</sup>: Պատահական չեն հնչում Պողոսի սպառնալից խոսքերը. «Խիանաթ Խրիմյան. Զեյթընը ապստամբեցուց թագավորի դեմ, այնքան

արյուն թափել տվեց: Մուշը պիտի ապստամբեցներ, նույնպես ըրավ և Թիֆլիզը: Ստամբուլ որքան խռովություն կա ազգին մեջ, իսկանաքրություն կա տերության դեմ, իեղինակ Խրիմյանն է... Չասնիմ ես Պայագիտ, հեռագրեմ սետրեզեմին, վալիին, թագավորին, ազգի վարչության, ես զինք ծգեմ խորխորատ, և դատ ալ պիտի պահանջեմ...»<sup>1</sup>: Այս խոսքերով փաստորեն Պողոսը կառավարությանն է մատնում հայոց պատրիարքին: Ազգային ժողովի էֆենդիները Պողոսին Վանից հեռացնելը համարում են հակասահմանադրական քայլ: Նոյնն են պմդում նաև Վանի նրանց զինակիցները: Ուշադրության արժանի է Խրիմյանի նամակը ուղղված Վանի մեծահարուստներից մեկին՝ Մանուկ աղա Թերլեմեզյանին: Նամակից պարզվում է, որ Վանի պողոսյանները հեռագրով բողոքել են պատրիարքին, իսկ Վերջինս վճռական պատասխանել է. «Դեռագրով արդեն ծանուցի, որ եղած որոշումն անշրջելի է և այլևս հնարավոր չի, որ փոխվի»<sup>2</sup>: Նոյն նամակում պատրիարքը բացատրում է իր հայրենակիցներին, որ չնայած սահմանադրությունը արդեն տասներկու տարի գործադրվում է, սակայն Վան-Վասպուրականում այն ընդունելության չի արժանացել, Վանեցից մերժել են այն և հանկարծ առաջնորդի ընտրության հարցում դարձել են սահմանադրության պաշտպաններ և կողմնակիցներ: «Պետք է գիտնալ, որ գավառներու մեջ գտնված պատրիարքական փոխանորդներ սահմանադրապես ընտրված չըլլալով, նոցա փոփոխության համար ամեն ժամանակ պատրիարքն իրավունք ունի և ահա այդ իրավունքով Պողոս վարդապետը դադարյալ է յուր պաշտոննեն: Կաղաքեմ, որ չստիպեք զիս այլևայլ իրավացի պատճառներ հառաջ բերել այս նախին: ...Պողոս վարդապետի ժամանակն անցավ այլևս. Երկա ժամանակի պահանջման համեմատ կարող չէ հարյուր հազար բնակիչ ունեցող գավառի նը առաջնորդություն ընել... Վստահ եղեք, ես հայրենադրուժ չեմ, այլ ին բոլոր իղծս այն է, որ հայրենիքս բարգավաճի և հառաջադիմե առաջնորդի նը ծեռքով, որ կսիրե լուս, դպրոց, ուսումն և ազատություն»<sup>3</sup>: Պատրիարքը հորդորում է իր հայրենակիցներին վերականգնել Վանի անողորոց, վերահաստատել խաղաղությունը և քաջ գիտակցել, որ ոչ մի պաշտոն՝ լինի հոգևոր թե աշխարհիկ, ոչ հավերժական են, ոչ ժառանգական. ամեն ինչը պետք է ծառայի հայրենաշինության սուրբ գործին:

1. Դիմում Աշ-Հավլանենիայան, Նալբանդյանը և նրա մամնանելը. Խ. 1, էջ 374:

2. ԳԱՓ, Մէկրմյանի ֆ., գ.141, էջ 27:

3. Նոյն տեղում:

1. Տես, Աշ-Հավլանենիայան, Նալբանդյանը և նրա մամնանելը. Խ. 1, էջ 374:

2. Այս մասին մանրամատ՝ Ա.Խառաւայան, Արմամանայ մամայը և գրաբնաբյունը Օսմանյան թարթիայում. էջ 119-120:

3. «Փամբ», 1872թ., 27 հունվիս:

Չնայած Խորիմյանի ձեռնարկած վճռական միջոցառումներին, 1872թ. Պողոսի պաշտոնանկությանը և Ուչքիլիսէի վանքում առանձնանալը, Պողոսյան-Ապողոսյան պայքարը չմարեց և ընդունեց այլ դրսերումներ: 1874-ին Կ.Պոլսում հրատարակվեց մի գրքույկ՝ «Ամբաստանություն Վանա Պողոս վարդապետին Գերա»<sup>1</sup> խորագրով: Գրքույկի անհայտ հեղինակը մեկ առ մեկ թվարկում էր Պողոս Մելիքյանի բոլոր հանցագործությունները, համարձակ քննադատում Ազգային ժողովի և վարչության այն անդամներին, որոնք պաշտպան էին կանգնել հետադեմ և հանցագործ հոգևորականին:

Նույն այդ ժամանակ, դարձյալ Կ.Պոլսում լույս տեսավ մի այլ գրքով՝ «Խրիմյան և գործք յուր, հերքումն ամբաստանագրի Պողոս վարդապետի»<sup>2</sup>: Գրքի խոսուն վերնագիրը մատնանշում էր անհայտ հեղինակի կողմնորոշումը դեպի գավառի և կենտրոնի աղայական վերնախավը: Խրիմյանի և իր զինակիցների պաշտպանությամբ ժամանակին ծայն բարձրացրեց ապագայի արևելահայ հռչակավոր վիպասանը՝ ժողովրդավարական սկզբունքներ դավանող Հակոբ Մելիք-Շակորյանը (Ռաֆֆին): Քննության առնելով՝ «Ամբաստանությունը», մեղադրելով Պողոսին իր գործած ոճիրների համար, նա Կ.Պոլսի Ազգային վարչության անդամների ուշադրությունը իրավիրում էր այն հանգանքի վրա, որ նրանք «չարիամարիեն ժողովրդի ծայնին, որպես ծշմարտության ծայնին, ի նկատի ունենալով այն սարսափելի ինտևկանքը, որ կարող է ծագել այդպիսի դեպքերից»<sup>3</sup>:

Պողոս Մելիքյանի հոգևոր առաջնորդի լինելիության հարցը անցավ երկարատև քավարանով, ապրեց մակընթացություններ և տեղատվություններ և կրկին բորբոքվեց 80-ականներին (որի մասին կիսովի հաճապատասխան գլխում):

**Բրուսայի հոգևոր առաջնորդի խնդիրը.** Խրիմյանի պատրիարքության փոթորկող իրադարձություններից էր Բրուսայի հոգևոր առաջնորդի խնդիրը։ Այդ թվականներին Բրուսայի հոգևոր առաջնորդի պաշտոնն զբաղեցնում էր Քարդուղիմեոս Եպիսկոպոսը, ինքնիշխանի անձնավորություն, որի չարագործությունները դարձել էին ժամա-

1. Ամբողջական Վաճառքային Պատրաստություն վերա, Կ.Պլիս, 1874: 2. Ամբողջական Վաճառքային Պատրաստություն վերա, Կ.Պլիս, 1874:

2. Երիմյան և զորքը յուր, կատ եղբարտն ամբողջանազգի Պալս Վարդապետը, Գ-Ամի, 15:

Երիմյան Տեր Ալքալչյանն իր «Գանձեր Ասասուրաբանի» աշխատարյան մեջ նշում է, որ այլ Երիմյան Տեր Ալքալչյանն իր «Գանձեր Ասասուրաբանի» աշխատարյան մեջ նշում է, որ այլ պրայիկ հայինակր վանեցի ճահատեսի Հավիաննես Բարոյ Վարժապետ էր. Պալս Սովորյանի աջ տագուհը, Երիմյան Կալվածութիւնյանախան, առա նույն աշխ-ը. Էջ 145:

3. Ըստ այս էտիլենի ժողովածու, հ. 9, էջ 76.

նակի պարբերականների նկարագրության առարկա<sup>1</sup>: Նրա «սխրագործությունները» հար և նման էին Վանի Պողոսի արարքներին. կաշառակեր, ընչաքաղց, անբարոյական, դպրոցի և եկեղեցու գումարների դրամաշորթ, պտղի տուրքից հրաժարվող գյուղացիներին զապթիեների օգնությամբ հալածող: Դա ոչ լրիվ ցուցակն է այն հանցանքների, որոնց մեջ մեղադրվում էր եպիսկոպոսը: Խրիմյանի դեկապարությամբ պատրիարքարանը քննություն է սկսում. Բարդուղիմեոս եպիսկոպոսը հրավիրվում է Կ.Պոլիս՝ պատասխան տալու իր կատարած հանցանքների համար: Ազգային ժողովում Բարդուղիմեոսը չի ընդունում իր դեմ հարուցած մեղադրանքները: Սակայն Բրուսայից մի ստվար խումբ ժամանում է Պոլիս և եպիսկոպոսին դեմ առ դեմ հաստատում նրա կատարած հանցանքները: Բարդուղիմեոսը առերես բանավոր հայտարարություն է անում առաջնորդությունից հրաժարվելու նասին, ապա ծածուկ փախչում Բրուսա, երբ դեռ դատը չէր ավարտվել: Դատն ավարտելու համար նրան ուղղված պատրիարքարանի հրավեր գործությունները մնում են անպատճախան: Դանցագործ հոգևորականի անհնազանդությունը զսպելու համար պատրիարքարանը ստիպված էր դիմել Բ.Ռուս օգնությանը: Ազգային ժողովը հավանություն է տալիս դրան: Սակայն Բրուսայի կուսակալ Ալի Միրզա փաշան դառնում է հանցագործ եպիսկոպոսի պաշտպանը և Բ.Ռուս առաջ նրան ներկայացնում է իբրև զոհ: Այստեղ առկա էր կառավարական պաշտոնյայի և հոգևոր վերնախավի ներկայացուցչի դաշինքը ժողովրդի և նրա շահը պաշտպանողների դեմ: Ուշադրության արժանի է պատրիարք Խրիմյանի նամակը փախուստի դիմած և արդարադատությունից խույս տված եպիսկոպոսին: Քրիստոնեական ներողամտության, բայց և պահանջկուտ ու խիստ պատրիարքի նամակ է այդ, որ զգաստության է հրավիրվում քրեական հանցանք գործած բարձրաստիճան հոգևորականին, որը ուժահարել էր ավետարանի պատվիրանները. «Դուք մոռանալով իսպառ Ձեր քարոզած սուրբ գիրքը, մոռանալով նաև Ազգային սահմանադրության օրենքը, ըստ անենային ընբռստանալով ազգային իշխանության դեմ, եւեր գնացեր. աղոյոց տիրապետել վիճակիդ: ...Մինչդեռ հեղակարծ հանցավոր անբաստանյալ էիր, այժմ ամեն հանցանք բարդեցիր անձիդ վրա. եթե տակավին զքեզ անբաստանողներուն բողոքած հան-

I. «Մասիս», 1871, N 1059, 1065

շանքները առ ոչինչ հաճարվեն, բավական է քեզ այս մեծ հանցանք, զոր ի վերջո տղայաբար գործեցիր, այն է՝ ոտնահարել, ազգային իշխանությունը: Քրեական հանցանք է այս, ոչ մի իշխանություն կարող է ներել Աստծո և աշխարհի առաջ<sup>1</sup>: Խրիմյանը հորդորում, համոզում, խորհուրդ է տալիս՝ ետ դառնալ Կ.Պոլիս, փրկել իր պատիվը, ամենից առաջ՝ եկեղեցու պատիվը: Դակառակ դեպքում պատրիարքը հայտարարում է, որ հավիտյան նա զրկվում է հոգևոր առաջնորդի պաշտոն վարելու իրավունքից ոչ միայն Բրուսայում, այլև որևէ այլ վիճակում: Սակայն իզուր անցան պատրիարքի հորդորները: Միայն այդ ժամանակ պատրիարքը դարձյալ դիմեց Բ.Դուռ և նրա նիշնորդությանք անհնազանդ եպիսկոպոսը բերվեց Կ.Պոլիս: «Փունջը» իր կողմնակիցներով կատաղի աղմուկ բարձրացրին՝ պատրիարքին նեղադրուկ մատնության և դավաճանության համար, «Ժողովրդի աղայանքն ու պաղատանքը ոտնակոխ անելու» մեջ: Ինչպես տեսնում ենք, պայքարող երկու կողմերն էլ հանդես են գալիս ժողովրդի անունից: Ազգային ժողովի էֆենդիները միացած «Փունջին» պահանջում են պատրիարքի հրաժարականը: Իսկ էջմիածնում Անենայն հայոց կաթողիկոսության պաշտոնական օրգան «Արարատը»-ը ծայնակցում էր պատրիարքի հրաժարականը պահանջող լրագրերին, դառնակում նրանց խոսափող<sup>2</sup>:

Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցին չէր ներում Խրիմյանի դիրքորոշումը Կիլիկիայի կաթողիկոսի ընտրության հարցում և հարկ եղած ժամանակ միանում էր նրա թշնամիներին: Դրան հակառակ դեմոկրատական մասնություն անհաջող պայքար էր մղում Էֆենդիական, կղերաաղայական վերնախավի դեմ և պաշտպանում պատրիարքին: «Մեղվի» խմբագիր Յակոբ Պարոնյանը սպանիչ քննադատության ենթարկելով Խրիմյանի հակառակորդներին, «կաթողիկոսի հեղինակությունից առավել գերադասում էր պատրիարքի իրավասությունը՝ արևմտահայ կյանքի խնդիրների լուծման գործում<sup>3</sup>:

Պատրիարքը չերկնչեց նման հարծակումներից և անվարաս շարունակեց Բարդուղիմեոսի գործի քննությունը, որը զգձգվեց մինչև նոր Բաղաքական ժողովի ընտրությունը: Նորընտիր քաղաքական ժողովի կազմում տեղ գտան Ղալաթիո օջախի անդամները: Ազգային

1. գլուխ. Խըմիճյանի ք., գ.141, էջ 7:

2. «Природа». 1872, № 9, 10, 11:

3. Աշխատային, Արթուրական ճամույս և զբարենարյունը Սպասութեան դիմության է:

կենտրոնական վարչության կողմից որպես քննիչներ Բրուսա ուղարկվեցին Մատթեոս Խզմիրյանն ու Քրիստոսատուր Ղազարոսյանը: Նրանց մեծ դժվարությամբ հաջողվեց ստիպել Բրուսայի նորակազն Գավառական ժողովին առաջնորդ ընտրել Բարդուղիմեոս Եպիսկոպոսին: Ահա թե ինչ պայմաններում էր գործում պատրիարքը, ինչ դժվարությունների առաջ էր կանգնում նա իրեն վստահված ազգային գործերը վճռելու ճանապարհին: Պատրիարքարանը այդօրինակ ճնշումների տակ վերստին վավերացրեց հանցագործ հոգևորականի ընտրությունը:

Քանի որ Կ.Պոլսի հայոց պատրիարքարանը գտնվում էր Օսմանյան կայսրության մայրաքաղաքում, ապա կայսրության կազմի մեջ գտնվող հայկական այլ հոգևոր հաստատությունների նկատմանը նա գերակա դիրք ուներ: Արդեն խոսվեց, որ Կիլիկիո և Աղբամարա կաթողիկոսությունները ենթարկվում էին Կ.Պոլսի հայոց պատրիարքարանին: Սոտավորապես նույն վիճակն էր նաև հարաբերությունները Երուսաղեմի պատրիարքության նկատմամբ: Կերչինիս պատրիարքը ընտրվում էր Կ.Պոլսի Ազգային ժողովի կողմից, ստանալով պատրիարքի հավանությունը: Խորհմանն աշխատում էր լավագույն հարաբերություններ պաշտպանել Երուսաղեմի հայոց պատրիարք Եսայու հետ, իրեն համարելով նրա կրտսեր եղբայրը: Սակայն Խորհմանի տված խորհուրդները շոշափում էին համազգային շահեր: Ուշադրություն է գրավում 1872թ. մայիսի 4-ին թվագրված Խորհմանի նամակն ուղղված Երուսաղեմի պատրիարքին, ուր վերջինս գգուշացվում էր «հայոց նվիրական իրավունքները» աչքաթող չանելու հանար, քանի որ քրիստոնյա մյուս քույր Եկեղեցիների պետերը (իտալացիներ, գաղիացիներ և մանավանդ իսպանացիները) ոտնձգություններ էին կատարում հայերին պատկանող սուրբ վայրերի նկատմամբ: Բ.Դուռը հաշվի առնելով հայերի և մյուսների կշիռը, ավելի շատ պաշտպանում էր քրիստոնյա մյուս հզոր պետությունների հոգևորականների շահերը: Դրա հետևանքով տուժում էր հայ Եկեղեցին: Խորհմանի սրափ աչքը նկատում էր այդ բոլորը և գուշակում դրանից բխող բոլոր բացասական հետևանքները: «Երուսաղեմի խնդիրը այնպես մի ընթանեք, թե սուկ Երուսաղեմի պատրիարքին կամ հոն տեղի քանի մը հայ բնակչաց կվերաբերի, այլ ընդիանուր ազգին, որով

Եջմիածնա կաթողիկոսին և ինծ իսկ գլխովին»<sup>1</sup>: Խրիմյանը լավ գիտեր, որ հայերը հարաւուել են մեծ զոհերի գնով: Նա չէր խաբվում օսմանյան սուլթանների 1839, 1856քք. հայտարարած բարենորոգումների ժրագրից. «Իբրև թե ազատ դարու մեջ կապրինք, կրոն, եկեղեցին ազատ է, իրավանց բռնություն չիկա, բայց հայերուն զոհ դեռ պետք է շարունակի», - գրում էր Խրիմյանը պատրիարքին, խորհուրդ տալով գործել դիվանագիտությամբ, Ս. Չարության, և Ս. Ծննդյան տաճարները հայոց իրավասությունից դուրս չթողնելու, Բ. Դուան և «ամողոքելի ոստիսաց» վրեժինդրությունից գերծ մնալու համար: Պատրիարքը գիտեր, որ Ազգային ժողովն ու վարչությունը իրական և իրավաբանական ուժեր չեն, որոնց վրա իենվելով կարելի լիներ առաջ տանել ազգային խնդիրները. «Խորհուրդ կուտան անկեղծ մտերմաբար չվստահել այնչափ Ազգային վարչության ուժին վրա, այդ երևակայական ուժը Բ. Դուան քով կապվելով չի կարե այնչափ խլրտիլ, զի ամուր շղթաներ գինքն պարավանդած են»<sup>2</sup>: Այդ մարտը շահելու համար անհրաժեշտ է խոհեմություն և դիվանագիտություն:

Մյուս նամակը, որն ուղղված է դարձյալ Երուսաղեմի Եսայի պատրիարքին, թվագրված է նոյյն 1872-ի հուլիսի 14-ին: Ի տարրերություն առաջինից, այս նամակը շոշափում է ոչ այնքան կրոնական իրավասության խնդիրներ, որքան տնտեսական հարցեր: Երուսաղեմի Ս. Չակորյանց վաճքը արքունի ճարտարապետից նվեր էր ստացել մի ազարակ, որը նրան արժեցել էր 30-40.000 լիրա: Սակայն վաճքի միաբանությունը աչքաբող է արել ազարակի մշակությունը և նրանից ստացվում են չնչին եկանուտներ: Կ. Պոլսի պատրիարքն զգուշացնում էր, որ ուխտավորների նվիրատվությունները հետզհետեւ պակասում են, հետևաբար ունեցածը պետք է պահպանել և մշակել այնպես, որ նրանից ստացվող եկանուտները հետզհետեւ պվելանան և դրա շնորհիվ վաճքը տնտեսապես բարգավաճի: Ի՞նչ ուղիներ է նշում Խրիմյանը: Նա մատնանշում է, որ այն հողային կալվածները, որոնք մոտ են մայրաքաղաքին և մանավանդ նավահանգիստ ունեն, տասնապատիկ պվելի արժեք ունեն մյուսների նկատմամբ, որովհետև նրա արդյունքը՝ բերքը առավել դյուրին է սպառողին հասցնելը: Այդպիսի ազարակ է Երուսաղեմի նշված հողային կալվածքը, որի բերքը սակայն բեղմնավոր չէ, որովհետև նրա մշակությունը կատարվում է նախ-

1. Գ.Ա.Թ, Խրիմյանի ֆ., գ.141, էջ 25:

2. Նոյյն աւելացմ, էջ 26:

նադարյան եղանակով՝ «Նոյ նահապետին արոր և խոփով»: Երկրագործության զարգացման հետևյալ ուղին է առաջարկում Խրիմյանը. «Ինչպես ամեն լույս Եվրոպայեն կընդունենք, պետք է մշակության արվեստին գաղափարն և անկե փոխ առնումք և այս է միակ միջոցը՝ այսինքն պետք է փութաք, աճապարեք երկու հաս ընդունակ հասկավոր աշակերտներ դրկելի ի Գերմանիա, մեկն հատկապես երկրագործության արվեստը սորվելու համար, մյուսն՝ մանկավարժության. մեկն՝ հացի առատության համար, մյուսն՝ մտաց բարգավաճման. այս երկու պետք Երուսաղեմի համար հոգի և նարմին են»<sup>1</sup>: Նախապես զգալով Երուսաղեմի պատրիարքի առարկությունները՝ այդ առաջարկներն իրականացնելու նյութական դժվարությունների նասին, Խրիմյանը մանրամասն հաշիվ է կազմում, թե ինճ տարվա ընթացքում երկու ուսանող Գերմանիայում ուսանելու համար ինչքան ծախս կպահանջվի և համեմատում նրանց տված օգուտի հետ: Ազգի լուսավորության և երկրագործության զարգացման համար Խրիմյանը առաջարկում էր դիմել նույնիսկ արտակարգ միջոցների՝ վաճառել Ս. Չակորյանց տաճարի ուսկին ու արծաթը և ծեռնարկել այդ գործի կատարմանը: Խորիրդից բացի Խրիմյանը հայտնում էր, որ իր նախաձեռնությամբ Ազգային վարչությունը մտադիր է Շայաստանի ամեն մի գավառից մեկ ընդունակ աշակերտ ուղարկել Գերմանիա մանկավարժություն և երկրագործություն ուսանելու համար. «Շայոց ազգի ներկան ու ապագան բարվոքելու համար ամենեն օգտակար և զորավոր միջոցն է այս»<sup>2</sup>, փաստում էր պատրիարքը, ընդգծելով այն բարձր դերը, որ կարող են կատարել ազգի համար լուսավորությունը և երկրագործության բարձր մակարդակը:

Ավելորդ է այստեղ խոսել Խրիմյան պատրիարքի և Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Դ-ի ունեցած հարաբերության մասին: Չնայած Գևորգ Կոստանդնուպոլիսցու նկատմամբ ունեցած քննադատական վերաբերնունքին, Խրիմյանը արտակարգ հարգանք էր ցուցաբերում էջմիածնի Մայր Աթոռի նկատմամբ, անվերապահորեն ընդունում էր նրա գերակայությունը մյուս կաթողիկոսությունների և պատրիարքությունների նկատմամբ և աշխատում էր ամրապնդել նրա հեղինակությունը:

1. Գ.Ա.Թ, Խրիմյանի ֆ., գ.141, էջ 30:

2. Նոյյն աւելացմ, էջ 31:

\* \* \*

Իր գործունեությամ հենց սկզբից Ազգային ժողովի երեսփոխան-ների առաջ ուխտող պատրիարքը հայտնում էր, որ առաջին հերթին ուխտել է Տարոնի և Վասպուրականի բազմաչարչար գյուղացիական հոծ զանգվածների, ողջ արևմտահայ գյուղացիության առաջ՝ նրանց լլկման և առևանգման պատկերը բարձրացնել Կ.Պոլսի համեմատա-րար բարեկեցիկ կյանքով ապրող գաղթօջախի հայության, Ազգային ժողովի և ընդհուպ մինչև սուլթանական կառավարության առջև<sup>1</sup>: Տա-րոնում և Վասպուրականում գործելու տարիներին Խրիմյանի ան-միջական ղեկավարությամբ և Գարեգին Սրբանձտյանցի եռանդուն մասնակցությամբ կազմվեցին և Բ.Դուռ ու Յայոց պատրիարքարան ուղարկվեցին բազմաթիվ հանրագրեր, բողոքագրեր, որոնք պատճուն էին բուրք պաշտոնեության, հարկահավաքների գործած չարիքների, հարստահարությունների, քուրք բեկերի, աշիրեթապետների ամենօր-յա քոնությունների, լլկունների մասին: Այդ բողոքագրերի մի մասը 60-ական թվականներին իբրև լրագրական հոդվածներ լույս տեսան Կ.Պոլսի պարբերականներում («Մեղու», «Մանգումեի Էֆքիար») և մեծ աղմուկ առաջացրին պոլսահայության և կառավարական շրջանակ-ներում: Իսկ Յովհաննավանքի և Տարոնի մյուս վանքերի կողոպտնան ահազանգերը, Սլիքան գյուղի սրբապղծության դեպքը այնպիսի ի-րարանցում առաջացրեց, որ սուլթանական կառավարությունն ստիպ-ված էր դատ ու դատաստանի ներկայացումներ կազմակերպել Տա-րոնում: Եթե այդպիսին էր բողոքագրերի ընթացքը, երբ Խրիմյանը վարում էր Տարոնի հոգևոր առաջնորդի պաշտոնը, պարզ է, որ ավելի կուտեղանար 70-ականներին, երբ Խրիմյանը բարձրացել էր Կ.Պոլսի պատրիարքական գահին: Խրիմյանին Կ.Պոլսի ճանպարհող գավա-ռահայությունը անվերապահորեն հավատում էր նրա ուժերին, միան-տորեն կարծելով, թե Խրիմյանի պատրիարք դառնալուն պես կլուծվեն հայ ժողովոյին հուզող կնճռոտ հանգույցները: Նման կարծիք ուներ նաև Խրիմյանը: Ինչքանո՞վ էր հիմնավոր այդ մտայնությունը: Գե-րագնահատել Խրիմյանի գործունեությունը, նրա դերը, նշանակուն է հաշվի չարնել ժամանակը, միջավայրը, պատմական պայմանները: Պարզ է, որ Խրիմյանի պատրիարք դառնալուց հետո չդադարեց բո-

Մկրտիչ ԽՐԻՄՅԱՆ: Հաստակական բաղարական գործունեությունը

դոքագրերի հոսքը: Կ.Պոլսում լույս տեսնող լրագրերը լի էին գա-վառական հարստահրությունների նկարագրով: Բողոքողները պահան-ջում էին պատրիարքից հոգալ իրենց ցավերը, դարձանել իրենց վեր-քերը: Խրիմյանը մտադիր էր Սահմանադրության վերաբննությունից հետո ստեղծել Գավառական մասնաժողով, որը պետք է զբաղվեր բացառապես գավառահայության խնդիրներով: Սակայն Սահմանադ-րության վերաբննության խնդիրը զգձգվեց Խրիմյանի պատրիար-քության ողջ ընթացքում: Ուրեմն անհարժեշտ էր ծեռնարկել այլ մի-ջոցառումներ: Պատրիարքը ծեռնամուխ եղավ գավառական հարս-տահարությունների վերհանման խնդիրն: Ազգային ժողովում կազմ-վեց ու հաստատվեց մի հանձնաժողով՝ «Գավառական հանձնախումբ» անունով: Երկար գոյություն ունեցավ այդ հանձնախումբը, գավա-ռական հարստահարությունների վերաբերյալ հավաքեց մեծաքանակ նյութեր, կազմեց տեղեկագրեր Բ.Դռանը հանձնելու համար: Յայա-տանում տիրող հարստահարությունների մասին Խրիմյանը խորհում էր. «Յայատանի մեջ հարստահարությունը միշտ կա և պիտի շա-րունակե, քանի որ հոն երկու եղբայր, երկու ժողովուրդ կը բնակին, որոց մեկին ծեռք Ավետարան և մյուսին ծեռք Դուրան կա: Դուրանի հավատացյալը այնպիս կը կարծե, թե նա, որ հավատք չընծայեր անոր, արժանի է հարստահարության. իսկ Ավետարանը կըսե, ուրիշ իրավունք նը չունիս, այլ միայն պիտի հարստահարիս մինչ ի գե-րեզման: Դիմա ինչպես հաշտեցնելու է այս երկու ժողովուրդ իրարու հետ»<sup>1</sup>: Խրիմյանը Ազգային ժողովից պահանջում է խնդիր ներկա-յացնել Բ.Դռան առաջ՝ գործով ապացուցել իր ընդունած «Կյուլիանեի տեսքությը»՝ օրինագիրը, որպեսզի իսկապես հավասարության սկզբունքով պետական պաշտոնյա նշանակվեն նաև քրիստոնյանե-րը: «Երբ հավասարության սկզբունք ի գործ դրվի, և քուրդը տեսնե, թե քրիստոնեին մեջքն ալ պաշտոնական թուր նը կա կախված և կուսակալի պաշտոն կը բարձրանա, իրոք կընքրնե այն ատեն օ-րինագրքի ոգին»: Նոր պատրիարք ընտրված Խրիմյանը կարծես հա-վատ էր ընծայում Բ.Դռան խոստումներին և նրա հոչակած նոր օ-րենսդրությանը, այդ հավատով էլ Ազգային ժողովում նա հայտա-րարում էր. «Պիտի խնդրեմ կառավարութենեն և աղաքեմ բարձրա-պատիկ եպարքոսին, որ դուրան ու ավետարան աղոթարաններու

1. Խ.Մարտիրոս, 62ի. աշխ., էջ 71:

1. Առևանգության Ազգային ժողովայի 1870-1874թթ., էջ 161:

մեջ մնան, օրինագիրը համրանա ընկերական կենցաղավարության մեջ և հավասարությունը տիրեն»<sup>1</sup>:

Գավառական հանձնախումբը, ինպես և պատրիարքն ու Ազգային ժողովը այդ ժամանակ դեռևս պատրանքներ ունեին կենտրոնական իշխանության՝ արդարադատություն հաստատելու ցանկության նկատմանը և խորհում էին տիրող չարիքն ու հարստահարությունները վերացնել օրինական ճանապարհով: Նրանք կարծում էին, որ հարստահարությունների պատճառներից մեկն էլ այն է, որ գավառահայությունն անտեղյակ է նորահաստատ օրենքներին, չգիտի իրեն տված իրավունքների մասին: Այդ թերությունը վերացնելու նպատակով արևմտահայ պարերականները հողվածներ են տպում, բացում ժողովորդի աչքերը: Սակայն նրանք աչքաթող էին անում մի շատ կարևոր հանգամանք. թե գավառահայության ո՞ր տոկոսն է կարդում իրենց տպած հողվածները, կամ ընդհանրապես ո՞ր տոկոսն է գրագետ: Դրա համար էլ Կ.Պոլսի հայոց պատրիարքը ցանկանում էր գավառներ ուղարկել իրադրությանը քաջատեղյակ հոգևորականների: Խրիմյանը կարծում էր, որ գավառի հոգևոր առաջնորդը պետք է ոչ միայն բավարարի ժողովորդի հոգևոր պահանջները, այլև կանոնավորի ժողովորդի և պետական պաշտոնյանների հարաբերությունը: Բայց քանի որ գավառի հոգևոր առաջնորդների մեծ մասը գուրկ էր այդ հմտությունից, Խրիմյանը խորհում էր հաստատել գավառական հոգևոր այցելուների, շրջող քարոզիչների պաշտոն, բարեկարգել քահանայությունը, տեղից շարժել Պոլսի փափկակենցաղ եկեղեցականներին, մղել նրանց դեպի ժողովուրդը, դեպի գավառը, այնտեղ, որտեղից եկել էր ինքը, այնտեղ, ուր «ժողովուրդն անմունչ ոչխար մը դարձած՝ ոչ յուր իրավունքները կճանաչե, ոչ պիտույքները կզգա, և ոչ օրինաց տեղեկություն ունի»<sup>2</sup>:

Խրիմյանն արդեն մեծ փորձ ուներ Ազգային ժողովում կազմված հանձնախների աշխատանքների մասին: Նա զգում էր, որ ամեն մի գործ Ազգային ժողովի տնօրինությանը ընկնելու դեպքում «զեվգեկ» երեսփոխանները այնքան են ծգծում, ծայր են առնում երկարատև վիճաբանություններ, իսկ գործերը մնում են անլուծելի, երեսնիվայր: Այդ պատճառով էլ նա առաջարկում էր գավառական հարստահարությունների հարցով գրադի ոչ թե հանձնաժողովը, այլ ինքը. «Կառաջարկեմ, որ ազգային թշվառության քաղաքական ճան

ինծի թողվի, որպեսզի ինչպես նույնիսկ բարձրապատիվ եպարքոսին ալ խոսեցա՛ իմ նպատակս օգտագործեմ, իսկ Հանձնախումբին թողվի մյուս ճամբերը»<sup>1</sup>:

Սակայն Սահմանադրության տարին հետևող ազգային երեսփոխանները այդ հարցադրումը համարեցին սահմանադրական սկզբունքների խախտում և մերժեցին այն: Ընտրված հանձնախումը բաղկացած էր ինը անդամից՝ չորսը հոգևորական, իինգը աշխարհականներ էին: Հանձնախմբի նախագահ ընտրվեց Ներսես Եպիսկոպոս Վարժապետյանը: Դա 1870թ. նոյեմբերի 27-ին էր: Հանձնախումը պատրիարքի շրջաբերականով օժտվեց լիազորություններով և կապվեց գավառների հետ, իրադրությունը ավելի մանրամասն և ստուգ ուսումնասիրներու և իրականության ծզգրիտ պատկերը ներկայացնելու համար: Մեկ տարի հետո հանձնաժողովով հաջողվում է իր տեղեկագիրը ներկայացնել Ազգային ժողովի քննությանը: Տեղեկագիրը մանրամասն նշում էր հարստահարությունների բոլոր բնագավառները. զեղծումներ, որ կատարվել էին պետական հարկահավաքների կողմից զինվորական տուրքի (բենելը ասկերիե), կալվածական տուրքի (ենլաք և թեմերյու), վարձակալության, փոխատվության (վաշի) և այլ բնագավառներում: Զեղծումներ, որ կատարվում են կառավարության պաշտոնյանների՝ մյութեսարիֆի, գայմագամի, մյուդիրի, մյութիֆի և անգամ զապիթների կողմից: Տեղեկագիրն առանձնակի ուշադրություն էր դարձնում և առանձնապես ընդգծում դատարանում և այլուր ոչ մահմեղականի վկայությունը չընդունելու փաստը, դրանով բացատրելով բազմաթիվ հարստահարություններ: Դրանց թվաքանակով, վայրագությամբ և սոսկալիությամբ առանձնացվում էին երգումի և Դիարբեքիրի վիլայեթները (ուր հայկական տարրի հետ գերակշռում էր նաև քրդական տարրը), որը կառավարությունը ցանկանում էր վերանվանել Քուրդիստան. դրանց մեջ մտնում էին Կանի, Քղիի, Ղուզուզանի, Ղերզանի, Բաղեշի, Մուշի, Զարսանջակի և Սղերդի գավառները: Կախենալով գավառահայության վիճակի համար, տեղեկագիրը հականե անվանե չի նշում բուրդ բռնակալների անունները, այն վերապահելով գրանցել միայն «բարեխնամ կառավարությանը» մատուցելիք տեղեկագրին մեջ: Տեղեկագիրը կազմելու համար հանձնաժողովն օգտագործել էր նաև պատրիարքադատանի արձանագրությունները, ուր կոնկրետ նշված էր, թե որ վիլայեթի որ գավառից

1. Ատենագրտիմք ... 1870-1874թ., էջ 162:

2. Նայի տեղում, էջ 177:

քանի հանրագիր-բողոքագիր է ստացվել հարստահարությունների վերաբերյալ: Թագրիրների ողջ քանակը նշանակված էր 529: Դրանք դասակարգված էին ըստ հարստահարությունների տեսակի՝ արքունական տուրքերի ապօրինի գանձում, կառավարական պաշտոնյաների գեղծումներ, կանաց ու երեխաների բռնի մահմեդականացում, կարողիկների ու բողոքականների պատճառով հալածանք լուսավորչական հայերի նկատմանք, մասնավոր հարստահարություններ, առևանգություններ և մարդասպանություններ, եկեղեցիների շինության և կոչնակահարության արգելում, ննջեցյալների պղծում, հուղարկավորության և այլ կրոնական ծեսերի արգելում: Տեղեկագրի այդ առաջին մասը պարունակում էր հարստահարությունների ողջ տեղեկատվությունը: Տեղեկագրի երկրորդ մասը իր մեջ պարունակում էր հանձնախնդի դիտողություններն ու առաջարկությունները և կրում էր «Դարման գավառացի ազգայնոց վիճակի» խորագիրը: Անենաուշագրավն այն էր, որ հանձնաժողովի անդամներն առաջարկում են զինվորական տուրքի՝ «բեղելը ասկերիել» փոխարեն «մարդ, այսինքն զինվոր տալ, բարեկարգությանց իրովարտակին համեմատ: Այսպիսի խնդիր նը ինքնին հարկ է որ ներկայացնենք և ցուցնենք, թե նենք ալ պատվո և քաղաքացիության գգացումն ունինք, և հայրենյաց ու տերության համար արյուն թափելե չենք խորշիր մեր մահմեդական հայրենակցաց հետ»<sup>1</sup>: Հանձնաժողովի այդ կարծիքն առաջացրեց մեծ քանակիվ թե Ազգային ժողովի ներսում, և թե հայ պարբերականների էջերում: Այդ բանավեճերը ցույց տվին, որ արևմտահայությունն անպատրաստ է նման առաջարկություն ընդունելու: Արևմտահայ պարբերականներից միայն «Մասիսն» էր, որ ընդունում էր և հորդորում էր ժողովրդին, թե հարստահարությունների դեմ պայքարելու կարևոր միջոց է զինվոր տալը: Ազգային ժողովի երեսփոխանների մեծամասնությունը դեմ արտահայտվեց զինվոր տալու խնդրին, գտնելով, որ ազգը դեռևս չի հասունացել նման կարևոր խնդրի իրագործնան համար: Բացասական կարծիքներ արտահայտեցին իրենց ելույթներում երեսփոխաններ է. Պեկյանը, Ս. Աղաբեկյանը և Սթիճարացյանը: Մեծ էր առանձնապես Մարկոս Աղաբեկյանի մտավախությունը. «...Զինվորատվությունը դարձան մի կարծեք հարստեք հարստահարությանց. գուցե այդ դարձան ավելի վատքար լինի մեր ժողովրդյան համար»<sup>2</sup>: Ազ-

գային ժողովի ատենապետ Գրիգոր Օտյանը իզուր էր փորձում համոզել իր պաշտոնակիցներին, բացատրել այդ տուրքի էլության ողջ բացասական բովանդակությունը. «Պետելը ասքերիեն մեր տկարության տուրքն է, հայը, ինչպես ուրիշ ոչ մահմեդական ազգեր հայրենյաց համար արյուն թափելու իրեն թե անկարող, անկարող զենք գործածելու, բոլոր երկրին պաշտպանության փոխարեն մյուս ազգերը կը վճարեն: ...Քանի որ այս վիճակին մեջ կուգինք մնալ, ի՞նչ է մեր գանգատը. պաշտպանության իրավունքը շատ մը իրավունքներ կենթարդե և այդպիսի դրության մը մեջ հավասարությունն անկարելի է»<sup>3</sup>: Ունկնդրելով թեր ու դեմ բոլոր ելույթներն ու առաջարկությունները, խրինյանը վիճարանությունները ամփոփում է հետևյալ կերպ. Նա ընդգծում է հարցի կարևորությունը, նշում, որ հարստահարություններն արդյունք են թուրքական պետության քաղաքական կյանքում տարբեր ազգերի ու ժողովրդների գրաված տարբեր տեղերի. «Վասնցի երբ քուրդ ու տաճիկ տեսնեն, թե քրիստոնյան ալ մեջքը սուր կախեր և իրենց նման զինվոր եղեր է, բոլորովին պիտի փոխվին զանի իրենց հավասար տեսնելով»<sup>4</sup>:

Սակայն պատրիարքը ընդգծում է այն հանգամանքը, որ ողջ արևմտահայությունը, մասնավորապես գավառահայությունը չեն զգում այդ խնդրի ողջ կարևորությունը: Գավառների հոգևոր առաջնորդները դեռևս բավարար բացատրական աշխատանք չեն ծավալել այդ ուղղությամբ, հասարակ ժողովուրդը լցում է սարսափով և երկյուղով, երբ լսում է գինվորագրության հրամանի մասին և դրանից խույս տալու համար փախչում դեպի սահմանագլուխ: Պատրիարքը չէր հրաժարվում հայերի զինվորագրության գաղափարից, սակայն գտնում էր, որ ժողովրդի մեջ անհարժեշտ է արմատավորել այդ գաղափարը, ծավալել քարոզչական մեծ աշխատանք, դրանում ներգրավելով մամուլի օրգանները, քանզի վաղ թե ուշ այդ հարցը պետք է վճռել դրական պատասխանով, իսկ Ազգային ժողովի այդ վիճարանությունները պետք է համարվեն գործի սկիզբը:

Ազգային ժողովի երեսփոխանները, ինչպես միշտ, այս անգամ ևս հարցերն արագորեն վճռելու և համապատասխան որոշում ընդունելու փոխարեն, անցան երկար, անպտուղ և անվերջանալի վիդունելու փոխարեն, անցան երկար, անպտուղ և անվերջանալի վի-

1. Առենազմարիմբ ..., 1870-1874թ., էջ 479:

2. Նոյն տեղում, էջ 503-504:

1. Առենազմարիմբ ..., 1870-1874թ., էջ 503-504:

2. Նոյն տեղում, էջ 505:

ճարանությունների: Պատրիարքը գգուշացնում էր, որ այդ տեղեկագիրը Բ.Դուռը մատուցելու պատեհ առիթը չի կարելի ծեռքից բաց թողնել, իետևաբար անհրաժեշտ է կոնկրետ քննարկում և նոր առաջարկություններով համալրված տեղեկագիրը հանձնել քաղաքական ժողովին, այն վերջնական տեսքի բերելու և մեծ եպարքոս Ալի փաշային հանձնելու համար: Սակայն պատրիարքի գգուշացնություններն իզուր անցան: Դարցի քննարկումը ծգծգվեց, տևելով 1871-ի նոյեմբերից մինչև 1872-ի ապրիլը: Վեճերը, գոռում-գոչյունները, խառնակություններն Ազգային ժողովում հասան այն աստիճանի, որ հարցին միջամտեց Բ.Դուռը, արգելելով պատրիարքարանին հարստահրությունների վերաբերյալ որևէ փաստաթուղթ քննարկել<sup>1</sup>: Միայն այդ հանգամանքը սրակեցրեց Ազգային ժողովի երեսփոխաններին: Վերջապես, 1872-ի ապրիլի 12-ին Գավառական հարստահրությունների տեղեկագիրը հանձնվեց Բ.Դուռը, որը երկար ժամանակ անուշադրության մատնեց այն, իսկ տարիներ անց հայտարարեց, թե կորցրել է այդ փաստաթուղթը:

Գավառական հանձնախմբի կատարած գործը չհամգեցրեց որևէ արդյունքի, սակայն ունեցավ այն նշանակությունը, որ հավաքվեց մեծ քանակությամբ նյութ, որի հիմքի վրա հետագայուն (1876-ին) Ներսես Վարժապետյանի պատրիարքության օրոք կազմվեց նոր տեղեկագիր:

Ազգային ժողովի ծգծգվող նիստերի և վիճաբանությունների ընթացքում ավելի ու ավելի էին սրվում պատրիարքի և Ազգային ժողովի երեսփոխանների միջև երևան եկած հակասությունները: Երկարութիգ վիճաբանություններից հետո առկան էր մնացել Սահմանադրության վերաբերնության հարցը ևս: Քաղաքական ժողովի գործունեության ժամկետը լրանալու պատճառով վերջինս հրաժարական էր ներկայացրել, իսկ նորի ընտրությունը ծգծգվում էր Ազգային ժողովում տիրող խառնակությունների հետևանքով:

Պատրիարքը գրկված էր գործելու հնարավորությունից, բացակայում էր նրա գործակիցը՝ Քաղաքական ժողովը, որի հետ միայն, ըստ Սահմանադրության, իրավունք ուներ գործել: «Դուք շարունակեցեք վիճաբանություն որչափ որ կուզեք. թող ամիսներ տևե քաղաքական ժողովի ընտրություն. բայց ես ալ բան ո՞ր պիտի խնդրեմ,

արտոնություն և իրավունք տվեք ինձ, որ պատրիարքարան ներկայացրած ամեն խնդիր ես ինքնին ի գործ դնեմ: ... Դուք կարող եք քաջ ատենաբանություններ ընել և Սահմանադրության օրենքներ հառաջ բերել, ինձի համար Սահմանադրության օրենքնեն և ամեն բանե վեր է ժողովրդյան շահ, անոնք ինձ կը դիմեն, կաղաղակեն և գործ կը խնդրեն, եթե չեք տար ինձ այդ գործելու արտոնությունը, ես չեմ կրնար ժողովրդյան պատասխանատու ուլալ. չեմ կրնար հաճբերել մինչև ետքը. այսօրվեն կուզեն ազատությանը գործել. եթե չեք տար այս ազատությունը, անկարելի է ինձ պատրիարքարանի մեջ մնալ և եկող գացողներուն խոսք հասկըցնել»<sup>2</sup>:

Պատրիարքի այս սրակեցնող կոչերը ոչ մի ազդեցություն չէին գործուն: Ազգային ժողովի երեսփոխանները շարունակում էին վիճաբանությունները, պատրիարքի անկախ և ազատ գործելու բոլոր ցանկություններին պատասխանում էին կտրուկ մերժումով: Դա պատահականություն չէր:

\* \* \*

Ազգային ժողովում մեծամասնություն էին կազմում պահպանողական էֆենդիները, որոնք տեսնելով, որ չեն կարողանուն պատրիարքին իրենց ծեռքին խաղալիք դարձնել, պատրաստվում են անգիշուն պայքարի, լուրեր տարածում, թե Խրիմյանը հակասահմանադրական է: Յակառակորդ պարբերականները Խրիմյանին մեղադրում էին սահմանադրությունը տապալելու, այն ոչնչացնելու ծգտման մեջ: Սահմանադրությանը թշնամի լինելը ապացուցում էին այն փաստով, որ Ազգային ժողովը 1873թ. մայիսի 25-ից մինչև հուլիսի 6-ը դադարեցրել էր իր գործունեությունը:

Ծայրահեղ պահպանողականության (իմա՝ հետադիմության) դիրքերից, սակայն հանդես գալով Սահմանադրության պաշտպանների քողի տակ, ժողովողի շահերի պաշտպանի դերով, Կ.Պոլսի մի քանի լուագրեր, մանավանդ «Փունջը», «Օրագիրը» արշավանք են սկսում գավառացի «խընալը» պատրիարքի դեմ, նրան որակավորելով իբրև դավաճան: Էջմիածնից նրանց ծայնակցում է «Արարատը», Խրիմյանին ներկայացնելով իբրև բռնակալ: «Մի մեծ շարժում կա ամեն տեղ Խրիմյանը հրաժարեցնելու համար, որ արդարև ազգային շա-

1. Գ.Աթ, Հ.Առաքելյանի ֆ. գ.182, էջ 49:

2. Առանձագարքինը Ազգային ժողովոյ, 1870-1874թ., էջ 655:

հուց և օգտից՝ խիստ վտանգավոր մի դորություն հետևեցավ...»<sup>1</sup>: Հետևողական գտնվելով պատրիարքին անվանարկելու մեջ, «Արարատի» մյուս թիվը ևս անդրադառնում է Կ.Պոլսի պատրիարքի գործունեությանը: «Ամենապատիվ Խրիմյանի սքանչելագործությանց ասպարեզը օր ավուր կը գերազանցե, ու կարծես վերջին ժամանակներս բոլորովին ազգավճար կրաշալիք կը գործե: Բավական չեն եղած ամենապատվությանը բռնապետական ընթացից ցարդ արտադրած վնասները, գործած գեղծուները»<sup>2</sup>:

Բազմաթիվ էին Խրիմյանին ներկայացված մեղադրանքները, բայց ամենաառաջնայինը այն էր, որ նա ներկայացվում էր իրու ազգային գումարների դրամաշորք: Խրիմյանից հաշիվ էին պահանջուն Վարագա վանքի, «Ժառանգավորաց» վարժարանի, տպարանի օգտին Արևելյան Հայաստանում կատարած հանգանակության համար. նրան մեղադրում էին Ս.Կարապետի և Տարոնի հոգևոր առաջնորդության ներքայության ներքո գտնվող վանքերի հարստությունները վատնելու, պատրիարքարանի պարտքերը մարելու նպատակով հանգանակություն բացելու գաղափարի համար: Հակառակորդների ծայրահեղությունը հասնում էր այն աստիճանին, որ Խրիմյանին մեղադրում էին նույնիսկ Տարոնի Ավագաղբյուր գյուղի հարստահարված մանուկների օգտին կատարված հանգանակությունը յուրացնելու մեջ: Կոերա-աղայական վերնախավի ներկայացուցիչները չեն կարող ներել Խրիմյանին՝ Արևատյան Հայաստանի գավառները հետադեմ հոգևոր առաջնորդներից ազատելու համար: «Արարատը» պաշտպան է կանգնում Բրուսայի Բարդուղիմեոս Եպիսկոպոսին, Վանի Պողոս վարդապետին, Մարգավանի Եղեսյան Եպիսկոպոսին, որոնց Ազգային ժողովի նիստերի նիշոցով և Խրիմյանի նախաձեռնությամբ հետ էին կանչել գավառի հոգևոր առաջնորդի պաշտոնից: Չբավարարվելով այդ ամենով նույնիսկ հուշում էր օսմանյան կայսրության Բ.Դանը, ընդգծում պատրիարքի անհանգիստ բնավորությունը և կասկածելի համարում նրան քաղաքականապես: «Ո՞վ է Տերության թշնամին և անհավատարինը, և ո՞վ փոխարենը զոհ կը տարվի, և ո՞վ է ընել տվողը, որը գուցե քիչ ժամանակեն հայտնվին»<sup>3</sup>: «Արարատը» երկար շարունակեց անվանարկել պատրիարքին, իրար ետևից մի քանի թվե-

### Մկրտիչ ԽՐԻՄՅԱՆ. Հասարակական-քաղաքական գործունեությունը

րում նկարագրելով նրա գործունեությունը, մեղադրելով Խրիմյանին անկարողության մեջ. «Զինքը կառավարել չգիտե, ուր մնաց մի բազմություն ժողովրդոց»<sup>1</sup>: «Արարատին» Կ.Պոլսից ծայնակցում էր «Փունջը», որն իր էջերը լցնում էր Խրիմյանի «անպտուղ» գործունեության մանրանասն շարադրանքով, նկարագրում Պոլսի թաղերում կատարած շրջագայությունները՝ «անցյալ շաբաթ», «կիրակի», երկուշաբթի և այսպես շաբաթվա մյուս օրերը. «Այսպես շատ շաբաթ պիտի շարունակեմք գրել Ս.պատրիարք իր շաբաթական շրջանին վրա, որովհետև չենք կարծեր որ դառնա դեպի ուղղության ճանապարհը: Դամառ և ցաւկոտ բնավորություն մի կիշխն և ծանրացած է յուր վրա. ինչ որ կգրեմք մեք և ուրիշները յուր ուղղության համար, կշանա, որ այնպես ցցունե թե կարևորություն չտար, և դարձյալ իր ուզածին պես կը վարվի»<sup>2</sup>:

Այդ ընթացքում իր հրաժարականը ներկայացրած Քաղաքական ժողովին փոխարինելու եկավ նոր ընտրվածը, որի մեջ տեղեր գրավեցին Ղալաթիո օջախի անդամներից Ստեփան Փափազյանն ու Քրիստոսատուր Ղազարոսյանը: Նրանք նոր ուժ հաղորդեցին պատրիարքի ընդդիմադիր կողմին: Ազգային ժողովի նիստերը հետզհետեւ վերածվեցին պայքարի թատերաքենի: «Պատրիարքի կողմնակիցներն ու պաշտպանները Կ.Պոլսում գտնվող Վանի և Մուշի պանդուխտ հայությունն էր, որը Ազգային ժողովի դռնբաց նիստերի ժամանակ լցվում էր Մայր Եկեղեցու գավիթը և պաշտպան կանգնում սիրելի «խարիկին»: Մի քանի անգամ պատրիարքարանը դառնում է ծեծկուտութի, տուրուտմբոցի, գոռում-գոչումի վայր: Զայրացած ժողովուրդը պահանջում է իր ծեռքը հանձնել Փափազյանին և Ղազարոսյանին: Պատրիարքին մեծ դժվարությամբ հաջողվում է զապել և հանդարտեցնել մոլեզնած պանդուխտներին: Խռովահույզ նիստեր տեղի ունեցան 1873թ. հուլիսի 31-ին, օգոստոսի 3-ին. «Կ.Պոլսի Ազգային Քաղաքական ժողովն անցյալ շաբթու երկու խռովահույզ և խառնաշփոր նիստեր ըրավ և զպատրիարքարանը ժանր անկարգությանց, փոխադարձ գանակոծությանց և խայտառակությանց տեսարան դարձուց ի մեծ վնաս պատվո Ազգային կեղրոնական վարչության, որո համարումն բոլորովին անհետացավ գավառական հայոց առջև»<sup>3</sup>,

1. «Արարատ», 1872, N 9, էջ 378:

2. Նույն տեղում, N 10, էջ 419:

3. Նույն տեղում:

1. «Արարատ», 1872, N 11, էջ 458:

2. «Փափիջ», 1872, N 733:

3. «Արշակույթ Արարատյան», 1873թ., N 968:

գրում էր Զնյուռնիայի պարբերականներից մեկը: Դուշիսի 31-ին պատրիարքը գրություններ է ուղարկում Ազգային ժողովի երեսփոխան-ներին, որում հայտնում էր. «Մեր պաշտոններիքան ընթացքն երթալով ծանրացավ և դժվարացավ, այլևս անհնարին է այս կերպով հառաջ վարել զայն: Ուստի իբրև Սահմանադրական պատրիարք Հայոց, պարտավոր լինելով կանխապես և ըստ օրինի հրաժարականս երեսփոխանական ընդհանուր ժողովով պատկառելի ատենին մատուցանել, կը հրավիրեմ զՁեզ, որ հառաջիկա ուրբաթ օր հրամայեք ի Ղալաթիա, ուր ըստ սովորության ժամ վեցին ատյան պիտի բացվի»<sup>1</sup>:

Օգոստոսի 3-ին Ազգային ժողովը քննարկման է դնում պատրիարքի վերոհիշյալ հրաժարականը: Պատմական այդ նիստում Խրիմյանը կարդաց իր նշանավոր «Խոսք հրաժարականը», ուր նանրանասն շարադրեց այն բոլոր պատճառները, որոնք իրեն բարձրացրին պատրիարքական գահ 1869թ. սեպտեմբերի 4-ին և ստիպեցին ինքնական հրաժարվել 1873-ի օգոստոսին: 1869-ին նա անսաց արևմտահայ ժողովրդի ծայնին, նրա ցանկությանը, որը հավատում էր, թե պատրիարք Խրիմյանը ծեռնիաս պիտի լինի Սահմանադրությունը գործադրել հայոց աշխարհում. «Ամենաճեծ ակնկալություն գավառացի ժողովրդոց այն էր, թե Խրիմյան պատրիարք եղավ, ուրեմն ավետիս, պետք է, որ ազատվինք հարստահարության ամեն ճնշումներ»<sup>2</sup>: Խրիմյանը հավատում էր, որ ինքը պետք է լիներ բուն արևմտահայության (և ոչ թե Պոլսի գաղթօջախի հայության) ծայնափողը, նրա ցավերի կարեկիցն ու դարձանողը, Ազգային վարչության ու ժողովի գործունեությունը այդ հունով ուղղողը, Բ.Դուան և ժողովրդի հարաբերությունները կարգավորողը: Իր այդ խոսքում ինքնաքննադատությանը գրադաւելու հետ միասին, պատրիարքը դատավետում էր Ազգային ժողովում մեծամասնություն կազմած էֆենդիական դասի և հետադեմ հոգևորականության ներկայացուցիչներին, որոնք ամլության էին դատապարտում Ազգային ժողովի գործունեությունը: Իր դեկավարությանը 63 նիստ վարեց Խրիմյանը. առաջին նիստի կարևորագույն խնդիրը Սահմանադրության վերաբննության հարցն էր, որն անլուծելի մնաց նրա պատրիարքության չորս տարիների ընթացքում: Ազգային ժողովն անկարող գտնվեց կամ չցանկացավ լուծել այդ հարցը և անընդհատ սահմանափակեց պատրիարքի գործունեության ոլորտնե-

1. Առենազբարին Ազգային ժողովը, 1870-1874թ., էջ 887:

2. Դույմ անդամ, էջ 889:

ը: «Գործելու համար եկա և բան մի չի գործեցի, մեկ երկու տարի իրքեւ անփորձ հազիվ թե փոքրիշատե խելամուտ եղա ազգային գործոց և ընթացից: Անք չեմ համարիր այսպես խոստովանիլ, վասնզի Եվրոպի ամենեն իմաստուն կարծված անձն իսկ կարուտ է փորձառության և գործակից աջակցության: Սույն փորձառությանս նեց ստուգապես վերահաս եղա և կը վկայիմ առաջի Ազգին և երեսփոխանությանդ, որ Սահմանադրության տրամադրած քանի մի ժողովներն երբեք բավական չեն հայ ազգին պետքերը հոգալ»<sup>1</sup>: Այնուհետև Խրիմյանը շարադրում է իր կարծիքը սահմանադրության վերաբննության անհետաձգելիության նասին, Կրոնական, Քաղաքական ժողովների իրավունքների և պարտականությունների սահմանների վերաբերյալ: Կրոնական ժողովն ի վիճակի չի եղել կարգավորել նույնիսկ Կ.Պոլսի երեսուններկու եկեղեցիների և նրա քահանաների գործերը, ուր մնաց հոգար ողջ Արևմտյան Հայաստանի հոգնոր պետքերը: Սահմանադրությանը հաստատված է մի Քաղաքական ժողով, որի պարտքն էր հոգալ Արևմտյան Հայաստանի մոտ երեք միլիոն հայության հոգսերը: Նա ընդառնը ի վիճակի էր շարաթական մի նիստ գումարել երեք ժամ տևողությամբ: Խրիմյանի սթափ հայացը նկատում է, որ այդ «անվարծ և անբռչակ» Քաղաքական ժողովն ի վիճակի չէ նույնիսկ դատական և այլ խնդիրներ լուծել, ուր մնաց ողջ արևմտահայության ընդհանուր ներքին կենսական խնդիրները: Պատրիարքն առաջարկում էր թեթևացնել Քաղաքական ժողովի ուսերին դրված ծանր բեռը, նրանից բոթափել գավառական խնդիրները և տեսնել, թե այդ Քաղաքական ժողովն ի վիճակի՝ է արդյոք կարգավորել գոնե օսմանյան մայրաքաղաքի հայության գործերը: Իրավիճակը նույնն է նաև տեսուչ խորհուրդներում, որոնց գործելու ասպարեզը դարձյալ միմիայն գաղթօջախի խնդիրներն են: Ըստ Խրիմյանի, Սահմանադրության ամենամեծ թերությունն այն էր, որ բարձիրողի էին արված գավառական խնդիրները:

Հրաժարականը տալուց դեռ մի քանի տարի առաջ պատրիարքը Քաղաքական ժողովի ատյանին ներկայացրեց իր առաջարկությունները Սահմանադրության մեջ տեղ գտած թերությունների և Ազգային ժողովի աշխատանքները բարելավելու միջոցառումների նասին: Խրիմյանն առաջարեց մի որոշակի պահանջ՝ ստեղծել երկու մասնաժողովներ «ժողով մի տեղական գործոց, ժողով մի գավառական գոր-

1. Առենազբարին Ազգային ժողովը, էջ 892:

ծոց»: Այդ առաջարկությունը Քաղաքական ժողովի անդամների կողմից ենթարկվեց թյուր և սխալ քննադատության, այդ պատճառով էլ պատրիարքը չպնդեց նրա կատարման վրա, թողնելով, որ ժամանակը և փորձառությունը համոզեն Քաղաքական ժողովի անդամներին: Խրիմյանը մատնանշում է, որ հենց այդ առաջարկությունից ծնվեց անհամաձայնությունը իր և Քաղաքական ժողովի անդամների միջև, որը քանի գնաց խորացավ և ի վերջո հանգեցրեց իր հրաժարականին: Այնուհետև պատրիարքը զուր փորձեց իր այդ առաջարկությունը Վերաբննիչ հանձնաժողովի միջոցով ներկայացնել Ընդհանուր ժողովին: Բայց այդ հանձնաժողովը ևս ուշադրություն չդարձրեց պատրիարքի առաջարկություններին, հետաձգելով այն Ընդհանուր ժողովին ներկայացնել միայն Սահմանադրության լրիվ վերաբննությունից հետո: Իսկ այդ վերաբննությունը ծգծվում էր անընդհատ և չեր երևում նրա վերջը: Պատրիարքը տեսնում էր, որ վերաբննության հարցը կանխանակածված հետաձգվում է. «Իմ հանքերությունս հատավ. զի ես չգիտեմ ու չեմ հավատար, թե այդ վերաբննության ավարտումը ո՞ր թվականին է»<sup>1</sup>: Խրիմյանը վճռականորեն հետ մնեց ներկայացված մեղադրանքները, միտեղ իրեն հակասահմանադրական համարելը, որպես ապացույց վկայակոչելով իր ողջ նախընթաց կյանքը, սահմանադրականների շարքում իր մղած գործուն պայքարը: Այլ բան է, որ նա պայքարում էր Սահմանադրության մեջ տեղ գտած այն հոդվածների դեմ, որոնք հայ իրականության արդյունք չեն. «Մեր Ազգային Սահմանադրությունը մայրաքաղաքին մեջ խմբագրվեր է, և այն անձանց հեղինակությամբ, որոնք ավելի եվրոպան կը ճանաչեն, քան Հայաստանի աշխարհացույցը, ավելի եվրոպական ազգերու միտումներն ու կացությունը գիտեն, քան Հայաստանի մեջ բնակվող մերազների նյութական ու բարոյական վիճակն ու պիտույքը. և այսպես, Սահմանադրությունը Եվրոպի գաղափարաց վրա ծովլվեր է ավելի, քան թե Հայաստանի: Օրենսդիրը պարտավոր էր քննել այն ժողովոյան վիճակը, պիտույքն ու բարքը, որու օրենք սահմանել կոչված էր, և այդ ժողովուրդը միայն Վուփորի մեջ չի բնակեր, այլ այս անձուկ շրջանակեն անդին՝ Հայաստանի հեռավոր գավառներու մեջ, և երբ տակավին այս կերպով խմբագրված Սահմանադրությունը մը մայրաքաղաքին մեջ անգամ գործադրված ատեն դժվարություններ կը ծագին, մտածելու է, թե զավառներու

1. Առենազբարիմբ..., 1870-1874թ., էջ 893:

մեջ ինչ իմ կը բռնե. և ինչ արդյունք կունենա»<sup>2</sup>: Ահա թե ինչու պատրիարքը ցանկանում էր շուտափոյթ ավարտված տեսնել Սահմանադրության վերացնությունը: Բայց նրա ցանկությունը չեր համընկում Ազգային ժողովի, Քաղաքական և Կրոնական ժողովների տարտամ ընթացքին: Գավառներում՝ (ինա՝ բուն Արևմտյան Հայաստանում) Վասպուրականում, Խարբերդում, Մերաստիայում և այլուր չէին դադարում Սահմանադրության գործադրության շուրջը ծավալված խոռվություններն ու վեճերը: Խրիմյանը բացահայտում էր, որ Ազգային ժողովի հետադեմ երեսփոխանները Սահմանադրությունը ծածանում են իբրև դրոշ, որոնք վաղուց խոտորել են սահմանադրական ուղղուց և փաստացի հակասահմանադրականը նրանք են:

Այդ հրաժարական խոսքում Խրիմյանն անդրադառնում է հայ հոգևորականության անկումային վիճակի վրա, Խորենացու նման ողբում հայ եկեղեցու անկումը: Կ.Պոլիսը լի է բարձրաստիճան հոգևորականներով, իսկ գավառները զուրկ են վիճակային առաջնորդներից, առաջնորդ, որ սպեղանի դներ գավառահայության վերքերին, կանոնավորեր տեղական իշխանությունների և ժողովրդի հարաբերությունները: Տիգրանակերտի կուսակալության մեծ վիճակը, Եղեսիան, Խարբերդը, Արաբկիրը, Ակնը, Չմշկածագը, Եվդոկիան, Անասիան ու Մարգարականը, Երզնկան, Դերջանն ու Մուշը զուրկ են հոգևոր առաջնորդներից, որովհետև օսմանյան մայրաքաղաքի համեմատաբար խաղաղ կյանքին սովոր բարձրաստիճան «փափկակենցաղ» հոգևորականները խորշում էին Արևմտյան Հայաստան մեկնելուց, իրենց իսկ արտահայտությամբ «գավառում» գործելուց:

Այդ բոլոր պատճառները բարդություն են իրար վրա, հուսահատեցնում պատրիարքին, և վերջինս ներկայացնում է իր հրաժարականը, կտակելով իրեն հաջորդող պատրիարքին ուշադրությունը թեռել հետևյալ կարևոր խնդիրների վրա.

1. Ազգային վարչությունն իսկապես կենտրոնական դարձնել. Պոլսի համար կազմել տեղական վարչություն:
2. Ազգային պաշտոններության հարաբերությունը կառավարության հետ դարձնել օրինավոր և օգտակար:
3. Սահմանադրության ընտրողական սկզբունքը չչարաշահելու համար ապահով և ճիշտ եղանակ որոշել:
4. Կանոնավորել ազգային տուրքը:

1. Առենազբարիմբ..., 1870-1874թ., էջ 807:

5. Պարտադիր դարձնել ազգային պաշտոնեության հաշվետվությունը:

6. Կարգավորել հոգևորականության վիճակն ու գործունեությունը:

7. Սահմանել վիճակների առաջնորդների հաշվետվության օրինավոր եղանակ:

8. Ապահովել վաճքերի ու եկեղեցիների կալվածքներն ու եկամուտները և դրանք ծառայեցնել ազգի բարոյական օգտին:

9. Միջոցներ ծեռք առնել կրոնափոխությանը խոչընդոտելու համար:

10. Նոր միջոցներ մշակել ուսումն ու գիտությունը ազգի մեջ տարածելու համար:

11. Ազգային դաստիարակության համար դրանագլուխ հաստատել:

12. Ուղիներ որոնել նախակրթական (տարրական) ուսումը ընդհանրացնելու համար, բացել մի քանի կենտրոնական բարձրագույն ուսումնարաններ:

Ուշադրության արժանի էր մանավանդ 13-րդ կետը, որն իրենից ներկայացնում էր գործունեության մի ծավալուն ծրագիր. «Դայոց ազգային ընտանեկան կյանքը, այն է՝ անուսնական և բարոյական կապերը ամրապնդել, գեղծումները բառնալ, պանդիստության առաջըն առնուլ կ Ազգը մի հանրական ընտանիք կազմելու դրության վերածել: Ներքին և արտաքին հարստահարությունները բառնալու համար բարեխնան տերութենն ավելի զորավոր միջոցներ խնդրել, գաղթականությունն արգելու, ազգային անհատական իրավունքներն պաշտպանել, որով և Ազգի ամբողջությունն ապահովել»<sup>1</sup>:

Դարցերի այս ամբողջությունն է, որ Խրիմյանը ներկայացրեց ազգային ժողովին իր հրաժարական խոսքում:

Ելույթ ունենալով Խրիմյանի հրաժարականի առքիվ, Ռաֆֆին պաշտպանության տակ առավ գավառական մասնաժողով ստեղծելու նրա ծրագիրը, այն համարելով Ազգային ժողովը գավառահայությանը մոտեցնելու ճիշտ ուղին: Այդ պատճառով էլ նա սուր քննադատության ենթարկեց քաղաքական ժողովի անդամներին՝ պատրիարքի առաջարկը մերժելու համար, ստիպելով նրան հրաժարական ներկայացնել<sup>2</sup>:

1. Ատեմազբարինը..., 1870-1874թ., էջ 892:

2. Մշակ. 1873, N 35 և 46, նաև Լիլյա Գևորգյան. «Դրիգոր Արքանին և նրա Մշակը», էջ 218-219:

Ազգային ժողովի օգոստոսի 3-ի այդ պատմական նիստին մասնակցում էին 78 երեսփոխան: Քաղաքական ժողովի բոլոր անդամները բացակա էին, որովհետև մինչ այդ նրանք էլ, իրենց հերթին, Ազգային ժողովին էին ներկայացրել իրենց հրաժարականը, դրանում պատրիարքին մեղադրելով Սահմանադրության հոդվածներին հակառակ գործելու և հակասահմանադրական լինելու մեջ: Երկու հրաժարականների հարցը քննելու համար Ազգային ժողովն ընտրեց քննիչ հանձնաժողով, որի նախագահ նշանակվեց Գրիգոր Օտյանը: Իրեն տրված ութ օրվա փոխարեն հանձնաժողովը իր կարծիքը ժողովին ներկայացրեց օգոստոսի 24-ին: Բուռն ու փոթորկոտ էր այդ օրվա նիստը: Քննիչ հանձնաժողովի տեղեկագիրը նիստում կարդացվեց երկու անգամ՝ ուշադիր ունկնդրության և մանրանան քննարկում կազմակերպելու համար: Տեղեկագիրը հաղորդում էր Ազգային ժողովի երեսփոխաններին, որ անիմն էր Քաղաքական ժողովի՝ Խրիմյանին հակասահմանադրական ներկայացնելու մեղադրանքը: Այդ նիստին ներկայացվեցին նաև ժողովրդի անունից բազմաթիվ ստորագրություններով վավերացված երկու հանրագրություն, որոնք ունեին տրամագծորեն հակառակ բովանդակություն: Առաջինը նշում էր պատրիարքի՝ սահմանադրության դեմ գործելու հանգանաքը և հայտարարում էր վճռական ու որոշակի. «Ժողովուրդը սահմանադրության անթերի գործադրությունը կը պահանջե և եթե գործադրության մեջ արգելք մը կամ դժվարություն մը կա, դարձյալ երեսփոխանական ժողովդ միայն կրնա այդ արգելքը կամ դժվարությունը տեսնել և բառնալ և ըստ այնմ հրամայել Ազգային վարչությանը նույնը գործադրելու համար»<sup>1</sup>: Այդ հայտարարությունը փաստութեն մի կոչ էր Ազգային ժողովին՝ գահընկեց անել պատրիարքին, որը համարձակվում էր պնդել Սահմանադրության մեջ տեղ գտած անգործադրելի հոդվածների փոփոխության վրա:

Երկրորդ համրագիրը բողոք էր Քաղաքական ժողովի դեմ, քննադատում էր նրա ապիկարությունն ու անկարողությունը, անխոհեմ ու անհեռատես գործունեությունը, գավառների և Կ.Պոլսի թաղերի մեջ խօսվություններ և գժուություններ հարուցանելը, սահմանադրության պաշտպանության քողի տակ հակաժողովրդական գործունեության ընթացքը, պատրիարքին անվանարկելն ու վարկաբեկելը: Այդ հա-

1. Ատեմազբարինը, 1870-1874թ., էջ 912:

բագիրը բացահայտ, առանց երկնչելու նշում էր, որ բոլոր չարիքների աղբյուրը թաքնված է Դալաթիո օջախի գործունեության մեջ, ուր դեկավար դիրք էին գրավում Մատթեոս Իզմիրյան վարդապետը, Քրիստոսառուր Դագարոսյանը և Ստեփան Փափազյանը։ Դանրագրում պահանջվում էր, որ վերոհիշյալ անձնավորությունները այլևս չընտրվեն հասարակական գործունեության ասպարեզում և «ազգային պաշտոն բնավ չվարեն»։ Դանրագրի ամենավճռական պահանջը Ազգային ժողովի երեսփոխաններից՝ «ընդունել մեր սիրելի հայրիկին հրաժարականը» և արագացնել Սահմանադրության վերաքննությունը։

Այդ նիստից բացակայում էր նաև հրաժարական տված պատրիարքը։ Դրա փոխարեն նա նամակ էր ուղարկել Ազգային ժողովին, որում բողոքում էր իր հրաժարական խոսքուն արտահայտած մտքերի թյուրքմբռննան դեմ։ Բոլոր տարակույսները փարատելու համար նա կրկին անգամ նշում էր, որ անկատար և սխալ է համարում, երբ ազգային գործերը վարելու համար բավարարվում են Կրոնական և Քաղաքական ժողովներով և մի քանի Տեսուչ խորհուրդներով։ Խրիմյանն անկատար էր համարում ոչ թե Սահմանադրական դրությունը, այլ վարչական կազմակերպության եղանակը։ Նա բողոքում էր, երբ պահանջ էին դնում գործադրել Սահմանադրությունը կետ առ կետ և ավելորդ էին համարում նրա վերաքննությունը։ Դրաժարված պատրիարքը հայտարարում էր իր նամակում, որ Սահմանադրության վերաքննությունը հետապնդում է ոչ թե հակասահմանադրական նպատակներ, այլ նպատականդված է ընդարձակել և կատարելագործել գործող Սահմանադրության սահմանները, դարձնել այն «Ազգի բազմադիմի պիտոյից և պահանջմանց համենատ»։

Քննիչ հանձնաժողովը պատասխան է պահանջում Քաղաքական ժողովի անդամներից, որպեսզի սպառիչ երեկայացնեն պատրիարքի թույլ տված գեղջումները և ապացուցեն նրա հակասահմանադրական լինելը։ Քաղաքական ժողովի պատասխանը լիովին բացահայտում է Ազգային վարչության հակաժողովրդական, հետադիմական էլությունը։ Պատրիարքը մեղադրվում էր Վանի հոգևոր առաջնորդ, տիրահաչակ Պողոս վարդապետին հեռացնելու համար, քանի որ վերջինս համարձակվել էր այդ քայլն անել առանց կրոնական և քաղաքական ժողովների գիտության։ Սակայն ժամանակի իրադարձությունների քննախույզ վերլուծությունը մեծ բերում է այն եզրակացության, որ Խրիմյանը ստիպված էր դիմել այդ քայլին, քանի որ վերոհիշյալ ժո-

ղովներում տեղ գտած ազգային ջոշերը պաշտպանում էին գավառի իրենց ծայնափողին, Վասպուրական հայաշատ նահանգի «արյունախում վաճառիրին»։ Ժամանակին այդ իրադարձություններին անդրադել է արևմտահայ հասարակական կյանքին ակնդետ հետևող արևելահայ մեծ վիպասանը՝ Ռաֆֆին, որն արդարադատ է համարել Խրիմյանի վճիռը, և մեղադրել Պոլսի Ազգային վարչության Քաղաքական ու Կրոնական ժողովներին<sup>1</sup>։

Քաղաքական ժողովը իր մեղադրանքները ծեակերպում է տասնմեկ հովքածներով։ Քննիչ հանձնաժողովը, մանրանասն հետազոտելով այդ մեղադրանքները, հանգում է այն եզրակացության, որ անհիճն են Խրիմյանին ներկայացրած մեղադրանքները։ Այդ պատճառով էլ Քննիչ հանձնաժողովը իրեն իրավասու է համարում առանց Ազգային ժողովի գիտության հանգել պատրիարքին հետ վերցնել հրաժարականը։ Պատրիարքը մերժում է այդ առաջարկությունը։ Ազգային ժողովի 65-րդ (ԿԵ) նիստին ներկայացրած Քննիչ հանձնաժողովի տեղեկագիրը այդ բոլորի նասին հաղորդում է Ազգային ժողովի երեսփոխաններին։ Նրանց մի մասը առաջարկում է պատվիրակություն ուղարկել պատրիարքի մոտ՝ համոզելու հրաժարականը հետ վերցնելու։ Բուռն ու փոթորկոտ վիճաբանություններն ավարտվում են հօգուտ Խրիմյանի։ Ազգային ժողովի նիստը տեղի էր ունենում Կ.Պոլսի Մայր տաճարում, ուր ազգային երեսփոխաններից քացի ներկա էր նաև գաղթօջախի հայության և պանդուխտ մշեցիների ու վանեցիների մի ստվար բազմություն։ Խրիմյանի հակառակորդները վախենալով ժողովրդական հուզումներից, չեն կարողանում բացահայտ քվեարկել նրա հրաժարականի օգտին։ Ենց նիստի ժամանակ պատգամավորությունը ներկայանում է պատրիարքին և նրան հաղորդում Ազգային ժողովի խնդիրը հրաժարականը հետ վերցնելու մասին։ Նրանք վերադառնում են դրական պատասխանով։ Ազգային երեսփոխանները, ժողովրդի ներկայացուցիչները ուժգին ծափահարություններով և Խրիմյանի անվանը հոչակած «կեցցեներով» թնդացնում են Մայր Տաճարի կամարները։ Բայց օգոստոսի 24-ի որոշումը վերջնական չէր։ Դա ժողովրդավարների ժամանակավոր հաղթանակն էր։

Բացահայտ գործողությունների դիմելուց վախեցած հակառակորդները ժողովից անմիջապես հետո ծափալում են եռանդուն գործու-

1. Բաֆֆի. Երկերի ժամանակական գործունեությունը. հ.9. էջ 75. նաև «Մշաք», 1874թ., Ա 10. էջ 1:

ներթյուն պատրիարքի հրաժարականը վերստին ընդունել տալու համար: Սովորականի նման պատրիարքը հայտարարություն է տալիս լրագիրներին, որ Ազգային ժողովի հաջորդ նիստը տեղի կունենա դարձյալ Մայր Տաճարում օգոստոսի 31-ին: Սակայն պատրիարքի հակառակորդների օրգան «Օրագիրը» հրատարակում է Ազգային ժողովի ատենապետ Հարություն Տայյանին ուղղված հիսուննեկ երեսփոխանների կողմից ստորագրված մի հանրագիր, որը հայտարարում էր, թե ժողովորդի ճնշումից ազատ մնալու համար անհրաժեշտ են համարում Ազգային ժողովի հերթական նիստը գումարել դրնվակ՝ Ղալաթիո Եկեղեցում: Հանրագրի մասին պատրիարքին հաղորդում է ժողովի ատենապետը, խնդրելով նրա կարգադրությունը: Պատրիարքը չկանոնալով «աղարտել իր ստորագրության հարգը», խնդրու կարգավորելու համար դիմում է դիմանի խոհեմությանը: Դիմանը որոշում է նիստն անցկացնել Մայր Տաճարում և դրնբաց: Երբեք բողոք այդ որոշման դեմ հանրագիրն ստորագրող հիսուննեկ երեսփոխանների կշռող մեծամասնությունը (48 հոգի) չեն ներկայանում Ազգային ժողովի նիստին: Հանրագիրն ստորագրած երկու երեսփոխան ներկայանում են նիստին, պատմում, թե ինչ մեքենայություններով են վերցրել իրենց ստորագրությունը, հայտարարում են, որ համաձայն չեն Խրիմյանի հակառակորդների հետ:

Նիստին ներկա չեր նաև պատրիարքը: Արխիվային փաստաթղթերը ցույց են տալիս, որ Խրիմյանը պատրաստվել էր ընդարձակ ելույթ ունենալ Ազգային ժողովի օգոստոսի 31-ի նիստում, սակայն հանգամանքների բերումով նա նույնիսկ չի մասնակցել նիստին: Չիրապարակված այդ փաստաթղթում<sup>1</sup> նա խարազանել է իր հակառակորդների պայքարի ստոր մեթոդները, գրպարտությունները, սադրանքները: Մերկացումներով լի այդ ելույթը, անշուշտ նոր խռովությունների և հուզումների առիթ կտար: Խրիմյանի կողմնակիցները չեն հանդուրժի պարտությունը և վերստին կսկսվեր պայքարը: Ըստ Երևույթին, այդ հանգամանքն է նկատի ունեցել Խրիմյանը, երբ բացակայել է Ազգային ժողովի նիստից և իր հրաժարականը ներկայացրել է ուղղակի Բ. Դուանը: Նրա բացակայությունը Ազգային ժողովի նիստին ունեցավ բացասական ազդեցություն: Թեև նրա կողմնակիցները բողքեցին 51 երեսփոխանների կողմից ստորագրված հանրագրի բո-

Ակրտիք ԽՐԻՄՅԱՆ. Հասարակական-քաղաքական գործունեությունը

վանդակության դեմ, սակայն ստիպված տեղի տվեցին, որովհետև Ազգային ժողովում փոքրամասնություն էին կազմում: Շետագայում Կ. Պոլսում գտնվող Եջմիածնի անպաշտոն նվիրակ Պետրոս Եպիսկոպոսը խոստովանում է, որ Խրիմյանի պաշտոնանկության համար նրա հակառակորդները ծախսել են «22 հազար ռուբլի օրագրության և փողոցի սրիկաններին գրգռելու կաշառելու համար»<sup>1</sup>:

Այսպիսով, ավարտվեց 4 տարի տևող պատրիարքության շրջանը: Այդ ժամանակամիջոցը հայ ժողովորդի համար լի էր բուռն իրադարձություններով: Գավառներում հասունացող ժողովրդական հուզումներին և խլրտումներին ակնդետ հետևում էր Խրիմյանը. նա ցանկանում էր Սահմանադրության վերաբննությանը տալ այնպիսի ընթացք, որ Ազգային ժողովում գերակշռի բուն Արևմտյան Հայաստանի ներկայացուցչությունը, որի վրա հենվելով նա կկարողանար պայքարել Կ. Պոլսի և ծովեզրյա քաղաքների էֆենդիական վերնախավի նկրտումների դեմ: Սակայն նրա ցանկությունները չիրականացան. գավառի կողմից ընտրված երեսփոխանների չնչին մասն էր միայն գավառացի: Ընտրական սիստեմն այնպիսին էր, որ մայրաքաղաքումն ստած որևէ «ազգային ջոց» իրավունք էր ստանում ներկայացնել որևէ գավառի հայության շահերը: Այդ հանգամանքն էր, որ հնարավորություն չեր տալիս Խրիմյանին մեծամասնություն կազմել Ազգային ժողովում: Չնայած Խրիմյանը որպես պատրիարք չփայլեց վարչական և կազմակերպչական ունակություններով, սակայն արևմտահայ ժողովրդին օգտակար լինելու ծգտումը և ջանքերը այդ ուղղությամբ, նրա անունը դասեցին լավագույն պատրիարքների շարքը, իր ժողովրդավարական հակումներով և գործունեությամբ: Նրա հետ մրցակցող բարձրաստիճան հոգևորականները, որոնք հավակնություն ունեին պատրիարքական գահին և հետագայում հասան այդ դիրքին, անկենթորեն խոստովանեցին, որ իրեն մարդ, ազգասեր ու հայրենասեր, Խրիմյանն անբասիր մնաց մինչև վերը: Հայ Եկեղեցու պատմագիր Մաղաքիա Օրմանյանը այսպիսի գնահատական է տալիս նրա պատրիարքական գործունեությանը. «Խրիմյան, իրավ, իրեն անվարչագետ հայտնվեցավ, բայց մարդը չպատիկցավ, անկեղծ միտքը, ուղիղ սիրտը, անշահասեր ընթացքը, ազգասեր նպատակը և առաջինասեր հոգին միշտ բարձր մնացին և կասկածի ներքեւ չինկան,

1. Ներենց. Կարավականության և Խրիմյան, էջ 22:


1. Գլւթ. Մ.Խրիմյանի Փ., գ. 1:

և Յայրիկ փաղաքական կոչումը ևս քան զևս հաստատվեցավ, և մեծ անունը և մեծ մարդը մեծ մնաց միշտ»<sup>1</sup>:

Խրիմյանի պատրիարքական գործունեության համապարփակ գնահատականն է տալիս նրա ժամանակակից, անխոնչ հասարակական գործիչ Ա. Կրիփիարյանը. «Խրիմյան Յայրիկին պատրիարքությամբը Յայաստան և Պոլիս ավելի սերտ իրարու կապվեցան: Մինչև այն ատեն պատրիարքները կուգային Պոլսո շրջանակներեն կամ փոքր Յայքեն. Նիկոմեդիա, Պրոլսա, Ռոտոսրո, Իզմիր, ասոնք էին պատրիարքներ պատրաստող մենաշնորհյալ քաղաքները: Խսկ Յայրիկ բնիկ վանցի է, Յայաստանը քարոզած է ու Վանեն կը բերեին զինքը: Ազգային ժողովը հայ ազգին գաղափարներուն թարգմանը կը հանդիսանար: Այդ նոր սերնդին պարագլուխը Օտյանն էր, որ Յայրիկին ծեռքեն բռնեց և պատրիարքական աթոռը բարձրացուց: Յայրիկ պատրիարքը ինքինքը հօչակեց «Յայաստանի վիշտերուն պատկերը»: «Յայաստանի հարստահարությանց» խնդիր անունին տակ հայկական խնդիրը ծնավ: ...Յայկական խնդիրը Յայաստանեն բխելով Պոլիս կզորանար 1870-ին և առաջ կերթար օր մը անբողջ Եվրոպայի խնդիրը դառնալու համար»<sup>2</sup>: Սա Խրիմյանի գործունեության, նրա վաստակի համառոտ գնահատականն է, որը փաստում է մի հանգամանք՝ Խրիմյանը հայկական հարցի արծարծնան նախակարապետն է: Նրա պատրիարքական գործունեությունը դրվատանքի է արժանացել հետագայի մի շարք բարձրաստիճան հոգևորականների կողմից (Թորգոն Գուշակյան, Սիոն Մանուկյան, Կարապետ Պալճյան, Վազգեն Ա.): «Բուն Յայաստանը, գավառը ուշադրության կեղրունն էր, և Խրիմյան՝ գավառի առաջյալն էր: Չորս տարի միայն պաշտոն վարեց իբրև պատրիարք, գավառի ցավերով գրադեցավ, կառավարության դիմումներ ըրավ կեղեցիչները պատժելու»<sup>3</sup>:

Խրիմյանի պատրիարքական գործունեության դիպուկ գնահատական է տվել խորհրդահայ պատմաբաններից Ռաֆիկ Շովիանիսյանը. «Լինելով ժողովրդական շահերի արտահայտիչը, Խրիմյանն իր պատրիարքության շրջանում գավառներն աշխատանքի էր ուղարկում, որքան հնարավոր էր, հայրենասեր հոգևորականների: Խա էր, որ առաջ քաշեց Սահմանադրության վերանայման հարցը, որտեղ ոտնահար-

ված էին գավառահայության շահերը: Խա առաջին և վերջին պատրիարքը եղավ, որ բողոքեց սահմանադրության մեջ գավառների կարիքների անտեսման դեմ: Խրա պայքարը սահմանադրության վերանայման համար գավառի ըմբռստացումն էր Պոլսի էֆենդիության դեմ»<sup>4</sup>: Տվյալ ժամանակշրջանից պահպանված արխիվային փաստաթղթերի, Ազգային ժողովի ատենագրությունների և ժամանակի մամուլի քննախույզ հետազոտությունը հավաստում է այդ եզրակացությունը:



1. Ա. Օրմանյան, Ազգապատմ, Հ.Գ., էջ 4304:

2. Ա. Արփիարյան, Հայստան և Պոլս, առ Նոր կյանք, 1899, Ն 13, էջ 195-196:

3. Ա. Մանուկյան, Հայոց հայրիկ, 1957, էջ 17-18:

1. Հովհաննեսյան, Արևածահոյ ազգային ազատագրական շարժմանները և Կոստիճի «Պաշտօն հայրենիք» կազմակերպությունը, էջ 81:



Մկրտիչ ԽՐԻՍՏՅԱՆ. Հասարակական-քաղաքական գործունեությունը

## ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

### Ա. ԽՐԻՍՏՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏՐԻԱՐքութՅունից ՌՐԱԺԱՐՎԵԼՈՒՅ ՇԵՏՈ

1873թ. հուլիսի 31-ին Մկրտիչ Խրիմյանը հրաժարական ներկայացրեց Ազգային Երեսփոխանական ժողովին, իսկ օգոստոսի 3-ին նույն այդ ժողովում հանդես եկավ «Խոսք հրաժարման» ծրագրային արժեք ունեցող ծավալուն զեկուցմանը: Բ. Դուռը շտապեց ընդունել նրա հրաժարականը, պատվիրելով Ազգային ժողովին ընտրել պատրիարքական տեղապահ: Հասարակ ժողովուրդը, ճասնավորապես մայրաքաղաքի ստվարաթիվ պանդուստ համալներն ու թուլումբաջիները (բեռնակիրներն ու հրշեջները), ճնշում են գործադրում Ազգային ժողովի երեսփոխանների վրա՝ պատրիարքական տեղապահի ընտրություն չկատարելու պահանջով, Խրիմյանի պատրիարքությունը շարունակելու նպատակով: Այդ բանը պատճառ դարձավ կառավարության միջամտությանը՝ Ազգային Սահմանադրության դադարեցման հեռահար հարվածով: Միայն այդ հանգանաճը ստիպեց Խրիմյանի կողմնակիցներին՝ բողնել պայքարի ասպարեզը և հաշտվել պատրիարքական տեղապահի ընտրության փաստի հետ: Կարծ ժամանակ այդ պաշտոնը վարեց Եպիսկոպոս Նիկողայոս Աղասյանը, որի մահից հետո ընտրվեց նոր տեղապահ՝ Ներսէս Վարժապետյանը<sup>1</sup>:

1874թ. մայիսի 8-ին Վարժապետյանն Ազգային ժողովի կողմից ընտրվեց պատրիարք և իր ուխտը կատարեց վերաբննված սահմանադրության Բ. Դուռն կողմից վավերացված հոդվածների տարբերակի վրա:

Յրաժարված Մկրտիչ Խրիմյանը մնաց Օսմանյան կայսրության

1. Սարտիսի, Հայկական խոնդիք և Ազգային Սահմանադրությունը Թուրքիայում (1860-1910), Ա. Խառոր, էջ 69:

## Եմա ԿՈՍՏՎՆԴՅԱՆ

մայրաքաղաքում: Նա կարող էր վերադառնալ Վասպուրական, ուր Վարագա վանքի վանահայրն էր, որն իր երկարատև բացակայության ընթացքում վարում էին վանահայրության փոխանորդները: Կարող էր մեկնել Տարոն՝ Սք.Կարապետի վանք, ուր դարձյալ վանահայր էր, եջմիածնի կողմից եպիսկոպոս օծված՝ «ի վերա տանն Տարոնո»: Սակայն լրեւյան համաձայնությամբ և՛ Բ. Դուան կողմից, որը չեր ուզում անհանգիստ հոգևորականին քողնել իր հսկողությունից դուրս, և՛ ժամանակի պատրիարքի, և՛ անձամբ իր, նա շարունակեց իր գործունեությունը Կ.Պոլսում՝ զավառահայությանը հուզող խնդիրների լուծմանը իր նպաստը բերելու նպատակով:

Թուֆորի ասիական ափին գտնվող Կ.Պոլսի Գուգկունճուք քաղամասում, ազգային վարչական պաշտոններից հեռացած, նա «լուռ ու մունջ» հետևում էր Ազգային ժողովի նիստերին, առանձնակի հետաքրքրություն դրսութելով քննարկվող զավառական խնդիրների նկատմամբ, գուգահեռաբար գրադելով գրական գործունեությամբ: Թվում էր, թե Խորհմանն ընդմիշտ հեռացել է հասարակական գործունեությունից: Սակայն դա երևորական էր: Նրան հետաքրքրում էին նույնիսկ համակայսերական, համապետական այն խնդիրները, որոնք շոշափում էին ազգային շահերը:

Խորհմանի հակառակորդները, որ ամեն ինչ արել էին նրա հրաժարականն ստանալու համար, չդադարեցրին իրենց բանսարկությունները: Նորընտիր պատրիարք Ներսես Վարժապետյանը մեծ ժողովրդականություն և հեղինակություն ուներ Կ.Պոլսում: Նա իր պատրիարքական գործունեությունն սկսեց փաստորեն շարունակելով նախկին պատրիարքի ծրագրերը: Այդ հանգամանքը ակնառու էր ժամանակակիցների համար, որոնք փաստում էին. «Ներսես իր քաղաքականությամբ հետևող էր Խորհմանին, որ արծարծեց և ստիպողական պահանջ որեց զավառներում հայ ժողովրդի վիճակը բարեկարգել»<sup>1</sup>: Խորհմանի հակառակորդները, խտրություն չդնելով նիշոցների մեջ, ցանկանում էին սեպ խրել երկու ժողովրդական գործիչների միջև, նրանց ներկայացնելով իրեն տարբեր կուսակցությունների ղեկավարներ: Բանը հասավ այնտեղ, որ նույնիսկ Վարժապետյանը, ականայից, հանձին Խորհմանի տեսավ իր ախտյանին: Վերջինս, որ պատրիարքությունից հրաժարվել էր ոչ թե առերևույթ, այլ ողջ հոգով,

## Մկրտիչ ԽՈՐԻՄՅԱՆ. <ասարակական-քաղաքական գործունեությունը

որի համար ամեն անծնականից բարձր էր ազգային շահը, ապրելով նույն քաղաքի տարբեր թաղանասերում, որոշեց նամակով դիմել պատրիարքին՝ իրենց հարաբերությունները պարզաբանելու և բարելավելու միտումով:

Քրիստոնեական սիրով, ներողամտությամբ, մարդկային բարձր քարոյական արժեքների գնահատումով և պահանջով հրաժարյալ պատրիարքը դիմում է ներկա պատրիարքին, բացատրում, որ հակասահմանադրականները սահմանադրության պաշտպանի քողի տակ անպտուղ դարձրին իր գործունեությունը և նույն նպատակով գրգռում են Վարժապետյանին իր դեմ, որից մեծապես տուժում է ազգային գործը, հասարակության շահը: Խորհմանը բացատրում է Վարժապետյանին, որ բոլորովին ցունի վերստին պատրիարքական գահ բարձրանալու, իր միակ և գերազույն նպատակը՝ ծեռք ծեռքի տված ջանասեր գործունեությունն է՝ հանուն ազգի բարորության: Նա Ժիտում է այն սաղրանքը, թե ինքը՝ Խորհմանը, հականերսիսան խնդիր կամ կուսակցության պարագլուխ է, հավատացնում իր անկեղծության մեջ. «Մի հավատար, սրբազն տեր, հաստատուն կաց արողիդ վրա... Եթե համար լինեի և փառասիրությունը զիս գրգռեր պինդ գրկել ու չքողով այդ գահն: Եթե մինհայն ազգին համար իրավունքներս չնորոնայի, մի՞թե դժվարին էր իմ ոստիններուս հետ իրավախոհ լինել, դուք ինքնին գիտեք, թե որչափ դյուրին էր, բավական էր, որ սահմանադրության վերաքննությունը չպահանջեի: Ահա Քրիստոսի սիրո խաղաղարար ողջույն տալով կըսեն, թե՝ Եղբայր եմք մեք և Մովսես մեր մեջ գալով կիանդիմանե, որ չզրկինք իրար»<sup>1</sup>:

Հրաժարված պատրիարքին հուզում էին ժամանակի իրադարձություններն ու ալեքսանդրոս 1839 և 56 թթ. բուրքական իշխանությունների հրատարակած բարենորոգումների հրովարտակները մնացել էին թղթի վրա: Վերջին հրովարտակից հետո անցել էր երկու տասնամյակ: Կայսրության հասարակական կյանքում երևան էր գալիս մի նոր ուղղություն, որը եվրոպական պետությունների «ճնշող» ծեռքը Թուրքիայից հեռացնելու միտումով կյանքի էր կոչում նոր ծրագրեր: Թուրքական կյանքում բատերաբեմ էր բարձրանում նոր օսմանների հոսանքը: Նրանց պարագլուխ Միհիատ փաշան դառնում էր բուրքական սահմանադրության հայրը. նրա համախոհների շար-

1. Գ.Ա. Խորհմանի, 62-ի. աշխ. , էջ 74:

քում էր նաև հայ հասարակական գործիչ, թուրքական պետական պաշտոնյա Գրիգոր Օսյանը, որի աջակցությամբ և անմիջական մասնակցությամբ ստեղծվում է թուրքական սահմանադրությունը: Թուրքական սահմանադրության պայքարի հորձանուտում իրար են հաջորդում սուլթան Աբդուլ Ազիզն ու Մուրադ Ե-ն: Առավել խորանանկ Աբդուլ Ջամիլին հաջողվում է գահընկեց անել Մուրադին, խուսափել եվրոպական պետությունների միջամտությունից, առերես հանաձայն ել թուրքական սահմանադրության հեղինակ Միհիատի հետ և մի հարվածով Թուրքիան հայտարարել սահմանադրական միապետություն:

Խորիմյանը, որ պատրիարք էր դարձել Գրիգոր Օսյանի եռանդուն միջամտությամբ, հրաժարական տալուց հետո էլ վայելում էր նրա հովանավորությունն ու բարեկամությունը: Ենշտ է, սուլթանը իրեն ներկայացրած սահմանադրության տարբերակից կրծատել էր առաջադիմական բազմաթիվ հոդվածներ, որոնք վերաբերում էին, ճասավորապես, քրիստոնյա հպատակների իրավունքներին, սակայն և Օսյանը, և Խորիմյանը պատրանքներ ունեին նոր ժամանակների գալստյան վերաբերյալ: Իր ժողովրդի լավագույն ապագայի նկատմամբ տածած հույսերով և ակնկալություններով Խորիմյանը եռանդուն մասնակցություն է ցույց տալիս համակայսերական կյանքին: Ժամանակի բուռն իրադարձությունների ազդեցության տակ նա գրում է «Ժամանակ և Խորիմյան յուր»՝ աշխատությունը, որը լուս է տեսնում 1876-ին: Հոյսերի, սպասումների, ակնկալիքների, կասկածների և տարակույսների, բազմաթիվ հարցականների միասնություն է իրապարախոսական համարոտ այդ երկը: Ժողովրդին ավետելով քաղաքակիրք աշխարհի, նոր բարերի, նոր ժամանակների գալստյան մասին, հեղինակը զգուշացնում է, որ «ին աշխարհակալաց ոգին, փառասիրության տենչը» չեն վերացել աշխարհի երեսից, առավել զորացել և սրվել են հզոր պետությունների՝ այս աշխարհի ուժեղների հակասությունները, եկել է այնպիսի ժամանակ, երբ «ազգ ազգի դեմ և թագավորություն թագավորության դեմ կորուտա կրուրի բնդանորով և կսպառնան միջյանց ծետն ու հիշատակ շնչել աշխարհիս երեսեն»:<sup>1</sup> Խորիմյանի սրափ աչքը տեսնում է նեծ պետությունների միջև եղած հակասությունների սրումը, շահերի բախումը, նա կարծես կանխագում է համաշխարհային պատերազմի հասունացման իրական վտան-

1. Ա.Խորիմյան, Ժամանակ և խորիմյան յուր», էջ 7:

գը: Նա իրար է հակադրում մարդկության պատմության տարբեր ժամանակներ. ստրկության և ազատության, չարչարանքի և փրկության, զրկանքի և հատուցման, կործանման և վերաշինության, միապետության և սահմանադրության: Նախկին պատրիարքը, որ իրեն համարում էր «Դայաստանի ցավոց պատկերը», քաջածանոթ էր հայ գավառի բնակչության ծանր տառապանքներին: Նա իր բողոքի ծայնն է բարձրացնում, որ բարգավաճ երկիրը «իհմանհատակ քանդվեցավ», ավերվեցին շեն գյուղերն ու քաղաքները, իսկ հայրենիքից հեռացած պանդուխտները մի կերպ քարշ են տալիս իրենց գոյությունը «անարգ ծառայությամբ»: Օսմանյան կայսրությունը համեմատելով հռոմեական ստրկատիրական պետության հետ, Խորիմյանը մտորում է՝ արդյոք նոր հռչակված սահմանադրությունը պետք է չափավորի՝ «պետական վարիչների տնտեսական կյանք», որպեսզի արդարությունը իշխի և վերանա «աշխատավոր ժողովրդի զրկանքն ու չարչարված կյանք»: Ենդինակին ալեկոծում է կասկածն ու մտահոգությունը. Սահմանադրությունը ուժ կունենա՞ արդյոք բռնելու ժողովրդի հարստահարիչների ձեռքը, վերացնելու կողոպտիչներին: Սահմանադրությունը կսահմանի՝ նոր օրենքներ, սահման և պատնեշ կղնի՝ կաշառակեր դատավորների առաջ, որ չըրնաբարեն «զրկյալ բողոքողին իրավունքը»: Խորիմյանը պահանջներ և սպասելիքներ ուներ: Նոր հռչակված սահմանադրությունից նա պահանջում էր իրականացնել ազգային խորականության վերացումը, վերացնել թշնամությունն ու ատելությունը տարբեր կրոններ դաշտանողների միջև, որպեսզի նահմեդական և քրիստոնյա ազգերը «իրար ողջունեն իրեւ համաքաղաքացի ժողովուրդ»: Ենդինակի պահանջների շարքը շոշափում էր կյանքի բոլոր ոլորտները. հաստատել հավասարություն՝ իրավունքների և պարտականությունների, հայրենիքի ժառանգության, նրա պաշտպանության, քաղաքացիության, ուսման և առաջադիմության մեջ: Նա դիմում էր օսմանյան կայսրությունում բնակվող բոլոր ժողովուրդներին, ցույց տալիս իրենց կրած զրկանքները, բացատրում, որ նրանք ունեն անհամար պարտականություններ, սակայն զրկված են տարրական իրավունքներից: Բացահայտելով Թուրքիայի հասարակական կյանքի հորի երևույթները, Խորիմյանը գտնում է, որ այդ «բազմատեսակ վերքեր միշտ ծածուկ մնաց, նեխեցավ ու փտեցավ», Վիրահատական միջամտություն է պետք այդ նեխած մարմինն առողջացնելու համար: Այդ միջամտությունը նա համարում է սահմանադրության հռչակումը.

«Յասավ, հասավ ավետարեր ժամանակ, քեզ ավետիս կուտամ ժողովուրդ, լռած լեզու և փակված թերանդ բաց այսուհետու, խոսիր և գրե որչափ սահմանադիր օրենք քեզ ազատություն կուտա, խոսիր, երբ կզրկվես, խոսիր դատավորաց առաջ, երբ ապիրատ ծեռք զքեզ կապտակե, խոսիր և իրավունք խնդրե»<sup>1</sup>:

Խրիմյանը հորդորում է ժողովրդին, որ «իրավունք խնդրե»: Սակայն իրավունքը չեն խնդրում, այլ պահանջում են և նվաճում: Նա գիտակցում է այդ երկու հասկացությունների տարրերությունը և ուսուցանում է ժողովրդին, որ ոչ մի ազատ օրենք չի փրկի ժողովրդին, եթե ինքը չնարտնչի իր ազատության համար: Փաստորեն, Խրիմյանը ժողովրդին է հանձնում իր սեփական ազատությունը ծեռք բերելու, նվաճելու գործը: Դրա համար ժողովուրդը պետք է լավ իմանա, թափանցի նոր օրենքների եռթյան մեջ: Ազատությունը և քաղաքակրթությունը այն միջոցներն են, որ հնարավորություն են տալու պայքարելու բռնության դեմ, օրենքների եղծման դեմ, հարատահարողների և կողոպտողների դեմ: «Գիտցիր, որ ազատ օրենք զքեզ չի փրկեր, եթե դու դարձյալ ստրկությամբ վարվիս քո ոսխի դատախազի առաջ»<sup>2</sup>: Մանուկ սահմանադրության նոր հոչակած օրենքների դայակներին՝ այսինքն սահմանադրության հեղինակներին Խրիմյանը դիմում է հանդգնությամբ՝ ազատ խոսելու և քննադատելու ցանկությամբ. «այլև չեն կարող իին ծառայական ստրկությամբ խոսիլ»:

Այս փոքրիկ երկում հեղինակը առաջ է քաշում սուր սոցիալական հարցադրումներ, հանդես գալիս աշխատավոր ժողովրդի պաշտպանության դիրքերում: Պատասխանելով իր հավանական ընդիմախոսներին, որոնք սոցիալական անհավասարությունը համարում են բռնությամբ սահմանված օրենքներից մեկը, երբ տկարները կուլ են գնում հզորներին՝ «Մի՞թե փոքրիկ ծկներ մեծերին կերակուր չեն», Խրիմյանը մերժում է այդ տեսությունը. «Մի հավատար, ժողովուրդ, այդ վարդապետությունը տիրապետաց ոգին ստեղծեր է, մարդասեր և արդար Աստուծուն չէ, զի ընդհանուր մարդկության կոչումն և կյանք ազատություն, արդարություն և հավասարություն է երկնից առաջ և աշխարհիս քաղաքակրթության օրինաց առաջ»<sup>3</sup>: Սակայն հեղինակը քաջ գիտակցում է, որ այդ հավասարությունը գործադրելու

## Մկրտիչ ԽՐԻՄՅԱՆ. Հասարակական-քաղաքական գործունեությունը

ճանապարհները փակ են: Ողջ աշխարհում իրար դիմաց կանգնած են երկու հակուտնյա ուժեր. «Ուսկին, հարստություն, գահ և թնդանոր միշտ դաշնադիր կմնան աշխարհիս վերա, ժողովրդաց ընկերաշտական միություն այս հզոր դաշնակցաց դեմ պիտի մրցի մինչև ի կատարած աշխարհի. թե իմաստուն են՝ գուշակե թե ո՞վ պիտի հաղթահարե»<sup>4</sup>: Ընթերցողին թողնելով գուշակելու չարի և բարու պայքարի վախճանը, իր կարծիքն ունեցող Խրիմյանը հանդիմանում է երկնային տիրոջը՝ Աստծուն, որ թույլ է տալիս չար ուժերի հաղթանակը. «Ով երկնային տեր... կրողու՞ս այլևս, որ չարերը չարությամբ զորանան և չարաչար բռնադատեն քեզ հավատացյալ ծառաները»<sup>5</sup>:

Ուսումնասիրողներից ոմանք գտնում են, որ «Ժամանակ և խորհուրդ յուր» աշխատությունը հեղինակի՝ թուրքական սահմանադրության նկատմամբ տածած հավատի և պատրանքի արդյունքն է: Սակայն երկի ուշադիր քննարկումը մեզ հանգեցնում է տրամագծորեն հակառակ կարծիքի:

\*\*\*

Օսմանյան սահմանադրության հոչակումը ինչքան էլ տարակույսներ հարուցեր, այնուամենայնիվ, ինչ-որ ակնկալիքներ պետք է առաջացներ հասարակական գործիչների շրջանում: Դրանց համար կային որոշ նախադրյալներ: Մեծ վեզիր Միդհատ փաշայի կողմից Կ.Պոլսում կազմվել էր Պետական քննիչ հանձնաժողովը, որի գործն էր ամբողջ Թուրքիայի համար մշակել բարենորոգումների մի համապարփակ ծրագիր, որտեղ պետք է պաշտպանվեին ոչ միայն իշխող ազգի (իմա - պետության), այլև հպատակ ազգերի շահերը: Առանձին ուսումնասիրություն պետք է կատարվեր Թուրքիայի տարածքում ապրող ցեղերի կացության վերաբերյալ, հետազոտվեր նրանց տնտեսական, բարոյա-հոգեբանական իրավիճակը և առաջարկներ ներկայացվեին, մշակվեր միջոցառումների մի ողջ համակարգ՝ նրանց մեջ քաղաքակրթությունը տարածելու քայլերի մասին, հպատակ մյուս ժողովուրդներին (մասնավորապես՝ քրիստոնյաներին) նրանց կեղծումներից ազատելու նպատակով: «Կառավարությունը հատկապես հրահանգած էր քննիչ հանձնաժողովին, որ մասնավոր ուշադրությամբ քննության առներ Թուրքի մեջ ապրող քուրդ ցեղերի վիճակը և ման-

1. Մերիմյան, Ժամանակ և խորհրդ յուր», էջ 11:

2. Նույն տեղում, էջ 12:

3. Նույն տեղում, էջ 22:

1. Մերիմյան, Ժամանակ և խորհրդ յուր», էջ 24:

2. Նույն տեղում, էջ 27:

րամասն տեղեկագրով հայտներ, թե տնտեսական, կրթական, բարոյական և այլն ինչ տեսակ բարենորոգումներ կարելի է մտցնել մասնավորապես քուրդ ցեղերու մեջ, որ անոնք պետության և երկրի ժողովրդին չարիք և պատուհաս ըլլալե դադրեին»<sup>1</sup>:

Քննիչ հանձնաժողովի մեջ, ի թիվս այլ գործիշների, ներառնված էին նաև հայ պետական գործիշներ (մասնավորապես՝ Օտյանը): Դանձնաժողովն իր զեկուցագիրը ամբողջական դարձնելու միտումով դիմեց տարբեր գործիշների, օգնություն ակնկալելով այն մարդկանցից, որոնք մոտիկից գիտեին քրդական ցեղերի կացությունը և կարող էին բավարար տեղեկություններ տալ հանձնաժողովին: Խրիմյանը պատկանում էր արևմտահայ գավառի իրավիճակին քաջատեղյակ մարդկանց թվին: Դեռևս 1863-ին Տարոնի հոգևոր առաջնորդ Խրիմյանը Մշո մյութեսարիփին ներկայացրել էր քրդական ցեղերի վերաբերյալ մի ամփոփ ծրագիր: Երկու տասնամյակից ավելի ժամանակ անց, այդ բոլորի հիմքի վրա, հարստացնելով նոր ժամանակների փաստերով ու եզրակացություններով, Խրիմյանը գրեց «Ծրագիր բարենորոգմանց»<sup>2</sup> աշխատությունը: Ուշադրության արժանի այդ ծրագրում հեղինակը նախ շնորհակալական խոսք է ուղղում հանձնաժողովին՝ իր խորհրդին դիմելու և իր կարծիքը հաշվի առնելու համար. «Բաղդ և պարտք կիամարեն ինձ, եթե հաջողիմ սույն տեղեկագրովս մասնակից գտնվել այդ վերանորոգ և աշխարհաշեն ջանից, որոց ձեռնարկությունն ու նպատակը կայսերական երկրին նոր կյանք, նոր փառք և նոր հառաջադիմություն կիսուտանա»<sup>3</sup>: Դեղինակն արտահայտում է իր ուրախությունը, որ Բ.Դուռն զբաղվում է երկրի բարեկարգությամբ, ընդգծելով, որ դրա կարիքն զգում են առավելապես քրդական ցեղերը: Սոտիկից ճանաչելով, շփկելով քրդական զանազան ցեղերի և նրանց առաջնորդների հետ, քաջատեղյակ լինելով հոժ գավառահայության կրած տառապանքներին և հարստահարություններին, որոնց հիմնական աղբյուրը քրդերն են, Խրիմյանը հմուտ վիրաբույժի ճնան մատը դնում է խորը վերքի վրա, նշելով նաև դարձնանելու ճարը: Քրդական ցեղերի կատարած ապօրինի գործողությունների համար առաջին մեղավորը նա համարում է կառա-

1. Հայկ Աճեմյան, Հայոց և այլի, Ա հ., էջ 470:

2. Այն մնաց անտիք և բայ աշխարհ եկամ միայն հեղինակի մասից նեստ, Երիտրաբերի եկամխարթայինց մեկ տարի անց, 1909թ., Կ.Պալսում:

3. Ա.Խրիմյան, Ամբողջական երկիր, Նյու Յորք, 1929, էջ 853:

վարության տեղական պաշտոնյաներին, որոնք «պարտազանց գտնված են իրենց պաշտոնի մեջ և պատասխանատու Բ.Դուռն առաջ»<sup>1</sup>: Դիվանագիտական նկատառումներով Խրիմյանը գլխավոր մեղավոր համարում է տեղական պաշտոնյաներին, որոնք թերանում են աշխատանքի մեջ, չեն կատարում իրենց պարտականությունները և «պարտազանց են բարձրագույն ատյանների առաջ»: Դենց նրանց նպաստավոր թողտվությամբ քրդերը հնարավորություն են ստանում կողոպտել և հարստահարել երկրագործ ժողովրդին և հասույթի համապատասխան չափով կաշառել տեղական պաշտոնյաներին: Դեղինակը ժխտում է քրդերի զինական ուժի մասին տարածված չափազանցությունները, գտնելով, որ ցանկության դեպքում փոքրաթիվ կանոնավոր գործերով կարելի է ճնշել նրանց վայրագությունները: Նա գտնում է, որ այդ գործողությունները հատուկ ֆինանսների կարիք չեն գգում և ապացուցում, որ նման վարվելակերպով, ինքնահոսի թողնված քրդական թռունների ասպատակությունների հետևանքով «Երկրագործի վաստակը կավերե, գյուղացին կմնա օրվա հացի կարոտ», իսկ դրանից մեծ հարված կտանա պետական գանձարանը, որովհետև հարկատու ժողովուրդը դարձել էր անվճարունակ: Արհամարիելով երկրագործի խոփն ու արորը, քուրդ թռունները մանգաղից ու գերանդից իրենց համար զենք են ծուլում: Քուրդը զինվոր չէ և չի ենթարկվում ոչ մի օրենքի, բայց նա երկրագործ է չէ, չի վճարում ոչ մի հարկ, չունի ոչ մի կալվածագիր և օրենքով սահմանված հողակտորներ, բայց նրան են պատկանում ամենալավ արոտավայրերն ու հողակտորները: Դեղինակի կարծիքով այդ բոլորը կատարվում է պետական օրենքները հաշվի չառնելուց՝ «տերության օրինաց անգործածությունից»: Քուրդի համար չկա ոչ ոստիկան, ոչ զինվոր, ոչ պետական պաշտոնյա: Նա հնձում է գյուղացու ցանածը, կողոպտում ուրիշի վաստակը: Պետությունն այդ ամենին նայում է մատների արանքից, քանի որ նա ցանկանում է իր օգտին ծառայեցնել քրդական ցեղերի զինական ուժը: Դեղինակը փաստերով ցույց է տալիս, որ «Արևելյան պատերազմի» (իմա՝ Դրիմի պատերազմի) ժամանակ քրդերն ավելի շատ զբաղված էին ավարով ու կողոպուտով և չին աջակցում կանոնավոր բանակի ռազմական գործողություններին, վտանգի դեպքում փախչելով կովի դաշտից: Ստացվում էր, որ քրդական ցեղերը տերությանը չեն նպաստում ոչ տնտեսական և ոչ էլ

1. Ա.Խրիմյան, Ամբողջական երկիր, Նյու Յորք, 1929, էջ 854:

ռազմական բնագավառում: Դրա փոխարեն նրանք մեծ հարված են հասցնում հպատակ ազգերի (ոչ մահմեդական բնակչության) գյուղացիությանը, որից գանձվող հարկերով է լցվում պետական գանձարանը: Խրիմյանը քրեական հանցագործ է համարում այն պաշտոնյաներին, որոնք գորակցում, աջակցում էին քուրու ցեղապետերին և կողոպտում ժողովրդին: Երկրագործի աշխատանքի անարդյունավետ լինելու դեպքում պետությունը կզրկվի իր հացի մատակարարից, զինվորը անհաց կմնա: Բ.Դուան բարձրաստիճան պաշտոնյաներին ներկայացվող գեկուցագրում Խրիմյանը հանգում է ուշադրության արժանի եզրակացությունների: պետության ուժի և անրության հիմքը, աղբյուրը ժողովուրդն է, նրա ամենաստվար մասը՝ գյուղացիությունը: Եթե թուլանում է գյուղացու տնտեսական ուժը, թուլանում է նաև պետությունը:

Պետության հարստության աղբյուրը ժողովրդի շահութաբեր աշխատանքն է: Դակառակ դեպքում՝ թուլանում և քայլայվում է պետությունը: «Երկրագործի խրծիքը երբ փլչի, ծայն կիասնի մինչև պետության պալատ. ո՞վ չգիտե, թե աշխարհիս պալատներուն իիմն ու խարիսխ շինական ժողովուոց խրծիքն է: Արդ՝ ինչպես կարելի է բույլատրել, որ քուրոյին ավերածու ծեռք հողագործին տունը քանդե և պալատին սյուները խախտին»<sup>1</sup>: Եզրակացությունը մեկն է. պետության շահերը պահանջում են վերացնել ժողովրդի հարստահարիչներին, քրդական ցեղերի համար կատարել մի շարք բարեկոխումներ: Առաջին հիմնաքարը, ըստ Խրիմյանի, քրդական ցեղերի բնակության համար «սեփական հող և երկիր» որոշելն է: Այդ բանը պետք է կիրառել առաջին հերթին քրդական ցեղապետերի՝ թոռունների նկատմամբ: Գործն իրականացնելու համար անհրաժեշտ է «Տաճկաստանի քուրդ ցեղերուն ճիշտ և կատարյալ աշխարհագրություն մի առնել, որոց համար շատ մեղադրելի են գավառապետք... մի՞թե կարելի է խառնուրդ երկիր մի բարեկարգել առանց կարևոր աշխարհագրության»<sup>2</sup>: Խրիմյանի տվյալներով նինչն 200.000-ի հասնող քրդերի ընդհանուր թվաքանակի միայն մի փոքր մասն են թոռունները, որոնք հարստահարում են ոչ միայն քրիստոնյաներին, այլև իրենց ազգակիցներին: Մեծ դժվարություն չեն նրանց բնակեցնել քաղաքներում, իրենց կրոնակից քուրդ պաշտոնյաների հսկողության տակ:

1. Մ.Խրիմյան, Ամբողջական երկեր, էջ 857-858:

2. Նույն աելում, էջ 858:

Ըստ Խրիմյանի ներկայացրած տվյալների, թոռունների թիվը հասնում է մոտ 20.000 -ի. Նրանց կարելի է բնակեցնել այնպիսի քաղաքներում, որտեղ կան թուրքական կանոնավոր բանակի զորամասեր. այդպիսիք կարող են լինել Կարիմնը, Վանը, Բաղեշը: Եթե այդ վայրերը հարմար չեն, հեղինակն առաջարկում է մի այլ տարբերակ: Վասպուրականում է գտնվում մի հին և ավերված քաղաք՝ Մանազկերտը, որն աչքի է ընկնում բնական հարմարավետ պայմաններով, առատ ջրային պաշարներով, դաշտերով և հովիտներով: Կարելի է այն դարձնել մյութեսարիֆության կամ գայմագամության կենտրոն և քրդական թոռուններին վերաբնակեցնել այնտեղ՝ կառավարական պաշտոնյաների աշալուրջ հսկողության ներքո: Խրիմյանը պահանջում էր քրդական բնակավայրերի մոտ կառուցել մի քանի փոքր զորանոցներ, զորքի սահմանափակ քանակով: Նա նույնիսկ մատնանշում է զորանոցների հարմար վայրերը. Արադայի դաշտը Նեղարանցի ցեղերի համար, երկու զորանոց և Վշո հարավային կողմերում՝ Լեռնական և քոչար կոչվող ցեղերի համար, որոնք Տիգրանակերտի շրջանակներից ամեն ամառ տարածվում են Տավրոսի լեռներում: Բարենորոգումների ծրագրի հեղինակը նանրամասն հաշվարկներով ցույց է տալիս, որ նման զորանոցների կառուցումը պետությունից մեծ ծախս չի պահանջի, քանի որ այդ վայրերը զորանոցներին կմատակարարեն գինվորների և ծիերի անհրաժեշտ պիտույքները: Քրդական ցեղերի մոլեռանդության, վայրագության և կրօնական անհանդուղականության համար գլխավոր մեղավորները Խրիմյանը համարում է քուրդ շեյխներին, որոնց սադրիչ ելույթներով և իրահումներով պավերվում են բազմաթիվ եկեղեցիներ և վաճերել: Իբրև ապացույց նախկին պատրիարքը նշում է գավառներից պատրիարքարանին ուղղված բոլոքագրերը: Վկայակոչելով 1856 թ. օսմանյան իրովարտակը, այնուհետև 1876 -ին հոչակած սահմանադրությունը, որը հայտարարում է բոլոր կրոնների, հավատների և դավանանքների իրավահավասարություն, Խրիմյանն իր մեղադրական խոսքն է ուղղում պետական պաշտոնյաներին, նրանցից պահանջում է զսպել շեյխներին, սահման դնել նրանց կրոնական մոլեռանդությանը, արգելել նրանց թունավորել ժողովրդի գիտակցությունը, գործադրել բոլոր օրենքները: Նեղինակը ժխտում է պետական պաշտոնյաների պատճառարանությունը, թե զսպիչ գործողությունների հետևանքը կլինի քրդական ցեղերի գաղթը Պարսկաստան և Ռուսաստան: Նա ապացույց է, որ այդ

գաղթը չի լինի, իսկ լինելու դեպքում էլ կշահի թուրքական պետությունը, ոչ թե կորուստ կունենա, քանի որ կապահովվի և կրարելավվի երկրագործ ժողովրդի կացությունը: Իբրև ապացույց նա մատնանշում է չերքեզների գաղթը Ռուսաստանից, նկատելով, որ այդ երևույթից շահեց Ռուսաստանը, ոչ թե Թուրքիան: Կովկասն ազատվեց ավերիչ ծեռքերից, որոնք անցան Թուրքիա: Բարենորոգումների ծրագրի իրականացնան առաջին և գլխավոր գործոնը Խրիմյանը համարում է «իմաստուն, հզոր, բարեկարգիչ, գործադիր ծեռքը», հակառակ դեպքում բոլոր բարձրագույն հրամանները և ամենաընտիր օրենքները կմնան անգործադրելի: Խրիմյանը պահանջ է դնում հանձնաժողովի առաջ թժախնդրությամբ ընտրել և գավառներում հաստատել քաղաքակիրք, արդարակրոռվ, կարողաձեռն, անխար և հավատարիմ պաշտոնյա տերությամ<sup>1</sup>: Ըստ հեղինակի, նման պաշտոնյայի կարիքը զգացվում է առավելապես Վանա (Վասպուրականի) նահանգում, որովհետև այն հայկական նահանգներից ամենահայաշատն է և քուրդերի թվաքանակն այստեղ ամենամեծն է: Նա պահանջում է նոր վարչական միավոր, այսինքն նոր կուսակալություն ստեղծել պարսից և ռուսաց սահմանագլուխներում, որպեսզի անընդհատ տեղի տեղ փոխադրող քրդական ցեղերը իրենց քոչվորական նիստ ու կացով չխանգարեն երկրագործի խաղաղ աշխատանքը:

Գավառների կապը նահանգական կենտրոնի հետ բարելավելու նպատակով Խրիմյանն առաջարկում է պետական նավագնացություն սահմանել Վանա լճի վրա. «Փոքրիկ շղգենավ մը լինի, որով բոլոր ծովեզրյա գավառները կենտրոնին հետ կկապվին, 4 և 5 օրյա հեռավոր տեղերը միայն իինք և վեց ժամ կլինի և ...ասով հաղորդակցությունը կոյուրանա»<sup>2</sup>: Կրկին անգամ ընդգծելով օրենքը գործադրող տեղական օրինապահ պաշտոնյայի անհրաժեշտությունը, բարենորոգումների ծրագրի հեղինակը շեշտում և ընդգծում է Բարձրագույն Դուռական հաստատուն կամքի կարևորությունը, որպեսզի վերջինս գորավիգ լինի արձակած հրանաների և ընդունած օրենքների կատարմանը: Իր իմացած օրինակներով Խրիմյանը փաստում է, որ երբեմն գավառներ են ուղարկվում ծեռնիաս, արդարակրոռվ և վճռական պաշտոնյաներ, սակայն նրանց ծեռնարկումները չեն արժանանում Բ. Դուռան և մի շարք բարձրաստիճան պաշտոնյաների հավա-

## Մկրտիչ ԽՐԻՄՅԱՆ. Հասարակական-քաղաքական գործունեությունը

նությանը, այդ պատճառով էլ շատ հաճախ նրանք փոխարինվում են կամակատար և կամագուրկ այլ պաշտոնյաներով: Խրիմյանը հիշում է Կարիմի կուսակալ Խսնայի փաշայի անունը, որն իր գործունեության սկզբում ջանքեր գործադրեց զինաթափել քրդական ցեղերին և նստակյաց կյանքի վարժեցնել: Այդ փաշան խորհում էր. «Մինչև քուրդերի զենքերն իրենց ծեռքեն չառնվին, անհնարին է, որ նոքա զիշանին նածը բռնել և սուրին տեղ երկարե խոփն ընդունել»: Քննադատելով Բ. Դուռան քաղաքականությունը, Խրիմյանը տարակուսում էր՝ յաղաղության տարիներին ինչ նպատակներով են զինված քրդական ցեղախմբերը, եթե ոչ աշխատավոր ժողովրդին կողոպտելու, քրիստոնյա բնակչության շրջանում ավեր ու մահ սփռելու: Խսնայի փաշայի նման հատուկենտ արդարակրոռվ գործիչները գործունեության առաջին իսկ քայլերից պաշտոնանկ են արվել, հեռացվել պաշտոնից և փոխարինվել այնպիսի պաշտոնյաներով, որոնք բարենորոգումների քողի տակ քանի են նախորդի շինությունները, տեղը թողնելով ավար ու ավեր:

Ծրագրի հավելվածում Խրիմյանն առաջարկում էր Բ. Դուռանը զբաղվել քուրդ ժողովրդի կրթության և լուսավորության խնդիրներով: Նա գտնում էր, որ քուրդ պետության շահերը պահանջում են «քուրդերու զավակաց կրթության հոգ տանիլ, գեր ազնվական կոչված թռուներուն զավակները կուսակալությանց մեջ հաստատված մեքտեայի ոյուշտին անուն տերության դպրոցներու մեջ ընդունել, պետք եղած ուսմունքներ տալով, որով միայն հնար է քուրդերու վայրենի բարքը մեղմել... և զանոնք հետզհետե քաղաքակրթության մեջ դնելով տերության և երկրին հավատարիմ ժողովուրդ կազմել»<sup>3</sup>: Իր գեկուցագիրը ներկայացնելով հատուկ հանձնաժողովին, Խրիմյանն այնքան միամիտ չէր, որ իր հավատար, թե իր առաջարկությունները պետք է կատարվեն: Բ. Դուռանը ընդունելով նման առաջարկներ, կատարեց դրանք տրամադրուեն հակառակ ուղղվածությամբ:

\* \* \*

Դրաժարված պատրիարքին զբաղեցնում էին ոչ միայն թուրքական կայսրությանն ալեկոծող խնդիրները, այլև դրան զուգընթաց՝ առավելապես հայության ներքին խնդիրները, որոնք ունեին համազգային

1. Մկրտիչ Խրիմյան, Ամբողջական երկեր, էջ 862:

2. Նույն տեղում:

նշանակություն: Այդ իմաստով խիստ ուշագրավ է «Դրախտի ընտանիք» աշխատությունը, որը լույս տեսավ 1876-ին Կ.Պոլսում: Աշխատության գրվելուն առիթ էր դարձել Խրիմյանի պատրիարքության տարիներին Ազգային ժողովի տարբեր հանձնաժողովներում քննարկվող ընտանեկան և ամուսնական գեղծումների մեծ չափերի հասնող տարբեր երևույթները, որոնք իրենց արտացոլումն էին գտնում դատաստանական խորհրդի արձանագրություններում<sup>1</sup>: Խսկական հորը վայել նա կիսում էր իրեն պատաժ հոգսերն ու խոհերը իր զավակների հետ, հայտնում նրանց իրեն հաճակած լուրջ մտահոգությունները: Խախաբանում նա բացահայտում էր աշխատությունը գրելու շարժադիրը. «Ժամ հասավ, խոստովանին քեզ, ով ազգ Դայոց, չորս տարվան պատրիարքությանս շրջանին մեջ քու ընտանեկան բազմապատիկ աղետները ես ինքնին տեսա և այդ աղետներու մեջ առավել աղետավոր էին ամուսնական խնդիրները»<sup>2</sup>: Զցանկանալով իր ընթերցողներին հուսահատեցնել ընտանեկան գեղծումների թվաքանակով, հեղինակը նրանկատությամբ լրում է և միայն վկայակոչում Դատաստանական խորհրդի արձանագրությունները, որոնց ամենամեծ տոկոսը կազմում են ընտանեկան գեղծումները: Իր գրվածը իբրև հայելի դնելով ժողովրդի հանդեպ, հեղինակը զգուշացնում է հայ հասարակությանը, որ տեսնի իր «հյուծյալ կերպարանքը» և համապատասխան եզրակացությունների հանգի իր ապագայի համար: Ըստ հեղինակի ընտանեկան խնդիրները բոլոր ժողովուրդների համար ունեն Վճռորոշ նշանակություն, բայց դրանք առավել կարևոր և բախտորոշ են փոքր ազգությունների, սեփական պետականությունը չունեցող ժողովուրդների (մանավանդ հայերի) համար: Այդ պատճառով նա նախագուշացնում է իր ընթերցողներին. «Պիտի մեռնիս, եթե չվաղվաղես դարման տանել այդ համաճարակ ու մաշող մահաբեր ախտիդ, որ թե կանուխ, թե անագան գքեզ դեպի թշվառության գերեզման կտանի»<sup>3</sup>: Դարձյալ նախարանում Խրիմյանը բացատրում է իր ընթերցողներին, թե ինչո՞ւ է աշխատությունը կոչել «Դրախտի ընտանիք»: Աշխատությունում շոշափված և քննարկված հարցերը վերաբերում են առավելապես երկրային և ոչ երկնային խնդիրներին,

1. Խրիմյանի պատրիարքությունից երաժարվելու ծրագիր-առաջարկադրությունների 13-րդ կխոր վիրտերան էր ընտանեկան խնդիրներին:

2. Մ.Խրիմյան, Երկեր, Երևան, էջ 184:

3. Նոյն անգում, էջ 183:

այդ պատճառով նա հայցում է իր զավակնների ներողամտությունը, որ ինքը՝ Եկեղեցու սպասավորն ու Ավետարանի աշակերտը, բողած իր հոգւոր պաշտոնը, քննարկում է աշխարհիկ ընտանիքների վերաբերող նյութեր, մոռանալով «Պողոսի քարոզած երկնից անձառ դրախտը»: Բայց քանի որ երկնիքի դրախտը մեծ չափով կապված է երկրի դրախտի հետ, ավելի ճիշտ, ըստ Խրիմյանի, այն «Երկնից դրախտի հիմն է, ապա նա պարտը է համարում ժողովրդին հասկանալի, պարզ և մատչելի գրելածնով քննարկել ընտանիքի հետ կապված բոլոր խնդիրները, օրինակ ունենալով մարդկային ցեղի նախահորը, մարդաստեղծնան աստվածաշնչային լեզենդը: Ամենակարևորն այն է, որ հեղինակը ազգի հարատևությունը ու առողջությունը կապում է առողջ և ամուր ընտանիքի հետ: Այդ պատճառով էլ նա իր ողջ եռանդն ու ջանքը ներդնում է հայ ժողովրդի մեջ ապագայի բարի սերմեր ցանելու, ապահովելու հայ ընտանիքների անրությունը, «զի ներկան ապագային հիմն է և ապագան՝ ներկային հաջորդություն և շենք»<sup>4</sup>: Աշխատությունը բաղկացած է 18 փոքր գլուխներից, որոնք բոլորն էլ ունեն խոսուն խորագրեր: «Դրախտի ընտանիք», «Դրախտի ընտանիք արտաք դրախտին», «Դայոց նահապետական տուն և ընտանիք», «Անունություն կամ ընտանեկան կյանքին խափանարար գեղծնություններ», «Ընտրություն և իրավունք», «Կենալից ամուսնու, հարսանիք և խորհուրդ պատկին», «Կոչումն հարսին և փեսային», «Փոխադարձ պարտիք և իրավունք առն և կնոջ», «Մայր և դայակ», «Ընտանեկան դաստիարակություն զավակաց», «Զավակաց պարտիք առ ծնողն», «Մահ ծնողաց և օրինություն», «Ընտանեկան կտակ», «Տան երեց և իր պարտիք», «Փոփոխություն ընտանեկան վիճակին՝ անկումն և բարգավաճումն»: Գլուխների վերնագրերը ցույց են տալիս, որ աշխատության մեջ քննարկվում են ընտանիքներ, մասնավորապես հայ ընտանիքին վերաբերող բոլոր հարցերը:

Ընտանիքի ստեղծնան Աստվածաշնչան լեզենդով հեղինակը համառոտակի վերապատճում է Սուրբ գրքի մի քանի դրվագներ, խոսում կայենի ապիրատության, Աբելի մահվան, Սերի սերունդների, համաշխարհային ջրհեղեղի, Նոյան տապանի մասին. «Եվ ահա ծիրանի գոտին կանար կկապէ Այրարատա աշխարհին վերա, ծգելով մեկ ծայրն ի Մասիս և մյուսն յԱրագած»: Թեկուց Աստվածաշնչան ոգով,

1. Մ.Խրիմյան, Երկեր, էջ 185:

Խրիմյանը Հայաստանը համարում է մարդկային ցեղի օրիանը՝ «նոր խանձարութը», փաստորեն մեր երկիրը համարելով «Նախահայրենիք», որտեղից տարբեր ցեղեր և ժողովուրդներ տարածվել են այլ վայրեր: Այդ բոլորով հանդերձ, Խրիմյանը մեր ժողովորդի իսկական նախահարօք համարում է Հայկին, որը «ազատության և արդարության լույսով» գինված հաւլեց Բելին: Մեր ժողովորդի ծագումը կապելով այդ իրադարձության հետ, նա հայության տարիքը հաշվում է 4000 տարի և նշում է, որ մենք հեռացել ենք մեր նահապետական ակունքներից. պատմության քառուղիներում մեր ժողովուրդը կրել է ծանր հարվածներ. «Կոխեցին մեր հայրենյաց հողը, մերք խառնվեցան ու ծովվեցան. մերք տիրեցին ու զորացան, մերք գերեցին ու կրվեցին, ով կտարակուսի, թե այսքան խառնակությանց մեջ որևէ ազգ մի կարող է յուր իին ընտանեկան կյանքը ողջ և անեղծ պահել»<sup>1</sup>: Շեղինակը պահանջում է հատուկ ուշադրություն դարձնել հայոց ընտանիքների բարոյական արժեքների պահպաննան վրա: Եվ քանի որ դրանց ավանդապահը մեր ժողովուրդն է, իր հայրենի հողին կառչած ժողովուրդը, որը չի հեռանում իր նվիրական վայրերից հանուն ոչ մի բարեկեցիկ կյանքի, Խրիմյանը սիրով ու գորովով դիմում է նրանց. «Ով որդիք հայոց, մի հեռանայք, սիրեցեք Մասիսը, յուր տապան և սուրբ Գրիգորի Կաթոլիկեն, նշակեցեք նոցա ծեռատունկ այգին՝ Այրարատա դաշտը... Մասիսը ծեր հայրենի սեփական տունն է, թող շեն ճնա ծեր տունը»: Այդ հայրենանվեր կոչով հեղինակն ավարտում է իր աշխատության առաջին երեք գլուխները, որոնք նրա համար ծառայում են իրեւ նուտք՝ բուն նյութին անցնելու համար: Աշխատության 4-րդ գլուխը նվիրված է ամուսնությանը, ընտանիք ստեղծելու գաղափարին: Ամուսնությունն ու բնական մեր հեղինակը համարում է ողջ բնության, շնչավոր աշխարհի «կենդանատու հոգին և գորությունը»: Ըստ Խրիմյանի «ամուսնական օրենքը աշխարհի մարդկության իիմն է, բնության մեջ խորապես հաստատյալ և ոչ ծեռք մի կարե խախտել զայն»<sup>2</sup>: Նման կարծիք հայտնելով ընտանիքի նասին, Խրիմյանը քննադատում է իրար հակաղիր տարբեր կարծիքներ, որոնք գոյություն ունեին հեթանոսության ժամանակ և նույնանդ, ծայրահեղ քրիստոնյաների համար: Կերանոսական շրջանում քարոզում էին ոչ թե ընտանիք, ընտանեկան բարբերի մաք-

1. Ա.Խրիմյան, Երկեր, էջ 198:

2. Նայեն անդամ, էջ 200:

րություն, այլ խառնակություն. «Ծնական փիլիսոփայությամբ ուզեցին հանել մարդոց անձեն անորո և պատկառանաց հանդերձը», ծաղրեցին ամուսնական, ընտանեկան հավատարմության և մաքրության չափանիշները: Մոլեռանդ քրիստոնյաներին, որոնք ամուսնական կյանքը համարում էին անառակություն, իրաժարության մարդիկ», որոնք ժիտում են մարդկային սիրտը և բնական սերը: Բանական մարդը չպետք է ննանվի անբան անասուններին. «Մարդիկ անասնակենցաղ լինելով՝ կյանք կվատքարանա աշխարհիս վերա»:

Այդ ամենը կանխելու համար Ավետարանի ծշմարիտ սպասավոր հեղինակը իր դասերն է տալիս հարազատ ժողովորդին: Ընթերցողին թվում է, թե նա իր շուրջն է հավաքել մի հսկա գերդաստան, մի մեծ ընտանիք և հոգեբուխ քարոզ է կարդում, բացատրում հասարակական կյանքի տարբեր երևույթները, ընտանիքի մեծ կարևորությունը պետության և հասարակության համար. «Մեր ընկերական աշխարհին բովանդակ շենքը ամուսնական և ընտանեկան պատվանդանին վրա հաստատված է, ժողովորդոց ոտքը և պետության գահերը նորա վրա դրված են. եթե քանդիվ այս պատվանդանը՝ ժողովուրդ և գահերը ի միասին կտապալին»<sup>1</sup>: Շեղինակի կարծիքով ընտանիքը մի փոքրիկ պետություն կամ թագավորություն է, ուր ծնողները կառավարում են ընտանիքը: Սակայն սովորական պետությունից տարբերվում է նրանով, որ այստեղ չկան ոստիկաններ ու գործ, բացակայում է բռնությունն ու գավազանը, տիրում է հայրական սերն ու մայրական գորովը: Զավակների համար ծնողների գործերը կենդանի օրինակ են և դաստիարակության առաջին պայման: Ժողովորդի առաջադիմությունը, գորությունն ու ոգին, լուսավորության մակարդակը Խրիմյանը կապում է ընտանիքի առաջադիմության ու ամրության, նրա դավանած բարոյական արժեքների հետ: Նա գովեստով է արտահայտվում բուն Արևածայան Հայաստանի (այն ժամանակվա արտահայտությամբ՝ գավառների) ավանդական հայապահպան ընտանիքների մասին, Մուշի, Սարունի, Տարոնի ընտանիքների, հայկական գերդաստանների մասին, երբ գյուղական մեկ ընտանիքում «քսանի չափ նորածին տղոց օրորոցներ» են եղել, դրանք համենատելով Հակոբ Նահապետի ընտանիքի հետ: Գտնելով, որ հայկական ընտանիքների ուժը նրանց միասնության և «միաբան աշխատության» մեջ

1. Ա.Խրիմյան, Երկեր, էջ 206:

է, որ բաժանվելու դեպքում նրանք կորցնում են իրենց ուժն ու ջլատվում, միևնույն ժամանակ նա ամեն բաժանում չէ, որ հաճարում է «ընտանեկան բարգավաճնան արգելք», այլ նորմալ է հաճարում նոր ընտանիքների կազմավորումը ևս, իբրև նոր ծյուղերի ծլարձակում: Սակայն, հեղինակի կարծիքով, դա առավելապես ընդունելի է «քաղաքակիրք աշխարհի»՝ Եվրոպական երկրների համար: Դայկական ընտանիքների բազմաթվությունը նրանց տնտեսական ամրության նախապայմանն է: Խրիմյանը նորուում է, որ Եվրոպական քաղաքակրթությունն իր նոր չափանիշներով հեղաշրջում է Արևելքը, լավի հետքերելով նաև հորի բարքեր: «Արևմտյան քաղաքակրթության այս հեղեղին ջուրը շատ խառնուրդ և պղտոր է. չարն ու բարին, լույսն ու խավար, անկրոն գիտությունը յուր հետ գուգընթաց է: Ուստի հայոց ընտանիքը պետք է այժմեն իրենց աչքը բանան գիտության լույսով ու բարի դաստիարակությամբ պատրաստվին, միայն այսու կարելի է քաղաքակրթության խառնուրդեն բարի մասն ընտրել»<sup>1</sup>: Դեղինակը գտնում է, որ ընտանեկան կյանքի և ամուսնության մեջ կան բազմաթիվ «խափանարար գեղծնունքներ»: Դրանցից ամենակարևորը և առաջնայինը նա հաճարում է «սանձակուտոր ազատությունը», անառակությունը, գեխությունը, պերճանքը: Դրանք մարդկային թերություններն են: Սակայն ընտանիքի ամրությունը կախված է նաև սոցիալական վիճակից, ժայրաստիճան չքավորությունը, նրանից բխող պանդստությունը, «քաղաքային օրենքը» (իմա - պետական օրենք), երկրի տարբեր իրավիճակները ևս մեծ ազդեցություն են գործում ընտանիքների վրա: Ուշադրություն է գրավում «սանձակուտոր ազատություն» արտահայտությունը: Խրիմյանը ազատության ջատագովներից է, բայց ո՞ր ազատության: Նա գտնում է, որ ինչպես բնության, այնպես էլ մարդկային հասարակության մեջ բոլոր երևույթները լավ են իրենց չափի մեջ. ազատությունն ամենամեծ սրբությունն է, բայց դրանից առաջ դրված բնութագրումը՝ «սանձակուտոր», արդեն ոչինչ չի բողոքում այդ հասկացությունից: Դա հավասարագոր է անառակության, գեխության, ցանկասիրության: Առանձին-առանձին քննարկելով այդ հասկացությունները, Խրիմյանը հանգում է հետաքրքիր եզրակացության. այդ գեղծուներով տառապում են ազգերի և ժողովուրդների ունեոր խավերը, իսկ չքավոր ժողովուրդը, մանավանդ

ազգի իիմքը՝ գյուղացիությունը, հարգում և պատվում է ամուսնությունը, մանավանդ պսակի խորհուրդը, որովհետև դա միակ ճանապարհն է զավակներ (իմա՝ ժրածան աշխատողներ) ունենալու, որոնց ջանքերով գոյատևում են ընտանիքները: «Կանոնավոր ամուսնությունը ավելի հասարակ ու շինական ժողովրդոց մեջ ընդհանրացրած է, քան թե քաղաքակիրք կարծված ժողովրդոց ու ազնվականաց մեջ»<sup>2</sup>: Միևնույն ժամանակ Խրիմյանը իրավացիորեն շեշտում է, որ չքավորության ժայր աստիճանը, իր հերթին, պատճառ է դառնում ընտանիքների քայլապայման: Դրա վառ ապացույցն ու վկան հայ զավառների «հյուծախտն» է՝ պանդստությունը, որի մեծացող քանակը սպառնալիք է ոչ միայն ամուսնության և ընտանիքի, այլև ազգային գործության:

Աշխատության մեջ քննարկման առարկա է դառնում նաև ընտանիք կազմող գույգերի ընտրության հավասար իրավուքների խնդիրը: Խնչպիսի իրավունք ունի ամուսնացող երիտասարդը՝ փեսան, ընտրել իր կյանքի ընկերոջը՝ հարսին, նույնպիսի և նույնքան իրավունք ունի հարսը, «Վասնգի հարսն ստրուկ չէ, այլ իբրև ազատ ընկեր յուր փեսային, նույն հավասար իրավունքն ունի, որ իր ազատական հավանությունը նա ևս նվիրե փեսային»<sup>2</sup>: Խրիմյանը այդ իրավունքները հաստատում է Աստվածաշնչի օրինակներով, փատելով, որ նահապետական դարերում կինն անհամենատ ազատ էր, քան միջնադարում կամ իր ժամանակներում: Կնոջ ազատության իրավունքը հեղինակը չի հաճարում Եվրոպայի իրավագիտության նվաճումը, այլ միայն նախկինի վերականգնումը:

Կյանքի փորձով իմաստնացած հեղինակը ամուսնության մեջ մեծ տեղ է հատկացնում նաև ծնողների խորիրդին, գտնելով, որ պետք է տարբերակել ծնողներին ևս. մարդիկ, որոնք զավակների ամուսնության մեջ որոնում են շահադիտական նպատակներ, և աչալուրջ ծնողներ, որոնք իրավեն մտահոգված են զավակների ապագայով: Արյունակցությունից գերծ միություն՝ ահա ամուսնական ընտրության առաջին պայմանը, այդ է պահանջում ոչ միայն հայ եկեղեցին, այլև ժամանակակից բժշկությունն իր փորձով և եզրակացություններով: Այս պահանջի գեղծունը ծնողների կամ այլոց կողմից Խրիմյանը բացատրում է տնտեսական գործունով, ագահությամբ, հաճախ՝ տոհմական հարստությունը պահպանելու նպատակով: Այդ պահանջի չկա-

1. Խրիմյան. Երկիր, էջ 211- 212:  
2. Նույն տեղում, էջ 219:

տարման համար հեղինակը մեղադրում և դատապարտում է իր կարգակից հոգևորականներին, որոնք հաճախ իրենք են աջակցում «Աստծո և բնության կողմից սահմանված» օրենքը խախտելուն: Խրիմյանը գտնում է, որ ընտանիքի համերաշխությունը ապահովված կլինի, եթե ամուսնացող գույգերը գտնվեն նույն սոցիալական շերտում, վարեն նույն վարքն ու բարքը, ունենան համապատասխան տարիք: Շահադիտական նպատակներով և դարձյալ ծնողների վճռով հաճախ իրար հետ են «պատվաստում» (այսինքն՝ անուսնացնում) «մին դալար նորատունկ և մյուսն՝ իննափուրց հաստացյալ ծառ», այսինքն՝ ամուսնանում են ծերն ու երիտասարդը, անհավասար միությամբ, զեղծուն բնության հավասարության օրենքը: Արդարամիտ և արդարադատ Խրիմյանը ընդգույն է կրկնանուսնությունն արգելող եկեղեցական կանոնների դեմ, դա ևս համարելով բնության օրենքի խաթարում: Նա բողոքում է, որ երիտասարդ գույգերից որևէ մեկի մահվան դեպքում, մյուսը՝ «նոր բացված գարնան» նման ողջ կյանքում պետք է մնա այրի կամ անամուսին: Նեղինակի համակրանքն ու գործը ուղղված են առանձնապես կանանց սերին, քանի որ ողջ աշխարհում արդարադատության գործը տնօրինում են դատավորները, որոնք, առանց բացառության, բոլորն էլ տղամարդ են և իրենց գործունեությամբ ոտնահարում են կանանց իրավունքները, անտեսում նրանց շահերը: Սակայն կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը պահանջող Խրիմյանը անմիջապես հետ է նահանջում, ավելացնում է, թե հանկարծ ընթերցողները սիսալ չհասկանան իրեն, ինքը չի պահանջում, որ «կիները դատավորական աթոռ նատին», այսինքն՝ հասարակական, իր հսկ արտահայտությամբ «ընկերային կյանքում տղամարդն ու կինն ունենան հավասար իրավունքներ»: Այսպիսով, ընտանիքում կնոշն ու տղամարդուն տալով հավասար իրավունքներ, հեղինակը զիջում է կատարում իր դիրքերից և գտնում, որ կինը չի կարող լինել ոչ օրենսգետ, ոչ գիտնական և ոչ էլ դատավոր: Կնոջ նա վստահում է իր համար ամենակարևոր գործը՝ երեխաների դաստիարակության գործը: Դարձյալ կնոց և տղամարդու հավասարության դիրքերից Խրիմյանը քննադատում է իր ժամանակ տիրող նույն երևույթի երկու տարբեր դրանորումները: Կ.Պոլսում, հայ գաղթօջախների մեծ կենտրոններում տիրում է մի հոռի սովորույթ՝ վաճառքի է հանվում երիտասարդ տղան: Նա ընտրում է այն ընտանիքի դաստերը, որն իր համար կտա առավել մեծ գումար, աղջկա օժիտի

տեսքով: Յայ գավառներում կամ գյուղական վայրերում կատարվում է դրան հակառակը. վաճառքի է հանվում իգական սեղը: Կնոջ արժանապատվությունը բարձարացնելու քողի տակ օրիորդը բաժին կընկնի այն երիտասարդին, որն ավելի մեծ գումարով կհատուցի: Իր ժամանակի դրամատիրական հարաբերությունների բացասական այս կողմերի վրա եր հրավիրում Խրիմյանը հայ հասարակության ուշադրությունը: Նա դառնացած նշում է, որ ամեն ինչ դարձել է առ և վաճառքի առարկա. «Շահադիտություն հրապարակի վաճառանցեն ելավ և ձեր սիրտը մտավ, ամուսնական սերը մեռցուց, ամուսնությունը առևտորի փոխեց»<sup>1</sup>: Դիմելով հայ երիտասարդներին, նա բազմաթիվ օրինակներով ցույց է տալիս, որ ամուր ընտանիքի հիմքում պետք է ընկած լինի փոխադարձ հասկացությունը, սերը, վստահությունն իրար նկատմամբ: Ընտանիքի կնոջ, ապագա մոր ծշմարիտ «զարդն ու փառքը» նրա հոգեկան, բարոյական բարձր ու անանց արժեքներն են՝ համեստություն, հավատարմություն, գավակների դաստիարակություն, տնտեսության հմուտ վարում: Խրիմյանը գտնում է, որ «նյութի վրա» հաստատված ընտանիքները մեծ արագությամբ կըայքայվեն. իբրև այդ փաստի ապացույց նա վկայակոչում է Կ.Պոլսի Պատրիարքարանում քննարկվող ընտանեկան բազմաթիվ ողբերգությունների նկարագիրը: «Ծշմարիտ ամուսնության պայմանը սերն է», - ահա հայոց հայրիկի տված դասերից ամենակարևորը: Ոչ մի հարստություն, ուսի և աղամանդ ի զորու չեն քանդելու սիրով կապված ամուսնական գույգերին:

Նոր ընտանիքի ստեղծման գործում հեղինակը մեծ տեղ է հատկացնում հարսանիքի արարողությանը, պսակի խորհրդին: Այս հարցում դրսարկում է նրա քննադատական վերաբերնունքը իր ժամանակի ծեսերի և արարողությունների նկատմամբ: Խրիմյանն զգուշացնում է իր ընթերցողներին՝ հարսանիքը կատարել չափի մեջ, գերծ մնալ զեխությունից՝ «զեխություն սեղանու, զեխություն արբեցության և այլ այսպիսի զեղմնունքներե, յորոց շատ անգամ կրիվ կծնանի և հարսանյաց տունը սգո տուն կդառնա»<sup>2</sup>:

Նա զգուշացնում է ոչ միայն զեխությունից, այլև նրա տարբեր արտահայտություններից: Նա պախարակում է հայկական գյուղերում սովորութիւն ուժ, ստացած «յոթնօրյա հարսանիքը», որի վրա ծախս-

1. Խրիմյան Հայրիկ, Երևան, էջ 226:

2. Նոյն անգամ, էջ 232:

ված դրամը կրավականացներ մի ընտանիքի նույնիսկ երկու տարվա չափավոր ապրուստի: Դայ գյուղացու ապրելակերպին և հոգեբանությանը քաջատեղյակ հեղինակը փաստում է, որ նման անչափավորությունը դուռ է բացում բազմաթիվ դժբախտությունների առաջ. պարտքով յոթնօրյա հարսանիք արած հայ գյուղացին հարսանիքից կարծ ժամանակ անց, ստիպված, կատարված ծախսերի հաճար վեցցված պարտքը մարելու նպատակով՝ նորափեսային ճամփում էր պանդսության, նորահարս մնում էր ողբ ու կականի մեջ, տարիներով սպասում իր ամուսնու վերադարձին: Թայքայվում էր նորակազմ ընտանիքը, մարում նրա ճրագը...

Նորակազմ ընտանիքների առաջին պարտքը և կոչումը հայրությունն ու մայրությունն է. երեխաններով լեցուն ընտանիքն ունի ամուր հիմք: Եվ դարձյալ, ամեն հարկավոր առթիվ հեղինակն ընդգծում էր կնոջ դերը նորակազմ ընտանիքում: «Կինը յուր ամուսնու ազատ ընկեր և հավասար լժակիցն է ամենայն իրավամբ»<sup>1</sup>: Նա հաստակ չէ, կամ ստրուկ ու ծառա, այլ ամուսնու ցմահ ընկերն է, բախտի և անբախտության անբաժանելի կարեկիցը: Այդ իրավիճակներում հավասար իրավունքներ հատկացնելով կնոջը, Խրիմյանը նրա վրա դնում է մի մեծ պարտականություն՝ անվերապահ հնազանդություն ընտանիքի տղանարդուն: Մնացած հարցերում՝ զավակների կրթության և ընտանիքի տնտեսությունը վարելու ղեկավարը կինն է: Այդ գործերը բավական են կնոջ համար: Ըստ Խրիմյանի երկունքի ցավերով տառապող կնոջ համար փակ է գիտության բնագավառը. «Կին կարող չէ նեկտոն և Շերշել լինել երկնից աստեղատունը դիտելու համար»<sup>2</sup>: Փաստորեն, այս աշխատության մեջ մի քանի անգամ Խրիմյանը բարձրացնում է կնոջ և տղանարդու հավասար իրավունքների հարցը և ինքն իրեն հակասելով, չափավորում է կնոջ իրավունքները՝ միայն ընտանիքի պատերից ներս: Նրան անփոխարինելի տեղ է հատկացնում երեխանների կրթության բնագավառում, բացառելով նրա հասարակական գործունեությունը: Եվ քանի որ զավակների կրթությունը սերտորեն առնչվում էր ժողովրդի վաղվա օրվա հետ, Խրիմյանը պահանջ էր դնում կնոջ կրթության և ուսումնառության խնդիրը դնել պատշաճ բարձրության վրա:

Զավակների դաստիարակությունը Խրիմյանը համարում է ծնող-

## Մկրտիչ ԽՐԻՄՅԱՆ. Հասարակական-քաղաքական գործունեությունը

ների առաջին մեծ պարտականությունը: Նրա կարծիքով դպրոցը երեխանների միայն միտքն է կրթում ու հարստացնում, «զի մանկավարժները միայն մտքին հետ կխոսին, սրտին և ոգվույն հետ բան չունին»<sup>1</sup>: Ծնողների ամենասուրբ պարտականությունն է սիրով, հեղինակությամբ և սեփական օրինակով զավակներին դարձնել խկական մարդ: Դա ծննարիտ և գործնական կրթությունն է: Շռայլ, զեխ, անառակ և արքեցող ծնողի զավակը հազիկ թե լինի պարկեշտ, խնայող, համեստ և աշխատասեր: Ուրեմն, ծնողների առաջին պարտականությունը զավակների կրթությունն է, իսկ զավակների պարտքն է «ճանաչել զնողում և ծնողական ծայրագույն սեր չափել: Աշխարհի երեխին ոչ մի արյունակից հարազատ ծնողի ննան գորով և սեր չունի, նրա սիրուց բարձր սեր չկա, - ընդգծում է հեղինակը և զավակներից պահանջում հարգել, սիրել, ենթարկել ծնողներին, պատկառել նրանցից մինչև կյանքի վերջը: Խրիմյանը աստվածաշնչային հնազանդություն է պահանջում ծնողների և մեծերի նկատմամբ:

Մարդկային կյանքի առաջադիմությունը նրա հերթափոխի մեջ է: Զավակներն իրենք են դառնում ծնողներ և այդ գործընթացը հարատև է: Այսօրվա զավակը վաղվա ծնողն է և ըստ իր կատարածի՝ պետք է պատժվի կամ մեծարանքի արժանանա: «Ընտանեկան պատկառանք և ազատություն» խորագիրը կրող գլխում Խրիմյանը դարձյալ ու դարձյալ (այս էլ որերորդ անգամ) անդրադառնում է կնոջ հասարակական կյանքում ունեցած դերին, պահանջելով կնոջ կրթության հարցը լուծել պատշաճ նակարդակով: Եվ այստեղ դարձյալ կրկնվում էր հեղինակի սահմանափակությունը: Նա պահանջում էր կնոջ կրթության որոշակի աստիճան: Նրա կարծիքով եթե կինը տղանարդուն հավասար կրթություն ստանա, «կճզնի մեզ հետ խորհրդական լինել, աշխարհ կառավարել, օրենք տալ, Սահմանադրության գոչել»<sup>2</sup>: Ղեղինակը սարսափում է, որ գրագետ կինը հանկարծ «քվե տալու իրավունք» կիսնորեք: Այդ պահանջը նա համարում է «ծայրահեղ ազատություն», որի պատճառով կքանդվեն ընտանեկան կառուցյանը: Նա չափավորում է հայ կնոջ կրթական նակարդակը՝ սահմանափակելով այն ազգային ավանդական չափանիշներով, սակայն նա անցնում է նաև առաջ, պահանջելով «իին պատկառանաց շնորհին հետո նոր դաստիարակության լույսով փայլել», չխարվել արտաքին կեղծ

1. Խրիմյան Հայրիկ. Երկեր, էջ 245:

2. Նոյն տեղում, էջ 248:

1. Խրիմյան Հայրիկ. Երկեր, էջ 269:

2. Նոյն տեղում, էջ 294:

շքեղ փայլից: Կոնջ թվացյալ քաղաքակրթության ազդեցությունը ավելի մեծ է գաղթօջախներում, կայսրության ճայրաքաղաքի հայկական ազդեցիկ գաղութում: Այդ պատճառով Խրիմյանը դիմում է գաղթաշխարհի հայերին՝ չխարվել արտաքին ծևերից, այլ յուրացնել Եկորապական քաղաքակրթության հությունը, բովանդակությունը: Ցույց տալով ընտանեկան կյանքի բարգավաճման և հզրացման մեծ ազդեցությունը ազգի հզրացման համար, Խրիմյանը բացահայտում է այն արատավոր երևույթները, որոնք հասցնում են ընտանիքին քայլայման և անկման, դրանց շարքերում դասելով Կեղծ նորասիրությունը, շռայլ կենցաղը, խաղամոլությունը: Ընտանիքի քայլայունը կկանխվի ուսման և դաստիարակության միջոցով: Ուրեմն ազգի հարատևան իիմքը ընտանիքի հարատևումն է, իսկ նրա հարատևման միակ ուղիղ ճանապարհը «ողջամիտ կրթությունը և ուղիղ դաստիարակությունն է», - ահա «Դրախտի ընտանիք» աշխատության հիմնական եզրակացությունը: «Դրախտի ընտանիք» աշխատությունը հիմն է հայ ազգային ավանդական ընտանիքին, որը բռնել է նոր ժամանակներին վայել «ողջամիտ կրթության» ուղին: Այս աշխատության բարոյական դասերն այժմ ևս պահպանում են իրենց ժամանակակից հնչեղությունը, հաստատելով հավերժ հին ու նոր բարոյական բազմաթիվ չափանիշներ: և արժեքներ:

**ԽԱՇԻ ՃԱՌ.** 1876-ին լույս տեսավ կրոնական թեմային նվիրված Խրիմյանի երկրորդ աշխատությունը, որի ամբողջական խորագիրն է «Դիսուսի վերջին շաբաթ, խաչի ճառ և կորուսելու հիմնարության»: Դիսուսի կյանքի դրվագների ինքնատիպ վերապատճենությունը հեղինակի համար միջոց է՝ համեմատել իր ժամանակի հոգևորականների գործունեությունը: Աշխատությունը նվիրված է հեղինակի խաչատուր հորեղբոր հիշատակին, մարդ, որը Խրիմյանի համար եղել է մարդկային առաքինությունների մարմնացում, մարդկային իդեալ: Դատուկ նպատակաւորդվածությանը հորեղբորը նվիրված ներբողին հաջորդում է «Դորդոր առ իմ պաշտոնակից եղբայրս և խաչակիր ուխտն եկեղեցվո» ուղերձը: «Դիսուսի խաչին ճառը ծեզ համար գրեցի և ծեզ կնվիրեմ, ով խաչին գինվորներ, Ավետարանի պաշտոնյաներ, կենաց բան քարոզողներ և Քրիստոնի հոտին հովիվներ»<sup>1</sup>: Դետագա շարադրանքից պարզվում է հեղինակի մտադրությունը: Դիսուսի կյան-

## Ակրտիք ԽՐԻՄՅԱՆ. Հասարակական-քաղաքական գործունեությունը

ըս պետք է օրինակ ծառայի բոլոր հոգևորականներին, որովհետև նրանք են ժողովրդին քարոզում ընթանալ ուղիղ ճանապարհով, կատարել աստվածային պատվիրանները: Արդյոք ունե՞ն այդ իրավունքը նրանք: Ավետարանի դասերը ավանդող հոգևորականները կամ նրանց մի մասը «սիրո դասը թողինք, յատելություն կրթեցինք զնեզ»: Աստվածային սիրո փոխարեն նրանք իրար հետ վարպում են չարությամբ և ատելությամբ: «Խաչն ու Ավետարանը մեր գրկեն թողումք և սուր առնելով միմյանց կողը միշենք»<sup>2</sup>: Խրիմյանի սրակի աչքից չի վրիպում, որ խաղաղություն սերմանելու փոխարեն հոգևորականները խռովություն են իրակրում «փառասիրության համար, պաշտոնասիրության համար, Մովսեսի արողը նստելու և նախարող լիելու համար»<sup>3</sup>:

Կստիճանաբար ուժեղանում է Խրիմյանի քննադատությունը: Նա խարազանում է իր կարգակիցներին այն բանի համար, որ նրանք չքավարարվելով իրար մեջ խռովություն սերմանելուց, անարգ և սուր միջոցներով պառակտում են ժողովրդին, նրա մեջ հարուցում զանազան վեճեր: Այդ հոգևորականներին Խրիմյանն անվանում է Քրիստոսի «դասալիք աշակերտներ»: Նրանց բոլորին ուղղելով իր հորդորկոչը, երազելով լավագույն ապագա, Խրիմյանը՝ սիրո մեծ քարոզիչը, բայց և մեծ տարակուտողը, հարցն ուղղում է իր ժամանակակիցներին. «Ո՞վ կիավատա, որ վերացվեն բռնություններ, ժողովուրդն ազատ ու երջանիկ ապրի. հավասարություն տիրե, աղքատի խրծիթն՝ հարուստին ապարանից բարձրության հետ հավասարի»<sup>4</sup>: Դաստատ իմանալով, որ դա հնարավոր չէ, հեղինակն անցնում է բռն նյութին, առաջին գլուխն անվանելով «Սիոնի վերնատուն և զատկական գառն»: Քրիստոսի կյանքի առաջին իսկ դրվագներն ընդմիջվում են հեղինակի խոհերով և նտորումներով: Ինչպես «Մարգարիտ արքայության երկնից» աշխատության մեջ, այնպես էլ այստեղ, Խրիմյանը համենատություն է անցկացնում Մովսեսի և Քրիստոսի և նրանց վարդապետությունների միջև, առաջնությունը տալով վերջինին, «Ո՞վ է Մովսես, որ քո սիրուց հավասարի. Մովսես միայն սիրո պատգամ կուտար Խարայելի ժողովրդին, այլ ինքն սիրո զոհ չեղավ: Նա կենդաններ միայն զոհեց զԱստված ողոքելու համար, իսկ դու ինքնանվեր մատեար ի զոհ և յայնժամ երկինք և երկիր գիրար համբուրեցին»<sup>5</sup>:

1. Մ.Խրիմյան, Խաչին ճառ, 1894, Գ. ապագը., Էջմիածին, էջ 2:

2. Նոյն տեղում, էջ Թ:

3. Նոյն տեղում, էջ Ժ:

4. Նոյն տեղում, էջ 13:

Խրիմյանն իր հարվածող խոսքն է ուղղում աշխարհակալ տիրող-ներին, որոնք վաղուց հրաժարվել են Ավետարանական պատգամ-ներից, «սոսկալի թնդանոթներ կծուլեք, նոր-նոր հրազեններ կճար-տարապետեք, պատերազմով, արյունով և ճահիվանը միայն խաղա-դությունը պահել կուզեք»<sup>1</sup>: Իբրև ահեղ աստվածային նախազգու-շացում ինչում է՝ «Որ սուր առնուցի, սրով անկանի»:

Իրար են հաջորդում Հիսուսի կյանքի մյուս դրվագները. «Հիսուս ի գերսեմանի ձոր», «Հիսուս ի ճանապարհ խաչակրության», «Հիսուս ի թերելա սար», «Հիսուս անօգնական թույալ», «Հիսուս ի գերեզման մահու», «Հիսուսի հարություն և հաղթանակ խաչի», «Աշխարհ Հի-սուսին դեմ», «Մամոնան Աստուծոն դեմ», «Դադթանակ ծշմարտության» - ահա աշխատության գլուխների խորագրերը: Վերջին երեք գլուխ-ներից բացի, մյուս ճամփարում պատմվում է Քրիստոսի կրած ծանր տառապանքների մասին և ընդգծվում, որ բոլոր իրավիճակներում Հիսուսն իրեն պահում է աստվածորդուն վայել վեհ և անաղարտ: Եվ համարյա բոլոր դեպքերում այդ իրադարձություններն ընդհիշվում են հեղինակի մտորումներով և Հիսուսի կյանքի ամեն մի դրվագը համեմատվում է իր ժամանակի հոգևորականների վարքի հետ:

Ուշադրություն են գրավում աշխատության վերջին երեք գլուխ-ները՝ «Աշխարհ Հիսուսին դեմ», «Մամոնան Աստուծոն դեմ» և «Դադ-թանակ ծշմարտության»: Ինչպես ցոյց են տալիս վերնագրերը, դրանք բացահայտում են իր ժամանակի դրամատիրական հարաբերությունների, հասարակական կյանքի խորը հակասությունների, դրամի ա-մենազոր դերի խնդիրները: Խրիմյանը գտնում է, որ իր ժամանակի բարոյական օրենքները հակասության մեջ են Քրիստոսի սահմանած օրենքների հետ: «Դու սեր, ընկերություն ուսուցիր, աշխարհ յուր գրկիչներով քո աղքատ որդիքները կիարստահարեն»<sup>2</sup>: Ամենազոր դրամը մտնում է մարդկային ամենասուրբ հարաբերությունների ոլորտը, ոչն-չացնում ամեն ինչ և հաստատում իր տիրապետությունը: «Երանի թե ընկեր ընկեր չզուկեր մամոնային համար, հզորը՝ զանավազն չկոփեր մամոնային համար, աշխարհ աշխարհին դեմ չկովեր մա-մոնային համար, բռնություն չտիրեր, ստրկություն չլիներ մամոնային համար և Յուդան զբեզ չնատներ երեսուն արծաթին համար»<sup>3</sup>: Որ-

1. Ա. Խրիմյան, Խաչի ճառ, էջ 19: Այդ խոսքը սարդկած է բոլոր ժամանակների աֆրականերին և մած հնեղության տմբ նաև այսօք:

2. Նոյն աելում, էջ 122:

3. Նոյն աելում, էջ 143-144:

պեսզի չստացվեր, թե Խրիմյանը դեմ է և քննադատում է ընդհան-րապես աճրողջ հոգևորականությանը, նա իրեն էլ չի սահմանազա-տում նրանցից և իր անունից էլ մեղանչող, բայց և իրենց էլ խիստ մերկացնող խոսք է ուղղում Աստծոն. «Ավաղ, ով տեր, մենք՝ հետին ժամանակիս մեջ քո խաչին դասալիք և վատարտյալ զինվորներն ենք, խաչեն փախանք՝ մամոնան գրկեցինք, քո սեր թողինք, աշ-խարհը սիրեցինք և ասացինք, թե այս է մեր կյանք»<sup>4</sup>: Աշխատության մեջ Խրիմյանը բարձրացնում է նաև ինաստափրական հարցեր, քննար-կելով Աստծոն և բնության, դրանց փոխհարաբերությունների հարցը: Մի դեպքում նա բնությունը համարում է Արարչի կողմից ստեղծված՝ Արարված, մեղադրում է մարդկանց, որ ընդունում են Արարվածը, չեն ընդունում Արարչին: Մյուս դեպքում նա բնությունը նույնացնում է Արարչի՝ Աստծոն հետ. «Կդժվարիմք հավատալ, թե Մասիսի և Դի-մալայի լերանց բարձրություն հորինող բնություն ճարտարապետն է և Մեք Նորա անունն Աստված կլոչենք»<sup>5</sup>:

«Դադթանակ ծշմարտության» գլխում Խրիմյանը ցոյց է տալիս իր ժամանակի հասարակական կյանքում գոյություն ունեցող խորը հակասությունները, երբ ծշմարտության համար մարտնչողները միշտ հալածվում են: Դակադրելով երկնային և երկրային ծշմարտությունը, առաջնությունը տալիս է երկնայինին և խարազանում բռնակալներին, որ հաղորդում են համարում սպանությունները, կոտորածները, ա-զատ մարդկանց ստրկացնելը, աղքատին շահագործելը: Երկնային ծշմարտությունը վեր է այս բոլորից: Խրիմյանը գտնում է, որ եթե կա երկնային ծշմարտություն, ապա Աստված պետք է պատժի հարս-տահարիչներին: Դրա համար էլ շնորհակալությամբ դիմելով Աստծոն, նրան համարում է անքննին: «Ով անքննին ծշմարտություն աշխարհ զբեզ կատե, քո միտք և քո լեզուն չի հասկանա»<sup>6</sup>: Եվ քանի որ իրեն համարում է Ավետարանի ծշմարտությունը քարոզող հեգ պաշ-տոնյա, Խրիմյանը խնդրում է Աստծուն. «Ցույց ինձ ճանապարհ, յոր և գնացից, զի առ քեզ, Տեր, համբարձի զանձն իմ: Ցույց ինձ նաև, որ քո ծշմարտության ճանապարհն ընտրեմ և քո իրավունքը հա-վիտյան չմոռանամ»<sup>7</sup>: Իր կյանքի ողջ ընթացքով Խրիմյանն ապա-ցուցում է, որ իր քարոզած գաղափարների առաջին կատարողն է:

1. Ա. Խրիմյան, Խաչի ճառ, էջ 146:

2. Նոյն աելում, էջ 157:

3. Նոյն աելում, էջ 183:

4. Նոյն աելում, էջ 185:

Միդիատ փաշայի ղեկավարությանը Սահմանադրություն ընդունած թուրքական պետությունը առաջին քայլերն էր կատարում բարենորոգումների ուղիով: Սուլթան Աբդուլ Ջամի 2-րդն իր բռնապետությունը պայմանվելու համար առերես համաձայնվել էր Սահմանադիր միապետության գաղափարին. կատարվել էին խորհրդարանական ընտրություններ, ընտրվել էին երեսփոխանական ժողովի անդամներ, իսկ Սենատի կամ ծերակույտի անդամները նշանակվել էին սուլթանի կողմից: Դայերից Սենատի անդամ էր նշանակվել նաև մեծ ժողովողականություն վայելող Մկրտիչ Խրիմյանը, բավականին պատկառելի թոշակով:

Եթե օսմանյան պետության մայրաքաղաքը ցնծում էր «նոր ժամանակների» գալստյան առիթով, հրանոթային համազարկերի ուղեկցությամբ կազմակերպվում էին շքահանդեսներ, այդ նույն ժամանակ կայսրության ծայրամասերում, հպատակ ժողովուրդների, մասնավորապես հայերի նկատմամբ թուրքական պետությունը վարում էր հայության տնտեսական զորությունը թուլացնող քաղաքականություն: Այդ մասին ժամանակակիցը գրում է. «Վան իրքն Ռուսիո ամենն ճոտիկ հայաշատ, բարգավաճ և ոգեսրյալ կենտրոն, կրնար ռուսական արշավանքի մը ընթացքին վտանգավոր դաշնալ, ուստի և պետք էր լախտի հարված մը տալ Վասպուրականի հայության, որ այն ատենները 250.000 կանցներ և որուն գլխավոր շնչերակն էր Վան»<sup>1</sup>: Մայրաքաղաքի թուրքական թերթերը առանց բացցնելու իրենց մտքերը գգուշացնում էին կառավարությանը և ստիպում ծեռք առնել կանխարգել միջոցներ: Չուշացավ այդ միջոցների գործադրությունը: Գավառահայությանը թուլացնելու նպատակով իրար հետևից իրդեհվում էին հայկական նահանգական կենտրոնների վաճառաշահ շուկաները (Վան, Բիթլիս): 1876թ. դեկտեմբերի 1-ին, գիշերը թուրք և քուրդ խուժանի միջոցով, նախօրոք պլանավորված գործողությամբ իրդեհվեց Վանի շուկան՝ 500-ից ամենող խանութներով, որոնց տերերը, առանց բացառության, միայն հայերն էին: Ողջ գիշերվա ընթացքում իրի և ավերի մատնվեց շեն ու բարեկեցիկ քաղաքի հարուստ շուկան: Ինչ չհասցրեց անել հուրը, ավարտեցին թուրք և քուրդ ամբոխի, ոստիկանների և զինվորների ավարառու գործողությունները:

1. Հ. Երամյան, Հուշարձան Վան-Էլասպուրականի, և. II, էջ 92-93:

4. Պոլսի հայոց պատրիարքը կառավարությունից պահանջեց քննություն կատարել և պատժել հանցագործներին: Դրան պատասխան՝ Միդիատ փաշան ծեռնարկեց վարչական նոր փոփոխություններ, 1877թ. հունվարից Վանը դարձավ անկախ վիլայեթի կենտրոն. (մինչ այդ գտնվում էր Եղարումի վիլայեթի կազմում): Գործունյա և անաշխատ պաշտոնյայի համբավ վայելող Դասան փաշան նշանակվեց նահանգապետ (Վալի): Առաջին անգամ նկատի առնելով բնակչության ազգային մեծամասնության հաճագանաքը, թուրք նահանգապետի օգնական նշանակվեց ազգությամբ հայ Մարկոս Աղաբեկյանը: Վերջինս Վան հասնելուն պես բարելավեց ոստիկանության կազմը, հեռացրեց վարքը ու բարքով ոչ բարեհույս մահմեդականներից մի քանիսին, նրանց փոխարինելով հայ ոստիկաններով: Յրդեհի պատճառները քննարկելու նպատակով Վան ժամանեց այսպես կոչված «խառն հանձնաժողով»: Դրա անդամներից մեկը՝ Մկրտիչ Աղաբոնը կազմեց այնպիսի տեղեկագիր, որի տակ հրաժարվեցին ստորագրել հանձնաժողովի հայ անդամները: Մարկոս Աղաբեկյանի համար դիմադրությունը տեղեկագրին հանգեցրեց նրա պաշտոնանկության: Աղաբեկյանի տեղը գրավեց թուրք կառավարության հաճոյակատար Մկրտիչ Աղաբոնը<sup>1</sup>:

Յարազատ քաղաքի դժբախտության լուրջ կայծակի արագությամբ հասավ կայսրության մայրաքաղաքում գտնվող հրաժարված պատրիարքին՝ Մկրտիչ Խրիմյանին: Մի ամիս անց հրաբխի ուժգնությամբ ժայթքեց Խրիմյանի հոգում անբարված ցավն ու զայրությը: Նա երկնեց «Վաճառույժը», «Կուժ մի ջուր իր այրած հայրենյաց վրա սրսկելու համար»: Խրիմյանը նամակով դիմում է վանեցի Աբրահամ Սոլախյանին՝ գրքույկի տպագրության ծախսերը հոգալու խնդրանքով և հայտնում, որ նրա հրատարակության վաճառքից ստացված ողջ հասույթը կհատկացվի «Վանա դպրատանց աղքատիկ մանուկների ծարավն ու պապակը զովացնելու», դպրոցի նոր շենք կառուցելու համար: Վերացել են շեն քաղաքի բարեկեցիկ վաճառանոցները, հառուստներն անգամ «հեծում են չքափորության մեջ», «չթողումք, որ դպրոցներն ել փակվեն»: 1877-ի հունվարի վերջին լույս աշխարհ եկավ փոքրիկ տետրակը և ալեկոծեց ողջ հայությանը: Այն իր վրա բևեռեց նաև օսմանյան իշխանությունների ուշադրությունը, որոնք շտապե-

1. Երեմիս Տելքանց, Տամային եվխառակարաններ, Մանենապարան, ձեռագիր 4182, էջ 61, նաև Հ. Երամյան, Հուշարձան Վան-Էլասպուրականի, և. II, էջ 100:

ցին հավաքել այն և արգելել վաճառքը: Սակայն որոշ օրինակներ արդեն տարածվել էին ժողովոյի մեջ: Ժամանակ անց (ապրիլին) գործույկը վերահրատարակվեց Թիֆլիսում: Գրքույկում արտահայտված գաղափարների, բողոքի և ընդզման համար Խրիմյանը հեռացվեց Աւանտի անդամությունից, կտրեցին նրա ամսավճարը: Սակայն Խրիմյանը չընկրկեց: Նա գիտեր, թե ինչ էր ծեռնարկել, նրա համար անակընկալ չէր իր դեմ կիրառված պատժամիջոցը: Նա չէր կարող լրել. «Թե լրեմ ես, Վասպուրականի քարերը կաղաղակեն»: Ընդգումի, բողոքի, ցասման ու զայրույթի, պայքարի կոչ և ողբի ճիշ էր ինչեցնում հեղինակը: Նա ողբում էր ու անիծում, ոգեկոչում ու ոգեշնչում, ուժ ու հույս տալիս հուսահատ հոգիներին: Գրքույկի հեղինակը առանց վարանելու, առանց փոքր ինչ տարակույսի, համոզված գրում էր, որ Վանի հրդեհը ծրագրված քայլ էր, նպատականդված՝ «քաղցի և ուժաթափության» մատնել հոծ հայություն ունեցող նահանգի բնակչությանը: «Դա ու վաստակդ ծեռքեդ կորցեցին, որպեսզի դու առ քաղցի ուժաթափիս, ոգիդ ու ջիղերդ թուլանան, ծունկերդ կրոտին և այլևս չկարենաս յառաջադիմել դեպ լուսույն ասպարեզ և լավագույն կյանք»<sup>1</sup>:

Խրիմյանը փաստում է, որ Վասպուրականի հայությունը «զորավոր» քայլեր էր կատարում քաղաքակրթության ասպարեզում և ի գորու էր «անշարժ ու անաշխատ եղործ» (նկատի ունի մահմեդական բնակչությանը) մղել առաջ «հավասար բաժանելով հայրենյաց ազգարակի արդյունքը»: Մեղադրելով դուրանի որդիներին հարևանի հացը հափշտակելու համար, Խրիմյանն զգուշացնում է, որ այդ վայրագություններն ու բարբարոսությունները կիհաճգեցնեն թշվար հետևանքների, նահանգում կակսվի սովը իր սարսափելի հետևանքներով: Դեղինակն զգուշացնում է բարձրաստիճան պետական պաշտոնյաներին, որ ննան գործողությունների հետևանքը կլինի աննշակ երկիրը, «հացի ու գանձի սովը»: Դայ հապատակների համար կյանքի բարեկեցիկ պայմանների ստեղծումը կիառնա ողջ կայսրության ապագայի երաշխիքը, - ապացուցում է Խրիմյանը:

Օսմանյան կայսրության հաստատումից ի վեր այդ տարածքում ապրող հայությունը չէր ընթառացել տիրող գալազանի դեմ, նրա զենքերն են եղել խոփն ու արորը, զբաղնունքը՝ արվեստն ու վաճառականությունը: Սակայն հավատարիմ հպատակի այդ ծառայությու-

նը վարձատրվեց ամենաանարգ միջոցներով: Երկրի մայրաքաղաքում արտակարգ շքեղությամբ նշում են Սահանանադրության ընդունումը, իսկ գավառներում լսվում է ժողովրդի տառապագին հեծեծյունը, «հեգ և ապերջանիկ Վանի թշվար որդիների ողբ ու կականի աղաղակը»: Զայրացած ու զարմացած հեղինակը դիմում է մահմեդական հոգեւոր պետերին՝ ճիշտ է, որ իրենց հավատացյալներին հրաման է տրված հափշտակել Ավետարանի որդիների ծեռքի հացը, ճանաչել նրանց իբրև ստրուկներ, որոնց մեջնելը պատիվ է, ոչ հանցանք: Թվում է, ողուանի մասին Խրիմյանն ունի ավելի բարձր կարծիք, քան նրան ծառայողները: Նշելով, որ թուրքական կառավարությունը չի գնահատել հայ ժողովրդի հավատարմությունը, հնազանդությունն ու աշխատափրացությունը, ցասումով լի հեղինակը իր զայրույթն է արտահայտում հարազատ ժողովրդի «անմռունչ և հնազանդ» հատկանիշների վրա, գտնելով, որ դրանք նրան դարձրել են անշունչ ու անբարեա մի դիակ: «Ով հավատարիմ ժողովուրդ հայոց, մարդիկ և ազգեր կան, որ քո այնչափ հավատարմությունդ կծաղրեն և կմեղադրեն զքեզ, ...պարկեշտությունդ կնշավակեն և կոխսկրտելով կանցնին վերայեն»: Դրան հետևում է Խրիմյանի նախատինքը և պայքարի հրավերը. «Մի՞թե գրեհաց կավ ես դու աշխարհիս երես, ես էլ կդատիմ զքեզ, թե այնչափ ստրկանաս և աղարտես մարդկության ազատ պատիվ»<sup>1</sup>:

Սրանք պայքարի առաջին արտահայտություններն են, որոնք հասունանում էին թեև դանադաղ, բայց հաստատում քայլերով: Դեղափոխությունը սկզբում կատարվում է Խրիմյանի հոգում: Դա շրջադարձի սկիզբն էր: Կայսրությունում իրականանալիք բարենորդումներին հավատացող և դրանց նպաստող գործիչը աստիճանաբար հաճալրում էր այլախոների շարքերը: Այդ քայլերը դեռևս բավականին հաստատում չէին:

Ողբ ու կականից առավել նա պարտավոր էր կազմակերպել ու համախմբել ժողովրդին, քանի որ մեծ հավատք ուներ նրա հարատևության և կենսունակության առեղծվածի նկատմամբ: Եվ Խրիմյանը քայլեր է կատարում Վանի քաղաքաբնակների օգնության գործը կազմակերպելու: Նա դիմում է նահանգի գյուղական բնակչությանը, նշում է, որ Վանը զգում է նրանց օգնության կարիքը, այն Վանը, որը միշտ եղել էր գյուղաբնակների «նեղության ապաստարանը», այժմ մեծ կա-

1. Խրիմյան Հայրիկ. Երկեր, էջ 422:

րիքի մեջ է, պետք է զորացնել նրան, դրանով զորացնել հենց իրենց: Նա հորդորում էր գյուղացիներին նոր բացվող գարնանը իրենց լուսան ներդնել քաղաքի վերաշինության գործին, կառուցել «մեր քանդված աշխարհն ու փլած տունը»: Տպագրական խոսքի և մանուկի զորությանը վստահելով մորմոքող իր սրտի ցավն ու հառաջանքը «բնականունդ հայրենիքին» հաղորդելու գործը, Խորիմյանը պատրաստականություն է հայտնում անձամբ մեկնել Վան, ողջագուրել իր «խանճյալ խանձարութը» և գրադել նրա վերաշինությամբ:

«Վանգույժի» տրամաբանական շարունակությունը եղավ «Դայգույժը»: 1877թ. սկսվեց ոուս-թուրքական պատերազմը: Արևմտահայության համար եկան հույսի ու ակնակալիքների, հուսահատության ու մղձավանցի օրեր: Կովկասյան ռազմաճակատի հայազգի զորավարների՝ Լորիս-Մելիքովի և Կրչակ Տեր-Ղուկասովի ռազմական գործողությունների հետևանքով ազատագրվեցին մի շարք հայկական տարածքներ: Հարկադրական նահանջի ժամանակ Բայազետում շրջապատճան մեջ մնացել էր 1600 հոգուց բաղկացած մի զորագունդ: Թուրք Ֆայջկ փաշան փորձեց վերագրավել քաղաքը: Քանի որ իր հրանանատարության տակ գտնվող կանոնավոր գործով նա չէր կարող վերագրավել քաղաքը, փաշան դիմեց Շեյխ Զալալեդինին, և 15.000-ից ավելի քրդական ավարառու անկանոն զորախմբեր հարձակվեցին Ալաշկերտի հովտի հայկական գյուղերի վրա: 24 գյուղ հիմնահատակ արվեց, ժողովրդի մեջ մասը կոտորվեց: Փախչողներն ապաստանեցին Ս.Բարդուղիմեոսի վանքում, սակայն այդտեղ էլ կոտորեցին, կանանց գերեվարեցին: Այդ գույժը Կ.Պոլսում առաջ բերեց մեծ հուզում: Ազգային ժողովի երես-փոխանները բացատրություն պահանջեցին պատրիարքից, որն արդեն դիմումներ էր հղել Բ.Դուռ և շեյխ-ուլ-իսլամին: Վերջիններս ցավակցություն հայտնելով այդ դեպքի առիթով «արդարացուցիչ դեպք հանցանաց» էին համարել պատերազմական գործողությունները և իրավիճակը: Զարդի սահմուկեցուցիչ ազդեցությունը ցրելու նպատակով Արդուլ Շամիդը համոխավոր ընդունելությամբ պատվեց Ներսես Վարժապետյանին և իր ցավակցությունը հայտնեց նրան. «Այսչափ արյունահեղություն տեսնելիս հույժ կցավիմ»: Իրեկ շնորհակալություն սուլթանը պատրիարքին պարգևատրեց Օսմանին առաջին աստիճանի շքանշանով և կախեց նրա վզից: Արդուլ Շամիդի այս «համակրական ցույցերի» և շքանշանի առիթով Ազգային ժողովի բոլոր

քամետ պաշտոնյաները շնորհավորում են պատրիարքին և ցանկանում շնորհակալական ուղերձ հղել սուլթանին: Եղելությունից ցնցված Խրիմյանը թեավոր խոսքի ննան ծևակերպում է. «Ոչխարների սուկորներից մանյակ շինեցին և հովիվի վիզեն կախեցին»:

Ալաշկերտի հովտի հայկական բնակչության այդ զարհուրելի սպանութեց Խրիմյանին: Ազգային ժողովում նա հարց է բարձրացնում, որ պատրիարքը դիմի Բ.Դուռ՝ միջոցներ ծեռք առնելու և ննան կոտորածներ չկրկնվելու համար: Նա պահանջում է նաև ջարդի վերաբերյալ կազմել մանրամասն տեղեկագիր, հրատարակել այն, որպեսզի այդ մասին իմանա ողջ հայությունը և Թուրքիային պաշտպանող մեծ տերությունները: Նախկին պատրիարքի այդ պահանջը հայազգի բուրքամետ պաշտոնյաների կողմից որակվեց իբրև համոգնություն և մատնություն: 1877թ. օգոստոսին Կ.Պոլսի «Լրագիր» թերթը (Խնբագիր՝ Նիկողայոս Թյուլպենտօնյան) հովված հրատարակեց «Ո՞վ է մատնիչը» խորագրով, ուր Խրիմյանը ներկայացվում էր իրեւ խորվահույզ, ժողովրդին կառավարության դեմ գրգռող անձնավորություն: Այդ հովվածը մեծ հովումներ առաջացրեց Կ.Պոլսում: Կ.Պոլսի «Մշակի» թթակիցը հաղորդում էր, թե այդ միջադեպ խիստ գցել է «Լրագրի» վարկը, «ոչ ոք կզնե այդ թերթը»<sup>1</sup>: Շոգենորականների մեծ մասը, պոլսահայությունը, մայրաքաղաքի պանդուխտ համալներն ու օրամշակները բոյկոտեցին թերթը և նրա խնբագիրն<sup>2</sup>: Խրիմյանը շրավարվեց դրանցով: Կարծես թե նույնիսկ հետին պլան մղվեց այրված «բնականունդ հայրենիքի» վերաշինության գործը: Հայությանը հասել էր առավել մեծ դժբախտության: Ալեկոծված հոգին ելք էր որոնում: Եվ նորից ժայթքեց Խրիմյանի հոգու հրարությունը: Գրվեց «Դայգույժը»:

Հայոց պատմությունը լի է ողբերով: Ամենաուժգին և առաջին ողը Մովսես Խորենացունն է, ուր պատմահայրը ողբում է հայ պետականության անկումը, բողոքում իշխանների հայրենադավ գործերից, հոգենորականության «անկյալ վիճակից»: Ժողովրդի պատմությանը ուղեկցում են նրա արժանավոր նյութ որդիների ողբերը: Ողբացող Խրիմյանը գտնում է ողրի բազմաթիվ պատճառներ, նրա ամենամեծ ցանկությունն էր լինել վերջին ողբերգուն, որ «հայոց անպահապան այգին ճռաքաղ չլիներ, իեռանար ու այլս ետ չդառնար հայոց տառապանաց տարին և ժամանակ»: Ինչպես «Վանգույժում», այսուղե

1. Մշակ. 1877. թիվ 87:

2. Սարտակամ. նշվ. աշխ., էջ 265:

և Խրիմյանը քննարկում էր հայկական իրդեհների, ավարների և ավերների հարցը, բացահայտում, որ կոտորածները և հայահայած վարքագիծը, ում կողմից էլ որ այն դրսնորվի՝ պետական նախօրոք նշակած քաղաքականության արդյունք է: Նա ցույց էր տալիս, որ թուրքական կայսրությունը մեծ տերությունների առաջ դրսնորելով իր քաղաքակրթության ծգտումները, բարենորդումների ծրագրերը, օգտագործում է պատերազմական իրադարձությունները, իր ձեռքին գործիք դարձնում «հայոց լեռների հին ավագաներին»՝ քրդական ցեղախմբերին, հայերի ազատագրական ծգտումները ինուն խեղդելու համար: Քրդի ձեռքը զենք տվողը թուրք կառավարությունն է, որը պահում է քրդական զորախմբերը առանց վճարի՝ անուղղակիորեն նրանց ուղղելով հայկական բնակավայրերի վրա: Պետական պաշտոնյաների ամենաթողության պայմաններում, նույնիսկ նրանց հրահրումով և սաղրիչ արարքներով կատարվում են սեղուկ թուրքերի առաջնորդներ Ազգային և Հանկթեմուրից ավելի դաժանություններ: Սիրտ կեղեցող են Խրիմյանի նկարագրությունները. որդեկորույս մայրեր, մայրակորուս մանուկներ, խեղված և պատվազուրկ հայ կանայք և աղջիկներ: Բայց հեղինակը չի բավարարվում ողբով: Բավ համարելով ողբն ու կականը, ցանձնան ու զայրութի ծիչ է հնչում նրա հոգուց, նա զենքի է կոչում ողջերին՝ «կոչեմ ապրողաց», շանթեր արձակում այդ սահմուկեցուցիչ տեսարաններն անվրուվ դիտող երկնային լուսատունների դեմ, բողոքում Աստծուն, որ հանդուրժում է այդ ամենը: Եվ քանի որ նույնիսկ ամենակարող Աստվածը չի կանխում այդ չարիքները, Խրիմյանը զոհի ազատության գործը հանձնարարում է նույն այդ զոհին: Մարդ արարածը չպետք է թույլ տա իրեն կոտորել ոչխարի ննան, պետք է ձեռք բերի «խեթիք եղջյուր, որ ցուլի ննան ոգորին իրենց կտրիչներուն դեմ»: Դեղինակը դատապարտում է կույր հնազանդությունը և իր դատավճիռն է հայտնում հարազատ ժողովրդին: «Դեռ պիտի կոտորվիք, դեռ պիտի մորթվիք այդ չքոտիք քուրդերեն, քանի որ անձեն, անեղջյուր, անասպար կապրիք, դուք մարդ եք, ձեռք և բազուկ ունեք...»<sup>1</sup>: Դեղինակը մեղադրում է եվրոպական մեծ տերություններին, որոնց համար առաջնային նշանակություն ունի սեփական շահը: Իբրև պատգամաբեր և ուսուցիչ, Խրիմյանն ուսուցանում է ժողովրդին, որ հայրենիքի ազատությունը

1. Խրիմյան Հայրմիկ, Երևան, էջ 444:

ծեռք է բերվում մահով ու արյունով, կյանքի գնով: «Մի՞թե դու ցանկալի ազատությունն առանց զոհի և արյան ծրի ստանալ կուզես»:

Իբրև իր ժամանակի քաղաքացի, նա անաշար գնահատական է տալիս նաև անցյալի պատմական դեպքերին և իրադարձություններին: Նրա ուշադրությունն առանձնապես գրավում է Արևելյան խնդիր՝ իր ժամանակների գորդյան հանգույցի լուծման եղանակները, որոնելով մի նոր Ալեքսանդր Մակեդոնացու: Արևելյան խնդիրը դարձել է մեծ տերությունների շահախնդրությունների կենտրոնատեղին: «Երբ գահեր կոհիվ կուզեն՝ Արևելյան խնդիր կհուզեն, և երբ աշխարհակալել կամին՝ դարձյալ Արևելյան խնդիր կհուզեն... Մինչև ե՞րբ զորավորներ կովին՝ տկար և անզոր ազգեր ուժի տակ ճմլվին»:

Խրիմյանի սթափ աչքը տեսնում էր, որ իմպերիալիստական պետությունների հակասությունները խորանալուն զուգընթաց, մեծ տերություններն իրար հետ խոսում են «Կրուպի թնդանոթի» լեզվով: Իրեն վերապահելով նրանց դատավորի դերը, Խրիմյանը զգուշացնում է՝ «Որ սուր առնու, սրով անկանիցեն»:

Վերջանում է գույժերի շարքը: Դայության առաջ կանգնած էին իրատապ լուծման սպասող բազմաթիվ խնդիրներ:

\* \* \*

Ավարտին էր մոտենում ռուս-թուրքական պատերազմը: Անհրաժեշտ էր ձեռնարկել որոշակի միջոցառումներ ռուս-թուրքական համաձայնագրում հայության շահերը ըստ կարելվույն ներկայացնելու համար: Ինչպես ընդունված էր, հարցը բարձրացնողը պետք է լիներ Կ.Պոլսի հայոց պատրիարքը: Սակայն, Խրիմյանի կարծիքով, Ներսես Վարժապետյանը այդ ժամանակ գտնվում էր «ազգավճառ» դիրքերում: Այդ պատճառով Խրիմյանը նախաձեռնությունը վերցնում է իր ձեռքը: 1877թ. նոյեմբերյան մի առավոտ Գուգկունճութի իր բնակարանն է իրավիրում մայրաքաղաքի հայ եպիսկոպոսներին, նրանց բացարում Ներսես Վարժապետյանի դիրքի վնասակարությունը, գծում, իր կարծիքով, ծիշտ ազգային գործունեության շառավիղները և հանգույմ «տապալել Վարժապետյանին և նրա փոխարեն պատրիարքական արությ վրա ազգային քաղաքականության նոր ուղղություն տալու ընդունակ մի այլ հարմար անձ բազմացնել»<sup>1</sup>: Խորհրդակցության մասնակիցներից Մատթեոս Խզմիրլյանը առաջարկում է նման

1. Սարալյան, թշվ. աշխ., էջ 265:

քայլերի դիմելուց առաջ հանդիպել պատրիարքին, բանակցություններ վարել նրա հետ և հանգել այլ քաղաքական դիրքորոշում ընդունելու: Առաջարկությունն ընդունվում է: Խրիմյանի գլխավորությամբ մի խումբ եպիսկոպոսներ գնում են Ներսեսի նոտ<sup>1</sup>: Երկարատև հանդիպման ընթացքում Վարժապետյանը պատրաստակամություն է հայտնում լինել այնտեղ, որտեղ արտահայտվում են ազգի շահերը: Խրիմյանի նախաձեռնությամբ իրավիրված այդ խորհրդակցությունը գժեց ազգային քաղաքականության նոր պարագի: Պատրիարքը կառավարությանը սիրաշահելուց անցավ «հայկական խնդրի» արձարձանը, խնդիր, որի սկզբնավորումը մեծապես կապված է Խրիմյանի անվան հետ<sup>2</sup>:

Պատերազմի ավարտից հետո ռուսական գործերի գլխավոր իրամանատար մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաևիչը և թուրք լիազոր անձանց միջև 1878թ. հունվարի 19/31-ին ստորագրվեց գինադադար, որն իր մեջ պարունակում էր հաշտության պայմանագրի հիմնական խնդիրները: Նախնական այդ օրինակի մեջ ոչ մի խոսք չկար փոքր Ասիայում ապրող քրիստոնյաների, ճամանակորապես հայերի մասին: Յետագայում, ամիսներ անց, Ազգային ժողովի 1878թ. հուլիսի 21-ի նիստում Վարժապետյանը պատմում է իրեն պատաժ այն հուսահատության մասին, որ համակեց գինադադարի պայմանագրին ծանոթանալուց հետո: Ոտքի ելած հայ հոգևորականությունը իր վրա վերցրեց այդ խնդրի արձարծումը: Երբ դեռևս չեղ սկսվել ռուս և թուրք պատվիրակների միջև հաշտության պայմանագրի մանրակրկիտ քննարկունք, Վարժապետյանը հրահանգում է Աղրիանապոլսի առաջնորդական փոխանորդ Գևորգ Վարդապետ Ռուսուլգյանին՝ Իգնատիկի և մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաևիչի հետ բանակցություններ վարելու համար: Կարծ ժամանակ անց Ազգային ժողովի 1-ին և 2-րդ ատենապետները՝ Մտեփան Վաշա Ասլանյանը և Յովհաննես Նուրյանը միացան Գևորգ Վարդապետին՝ նույն առաքելությամբ, պատրիարքի հանձնարարական նամակով: Ռուսական ցար Ալեքսանդր 2-րդին և Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Գորչակովին ուղղվեցին աղերսագրեր և ուղերձներ, որոնց մեջ հայ ժողովրդի համար խնդրում էին այն բարենորոգումներն ու կարգավիճակը, ինչ խոստացված էր Եվրոպա-

1. Հայ ժողովրդի պատմաբան, հ. VI, էջ 110:

2. Այս ճանրամասնությունները տարբեն անց արդեն կարողիկոս Մ. Խոմիքյանը պատմել է Սարտիսանին (առև. նրա նշվ. աշխ., էջ 266):

կան քրիստոնյաներին: Այս գրությունները պատրաստված էին երկու օրինակով, մեկը ուղարկվեց Աղրիանապոլսի՝ մեծ իշխանի միջոցով նորին կայսերական մեծությանը հասցնելու համար, մյուսը նախատեսվում էր Մկրտիչ Խրիմյանի և Նար-Պեյի միջոցով ուղարկել Եջմիածին՝ կաթողիկոս Գևորգ 4-ին, նրա միջոցով կայսերն առաքելու համար: Այդ երկուսի փոխարեն ավելի ուշ Եջմիածին մեկնեց Մատթեոս Խզմիրյանը<sup>1</sup>: Կաթողիկոս Գևորգ Կոստանդնուպոլսեցին մեծ ուշացումով ընդունեց պատրիարքական պատվիրակին, որովհետև հավանություն չէր տալիս Կ. Պոլսի պատրիարքի և մյուս եպիսկոպոսների ուսւամետ դիրքորոշմանը:

Այդ ժամանակ արևմտահայ հասարակական գործիչների մեջ ձևավորվել էին մի քանի ուղղություններ, կապված այն հանգանանքների հետ, թե որ պետության հետ էին կապում հայկական հարցի լուծումը: Ունաճ Անգլիայի հետ էին կապում հայկական խնդրի արձարծումը, մյուսներն առավել վստահություն էին տածում Ռուսաստանի վարած քաղաքականության նկատմամբ, երրորդները հակվում էին Թուրքիայի կողմը: Տարբեր այս հայացքներն իրենց արտահայտող գործիչներով ջլատում էին ազգի ուժերն ու միասնությունը:

Ռուսաստերներն ունեին ամենաբազմամարդ կողմնակիցները: Նրանց պարագլուխներն էին Խորեն Նար-Պեյն ու Մատթեոս Խզմիրյանը: Նրանք գտնում էին, որ ոչ մի պետություն Ռուսաստանի նման չի կարող դիմակայել Թուրքիային, ճամանակներ, որ նա պատերազմն սկսել է քրիստոնյաների ազատության կարգախոսի տակ:

Թվաքանակով ռուսաստերներից հետ չեն մնում նաև անգլիական կողմնորոշման կողմնակիցները. դրանց մեջ էին բողոքական հայերը և ազգային լիբերալները: Իրենց քաղաքական հայացքներով նրանք համակրում էին ազատական Անգլիային, քան մեծապետական Ռուսաստանին: Անգլիանետ քաղաքականության կողմնակիցներ էին մտավորականները և ազդեցիկ հոգևորականությունը, որոնք վրդովնունքով մատնանշում էին 1836թ. Ռուսաստանի ընդունած «Պոլոյքենի»-ն, որով սահմանափակվել էին հայ եկեղեցու իրավունքները: Դրանց շարքում էին Մկրտիչ Խրիմյանը և Գրիգոր Օսյանը, «որ գրեթե ուղղություն էր տալիս այն ժամանակ ազգային կյանքին»<sup>2</sup>, վայելելով պատրիարքի բացարձակ վստահությունը: Դայ կաթոլիկները և իրենց պատրիարք

1. Հայ ժողովրդի պատմաբան, հ. VI, էջ 114:

2. Սարտիսան, նշվ. աշխ., էջ 356:

Անտոն Դասունյանի գլխավորությամբ հարում էին անգլիամետ քաղաքականության կողմնակիցներին:

Թուրքիայի կողմնակիցներն իրենց տնտեսական շահերով կապված էին Թուրքիային. դրանք ազդեցիկ վաճառականներ էին, պետական պաշտոնյաները, կապալառուները: Պատերազմի սկզբին նրանց կողմնակիցները ստվարաթիվ էին, իսկ ավարտից հետո խիստ նորացան նրանց շարքերը: Մրացին միայն պետական պաշտոնյաները, որոնք օգտվում էին թուրքական վարչությունից:

Տարակարծությունները երեք «հոսանքների» միջև երկար չտևեցին: Մի լուսայն համաձայնություն տիրեց բոլոր գործիչների միջև Սան Ստեֆանոյի դաշնագրից հետո: Բոլորը համախմբվեցին Վարժապետյանի շուրջը՝ Բեռլինի վեհաժողովում Դայկական խնդիրը լավագույնս ներկայացնելու նպատակով: «Կուսակցական ոգիները լրած են և Դայաստանի ոգին է, որ կիսուի միայն. սրբազն Ներսես մոռցնել տվակ իր բոլոր սխալները և ամեն կուսակցության ալ սիրելին եղած է այժմ<sup>1</sup>,» գրում էր «Մշակի» Կ.Պոլսի թղթակիցը: Արևմտահայ հասարակական գործիչները որոշեցին դիմել և Անգլիայի, և Ռուսաստանի օգնությանը: Արևմտահայ պատմաբան Ալպոյաջյանը այդ առիթով գրում է, որ արևմտահայ դեկավար հասարակական գործիչները խարբեցին անգլիական դիվանագիտության և Դամիդի հնարամիտ խաղով, անսացին նրանց թելադրանքին, որ «Պեռլին դիմեն և իրենք էլ պահանջներ ներկայացնեն, այս կերպով չեզոքացնելու համար պալքանյան ազգերի և անոնց ազատարար Ռուսիո առավելագույն պահանջները»<sup>2</sup>: Որոշվեց պատվիրակություն ուղարկել այն բոլոր մեծ տերությունների նոտ, որոնք նաև ականակցելու էին վեհաժողովին և որոնց վերաբերնունքը Դայկական խնդիր նկատմանը կարող էր վճռորոշ լինել: Չնայած բոլոր փաստաթերթը՝ խնդրագրերը և հիշատակագրերը ստորագրողները մեծ ժողովրդականություն վայելող և ազդեցիկ հոգևորականներն էին, բայց բոլոր այդ գրությունների իրական հեղինակները աշխարհականներ էին, պետական ծառայության մեջ գտնվող, բայց ազգանվեր անձինք և այդ պատճառով իրենց ինքնությունը երևան չհանող Գր. Օսյանը, Սերվիչեն, Շովհաննես Սագըզը: Օսյանի անմիջական խորհրդով կազմվեց հայ պատվիրակությունը. Մկրտիչ Խորինյան՝ Կ.Պոլսի հայոց նախկին պատ-

1. Աշակ, 1878, թիվ 48:

2. Ա.Ալպոյաջյան, Պատմության Մարտիրոս Խաչոց, Էջ 835:

## Մկրտիչ ԽՈՐԻՍՅԱՆ. Հասարակական-քաղաքական գործունեությունը

րիարք, Արևմտյան Դայաստանի իրավիճակին քաջատեղյակ, ողջ հայության անմնացորդ հարգանքին և համակրանքին արժանացած անծնավորություն: Նա չէր տիրապետում Եվրոպական ոչ մի լեզու և այդ պակասը լրացնելու նպատակով, նույն Օսյանի խորհրդով Խորինյանի քարտուղարի և թարգմանի պաշտոնում նշանակվեց 22-ամյա Միհնա Չերազը, որի միակ առավելությունը ֆրանսերենի իմացությունն էր. «Դիվանագիտական ասպարեզը անծանոր էր ինձ, որպես աշխարհ անծանոր էր Աղամի, երբ դրախտի մեջ էր դեռ», - հետագայում արձանագրում էր անփորձ երիտասարդը<sup>1</sup>:

Մյուս պատվիրակը՝ դարձյալ հոգևորական, եպիսկոպոս Խորեն Նար-պեյն էր: Կ.Պոլսից նա ուղևորվեց Պետերբուրգ ռուսական արքունիքին արևմտահայ ժողովորդի խնդրագրերը ներկայացնելու նպատակով: Անհրաժեշտ առաքելության ավարտից հետո նա պետք է ուղևորվեր Բեռլին՝ միանալու գլխավոր պատվիրակին՝ միասնական ջանքերով սկսած գործը արդյունավետ վախճանի հասցնելու համար: Պատվիրակության այս կազմի վերաբերյալ իր բացասական կարծիքն է արտահայտում դարձյալ Ա.Ալպոյաջյանը. «Ներսես պատրիարք, որ սուլթան Դամիդի թելադրությամբ պատվիրակներ, - Խորինյանի, Նար-Պեյն, Չերազի և Փափազյանի պես այն գործին անձեռնիահա և անհարմար անձեր որկած էր, մերժելով Նուբար փաշայի ինքնամատուց հոժարությունը, ի վերջո հանդգնություն ունեցավ խորհստարար մերժելու իր պատվիրակները ետ կանչելու և այսպես դեմ կանգնելու սուլթանի կամքին, անոր ատելությունն ալ շահելու պայմանով»<sup>2</sup>:

\*\*\*

Մարտյան մի առավոտ գլխավոր պատվիրակն ու նրա երիտասարդ, անփորձ քարտուղարը շղենավով դուրս են գալիս օսմանյան կայսրության մայրաքաղաքից, իր թե խիստ գաղտնի պահելով այդ փաստը, վախենալով, թե թուրքական կառավարությունը կարգելի այդ քայլը: Մինչդեռ թուրքական արքունիքում հղացած այդ դիվանագիտական խաղը ոչ մի արգելքի չի հանդիպում պետական պաշտոնյաների կողմից: Պատվիրակները Բրինդիզիի նավահանգստում իջան շղենավոյից և երկարուղով շարունակեցին իրենց ճանապարհորդությունը դեպի Դոռմ: Եվրոպական տերություններին ներկայացվելիք տե-

1. Ա. Չերազ, Հայաստան և Խաչոց, Էջ 28:

2. Ա. Ալպոյաջյան, Էջ 836:

ղեկագրերը կազմված էին հայերեն: ճանապարհին խրիմյանի թարգմանիչն ու քարտուղարը ֆրանսերեն պետք է թարգմաներ այդ պաշտոնական գրագրությունները: Այդ փոքրիկ փաստն անգամ վկայում է ողջ ճանապարհորդության հապճեպության, անպատճառատության մասին: Խրիմյանի ծեռքին կար պատրիարքի կողմից հաստատված մի փաստաթուղթ, որը հավաստում էր նրա պատվիրակ լինելը:

Հոռոնում պատվիրակները ներկայացան Խոտալիայի արտաքին գործերի նախարար կոմս Կորտիին, որը մինչ այդ պաշտոն վարելը եղել էր Կ.Պոլսի խոտալիան դեսպանը: Կոմսին ներկայանալուց մի օր առաջ պատվիրակները նախարարության ընդհանուր քարտուղարին էին հանձնել պաշտոնական բոլոր գրությունները, որոնց, հավանաբար, չէր հասցել ծանոթանալ նախարարը: Դա արտահայտվեց պատվիրակներին ուղած նրա հարցից՝ ի՞նչ են խնդրում հայերը, «Վարչական ինքնօրինություն Եվրոպական» թե Ասիական Տաճկաստանի մեջ»<sup>1</sup>: Խրիմյանն ստիպված էր հիշեցնել, որ հայերը թեև ապրում են կայսրության բոլոր մասերում, այդ թվում նաև Եվրոպական, բայց Արևմտյան Հայաստանը գտնվում է Թուրքիայի փոքրասիական մասում, ուր հայությունը մեծամասնություն է կազմում և ցանկանում է ունենալ վարչական ինքնուրույնություն: Լեզվին չտիրապետելու պատճառով Խրիմյանի կողմից խոսում է Չերազը, որի բացատրություններն աչքի չեն ընկնում ոչ իր կատարած գործի պատասխանատվությամբ, ոչ էլ ծզգրտությամբ: Հայերի թվաքանակը Թուրքիայում սկզբուն նաև ներկայացնում է հինգ միլիոն, ապա չորս և վերջապես՝ 3 միլիոն<sup>2</sup>: Դավանական է, որ դրանից բացի նրա խոսքում սպրդած լինեն նաև այլ անծշտություններ: Խոտալիայի արտաքին գործերի նախարարը սիրալիր պատասխաններ է տալիս հայ պատվիրակներին և խոստանում իր պաշտպանությունը: Ըստ կոմսի պատասխանի, դեռևս պարզ չէր վեհաժողով գումարվելու պարագան: Բոլոր դեպքերում նա ապահովեցնում էր «պաշտպան կանգնել հայոց դատին վեհաժողովի մեջ, եթե տեղի ունենա և ամեն առիթի մեջ, եթե վեհաժողով չգումարվի»<sup>3</sup>: Ոգևորված խոտալիան նախարարի սիրալիր ընդունելությունից, պատվիրակները ծածկագիր հեռագրով իրենց ուրախությունն են կիսում պատրիարքի հետ և հայտնում Փարիզ ուղևորվելու մասին:

1. Մինաս Զերազ, Հայաստան և Խոտալիա, էջ 36:

2. Նայն տեղամ, էջ 37:

3. Նայն տեղամ, էջ 41:

1878թ. մարտի 19/31-ին նրանք Փարիզում էին: Ֆրանսիայի նայրաքաղաքում գտնվելու երկրորդ օրը Խորիմյանը հանդիպում է ունենում եգիպտական պետական գործիչ Խուբար Փաշայի հետ: Վերջինս արդեն տեղյակ էր, թե Վարժապետյան-Օտյան խումբը ինչ պատվիրաններ է տվել իր լիազոր ներկայացուցիչներին՝ Հայաստանի ինքնավարություն Լիբանանի օրինակով, այսինքն՝ տեղական ինքնավարություն սուլթանի գերիշխանության և Եվրոպայի երաշխավորության տակ: Պոլսի խումբը գտնում էր, որ ժամանակը հաստացած է նման պահանջներ առաջադրելու համար: Խուբար Փաշան համար չէր այդ պահանջներին: Նա խորհում էր, որ Ռուսաստանի և Անգլիայի հակամարտության նման պայմաններում նրանք չեն համաձայնի այդ ինքնավարությանը, ոչ էլ Թուրքիան հավանություն կտար դրան: Արևմտյան Հայաստանում անենամեծ շահերն ունեին այդ երեք պետությունները: Եվրոպական մյուս պետությունները ոչ ցանկություն և ոչ էլ ուժ կգտնեին ծնշում գործադրելու այս եռյակի վրա՝ հօգուտ Հայաստանի: Այդ պատճառով Խուբար Փաշան ծեռնամուխ եղավ կազմելու սեփական ծրագիր, ուր նա առաջարկում էր ավելի չափավոր պահանջներ, բավականական հայ նահանգապետի, դատարանական և ոստիկանական բարեկարգությունների պահանջով: (Այդ մասին կիսումի թիւ ուշ, ավելի հանգանանորեն):

Ապրիլի 2-ին (ն. տ.) Չերազը Խրիմյանի անունից խնդրագիր է ներկայացնում ֆրանսիայի արտաքին գործերի նախարարին՝ հայոց պատվիրակությունն ընդունելու խնդրանքով: Ապրիլի 5-ից գլխավոր պատվիրակն ու իր քարտուղար-թարգմանիչը սկսում են պաշտոնական այցելությունները: Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Վադինգտոնը հարցում է Խրիմյանին, թե հայերը Արևմտյան Հայաստանի ո՞ր նահանգի համար են ինքնավարություն պահանջում: Պատասխանում նատնանշվում են երգուոմի, Վանի, մասամբ նաև Դիարբեքիրի ու Տրապիզոնի նահանգները: Կարճատև գրուցի ընթացքուն ֆրանսիացի նախարարը ապահովեցնում է պատվիրակությանը, որ կգործադրի իր բոլոր ջանքերը հայկական դատը պաշտպանելու համար: Զրուցի վերջում նա անում է մի կարևոր դիտողություն. նա նկատում է, որ հայերի ներկայացրած փաստաթղթերը պարունակում են միայն ընդհանուր գաղափարներ, մինչդեռ մեծ տերություններին անհրաժեշտ են «շոշափելի ապացույցներ»: Նա մատնանշում է այն տարբերությունները, որ գոյություն ունեն Հայաստանի և Լի-

բանանի միջև։ Լիբանանը չունի թուրք բնակչություն, մինչդեռ Հայաստանի նշված նահանգներում հայերի հետ խառը ապրում են զգալի թվով մահմեդականներ։ Դետևաբար, նախարարի կարծիքով, Լիբանանի վարչական կազմակերպության ծեզ չի կարելի հարմարեցնել Հայաստանին։ Նախարարն առաջարկում է շտապ կարգով ներկայացնել վիճակագրական փաստաթղթեր, որոնց մեջ մանրամասն ցույց տրվի հայերի քանակը և տոկոսային հարաբերությունը նշված նահանգներում։ Առաջարկների մեջ էր նաև՝ ներկայացնել նոր, առավել ընդունելի տարրերակ, որտեղ բացահայտված լինեին բարենորոգումների իրականացման գործնական միջոցառումները։

Հաշվի առնելով նախարարի դիտողությունները, պատվիրակությունը ներկայացնում է ապագա ինքնավար Հայաստանի քարտեզը, ուր մանրամասն նշված է ին, թե որ նահանգներում են հայերը կազմում բացարձակ մեծամասնություն, որոնց համար էլ խնդրում են ինքնավարություն։

Պատվիրակները հաշվի չեն առնում նախարարի դիտողությունները Հայաստանի և Լիբանանի տարրեր իրավիճակների վերաբերյալ, այդ իսկ պատճառով փոփոխության չի ենթարկվում և խնդրագիրը, և բարենորոգումների ժրագիրը։

Փարիզում հայ պատվիրակները խնդրում են նաև տեղի անգլիական դեսպանի ունկնդրությունը։ Վերջինս հայ պատվիրակներին ապահովեցնելով իր հայանպատ դիրքորոշման մեջ, նրանց ուղղում է մի կարևոր հարց։ Դարեր ի վեր զենք կրելուց հետ սովորած հայությունը կարո՞ղ է առանձնացնել զինավարժ ջոկատներ, որոնք «զսպեին այն վայրենի խնբերը, որ վխտում են Հայաստանում»<sup>1</sup>։ Զարմանք է պատճառում Խորհյանի պատասխանը, թե անհրաժեշտության դեպքում Կ.Պոլսի հայ բեռնակիրները (այսինքն՝ պանդուստ գավառահայերը) զենք ստանալով կարող են դառնալ լավ զինվորներ։ Անգլիական դեսպանը ցույց է տալիս, թե իրեն բավարարում է այդ պատասխանը և հորդորում է պատվիրակներին՝ շուտափույթ մեկնել Լոնդոն, արտաքին գործոց նախարար Սոլյսերիի հետ համույթելու համար, խոստանալով իր կողմից նամակ հղել նախարարին։

Ապրիլի 11-ին հայ պատվիրակությունը Փարիզից մեկնում է Լոնդոն։

1. Սարտիսան, ճշլ. աշխ., էջ 372-373։

Անգլիայում հայ գաղթօջախներ կային Լոնդոնում և Մանչեստրում։ Գաղթօջախների բնակչության ծնշող մեծամասնությունը արևմտահայեր էին, առավելապես՝ պոլսահայեր, որոնց ազգականները դեռ ապրում էին կամ Արևմտյան Հայաստանում, կամ Օսմանյան մայրաքաղաքում։ Սերտ էր երկու գաղթօջախների կապը Կ.Պոլսի հետ։ Անգլիայի հայ գաղութների հասարակական գործիչները հարաբերություն էին պաշտպանում մայրաքաղաքի հայ ազգային դեկավար մարմինների հետ։ Ռուս-թուրքական պատերազմի սկզբից նրանք հաղորդակից էին արևմտահայերին հուզող խնդիրների քննարկմանը։ Խորհյանի «Դրախտի ընտանիք» աշխատությունը հրատարակվել էր Մանչեստրի հայ գաղութի միջոցներով։ Դեռևս 1876-ին հայ պատվիրակության ապագա դեկավարը հանձնարարում էր Անգլիայում գտնվող իր հայրենակիցներին՝ դիմել Անգլիական խորհրդարանին, որի հովանավորությամբ կանգուն է թուրքական իշխանությունը («գահը») և հայցել նրանց գրությունը։ «Ժամ հասայ, իիշեցեք և հիշեցեք Սեծին Անգլիո խորհրդարանին ականջ, որ դեռ կիավատան կանգուն պահել այն գահը, յորմէ իմաստություն և արդարություն իրածարեր է ի վահ»<sup>1</sup>։ Մանչեստրի հայերը արձագանքում են Խորհյանի հորդորներին և սկսում հետազոտական գործունեություն։ Լոնդոնի գաղթօջախն ավելի սակավաճարդ էր, սակայն այնտեղ հաստատվել էին առավել ազդեցիկ և հարուստ գործիչներ։ Յնդկաստանի նախակին վաճառական Սեթ Արգարը և զնյութնացի Գարեգին Փափազյանը սերտ հարաբերություններ էին հաստատել մի քանի ազդեցիկ անգլիացիների հետ և համատեղ ջանքերով ստեղծել Լոնդոնի «Արևմտյան խնդրի ընկերությունը», որի նպատակն էր ուսումնասիրել արևմտան քրիստոնյաների իրավիճակը և միջոցներ ծեռնարկել նրանց կացությունը բարելավելու համար։ Ընկերության ջանքերի շնորհիվ 1877-ին լույս տեսավ «Հայաստան և Լիբանան» խորագրով մի գրքույթ, ուր քննադատություն էր թուրքական հորի վարչությունը Հայաստանում, համեմատվում Լիբանանի հետ, ցույց տրվում, թե ինչպես 1860-ից հետո, նրա վարչական ինքնավարություն ստանալուց հետո, տրամադրեն փոխվել է իրավիճակը։ Գրքույթը հետապնդում էր մի նպատակ։ Համոզել մեծ տերություններին, որ Հայաստանին տրվի նման

1. Մաշկան Տափական, Մանչեստրի հայ գաղութը, 1911, Պատրի, էջ 67։ (Խորիմյանի այս նամակից Մաշկան Տափականը հանգստ է, մեր կարծիքով, վիճակիցի նքրակացության, թի դժուակ 1876թ. «Խորիմյանի պատվամափորաբարյան պաշտոնը շատ կանուխն ծրագրված ձևանարկ է»։ (Խոյշ ակամաց)։

## Եմա ԿՈՍԱՆԴՅԱՆ

ինքնավարություն և արդյունքներն ու դրական տեղաշարժերը նույնը կիմեն:

Նույն 1877-ին հայասեր Զեյմս Բրայսը Լոնդոնի հետազոտությունների արքայական սրահում հօգուտ հայերի կազմակերպեց մի հրապարակային դասախոսություն:

Մի տարի անց՝ 1878-ին Լոնդոնի հայերը հրատարակեցին մի նոր գրքույկ «Դեսպանախորհուրդն ու հայերը» խորագրով: Գրքույկում պատկերելով արևմտահայերի տառապալի կացությունը Թուրքիայի տիրապետության տակ, հեղինակներն անցնում էին պատճական էքսկուրսների, հիշեցնում անգլիական պետական այրերին, թե հայերն ինչ ծառայություններ են մատուցել Անգլիային՝ նրա ազդեցությունը Հնդկաստանում ամրապնդելու գործում և ակնկալում անգլիացիներից՝ օգնել հայերին Թուրքիայում (Արևմտյան Հայաստանում և կայսրության հայաբնակ Վայրերում), նրանց հաճար անցկացնել այնպիսի բարեփոխումներ, ինչ նախատեսվում էր բոլղարների հաճար:

Հայլիական պատվիրակությունը Անգլիա հասավ այնպիսի մի ժամանակ, երբ տեղի հասարակական կարծիքը գործում էր հօգուտ հայերի: Լոնդոնի անգլիացիների հայամետ գործունեությունը մարդասիրական քայլ չէր: Ելնելով Անգլիայի հաճար գոյություն չունեցող հավերժական թշնամիներ ու բարեկամներ, բայց գոյություն ունեցող հավերժական շահեր դրույթից, զուտ Անգլիայի շահերից, այդ գործիչները գտնում էին, որ Սան Ստեֆանոյի պայմանագրով նախատեսված 16-րդ հոդվածը նշանակում էր ռուսական ազդեցության ուժեղացում և անգլիական շահերի բուլացում:

Այդ ժամանակ, երբ լոնդոնարնակ հայերը հայամետ անգլիական գործիչների հետ հանրահավաքներ էին գումարում և ընկերություններ ստեղծում, Զերազը նշում էր հակառակը: «Երբ Լոնդոն հասանք, հոյժ տաճկասեր գտանք դահլիճն և ժողովուրդ»<sup>1</sup>: Որ «դահլիճը», այսինքն՝ պառականություն տաճկասեր էր ընդհանրապես, դրանում երկու կարծիք լինել չի կարող: Բայց որ հասարակական կյանքը եռում էր հակառաքական տրամադրություններով, դրանում ևս տարակույս չկա: Այդ են ապացուցում ժամանակի հայ մանուլում անգլիական թերթերից կատարած մեջբերումները և իրադարձությունների անմիջական մասնակից Մուշեղ Եպիսկոպոսը<sup>2</sup>: Մեզ թվում է, տարիների հեռվից

1. Ա. Զերազ, Հայլիական խնդիր, «Անեաքի», 1917, էջ 21:

2. Մուշեղ Եպիսկոպոս, նշվ. աշխ., էջ 80:

## Մկրտիչ ԽՈՐԻՄՅԱՆ. Հասարակական-քաղաքական գործունեությունը

Զերազի տված այդ գնահատականը Լոնդոնում ծավալած հայ պատվիրակության որոշ թերացումների արդարացման արդյունք է:

Հայլիական պատվիրակությունը դեռ Փարիզում էր, երբ լորդ Զեյմս Բրայսը Լոնդոնում գումարեց մի ընդարձակ հանրահավաք հօգուտ հայերի: Անգլիական քազմաթիվ նշանավոր գործիչներից բացի այդ հավաքին ներկա էին լոնդոնարնակ 9 հայ գործիչներ: Ժողովում ստեղծվեց Անգլո-Հայլիական ընկերությունը<sup>1</sup>, որի պատվավոր նախագահ ընտրվեց լորդ Կարնարվոնը, իսկ պատվավոր քարտուղարությունը հանձն առավ Բրայսը: Նորաստեղծ այդ ընկերությունը մի պատգամավորություն հղեց նախարար լորդ Դերրիի նոտ՝ խնդրելով նրա աջակցությունը հայլիական հարցում: Տեղի հայերի թելադրանքով Կ. Պոլսից և Զնյուրնիայից շնորհակալական ուղերձներ հղվեցին Զ. Բրայսին: Իսկ պատրիարք Ներսես Վարժապետյանը Մինաս Զերազի ծեռքով անձամբ նամակ հղեց հայասեր լորդին: Նման իրադարձությունների ընթացքում է հենց հայ պատվիրակությունը ժամանում Լոնդոն: Անգլիայի մայրաքաղաքում հայ պատվիրակությունը հանգրվանեց մեծահարուստ Մեթ Արքարի տանը: Մկրտիչ Խորիմյանն առաջին տեսակցությունն ունեցավ տեղի պարսկական արտակարգ լիազոր դեսպան, հայազգի Մելքոն Խանի հետ: Վերջին պատվիրակության դեկավարին տվեց նույն խորհուրդը, ինչ Փարիզում՝ Նուրբար Քաշան: Խանեստ և չափավոր պահանջներ ներկայացնել կոնգրեսին:

Խորիմյանի պաշտոնը հաստատող փաստաթղթերը հանձնվեցին Դերրիին և Սոլսբերիին: Պաշտոնական փաստաթղթերից բացի Խորիմյանը Մանչեստրի հայ գաղութի ներկայացուցիչներին հանձնեց պատրիարքի կոնդակը, որով արևմտահայ հոգեոր առաջնորդը հորդորում էր նրանց՝ սատարել հայ պատվիրակության գործունեությանը: «Սրբազն Խորիմյան պատգամավոր լիազոր ներկայացուցիչ ազգիս... ծանոթ է ծեղ բարեպաշտ հայրենասիրությամբ յուրով: ...Խնդրեմ և աղաչեմ զեղեղ, բոլորեցարուք շուրջ զնովավ...»<sup>2</sup>: Կոնդակն առավել բորբոքեց Մանչեստրի հայության հայրենասիրական եռանդը՝ հնարավոր բոլոր միջոցներով հայ պատվիրակության աշխատանքներին աջակցելու համար: Կոնդակից բացի Ներսես Վարժապետյանը մի ընդարձակ նամակ է ուղղում լոնդոնարնակ իր խորհրդականներից մեկին՝ Գարեգին Փափազյանին, ուր շարադրում է պատրիարքարանի դիր-

1. Հայ մարմարի պատամարյան, և. VI, էջ 115:

2. Մուշեղ Եպիսկոպոս, նշվ. աշխ., էջ 80:

քորոշումը հայկական բարենորդումների վերաբերյալ. «Մեր քաղաքականությունն է՝ Ռուսիոն երախտագետ ըլլալով՝ հուսալ յԱնգղիա և Անգղիո շնորհիվ ապահովել մեր բարոյական և նյութական բարեկեցություննը: Այս բարեկեցությունն ուրիշ կերպով ծեռք չեմք կրնար բերել այլ միայն ազգային ինքնօրինությամբ Դայաստանի մեջ: Այլ որպեսզի այս բառը չի խրտչեցնե զոնանս, ահավասիկ մեր ֆորմուլը. «Administration de l'Arménie par les Armeniens»<sup>1</sup>: Նամակում արտահայտված մտքերից առավել ուշագրավն այն էր, որ պատրիարքն ավելի քան վստահ էր եվրոպական տարբեր արքունիքներում խրիմյան սրբազնի ծավալած գործունեության հաջողության համար:

Սայսի 10-ին Անգղիայի արտաքին գործերի նախարար լորդ Սոլսբերին ընդունում է հայ պատվիրակությանը, որը նրանից խնդրում է Անգղիայի օժանդակությունը Դայաստանին ինքնավարություն շնորհելու համար: Անգղիական նախարարը տալիս է անորոշ պատասխան. «Դայերն իրավունք ունեն լավ վարչություն պահանջելու, բայց ոչ մի պետություն չի կարող այժմից ասել, թե ինչ ձևի վարչություն պիտի շնորհվի նրանց, որովհետև դրա բանաձևը դեռևս չէ գտնված և մի-միայն կոնգրեսը կարող է այդ վճռել»<sup>2</sup>: Դամենայն դեպս Սոլսբերին վստահեցնում է հայ պատվիրակությանը, թե «հայերին պետք է երաշխավորվի բարեկեցություն, ազատություն և խաղաղություն»<sup>3</sup>: Կ.Պոլսի անգղիական դեսպան Լայարդին ուղղած պաշտոնական նամակում նույն այդ Սոլսբերին հաղորդում էր Խրիմյանի հետ ունեցած իր հանդիպման մասին և ավելացնում, թե ո՞չ Խրիմյանը և ո՞չ էլ հայ ժողովուրդը թշնամական վերաբերմունք չունի Բ.Դուան նկատմամբ և չի նոտածում անջատվել Օսմանյան կայսրությունից: Իրը թե գրույցի ընթացքում Խրիմյանը հայտնել էր, որ «Դայաստանի թուրք բնակիչները ևս հարստահարվում են անօրեն քրդերից»: Պաշտոնական այդ նամակում արտաքին գործերի նախարարը բառացի հաղորդում էր. «Դարձ չհամարեցի խոստումներ տալ կոնգրեսի կողմից գործադրելի մասնավոր միջոցների նկատմամբ»: Երկու փաստերի համադրումից պարզ երևում է, որ Չերազի պատմածը Սոլսբերիի խոստումի մասին լրիվ այլ է: Երբ Վարժապետոյանը Խրիմյանին տեղեկացնում է նախարարի՝ դեսպանին ուղղված նամակի մասին, պատվիրակության

ղեկավարը խիստ դժգոհում է և հայտնում, որ Սոլսբերին սխալ է հաղորդել իրենց տեսակցության ընթացքը: Որտեղից էր սպրդել սխալը. արդյոք դրա հեղինակը անգլիական նախարարն էր, թե հայ պատվիրակության թարգմանն էր Խրիմյանի խոսքերը այլ ձևով հաղորդել նախարարին: Դամածայն ենք Սարուխանի հայտնած այն կարծիքին, թե Խրիմյանի եվրոպական լեզու չինանալը անեն քայլափոխի հայ պատվիրակությանը կանգնեցնում էր թյուրիմացությունների առաջ<sup>4</sup>:

Խրիմյանը բազմաթիվ տեսակցություններ ունեցավ Լոնդոնում, որոնք հաջողացրել էին Լոնդոնի և Մանչեստրի հայ գաղութների աղեցիկ անդամները: Դիվանագիտական վրիպում կարելի է համարել Խրիմյանի այցելությունը այն ժամանակ պաշտոնարող, լիբերալների ղեկավար Գլամատոնի հետ: Նրա հայանպատ գործունեությունը, կրակուտ ելույթները ոչ մի օգուտ չեն կարող տալ հայերին: Այդ հանդիպման մասին լոնդոնահայ մեծահարուստ Գարեգին Փափազյանը բացասական երանգներով հաղորդում է Զմյունիա՝ Գալուստ Կոստանյանին<sup>5</sup> ուղղված նամակում: Վերջինս գտնում էր, որ չեր կարելի այցելել Անգղիայի ներկա վարչապետի՝ Բիկոնսֆիլդի և Թուրքիայի համատեղ թշնամի Գլամատոնին: Նա դիտողություն էր անում, որ առաջին այցելությունը անհրաժեշտ էր տալ ներկա վարչապետին: Բայց եղած սխալը հնարավոր չէր սրբագրել: Բիկոնսֆիլդը իր հերթին հրաժարվում է ընդունել պատվիրակությանը, պատրվակելով ժամանակ չունենալը: Ազդեցիկ, մեծահարուստ հայերի ողջ ջանքերը՝ Անգղիայի թագուհու կողմից հայ պատվիրակությանը ընդունելության արժանացնելու համար, վերջացան անարդյունք: Լոնդոնից Խրիմյանը կարծ ժամանակով մեկնում է Մանչեստր: Տեղի լրագրերը «Manchester Courier», «Manchester Examiner» և «Times»-ը ապրիլի 17-ին անդրադան կարճատև այդ այցին, հաղորդելով, որ դրան կիաջորդի նաև տևական այցելություն: Տեղի հայերի միասնական ջանքերով հայ պատվիրակությունն արժանանում է բազմաթիվ ընդունելությունների: Այսպես, անգլո-հայկական ընկերությունը լորդ Կարնարվոնի գլխավորությամբ իր հարգանքն է հավաստում հայ պատվիրակներին նաև ճոխս սեղանով: Քենտրոնական եպիսկոպոսը, որը մեծ հեղինակություն էր անգղիական եկեղեցու հոգևոր հայրերի մեջ, նույնպես ընդունելության է արժանացնում Խրիմյանի պատվիրակությանը: Ընդունելության է արժանացնում Խրիմյանի պատվիրակությանը:

1. Սուշեղ Խավակոսոս, նշվ. աշխ., էջ 88, Սարտիսան, նշվ. աշխ., էջ 382-383:

2. Սարտիսան, նշվ. աշխ., էջ 384-385:

3. Նոյեմ տեղում, նաև L' Armenia 1890, N 20, (15 դեկտեմբեր):

1. Սարտիսան, նշվ. աշխ., էջ 386:

2. Սուշեղ Խավ., նշվ. աշխ., էջ 100:

լուրջան ժամանակ գրավոր ելույթով հանդես է գալիս պատվիրակության ղեկավարը: Դրանում արտահայտված էր խրիմյանի մեծ ցանկությունը՝ հանդիպման ընթացքում մանրանասն քննարկել հայկական խնդրին առնչվող բոլոր հարցերը, պատասխանել առարկություններին: Խրիմյանը կարևոր նշանակություն էր վերագրում այս հանդիպմանը<sup>1</sup>: Սակայն նրա ակնկալիքները գուր էին: Կ.Պոլիս ուղղած պաշտոնական նամակ-հաշվետվությունում և անձնական բնույթի նամակներում արտահայտվում են նրա խոհերն ու մտորումները Անգլիայում ունեցած բազմաթիվ հանդիպումների մասին: Իր կենցաղով և երթյամբ շատ համեստ հայ հոգևորականը չշլացավ լորդերի և Անգլիայի այլ մեծամեծ հարուստների շքեղություններից և պերճանքից, նրա սրափ հայացքից չվրիպեց, որ հայկական խնդրի եկրոպական տարրեր երկրների միջև գոյություն ունեցող հակասությունների թնջուկում կարող է չհասնել այն վերջնագծին, որին այնպես հույսով սպասում է ողջ հայությունը: Լոնդոնից ուղարկած մի նամակում՝ ուղղված իր եղբորորդի խորենին, Խրիմյանն արտահայտում է իր մտահգությունները եկրոպական պետությունների հայանպաստ դիրքորոշման վերաբերյալ: Նետաքքրասեր Խրիմյանը Լոնդոնի կենդանաբանական այգում ականատես է լինում մի ուշագրավ տեսարանի: Վագրերի վանդակում տեղավորված էին երկու վագր, մեկը՝ հզոր, մեծ ու կատաղի, մյուսը՝ ծեր և թույլ: Գազանանոցի աշխատողը սկզբում կերակրում է հզորին և բացատրում, որ մինչև նա չհագենա, թույլ չի տա կերակրել ծերացած, թույլ վագրին: Այդ փոքր դեպքը Խրիմյանին մղում է մեծ խորհրդածությունների: Պատճենով, որ հայկական խնդրի համար հանդիպումներ է ունեցել «Բարլամենտի նշանավոր անդամների» հետ, տեսակցել 60-ից ավելի մարկիզների, դուքսների և անվանի հասարակական գործիչների հետ, որոնք հույսերով և խոստումներով քաջակերել են իրեն, նա այնուամենայնիվ տարակուտում է, թե աշխարհի «մեծ ու հզոր գիշակերները հայոց Արծվոյն հանարկուր մը միսիկ պիտի թողո՞ւն»: Աշխարհի հզոր պետություններին համեմատելով գիշակեր անգղների հետ, Խրիմյանը խորհում է, որ «քաղաքակիրք աշխարհի մեծ մարդագելները» Թուրքիային օգնելու մտայնությամբ ուժնահարում են փոքր ազգերի, ճնշված ժողվուրդների շահերը և «զրկյալ հայուն» բաժին չի ընկնելու: Խրիմյանը գտնում է, որ իրավացի է Բիսմարկի նշանաբանը. «Այս աշխարհիս վերա

իրավունքը հզորինն է»<sup>1</sup>: «Բազմաթիվ և բազմաբովանդակ հանդիպումների և ընդունելությունների ժամանակ Անգլիայի հասարակական գործիչների մեջ կային նաև ազնիվ, անշահախնդիր ճարդիկ, որոնք ուշադրության արժանի խորհուրդներ էին տալիս հայ պատվիրակությանը: Խորհրդարանի լիբերալ կուսակցության անդամ Ֆորստերը իրավացիորեն նշում է, որ Ռուսաստանը Դայաստանի մերձավոր դրացին է, և ավելի ծիշտ կլինի հենվել նրա վրա, ոչ թե Անգլիայում գործիք դառնալ քաղաքական տարրեր կուսակցությունների ծեռքին, որովհետև «Անգլիայի օգնության վրա հույս կարելի չէ դնել»<sup>2</sup>:

Կանոնիկոս Մակոլը տարիներ անց դատապարտեց Անգլիայի քաղաքականությունը Դայաստանի նկատմամբ: Անդրադառնալով 1878թ. իրադարձություններին, նա գրում է. «Դանգուցյալ լորդ Շերբրուկը 1878թ. կրայոնում արտասանած իր ճառում նշել է, որ անգլիական քաղաքականությունը բուրքական քրիստոնյաների առաջ «փակեց ելքը դժոխքից»: Արտահայտությունն ուժեղ էր, բայց ոչ չափազանց-ված: Մի թե հայ քրիստոնյաներն իրենց վիճակուն չեն իիշեցնուն դժոխքում բանտարկվածներին»<sup>3</sup>:

Անգլիական խորհրդարանի մի քանի անդամների նախաձեռնությամբ 1878թ. հունիսի 3-ին քննարկման առարկա դարձավ հայկական հարցը, որը շարունակվեց նաև հունիսի 6-ին (ն.տ.): Քննարկման ժամանակ կոնս Շաֆդորքին հանդիս եկավ հարցումով, որին արտաքին գործոց նախարար Սոլյսբերին անկեղծությամբ պատասխանեց, թե հայերն այնպես են խառնված մյուս ազգությունների հետ, որ միայն նրանց համար իրագործել բարենորդումները հնարավոր չեն: Ըստ Սոլյսբերիի, բարենորդումները կամ պետք է Վերաբերեն Թուրքիայում ապրող բոլոր ժողովուրդներին, կամ անհնարին է դիմել անկանոն եղանակի: Անհնարին խնդիր է տարբեր ժողովուրդների նկատմամբ տարբեր միջոցառումներ ծավակելը: Այս պատասխանը փաստորեն խորտակում է հայ համայնքի և պատվիրակության բոլոր հուսերը: Նրանք զգում են, որ ընդունելությունների ժամանակ արված խոստումները ոչ մի գործնական արժեք չեն ներկայացնում: Ծանր և անակնկալ հարվածից ուշքի չեկած հայ պատվիրակությունը հարկ եղած պատասխանը չտվեց այդ դիտողությանը Լոնդոնում և միայն

Լ. ԳԱՅՉ. Խորհրդական Ֆ., II ը., գ. 4, նաև «Եղմիածին», 1986թ., N Գ-Դ, էջ 45-47:

Ապրիլ, 62 աշխ., էջ 391:

3. Положение армян в Турции до вмешательства держав в 1895г., стр. 196

Բեռլինում, երբ արդեն 16-րդ հոդվածը դառնալու էր քննարկման առարկա, հսկմանը, Նար-Պեյջ և Ստ. Փափայանը հարկ հաճարեցին դիտողություններ անել Սոլյսբերիի հայտարարությանը: Նրանք փաստերով նշում են, որ հայերը մեծամասնություն են կազմուն Մեծ Շայքի վանի, Մուշի, Բիթլիսի, Խարբերդի և Երզումի վիլայեթներում և տարբեր բարենորդությունների կարիք չկա: Բեռլինում ստանալով այս գրությունն արտաքին գործոց նախարարը իր քարտուղար Ֆիլիպ Քերիի միջոցով անորոշ պատասխանուն է, թե գործի կողի իր ողջ ազեցությունը կոնգրեսում վերոհիշյալ «Նահանգների բնակչության բարվոքումը ծեռք բերելու համար»:<sup>1</sup>

Դունիսի 8-ին հսկմանն ու Չերազը մեկնեցին Լոնդոնից և նույն երեկոյան հասան Փարիզ: Այնտեղ նրանք ինացան, որ Ֆրանսիայի արտաքին գործոց նախարար Վահինգտոնը արդեն մեկնում է Բեռլին, և այլևս հնարավոր չէ հանդիպել նրան: Երեք օր հետո պատվիրակությանը տեսակցություն էր նշանակել Գամբետան: Դայ պատվիրակները չեն կարող սպասել այդ տեսակցությանը: Նրանք շտապ ուղևորվեցին Բեռլին, ուր հասան հունիսի 13-ին:

\* \* \*

Մինչ հայկական պատվիրակությունը շրջագայում էր Եվրոպական մեծ տերությունների արքունիքներում, արևմտահայությունը ակնդետ հետևում էր Եվրոպական անցուղարձերին: Պատերազմի պարտից հետո ողջ հայությունն ապրում էր հույսերի և ակնկալությունների մի շրջան: Մակընթացություններին հաջորդում էին մեծ տեղատվությունները և ժողովուրդն զգում էր, որ գոյատևում է գործող հրաբուխի վրա:

Թուրքական կառավարությունը չէր խոչընդոտել հայ պատվիրակության գործունեությանը մի քանի հեռահար նպատակներով: Անենից առաջ, ըստ նրա, հայ պատվիրակության պահանջները կարող էին չափավորել բուղարական նկրտումները, մյուս կողմից էլ կառավարությունը Փոքր Ասիայում և Արևմտյան Շայաստանում իրահրում էր հակահայկական շարժումները: Արևմտահայության թվական գերակշռությունը նվազեցնելու նպատակով Շյուսիսային Կովկասից և Բալկաններից գաղթած չերքեզներին և մուհաջիրներին հոժ զանգվածներով բնակեցնում էր հայկական տարածքներում և տեղական

1. Սարուխան, նշվ. աշխ., էջ 394, Լ' Առուն 1889, Ն 2:

բնակչությանը կանգնեցնում հողագրկման և գաղթի ահավոր սպառնալիքի առաջ: Պատրիարք Ներսես Վարժապետյանը հայության գաղթը կանխելու նպատակով երեք վարդապետ ուղարկեց Արևմտյան Շայաստան (Գարեգին Սրբանձտյանց, Վահան Տեր-Մինասյան և Արիստակես Տևկանց): Դրանց մեջ առանձնապես աչքի ընկավ Գարեգին Սրբանձտյանցը, որի տեղեկագիր-գեկուցագրերը հետաքրքրությանը էին: Ընդունվում պատրիարքարանի և ողջ հայության կողմից<sup>1</sup>:

Չերքեզների բնակությունը հայկական տարածքներում տագնապ էր առաջացնում հայ հասարակական շրջանակներում: Պատրիարքի բողոքներն այդ ուղղությամբ Բ. Դուան մոտ մնում էին անհետևանք:

Տագնապների հետ մեկտեղ հայությունը հուսով լի հայացքը հառել էր Եվլոպային, որտեղ գումարվելու էր Բեռլինի վեհաժողովը, որի քննարկմանն էր ներկայացված Շայաստանի ինքնավարության ծրագիրը:

Շայության երկու հատվածների բոլոր հասարակաշերտերի մեջ տիրում էր ամօրինակ ոգևորություն գալիք օրերի նկատմամբ: Ժամանակի պարբերականները լի էին նման զգացումներ արտահայտող հոդվածներով<sup>2</sup>: Ազգային ժողովի երեսփոխանները 1878թ. հունիսի 2-ին հարցում ուղղեցին պատրիարքին, որպեսզի նրա տված պատասխանով ողջ արևմտահայությունը տեղյակ լինի իրավիճակին: Պատրիարքի պատասխանն արտացոլում է հայ հասարակության մեջ տիրու և ոգևորությունը, և ներքին տարակույսներն ու կասկածները: «Առաջին անգամ է, որ դաշնադրության մեջ Շայու ու Շայաստանի խոսք կըլլա: Տարակույս չունիմ, որ Եվրոպական մեծ դաշնադրության մեջ, որ պիտի կնքվի ի Պեռլին, անհիշատակ չափուի մնա մեր ազգը: Այլ ինչ պիտի ըլլա այն կարգադրություն, որ պիտի որոշվի մեզի համար, զայն չգիտեմ և ոչ թերևս գիտեն տակավին քաղաքագետք, որ զայդ դաշնադրություն պիտի խնճագրեն: Ին բոլոր ջանքն այն է, որ այնպիսի կարգադրություն նը ըլլա, որ ազգին կյանքը դիպվածոց չնատնվի»<sup>3</sup>: Պատմելով հայ հոգևորականների հետ իր կատարած աշխատանքի մասին, պատրիարքն ավելացնում է, որ ազգի համար մոռացել է իր անձն ու առողջությունը և ողջ ուժերն ի սպաս դրել հայկական խնդրի լուծմանը: Այդ շանքերի արդյունքն է, որ «Երկու հայկական խնդրի լուծմանը»:

1. «Փոքր», 1879, N 4, էջ 166, նաև Է. Կառանցամ, Գարեգին Սրբանձտյանց, Երևան, 1979թ., էջ 30, 113-120:

2. «Մշակ», 1878, N 120, 128:

3. Անենազմություն Ազգային ժողովոյ, 1878, էջ 8-9:

եպիսկոպոսունք, մեր եկեղեցվույն և ազգին երկոքին պարժանքները, ետ յուրաքանչյուրն եվրոպական զանազան տերությանց քով պաշտպանելու հայ դատը, միացած են ի Պեռլին՝ միաբան աշխատելու համար դեսպանաժողովին քով»<sup>1</sup>: Այդ հուսադրող պատասխանը մեծ ոգևորություն առաջացրեց Ազգային ժողովի երեսփոխանների մոտ և վերջիններս իրենց շնորհակալությունը հայտնեցին Վարժապետյանին՝ ոտքի կանգնելով և նրա աջը համրուելով<sup>2</sup>:

Երբ հայ հասարակությունը գտնվում էր հույսերի և ակնկալիքների շրջանում, նույն ժամանակ արտաքին աշխարհում զնում էր ուժերի վերախմբավորում: Անգլիական դիվանագիտությունը իր հզոր մագիլներով ցանկանում էր ջլատել հաղթող կողմի (իմա - ռուսների) ուժերը, նոր փոխհարաբերակցություն սահմանել, արգելել ռուսական արքունիքին վայելել հաղթանակի պտուղները: Այդ նպատակով անգլիական արտաքին գործոց նախարար Սոլյսբերին հրահանգներ էր ուղղում Կ.Պոլսի իր դեսպանին՝ մի ուշագրավ հավելումով. «Ասիական Թուրքիան բովանդակում է իր մեջ բազմաթիվ ցեղերից և դավանություններից բաղկացած ժողովուրդներ, որոնք ընդունակ չեն ինքնավարության և անկախության զգուում չունեն»<sup>3</sup>: Մեծ տերություններից խնամքով գաղտնի պահված Կիպրոսի դաշնագիրը ևս փաստորեն ընդգծում էր, որ Փոքր Ասիայի ժողովուրդները, դրանց թվում և հայերը, ընդունակ չեն ինքնավարության: Փաստորեն, անգլիական դիվանագետները Բեռլին նեկանցին հայկական ինքնավարության պահանջնողիրը մերժելու նիտումով: Անգլիայում՝ Լոնդոնում և Մանչեստրում հայ-անգլիական ընկերության կազմակերպած հանրահավաքները և տարբեր միջոցառումները դիվանագիտական մի ճարպիկ ներկայացում էր, բենադրված անգլիական բարձրաստիճան գործիչների կողմից, որտեղ իրենց կամքից անկախ և նույնիսկ անգիտակ գործող անձիք էին հայ պատվիրակության անդամները և անգլիական մի քանի հայամետ գործիչներ:

\*\*\*

Հայ պատվիրակները Բեռլին հասան հունիսի 1-ին (13-ին): Կ.Պոլսից Բեռլին էր եկել նաև Ազգային ժողովի աստենապետ Ստեփան

1. Ասենագրարինը Ազգային ժողովոյ, 1878, էջ 8-9:  
2. Նոյն տեղում, նաև Սարտիսան, 624. աշխ., էջ 400:  
3. Սարտիսան, 624. աշխ., էջ 407:

Փափայանը, իր հետ բերելով հեռագրական ծածկագիր, որ պետք է օգտագործվեր պատրիարքի հետ հաղորդակցություն պահպանելու ժամանակ: Այդ մասին Արշակ Չոպանյանը գրում էր. «Փափայան խկական պատգամավոր մը չէր, բայց իրեն հանձնված դերը ավելի կարևոր էր, քան պատգամավորներունը: Իր պաշտոնն էր Պոլսու պատրիարքարանի դիվանագիտական խմբակին իբր լիազոր ներկայացուցիչ՝ վերահսկողություն մը ի գործ դնել պատգամավորներուն վրա, զանոնք Ներսիսյան ուղեգծին հետևելու ստիպել, երբ տարբեր ուղղությանը նախաձեռնությանց ծգտում ունենային»<sup>1</sup>: Նույն ժամանակ Բեռլին ժամանեց պատվիրակի առաքելությամբ Պետերբուրգում գործող խորեն Նար-Պեյզ: Գերմանիայի մայրաքաղաքում հայերը հայտնվեցին տիհած իրավիճակում, պատվիրակության անդամներից ոչ մեկը չէր տիրապետում գերմաններին: Թարգմանչի գործը ստանձնելու համար Փարիզից Բեռլին եկավ Պեյլերյանը: Բեռլինում գտնվելու առաջին օրերին պատվիրակներն ստանում են Ներսես Վարժապետյանի առաջին ծածկագիրը, որով նա հանձնարարում էր տեսակցել Գերմանիայի արտաքին գործոց նախարարության խորհրդական Բյուլցի հետ՝ նրա միջնորդությամբ Բիսմարկի ուկնորությունն ստանալու նպատակով: Բյուլցը խորհուրդ է տալիս հայ պատվիրակներին իրենց խնդրագրի հանձնումը կոնգրեսին հետաձել այնքան ժամանակ, քանի դեռ չի ավարտվել Եվրոպական Թուրքիայի տարածքների հարցի քննարկումը: Ըստ գերմանական խորհրդականի՝ միայն Ասիական Թուրքիային վերաբերող խնդիրների քննարկման ժամանակ կարելի է Հայաստանի ինքնավարության փաստաթղթերը ներկայացնել կոնգրեսին:

Դրան հակառակ՝ Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Վադինգտոնը գտնում է, որ հայկական դատի վերաբերյալ բոլոր փաստաթղթերը անհրաժեշտ է անհապաղ ուղարկել կոնգրեսի բոլոր անդամներին, որպեսզի վերջիններս, նախօրոք ժամորթանալով բոլոր փաստաթղթերին, ակտիվորեն մասնակցեն Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդվածի քննարկմանը: Անսալով այդ խորհրդին, Խորհյանն ու Նար-Պեյզը հունիսի 13/25-ին Ռուսաստանի, Անգլիայի, Ավստրիայի, Գերմանիայի, Խոտակայի, առաջին ներկայացուցիչներին հանձնեցին իրենց խնդրագիրը, Հայաստանի ինքնավարության վերբերյալ պատիհարքական ծրագիրը և դրանց կից վիճակագրական տեղեկություն-

1. Անական, 1907, թիվ 6-7-8-9, էջ 150:

ները: Կոնգրեսի նախագահ Բիսմարկին հայոց պատրիարքը հավելյալ ուղարկել էր պաշտոնական մի գրություն, որում ներկայացնելով իր պատվիրակներին՝ խնդրում էր վեհաժողովի օրակարգի քննարկման հարց դարձնել հայկական հարցը: Դայ պատվիրակների խնդրագիրը պարունակում էր հայոց պահանջների արդարացիությունը հավաստող փաստարկումները. «Մենք քաղաքական ազատություն չենք, որ պահանջում ենք և ոչ էլ երբեք ուզում ենք բաժանվել թրքական կառավարությունից: Մենք ուզում ենք Թոքական Հայաստանի մի բաժնում, այն է՝ Երգրումի և Վանի վիլայեթներում և Դիարբեքի վիլայեթի հյուսիսային մասում, ուր թվական առավելություն ունենք թուրքերի վրա, ...ուզում ենք ունենալ մի հայ վալի, որ պետությունների հավանությամբ կարգվի Բ. Դանից»<sup>1</sup>: Այնուհետև հայ պատվիրակները բացատրում էին, թե ինչու չի կարելի հայ նահանգապետի նշանակումը վերապահել Թուրքիային: Բ. Դուռը ցանկացած պահին կփոխեր իր կողմից նշանակված պաշտոնյային և ի չիք կդարձներ բարենորոգումների ողջ ծրագիրը:

Պատրիարքական ծրագրի հետ կային մի շարք պաշտոնական փաստաթղթեր: Դրանցից էին «ծրագրի կազմակերպական կանոնագրի Օսմանյան Հայաստանի», «Վիճակագիր Օսմանյան Հայաստանի», որին կցված էր ապագա ինքնավար Հայաստանի աշխարհագորական քարտեզը: Առաջին փաստաթղթը<sup>2</sup> բաղկացած էր յոթ կետից, որոնք վերաբերում էին ինքնավար Հայաստանի սահմաններին (Երգրումի ու Վանի վիլայեթներ, Դիարբեքի վիլայեթի հյուսիսային մասը, Արդնի սանջակը, Սղերդի սանջակի հյուսիսային նասը, Շիզե նավահանգիստը, որ գտնվում է Տրավիզոնի և Բաթումի միջև՝ առևտրի համար նպաստավոր պայմաններ ստեղծելու նպատակով): Նախատեսվում էր Հայաստանի վարչությունը հանձնել Բ. Դռան կողմից առաջ քաշված և պետությունների հավանությանն արժանացած մի ընդհանուր կառավարչի, որը պետք է իրականացներ գործադիր իշխանությունը, պահպաներ հանրային ապահովությունը, հսկեր տուրքերի հավաքնանը և դատավորների գործունեությանը: Ընդհանուր կառավարչի իրավասությունների մեջ էր մտնում նաև Ընդհանուր ժողովի նախագահությունը: Այդ պաշտոնը նախատեսվում էր հինգ տարով: Մյուս կետերը վերաբերում էին նահանգի եկամուտներին, նրա-

1. Սարբիստան, թշ. աշխ., էջ 419:

2. Նրագիր կազմակերպական կանոնագրի Օսմանյան Հայաստանի. Կ. Պալմ. 1878թ.:

նից գանձվող հարկերին, պետական գանձարանից հետո նահանգին մնացած ծախսերին, հաղորդակցության ուղիների զարգացմանը, դպրոցների և ընդհանրապես ուսումնական հաստատությունների պահպանությանը: Արևմտյան Հայաստան՝ մեծ տերությունների ուշադրությանը հանձնված վիճակագրությունը ապացուցում էր, որ իր պատմական հայենիքում (այն նահանգներում, ուր առաջարկվում էր նտցնել բարենորոգումներ) հայությունը կազմում է բացարձակ մեծամասնություն, իսկ տիրող ազգը տվյալ վայրում կազմում է հայերի թվաքանակի 1/3-ը: Իրեւ ապացույց մատնանշվում էր Ուրիշինի 1845թ. նարդահամարի թվերը, որի խիստ նվազեցրած տվյալներով անգամ 30 տարի առաջ հայերի թիվը ներկայացված է 2 և կես միլիոն: Նույնիսկ հենվելով դրա վրա, կարելի է եզրակացնել, որ արևմտահայերի թիվը երեսուն տարի անց կարելի է հաշվարկել 3 միլիոն:

Այդ բոլոր փաստաթղթերը հայ պատվիրակները ներկայացրին վեհաժողովի նախագահին, որը դրանք տեղավորեց աղերսագրերի թղթապանակում:

Ֆրանժիական դեսպան Կաղինգտոնն այդ մասին հաղորդելով հայ պատվիրակությանը, խորհուրդ տվեց նրանց դիմել Բիսմարկին, որպեսզի վերջինս այդ գրությունները նտցնի վեհաժողովի օրակարգի մեջ: Անսալով խորհրդին, պատվիրակները հատուկ նամակով դիմեցին Բիսմարկին: «Ազնիվ միջնորդը» տվեց իր համաձայնությունը ոչ թե ստացված փաստաթղթերը և ինքնավարության ծրագրերը, այլ Սան Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդվածը քննարկելու համար:

Կոնգրեսին ներկայացվեց նաև մի այլ ծրագիր՝ «Մեկ քանի նորեր Հայաստանի վարչության մեջ նտցվելիք բարենորոգմանց մասին» խորագրով: Այն կազմել էր Եգիպտոսի ականավոր պետական գործիչ հայազգի Նուբար Փաշան: Վերջինս այդ նորերում մի քանի անգամ շեշտում էր, որ հայեր «աչք չունին ոչ քաղաքական անկախության մը, ոչ օսմանյան պետութեն որևէ բաժանման»<sup>1</sup>: Հայերը կուզեն «հաստատություններ, որոնք երաշխավորեն իրենց ինչքը, իրենց կիներուն և աղջիկներուն պատիվը, իրենց կյանքի իրավունքը վերջապես»:

Պարզ ու հստակ գրելածով Եգիպտոսի բարձրաստիճան պաշտոնյան բացատրում էր, որ այդ ցանկությունները թուրքական պետությունը հանդիսավոր խոստացել է 1839 և 1856թթ. իրովարտակ-

1. «Աւճական», 1907, թ. 10 (շաբանակություն՝ թիվ 11, 12):

ներով, որոնք չեն իրագործվել և մնացել են թղթի վրա: Եզիպտական պաշտոնյան ճատնացույց էր անում, որ Երևանի նահանգում, ոուսական հովանավորությունը ընդունելուց հետո, 30 տարվա ընթացքուն հայերի թիվը կրկնապատկվել է: Եզրակացությունը մեկն էր՝ աշխատանք հայ ժողովրդի արևանյան հատվածը ևս կիասներ և տնտեսական հաջողությունների, և բվաքանակի կրկնապատկման, եթե կիրառվեին ամենաչափավոր բարենորոգումների ծրագրեր:

Նուրաք Փաշայի ծրագրում ներկայացվում են խիստ չափավոր, բայց իրականացնելով բարենորոգումներ, ոչ թե մեծ պահանջներ, որոնք երբեք չեն կարող իրականացվել:

Նուրաք Փաշան այդ ծրագրը Փարիզից ուղարկել էր Բեռլին, մեծ պետությունների ներկայացուցիչներին բաժանվել էր մեկական օրինակ: Ինչպես տեսնում ենք, Վեհաժողովին նասնակցող պետություններին ներկայացվել էր երկու ծրագիր: Նախագահ Բիսմարկը հաշվի առավ պատրիարքարանի ներկայացրածը:

Երկու ծրագրերն էլ քննադատության ենթարկվեցին հայության երկու հատվածների աջ ու ձախ ուժերի կողմից: Արծրունին և իր համախոհները, Պետերուրգում հրատարակվող «Գոլոս» առաջադիմական թերթը, քննադատում էին պատրիարքարանի ծրագիրը իրեն խիստ պակասավոր, ճատնանշում նրա թերությունները և առաջադրում ավելի լայն իրավունքների պահանջներ: Պարտված թուրքիան իր դեսպան Սաադուլլահ թեյի միջոցով առաջարկում էր հայ պատրիարկությանը՝ չափավորել իրենց պահանջները և բավարարվել միայն հայ նահանգապետով: «Եթե Զեզ համար բավական է Դայաստանի վրա հայ վալի նշանակվելը, կարող եմ անմիջապես հեռագրել Բ. Դուան, որ նա Զեր այս փափագը կատարե նախքան Եվրոպայի միջանտելը»<sup>1</sup>: Այդ առաջարկին Նար-Պեյջ պատասխանում է, թե Բ. Դուան կողմից Դայաստանում նշանակված հայ վալին նույն օրն ևեր կարող է արձակվել իենց նույն Բ. Դուան կողմից: Դայերին անհրաժեշտ է Եվրոպայի երաշխավորությունը: Դայ պատրիարկները չիրապուրվեցին նման առաջարկություններով և շարունակեցին իրենց գործունեությունը:

Պատրիարքարանի ծրագրի հեղինակների համար խիստ չափավոր էին նուրաք Փաշայի ներկայացրած ծրագրերը, այդ պատճառով

## Մկրտիչ ԽՐԻՍՅԱՆ. Հասարակական-քաղաքական գործունեությունը

նրանք Կ. Պոլսից իրահանգում էին իրենց ներկայացուցիչներին՝ հաստատ մնալ ինքնավարության պահանջի վրա:

Պատվիրակության ղեկավար Մկրտիչ Խրիմյանը այլ կարծիք ուներ այդ երկու ծրագրերի նկատմամբ: Նա հավանություն էր տալիս Նուրաք Փաշայի կազմած ծրագրին և անհրաժեշտ էր համարում, որ վերջինս Փարիզից գա Բեռլին՝ իր կազմած ծրագիրը անձանք պաշտպանելու համար: Նույն կարծիքին էր նաև Բեռլինում Պարսկաստանի դեսպան, ազգությամբ հայ Մելքոն Խանը: Նա ևս աշխատում էր համոզել Նուրաք Փաշային անձանք պաշտպանել իր կազմած «Նորերը»: Վերջինս խուսափում է այդ քայլից: Նա գիտեր, որ և Պոլսում, և Բեռլինում Խրիմյանից բացի մյուս գործիչները դեմ էին դրան: Պատվիրակության մյուս անդամները, մասնավորապես Ստ. Փափաջյանն ու Մ. Չերազը Կ. Պոլսի բողոքի հեռագիր ուղարկեցին, գանգատվելով պատվիրակության ղեկավարի կատարած քայլերից: «Անահիտ» հանդեսի 3 թվերի մեջ լույս տեսած Ստ. Փափաջյանի հուշերը<sup>2</sup> ցույց են տալիս պատվիրակության անդամների անհամաձայնությունը և տարբեր գործելակերպը: Չոպանյանը կողմնորոշվում է դեպի Խրիմյանի գործելակերպը: Առանձին-առանձին քննարկելով պատվիրակության յուրաքանչյուր անդամի գործելակերպը, Չոպանյանը գնահատում է դրանց ամեն մեկին և ողջ պատվիրակությանը միասին: «Աչքի կը զարնե ամեն բանե ավելի պատվիրակության աններդաշնակ կազմը և հայ պատգամավորներուն ոստոստուն, հարափոփոխ ու անհեռատես հանգամանքը»<sup>2</sup>: Նար-Պեյջ ուներ ռուսական կողմնորոշում: Նա ցանկանում էր Մեծ Հայքում հաստատել ռուսական տիրապետություն, այնուել ընդհանուր կառավարիչ հաստատել Լորիս-Մելիքովին, իսկ Կիլիկիայում՝ Ռուսաստանի բարոյական և ռազմական օգնությամբ ստեղծել ինքնուրույն հայկական տարածք: Այս խիստ լուրջ, դրական, բայց և դժվար իրականացնի ծրագիրը պաշտպանում և առաջ էր մղում իր գործելակերպով ոչ լուրջ Նար-Պեյջ, որը ծգտում էր իր եղբայր Գվիդոնին օծել Կիլիկիայի թագավոր, իսկ ինքը դառնալ կաթողիկոս: Ակնհայտ է, որ այս ծրագիրը պետք է հանդիպեր բիկոնսֆիլյան Անգլիայի ուժգին դիմադրությանը:

Խրիմյանի ծրագիրը եականորեն տարբերվում էր Նար-Պեյջի ծրագրությամբ դարձյալ Չոպանյանի գնահատումներին: «Խրիմյան ուժից Նետենք դարձյալ Չոպանյանի գնահատումներին: Դայական առաջարկություններով և շարունակեցին իրենց գործունեությունը»:

1. «Անահիտ», 1906, թիվ 10-11-12:

2. Նոյեմ անդամ, թիվ 6-7-8-9, էջ 151:

ունի ծրագիր մը բոլորովին տարբեր. այն է Նուպար փաշային հանճնել հայոց դատին պաշտպանությունը, ստանալ Շայաստանի համար ինքնավար ռեժիմը Նուպար փաշա ըլլալով ընդհանուր կուսակալ. այս ծրագիրն ալ գործնական էր և ինքն իր մեջ տրամաբանական և ավելի անմիջականապես իրականացնի»: Չոպանյանի կարծիքով Նուբար փաշան դիվանագիտական իր անուրանալի ծիրքով և հմտությամբ կարող էր մեծ արդյունքների հասնել հայկական դատի համար, քան ողջ պատվիրակությունը՝ միասին վերցրած: Դամենատելով հայ ազգային գործիչներին՝ Ներսեսին, Օտյանին, Ստեփան փաշային, Սերվիչենին, Նուրյանին, նրանց գործելակերպը, Չոպանյանը եզրակացնում է, «Աղոնց մեջ ոչ մեկն ուներ Նուպարին հատուկ հեռատես, սուր միտք, գործնական ոգին, մաքենատիկական հաշվագիտությունը, ծրագիր մը ի գործ դնելու համար ունեցած ճարպկություն, անձնական իրապուրի և արդեն իսկ եվրոպական մեծահոչչակ անուն վայելող ազդեցիկ անձնավորության առավելությունները»<sup>1</sup>: Ժողովրդի մարդու հոտառությամբ և անմիջական զգացողությամբ Խրիմյանը իր ողջ հույսերը կապում էր եգիպտահայ քաղաքական գործչի հետ: Պարսկաստանի հայազգի դեսպան Մելքոն խանը ևս Խրիմյանի հետ միասին պնդում էին Բեռլին իրավիրել Նուբարին և նրան հանճնել հայկական դատի պաշտպանությունը: Սակայն պոլսահայ խումբը, առավելապես պատրիարք Վարժապետյանն ու Գրիգոր Օտյանը դեմ էին Նուբար փաշային: Չոպանյանն այդ փաստը բացատրում է այն հանգամանքով, որ Վերջիններս հույս ունեին վեհաժողովից ստանալ ավելին, քան նախատեսում էր Նուբար փաշան: «Ինքնավարության ծրագրի հեղինակների համար որչափ համեստ և աննշան պիտի երևար Նուպար փաշային ծրագիրն»<sup>2</sup>, - տարիներ անց մտորում էր Սարուխանը: Քիչ դեռ չեր խաղում նաև մրցակցության ոգին: Ինքնավար Շայաստանի նահանգապետ էր նախատեսվում մի կողմից Նուբար փաշան, մյուս կողմից՝ Օտյանը:

Ս. Զերազը և Ստ. Փափազյանը առանձին ծրագիր չունեին: Եռանդուն և անձնվեր ազգային այդ գործիչները պաշտպանում էին և հետևում Պոլսի խմբին և հաճախ գանգատներ էին հղում պատրիարքարան, բողոքելով Խրիմյանի գործելակերպից, իսկ Պոլիսը (իմա - պատրիարքը) «9/21 հունիսի կպատվիրել մոռանալ Նուպարի

1. «Անակիտ», 1907, թիվ 6-7-8-9, էջ 154:

2. Սարուխան, նշվ. աշխ., էջ 446:

## Մկրտիչ ԽՐԻՄՅԱՎՆ. Հասարակական-քաղաքական գործունեությունը

անունն անգամ»<sup>1</sup>: Ստեփան Փափազյանի հուշերը օր առ օր նկարագրում են պատվիրակության անդամների հակասական գործելակերպը: Խրիմյանն իմանալով Պոլսի ուղարկած հեռագրի և նրա պատասխանի մասին, զայրանում է. «Պատրիարք և դուք պատասխանատու եք, այսուհետև ես չեմ պատասխանատու, ինչպես կուգեք, այնպես ըրեք»: Եվ նա իրաժարվում է ստորագրել Նուբար փաշային ուղղած Փափազյանի հեռագրը, որով խորհուրդ չեն տալիս նրան գալ Բեռլին:

Պոլսահայ ողջ խումբը, պատվիրակությունը ևս, բացառությամբ ՆարՊեյի ունեին անգլիական կողմնորոշում: Չոպանյանի ակնհայտ համակրանքը վայելող Խրիմյանը ևս վեհաժողովի նախօրյակին և ողջ ընթացքում վարում էր անգլիանետ քաղաքականություն: 1907թ. Չոպանյանն իրավացիորեն գրում էր. «Դայրիկ, որուն բնագդը ծիշտ կտեսներ, բայց որ դիվանագետ չէր բնավ, ունեցած է արաքներ, որ խոհենության ապացույց չեն: Դայրիկ, որ այժմ (ընդգծում Չոպանյանին է) ընթառում է, որ հայ ժողովուրդը Ռուսը պետք է նախընտրե թուրքին, այն ատեն թուրքը կնախընտրե Ռուսին և չէր քաշվիր իր զգացումները անվայել իրապարակելու»<sup>2</sup>: Նույն վերաբերմունքն ուներ ողջ հայ պատվիրակությունը, որը «հայկական դատը չափազանցորեն հանճնած է Անգլիո և Ռուսիո հանդեպ ցուրտ, նույնիսկ մերը թշնամական վարմունք ունեցած է», - գրում է Չոպանյանը, վկայակոչելով Ստ. Փափազյանի հուշատետրը: Քննադատելով Անգլիայի նկատմամբ «ծայրահեղ, օդային, անհիմն հույսերը», ռուսական կողմնորոշում ունեցող Չոպանյանը գովեստով է արտահայտվում «թրքասեր», Փափազյանի խոսքերով «թուրքի մարդ» համարվող Նուբար փաշայի մասին: Վերջինս իրատեսական վերաբերմունք ուներ ուժերի հարաբերակցության նկատմամբ և իր հարգանքն էր արտահայտում Ռուսաստանին, ընդգծելով, որ «Երևանի ռուսահայկական նահանգին ժողովուրդը երեսուն տարվա ընթացքին մեջ կրկնապատված է»<sup>3</sup>. Դրանով նա հավաստում էր, որ Ռուսական հովանավորությունը վայելելու դեպքում Արևմտյան Շայաստանը ևս կարող է նման ձևով բարգավաճել: Քննադատելով վեհաժողովի փաստաթորթերը, գնահատելով դրանք առանձին-առանձին, ցույց տալով Զերազի և Փափազյանի հուշերի

1. «Անակիտ», 1907, թիվ 10-11-12, էջ 163:

2. Նույն տեղամ, թիվ 6-7-8-9, էջ 151:

3. Նույն տեղամ, թիվ 10-11-12, էջ 162:

## ԵՄԱ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

թեր ու դեմ կողմերը, Չոպանյանը հանգում է այն մտքին, թե հայ պատվիրակության աշխատանքներն ընթացել են սխալ հունով: Սակայն վերջում նա անում է մի վերապահություն. «...Եթե պատգանավորությունը բնակ գացած ըզլար Պեղլին, հավանական է, որ անգլիական դիվանագիտությունը բոլորովին պիտի ջնջեր Սան-Ստեֆանոյի 16-րդ հոդվածը, առանց անոր տեղ Պեղլինի դաշնագրին նեց ոչինչ դնելու...»<sup>1</sup>: Չոպանյանի կարծիքով պատվիրակության գործունեությունը չպակվեց շոշափելի արդյունքով, որովհետև չեր դեկավարում «Նուպարի կամ Մելիքովի պես անձնավորություն մը», որը կկարողանար պահովել Ռուսիո հզոր ու բոլորանվեր աջակցությունը: Իր թեզն ապացուցելու համար Չոպանյանը մեջքերումներ է կատարում վեհաժողովի առաջին, երկրորդ, յորերորդ նիստերում ռուսական առաջին պատվիրակ Գորչակովի ելույթներից, որը Ռուսաստանի հաղթանակի պտուղները ամբողջությամբ չկորցնելու ակնկալիքով առաջարկում էր վեհաժողովին, որ Արևելքում (իմա-Թուրքիայում) չինի ոչ մի պետության գերիշխանություն, որ «Պոլսու հեղիեղուկ հողին Վրա՝ ինքնասիրությանց վատառողջ ու ծղճին պայքարին տեղ տեսնել հավաքական գործունեություն մը պետությանց, որ Բ.Դուան պիտի խնայեր շատ մը ցնորդներ և շատ մը սխալներ...»<sup>2</sup>:

Կարծում ենք, Չոպանյանը չափազանցնում է հայ պատվիրակության խաղացած դերը վեհաժողովում: Անկախ այն հանգանքից, թե ովեր էին հայ պատվիրակության անդամները և ինչ ուղղությամբ էին ծավալում իրենց գործունեությունը, նրանք չին կարող հասնել շոշափելի արդյունքների, որովհետև տվյալ պատճական պահին մեծ պետությունների միջև գործում էր շահերի հակամարտության օրենքը: Յուրաքանչյուր մեծ պետություն Թուրքիայում ուներ իր հետաքրքրությունների ոլորտը: Որևէ մեկի գերիշխանությունը կխախտեր ուժերի հավասարակշռությունը: Տվյալ պահին ուժեր հակամարտություններ կային Անգլիայի՝ և Ռուսաստանի միջև: Անգլիան առանց մի կարիլ արյուն թափելու հաղթանակած Ռուսաստանին ստիպում էր հաղթանակի ողջ արդյունքները հանձնել վեհաժողովի քննությանը, ապա նրանից խլում էր հաղթանակի պտուղների մի ծանրակշիռ մասը: Անգլիական կառավարության լիազոր ներկակայացուցիչները՝ Բիկոնսֆիլդն ու Սոլսբերին թուրքական պետության շահերն էին պաշտպա-

## Միրտիք ԽՐԻՍՅԱՆ. Հասարակական-քաղաքական գործունեությունը

նում և դիմադրում էին Թուրքիայի լծից ազատվել ցանկացող քրիստոնյա ժողովուրդներին տարբեր արտոնություններ՝ «առանձնաշնորհումներ» հատկացնելուն: Բիկոնսֆիլդի շուրբերով խոսում էր «Վեհափառ սուլթանի շահերի ամենամեծ պաշտպանը» և հասկանալի էր նրա ծգտումը՝ «սուլթանը տեր լինի իր երկրում»: Վեհաժողովի ընթացքում բանակցություններն ընթանում էին Անգլիայի և Ռուսաստանի միջև: Երբ Գորչակովը հայտնեց Սոլսբերիին, որ Ռուսաստանը Թուրքիային չպիտի գիծի Կարսը և Արդահանը, մտադիր են Բարումը հայտարարել ազատ նախանգիստ, իսկ Բայազետը, Ալազկերտի հովիտը և Երգրումը վերադարձնել Թուրքիային, Անգլիայի արտաքին գործոց նախարարը իրավունք վերապահեց իրեն իր պետության կողմից նկատել, թե պատրաստ են պաշտպանել Անգլիայի շահերը այն միջոցներով, որոնք հարմար կգտնեն: Փաստորեն, Դայաստանի ինքնավարության նախին հայ պաշտոնական շրջանների կազմած ծրագիրը վեհաժողովում չքննարկվեց: Մասնակից մեծ տերությունները գրադված էին անորոշ բարենորդումների նախին մի այնպիսի բանաձևի որոնումով, որ գոհացներ բոլոր շահագրգիռ կողմերին: Թուրքական լիազոր ներկայացուցիչների ուժեղ ընդդիմությունը հայկական հարցի քննարկման ժամանակ արդյունք էր վեհաժողովի իշխող ուժերի՝ գերմանացիների և անգլիացիների աջակցության: Թուրքական պատվիրակ Կարաքողորի փաշան առանց թաքցնելու հայտնում է հայ պատվիրակներին, որ պետք է ընդդիմանա նրանց ծրագրին: Վեհաժողովի 14-րդ նիստի նախօրեին պարզվում է Թուրքիայի և Անգլիայի գաղտնի դաշինքի փաստը: Դայ պատվիրակները վիատված, ճիգեր չխնայելով, ուղերձներ են հղում Բիսմարկին և Սոլսբերիին՝ տեսակցություն խնդրելով նրանցից: Երկուսն էլ պատասխանում են մերժումով: Առաջինը՝ պատրվակելով իր երկրի չեզոք դիրքորոշումը, երկրորդը՝ գրադվածությունը:

Թուրք-անգլիական դաշինքի հայտնությունը տիած ներգործություն ունեցավ վեհաժողովի բոլոր մասնակիցների վրա: Այդ դաշնագիրը յուրովի էր վճռել հայկական հարցը՝ ոչ ինքնավարություն, ոչ էլ ռուսական գրավում, այլ ընդհանուր թարենորդումներ թուրքական կառավարության կողմից՝ Անգլիայի համաձայնությամբ: Մյուս տերություններին վերապահված էր սոսկ հավանություն տփողի դերը: Վեհաժողովին ամենակին չեր մտահգում գլխավոր շահագրգիռ կողմի՝ հա-

1. «Անական», 1907, թիվ 10-11-12, էջ 173:

2. Նային տեղամ:

յության (ի դեմս նրա պատվիրակների) վերաբերնունքը կայացած վճռի նկատմամբ: Անգլիական և բուրժական դիվանագետները նախօրոք կազմել էին բանաձևի տեքստի մի տարրերակ, որը վեհաժողովի հուլիսի 11-ի նիստում համեմատելով Սան Ստեֆանոյի դաշնագիրի 16-րդ հոդվածի հետ, խնբագրվեց և կարծես ճակատագրի հեգնանքով ընդունվեց իբրև վեհաժողովի 61-րդ հոդված՝ այն տարբերակը, ինչ հայտնի դարձավ քաղաքակիրք աշխարհին: «Բ.Դուռը հանձն է առնում իրականացնել, առանց այլս ուշացնելու, այն բարվոքությունը քուրդերի և շերքեզների դեմ: Բ. Դուռն այս նպատակի համար իր ծեռք առաջ միջոցների մասին պարբերաբար տեղեկություն պիտի տա պետություններին, որոնք պիտի հսկեն այդ միջոցների գործադրության վրա»<sup>1</sup>: Այս ծևակերպնան վերջին պարբերությունն անգամ թուրք պատգանավորներն ընդունում են դժկանությամբ: Նրանք ցանկանում էին այդ նախադասությանը տալ առավել անորոշ երանգ, որոնք չպետք է պարտավորեցներին Բ.Դուռնը հաշվետու լինել մեծ տերություններին: Սակայն ֆրանսիական արտաքին գործոց նախարար Վաղինգտոնը պնդում է այդ ծևակերպնան վրա: Այդ մասին ֆրանսիական «Le temps»-ի թրակից Գուստավ Կուտալը, որը կատարում էր Վաղինգտոնի հանձնարարությունը և միաժամանակ Նուբար փաշայի մտերիմներից էր, լուրեր է հաղորդում Բեռլինից: Ժամանակի քաղաքական գործիչները Բեռլինի վեհաժողովում Դայաստանի և Դայկական հարցի նկատմամբ մեծ տերությունների դրսևորած վերաբերնունքը բացատրում են այն հանգամանքով, թե Դայաստանին ինքնավարություն տալու դեպքում այն կմիանար Արևելյան Դայաստանի հետ, դրանով ուժեղացնելով Ռուսաստանի ազդեցությունն այդ տարածաշրջանում:

\*\*\*

Դայկական հարցի մասին ընդունած 61-րդ հոդվածի լուրը ստանալով Կ.Պոլսի հայ դեկավար գործիչները իրահանգում են պատվիրակներին՝ գործադրել վերջին ծիգերը և վերստին դիմել այս անգամ արդեն Ռուսաստանի և Ֆրանսիայի ներկայացուցիչներին: Սակայն

1. Սարալսան, 624. աշ., էջ 475:

այդ երկրների լիազոր ներկայացուցիչների փոխարեն հայ պատվիրակներին պատասխանում են երկրորդական պաշտոնյաներ: Պոլսից ստացված հատուկ հեռագրի համաձայն, երկու ժամ առաջ Վեհաժողովի բոլոր մասնակիցներին, բացառությամբ բուրժականի, հայ պատվիրակները հղեցին մի բողոքագիր, որում իրենց ցավն ու բողոքն էին հայտնում հայ ժողովորի օրինական պահանջները հաշվի չառնելու համար: «Դայերը հասկացան, թե խարվել են, թե նրանց իրավունքները չեն ճանաչվել, որովհետև խաղաղասեր են եղել: Դայ պատվիրակությունը պիտի ետ դառնա արևելք, իր հետ տանելով այդ դասը: ...Դայ ժողովուրդը երբեք պիտի չդադարի աղաղակ հանելու, մինչև որ Եվրոպան նրա պահանջներին արդար գոհացում չտա: Բեռլին, 13 հուլիսի, 1878թ.»:

Ավարտած համարելով իրենց գործը հայ պատվիրակության անդամները հեռացան Բեռլինից հուլիսի 19-ին: Նար-Պեյը գնաց Փարիզ, Փափազյանը՝ Լոնդոն: Խրիմյանն ու Չերազը բռնեցին Պոլսի վերադարձի ուղին: ճանապարհին նրանք մտան Վիեննա՝ ավստրիական արտաքին գործոց նախարարի մոտ, որպեսզի վերջինս Կ.Պոլսի իր դեսպանին հանձնարարի հայկական խնդիրը:

Երբ Խրիմյանն ու Չերազը վերադարձան Կ.Պոլսի, նրանցից առաջ տարածվել էր տիսուր լուրը և առաջ բերել մեծ հուսախարություն և հիասթափություն: Ազգային ժողովը քննարկման դրեց վեհաժողովի արդյունքների խնդիրը: Ազգային ժողովի երեսփոխան Պեկյան Էֆենտին զայրություն ելույթ ունեցավ, անհաջողության համար մեղադրելով Կ.Պոլսի հայ ազգային շրջանակների դեկավար գործիչներին, մասնավորապես պատրիարքին: Վարժապետական ուշքի էր եկել առաջին ուժգին հարվածից և արևմտահայությանը ապագայի հույս ներշնչելու նպատակով նա լավատեսական ելույթ ունեցավ, կոչով դիմեց գաղթաբնակ հայրենակիցներին՝ բողնել կայսրության մայրաքաղաքի գեղագվար ափերը, վերադառնալ Դայրենիք՝ Արևմտյան Դայաստան և համատեղ ջանքերով ծեռնամուխ լինել նրա վերաշնուրյան գործին: Դայ պատվիրակության քարտուղար երիտասարդ Չերազը վեհաժողովի վերադարձից հետո լույս ընծայեց մի փոքրիկ աշխատություն՝ «Թե ինչ շահեցանք Պեռլինի կոնգրեսեն» խոսուն վերնագրով: Խանճավառված նկարագրելով պատվիրակության կատարած աշխատանքը և ստացած արդյունքը, նա չափազանցված համեմատությամբ ներկայացնում է այն. «Պեռլինի կոնգրեսեն ու-

կեհանք մը շահեցանք, մեզ անկե խիզախել և հանել ոսկին»<sup>1</sup>:

Մոտավորապես չորս տասնամյակ անց, 1917-ին Մինաս Չերազը կրկին անդրադարձավ Բեռլինի վեհաժողովին, հայ պատվիրակության կազմին և գործունեությանը, դրանց հարակից այլ հարցերի<sup>2</sup>: Յետադարձ հայացքի շարժադրման Սարուխանի՝ 1912-ին Թիֆլիսում լույս ընծայած «Դայկական խնդիրն ու Ազգային Սահմանադրությունը Թուրքիայում» աշխատության առաջին հատորն է: Արդեն պատկառելի տարիքում գտնվող Չերազը բարձր գնահատական տվեց աշխատությանը. «Բավկականին խղճանիտ, գրեթե անաչափ ուսումնասիրություն, որ կուսակցամոլ գրչակներու ժամանել ալ գերծ, մեծ պատիվ կրերե հեղինակին»<sup>3</sup>: Դրանով հանդերձ, պատվիրակության նախկին քարտուղարը գտնում էր, որ Սարուխանը որոշ հարցերի տվել է, իր կարծիքով, միայ գնահատականներ, որոնց մի մասի վերաբերյալ տալիս է իր մեկնաբանությունները: Չերազը համաձայն չէ ներսես Վարժապետյանին տված Սարուխանի գնահատականին (թուրքամոլ): Ժխտելով այդ որակավորումը, Չերազը պատրիարքի վարած քաղաքականությունը համարում է «պատեհական քաղաքականություն, որ հարմար է տկար ազգերուն: Եղեգի քաղաքականություն է այն, որ կծոյի ամենի քամիի առջև, այլ հետո նորեն կցցվի»<sup>4</sup>: Ըստ Երևանին, պատրիարքի գործունեության նման գնահատականը ծիշտ էր: Այլ հարց էր, թե ճիշտ էր նման գործելակերպը: Չերազի առարկումներին է արժանանում նաև պատվիրակության անդամներին տված Սարուխանի գնահատականը: Նա գտնում է, որ թեև Խրիմյանը չէր տիրապետում ոչ մի Եվրոպական լեզվի, բայց նրա նման ոչ ոք չգիտեր Դայաստանը: Նրա արտաքինը, հոգեկան բարձր արժանիքները, որոնք ճառագում էին արտաքինից, Եվրոպական բոլոր արքունիքներուն թողել են բացարիկ ազդեցություն<sup>5</sup>: Չերազն ընդունում է իր հասցեին եղած քննադատության մի մասը միայն. իրավ է, որ ինքը Երիտասարդ էր և անփորձ, բայց իրենից բացի ոչ ոք չցանկացավ կատարել այդ պաշտոնը: «Խրիմյանին ընկերանալու արժանավոր անձը Օտյանն էր, բայց նա չցանկացավ հակաթուրք ծեռնարկով խորտակել իր ապագան»: (Չնայած տարիներ անց Օտյանը փախստ

1. Մ. Չերազ. Թե ինչ շահեցանք Պևոլինի կանգենեն. Կ.Պայլս. 1878թ., էջ 29:

2. Մ. Չերազ, Հայկական խնդիր. Վենետիկ. Սրբ. Պագար. 1917:

3. Նայի տեղամ, էջ 7:

4. Նայի տեղամ, էջ 8:

5. Նայի տեղամ, էջ 16-17:

## Մերտիք ԽՐԻՄՅԱՆ. Հասարակական-քաղաքական գործունեությունը

Փարիզ, վախենալով Արդուլ Շամիդի հալածանքներից - է. Կ.): Չերազը նատնամշում էր, որ ինքն ստիպված եղավ հետագա կյանքը «անցունել հայրենիքեն հեռու»: Պատասխանելով Սարուխանի դիտողությունների մեծ մասին, Չերազը, փաստորեն չի ընդունում ոչ մի քննադատական խոսք, որն ապացուցում է, թե ինչպես է «անփորձ Երիտասարդը» տարիներ անց իրեն համարում անառարկելի մեծություն:

Ընդհանուր առնամք վեհաժողովի արդյունքները հիասթափեցրին հայ ժողովրդին, չբավարարեցին նրա սպասելիքները: Եվրոպական դիվանագիտության օգնությամբ ազատագրվել ցանկացող հայ գործիչները տեսան, որ զուր էին իրենց հույսերը: Մ.Խրիմյանի մերձավոր զինակիցը, նախկին սանը, հաղորդում էր պատրիարքարանին. «Իմ սկզբունքը էր քարոզել, թե օտարեն պետք չէ բան հուսալ, ջանանք մենք զմեզ հոգալ, պատրիաստվիլ և ցույց տալ ազգաց, թե մենք ալ ազգ մի ենք, մեր պատմության և մեր հայրենյաց արժանիքը մեր վրա ցուցնել, գիտությամբ զորանալ, նիությամբ դիմանալ, գործել և պահպանել մենք զմեզ, պատրիաստել մայրեր, հասցունել այրեր, գրկել գիրենք և տալ այս նպատակին համար: Այս է մեր միակ փրկության ճամբան և ահա այս էր իմ առաքելության ավետարանը»<sup>1</sup>: Մրգանձոյանցը ևս Վարժապետյանի նման պահանջում էր, որ գաղութներում իհմնավորված ականավոր գործիչները՝ բժիշկները, իրավաբանները, վարդապետները մեկնեն Դայաստան և ծառայեն մի սրբազն նպատակի. «Դայաստանի մեջն է բուն հայկական խնդիրը և մեք Պերլինի մեջ կորոնենք զայն»: Այս հակիրճ, սակայն խիստ տարողունակ միտքը դարձավ արևմտահայ առաջադեմ, ժողովրդանվեր գործիչների գործունեության նշանաբանը և նպատակակետը: Իսկ դա ամենից առաջ նշանակում էր, որ հայ ժողովրդի պատության համար «պետք է բախել ոչ թե Եվրոպական պետությունների դռները, այլ հույսը դնել ժողովրդի կենսական ուժերի վրա, ոգեկոչել նրա ապրելու և հարատևելու»<sup>2</sup> անկուտրում կամքը և ներքին ողջ հնարավորությունները: 61-րդ հոդվածի մասին այսպես էր գրում ռուս հետազոտողը. «Դոդվածը, որը տեսականորեն ենթադրվում էր լինել հայ ժողովրդի փրկության գենքը, իրականում եղավ եղավ կորստյան միջոց, իսկ միջազգային վերահսկողության բոցավառ շնորհավորանք»:

1. «Փոքր», 1879, թիվ 4, էջ 166, ան նաև Ե. Կոստանդյան. Գարեգին Մրգանձոյանց, էջ 113:

2. Ե. Կոստանդյան, Գ. Մրգանձոյանց, էջ 117:

ները, բոլոր սպասելիքներից անկախ, կապեցին հայ ժողովրդի բարեկամների ոտքերն ու ծերքերը և համարյա անպաշտպան հանձնեցին նրա ոյներին թշնամու ողորմածությանը»<sup>1</sup>, - ահա թե ինչ գնահատականի արժանացավ Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածը ուս մտավորականության առաջադեմ ներկայացուցիչներից մեկի կողմից՝ տարիներ ան:

Պատվիրակության ղեկավար Մկրտիչ Խրիմյանը, որ Եվրոպա էր մեկնել մեծ հույսերով ու ակնկալիքներով, որ հույս էր կապում քրիստոնյա մեծ տերությունների բարի կամքի հետ, որ կարծում էր թե «համամարդկային վշտի և լազի լեզվով» խոսելը կղորդի մեծ տերություններին կատարել հայերի օրինական պահանջներն ու խնդիրները, զգաց «ուժի իրավունքի» մեծ սարսափները: Դեռ վեհաժողովի սկզբուն իր եղբորորդի խորենին ուղղած նամակում Խրիմյանն արձանագրում է, որ երիս արդարացի է գերմանացի քաղաքացետ Բիսմարկը, թե՝ իրավունքը ուժի մեջ է: Ստացվում էր, որ «մուրճ» և «զնդան» հարաբերություններում հայերը մշտապես զնդանն են:

Կ.Պոլսում գտնվող Խրիմյանը բազմաթիվ հանդիպումներ էր ունենում հայահոծ այդ գաղթօջախի ներկայացուցիչների հետ: Դակա բազմություն էր խառնվում այն եկեղեցներում, ուր պատվիրակության ղեկավարը կարծես հաշվետվություն էր տալս ժողովրդին Եվրոպայի շրջագայությունների ժամանակ կատարած իր գործերի մասին: Գումարուի Մայր տաճարում ժողովրդական մարդուն հատուկ պատկերավոր արտահայտություններով նա նկարագրեց վեհաժողովի ողջ ընթացքը, որտեղ ապստամբած Եվրոպական ազգերը ներկայացել էին իրենց սրբերի շայյունով, իսկ հայերը՝ լոկ աղերսաթղթով: «Թղթ շերեփով» կաթսայից հարիսա հնարավոր չէ վերցնել. աղերսաթղթի փոխարեն սուլր, այսինքն՝ գենք, զինված շարժում: Եվ պատրանաթափ Խրիմյանը այլարանությունից անցնում է ուղղակի խոսքի: «Ժողովուրդ հայոց, անշուշտ լավ հասկացաք, թե զենքը ինչ կրնա գործել և կը գործե: Ուրեմն սիրելի և օրինյալ հայաստանցներ, գալաքացիներ, երբ հայրենիք վերադառնալու լինեք, ծեր բարեկամաց և ազգականաց իբր պարգևն մեկ-մեկ գենք տարեք, գենք առեք և դարձյալ զենք: Ժողովուրդ, ամենեն առաջ քո ազատության հույսը քո վրա դիր, քո խելքին և բազկին ուժ տուր, ճարդ ինքնիրնեն պետք է ա-

## Մկրտիչ Խրիմյան. Հասարակական-քաղաքական գործութեալությունը

շխատի, որ փրկվի»<sup>1</sup>: Այդ խոսքերը դարձան հետագա սերունդների գործելակերպի ելավետային դրույթներ: Դայ հասարակական գործիչների մեծ մասը չանտեսելով Եվրոպական դիվանագիտության օգնությամբ ազատագրվելու ուղին, որդեգրում է նաև դրան տրամագծորեն հակառակ ուղղություն: Ակսվում էր գործունեության նոր շրջան:

\* \* \*

Աստիճանաբար հանդարտվեցին կրքերը: Կյանքը մտավ բնականոն հունի մեջ: Մեծ տերություններից հուսախար Խրիմյանը չդատապարտվեց անգործության: Դանդաղ, բայց հաստատում քայլերով վերստին իր գործունեությունը ծավալեց նա: Բանավոր քարոզներին հաջորդեց գրավոր խոսքը՝ նոր աշխատությունը:

1878-ին Կ.Պոլսում լուս տեսավ Եվրոպայից վերադարձած Խրիմյանի բարոյախոսական-դաստիարակչական, ինաստասիրական աշխատությունը՝ «Սիրաք և Սամուել» խորագրով, որի երկրորդ լրացուցիչ վերնագիրը բացահայտում է աշխատության նպատականդավագայությունը, կրթական դասեր, որոնք հեղինակի ցանկությամբ հասցեագրված էին հայ հայրերին և նրանց որդիներին: Աշխատությունը մտահղացվել և գրվել էր, ըստ երևույթին, «Դրախտի ընտանիքից» հետո, բայց շարունակում էր մշակվել և բարելավվել նրա ստեղծագործական քուրայում: Շրջագայությունը Եվրոպական զարգացած երկրներուն ընդլայնեց նրա մտահորիզոնն ու աշխարհնկալումը: Դզոր պետությունների վարած դիվանագիտությունից նա քաղեց իր դասերը, դրանցով լրացրեց աշխատությունը և ցանկացավ իր մտորումները կիսել հարազատ ժողովրդի հետ: Աշխատությունն իր մեջ ամփոփում է 13 դաս, այսինքն՝ բաղկացած է 13 գլուխներից: Ամեն մի գլուխը ունի դասի հերթական թիվը՝ Դաս Ա, Դաս Բ և այլն, ունի նաև բովանդակությունն արտահայտող վերնագիր: «Մարդ և աշխարհ», «Տիեզերք, բնական և բարոյական օրենք», «Անհավասար կյանք մարդու ընկերության», «Իշխանություն և հպատակ ժողովուրդ», «Ժոկային ընկերության», «Աշխատություն և հաց», «Ուղիղ դովուրդ և ազնվականք աշխարհիս», «Աշխատություն և հաց», «Ուղիղ տնտեսություն կենաց. հաց և բան», «Ինքնաշխատ հառաջադիմություն», «Դանճար և ընկերական գորություն», «Երջանիկ և ապերնություն», «Դանճար և ընկերական գորություն», «Երջանիկ և ապերնություն», «Բարգավաճանք և նվազումն աշխարհիս զննիկ կյանք աշխարհիս», «Բարգավաճանք և նվազումն աշխարհիս

1. Հ. Ամենամ, Հայոց Հայրիկ, էջ 511. (այդ բարով գրի է ատել Մանուկ Միքայելյանը, բայց է տեսել «Հայ միք» շաբաթաթերթ, 1927թ., Ն 30-ում):

1. A. B. Ամֆիթատր, Արմանակի առօք, ստ. 35.

ազգաց», «Ժամանակ և պատահարք աշխարհի», «Ավետարան և ընկերություն», - ահա 13 դասերի խորագրերը: Դրանցից բացի ամեն մի դասն ունի հեղինակի գրչին պատկանող համառոտ բնաբան, որն արտահայտում է տվյալ դասի գաղափարական բովանդակությունը:

Առաջին երկու գլուխմերում հեղինակն ուսուցանում է մարդ անհատի և հասարակության միջև եղած կապն ու հարաբերությունները, որով մարդը և մարդկային հասարակությունը տարբերվում է կենդանական աշխարհից: Մարդու կոչումը և գլխավոր գործը հեղինակը համարում է ոչ միայն երկրի տնտեսական բարգավաճումը, այլև հոգևոր-բարոյական կյանքը, մարդկային բարձր առաջնություններն ու չափանիշները: «Աշխարհ մարդոց առաջնության ասպարեզն է», որտեղ մրցանակների են արժանանում ոչ այնքան և ոչ միայն աստվածաշնչան կերպարները, այլև հայոց եկեղեցու հայրապետներն ու վարդապետները, Գրիգոր Լուսավորչին և իր հետնորդներին զուգահեռ Մեսրոպ Մաշտոցը՝ իր բարգանիչ աշակերտներով, Վարդանը՝ իր ուխտադիր խմբով: Խորիմյանը կարծում է, որ մրցանակների են արժանի ոչ միայն իրենց «հանճարով, գյուտերով, արվեստով, աշխարհաշնությամբ, մեծագործությամբ»<sup>1</sup> հռչակված անցյալի գործիչները, այլև նոր ժամանակների ժողովրդանվեր և ազգանվեր անձնավորությունները: Եեղինակը պատվիրաններ է տալիս հասարակության բոլոր խավերին: «Իբրև աշխարհի մարդ՝ քաղաքավարությամբ առաջնահացիր, իբրև ազատ մարդ՝ մի ստրկանար..., իբրև իշխան, օրենքով իշխե, արդարություն և իրավունք սիրե, իբրև հպատակ՝ օրենքով հնազանդիր... իբրև ընկերական մարդ՝ ընկերական պարտիքներ սիրով կատարե և միանգամայն ծանցչիր իրավունքը»<sup>2</sup>:

Բնության օրենքները համեմատելով բարոյական օրենքների հետ, հեղինակն իրավացիորեն առաջնությունը տալիս է բնական օրենքներին, որոնք հավերժական, անսկիզբ, անվերջ ու անվախճան են իրենց հոլովություն: Եվ քանի որ բնության երևույթներն իրենց ազդեցությունն են թողնում մարդկային հասարակության վրա, Խորիմյանն ամերաժեշտ է համարում բնության գաղտնիքների խորն ուսումնասիրությունը, որպեսզի հնարավոր լինի խուսափել նրա ավերիչ ուժերից, քանի որ «Տիրական մարդը բնական օրինաց հպատակ ծառան է»<sup>3</sup>:

1. Խորիմյան Հայրիկ, Երկիր, էջ 315:

2. Նույն տեղամբ, էջ 316:

3. Նույն տեղամբ, էջ 319:

Մարդկային օրենքները տարբերվում են բնության օրենքներից, չնայած Խորիմյան հոգևորականի կարծիքով երկուսի աղբյուրն է «հավիտենական ինաստությունն է»՝ Գերագույն Օրենսդիր Աստվածը: Մարդկային բարոյական օրենքների հիմքում դնելով Տասնարանյա պատվիրանները, Խորիմյանը գծում է դրանց զարգացման վերընթաց կորը՝ Մովսեսը իր օրենքով, ապա Հիսուսը՝ իր Փրկիչ առաքելությամբ: Դամենատելով երկու չափանիշները, Խորիմյանն առավելությունը տալիս է «Հիսուսի ներող մարդապահությանը»: Խորիմյանի հայացքների հակասությունն արտահայտվում է 3-րդ գլխում՝ «Անհավասար կյանք մարդկային ընկերության» խորագրով, որի բնաբանը և հենց առաջին նախադասությունն իրար հակասում են: «Թե մարդիկ աշխարհիս վերա և արևուն տակ անհավասար կերպին, հողին ու գերեզմանի ստվերին տակ կը հավասարին»: Սկզբում հեղինակը հայտարարում է, որ մարդիկ ծնվում են հավասար և մեռնում հավասար, ապա՝ ավելացնում, թե անհավասարությունը ոչ միայն մարդկային հասարակությանն է հատուկ, այլև տիեզերքին: Տիեզերքի անհավասարություն ասելով նա հասկանում է բնության մեջ գոյություն ունեցող բազմազանությունը, անթիվ, անհամար երևույթներ, առարկաներ, երկրներ, բուսական և կենդանական աշխարհի տարբեր տեսակներ: Այդ «անհավասարությունից» հետո հեղինակն անցնում է մարդկային հասարակության մեջ տիրող անհավասարությանը: Այստեղ նա տարբերակում է երկու տեսակի անհավասարություն. առաջին անհավասարությունը, ըստ նրա, մրցակցության ոգին է, որը հասարակական կյանքը նորում է դեպի առաջադիմություն. «Գյուտի հանճարներ գերազանցել կը մրցին, գրոց հեղինակներ մատենագրելով կը մրցին»<sup>4</sup>: Մանուկի ազատության խմբագիրներ ազատաբանելով կը մրցին»<sup>5</sup>: Նույն այդ մրցակցությունը կյանքի առաջնորդիչ ուժը լինելուց բացի, ունի նաև բացասական և «հորի ծնունդներ», այստեղից էլ բխում է երկրորդ անհավասարությունը՝ սոցիալականը: Ըստ Խորիմյանի նրանից է ծնում «մեծամիտ տիրապետության ոգին» և բազմաթիվ այլ թշվառություններ, եթե «զորավոր գտկարն միշտ նվաճելով կը հառթահարէ և կը հարստահարէ»<sup>6</sup>: Այդ պատճառվ Խորիմյանը գովեստով է արտահայտվում սպարտացի մեծ օրենսդիր Լիկուրգոսի մասին, որը ցանկացավ սոցիալական հավասարություն հաստատել իր հայ-

1. Խորիմյան Հայրիկ, Երկիր, էջ 325:

2. Նույն տեղամբ, էջ 326:

րենիքում: Իր մեծ հարգանքը հավաստելով նման գործիշների նկատմամբ, Խրիմյանը մտորում է իր ժամանակների մասին, երազում այնպիսի օրենսգետների, որոնց գործունեության արդյունքը հանդիսանար սոցիալական արդարությունն ու հավասարությունը: Սակայն իրատես Խրիմյանը գիտի, որ նման երազներն անիրականանալի են և «քանի աշխարհ կա... անհավասարության կյանք իրեւ մշտնջենավոր անհեղղի օրենք պիտի տիրեւ աշխարհիս վերա»<sup>1</sup>:

Այս գիտի տրամաբանական շարունակությունն է «Խշանություն և հպատակ ժողովուրդ» բաժինը, որտեղ հեղինակն իշխանությունը համարում է անհավասարությունից, խռովարար ոգիից, տիրապետելու զգուումից առաջացած երևույթ: Խշանության առաջին փոքրիկ բժիջը ընտանիքն է, ապա՝ տոհմերը, ցեղերը, ժողովուրդները և վերջապես՝ աշխարհակալ տերությունները: Քննարկելով նարդկային հասարակության զարգացման տարբեր փուլերը, պատճության ընթացքում ստեղծված հզոր պետությունների՝ Սակեդոնիայի, Շոռնի, Բաբելոնի և Ասորեստանի՝ պատճության թատերաբեմից անհետանալու փաստերը, փիլիսոփա Խրիմյանը խորհում է, որ բոլոր երևույթներն ունեն իրենց սկիզբը և վախճանը: Չոգեռական Խրիմյանը ամենից առաջ գուշակում է այն իշխանությունների վախճանը, որոնք «երկնից գորության դեմ կը բարձրանան և կը զախճախեն ժողովրդին կյանք և գորություն»<sup>2</sup>: Չեղինակն իշխանությունը համարում է պարտադիր երևույթ բոլոր ժողովուրդների և բոլոր ժամանակների համար: Նա քննարկում է նույնիսկ իշխանության զանազան ձևերի առկայության հարցը՝ նիապետությունից մինչև հանրապետություն: Պասարակական կյանքում ամենից զարգացածը Խրիմյանը համարում է Ամերիկան, որտեղ «քաղաքակրթությունը արքուն հասակն առել է: Ուր ժողովուրդ առանց թագի, առանց կայսեր հզոր գավազանի, մի նախագահով և օրենքով կը կառավարվի»<sup>3</sup>: Պամադրելով բոլոր փաստերը, նա հանգում է այն եզրակացության, որ իշխանությունը պարտադիր է նարդկային քաղաքակրթության համար. նրա բացակայությունը ենթադրում է քառու և անիշխանություն, դարձ դեպի վայրենություն: Որպես օրինակ նա բերում է ֆրանսիական ազգին, նրա հեղափոխությունների և հեղաշրջումների փաստերը, երբ քաղաքակրթությունը անիշխանության պայմաններում «խուժան կդար-

## Մկրտիչ ԽՐԻՄՅԱՆ. Հասարակական-քաղաքական գործունեությունը

նար և ամեն բան կը տապալեր»: Չեղինակը կողմնակից է նարդկային հասարակության աստիճանական զարգացմանը. նրա համար անընդունելի են հեղափոխական ճանապարհով, բռնի միջոցներով կատարվող փոփոխությունները: Միաժամանակ նա գտնում է, որ իշխանություններն ունեն պարտականություններ՝ «արդարություն սիրել և օրինաց արդարացի վճիռը արդարությամբ ի գործ դնել»<sup>4</sup>: Խրիմյանն օրինավոր է համարում այն իշխանությունը, որը խորհում է իր հպատակների բարօրության համար: Ժողովրդական նարդու հարուստ կենսափործից բխող ինաստությամբ Խրիմյանն արտահայտում է իր մտքերը իշխանության և օրենքի փոխհարաբերության մասին: Դրանք հեղինակի ժողովրդավարական գաղափարների արտահայտությունն են: Խրիմյանի կարծիքով իշխանության հզորության առաջին նախապայմանը «արդար և հավասար» օրենքի գործադրումն է հասարակության բոլոր խավերի վրա: Օրենքը հավասար խստությամբ պետք է գործադրվի թե՛ իշխանավորի և թե՛ ժողովրդի նկատմամբ: Անթույլատրելի է որևէ բացառություն, առանձնապես օրենքի պաշտոնյաների համար: Դրանից էլ բխում են իշխանության պարտականությունները: Խշանությունը պետք է առաքինությունը պաշտպանի, մոլուքյունը սանձահարի, հնտությամբ վարի երկրի տնտեսությունը, թույլ չտա երկրի հարստության և ուժի արտահոսք (խիստ այժմեական գաղափարներ), ժողովրդի առաջ բացի առաջադիմության ճանապարհը, քաջալերի երկրագործության զարգացումը, խթանի և նպաստավոր պայմաններ ստեղծի գիտության ու արվեստի համար: Խրիմյանն իշխանության պարտականությունն է համարում նաև «անեն հնարավոր միջոցներ ի գործ դնելով պատերազմ չիարուցանել ոչ ուրիշ իշխանության դեմ, ոչ էլ պատճառ տալով ուրիշ իշխանության մը՝ յուրինը»<sup>5</sup>: Փաստորեն Խրիմյանը շարադրում է իր տեսակետը իշխանության վարած ներքին և արտաքին քաղաքականությունների մեջ հեղինակի մամբ: Խշանության բոլոր պարտականությունների մեջ հեղինակի ուշադրությունը բնեովում է և մի քանի անգամ ընդգծվում կրթության, գիտության զարգացման անհրաժեշտության և այդ նպատակի համար նպաստավոր պայմաններ ստեղծելու վրա: Լուսավորությունը, կրթությունը ու գիտությունը խիստ անհրաժեշտ են հասարակության բոլոր խավերին, ինչպես վերին շերտերին, այնպես էլ խրճիթներում

1. Խրիմյան Հայրիկ, Երկիր, էջ 327:

2. Նույն աելաւմ, էջ 330:

3. Նույն աելաւմ, էջ 331:

ապրող թշվաներին, որովհետև՝ «Երկրին բարգավաճանք ժողովրդին լուսավոր կրթութենեն կը ծնի, ինչպես որ թշվառությունը՝ նորա տգիտութենեն»<sup>1</sup>: Սակայն հեղինակը քաջ գիտակցում է, որ բոլոր ժամանակների տիրակալներն էլ խոչ ու խութ են հարուցել լուսավորության ճանապարհին, որովհետև նրանք կարծում են, թե տգետ ժողովրդին իշխեն ավելի հեշտ է: Այդ երևոյթը տիպական հաճարելով արևելյան հետամնաց պետությունների համար, հեղինակը դրան հակադրում է «քաղաքակիր աշխարհի լուսամիտ գաղափարին, որ միշտ կշանա ժողովրդին մտավորական զարգացումն առաջ տանելով՝ լուսավորել զայն»<sup>2</sup>: Թվարկելով իշխանությունների պարտականությունների բոլոր ոլորտները, հեղինակը գծում է նրանց զեղծումների և չարաշահումների պատկերը: Նա պահանջում է, որ ժողովրդի և իշխանության շահը ընդհանուր լինի, իրարով պայմանավորված: Դա հաճարելով բոլոր ժամանակների իշխանությունների զորության առաջին ճախապայմանը, հեղինակը գտնում է, որ հակառակ դեպքում իշխանությունը դիմում է զեղծումների, խախտում է օրենքի հավասարությունը: Նա պահանջում է բոլոր օրինախախտների նկատմանը կիրառել նույն պատժամիջոցները, խտրություն չդնելով դիրքի և պաշտոնի առաջ: Նա գտնում է, որ նույն հավասարությանք պետք է խրախուսել բարիք գործողներին, երկրի առաջադիմության անձնվեր մշակներին: Ավելորդ հաճարելով մանրամասն թվարկել իշխանության չարաշահումների բոլոր դեպքերը, նա գծում է ժողովրդի և իշխանության պարտականությունների և իրավունքների սահմանները. «ինչ որ իշխանության պարտիքն էր, այն է ավասիկ ժողովրդին իրավունք և ինչ որ իշխանության համար իրավունք է, այն է տիրապես ժողովրդի պարտիք»<sup>3</sup>: Իշխանությունների և իշխանավորների առաջ դնելով իր հատու պահանջները, Խրիմյանը միևնույն ժամանակ պատժամում էր հպատակ ժողովրդին, նրան ուսուցանում, թե «Իշխանության գավառնը երկնքեն դեպի երկիր ձգվեր է», այսինքն՝ իշխանությանը տրվում է աստվածային ծագում և հորդորում է ժողովրդին՝ հնազանդվել տիրակալներին: «Քրիստոս և քրիստոնեական կրոնի ուսուցիչները առհասարակ կը պատվիրեն ճանչնալ իշխանությունը, պատվել, հնազանդվել, երկնչել և տալ կայսերին՝ կայսեր...»<sup>4</sup>:

1. Խրիմյան Հայրիկ, Երկիր, էջ 336:

2. Նոյն տեղամ:

3. Նոյն տեղամ, էջ 337:

4. Նոյն տեղամ, էջ 338:

Սակայն հենց նույն բաժնում հոգևորական Խրիմյանի դեմ ընդդում է ժողովրդավար Խրիմյանը: Այստեղ նա ոչ թե ծգտում է հաշտեցնել անհաշտելին, սրողել հակասությունները, այլ հորդորում է ժողովրդին՝ տեր կանգնել իր իրավունքներին, որ իշխանավորները օգտվելով ժողովրդի տգիտությունից «չհաճարձակին նույն իսկ օրենքով հարստահարել, որոնց օրինակ բազում անգամ և բազում տեղ կը տեսնեմք աշխարհին մեջ»<sup>1</sup>: Իշխանություն և ժողովրդ հարաբերությունից հետո հեղինակն անդրադառնում է ժողովրդի և «ազնվական դասի» փոխհարաբերությանը: Ժողովրդը, ըստ Խրիմյանի, «մարդկային ընկերության ամենամեծ մասն է. կայսր, թագավոր, իշխան, պայազատ, ամենքն ևս ժողովրդի զավակներն են, զի ժողովրդին է բուն արմատ և մայր ամեն կարգի և վիճակի ճարդոց»<sup>2</sup>: Ժողովրդը ասելով Խրիմյանը հասկանում է աշխատավոր, հասարակության ամենաստվար մասին՝ գյուղացիության ու արհեստավորներին: Ժողովրդի աշխատանքով, նրաթափած քրտինքով են ստեղծվում բուն արմատ և մայր ամեն կարգի և վիճակի ճարդոց»<sup>3</sup>: «ազնիկ ցորեան և պատվական հացը» ուտում է ազնվականը, ժողովրդին բողնելով կորեկ ու գարի: Խրիմյանը մեկ առ մեկ թվարկում է, թե ինչպես է զրկվել ժողովրդը իր աշխատանքի արդյունքներից, որոնք վայելում են ազնվականությունն ու նյութ շահագործողները: Այդ երևոյթը նա տեսնում է և Արևելյան հետամնաց երկրներում, և Արևմտյան «քաղաքակիր» աշխարհում, ամենուրեք ժողովրդը «ծանր աշխատության և կարոտության մեջ կմաշի»<sup>4</sup>: Իշխանավորներին, հարուստներին և ազնվականներին Խրիմյանը վերապահում է «աշխարհվարությունը, քաղաքագիտությունը և դատավարությունը», նրանց ծեռքը դնում «կառավարության սանձը»: Միանիտ Խրիմյանը ազնվականների մեջ տեսնում է երկու խումբ. ամենին՝ «անարդար և նենգող» ազնվականներն են, որոնք խառաջինը՝ «անարդար և նենգող» ազնվականներն են դիզել և երկրորդը՝ «արդար բեռության հակայական հարստություն են դիզել և երկրորդը՝ «արդար վաստակով և ուղիղ աշխատությամբ հարստացած ազնվականներ»: Դեղինակի կարծիքով վերջինները խիստ սակավաթիվ են: Խրիմյանը Դեղինակի կարծիքով վերջինները խիստ սակավաթիվ են: Խրիմյանը դաշտապարտում է հարստահարողներին, հափշտակողներին, անգությատապարտում է պաշտպանում հասարակ ժողովրդին, իր ճակալվածատերերին և պաշտպանում հասարակ ժողովրդին, իր

1. Խրիմյան Հայրիկ, Երկիր, էջ 338:

2. Նոյն տեղամ, էջ 340:

3. Նոյն տեղամ, էջ 342:

## Եմա ԿՈՍԱՎՆԴՅԱՆ

կատի քրտինքով ապրող օրավարձ մշակներին: Նոր ժամանակներում կատի քրտինքով ապրող օրավարձ մշակներին: Նոր ժամանակներում կատի քրտինքով ապրող օրավարձ մշակներին: Կարելի է գտնել միայն հասարակ ժողվրդի մեջ, - խորհում է Խրիմյանը և ծշնարիտ քրիստոնյայի դասեր է տալս իր զավակներին, մատնանշելով Քրիստոնին, որ աղքատ և ժողովրդասեր էր, որ հավաստում էր, թե «մանոնան անիրավ է, անիրավ են և նոքա, որք սոսկ ազնվականություն կը կեղծեն»<sup>1</sup>:

Միրացի տված դասերից ամենանշանավորը թերևս աշխատանքի գովերգն է, նրա փառաբանումը: Աշխատանքի միջոցով մարդը տեր է դառնում բոլոր տեսակի հարստություններին: Հարստության առաջին «աղբյուր երկիրն է, այդ աղբյուրը առատացնող ծեռքը՝ մարդու աշխատությունն է»<sup>2</sup>: Մարդ արարածը չքավարարվեց երկրի մշակությամբ, համար աշխատանքով նա պատրեց երկրի կուրծքը, հայտնաբերեց բազմաթիվ հանձոններ, բանկարժեք նետաղներ: Գյուղատնտեսական գործիքների՝ խոփ ու մանգաղի, չուրի ու արորի ստեղծումը մարդկային աշխատանքի արդյունք է: Աշխատասեր և բարի մարդու հետ կողք-կողքի ապրում է չարությունը, և խոփի ու մանգաղի հետ միասին կռել են սուր և թուր, որին հետևել են ավերներն ու պատերազմները:

Հարստության ամենամեծ աղբյուրը հեղինակը համարում է գիտության և արվեստի զարգացումը և առանձնապես ընդգծում է 19-րդ դարում ծնված հանճարների դերը: Աշխատանքը և աշխատափրությունը համարելով հարստության աղբյուր, հեղինակը Հայաստանը համեմատում է Զվիշերիայի հետ: Բնակլիմայական պայմաններով իրար նուն այդ երկրների մեջ կա ահավոր տարբերություն: Զվիշերիան՝ (Շվեյցարիա)՝ եվրոպական այդ երկիրը աշխատանքի շնորհիվ դարձել է առատ ու հարուստ մի երկիր, իսկ Հայաստանում, որ գտնվում է «Ասիր արևելյան աշխարհում», մարդիկ տառապում են չքավորությունից: Աղքատության պատճառը հեղինակը համարում է «թմրած ոգու ծովությունը», երկրի իշխանավորների մեղքը: Մինչ արևմտյան ազգերն առաջադիմում են լույսի և գիտության շնորհիվ, ըստ Խրիմյանի, արևելյան ազգերը գրկված են «առաջնորդող լուսեն»: Քննարկելով

## Մկրտիչ ԽՐԻՄՅԱՆ. Հասարակական-քաղաքական գործուելությունը

ցած ուղին, հեղինակը հանգում է այն եզրակացության, որ բոլոր հայտնագործությունները և գյուտերը կատարվել են համար և տքնածան աշխատանքի շնորհիվ: Տարբերակելով մտավոր, հոգեկան աշխատանքը ֆիզիկական աշխատանքից, արժանի գնահատական տալով մտավոր աշխատանքին իրեւ մարդկային հանճարի արգասիք: Խրիմյանը դիմում է հայ երիտասարդներին, նրանց ոգեկոչում մեր իմաստուն նախնիների գործելակերպը, զգուշացնում մտավոր կուրությունից, այն ավելի մեծ չարիք համարելով քան սոսկ կուրությունը: Իր ժամանակակիցների ականանշին նա կրկին հնչեցնում է Եղիշեի հմաստուն խոսքերը. «Կույր գրկի ճառագայթեն արեգական, և տղիտություն գրկի կատարյալ կենաց»: Տգիտությունը Խրիմյանը համարում է մտավոր կուրություն և եզրակացնում. «Մարդույն թշվառության բուն աղետաբեր արնատը մտավոր կուրություննեն կսկսի և կաճի»<sup>3</sup>:

Աշխատության մյուս գլխում հեղինակն անդրադառնում է «ճշմարիտ կամ ուղիղ տնտեսություն» վարելու կերպին: Հեղինակը գտնում է, որ կյանքում պետք է հոգալ ոչ միայն նյութական հոգսերը, այլև՝ բարոյական պետքերը: Վերջինի անտեսումը մարդ արարածին կիասցնի անասնական վիճակի: Այս երկիրը, ժողովուրդը կամ պետությունը, որ հոգում է միայն նյութական հարստության, ճոխության, գանձերի համար, դատապարտված է կորսույան: Բյուզանդիայի և Հռոմի կործանումը նա համարում է դրանց ապացույցը: «Պատճության դասերով և օրինակներով Խրիմյանը չափավորություն է հորդորում իր ժամանակակիցներին, զգուշացնում գեխ, ցոփ ու շվայտ կյանքից»:

Մի առանձին բաժին հեղինակը նվիրում է «Ինքնաշխատ առաջադիմությանը», այն համարելով ամենակարևոր դասը, բոլոր ժողովուրդների առաջադիմության և բարգավաճան միակ պայմանը: Հովուրդների առաջադիմության և բարգավաճան միակ պայմանը: Այս բաժնին իրեւ բնաբան նա դնում է հետևյալ խոսքերը. «Ինքնաշխատություն՝ մարդուն բնական պարտիք և արդար քրտինքն է... Անիրավ է մարդ, թե ուրիշի քրտանց և ծեռաց հացին կապատե»: Այս բնաբանով և հետագա շարադրանքով Խրիմյանը դատապարտում է մարդու շահագործումը մարդու կողմից, ոյնուն հավերժ իին ու նոր, ավետարանական կարգախոսի՝ քո հացը կեր քո երեսի քրտինոր, ավետարանական կարգախոսի՝ քո հացը կեր քո երեսի քրտինոր:

1. Խրիմյան Հայրիկ. Երկեր. Էջ 347:

2. Դային անդամ. Էջ 352:

րական մտածելակերպը: Նա դիմում է «փհատյալ ժողովրդին», հորդորում՝ հույսը դնել սեփական ուժերի վրա, ապավինել հայրենի հոդին, թույլ չտալ իր որդիներին հեռանալ մայր երկրից: Պանդուխտ և գաղթական հայերից նա պահանջում է հավաքվել հայրենի եզերքում և զորանալ «հայրենյաց միությամբ», քանի որ «ընդունայն է օտարի ծեռքեն և սեղանեն հաց սպասել»<sup>1</sup>: Առանձնապես ընդգծվում է «հայրենյաց միություն» գործոնի կարևորությունը, քանի որ միայնակ մարդը, թեկուց և հանճար, չի կարող հասարակություն ստեղծել, ինչպես թագավորը առանց ժողովողի չի կարող պետություն կազմել: Հանճարների և գյուտարարների հայտնագործությունները իրագործելու համար հասարակություն է պետք: «Դառաջադիմության առաջին տարեթքը, առաջին իհննաքարեր հանճարներ կը համարվին, իսկ շենքն ընկերություն կավարտե»<sup>2</sup>: Այս միտքը նա հաստատում է Գյուտեմբերգի տպագրության գյուտով. նի հանճարի ստեղծագործությունը կատարելագործեցին այլ հանճարներ, որոնք իիմնադրեցին «հսկայաշեն տպագրական տուներ»: Այդ տեսանկյունով էլ գնահատվում են Միխթարյան միաբանության նշակները, որոնք տքնածան աշխատանքով հավաքեցին վանքերի խորչերում գտնվող ծեռագիր մատյանները՝ ներ գրական նշխարները և տպագրության լուսով հետ վերադարձին ժողովրդին:

Այս աշխատության մեջ Խրիմյանը քննարկում է նաև չարի և բարու հավերժական պայքարի հարցը: Թե չարության և թե բարության աղբյուրը Խրիմյանը համարում է մարդկային սիրտը և առաջարկում է «խել չարի ակը, որ չարություն չբխե, բանալ բարպույն ակն, որ բարություն բխե»: Լայնախոհ, նաև միամիտ Խրիմյանը հետևելով իին հունական փիլիսոփաներին, մասնավորպես Սոկրատին և միջնադարյան հայ բանաստեղծության գագաթ Գրիգոր Նարեկացուն, ցանկանում է լույսով, գիտությամբ, դաստիարակությամբ մշակել, Վերափոխել մարդու սիրտն ու հոգին, սրբել չարության ախտերից, աշխարհի երեսից վերացնել չարիքը և նրա աննիջական արդյունքը՝ թշվառությունը: Նա հավատում է մարդու հոգեկան կարողություններին և կամենում է նրան սրբագործել բնական լույսի հետ միասին Ավետարամի լույսով:

Աշխատության վերջին երեք գլուխները բարձրացնում են համա-

մարդկային հարցեր. արդարություն և նեղը, ժամանակ և ժողովուրդ ներ, Ավետարանը իրեն ծշմարիտ մարդասիրության, ազնվության դասագիրք: Դետևելով պատմության դասերին, բայց առավելապես դիմելով իր ժամանակի իրադարձություններին, Խրիմյան - Սիրաքը Սամվելին և նրա միջոցով հայ երիտասարդներին ներշնչում և ուսուցանում է արդարության և շիտակության գերագույն զգացումը, ցանկանում նրանց հեռու պահել ախտերից և արատներից՝ նյութապատությունից, շահավաճառությունից, նենգությունից և անիրավությունից: Մարդարեի նման նա զգուշացնում է իր ընթերցողներին այն ահավոր իրավիճակից, երբ «պաշտոնյան յուր ժողովորով և իշխան յուր երկրով առհասարակ Աստծո ճանապարհեն կը խոտրին, ...երբ ազգի և երկրի կառավարության անձն իւր կարգեր գերիվայր լինելով կը չփոթին, ...երբ անարգն իրեն պատվական կը հարգվի և պատվականն կանարգվի, երբ տգետք և խաթերայք կը տիրեն, ժողովրդի հավատարիմներ կը մերժվին»<sup>1</sup>: Խրիմյանը տարբերակում է ծշմարիտ և սուս քաղաքակրթությունը. Ավետարանի քարոզած լույսն ու արդարությունը համարելով ծշմարիտ քաղաքակրթություն, հեղինակը սուս քաղաքակրթության արգասիք է համարում իր ժամանակի հասարակական կյանքի բացասական երևույթները. «Ազգը՝ ազգի դեմ, մարդը՝ մարդու դեմ, ընկերը՝ ընկերոջ դեմ սուր հանելով, եղայր հարազատ եղբոր դեմ իրեն թշնամի կը զինեն»<sup>2</sup>: Նա մեղադրում է իր ժամանակի տիրակալներին նրանց իրահրած պատերազմների, մարդկային մեծաքանակ գրիերի, որդեկորույս մայրերի համար: Տիրակալներից հետո, թեև պակաս ուժգնությամբ դատապարտվում է նաև հպատակ ժողովուրդը. «Սուր միտք ունի, սովորի չի կամիր, հանճար ունի՝ ուղեղին մեջ թմրած է. կը ճնշվի՝ ծիչ բառնալու եղանակ չգիտե, բնակավայր ունի՝ կը նոռանա...»<sup>3</sup>: Կարծես թե ինիշիայլոց գրված այս խոսքերի տրամաբանական շարունակությունը նեկը կարող է լինել՝ բողոքել անարդարության դեմ, չհամակերպվել սահմանված օրենքների հետ, պաշտպանել իրենց իրավունքները: Դեղինակը իր ժողովրդին սովորեցնում է «Ճիշ բառնալու» արվեստը: Ժողովրդի տառապանքներն իր սեփականը համարող Խրիմյանը մեղադրում է հայերին վախկութության մեջ՝ «այոյուժի ծեռքից ազատել չգիտեն»: Նա Վրդով-

1. Խովհան Հայրիկ, Եղիշե, էջ 392-393:

## 2. Վայսի տեղամ, լի 401:

### 3. Նոյն աելում, լի 403:

վում է, քանի՞ տարի է Կ.Պոլսի հայոց Ազգային ժողովն ընդունել է սահմանադրությունը, սակայն նրա հոդվածները չեն կիրառվում ոչ մայրաքաղաքում, ոչ էլ գավառ համարված բուն Արևմտյան Հայաստանում: Ամեն մի մեղադրանքին հետևում է «բարի հոր կրթական դասը». չէ՞ որ այս ողջ աշխատությունը դասերի մի մեծ շարք է: Նա իր պարտքն է համարում հասկացնել ժողովրդին, որ իր ժամանակի (ինչպես բոլոր ժամանակների) մեծ աշխարհակալը շահն է: Յզոր պետություններն առաջնորդվում են ոչ թե մարդասիրական գաղափարներով, այլ հետապնդում են իրենց երկրների շահերը: Մարդկային հանճարն է ստեղծել Ավետարանն ու խաչը, և Կրուպի թնդանոթը ... իրար անհանատեղելի հասկացություններ: Ավետարանը մարդկայնության, վեհության ու առաքինության քարոզիչն է, իսկ 19-րդ դարի քաղաքակրթությունը՝ Կրուպի թնդանոթը: «Դեռ մահ կը բերե, դեռ մարդոց համար սպանության գործիքներ կինարե, քուն և հանգիստ չունեն աշխարհիս տիրապետներ և դիվանագետներ»<sup>1</sup>: Այս աշխարհիս հզորներին նա համեմատում է հեքիաթային վիշապի հետ, որը նատել է աղբյուրի ակի վրա, ջրից գրկում է ժողովրդին: Եվրոպական հզոր պետությունների տիրակալներից և դիվանագետներից քաղած իր դասերն էր Խորհմանն ավանդում ժողովրդին՝ հայությանը: ճշճարիտ քրիստոնյային վայել բարի հոր կրթական դասերն ավարտվում են մեծ, իսկական մարդասիրության, ազգ և կրոն չճանաչող մարդասիրության քարոզով. օգնել զորավորներից գրկվածներին, հարստահարողներից ճնշվածներին: Իսկական մարդասիրությունը պահանջում է օգնել, ոտքի կանգնեցնել ընկածին և գրկվածին. «Քեզ ինչ» փույթ նորա լեզուն և կրոն»: Սեր առ մարդը՝ ահա գոքի ամենամեծ դասը: Մարդու, հարազատի, Յայրենիքի սիրո հանար ողջակիզել սեփական անձը: Դա Հիսուսի վարքն է, որին հետևում է Խորհմանը և գործով, և գրչով:

## ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

# ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄՅԱՆԸ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՌՈԳԵՎՈՐ ԱՌԱՋՆՈՐԴ

Սան Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ և Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածները հայկական հարցի վերաբերյալ խանդավառության, հույսերի, սպասումների, ակնկալությունների, ապա նաև հուսահատության և հուսալքնան մակընթացություն և տեղատվություն առաջ բերին արևմտահայության մեջ: «Սա մի հետաքրքրական և բեղմնավոր շրջան էր: Յայությունը վերջնականապես զարթնել էր մեռելային քնից և սկսել էր գգտել թոքափելու իր դարավոր ստրկությունը՝ իինը դնելով նոր և ազատ կյանքի: Յապարակ եկած հայ քաղաքական գործիչները այս կամ այն ուղղությունն էին ուզում տալ հայ քաղաքական մտքին: Այս տեսակետից 80-ական թվականները մեր պատմության դարձակետն էր», - գրում էր անցյալ դարի 80-ական թվ. գաղափարական շարժումներն ուստանասիրող Ար. Գյուլխանդանյանը<sup>1</sup>:

Թուրքական բռնակալությունից ազատագրվելու խնդիրը օրակարգի մեջ էր, անհրաժեշտ էր ճշակել նոր պայմաններին համապատասխան նոր մարտավարություն: Եվրոպական պետությունների հավաքական ուժին ներկայացրած աղերսագրերը և դիմունները չլույն ակնկալվող արդյունքը: Թուրքական կառավարությունն զգաց այն մեծ սպառնալիքը, որ կախվեց իր գլխին հայկական հարցը միջագգային դիվանագիտության առարկա դառնալով: Դա առիթ կարող էր ծառայել մեծ պետությունների համար իր «ներքին գործերին խառնելու», ստիպելու զիջումների և տարածքային «համեղ պատառների» կորստյան:

1. Ար. Գյուլխանդանյան, Նոր կյանքի արշարային (Հայրենիք, Թուստ, 1938, N1 նոյեմբ.):  
էջ 86:

Թուրքական կառավարությունը աստիճանաբար որոճում և հղանում էր ողջ ազգության ֆիզիկական գոյության վերաբերյալ դիվային մի ծրագիր, ըստ որի անհրաժեշտ էր թուրքավարի լուծել հայկական հարցը, հնարավորություն չտալով մեծ տերություններին միջամտել իր ներքին գործերին:

Թուրքական կառավարության կողմից ծեռնարկեցին մի շարք քայլեր: Դեռևս 1879 թ. սուլթանի հատուկ կարգադրությամբ Վան մեկնեց Սամի փաշան, որին գաղտնի հանձնարարություն էր տրված «հայոց ազատությունը ճնշելու, Դայաստանի կարևորությունը ոչնչացնելու և բոլոր հայոց ապագա ակնկալությունները փչացնելու մի նոր հնարագիտական, արտաքուստ չհայտնվող և փութով գործադրելի մի հատակագիծ շինել և իսկույն գործադրության դմել»<sup>1</sup>: Կայսրության մայրաքաղաքում ստեղծվեց բարենորոգումներ իրականացնող հանձնաժողով, որը մշակեց անիրազործելի մնալուն դատապարտված ծրագրեր: Երկու հանձնաժողովները Արենին փաշայի և Բեքիր բեյի դեկավարությամբ Կ.Պոլսից դուրս գալով տարբեր ուղղություններով, մեկնեցին Արևմտյան Դայաստանի տարբեր նահանգները: Ակնկալիք բարենորոգումների փոխարեն նրանք առավել սրեցին առանց այն էլ սրված ազգամիջյան հարաբերությունները, հայկական հարցին հակադրեցին քրդականը, իրահրեցին քուրդ ռազմական ավագանուն՝ Վոթիսնոհիր լինել անզեն հայ ժողովրդից, որպես հատուցում Բեռլինի դաշնագրի «չերքեզներից ու քրդերից հայերին պաշտպանելու» 61-րդ հոդվածի<sup>2</sup>: Իրավացի էր Խորհմանը, եթե գորում էր. «Այլևս կասկած չկա, որ քրդական միություն է կազմակերպվում կառավարության դրումով, որը ուզում է անդամալուծել հայոց հարցը, դրան հակադրելով մի նոր հարց՝ քրդականը: Այս միության ոգին Օսմանյան քաղաքականությունն է»<sup>3</sup>:

Կառավարության կողմից գործնական քայլեր արվեցին պատճական Դայաստանի նահանգները վերանվանելու կամ անվանափոխելու ուղղությամբ: Երգուսի վիլայեթը, որ մինչ ուսու-թուրքական պատերազմը կոչվում էր «Էրմենիստան», վերանվեց Քուրդիստան, առավել մեծացնելով նրա սահմանները: Մեծ Բրիտանիայի երգումի հյուպատոսը իրեն սկսեց կոչել «Consul for Kurdistan» (Քուրդիստանի

1. Լառ. Թուրքական հետախույսության գաղափարախոսարյանը, Հ.Ա., էջ 117:

2. Է. Դամանյան, Գարեգին Մրկանձայանց, էջ 118-123. նաև «Փորձ», 1879, N4, էջ 167-169:

3. Լառ. նշվ. աշխ., էջ 120:

հյուպատոս): Այդ մասին գեկուցելով Ուսասատանի արտաքին գործերի նախարարին, ուսական գործակալը ցանկություն էր հայտնում, որ իր իրավունքները հավասարվեն բրիտանական գործակալի իրավունքներին:

Իրենց կողմից որոշ քայլեր ծեռնարկեցին նաև Բեռլինի դաշնագիրն ստորագրող մեծ պետությունները, առավելապես Ուսասատանը և Անգլիան: Արևմտյան Դայաստանի առավել կարևոր նահանգներում հաստատվեցին հյուպատոսություններ և փոխհյուպատոսություններ, որոնք սերտ հարաբերություն էին պահպանում Կ.Պոլսի իրենց հանապատասխան դեսպանությունների հետ և նրանց էին հաղորդում տեղերում կատարվող դեպքերի և իրադարձությունների մասին:

Դայկական նահանգների քուրք բարձրաստիճան պաշտոնյաներին իրահանգվում էր խոչընդոտել տեղերի երեսփոխանական ժողովների գործունեությունը, արգելել ազգային և հայրենասիրական գգացումներ բորբոքող հայերեն բատերական ներկայացումները, խիստ հսկողություն սահմանել հայկական դպրոցների վրա, արգելել վատոնության դասավանդումը: Գործածությունից հանվեց «Դայաստան» պատճական և աշխարհագրական անվանումը: Խիստ գրաբննություն սահմանվեց հայկական ճամուղի և իրատարակվող գրականության վրա: Թուրք պաշտոնյաներին իրահանգվեց տիրապետել հայերենին և քրիստոնյա գրաքննիչներին փոխարիմել թուրքերով: Բնագրավկում և ոչնչացկում էին մեծ տարածում գտած Ավարայրի հերոս Վարդան Մամիկոնյանի և Մայր Դայաստանը պատկերող կտավները: Զեօք առնված այդ թուրք միջոցառումների մասին իր զալտմի գեկուցագրում Կ.Պոլսի ուսական դեսպանին հաղորդում պետական խորհրդական Օքերմիլլերը, մատնանշելով բարձրաստիճան հայերին մեկուսացնելու փաստերը<sup>2</sup>: Զգալով իր շուրջը հյուվող մեքենայությունները, արևմտահայությունը աստիճանաբար փոխում էր իր գործելակերպը: «1878-ի հանդարտ աղերսարկուն և խոյնուկ աղաջավորը բռնադատայալ նոր միջոցներու մղվեցավ և հայուն կյանքի պատճական գործունեության վրա փոփոխություն նշանակալի էր կայսերական պատճեսնական կառավարությունն էր փոփոխության պատճեսնական կառավարության օրմանյան, թուրքական կանաչագույն տվողը»<sup>3</sup>, գրում էր Մաղաքիա Օրմանյանը, թուրքական կանաչագույն տվողը»<sup>3</sup>,

1. ԱՅՊՐ, Փ. Պոլտարխի, Ճ. 1625, լ. 108.

2. Նայել անդամ, լ. 2-3.

3. Մ. Օրմանյան, Ազգապատմ. գլ. 2866:

ռավարությանը մեղադրելով արևմտահայության մեջ ազգային-ազատագրական պայքար իրակրելու համար: Ժողովրդական հուզումների առաջին արտօհայտությունները եղան հայկական տարրեր նահանգներում ստեղծված գաղտնի խճակներն ու կազմակերպությունները, որոնք ուղղակիորեն առնչվում են ազգային զարդումի և ինքնագիտակցության ժավաման հետ: Այդ բոլորին սերտորեն առնչվում է Մկրտիչ Խրիմյանի ետքեռլինյան գործունեությունը:

\* \* \*

Եռուխից վերադառնալուց հետո Մկրտիչ Խրիմյանը մի տևական ժամանակ մնաց Կ.Պոլսում: Ազգային ժողովի նշանավոր գործիչները և ժամանակի պատրիարքը օրվա կարգախոսը դարձրին դեպի երկիր, դեպի Հայաստան կոչը և գործելակերպը: Իր ելույթներում Ներսես Վարժապետյանը հորդորում էր. «Զկենանք հոս, Հայաստան երթանք, Հայաստան որկինք ինչ-որ ուսինք ազգին մեջ բանիրուն, տաղանդավոր, ազգասեր, ուսումնասեր, եկեղեցասեր: Ուղիներ պիտի բացվին, ջրանցքներ պիտի շինվին, գործարաններ պիտի կառուցվին...»<sup>1</sup>:

Դայ հարուստներին խրախուսում էին հաստատվել Արևմտյան Հայաստանում: Նրանց կողմից քայլեր էին ծեռնարկվում հողատարածություններ ծեռք բերելու ուղղությամբ: Սակայն օսմանյան կառավարությունը, նրանց հենց առաջին քայլերը խեղդելու միտումով, սկսեց դժվարություններ հարուցել: «Մշակի» Վանի բոթակիցը այդ մասին գրում էր. «Մի քանի ժամանակ է, որ հայեր սկսած են հողեր գնել քուրքերեն և թուրքերեն, այժմ կառավարությունը կշանա արգելել այդ քան, դժվարություններ հանելով թափուն (կալվածագիր) դարձնելու համար գնողի անվան վրա, եթե սա հայ է»<sup>2</sup>:

Իր կողմից հայոց պատրիարքը հայաշատ նահանգներն է ուղարկում հայրենանվեր հոգևոր առաջնորդներ, որոնք իրենց հեղինակությամբ և վայելած ժողովրդականությամբ կկարողոնային պաշտպանել գավառահայության շահերը, հարաբերություններ հաստատել տեղական քուրք բարձրաստիճան պաշտոնյաների հետ և ամընդհատ բարձրացնել կառավարության կողմից բարենորոգումներ կատարելու խնդիրը:

1. Գ. Գյուղաշան, Հայ բարբարական մաքի գարգագումը և Հ.Յ. Դաշնակցությանը - Էջ106, նաև Ապեսագրինը... 1878ր, էջ 68:

2. «Մշակ», 1881ր., N30:

Վասպուրականում հայությունը կազմում էր հարաբերական, ավելի ծիշտ՝ բացարձակ մեծանամանություն: Նահանգը սահմանակից էր ուստական կայսրությանը, և տեղի հայությունը խիստ տուժել էր պատերազմի արհավիրքներից: Պատերազմի հենց սկզբից ռազմակատ մեկնող թուրքական զորքերը կենտրոնանում էին Վանում, ապա կազմավորվում ըստ ստորաբաժանումների և այդտեղից մեկնում իրենց ծառայության վայրը: Վանում մշտական բնակություն էր հաստատել թուրքական չորրորդ բանակի ողջ հրամանատարական կազմը: Բրդական ցեղախմբերը ևս հավաքվում էին նահանգական կենտրոնում:

Վանեցիների համար մեծ բարեբախտություն էր, որ այդ տարիներին նահանգապետ էր Բ.Դուռ կողմից շնորհագրկված և իբրև պատվավոր աքսոր Վան ուղարկված ալբանացի Հասան Փաշան, որը «բուրք էշրաֆին ազդեցությունը չեղոքացնելու համար՝ անոնց գլխավորները ուրույն պաշտոններով կցրվեր գավառներ և իրարու ետև խուժող քուրք ոհմակներն անհապաղ դեպի ճակատ կիեռացներ»<sup>1</sup>: Այդ ժամը տարիներին Վասպուրականի հոգևոր առաջնորդի պաշտոնը վարում էր Խրիմյանի կարգակից եպիսկոպոսը. «Տոհմային հիշտակարանների» հեղինակը՝ Երեմիա Տևկանցը կամ Տեր-Սարգսյանը: Իբրև հոգևոր առաջնորդ նա դրական աշխատանք էր կատարել, բայց Խրիմյանի դիպուկ արտօհայտությամբ «Վեհանձնությունը մերցուցած էր յուր փոքրոգի կծինությամբ»<sup>2</sup>:

Այդ կարևոր կենտրոնին անհրաժեշտ էր գործիմաց, բանիքուն մի հոգևոր առաջնորդ, մանավանդ այդ պաշտոնը տասնյակ տարիներ եղել էր վեճերի առարկա<sup>3</sup>: Օրակարգում էր Սահմանադրության գործադրությամբ նոր հոգևոր առաջնորդ ընտրելու խնդիրը: Այն ծգծվում էր պատրիարք Վարժապետյանի հանձնարարությամբ: Վանը սպասում էր իր որդու գալստյանը: Խրիմյանի եղբար որդին՝ Խորեն Խրիմյանը, հորեղբորը հաղորդակից էր դարձնում հայրենակիցների տրայանը, հորեղբորը հաղորդակից էր դարձնում 1878-ի կեսերից մինչև 1879-ի կեսերը Խրիմյանը մադրություններին: 1878-ի կեսերից մինչև 1879-ի կեսերը Խրիմյանը Կ.Պոլսում լարված աշխատանք էր կատարում հայրենիք Վերադարձ. Այսկան մինչ վերադարձ նա պետք է կարգավորեր նալու համար: Սակայն մինչ վերադարձ նա պետք է կարգավորեր նալու համար:

1. Հ.Երանյան, Հուշաբան Կամ-Հասպարաւական, հ.Ա. էջ 99:

2. Գ.Աթ, Սրբանձայանի Գ., 2-րդ բաժին, գ. 466, նաև թե՛գ, Խրիմյան Հայրիկ, էջ 110:

3. Է.Ապասանյան, Գարեգին Մրկանձայանց, էջ 101-109:

բաստականություն հայտնելով Վասպուրական վերադառնալու համար, Խորհմանը դժգոհում էր, որ ժողովուրդը «ամեն, գործ և հառաջադիմություն առաջնորդեն կըսպասե»<sup>1</sup>: Մատնացույց անելով նոր Երիտասարդությանը, որ կարող է և պարտավոր է «ինքնին քայլափոխ առնել հառաջադիմության ասպարեզին վրա», նա պատվիրում է իր Եղբորորդուն այդ նասին գրուցել նրանց հետ մինչև իր տեղ հասնելը: Դոգենոր առաջնորդի բոլոր թեկնածուներին նա մերժում է, ամեն մեկի հանար գտնելով մի պատճառաբանություն. Գարեգին Սրբանձույանց՝ իր արժանավոր սանը, արդեն ընտրվել է Ակնա առաջնորդ, Պողոս Մելիքյանը «անզետ» է, նրան հաջորդած Երեմիա Տևկանցը «գիտուն հովիկ է», սակայն «միտքն՝ առողջ և կանքն՝ անառողջ»: Զգացվում է, որ Խորհմանը կցանկանար ինքն ընտրվել այդ պաշտոնում: Արդեն 1879-ի հունվարին ակնհայտ էր Խորհմանի Վան վերադառնալու մտադրությունը: Որոշ ժամանակ անց (կոնկրետ՝ 1879-ի հունիսին) հասարակական գործիչներից մեկին գրած նամակում նա արտահայտում է իր ջերմ ցանկությունը Վան վերադառնալու և հարազատ ժողովրդին օգտակար լինելու վերաբերյալ. «Ես ալ մի փոքր ժամանակե հետո պիտի դառնամ դեպի հայրենին. կերթամ հուսակտուր ժողովրդին հույս և քաջալերություն տալ. կերթամ հայոց լքյալ որդիքներ խրախուսել դեպի ապագան, որում պիտի ծագի հայոց ազատության աստղը»<sup>2</sup>:

Պատերազմից հետո Վանն ապրում էր տնտեսական մեծ ճգնաժամ: Պատերազմի անմիջական ուղեկից սովոր մոլեգնում էր ողջ նահանգում: Կ.Պոլսի հայոց պատրիարքարանում կազմվել էր Սովետոց հանձնաժողով, որը կոչով դիմել էր հայոց գաղքաշխարհին՝ սատար կանգնել արևմտահայերին, դիմակայելու պատերազմի ուղեկից արհավիրքներին: Վանի հայության ոգին բարձրացնելու, նրա վերքերին սպեղանի դնելու նպատակով, Ներսես Վարժապետյանի խորհրդով և իր սեփական ցանկությամբ, 1879թ. նոյեմբերին Վան մեկնեց Մկրտիչ Խրիմյանը: Մինչ այդ, սեպտեմբերին կատարվել էին Վանի երեսփոխանական ժողովի ընտրությունները, ուր մեծամասնություն էին կազմում ապօռոյանները: Դեկտեմբեր ամսին երեսփոխանական ժողովի առաջին նիստում ապօռոյան մեծամասնությունը և պողոսյան փոքրանասնությունը միաձայն քվեարկեցին Խրիմյանի օգտին: Խրիմյանն ընտրվեց Վասպուրականի հոգևոր առաջնորդ:

1. ԳԱԹ, Խըմբյանի Փ., գ. 43, նույն «Էջմիածին», 1986, թիվ Գ-Ի, էջ 47:

## 2. Առյօն տեղամ. զ. 54ա:

Նա Վանից բացակայել էր 17 Երկարուժիգ տարիներ: 1862թ. նա Վարագից մեկնել էր Տարոն: Դրանից հետո, շատ կարճատև 2-3 անգամ, հատուկ նպատակով Խրիմյանն այցելել էր իր ծննդավայրը: 1869թ., պատրիարք Ընտրվելուց ի վեր նա չէր եղել իր «բնակասնունդ հայրենիքում»: Այդ տարիներն իրենց դրոշմն էին դրել Վանի վրա: Խրիմյանի գալուստը մեծ ազդեցություն ունեցավ նահանգի հայության հասարակական և տնտեսական կյանքի վրա:

Հոգևոր առաջնորդ ընտրվելուց հետո, Խրիմյանը հրավեր նամակ, իսկ Ներսես Վարժապետյանը կոնդակ հղեց Ալիա հոգևոր առաջնորդ Գարեգին Սրբանձտյանցին, միասին ծեռնանուխ լինել հայրենի քաղաքի վերաշինության: Վերջինս իր հետ Վան քերեց Ալիա հարուստ վիճակից սովելոց օգտին հավաքած մի պատկառելի գումար<sup>1</sup>: Խրիմյանի նախազահությամբ Վանում ստեղծվեց Կ.Պոլսի Սովելոց հանձնաժողովի մասնաճյուղը, որի անդամները քաղաքի հեղինակավոր անձնավորություններն էին՝ Երեմիա Տևկանց, Գարեգին Սրբանձտյանց, Գևորգ Գալճյան, Յարություն Թերզիպաշյան, Սեդրակ Տևկանց, Մարութ Մարության, Մկրտիչ Փորթուգալյան, Կարապետ Խաչանյան և Այազ Այազյան<sup>2</sup>: Գարեգին Սրբանձտյանցը դարձում է Վասպուրականի հոգևոր առաջնորդի փոխանորդ, իսկ Խրիմյանը ողջ ուշադրությունը քևեռում է Սովելոց հանձնաժողովի վրա և կատարում միայն վերին հսկողի դեր: Խրիմյանի և Սրբանձտյանցի գալուստը մեծ ոգ-կորություն է առաջացնում Վանում<sup>3</sup>: Աստիճանաբար ամոքելով պատերազմի վերքերը, տեղի հայության, առավելապես երիտասարդության շարքերում հետզհետեւ ծայր է առնում ընթրուսության ոգին: Պատերազմից անմիջապես հետո թուրքական կառավարությունը հայության նկատմամբ վարում էր համեմատաբար մեղմ քաղաքականությունը: Ժամանակակիցները նշում էին. «1878-են մինչև 1881ը թուրք

2. Այս համականությունից հարմի ծառին այլ տվյալներ է խորհրդական օրգանու կողմէ և այլ գործադրությունները պահպան են առաջ առաջ աշխատավայրում:

Կանձնեց «Խոսքաբականի» աշխատավայրում մեջ: Նու զնոս է՝ Արքայի Խելքան - նախագահ, կորպ Դամբայն առանձնավայր, Անդրադա Տեղանց առաջապահ, Մարտր Մարտրանց գանձաւային, անդամները Երեման Տեղանց, Գարեգին Արքանցանց, Հարուրյոն Խելքանցան, Արքի Փարաբարայան, Այս Աշական, Անձ Խելքանցան, Կարասին Խաչատրյան, Հակոբ Գումարյան, Հղիաննեն Խաչարյան, Անդրադ Միքայելյան, Միքան Գրիգորյան, Անդրադ Գումարյան, Տեղանց Տեղանցան (Տեղ ճշգ. աշխ. Էջ 186): Մեր կարծիքով առավել նախասահ է առաջնին կազմը, որը սահմանական է Ա. Խելքաբականի առանձնավայր ծառափառն Տեղ-Արքաբականի գրքուն կան բազմաթիվ փաստական այլ սիրաներ:

3. Գ. Դավանան, Խթիման Հայութ, Էջ 28-39, մաս  
զնաւամբեն, մասն Ա. Էջ 7, 49, 50:

Կառավարությունը շատ մեղմ էր հայոց հանդեպ, զի չէին չորցած 61-րդ հոդվածի ստորագրությունները, դեռ ողջ էր Արևելքի քրիստոնեաց ազատարար Ալեքսանդր Բ և Կարսի հաղթական Լորիս Մելիքովը»<sup>1</sup>:

80-ականներին Կանում գործում էին մի քանի խնճավորումներ: Դրանցից մեկը «Միացյալ ընկերության» ջանքերով 1876-ին Վարժապետանոց բացած Սկրտիչ Փորբուգալյանի շուրջը համախմբված ուսուցիչներն էին ու նորահաս երիտասարդությունը: Փորբուգալյանը թեղուն աշխատանք ծավալեց Վանում: Առանց հեղափոխություն բառն արտասանելու նա աճեցրեց ու հասունացրեց մի ամբողջ սերունդ, որը երկար տարիներ իր ձեռքին պահեց Վասպուրականի հասարակական կյանքի դեկը: Երկրորդ խնճավորման ոգին էր պատերազմից հետո Ռուսաստանի կողմից Վանում փոխհյուպատոսի պաշտոնակատար Կոստանդին Կամսարականը<sup>2</sup>: Վերջինս մեծ ջանքեր գործադրեց արևմտահայերի քաղաքական ու տնտեսական կացությունը բարեկավելու, նրանց նարդկային իրավունքների պաշտպանության, Բեռլինի կոնֆերանսի 61-րդ հոդվածը կյանքում իրականացնելու, Ռուսաստանի ազդեցությունն ուժեղացնելու համար: Օգտվելով իր պաշտոնի ընծեռած հնարավորություններից, նա թուրքական իշխանությունների մոտ պաշտպանում էր Արևմտյան Յայաստանի քրիստոնյա բնակչությանը (հայերին և ասորիներին): Թուրքերը հաճախ նրան անվանում էին «հայերի փաշա»: Այդ հանգամանքը դոր չէր գալիս որու բարձրաստիճան պաշտոնյաներին և այդ պատճառով մոտ երկու տարի Կամսարականը պաշտոնավարեց որպես փոխհյուպատոսի պաշտոնակատար: Վանի ազդեցիկ հայ գործիչների, մասնավորապես Խորհմանի, ջանքերով ռուսական պաշտոնական շրջաններին մոտ կանգնած պետական գաղտնի խորհրդական Կարապետ Հայանի միջամտությամբ 1882թ. կեսերին Վանում նա հաստատվեց փոխհյուպատոս<sup>3</sup>: Այդ ընթացքում նա իր գործակալների ցանցն ուներ ուշ նահանգում և նահանգից դուրս հայաշատ բազմաթիվ վայրերում:

1. Հերանյան, 629. աշխ., էջ 140:

2. Կամսարականց ծննդի է 1840 թ. Կոմիլվան, տեղան ստացել սկզբանական կրթությունը, ապա ափարանի Մոսկվայի տաօմնարանը: Խասնակցել է 1877-78 թթ. առա-թուրքական պատերազմի Կոմիլվայան ճակաաի տաօմնական զարգությանն ընթի: Պատերազմից հետո նշանակվել է Երգումի գլխավորական նախանձություն օգնական, իսկ 1878 թ. սեպտեմբերից մինչև 1884 թ. կեսոր Լանի փոխարքությանը պատկանական առաջնականաց: Առաջնականաց:

3. АВПР, ф. Посольство в Константинополе, д. 1568, д. 7

այդ ժողովի կողմից հաշվետվություն է ներկայացնում Ազգային ժողովին 1886-1888թթ. կատարած աշխատանքների մասին: Լայն էր, ծավալուն և ընդգրկուն այդ գործունեությունը: Կրոնական ժողովի քննարկման առարկա են դարձել գավառների և Պոլսի կրթական բազմատեսակ խնդիրներ՝ դասագրքերի հրատարակություն, դպրոցական տեսուչներ, իգական վարժարաններ, վաճքերում գործող դպրոցներ և այլ հարցեր: Մեծ ուշադրություն է դարձվել այլաղավան հայության շրջանում ծավալված գործունեության վրա: Կրոնական ժողովը քննարկել է նույնիսկ Ռուսաստանի տիրապետության տակ գտնվող դպրոցներում հայ կրոնի դասերը դասավանդվող առարկաների մեջ նոցնելու խնդիրը և դիմել Մակար կաթողիկոսին՝ ցարական կառավարության հետ հաճապատշաճ բանակցություններ վարելու համար: Սակայն կրոնական ժողովի գործունեության ամենազլիսավոր հարցը մնում է հայ գավառների, նրա բազմազան կնճռոտ խնդիրների, գավառները հոգևոր այցելուներ հելու խնդիրը: Պատահական չէ, որ կրոնական ժողովի քննարկած հարցերի ամենամեծ քանակը բաժին է ընկնում գավառական խնդիրներին, որոնք թվով 210 էին<sup>1</sup>: Նույն 1888-ին, հունիսի 22-ին Ազգային ժողովի քննարկման առարկա է դառնում պատրիարքական ընտրությունը, քանի որ օրվա պատրիարք Յարություն Վեհապետյանը ընտրվել էր Երուսաղեմի պատրիարք և իր հրաժարական էր ներկայացրել Կ.Պոլսի պատրիարքությունից: Այս նիստում ունեցած Խրիմյանի ելույթից պարզվում է այն պատճառը, թե ինչու Խրիմյանն Ազգային ժողովին ներկայացրած տեղեկագրում չի հիշատակվում իրեւ պետության կողմից Պոլիս կանչված հոգևորական: Իր ելույթում Խրիմյանը հայտնում է Ազգային ժողովին, որ Եկեղեցական համագումար ժողովն իրեւ պատրիարքական ընտրելի իրեն տվել է ընդամենը 13 ծայն: Շնորհակալություն հայտնելով իր օգտին քվեարկողներին, Խրիմյանը հույս է հայտնում, թե Ազգային ժողովն իրեն կտա ծայների ավելի մեծ քանակ, ապա պարզաբանում է. «Ժողովրդյան մեջ այն տեսակ նախապաշարումը կա, իբր թե Օսմանյան կառավարությունն զնեց Պոլիս քերեր է, թեև ես բնավ տեղեկություն չունեմ: Չայ եպիսկոպոսներն ամենքն ալ մեր վեհափառ սուլթանին հավատարիմ և անծնվեր հպատակներն են, ասոնցն ոնանց համար կրնան տարածայնություններ, մինչև իսկ ամբաստանություններ տե-

1. Ատեմազբարինք... 1888-90թ., էջ 18-32:

դի ունենալ, իսկ մինչև իմայ ոչ մեկ դատարան, ոչ մեկ օրինոք դատապարտության վճիռ մը տված չէ հայ եպիսկոպոսաց դեմ, հետևաբար նույնիսկ՝ ըստ Սահմանադրության մեր ոչ մեկ եպիսկոպոսն զրկված է պատրիարքական ընտրելիության իրավունքից և զայս պետք է բացահայտ հշչակել»<sup>2</sup>: Խրիմյանը ցանկանում էր ամեն կերպ խույս տալ քաղաքականապես անբարեհույս պիտակից: Նենց այդ պատճառով էլ նա դեռ Վանում չընդունեց թուրքական կառավարության կողմից իրեն հատկացված ճանապարհաժախազ, փաստարկելով, որ Պոլիս է մեկնում սեփական ցանկությամբ: Սակայն ցանկությունը այլ բան է, ուեալ իրականությունը՝ այլ: Եվ պատահական չէ, որ Ազգային ժողովի նույն նիստում Վարչապետ Յովհաննես Նուրյանը կարդում է Ազգային Սահմանադրության՝ պատրիարքի ընտրության հաճապատասխան հոդվածը, ուր շեշտվում էր, որ պատրիարքական ընտրելին «միանգամայն տերության կատարյալ վստահության արժանավոր լինի»<sup>3</sup>: Այս ելույթից հետո Եկեղեցական համագումար ժողովում 13 ծայն ստացած Խրիմյանը Ազգային ժողովում ստանում է ընդամենը երեք ծայն: Ոչ ոք բացարձակ քեզ չի ստանում, բայց առավելագույն քվեն՝ 39 ծայն, ստանում է Խրիմյանի վաղենի հակառակորդ՝ Բրուսայի նախկին հոգևոր առաջնորդ, թուրքանետ Քարդուղիմեոս եպիսկոպոս Չամչյանը, որի վարած հակաժողովրդական քաղաքականության հարցը քննարկվել էր Ազգային ժողովում և դատապարտվել Խրիմյանի կողմից:

Պատրիարքական ընտրության հարցը Ազգային ժողովում ծգծվում է մինչև սեպտեմբերի վերջը. ապա գործին միջամտում է Բ.Դուռը, սեպտեմբերի 28-ին գրություն հղելով Ազգային ժողովին: Գրության հեղինակը սուլթանի անձնական քարտուղարն էր, որն ընդգծելով, որ պատրիարքի ընտրության իրավունքը թողնվում է ազգին, միևնույն ժամանակ ավելացնում էր. «Ամենեն ավելի նկատառան արժանի պարագան է պատրիարքության կոչվող անձին Տերության վստահությանը արժանացած լինելը, ուստի կայսերական կառավարությունը պիտի հարկադրի կարևոր միջոցները ծեռք առնուլ արգիլելու և պատժելու համար զանոնք, որոնք թե այս կարևոր պարագային հակառակ կշարժին և թե Ընդհանուր ժողովին խափանելու պատճառ կլինին»<sup>3</sup>: Սպառնալիքը պարզ էր և որոշակի. թուրքանետ պատրիարք

1. Ատեմազբարինք... 1888-90թ., էջ 126:

2. Նույն տեղում, էջ 129:

3. Նույն տեղում, էջ 145:

չընտրելու դեպքում կառավարությունը պատրաստվում էր փակել Ընդհանուր ժողովը: Մեջքերումից պարզվում է նաև մի այլ հանգամանք. այն, որ Ընդհանուր ժողովում կային նաև ընդդիմադիր ուժեր: Պատահական չէ, որ Ազգային ժողովի երեսփոխան Ստեփան փաշա Ասլանյանը իր երկյուղն էր հայտնում, թե գուցե տերությունը կասկածի և զայրանա, որ իր Վստահությունը վայելող Բարդուղիմեոս եպիսկոպոս չի ընտրվում պատրիարք: Ի վերջո ընդդիմադիր ուժերը գտնում են հարցի լուժնան ընդունելի տարրերակը: 76 ձայնից 60 քվեով պատրիարք է ընտրվում քաղաքականությունից և հասարակական գործունեությունից հեռու մի հոգեորական՝ Արմաշի վանքի վաճահայր Խորեն Աշօգյանը<sup>1</sup>: Արքիար Արքիարյանը հետագայուն այսպես է բնութագրելու իր ժամանակակցին. «Առանց հոգեեկան բարձր թրիչքի, ընդհանրապես երկյուտ, բայց ոռպեական հանդնության դիմող Վարդապետ մըն էր Աշօգյանը, որուն գեղացիի ժառանգական թերությունները ուժուցուցած էին վաճական կյանքն ու կրթությունը: Օտար լեզվի, ֆրանսերենի ուսուցումը հնարավոր ընելով մոլեուանդական գրքերու ընթերցումը, իր միտքն ալ հայ եկեղեցին մեջ տարօրինակ կրոնանոլությանք հաճակված էր: Այս մոլեռանդ մտքին իրը Աստուծո մարմնացումը կը պատկերանար իշխանությունը: Քրիստոնյա, իսլամ, հեթանոս, ինչ որ ալ ուլլա, իշխան մը միշտ Աստվածային բխումն է իրեն հաճար»<sup>2</sup>: Նորընտիր պատրիարքը իր ուխտը կատարելու ժամին իրավացիորեն պատրիարքական պաշտոնը հոգևորական լինելուց զատ հաճարում է նաև քաղաքական. «Վաճական մը, որ միայն հոգևոր գործերով գրալված է, պիտի գիտենա՝ պատասխանել նաև քաղաքական պահանջմանց»<sup>3</sup>, - տարակուտան էր ուխտող պատրիարքը: Իր ուխտի ճառում նա ընդգծում էր ազգային ներքին կյանքում գոյություն ունեցող դժվարությունները, այն, որ եկեղեցական կազմակերպության վիճակը շատ հեռու է գոհացուցիչ լինելուց, որ հիսունից ավելի թեմեր մնացել են առանց հոգևոր առաջնորդի, քացակայում է կենտրոնի, թեմերի և վաճքերի կապը: Առանց հոգևոր առաջնորդի և հոգևոր այցելուների մնացած գավառները դարձել են հերձվածների և տարրեր դավանանքների ճարակ: Խսկապես, նա զգում է իրավիճակի ողջ ժանրությունը, սակայն պատրիարքական գործու-

1. Ասենազմութիւն... 1888-90թթ., էջ 169:

2. Ա. Արքիարյան. Կ. Պատս պահպանուական փաքարյունները. Նոր Լյանը, 1898թ., Ն 5, էջ 69:

3. Ասենազմութիւն... 1888-90թթ., էջ 179:

## Մերտի ԽՐԻՍՅԱՆ. Հասարակական-քաղաքական գործունեությունը

նեռլիքան ընթացքում քաղաքականությունից և դիվանագիտությունից հեռու այդ անձնավորությունը չի կարողանում դրսերել իրեն որպես հմուտ պատիրարք և դառնում է Բ. Դուան իլու կամակատարք:

Գավառական առաջնորդների խնդրի քննարկման ժամանակ Դմայակ եպիսկոպոս Դմաքայանը այժմ առանց երկնելու, բացահայտ հարցում է անուն կեղորնական վարչությանը. «Արդյոք կրնամք հարցնել թե Վասպուրականի առաջնորդ Խրիմյան Սրբազն ինչու» ի Պոլիս կզտնվի, ինչու» Տրափիզոնի առաջնորդն աստ է<sup>1</sup>, ինչու» Մշո առաջնորդն Գրիգորիս աստ կրափառի և այլն»<sup>2</sup>: Եպիսկոպոսի ելույթի ամենասուր նետն ուղղված էր Հովհաննես Նուրյանի դեմ, որը թուրքական պաշտոնյա էր և միևնույն ժամանակ Ազգային ժողովի ատենապետ. «Նուրյան Էֆենտի չի հասկնար-մեր այս ըսածներն, վասն-գի Բերա կնստի և չէ շրջած ի գավառն և չունի ի մոտո ծանրություն գավառական առաջնորդաց բազմադիմի դժվարին վիճակեն»<sup>3</sup>: Դոգ-կոր առաջնորդների խնդրի քննարկման ժամանակ Ազգային ժողովում ելույթ է ունենում նաև 70-ականների կեսերին Վաճի նահանգապետի տեղակալ, այժմ ազգային երեսփոխան Մարկոս Աղաքելյանը, որը բավականին ընդարձակ գործունեության շառավիլ է գծում հոգևոր առաջնորդի համար. «Մեր առաջնորդներն այսօր միայն եկեղեցվո տեսուչ և ժողովրդյան հոգևոր հովիվ չեն, հապա կառավարության առջև տեսակ նը փաստաբան ժողովրդյան իրավանց, ժողովրդյան վրա ալ տեսակ նը պատգամավոր կառավարության կողմեն, միևնույն ժամանակ հոգևոր բանի քարոզիչ, ազգային Վարչության պետ, դպրոց-ներու վերին տեսուչ, ազգային իրավաբան, կառավարական օրենսգետ և այլն...»<sup>4</sup>: Դժվար է ասել, թե թուրքական կառավարությունն ընդունում էր հոգևոր առաջնորդի գործունեության այս լայն բնակչությունը էր, որ հայությունը Բ. Դուան աչքում ոչ թե գավառը<sup>5</sup>: Մի բան պարզ էր, որ հայությունը Բ. Դուան աչքում ոչ թե գավառը դիմական միավոր էր, այլ կրոնական հաճանք և հոգևոր առաջնորդը փաստորեն վարում էր նաև ողջ ժողովրդի քաղաքական կյանքնորդը փաստորեն վարում էր նաև ողջ ժողովրդի քաղաքական կյանքնորդը փաստության և ժողովրդի միջև:

1. Խորքը վերաբերում է Գարեջին Մրվանձայանին:

2. Ասենազմութիւն... էջ 206:

3. Նոյն անգամ:

4. Նոյն անգամ. էջ 209:

5. Այս հանգամանքը էր, որ Ժամանակ և չեր ընդունամ ցարական կառավարությանը իր հանրական-քաղաքական վարչության չունի միջամակ պետական հայությունը պահպանութիւնը և նրան էր վերաբանում միայն հավաք, կառավար-կրթական և ընտանելիքն ընդունության պահպանը:

Խրիմյանը չէր հաշտվում ստեղծված կացության հետ. նրա ուշադրությունը քեռված էր անմիջապես Արևմտյան Հայաստանի վրա, որի թեմերի մեծ մասը մնացել էր առանց հոգևոր առաջնորդի: Պատրիարք չընտրվելուց հետո նա մեծ ջանքեր էր գործադրում վերստին երկիր դառնալու համար: Նա միշտ ելույթներ էր ունենում Ազգային Ընդհանուր ժողովի այն նիստերին, ուր քննարկվում էին գավառական խնդիրները, հոգևոր առաջնորդներին և կրոնական ժողովին վերաբերող հարցերը: 1888 թ. Մայիսի 9-ի նիստում Ընդհանուր ժողովը քննարկում է նախորդ՝ 1886-88 թթ. Կրոնական ժողովի (ատենապետ Մ. Խրիմյան) հաշվետվությունը. ելույթ է ունենում նախկին ատենապետը և քննադատում ազգային սահմանադրության այն հոդվածները, որոնք վերաբերում են Կրոնական ժողովին: Սահմանադրությունը բազմաթիվ պարտականություններ է դրել Կրոնական ժողովի վրա, առանց որևէ իրավունք սահմանելու նրա համար: «Զեր կղերը գորություն չունի իր ծեռքը. գավառական այցելուք հազար ու մի կաշկանդումներ կը գտնեն իրենց դեմ»<sup>1</sup>: Խրիմյանը խնդիր է դնում Կրոնական ժողովի առաջ «հովվական այցելություն» կոչված հոգևորականներին ֆինանսապես օժանդակելու համար. «Ինչպես կարելի է առանց դրամի գավառները շրջիլ, տքնիլ, աշխատիլ... Խրիմյան կրնա շրջիլ առանց դրամի, բայց այս ամեն եպիսկոպոսի, ամեն վարդապետի գործ չէ... Գիտե՞ք, թե ինչպիսի դժվարություններ կան հովվական այցելության դեմ»<sup>2</sup>: Հովվական այցելուներին ֆինանսապես ապահովելու դեմ են արտահայտվում այնպիսի երեսփոխաններ, որոնք երբեք դուրս չեն եկել Կ. Պոլսից և չգիտեն, թե ինչ դժվարությունների կարելի է հանդիպել Արևմտյան Հայաստանի տարրեր գավառներում շրջագայելիս:

Իր բոլոր ելույթները Խրիմյանն օգտագործում էր նորից գավառ վերադառնալու համար, որպեսզի Ընդհանուր ժողովը և նրա սրբազն նախագահը՝ պատրիարքը միջնորդեն Բ. Դուան մոտ իր ազատության համար: «Ես ծեզ կենդանի օրինակ. ես, որ 30-40 տարիներ ուղղությամբ և հավատարմությամբ ծառայած եմ, այսօր մատնված ի Պոլս կատունիմ. եթե կրնաք, եթե կարող եք, իմ շղթաներս քակեցեք, ինձնե ավելի լա՞վ իովիկ պետք է: Երբ այցելուն կշրջի, երբ կտեսնե ժողովրդյան թշվառությունը, կուզե տեղեկագրել, բայց ահա կտեսնաս, որ մի վաշխառու, որո կեղեցմանց դեմ է բողոք, իսկույն կը մատնե

## Մկրտիչ ԽՐԻՄՅԱՆ. Հասարակական-քաղաքական գործուելությունը

գրեգ»<sup>1</sup>: Խրիմյանը պարզ ու որոշակի նշում է, որ հայրենասեր գործիչների (միևնույն է հոգևորական, թե աշխարհական) մատնիները ժողովրդին հարստահարողներն են՝ վաշխառուները, ցեցերը, որոնց համար չկա ազգային շահ, այլ միայն սեփական: Փաստորեն այդ անձնավորությունները քաջալերվում են պետության կողմից և շարունակում իրենց սկ գործը: Խրիմյանը խնդիր է դնում՝ նոր ժամանակներին համապատասխան հոգևորականներ դաստիարակել, որ պեսզի «առաջնորդը օրենսգետ ըլլան, հնուտ ըլլան, որպեսզի կարող լինեն ի հարկին պաշտպանել իրենց հոտին նյութական ու բարոյական շահերն»<sup>2</sup>:

\* \* \*

Մինչ Խրիմյանը նման լեզաւ գործունելություն էր ծավալել Կ. Պոլսի Ընդհանուր և Կրոնական ժողովներում, իայ ժողովրդի վիճակը բուն Արևմտյան Հայաստանում անընդհատ ծանրանում էր: Յայ ժողովրդի ազատագրական պայքարը դեկավարելու հաճար ստեղծված կուսակցությունները՝ սկզբում Արմենական, ապա Դնչակյան, մասնաճյուղեր են ստեղծում նաև Արևմտյան Հայաստանում (դա վերաբերում է Դնչակյան կուսակցությանը), որի անդամները շուտով հաստատվում են սկզբում Փոքր Հայքում, ապա նաև Կ. Պոլսում: Այդ ընթացքում հայկական նահանգների բուրբական իշխանությունները դիմում են սահմանադրությունը գավառահայերի և ոստիկանների նիշեն, որի արդյունքում լինում էին երկուստեր մարդկային գոհեր: Այդ գործողություններից մեծ արձագանք տվեց 1890 թ. հունիսի 18-ին երգործի Մայր Եկեղեցու և Սանասարյան վարժարանի խուզարկությունը թուրք ոստիկանների կողմից իբր թե գենք հայտնաբերելու նպատակով: Այդ խուզարկությունները լցրին հայության համբերության բաժակը, մասնավանդ եկեղեցու խուզարկության ժամանակ պղծվեցին սրբազն անորները: Տեղի երաշտական հարձակեցին Մայր Եկեղեցին պղծող ոստիկանների ոհտասարդները հարձակեցին Մայր Եկեղեցին պղծող ոստիկանների տարվեցին ծերբակալություններ: Երգործի ցույցի և ընդհարումների տարվեցին ծերբակալություններ: Կավոր: Ընդհարումների ժամանակ երկու կողմից ել եղան գոհեր: Կավոր: Ընդհարումների ժամանակ երկու կողմից ել եղան գոհեր: Կավոր: Ընդհարումների ժամանակ երկու կողմից ել եղան գոհեր: Կավոր: Ընդհարումների ժամանակ երկու կողմից ել եղան գոհեր:

1. Առենազբարխնք... էջ 339-340:

2. Նոյն տեղում, էջ 340:

## ԵՄա ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ներից մի քանիսը եկան Կ.Պոլիս, որոշելով եվրոպական դեսպանների աչքի առաջ կազմակերպել խաղաղ ցույց և սուլթանին ներկայացնել հայ ժողովորի պահանջները՝ իրականացնել Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածով նախատեսված բարենորոգումները, ազատել երգումի ցույցի ձերբակալվածներին<sup>1</sup>:

Ա.Արփիարյանը էրգորմի մասին գրում է ոչ թե հունիսի 18, այլ հունիսի 6 (մեր կարծիքով դա սխալ է): Խա գրում է. «Էրգորմի եկեղեցուն կից գերեզմանատան մեջ 120 անգեն հայ ջարդվել էին թուրք գինվորներն»<sup>2</sup>:

Կ.Պոլսում և Տրավիգոնում գտնվող հնչայանները գտնում էին, որ պատասխան շարժումը պետք է սկսվեր պատրիարքարանից: Բարեախտաբար չուշացավ պատրիարքական միջամտությունը: Պատրիարք Աշօգյանը ներկայացավ սուլթանի առաջին քարտուղար Սուրեյա փաշային, բողոքեց էրգորմի անգեն բնակչությանը կոտորելու համար և ներկայացրեց գրավոր իրաժարական<sup>3</sup>: Պատրիարքը բողոքում էր, որ կեղծ լուրերի հիճան վրա խուզարկել են Կարճո եկեղեցին, փշորել սրբազն անորները և ավելացնում, որ մի քանի ամսի առաջ նման լրատունների պատճառով «Վանա և Սշո մեջ ալ եկեղեցիք և մենաստանք կոխվեցան և դարձյալ ոչինչ գտնվեցավ»: Պատրիարքի ամենակարևոր բողոքը «չարամիտ լրատունների և սադրիչների» դեմ էր, սադրիչներ, որոնք «փոխանակ յօրինակ այլոց պատժվելու, զերծ կացուցեցան և այսու քաջալեր գտան նույն կարգի անձինք»<sup>4</sup>:

Ազգային ժողովի երեսփոխանները համոզեցին պատրիարքին գրավոր իրաժարականի մեջ շեշտը դնել ոչ միայն էրգորմի ջարդի վրա, այլև կրոնական առանձնաշնորհումների, ինչպես նաև հարստահարությունների վրա: Պատրիարքը անսաց երեսփոխանների խորհրդին և իր իրաժարականը լրացրեց գավառների հարստահարության, գրաքննության խստացման հարցերով. պատրիարքը բողոքում էր, որ «բանահյուսական թերթվածք և երգարանք արգելվեցան», իսկ նրանց «հեղինակները՝ աշխարհիկ և եկեղեցական անձինք ոմանք»

1. Է. Կառավարման, Գում-Գարսի ցույցը, Լրաբեր Խաս. գիտարքամբների, 1990ր., N 8, էջ 67-79:

2. Ա. Արփիարյան, Կ.Պալսի պահանջնողական փարզությամները, Նոր Լրանք, 1898ր., N 5, էջ 71:

3. Առենազրութիւնը Ազգային ժողովը, 1890-94րր., էջ 47:

4. Նույն աերթում:

## Մկրտիչ ԽՐԻՍՏՅԱՆ. Հասարակական-քաղաքական գործունեությունը

իրեւ հասարակական անդորրը խանգարողներ «յաքսոր մշտնջենական դատապարտվելով՝ պատժվում են խստիվ»<sup>1</sup>:

Էրգորմի դեպքերը խոռվեցին Խրիմյանի հոգին: Էրգորմի զոհերը բզկտում էին նրա սիրուց: Կարծես թե թակարդ ընկած նրա հոգին ելք էր որոնում: Ճենց այդ ժամանակ վանեցի ճանկույանը նրան ծանոթացրեց հնչայան Ուլքեն խանազատի հետ, որը Տրավիզոնից Պոլիս էր եկել մայրաքաղաքում ցույց կազմակերպելու հատուկ նպատակով<sup>2</sup>: Խորհրդակցություններ եղան ցույցի բնույթը որոշելու համար: Եղան տարրեր առաջարկություններ՝ հարձակվել Ուլսասատանի և Անգլիայի դեսպանատների վրա, սակայն այդ առաջարկը անմիջապես մերժվեց, պատճառարամելով, որ Բ.Դուռը առիթից օգտվելով պատժական գործողություններ կամսի հայերի դեմ: Անընդունելի համարվեց նաև պատրիարքի դեմ ցույցի գաղափարը, որովհետև վերջինս ոտնակոին չէր արել սահմանադրական պաշտոնի պարտականությունը: Վերջապես հանաձայնության եկան հուլիսի 15-ի ցույցի համար: Արփիարյանը չափազանցրած գնահատական է տալիս հուլիսի 15-ի ցույցին. «Գործնական հեղափոխության թվականը բացվեցավ այդ օրը Գում-Գարու»<sup>3</sup>: ճանկույանը և խանազատը ցույցի գլխավոր գործողությունների մասին հաղորդում են Խրիմյանին, որն սկզբում ոգևորվում է, խորհելով, որ ցույցը կգրավի մեծ տերությունների ուշադրությունը, ապա՝ հուզվում, որ կարող է հայերից գրիեր լինեն: Ցույցից մի քանի օր առաջ Խրիմյանը լուր է ուղարկում Խանազատին, որ իրաժարվեն այդ անխոհեմ ծեռնարկից: Խանազատն այդ փաստը վերագրում է Խրիմյանի վախկուտությանը և փոքր-ինչ ազգային արտահայտվում Խրիմյանի «հեղափոխականության» մասին<sup>4</sup>: Բանը ոչ թե Խրիմյանի վախկուտության մեջ էր, այլ ուղարկի խրիմյանը չէր հավատում ցույցի դրական արդյունքին: Մեր խնդրից խրիմյանը չէր հավատում ցույցի մանրամասները կամ վերլուծել այն: Ժադուս է պատմել ցույցի մանրամասները կամ հետագա ուսումնափորուները տրամագծորեն ճանակակիցները կամ հետագա ուսումնափորուները տրամագծորեն ժամանակականությանը պահանջնության մեջ տվել այդ ցույցին: Ճնշակյան գործիչ-հակառակ գնահատական են տվել այդ ցույցին: 4. Արփիարյանը, Խանազատը, ճանկույանը ներքողում են այն, ները՝ Արփիարյանը, Խանազատը, ճանկույանը սկիզբ, իսկ Լեռն ժաղրանքով համարելով նոր ժամանակաշրջանի սկիզբ, իսկ Լեռն ժաղրանքով

1. Առենազրութիւնը Ազգային ժողովը, 1890-94րր., էջ 49:

2. Ա. Խանազատ. Հիշոքնյամներ Խրիմյանի մասին, էջ 7, 10-15, 18:

3. Ա. Արփիարյան, ճշկ. աշխ., Նոր Լրանք, 1898, N 7, էջ 99:

4. Ուղեն Խանազատ, ճշկ. աշխ., էջ 21:

Է գնահատում այս<sup>1</sup>: Մեր կարքիծով ծիշտը հավասարակշռված նույնությունն է, ոչ չափազանցություն, ոչ սարկազմ: Դա առաջին զանգվածային ցույցն էր թուրքական բռնապետության դեմ Բեռլինի վեհաժողովից հետո<sup>2</sup>:

Մեզ հետաքրքրողը այդ շրջանում խրիմյանի ծավալած գործունեության հետագա ընթացքն էր:

Երգումի ցույցի առթիվ հունիսի 18-ի Աշըգյանի անհաջող հրաժարականը իրական դարձավ Գում-Գափուից հետո: Մի աճբողջ ամիս Աշըգյանը բողեց պատրիարքարանը և քաշվեց Մաքրիգյուղի իր բնակարանը: Դադարեցին Ազգային ժողովի նիստերը, որոնք վերսկսվեցին միայն օգոստոսի 24-ին պատրիարքի հրաժարականը քննարկելու համար, որը ներկայացվել էր սկզբուն սուլթանին, ապա միայն Ազգային ժողովին: Երեսփոխանների մեծ մասը քննադատեց պատրիարքի այդ քայլը, գտնելով, որ վերջինս պարտավոր էր իր հրաժարականը սկզբուն ներկայացնել Ընդհանուր ժողովին, որովհետև նրա միջոցով էր հասել այդ պաշտոնին: Ժողովը քննարկում է ոչ միայն Բ.Դուանը ներկայացրած պատրիարքի հրաժարականի տեքստը, այլև Դատական նախարարի ծանուցումը, որտեղ Բ.Դուան պաշտոնյան պատասխաննելով գավառների հոգևոր առաջնորդներին պաշտոնանկ անելու և Կ.Պոլիս բերելու փաստերին, հայտնում է, որ բոլոր գործողությունները կատարվել են պատրիարքարանի հետ համաձայնեցված:

Այդ ընթացքուն համարձակ գործողությունների է դիմում Եկեղեցականների Դամագումար ժողովը, որ հրավիրվում է երկու անգամ և երկու գելուցագրեր հայ հոգևորականության անունից իբրև բոլոր ներկայացնում Բ.Դուռը: Զեկուցագրերը գրված էին խիստ տոնով: Դերքում էր Դատական նախարարի հաղորդումը, թե ամեն ինչ կատարվել է «պատրիարքարանի հետ համաձայնությամբ», քանի որ դրանք «բացարձակապես ստիպման և ճնշման ներքև կատարված գործողություն մ'է, վասն զի պատրիարքարանն տակավին անգիտակ կգտնվի և այն պաշտոնանկ Առաջնորդաց նկատմամբ եղած ծանր ակնարկությանցն այն է՝ անոնց «վստահությունն չարաչար գործածելն և վարչական տեսակետով ինչ-ինչ պակասությանց մեջ գտնվի»:

1. Առաջին հեղափոխության զադափարաբանությունը, Խ. Ա, էջ 175:
2. Տիկ մահրամատն Ե. Կոտորանցան, Գուգ-Գևորգ ցույցը. Լրաբեր հաս. զիստ, 1990թ, N
3. էջ 67-79:

լը՝<sup>1</sup>: Հաճագումար ժողովը բողոքում է, որ կայսերական կառավարությունը ոչ համաչափ վերաբերնունք է ցույց տալիս գավառական թուրքական պաշտոնյաներին և հայոց առաջնորդներին, մինչեռ և թուրք պաշտոնյան, և հայ հոգևոր առաջնորդը պաշտոնավարում են կայսերական հրովարտակներով։ Այդ հակասության պատճառով խանգարված են Եկեղեցական կանոնները, ջլատված պատրիարքական իշխանությունը։ Ըստ կայսերական հրովարտակի հանցավոր հոգ-նորականները պետք է պատճեն պատրիարքի և հոգևոր առաջնորդի միջոցով, մինչեռ խախտված է այդ իրավասությունը։

Համագումար ժողովը բողոքում է նաև, որ Բ. Դուռը արգելում է սուրբ գրքերի ընթերցումը եկեղեցիներում, պատճառաբանելով, թե թույլ է տալիս իին գրքերի ընթերցումը և արգելում «ի նորս հեղինակյալ և սակայն սքոյդյալ իմաստով վիճասակար գրքեր»։ Համագումար ժողովը մեկնաբանում է, որ հայ հոգևոր երկերը գրվել են «մեր եկեղեցին հաստատության թվականնեն... և ...անտ ի այս հազարավոր տարիներեւ ի վեր նույնությամբ կմնան»։ Զեկուցափիրը բացահայտ նշում է, որ թուրքական կառավարությունն արգելում է հայոց պատճության, Թիֆլիսունեական հավատի վերաբերյալ գրքերը, ուր գրված են «Հայաստան և Հայաստանեայց եկեղեցի» բառերը, հայոց հավատի համար զոհված զորավարների անունները, Վարդանի և Ավարայրի անունները։ Թուրքական կառավարության գրաքննությունը հասել է այն աստիճանի, որ միջամտում է հայ եկեղեցու օրացույցի և տոնացույցի կազմնանը, նրա հրամանով «Տոն Տրդատա թագավորին մերո» բառակապակցությունը փոխվել է «Տոն Տրդատա», նույն ձևով կրօնաւովել են մնացած որակավորումները, որպեսզի շիասկաց-իի՝ ո՞վ է Տրդատը, Վարդանը և այլն։ Բազմաթիվ հարցեր է բարձրացնում համագումար ժողովի տեղեկագիրը և հանգում է վերջնական եզրակացության։ Թուրքական կայսրության տիրապետության տակ գտնվող արևմտահայությունը զրկված է կյանքի, գույքի և պատվի ապահովությունից։ «Աշխարհի մեջ ոչինչ կա ավելի նվիրական, քան կյանքն ու պատիվը, վաճ որո, երբ ժողովուրդ մը ի վտանգի տեսնելույն է, յուր կյանքն ու պատիվը պահպանելու համար կը պարտավորի զայնս, յուր կյանքն ու պատիվը պահպանելու համար կը պարտավորի աղաղակ բարնալ միշտ։ ...Հայաստանի վարչական, դատական և ոստիկանական, ինչպես և տրոց բաշխման մեջ հայոց ազգը գրկված

Արևագործիներ... 1890-94 pp., էջ 64:

է վայելել կենաց, ընչից և պատվո ապահովություն և անդորրություն»<sup>1</sup>: Համագումար ժողովի նախագահն էր Մկրտիչ Խոհմանը, որն իր համախոհներով՝ Գրիգոր Սրբանձոյանցի, Գրիգորիս Ալեաքյանի և Մատթեոս Իզմիրյանի հետ կազմում է այնպիսի մի տեղեկագիր, որի ոճը մի քանի անգամ խմբագրելուց հետո միայն Ազգային ժողովը համարձակվում է ներկայացնել Բ.Դուանը: Խոկ Ազգային ժողովում այդ տեղեկագրի հաճառոտ տարրերակի ընթերցումը առաջացրեց բուռն ծափահարություններ:

Համագումար ժողովը բաղկացած էր 9 բարձրաստիճան հոգևորականներից, որոնցից միայն չորս եպիսկոպոսներ էին կազմել, ապա ստորագրել այն: Դիմուն եպիսկոպոսներ՝ Վրիստակես Դերձակյան, Գրիգորիս Դովիաննիսյան, Վահրամ Սանկունի, Մելքիսեդեկ Մուրադյան, Սիմոն Սեֆերյան, հրաժարվեցին ներկայանալ և մասնակցել Համագումար ժողովին, հանկանալի է, որ հրաժարվեցին ստորագրել այն, վախենալով իրենց վրա հրավիրել սուլթանի օայրույթը: Ազգային ժողովի երեսփոխանները տեղեկանալով այդ մասին՝ հարցապնդում արեցին չստորագրող եպիսկոպոսների բացակայության և անթույլատրելի վարքի մասին: «Այդ հինգ բարձրաստիճան եպիսկոպոսներ ինչ խորհրդով և ինչ մտածմամբ չեն ուզած ներկա գտնվիլ Համագումար ժողովու նիստերուն, մասնակցիլ անոր աշխատությանց և ստորագրել պատրաստյալ հիշատակագիրն: Այդ եկեղեցականաց ներկա խնդրույն մեջ բռնած ընթացքը և ծեռնպահությունը իրեն և լեռ պիտի մնա: Այդ եկեղեցականք արդյոք ո՞ր Ազգի և որ եկեղեցին կպատկանին, եթե հայ ազգին և հայ եկեղեցին, պետք էր գիտնային, թե ամբողջ ազգն ու եկեղեցին կենսական խնդիր մը կներկայացնեն կառավարության և այս տեսակ խնդրո մեջ անձնական հաշիվները և տարրեր տեսություններ, եթե երբեք ունեին, հարկ էր գոհել ի սեր ազգային շահուց»<sup>2</sup>: Ազգային ժողովի երեսփոխաններն ուզեցին պատասխան պահանջել հինգ բարձրաստիճան եպիսկոպոսներից: Դրանց առարկեց երեսփոխան Կարապետ Փանոսյանը, պատճառաբանելով, թե Ազգային ժողովը հավատաքննության ատյան չէ: Գրիգորիս Ալեաքյանը պահանջանակի հրավեր են հղել հինգ եպիսկոպոսներին՝ բացատրություն պահան-

## Մլուտիք ԽՐԻՍՅԱՆ. Հասարակական-քաղաքական գործունեությունը

շելով իրենց արարքի համար, բայց նրանք հրաժարվել են պատասխանել նույնիսկ այդ հրավերին:

Երկար ժամանակ պատրիարք Աշքայանը պնդեց իր հրաժարականի վրա: Իրերի բերունով այդ ժամանակ հրաժարական էր ներկայացրել նաև հունական պատրիարքը: Մոտենում էր սուլթանի գահակալության տարեղարձը: Երկու պատրիարքների բացակայությունը ելղազից կարող էր վիրավորել սուլթանի ինքնասիրությունը: Անհրաժշտ էր խախտել հայ և հույն պատրիարքների միասնությունը: Սուլթանը հանձնաժողով կազմեց արքունի ծառայող ազդեցիկ հայրից: Դրա մեջ մտան Արտաքին գործերի խորհրդական Տատյան յերին փաշան, դատական գործերի խորհրդական Վահան Էֆենդին, Արքին փաշան, դատական գործերի խորհրդական Վահան Էֆենդին, սուլթանի անձնական գանձի նախարար Ջակոր փաշան: Այդ եռյակը ամեն օր նիստ էր անում հրաժարված պատրիարքի մոտ, քննում նրա պահանջները: Աշքայանը արտակարգ հաճառությամբ պնդում կամ կատարել իր պահանջները, լուծել հայկական բոլոր խնդիրները, կամ էլ ընդունել իր հրաժարականը<sup>3</sup>: Սուլթանը չեր ուզում կատարել ոչ մեկը և ոչ մյուսը: Ղանձնաժողովի ջանքերը ապարդյուն էին անցնում: Եվ սուլթանը հրամայեց Տատյան Արքին փաշային բոլոր միջոցներով ստիպել պատրիարքին առանց սուլթանի կողմից ընդունվելու, առանց ամենաբերև զիջումների եւ վերցնել հրաժարականը: Արքին Տատյանը գնաց Մաքրիգեղ՝ պատրիարքի բնակարանը և համոզեց Աշքայանին: Վերջինս եւ վերցրեց հրաժարականը և միայն պատասխությունը սկսած սիսալի ահագնությունը:

\* \* \*

Այդ ժամանակամիջոցում Խոհմանի վիճակը Կ.Պոլսում օրըստօթն ավելի էր ծանրանում: Թուխ ամպեր էին կուտակվում նրա գլխին, շուրջ բոլոր վիստում էին սուլթանական լրտեսները: Ծանր մթնությունը դուրս գալու ելք էր որոնում նա, մի կերպ, արտաքին միջություն հեռանալու համար: Եվ ահա ելքը գտնված ջամսությամբ Կ.Պոլսից հեռանալու համար: Եվ ահա ելքը գտնված է: 1890 թ. սեպտեմբերին էջմիածնում պետք է կատարվեր մեռնորհել: 1890 թ. սեպտեմբերին էջմիածնում պետք է կատարվեր մեռնորհել: նության հանդես, որին մասնակցում էին աշխարհի բոլոր ծայրերից Խոհմանած հայ ուխտավորները, ուր մնաց Խոհմանի նման հեղինակություն վայելող բարձրաստիճան հոգևորականը: Խոհմանը օնակություն վայելող բարձրաստիճան հոգևորականը ամենայն հայոց կաթողիկոս Մագրին դիմեց ամենայն հայոց կաթողիկոս Մագրին:

1. Առենազբարխնք..., 1890-94թ., էջ 74:

2. Նոյն տեղում, էջ 98:

3. Ա. Արփարախան, ճշկ. աշխ., Նոր Լյանք, 1898, Ն 7, էջ 162:

կար Թեղուտցուն<sup>1</sup>, խնդրելով պատրիարքի միջոցով իրեն հրավեր ուղարկել հանդիսությանը ճասնակցելու համար: Խրիմյանը հույս ուներ էջմիածին մեկնելով ազատվել սուլթանական զայրութից: Սակայն հույսը չիրականացավ: Ստացա՞վ, արդյոք, կաթողիկոսը Խրիմյանի նամակը: Փաստաթղթերը լուս են: Պարզ է միայն արդյունքը: Դեկտեմբերի 14-ի Ազգային ժողովի նիստում, երբ Աշօգյանը հայտնում է, որ ես է վերցրել հրաժարականը և ստանձնել իր պաշտոնը՝ «Կայսերական սրտաշարժ և անգին վստահության առջև Ազգիս Երախտագիտության և հավատարնության թարգման լինելով», այդ ժամանակ արդին սուլթանական կառավարությունը Խրիմյանին ուխտագնացության անվան տակ ստիպել էր մեկնել Երուսաղեմ՝ Ս. Յակոբի հայկական վանքը: Դա կրկնակի աքսոր էր նրա համար: Երուսաղենում Խրիմյանը գտնվելու էր բուրքամետ պատրիարք Յարություն Վեհապետյանի աշալուրջ հսկողության տակ: Խրիմյանին աքսորելուց հետո Բ. Շուշը տարբեր պատժամիջոցներ կիրառեց մյուս երեք բարձրաստիճան հոգևորականների նկատմամբ, ովքեր Խրիմյանի դեկապարությամբ համարձակվել էին կազմել Յանագումար ժողովի տեղեկագիրը: Ազգային ժողովի երեսփոխան, Կրոնական ժողովի դերատենապետ Գարեգին Մրգանձոյանցը այլև չընտրվեց երեսփոխան, իսկ Գրիգորիս Ալեքարճյանի և Մատթեոս Իզմիրլյանի ընտրությունը ք. Դուռը հրաժարվեց վավերացնել: Այդ ճաշին Ազգային ժողովին է հայտնում պատրիարք Աշօգյանը. «Վավերացված է կրոնական ժողովն 12 անդամոց պաշտոնը, բացի Իզմիրլյան և Ալեքարճյան սրբազնաներեն, որոց տեղ կիամնձնարարէ նոր պարուրություն Խառարակէ»<sup>2</sup>.

Ազգային ժողովի երեսփոխանները հանգստությանք չեն ընդունում այդ փաստը և պահանջում են պատրիարքից. «Անհրաժեշտ է, որ Եղմիայան և Ավեաբճյան սրբազնաններու պաշտոնավարությունը լրջորեն խնդիր ըլլա Ս. պատրիարք հոր և Բ. Դուան, որպեսզի բարձվի այս թյուրիմացությունը»<sup>3</sup>: Դա, իհարկե, թյուրիմացություն չէր և ինչքան էլ Ընդհանուր ժողովը պահանջներ ներկայացրեց պատրիարքին, Բ. Դուար չանսաց ոչ մի խնդրանքի:

Ուշադրության արժանի է մի հանգամանք: Ատենագրությունների բժախնդիրը ուսումնասիրողը եթե այլ աղբյուրներից չհմանա Ակրտիչ

Խրիմյանի պարտադրյալ «ուշտագնացության» մասին, ապա դա չի կարող իմանալ այդ հսկա հատորից: Միայն 1891 թ. սեպտեմբերի 4-ի Ազգային ժողովի նիստում Մարկոս Աղաքեզյանը ելույթ ունենալով Կրոնական ժողովի գործունեության մասին, խոսում է նաև Ակրտիչ խրիմյանի մասին և նշում, որ նրանից լավ ոչ ոք չգիտի վանքերի և գավառների վիճակը և կարծես իմիջիայլոց ավելացնում է. «Երբ հայրիկ ի Ս. Երուսաղեմ ուղևորվեցավ, մնացյալ ութ անդամներեն ալ պաշտոնի կոչվելով, մեկնեցան»<sup>1</sup> և վանական խորհուրդը ցրվեց:

Երեսփոխանների ներկայությունը հավաստող ցուցակում Խրիմյանի անվան դիմաց սկզբում գրվում էր Բ1, Բ2, այսինքն՝ բացակա 1, ապա 2 անգամ, իսկ դրանից հետո սկսում են գրել Բպ՝ այսինքն բացակա բանավոր (այսինքն՝ հասկանալի) պատճառով։ 1891 թվից, Աշըգյանի Վերջնական հրաժարականից հետո Ազգային ժողովը փաստորեն ցրվում է և երեք տարվա ընթացքում չեն գումարվում Ազգային ժողովի նիստեր։ 1894 թ. դեկտեմբերի 7-ին քաղաքական հանգանանքների բերումով դարձյալ հրավիրվում է Ազգային ժողովի նիստ նոր պատրիարք ընտրելու համար։ Նույնիսկ այդ ժամանակ Խրիմյանի անունը պահպանվում է Երեսփոխանների ցուցակի մեջ և անվան դիմաց գրվում էր բպ, չնայած նա արդեն ամենայն հայոց կաթողիկոս էր։ Միայն 1896 թ. հոկտեմբերի 31-ից նրա անունը հանվում է Երեսփոխանների ցուցակից։

Այսպիսով, 1890 թ. դեկտեմբերից «Արծիվ» Խրիմյանը Երևաղենում փակվեց «ճնճղովի վանդակի մեջ»: Չնայած դրան, նրա հետ նամակագրական կապեր էին պահպանում և արևելահայ, և արևմտահայ հասարակական գործիքները: Նա քաջատեղյակ էր երկրում կատարվող բոլոր իրադարձություններին: Սուրբ Հակոբի վանախցում Խրիմյանն զբաղվում էր գրական գործունեությամբ: Տեղի տպարանում նա վերահրատարակեց «Յրավիրակ երկրին ավետյաց» կրոնաբարոյախոսական աշխատությունը: Ինչպես նշվում էր Կարապետ Եզյանին ուղղված նամակում, վերահրատարակությունը լրացվել է «Նորանոր տեսությամբ և հավելվածով»<sup>2</sup>: «Յրավիրակի» վերահրատարակությունից բացի Խրիմյանը ծեռնամուխ եղավ նոր ստեղծագործության: Նա սկսում է շարադրել իր հոգում և մտքում վաղուց եղացած «Պատիկ ու թոռնիկը»: Դրա շարադրումն ավարտվում է բրուսաղենում:

1. ԳԻՒՅ. ԿԵՐՊԻՆՅԱՆԻ Ֆ., զ. 63:

## 2. Անելիսազրություններ.... էջ 136:

### 3. Історія місіонерів, тж 138:

1. Ատենագրութիւն... էջ 145

2. գլուխ, Խրիմյանի Պ. (875), գ. 14:

ԵՐԵՎԱՆԻ ԿՐՈՆԱԿԱՐԱՔ

Գրական գործունեությունը չէր բավարարում աքսորական գործչի հոգեկան պահանջները: Դասարակական գործիչները ելք էին որոնում նրան աքսորից ազատելու: Դա այնքան էլ հեշտ բան չէր: Դնչակյան կուսակցությունը Ռուբեն Խանազատին ուղարկեց Երուսաղեմ, որ-պեսզի կազմակերպի Խրիմյանի փախուստը Երուսաղեմից<sup>1</sup>: Այնքան մեծ էր նրա անվան հմայքը, վայելած ժողովրդականությունը, որ նրան առաջարկվում էր հաստատվել Եվրոպական որևէ ազատ Երկրում և այնտեղից դեկավարել հայ ազգային-ազատագրական շարժումը: Խրիմյանը հրաժարվեց այդ արկածախնդրական քայլից, մանավանդ դա համարյա անհնարին էր, որովհետու ինչպես Խրիմյանը ինքը գրում է. «Քրիստոսի ազատ քաղաքին մեջ ինչպես կաշկանդված են: Երկու անգամ լրտեսներ եկան Երուսաղեմ և Երկար ժամանակ լրտեսեցին զիս. արդեն տեղական կառավարություն քառասուն աչքով կպահ-պանե զիս»<sup>2</sup>:

Խրիմյանն ընդամենը 6 ամիս էր Երուսաղեմում, երբ հեռագրերը գումարեցին Ամենայն հայոց կաթողիկոս S.S. Մակար սրբազանի մահը: Խրիմյանի հոգում առկայծում է հույսի մի շող: Դեռ Մակար Թեղուտցու կաթողիկոսանալուց առաջ նա եղել էր կաթողիկոսական ընտրելի: Այժմ ավելի ճեծ էր ընտրության հավանականությունը: Ողջ հայությունն սկսեց եռանդուն աշխատանք կատարել կաթողիկոսական ընտրություն-ները կազմակերպելու համար:

Սբ. Ղակորի վանքում փակված Խրիմյանը տղչորվում էր հայրենիքի կարոտից: Եվ նրա հոգում, մտքում ծլարձակում է մի նոր գործ՝ «Պապիկ ու թռոնիկ» աշխատությունը, որը ձոնում է «շինական ժողովրդին հայոց»: Այնքան ուժեղ էր նրա մեջ հայրենի Վասպուրականի կարոտն ու անհագ սերը, որ հայրենիքից աստանդական՝ իրեն կերպավորեց Վասպուրականի Արծակ գյուղում ծնված, Վարագա վանքում մաճկալություն արած շինական Պապիկի մեջ, որը մի քանի ամգամ ապրուստ հայքայթելու նպատակով մեկնել էր Պոլիս և առաջացած տարիքում կյանքի դպրոցում տեսածն ու լսածը ավանդում է իր զավակներին, թռոնիկներին. «Ով Վասպուրական երկիր, իմ անձկալի հայրենիք, Պապիկ և Թռոնիկ հատկապես ծեզ համար գրեցի

#### 1. Անորին Խանճազյան, նշվ. աշխ., էջ 27-28:

2. ԳԱԼՈՒ, ԽՐԱՄՅԱՆԻ Փ., զ. 149, էջ 7:

**Մկրտիչ ԽՐԻՍՅԱՆ. Հասարակական-քաղաքական գործութեությունը**

Երուսաղեմի Սիոնի լեռան վրա, խաչի հովանյաց տակ. դու կարդալով կտեսնաս, որ Պապիկ Թոռնիկի նյութերը Վասպուրական երկրի շինական ժողովրդի ժաղիկներեն քաղած են, զոր փնջիկ կապելով և ահա ձերն՝ ծեզ կնվիրեն»:<sup>1</sup> Աշխատությունը իրատարակվեց 1894-ին Եջմիածնուն, երբ հեղինակն օծվել էր Ամենյան հայոց կաթողիկոս: 24 գլուխներից բաղկացած այդ աշխատությունը կարծես ամփոփում է Խրիմյան մտածողի, իմաստամերի, բանաստեղծական հոգու, ուսուցչի ու դաստիարակի խոհերը, մտորումները իր ժողովրդի, նրա հարատևող, աննկուն ոգու և ապագայի վերաբերյալ: «Երկիր», «Երկրի բնակիչներ (գյուղ և քաղաք)», «Հողագործություն և յուր արդյունք», «Փոխանակություն գյուղացվոց», «Վիճակ մեր արդի հողագործության», «Վարուցան և նշակական այլ աշխատանք», «Սերմի ընտրություն և սերմնացան», «Զուր և ոռոգումն արտորեց ու դաշտից», «Մայր հողի տկարություն և գորություն», «Հունձք, կալ և կալատեղ», «Ծտեմարան», «Զմռան և անասնոց դարման», «Ոչխար և յուր անենաշահ արդյունք», «Մշակություն ծառատնկոց», «Գյուղական ժողովրդի տուն ու կյանքը», «Գյուղական եկեղեցի և քահանա», «Գյուղական ժողովրդի վիճակի բարվումը», «Թոռնիկին հարսանիք» «Պապկե պսակ ի դաշտ», «Սեռելոց դաշտ և գերեզմանաց հիշատակարաններ», «Պապկե կտակ և մահ» աշխատության գլուխների մեծ նասի խորագրերն են սրանք, որոնք ինքնին հուշում են, թե ինչ հարցեր է քննարկում Պապիկ դարձած հայոց հայրիկը: Այդ հարցերի շրջանակը լայն է և ընդգրկում: Նրա մեջ արժանի գնահատական է ստանում աշխատանքը, որպես բոլոր բարիքների մայր և ծնող, ցույց տալիս, որ հասարակության բոլոր շերտերն ունեն իրենց համար սահմանված աշխատանքը, նոյնիսկ երկրի բագավորը կամ դեկապարը, եթե չաշխատի ուժերի ողջ կարողությամբ, ապա վատ կընթանան այդ պետության գործերը: Աշխատանքի նկատմամբ Խրիմյանի վերաբերնունքը ելնում է Աստվածաշնչյան պատգամից՝ «քրտանք երեսից քոց կերիցես զիաց քո»: Այդ պատգամը նշանակում էր նաև, որ հանցանք կերիցես զիաց քո»: Այդ պատգամը նշանակում էր նաև, որ հանցանք ուրիշի քրտինք յուրացնելը: «Պապիկ և թռնիկը» 19-րդ դարի գյուղ ուրիշի քրտինք յուրացնելը: «Պապիկ և թռնիկը» 19-րդ դարի գյուղ այլական կյանքի մի հանրագիտարան է. ընթերցողի աչքի առաջ հառնում է այդ ժամանակի գյուղը իր առտնին հոգսերով, նկարագրվում գյուղացու ծանր աշխատանքը: Այդ բոլորը գուգորդվում են փիլի-սովա Պապիկի խոհերով և մտորումներով. ի՞նչ անել, ինչպես անել,

1. Խորհրդան Հայրիկ, Երկեր, էջ 24:

ԵՐԱ ԿՈՍՏՈՆԵՐԸ

ի՞նչ միջոցներ օգտագործել գյուղատնտեսության զարգացումն ապահովելու համար: Առաջին և միակ ճանապարհը բոլոր գյուղերուն պարտադիր կերպով դպրոցների, ուսումնարանների, կրթարանների հիմնումն է: Այս անգամ Խրիմյանը ելնում է Եղիշեի պատգամից. ինչպես կույրը գրկված է արևի ճառագայթներից, այնպես էլ տգետ մարդը գրկված է կատարյալ կյանքից: Առանց վերամբարձ խոսքերի, պարզ, բոլորին հասկանալի, մատչելի խոսքերով Խրիմյանը ցույց է տալիս ուսման և գիտության կարևորությունը գյուղատնտեսական նոր նեքենաներ ստեղծելու, դրանք օգտագործելու, բերքատվությունը բարձրացնելու համար: Դայաստանում հողագործությունը դեռևս գտնվում է «հնության խանձարութի մեջ», ուրեմն պետք է գործադրել բոլոր միջոցները այդ խանձարութից դուրս բերելու և առաջադիմական քայլ առնելու համար: Այդ աշխատության համարյա բոլոր մասերում Խրիմյանը չի զլանում ընդգծելու ուսման կարևորությունը, սակայն դա արվում է առավելապես գյուղատնտեսության զարգացումը ապահովելու և կյանքի անհրաժեշտ մակարդակին հասնելու համար: Խրիմյանը ցավով է նկատում, որ «հառաջադիմությունը» արևմուտքեն սկսեց, դեռ նոր մտած է Արևելյան դուռը, շատ ժամանակ պետք, որ այդ դրուեն ներս մտնելով գա հասնի մեր աշխարհ»: Երկրում առաջադիմության հաստատման ուղին դարձյալ ու դարձյալ «դպրոցն ու լուսավորության ավազանը»: Գյուղացիության նետանացության հիմնական դարմանը «դպրոցն ու կրթությունն է»: Դպրոցների հիմնումը Խրիմյանը դնում է հոգևոր Առաջնորդների հիմնական պարտականությունների մեջ: Սակայն հեղինակը տարբերակում է ժողովրդին նվիրյալ և ընչափաց հոգևորականներին: Վասկուրականին կարոտ Խրիմյանը մեծ հաճակրանքով է արտահայտում Վարագա վանքի միաբան Դանիել վարդապետի մասին, որը հասից ավելի տարիներ անձնվիրությանը ժառանակությանը:

Ըստ Խրիմյանի դպրոցը բացում է նարդու աշքը, հոգին, ուղեղը, նրան դնում ծիչտ ճանապարհի վրա: Գյուղացի երեխաների կրթության մեջ Խրիմյանը շեշտը դնում է ալղիկների՝ իգական սեղի կրթության վրա, որի շնորհիկ նրանք կդառնան «խելացի տնտես և բարի մայրեր»<sup>2</sup>: Ընտանիքի շենություններ մեջ մասով կախված է կրթված, գի-

1. Գրքի այս աշխատիք գալուց երկու տարի անց, 1896-ին Վասի իմբռապոշապանության պարագաներից ենաս, երբ բարք երսակեները ներխուժեցին Վարդակ, առաջին զաներից մեկը եղավ Դամելի վարդապետ:

2. Խորիմյան Հայրիկ, Երկեր, էջ 170:

Մկրտիչ ԽՐԻՍՅԱՆ. Հասարակական-քաղաքական գործունեությունը

Ըստ Խրիմյանի գյուղատնտեսական գիտելիքների որոշ սազարդակ խիստ անհրաժեշտ է բռլոր գյուղացիներին: Ենիշտ է, նրանք իրենց մեջ ամբարել են մեր նախնիների դարավոր փորձը, սակայն դա բավարար չէ օրինավոր տնտեսություն վարելու համար, գյուղատնտեսական ցանկացած աշխատանքի համար: Գյուղատնտեսական մեջենաներն օգտագործելուց բացի խիստ կարևոր է ցանելիք սերմի ընտրությունը, ցանելու եղանակը, ժամանակը: Պակաս կարևոր չէ արտերի ոռոգումը: Զրօցտագործման հաճակարգի պատշաճ ստեղծումն ու օգտագործումը, ըստ հեղինակի, հավասար է արգասավոր հողի արժեքին: Պատկերավոր համեմատությամբ Խրիմյանը զնահատում է ոռոգման դերը գյուղատնտեսության զարգացման մեջ. «Դողը իբրև մայրենի արգանդ սերմեր կը նդունի», իսկ «Չուրը հայրն է, որ կարբուցանե և կրեղմնավորե հողին արգանդ, որով կծնին անհուն, անհամար բուսականը»<sup>4</sup>: Մեծ հորը Վայել հոգատարությամբ ու խնամքով Խրիմյանը մանրանասն բացաւրում է իր ընթերցող թոռնիկներին ինչպես կատարել ջրտուքը բարձր արդյունավետության հասնելու համար: (Այժմ, եթի մեզ 100 տարուց ավելի է բաժանում

1. Խորհան Հայրիկ, Երկեր, էջ 172:

2. Կոլի տեսութ, էջ 175:

3. Ամյի ակնում, լի 175-176:

#### 4. Նոյն սեղում, էջ 61:

այդ աշխատությունը գրելու ժամանակից, նույնիսկ հիմա կարող են ուսուցանու լինել Խրիմյանի դասերը արհեստական ջրամբարներ կառուցելու վերաբերյալ, որպեսզի նրանց մեջ ամբարվեն ձմռան և գարնան վարարումների ժամանակ հավաքված ջուրը, ամռան տապին չորացող բույսերին հագեցնելու համար): Իր երկարատև կյանքի ընթացքում հարուստ կենսափորձով նա հասցել էր ծանոթանալ եվրոպական երկրների հողի պարարտացման արհեստական եղանակներին: Իր գիտելիքները նա այնպիսի մանրամասներով է բացատրում ընթերցող-թոռնիկներին, որ թվում է քո առաջ կանգնած է այդ բնագավառի մասնագետը:

Յողագործությունից հետո Խրիմյանն անցնում է գյուղատնտեսության մյուս ճյուղին՝ անասնապահությանը: Ինչպես պահել տարբեր անասուններին, ինչպես օգտագործել նրանց աշխատանքը և տված բարիքները,- այդ բոլոր հարցերն իրենց պատասխանն են գտնում հանապատասխան գլուխներում: Ընտանի կենդանիներից ամենաարդյունավետը Խրիմյանը համարում է ոչխարը, որովհետև նրա տված օգուտը և շահը բացահայտվում է մի տարվա ընթացքում: Սակայն նրա աչքից չեն վրիպում նաև մյուս անասունները: Ընդհանրապես, Խրիմյանի կարծիքով, պետք է զարկ տալ անասնապահությանը, որովհետև Հայաստանն ունի նպաստավոր բնական պայմաններ, մինչդեռ, ինչպես իրավացիորեն գտնում է հեղինակը, «մեր գյուղական ժողովուրդ անասնապահության մասին շատ ետ մնացած է, նա չի գիտեր, որ անասնաբուծությունը երկրագործության մի կարևոր ճյուղն է, ավելի շահավոր և արդյունավոր»<sup>1</sup>:

Աշխատության մեջ քննարկվում է նաև նոր անտառների տնկման հարցը, քանի որ «մեր արևելյան աշխարհ անտառներու հարստութենեն շատ աղքատ է»<sup>2</sup>, բնական անտառները Հայաստանում սակավ են և «անխնա կտրվելով» սպառնում են օդի աղտոտմանը: (Դարձյալ այժմեական խնդիր): Անտառագործկ տարածքներում կլիման դառնում է գյուղատնտեսական աշխատանքների համար ոչ հարմար: Բնությունն առողջացնելուց բացի անտառը հարմար և էժան շինանյութ է, և Խրիմյան պապիկը բոլոր գյուղական ընտանիքների պարտադիր գործն է համարում անտառագործության առաջարկական անտառատունները, առհասարակ ծառատունները և արհեստական անտառների բազմացումը:

1. Խրիմյան Հայրիկ, Երկեր, էջ 88:

2. Նույն աելքում, էջ 106:

Խրիմյանի աչքից չի վրիպում նաև այգեգործության զարգացման խնդիրը: Ամեն վայրին հաճապատասխան պետք է աճեցնել նրգատու ծառեր, դրանց շարքում նա առանձնապես ընդգծում է թթաստանների դերը, որոնք համեղ և օգտակար միրգ մատակարարելուց բացի կարող են դառնալ շերամապահության զարգացման հիմքը: Ինչպես տեսնում ենք, Խրիմյանի դասերն ու խորհուրդները վերացական չեն, ելնում են ուեալ իրավիճակից, նպատականոված են ժողովոյի կյանքի բարվորմանը:

Ազգագործության գլուխգործոց է Թոռնիկի հարսանիքի նկարագրությունը, որն ընդիշվում է հեղինակի խոհերով, խրատներով և նկատառումներով: Խրիմյանը խորհուրդ է տալիս խուսափել յոթ օր տևող շոայլ և անհմաստ ծախսերով հարսանիքից, որն աղքատ գյուղացու պարանոցին գանում է մի հսկա պարտք, այն վճարելու համար նոր ամուսնացած գյուղացի երիտասարդը հարկադրված բռնում է պանդիխության ճանապարհը: Գետևանքը՝ քայլավում է նորաստեղծ մի ընտանիք:

Աշխատության այլաբանական մի գլուխ է «Պապկե պսակ ի դաշտ» խորագիրը կրող մասը: Խորիրդավոր այդ պսակի արարողության ինաստը հետևյալն է. եթե գյուղի քահանան Թոռնիկին անուսացնում է Շուշանի հետ, ապա Պապիկը հայ ժողովրդի բոլոր Թոռնիկներին պսակում է Մայր Հոռի հետ, Մայրենի երկրի հետ և պատգամում՝ հավիտյան չքողնել երկիրը: Շուշանը ճականացու է, թե մեռնի, Թոռնիկը ուրիշ կնոջ հետ կարող է ամուսնանալ: Եթե հողը մեռնի «Են միկը ուրիշ կնոջ հետ կարող է ամուսնանալ: Եթե հողը մեռնի «Են մոտ հողն այս դեպքում ավելի լայն հասկացություն չեն: Խրիմյանի մոտ հողն այս դեպքում ավելի լայն հասկացություն է: Խրիմյանի գաղափարին: Պապիկ Խրիմյանն իր է, հավասարեցված Հայրենիքի գաղափարին: Պապիկ Խրիմյանն իր է, հավերժական պատգամն է տալիս հայ ժողովրդին՝ չլքել հայրենի հավերժական պատգամն է տալիս հայ ժողովրդին՝ չլքել հայրենի հավակնուն է իր զավակների քրտնաքրոր աշխատանքի շնորհողը. այն կանգուն է իր զավակների հոգում անրապնդելու նպահիվ: Հայրենիքի գաղափարը թոռնիկների հոգում անրապնդելու նպահիվ: Հայրենիքի գաղափարը թոռնիկների հոգում ապուպապերի գերեզտակով հեղինակը նրանց շրջեցնում է իրենց ապուպապերի գերեզտակով հեղինակը նրանց շրջեցնում է իր երկրի վաստակաբեկ մշակմանների մոտով, օրինությամբ հիշում է իր երկրի վաստակաբեկ մշակմաններին: Նրանց օրինակով ուսուցիչ Պապիկը հորդորում է ունկնդիր ներին:

1. Խրիմյան Հայրիկ, Երկեր, էջ 138:

թռնիկներին՝ լինել հայրենանվեր որդիներ, շենացնելով՝ սերմղեսերունդ փոխանցել հայրենի ժառանգությունը՝ Պապիկի թողած ժառանգությունը. դա ներ Դայրենիքն է՝ «Դաշտեր ու հողեր, որ միշտ իր տեղն անփոփոխ, հաստատուն է»<sup>1</sup>: Նորազարք Երիտասարդությունը ժառանգություն է ստանում ամենամեծ հարստությունը՝ Դայրենիքը, նրա դաշտերն ու լեռները, նրա սուրբ հողը: Այդ պատգամից հետո Խրիմյանը պատվիրում է՝ շիտակ քայլել «ուղղություն պահել, որ հավելու քեզ ժողովրդին վարկ ու վստահություն»: Ժողովրդի սերն ու հաճակրանքը վեր է դասում ամեն ինչից՝ «աշխարհի բովանդակութիւնը հետ չի հավասարիր»<sup>2</sup>: Սակայն հեղինակը գտնում է, որ հեշտ չէ արժանանալ ժողովրդի հաճակրանքին. նա խոսքերով չի կերակրվում, այլ պահանջում է գործ, աշխատանք: Ժողովրդի հաճակրանքն ու սերը շահում են այն մարդիկ, որոնք աշխատում են քարվոքել նրա վիճակը, շենացնել երկիրը: Այդ հավերժ անանց և միշտ այժմեական խորհուրդներով ու պատգամներով Խրիմյանն ավարտում է իր աշխատությունը:



Վարագա լեռը

1. Խրիմյան Հայրիկ, Երկեր, էջ 159:

#### 2. Նոյն տեղում, էջ 161:

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՇԴ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՒ

1892 թ. մայիսի 5-ին Եջմիածնուն կայացած կաթողիկոսական ընտրությունների ժամանակ հայ հոգևոր և աշխարհիկ պատգամավորների ծիածայն քվեարկությամբ 72 քվեով Մկրտիչ Խրիմյանն ընտրվեց Աճենայն հայոց կաթողիկոս:

Սինց ընտրությունները նախընտրական ճեծ պայքար էր ժավալվել հայ ժողովրդի բոլոր հասարակաշերտերի շրջանում: Կարողիկոսական թեկնածու էին առաջադրված բազմաթիվ հոգևորականներ<sup>1</sup>: Եջմիածնի միաբանության անդամներ, եպիսկոպոսներ երենիս Գալստյանը (կաթողիկոսական տեղապահ) և Արիստակես Սեղրակյանը հույս ունեին ընտրվել կաթողիկոս: Եջմիածնի համագօյային ժողովը ընտրելի եպիսկոպոսների ցուցակից կաթողիկոսական թեկնածուներ ընտրեց Ակրտիչ Խրիմյանին և Մատթեոս Իգնիրյանին, երկուսն էլ արժանավոր հոգևորականներ:

Շուտով հայտնի դարձավ, որ երկու թէկնածուներից ցարը վավերացրել է Խրիմյանի ընտրությունը։ Այդ լուրջ սեպտեմբերի 5-ին Կ.Պոլսի պատրիարքարանից հեռագրով հաղորդում են Երուսաղեմում աքսորականի վիճակում գտնվող Խրիմյանին, հենվելով Կ.Պոլսի ոռուսական դեսպան Նելիդովի հայտարարության վրա։ Անհրաժեշտ էր բանակցություններ վարել սուլթանի հետ՝ Խրիմյանին բուրքական հպատակությունից ազատելու և աքսորավայրից մեկնելու թույլտվություն ստանալու համար։ Անքողջ մի տարի ցարական կառավագարության Արտաքին գործոց նախարարության տարբեր աստիճանի պաշտոնյաներ բանակցում էին Բ.Ռուսն Արտաքին գործոց նախարարության հաճախատախան աստիճանավորների հետ և ստանում

1. Երիաստարք Հայիստես Խոմանյանը, ապագայի ամենայն հայոց բանաստեղծը, զանումն էր Խամազային ժողովի պատգամափորների շաբաթ: Ընթարապարփի Խան օրիքին նա գրուի և՝ «Այս բանաստեղծը յսկն ու որպես «մարդկային կանքի փառ խորհուրդ» էր Խամարն ժողով քարագլիքի» Խրցի ասեմնել առաջին պատասխանուու բարձր զիքրաթ: (Լ. Կարապետուա, Հայիստես Խոմանյանի հասարակական գործակունուու, էջ 36-37:

## Եմա ԿՈՍՏՎՆԴՅԱՆ

բացասական պատասխան: Պատճառը սուլթանի վերաբերմունքն էր նորընտիր կաթողիկոսի նկատմամբ: Իր մերժումը սուլթանը մեկնաբանում էր կաթողիկոս ընտրված անձի անհանգիստ բնավորության, խռովարար լինելու, ժողովրդի մեջ հուզումներ առաջացնելու հատկություններով: Թուրքահպատակությունից չազատելու իր մերժումը Կ.Պոլսի ռուսական դեսպան Նելիդովի մոտ սուլթանը պատճառաբանում է հետևյալ կերպ: «Այս մարդը գրգռիչ և խռովարար է. կարելի չէ, որ ես ազատեմ զինքը: Երբ երա երևան ինչե՞ր չպիտի անե. մեր ու ծեր սահմանագլուխ միշտ խռովության մեջ պիտի ծգե և այսպիսով խրիմյան Զեզ ևս վնասակար մի անձ է: Լավ է, որ ցարը այս ընտրությունը բեկանե և նոր ընտրություն լինի»<sup>1</sup>: Սուլթանն արդակարգ «սրտացափություն» էր ցուցաբերում Ռուսաստանի նկատմամբ, զգուշացնելով արտաքին գործոց նախարարության աստիճանավորներին Եջմիածնի նորընտիր գահակալից, որն ընդունակ էր պլոտումներ առաջացնել նաև արևելահայության մեջ<sup>2</sup>:

Տեսական էին բանակցությունները երկու կողմերի միջև, առանց որևէ արդյունքի: Այդ պատճառով Կովկասի Քաղաքացիական մասի կառավարչապետ գեներալ-ադյուտանտ Շերեմետևը նպատակահարմար գտավ միջնորդել ցարի մոտ կաթողիկոսական նոր ընտրություններ նշանակելու համար: Սուլքանի մերժումից բացի գեներալ ադյուտանտը բացատրում էր, որ Խորհմանը «ազգային գաղափարներին անմնացորդ նվիրված և ողջ հայության մեջ արտակարգ ժողովրդականություն վայելելու պատճառով հազիվ թե ցանկալի լինի ոռուսական կառավարության համար իբրև էջմիածնի կաթողիկոս»<sup>3</sup>: Ըստ Կովկասի կառավարչապետի մտորումների կաթողիկոսական երկրորդ թեկնածուն՝ Մատթեոս Իգմիրյանը, ևս անցանկալի անձ է, իետևապես անհրաժեշտ է 1894 թ. հայտարարել կաթողիկոսական նոր ընտրություններ անցկացնելու մասին:

Երուսաղեմում գտնվող Խրիմյանը այնտեղից ակնդետ հետևում էր բանակցությունների ընթացքին, նաճակագրական կապ պահպանում արևելահայ և արևմտահայ հասարակական գործիչների հետ, խորհուրդներ հարցնում ու տալիս, թուրքահպատակությունից ազատվելու ուղիներ որոնում: Կ.Պոլսի հայ ազգային գործիչները ճնշում

1. ԳԱԹ, ԽՐԻԺՅԱՆԻ Ֆ., գ. 149

2. АВПР, Главный архив, ф. Армянские дела. д. 191. л. 5

### 3. Արյի աելում:

**Ակրտիք ԽՐԻՍՅԱՆ. Հասարակական-քաղաքական գործութեալքունը**

Են գործադրում պատրիարք Խ.Աշըգյանի վրա, որպեսզի վերջինս այդ հարցով դիմի սուլթանին: Երկու և զգույշ պատրիարքը մի անգամ կիսաբերան միջնորդում է Արդուլ Դամիդի մոտ, սակայն սուլթանը կտրուկ արգելում է նման հարցերով դիմել իրեն: Բանակցություններ վարելու հետագա ընթացքը հիմնականում մնում է ոռու աստիճանավորների վրա: Կ.Պոլսի ռուսական դեսպան Նելիդովից բացի գործին միջամտում է Ռուսաստանի արտաքին գործոց նախարար Գիրսը՝ սուլթանին հաղորդելով ցարի անմիջական կարծիքը. «Ինքնակալը գտնում է, որ Խրիմյանի կաթողիկոս չհաստատվելը ներկայացնում է անհամենատ ավելի նեծ վտանգ, քան այն դժվարությունները, որ կարող են ծագել նրա էջմիածնում հաստատվելով, որտեղ իշխանությունների խիստ հսկողությունը կխանգարի նրան խառնվել արևմտահայերի քաղաքական գործերին: Երկու տերությունների ընդհանուր թշնամիները կարող են խռովություն սերմանել հայերի մեջ, եթե ձգձգվի Խրիմյանի հաստատումը»<sup>1</sup>: Ընդառաջելով ցարի խնդրանքին, Արդուլ Դամիդը համաձայնվում է Խրիմյանին ազատել աքսորից և թուրքահպատակությունից: Ստատս-խորհրդական, Կ.Պոլսի գործերի հավատարմատար Ժադավսկոյը 1893 թ. ապրիլի 23-ին (մայիսի 4-ին) այդ լուրը հաղորդում է Նելիդովին, ավելացնելով, որ մինչև սուլթանի իրադեմի հրապարակումը ցանկալի չէ լուրի հրապարակումը: Չորս օր անց նույն ժադավսկոյը Շերեմետեկին է հղում մանրամասն և ընդարձակ մի նամակ, պատճելով նաև սուլթանի և Նելիդովի հանդիպման մասին: Նամակի բովանդակությունը լույս է սփռում 19-րդ դարի 90-ական թվականների ցարի և սուլթանի վարած հակահայկական քաղաքականության մանրամասների վրա: Սուլթանը Ալեքսանդր III-ին սիրաշահելու նպատակով Նելիդովի կողմից արված ցարական առաջարկը ընդունում է առանց հապալման, մի քանի օրվա ընթացքում անհրաժեշտ կարգադրություններ անում նորընտիր կաթողիկոսի մեկնումն էջմիածին ոյուրացնելու և արագացնելու համար: Այդ բոլորով հանդերձ, սուլթանը ներկայացնում է մի քանի պահանջներ հայոց վեհափառ ուղերքի վերաբերյալ, զգացնել տալով, որ այդ հարցում որևէ գիշում չի լինելու: Թուրքիայի արտաքին գործոց նախարար Սահիթ Փաշան այդ պահանջներն անձամբ հաղորդում է ժադավսկոյին: Սուլթանը պնդում է, որ կաթողիկոսի ծանապարհը դե-

1. АВПР, Главный архив, ф. Армянские дела, д. 191, л. 14

այս էջմիածին չանցնի Կ.Պոլսով և Արևմտյան Հայաստանով, արգելելով Խրիմյանին վերջին հրաժեշտը տալ արևմտահայության ներկայացուցիչներին: Սուլքանը նշում է նորընտիր կաթողիկոսի ուղին. շոգենավով Յաֆայից Տրիեստի ճանապարհով անցնել Օդեսա, այնտեղից՝ էջմիածին: Այդ ուղերթով Արդուլ Յամիջը միանգամից վճռում է երկու հարց. խոչընդոտել արևմտահայերի հասարակական հուզումներին և չկազմակերպել բարձր մակարդակի ընդունելություն կաթողիկոսի համար: (Վաղնջական մի սովորություն էր, որ արևմտահայերից ընտրված կաթողիկոսը պետք է արժանանար սուլքանի հանդիսավոր ընդունելությանը և պարգևատրվեր թուրքական կառավարության ամենաբարձր շքանշանով): Այդ ուղերթով սուլքանն ազատվեց նման մտահոգություններից: Արդուլ Յամիջը հրահանգեց ֆինանսների նախարարությանը շտապ հաշվարկ կատարել և ամրողությամբ վճարել Խրիմյանին հասանելիք թոշակը, որ չէր տրվել նրան աքսորում գտնվելու ողջ ընթացքում: Միայն դրանից հետո, 1893 թ. հունիսի 3-ին (ընտրությունից 13 ամիս անց) Խրիմյանն ստացավ ցարի բարձրագույն հաստատությունը: Յունիսի 10-ին ցարական հրովարտակով Խրիմյանին շնորհվեց ադամանոյա խաչ վեղարի վրա կրելու համար և նա դասվեց Ալեքսանդր Նևսկու կայսերական ասպետության կարգը<sup>1</sup>: Ենց հունիսի 3-ին Երուսաղեմի ռուսական հյուպատոսը Խրիմյանին հաղորդեց բարձրագույն հաստատման հրամանը, իսկ հունիսի 4-ին լուրջ հեռագրով հաղորդվեց էջմիածին: Այժմ բանակցություններ սկսվեցին Կովկասի կառավարչապետ Շերեմետևի և էջմիածնի միաբանության միջև: Պաշտոնական լուրջ կառավարչապետը էջմիածին հաղորդեց միայն հունիսի 13-ին, իսկ 21-ին Մայր Աթոռից պատվիրակություն ուղարկվեց Երուսաղեմ, վեհափառին էջմիածին ուղեկցելու համար: Պատվիրակության կազմում էին եպիսկոպոսներ Արիստակես Սեղրակյանն ու Սարգսի Տեր-Գասպարյանը, վարդապետներ՝ Մեսրոպ Տեր-Սովուսյանն ու Եփրեմ Սուլքիասյանը<sup>2</sup>:

Քրավիրակները Բարումից նավով անցան Տրավիզոն, Սամսուն, Կ.Պոլիս, Ալեքսանդրիա. նրանք Երուսաղեմ մտան մեկ ամիս անց՝ հուլիսի 22-ին: Յանդիսավոր հանդիպումը Խրիմյանի հետ կայացավ մյուս օրը: Յանդիսությունների ժամանակ իրենց աքսորական եղրորը

1. Հ. Արքարքան, Խրիմյան Հայրիմի կարողիքական ընտրությունը. Թիֆլիս, 1893թ., էջ 10, նույն Կառազ, 1893թ., Ն 192, 21 տույն.

2. Մ. Օրմանյան, Ազգապատմ., էջ 5000, նույն Կառազ, 1893թ., Ն 160:

շերմ ուղերթ մաղթեցին միաբանության անդամները և Երուսաղեմի հայոց պատրիարք Յարություն Վեհապետյանը: Օգոստոսի 3-ին Խրիմյանը հրավիրակների և միաբանության մի քանի անդամների ուղեկցությամբ ճանապարհվեցին Շոպեն, ուր երկու օր մնալուց հետո շարունակեցին ճանապարհը դեպի Եգիպտոս: Յունիսի 7-ին նրանք Ալեքսանդրիայում էին: Երեք օր Եգիպտահայությունը շերմ ընդունելություն ցույց հայոց հայրապետին: Նա արժանացավ նաև Եգիպտոսի փոխարքայի ընդունելությանը: Օգոստոսի 14-ին ողջ խումբը նավով հասավ Տրիեստ: ճանապարհին հանգրվանած բոլոր վայրերում տեղի հայությունը կազմակերպում էր արտակարգ շերմ ընդունելություն: Այդ վայրերի հայ համայնքների ներկայացուցիչները իրենց սրտի խոսքը, ուղերձ-մաղթանքներն էին ուղղում նորընտիր կաթողիկոսին: Բացարիկ շերմ էր հանդիպումը հունգարակայ կակարդիկ համայնքի ներկայացուցիչների հետ: Յանդիպման բոլոր մասնիկները գերծ էին դավանական տարբերությունը ընդգծելուց: Յայոց հայրիկը իր հունգարակայ զավակներին հայտարարում էր, որ դավանանքը խղճի գործ է և ինքը հավասարապես իր որդիներն է համարում բոլոր դավանանքի հայերին, գլխավորը համարելով ագային պատկանելությունը:

1. Խորիմյանն ինքն էր պատրաստել ցարի հանդիպման ժամանակ իր ընթերցվելու ճառը: Սակայն Եղյանը փախել էր այն, համարելով դժվար բարգանելի և ընթերցել իր պատրաստած խնդրագիրը: Կարողիկոսի նորոգործի Խորիմյանը դժգոհութ է դրա համար և վեհափառի բացասական զննաւասկանի մասին հասդարձում նամակով: «Եղյանին անոր համար բարգնան դրին, որ այդ գգուշություններ ի գործ դնեն, զիսանալով վեհափառ հայրիկին ազատախառնությունը: Վերջապես այս ճամփու խորիմյանը վեհափառ հայրիկին թեթևմ չենապ: Չի զիսեն մեր նայ պաշտօնայր պետք նոր պատրաստել: Նախառակը նայում է: Եղյանը թև բացառությամբ նայ պաշտօնյա է» (ԳԱԹ, թ. Ազայանի գ., XII թ., գ. 3383):

կարողիկոս ընտրվելու և օծվելու հանգամանքները, թուրքական սուլթանի անհամաձայնությունը նրան աքսորից ազատելու հարցում: Դոդվածն առանձնապես դրվատում է Խորիմյանի քրիստոնեավայել ընթացքը 1880-ական թվականներին Վանում մոլեգնող սովոր տարիներին, երբ Վասպուրականի հոգևոր առաջնորդ Խորիմյանը հայերի հետ հավասար օգնության ծեռք էր մեկնում թուրք ու քուրդ սովորներին: Ուսաւական ուղղափառ եկեղեցու պաշտոնական օրգան «Վերկովնի վետնիկ»-ը հայոց կարողիկոսի նկատմամբ այդ համակրական հոդվածներից հետո պարզաբանում էր այն տարբերությունները, որ կան հայ առաքելական և ռուս ուղղափառ դավանանքների միջև, ցանկություն հայտնելով վերացված տեսնել այդ տարբերությունները<sup>2</sup>:

Մայրաքաղաքում Խորիմյանը հանդիպումներ ունեցավ հայկական համայնքի ներկայացուցիչների հետ, հոգիչ քարոզներ կարդաց հայկական եկեղեցում:

Այդ քարոզներից մեկի բովանդակությունը տպվեց «Հովոստ» լրագրում: Դայոց վեհափառը դիմելով եկեղեցում գտնվող հայերին, նշում է այն հսկայական տարբերությունը, որ կա արևելահայ և արևմտահայ ժողովրդի կյանքի պայմանների միջև. «Դուք բախտավոր եք, ծեզ վիճակից մեծ Ուսասատանի ամենաողորմած կայսեր գորեղ հովանու տակ ազատ դավանել ծեր կրոնը և արդար աշխատանքով վայելել երկրային բոլոր բարիքները: Բայց մեր եղբայրները Դայաստանի մյուս մասում, ընկած թուրքաց իշխանության տակ, հեծում են այժմ ամեն տեսակ գրկանքներից...: Մենք՝ Ուսասատանի և Թուրքիայի հայերս, ի վաղուց ընտելացել ենք մեր սրտի մեջ սնուցանել ջերմ հավատ դեպի մեծ Ուսասատանի ինքնակալ թագավորի հովանավորությունը և զորեղ պաշտպանությունը, դեպի որը ի սկզբանե ուղղված են եղել Արևելքի բազմաչարչար քրիստոնյաների հայացքները»<sup>2</sup>: (Մրանք հավոր պատշաճի ասված խոսքեր չեն, այլ արտահայտում էին Խորիմյանի հայացքների աստիճանական էվոլյուցիան: Բեռլինի կոնգրեսի սկսվելուց առաջ ունեցած անգլիական կողմնորոշումից հետո, Խորիմյանն աստիճանաբար 80-ական թվականներից, հակվում է դեպի Ուսասատանը): Խորիմյանն իր քարոզներից, հակվում է դեպի Ուսասատանը:

1. Արարատ, 1895, N 7, էջ 255-258:

2. Մարտ, 1895, N 6, էջ 890:

Աերով դիմում է մայրաքաղաքի հայությանը, կոչ անում՝ սատար կանգ-նել Արևմտյան Հայաստանից մազապուրծ գաղթականներին:

Պետքը բուրգում հանգանակություն չսկսվեց, միայն տեղի հայոց եկեղեցու հոգաբարձությունը վճռեց միանվագ 5000 ռ. Ավիրել Գևորգյան ծեմարանին: Ներքին գործոց նախարարի հետ ունեցած բանակցություններն ավարտվեցին նրա թույլտվությամբ լայնածավալ ռուսական կայսրության հայաբնակ նահանգներում հաճահայկական հանգանակություն բացելու՝ Սասունի խլյակներին, արևմտահայ գաղթականներին և Կրևմտյան Յասաւարանի հայութապետներին:

Դունիսի 13-ին կարողիկոսը ճանապարհվեց Մոսկվա: Դարձյալ պաշտոնական ընդունելություններ, այցելություններ և փոխայցելություններ: Մոսկվայի նահանգապետ, ցարի հորեղբարյ Սերգեյ Ալեքսանդրովիչը իր հարգանքը հավաստեց հայոց վեհափառին: Տեղի հայ հասրակությունը, Լազարյան ծեմարանը կազմակերպեցին բազմաթիվ ընդունելություններ, մեկը մյուսից շքեղ և փառահեղ: Ականատեսի վկայությամբ Մոսկվայում կազմակերպված ընդունելություններն ավելի շքեղ էին և գերազանցեցին մայրաքաղաքի հայության ջանքերին: ճաշկերույթի ժամանակ հայ մեծահարուստները 30.000 ռ. հանգանակեցին էջմիածնի մայր տաճարի վերանորոգման համար: Այդ գումարից 10.000 տվին ժամհարյան եղբայրները: Լազարյանների շառավիդ իշխան Աբամելիքը, ընդունելության ժամանակ խոստացավ իր ծախսով ամեն տարի Գևորգյան ծեմարանում ասիել 25 ռազմոր:

Մոսկվայում ևս կարողիկոսն այցելեց տեղի տեսարժան վայրերը, եղավ Տրետյակովյան պատկերասրահում, այցելեց հայ մեծահարուստ Գասպարյանների անունը կրող ծերանոց-անկելանոցը, օրինեց բարեգործ գերդաստանին, խրախուսեց նրանց մարդասիրական գործունեությունը:

Հունիսի 21-ին Խրիմյանը բռնեց վերադարձի ճանապարհը: Դեռ Նոր-Նախիջևանում եղած ժամանակ հայոց հայրապետին ալցելել էր հոչակավոր ծովանկարիչ Յովհաննես Այվազովսկին և խնդրել վերադարձի ժամանակ հյուրընկալվել իր տանը՝ Թեոդոսիայում: Նկարիչը կրկնեց իր խնդիրը, Պետերբուրգ հղելով նամակ և հեռագիր: Խրիմյանը չներժեց հրավերը: Ականավոր նկարչի տանը հյուրընկալվելուց հետո կաթողիկոսն իր շքախմբով հովիսի 1-ին Նիկոլայ շոգենավոր

1. ԳԱՅԹ, թ. Ազատյանի ք., XII թ., գ. 3383:

մեկնեց Թեղողսիայից: Կերչում նրան աղ ու հացով դիմավորեցին տեղի քաղաքապետը, ոստիկանապետը, հայ և այլազգի հասարակայնության ներկայացուցիչները: Դաջորդ կանգառը Փոքին էր, ուր նրան դիմավորեցին քաղաքային ինքնավարության ներկայացուցիչները: Ամենայն հայոց վեհափառին դիմավորելու համար Թիֆլիսից Փոքի էր Եկել Վիրահայոց հոգևոր առաջնորդ Գևորգ Սուլեմանցը: Դաջորդ համգրվանում՝ Բորժոմում, Խրիմյանն այցելեց մեծ իշխան Նիկոլայ Միխայլովիչին: Ախալցխայի գավառապետը և Ժողովուրդ արտակարգ ջերմ ընդունելություն կազմակերպեցին վեհափառ հայրապետի պատվին: Արասթումանում էր գտնվում թագաժառանգ Գեորգի Ալեքսանդրովիչը, որի նկատմամբ իր հարգանքը հավաստեց Խրիմյանը՝ այցելելով նրան: Ապա կաթողիկոսական ուղերքն անցավ Ախալքալաք-Ալեքսանդրապոլ գծով<sup>1</sup>: Տաճապարհին ընկած հայկական գյուղերի բնակիչները հանդիպումներ էին ունենում հայոց Դայրիկի հետ, նրան ներկայացնելով խնդրագրեր, բողոքներ և պահանջներ: Բողոքները մեծ չափով վերաբերում էին տեղի քահանաների հետաճացությանն ու անգրագիտությանը: Գյուղերում կաթողիկոսը հանդուրժողականություն և կրոնական լայնախոհություն է դրսւորում, այցելում տեղերի կաթոլիկ հոգևորականներին, գրույցներ ունենում նահմեդական հոգևորականների հետ<sup>2</sup>: Տաճապարհին անցնում էր Ալեքսանդրապոլից Ղարաքիլիսա, Բաշ-Ապարան, Աշտարակ: Դոկտեմբերի 20-ին, յոթամսյա բացակայությունից հետո, վեհափառը ժամանեց Մայր Աթոռ:

1. Ավագարական կարգիկասը զիշերեց տեղի երկարակյաց, նաևապեսալիս մի մեծ գերդաստանի զիշափոք Հաջի Մարտի տանը: Մեկ ասենիքի տակ միասին ապրում էին նրա շուրջ սրբիները, հարսները և 54 ռու ու ծառ, այդ ընտանիքը բաղկացած էր 63 շնչից: Նրանց մեջ կային առևտորականներ, առացլչիներ և ասացածիներ, թժիշ, իրավաբան, մի բանի ուսանող: Կարգիկասի և այդ թիրքական ասեն նաևապեսի, դևուս ասայզ ձեր կոնց միշչ ծայր առավ մի նեասարքիք զրայց: «Եյքրան պրաներ և բառեր տեսն, Ծիշան ասա, երանք չեն վիճում իրար ենու: -Հայրին, ուսքընի ինանար փաշին են են, մի՞՞ն բայց կոսան, որ երանք վիճում: Քարորին ներշշան են իրենց պարասականությունները, իսկ անհնագանություններին ու անկարգություններին պատժում: -Ուրեմն դու պատուի զիսես, բայց ասախիք-, ծպատուր նարգիր կարտիկասը: -Հասկա ինչպէս, առանց պատմենու կարս-դ է յիմանալ պեսությունը: Իմ առեն էլ փորքիկ պեսություն է: -Դու կ'ո՞լ է նրա ախրակալը- եարքեց Խայրիկը: Զեր խանափի ծառան, Հաջի Մարտին: -Եվ բայց օրինվագ ինեն այն կանայք, որ այդպէս աճուր պահպանում են ևս յընանելիսն կապերը- ասաց կարտիկասը, օրինենավ այդ նաևապեսական ընմասնիրի բոլոր անդամներին և նրա զիշափոքին: (Արձական, 1895, N 83, Պոլոյնե արման Տուրքիա մասին):

2. Ump6, 1895, N 7, t9 1031

ճանապարհորդությունը՝ Պետերբուրգ՝ չարդարացրեց ակնկալիք ներն ու հովսերը: Նիկոլայ 2-րդը մի քանի բանավոր, հավուր պատշաճին ասված խոսքերից բացի, ոչինչ չխոստացավ: Ինչ-որ չափով նշանակություն ունեցան կաթողիկոսի անձնական հանդիպումներն ու բանակցությունները արքունիքի բարձրաստիճան պաշտոնյաների հետ: Առավել կարևորը, թերևս, վեհափառի ամենօրյա շփումն ու հանդիպումներն էին հայրենիքից դուրս գտնվող հայության հոժ զանգվածների, ժողովրդի տարբեր խավերի ներկայացուցիչների հետ: Կաթողիկոսի մարդ-քաղաքացի-հոգևորականի անձնական հճայքը, հայեկեղեցապետի ժողովրդի աչքում ունեցած մեծ հեղինակությունը, Խրիմյանի սկզբնական շրջանի ծավալած գործունեության հոչակը, նրան դարձել էին ցանկալի, նրա անունը պատել ժողովրդական գործի լուսապակով և ստեղծել ազգային միասնական գաղափարի շուրջ միավորված տարբեր հոսանքների, տարբեր գաղափարների ժամանակավոր միավորում:

\* \* \*

Յոթ ամիս կաթողիկոսը բացակայել էր Եջմիածնից: Թե ճանապարհորդությունից առաջ և թե ընթացքում Արևմտյան Հայաստանում կատարվել էին ողբերգական իրադարձություններ: (Սասունի 1894 թ. ապստամբությունը, պարտությունն ու դրան հաջորդող կոտորածները, նոր պատրիարքի՝ Սատրեսու Խզմիրյանի ընտրությունը և ընդդիմադիր Վերաբերնունքը օսմանյան կառավարության և անձամբ սուլթանի նկատմամբ:) Այդ բոլորն ստիպեցին մեծ տերությունների դեսպաններին կազմել «Մայիսյան բարենորոգումների ծրագիրը» և ներկայացնել սուլթանի հաստատմանը: Դիվային մտահղացմանը «բարեխնան» սուլթանը բարենորոգումների ծրագիրը ստորագրելու փոխարեն սկսում է հայկական կոտորածները, որոնց ալիքները հասան մինչև 1896 թ. ավարտը: Գաղքը Արևմտյան Հայաստանից, որ սկսվել էր իրեն սովոր հետևանք, հասավ ահրելի չափերի: Այս անգամ փախչում էին թուրքական յաթաղանից, պետական հայահալած և հայաշինց քաղաքականությունից: Անհրաժեշտ էր ծեռնարկել շտապ միջոցառումներ՝ արևմտահայերին դրանական, նյութական և հոգևորարոյական օգնություն հասցնելու համար, ջանքեր բափել գաղքականներին վերստին մայր երկիր դարձնելու ուղղությամբ: Վեհափառ հայրապետը դրան է տրամադրում իր ողջ կարողությունները:

Ռուսական կայսրության հայաբնակ վայրերում բացվել էր հանդիպական կանգանակություն: Կաթողիկոսի հրամանով հանգանակած գումարի չափը չի հրապարակվում ոչ Արարատում, ոչ ել այլ պարբերականներում: Նա մտավախություն ուներ ցարական աստիճանավորների ունագություններից: Ողջ ճանապարհորդության ընթացքում հայ գաղթավայրերում ունեցած իր սրտահույզ քարոզների և վայելած անսահման ժողովրդականության շնորհիվ Խրիմյանին հաջողվել էր հավաքել պատկառելի մի գումար: Մայր Աթոռից նա սերտ հարաբերություն է հաստատում Կ.Պոլսի պատրիարք Ս.Իզմիրլյանի հետ, հաղորդում, թե ինչպես է կարողացել գումարներ հավաքել հօգուտ սասունցիների: Ճանգանակած գումարից 2000 թ. կաթողիկոսն ուղարկում է Խզմիրյանին, իրահանգելով, թե որ վայրին ինչքան դրան կարելի է տրամադրել: Նա հատուկ հոգատարություն է ցուցաբերում Մշո Սր.Կարապետ վանքում հաստատված որբանոցի նկատմամբ, հաղորդելով պատրիարքին իր ուղարկած գումարի մի մասը հատկացնել այդ վանքին, հանձնել վանքի վանահայր Վարդան Վարդապետին «վասնգի այդ վարդապետը լավ ճանաչում եմ, անձնվեր և հավատարիմ պաշտոնյա է»<sup>1</sup>:

Նույն նամակում կաթողիկոսը հայտնում է պատրիարքին, որ Մոսկվայի մեծահարուստ ժամհարյան եղբայրները իր խնդրանքով Կ.Պոլսի ռուսական դեսպանության միջոցով պատրիարքարանին փոխանցել են 10.000 ֆրանկ, խոստանալով երեք տարի անընդմեջ նույն քանակի գումար ուղարկել: Խրիմյանն զգուշացնում է պատրիարքին, որ որբերի բարօրության համար ուղարկված գումարները գործածվեն միայն այդ ուղղությամբ, հակառակ դեպքում բարեգործները կիրաժարվեն իրենց խոստումը կատարելուց:

Արևմտահայերին և ճամանակուրապես սասունցիներին օգնություն հասցնելու տարբեր ուղիներ է որոնում և գտնում կաթողիկոսը: Պատրիարքի միջոցով դրամական օգնություն ուղարկելը լեգալ ուղին էր: Բայց դա թիվ էր: Կ.Պոլսի ռուսական դեսպանությունը ևս հաճախ ծայնակցում էր Թուրքիայի արտաքին գործոց նախարարության աստիճանավորներին՝ Արևմտյան Հայաստանից օգնություն ուղարկվող գումարները ներկայացնելով իրեն հեղափոխական կոնֆլիտներին ուղարկված գումարներ և այդ պատճառով խոչընդոտներ էր հարուցում

1. ՀՀ ԿռՊԱ, ֆ. 57, գ. 268, թ. 71:

գումարներն ըստ պատկանելվույն հասցնելու գործին: Այդ պատճառվ կարողիկոսը որոնում է այլ ճանապարհներ: Նա կապ է հաստատում Արևմտյան Հայաստանում իր մասնաճյուղերը տարածած հայ հեղափոխական դաշնակցության տարբեր կոնֆլիքտների հետ: ՀՅԴ Կարսի կոնֆլիքտի ներկայացուցիչ Ա. Արամյանի և նրա գործընկերների միջոցով Խրիմյանը գումար է ուղարկում դարձյալ Սր. Կարապետ վանքի վանահայր Վարդան Վարդապետ Հակոբյանին՝ նույն վանքի «Ժառանգավորացի» իր նախկին սանին, որը Սասունի ինքնապաշտպանական մարտերի կազմակերպիչն էր ու մասնակիցը, ՀՅԴ անդամ, Շեսու հեղափոխական ժաժկանունով<sup>1</sup>: Շերոս սասունցիներին, կաթողիկոսի հորդորով, օգնության ծեռք է է մեկնում Շնդկաստանի հայ գաղութը: Նրանք ուղարկում են 5000 ռուբլի, որը կարողիկոսը կասկած չհարուցելու համար, դարձյալ մուսկվարնակ ժամհարյանների միջոցով հասցնում է Սասուն-Մուշ, անձանք Վարդան Վարդապետ Հակոբյանի ծեռքը<sup>2</sup>: Մի այլ անգամ վեհափառին հաջողվում է պատրիարքի միջոցով 50 ռուբլի հասցնել դարձյալ սասունցիներին և դարձյալ հեղափոխական վարդապետին: Կաթողիկոսի հանձնարարությունը կատարելուց հետո, արդյունքի մասին Խզմիրլյանը հաղորդում է նրան<sup>3</sup>:

Սուլթանի սանձազերծած կոտորածների ալիքը գավառներից հասնում է օսմանյան կայսրության մայրաքաղաքը: Մեծ տերությունների դեսպանների աչքի առաջ 1895-ին գնդակոծվեց Բաքը Ալիի խաղաղ ցույցը, որը հետապնդում էր բարենորոգումների ծրագիրը սուլթանի կողմից ստորագրել ստիպելու նպատակ:

Ցույցի և կոտորածների լուրը լսած ալեզարդ կաթողիկոսը իր բողոքն ու ցասումն է արտահայտում այդ իրադարձությունների առիվ և հետաքրքիր դիտողություններ անում: 1895 թ. հոկտեմբերի 4-ին իր անսահման վիշտը հայտնելով պատրիարք Ս. Խզմիրլյանին՝ մայրաքաղաքի իրադարձությունների առթիվ, նա նկատում է, որ պոլսահայերը երկար ժամանակ չեն հավատում գավառներում գործված

1. ՀՀ ԿՊՄԱ, 56 և 57 ֆանգիբի տարբեր գործերում պահպան են այլ փաթասկնություններ գրագիրը նաև ամսականը՝ ուղղված ամենայն հայոց կարգիկանին: Նաև ամսականը նաև մարտարարություններ ավելանում է մեկ տասնամյակ անց՝ 1904թ. Սասունի հաշոյոյ ինքնապաշտպանական մարտարի ժամանակ: Միշտ է Խրիմյանը իր օգնության ծեռքը է մեկնում հեղափոխական փորձականին և նրա միջոցով՝ Սասունի հերոս մարտահաղներին:

2. ՀՀ ԿՊՄԱ, թ. 56, գ. 17, գ. 72, թ. 12:

3. Նոյն տեղում, գ. 55, թ. 94:

ոնիրներին, իսկ այժմ նրանք սեփական մաշկի վրա զգացին այդ ամենը: «Գիտեմ, թե փրկություն և ազատություն արյունով կգնվի, սուսկ փաստաբանություն և բողոք բավական չե»<sup>1</sup>, գրում է պատկառելի տարիքում գտնվող կարողիկոսը, կարծես վերիիշելով իր քարոզները «Երկարէ շերեփի» մասին: Գովաբանելով ցույցի կազմակերպիչներին և մասնակիցներին, նա իր զարմանքն է հայտնում, թե «ինչպես բռնության վարժեցած հայ ժողովուրդը խիզախտեց արյան դեմ, բանտերուն դեմ, մահվան դեմ»: Նա լի էր հույսով ու հավատով, որ նման գործողություններով կարելի է հասնել հայկական հարցի լուծմանը: Ըստ Խրիմյանի, ինչպես ցորենի հատիկը, որ ընկնում է հողը, մեռնում է, բայց նորից ծլում են նոր հատիկներ, այնպես էլ «հայոց կոտորած հատիկները (իմա - զոհված որդիները) ինքնարուիս արյունով ներկված պիտի բուսացնեն հայոց հայրենյաց ազատությունը»<sup>2</sup>: Նա հույս է հայտնում, թե պատրիարքը պետք է իրեն հաղորդի «ավետիս, որ այդ վերջին դեպքը գործին արագություն տալով վախճան բերե հայկական խնդրույն»: Վկայակոչելով Ավարայրի հերոսներին և «սուլթ» Ղևոնդի աննկուն ոգին, կաթողիկոսը քաջալերում է պատրիարքին, հույս ու հավատ ներշնչում: Սակայն ինքը՝ հայոց հայրիկը, տագնապների մեջ է: Չանցած մի շաբաթ, հոկտեմբերի 10-ին, կաթողիկոսը դարձյալ գրում է պատրիարքին: Նոր լուրերի ակնկալությամբ նա պատասխան է խնդրում պատրիարքից, դատապարտում «անզուսպ և կատաղի մահմեղական նոլեռանդությունը», օտար, ծախու գրչակներին, որոնք «աննպաստ դատաստան արին հայոց այդ համուրացն և անօրինական ցույցին համար», արդարացնում «հուսահատ և համբերությունը սպառած ժողովրդի» ազատության ծգտումը, որ ոնանք անվանում են ծայրահեղությունը<sup>3</sup>: Կոտորածների զոհերին Խրիմյանը համարում է «հայրենյաց ազատության մարտիկներ», խնդրում պատրիարքից մանրանասն գրել ցույցի նկարագրությունը և հղել Մայր Աթոռ՝ թաճգարանում պահելու, ապագայի սերունդներին հաղորդակից դարձնելու միտունով:

Բարենորոգումների մայիսյան ծրագիրը, ինչպես այլ փաստաթղթեր, մնաց թղթի վրա, չգործադրվեց: Ալեկոծված արևելահայերը սպասում են նոր լուրերի: Ահագնանում է արևմտահայ գաղթականների

1. Գլուխ, Խրիմյանի Փ., գ. 64:

2. Նոյն տեղում:

3. Նոյն տեղում, գ. 65:

հոսքը Արևելյան Դայաստան: Անդրկովկասի զանազան հայաբնակ վայրերի հոգեսոր առաջնորդները տագնապի ահազանգ են հնչեցնում կաթողիկոսի ականջին: Բարումի եկեղեցու երեսփոխան Սարգիս Շաթրյանը 1895 -ի նոյեմբերի 16 -ին Խրիմյանին ուղարկած նամակում նկարագրում է Բարում հասած հայ գաղթականության սոսկալի վիճակը. «Երեկով բարեկեցիկ ընտանիքը այսօր մի կտոր հացի կարուտ է, կիսամերկ այրիները իրենց վիրավոր զավակների հետ կարուտ են ապաստանի և խնամքի»<sup>1</sup>: Բարում հասած հայ գաղթականության ժամբ վիճակի մասին կաթողիկոսին հաղորդում է նաև Վրաստանի հոգեսոր առաջնորդ Գևորգ Սուրենյանցը, նշելով, որ գաղթականների մեծ մասը կանայք և երեխաներ են<sup>2</sup>: Չնայած հաճախայկական հանգանակություն բացելու արտաքին գործոց նախարարի թույլտվությանը, ցարական պաշտոնյաները խոչընդոտներ էին հարուցում: Սուրենյանցը հաղորդում էր վեհափառին Կովկասի կառավարչապետ Գոլիցինի հարուցած խոչընդոտների մասին, որոնց վրայից անցնելով ինքը հորդորել է թեմի հավատացյալ ժողովրդին սկսել «զգործն նվիրաց և ժամ առաջ հասուցանել զօգնություն»: Տարական պաշտոնյաները արգելակում էին ոչ միայն օգնություն և նպաստ հասցնելը, այլև թույլ չէին տալիս հոգեսոր գործիչներին հոգեհանգիստ կատարել Արևմտյան Դայաստանում զոհվածների հիշատակին: Շամախու թեմի առաջնորդ Մակար Եպիսկոպոս Բարիստիարյանը հաղորդում է կաթողիկոսին, որ Բաքվի նահանգապետն արգելել է հոգեհանգիստ կատարել զոհվածների համար, պատճառաբանելով, որ դա հուզումնքը կառաջացնի երիտասարդության մեջ, շատերը կցանկանան մեկնել Արևմտյան Դայաստան՝ օգնելու հայրենակիցներին: Այդ քայլերը խանգարելու համար ինքը ստիպված կդիմի ծերբակալությունների: Նահանգապետի հրամանից ինանում ենք, որ բազմաթիվ երիտասարդներ են ծերբակալված Բաքվում և Թիֆլիսում<sup>3</sup>: Տարական պաշտոնյաների «աչալքությունը» հասնում է այն աստիճանի, որ նրանք կաթողիկոսին բողոքում են հայ հոգեկորականների վարքագժից: Այսպես, Շերեմետևը բողոքում է վարդապետ Բագրատ Թավաքալյանից, որը Ալեքսանդրապոլում քարոզի ժամանակ կոչ էր անում հավատացյալ ժողովրդին՝ օգնության ծեռք մեկնել արևմտահայ եղբայրներին, հույս

1. ՀՀ Կոմիտ. ֆ. 56, գ. 1-2, գ. 46, թ. 58;

2. Դային տեղում, թ. 50-51;

3. Դային տեղում, թ. 49

չենել որևէ այլ պետության վրա, իենվել սեփական ուժերին, որովհետև «մեծ տերությունները հետապնդում են իրենց շահերը և սանասրտորեն դիտում են, թե ինչպես են կոտորում հայերին»<sup>4</sup>: Տարական պաշտոնյան դիտողություն է անում կաթողիկոսին, որ նման քարոզները «քշնամանը են սերմանում տարբեր ազգությունների միջև», ակնհայտորեն խառնելով իշխանություններին և ժողովրդին: Նա գգուշացնում է Խրիմյանին, որ Վերջինս արգելի բոլոր հոգեսորականներին նման քարոզներ կարդալ, իսկ վարդապետ Թավաքալյանին առաջարկում է փոխադրել այլ վայր: Թեև Բագրատ Թավաքալյանը վայելում էր վեհափառի հաստուկ համակրանքը, անախորժություններից խուսափելու համար նա վերջինիս հեռագրով ետ է կանչում Ալեքսանդրապոլից և ուղարկում Գանձակ՝ փոխանորդի առավել պատասխանատու պաշտոնով:

Արևմտյան Դայաստանում շարունակվող կոտորածներին հաջորդում են տարբեր վայրերի ինքնապաշտպանական մարտերը: Տարական տարբեր աստիճանի պաշտոնյաներ՝ Կովկասի կառավարչապետությունից Շերեմետևը, արտաքին գործոց նախարարությունից Գորեմիկինը գաղտնի գրություններ են հորև կաթողիկոսին, մեկը՝ 1895 -ի հոկտեմբերի 30, մյուսը՝ հոկտեմբերի 31 -ին: Շերեմետևի գաղտնի գրությունը ամենյան հայոց կաթողիկոսի հեռագրի պատասխանն էր, որ Վերջինս ուղղել էր Պոլսի ռուսական դեսպան, իսկական գաղտնի խորհրդական Նելիդովին, տեղեկություններ խնդրելով տեղի հայկական կոտորածների, պատրիարք Իզմիրլյանի առողջության և թուրքիայի հայ եկեղեցու իրավական կացության վերաբերյալ:

Տարական բարձրաստիճան պաշտոնյան Նելիդովի անունից հանգստացնում էր կաթողիկոսին, հայտնելով, որ ոչ մի վտանգ չի սպառնում Կ. Պոլսի հայությանը, ոչ հայ եկեղեցուն և ոչ էլ պատրիարքին: Սակայն Նելիդովը շարունակում է իր հաղորդումը, բողոքելով գավառներում տիրող իրավիճակից. «Գավառներում տեղի են ունենում տիրուր իրադարձություններ, որոնք սկսողները, ցավոք սրտի, մեծ մասամբ հայերն են՝ իրականացնել թուրքերի վրեժխնդրությունը և քրիստոնյաների կորուստները»<sup>5</sup>: Փաստորեն, ցարական պաշտոնյան կոտորածների ողջ մեղքը բարդում է գավառահայերի վրա, զոհին հատ-

1. ՀՀ Կոմիտ. ֆ. 56, գ. 14, գ. 54, թ. 25;

2. Դային տեղում, թ. 57, գ. 1, գ. 299, թ. 6:

կացնելով մեղավորի դեր: Կ.Պոլսի ռուսական դեսպանը հաղորդում է հայոց կաթողիկոսին, որ տերությունների կողմից առաջարկված բարենրոգումները հաստատվել են սուլթանի կողմից, նրանց իրազրժման համար անհրաժեշտ է, որ հեղափոխական առաջնորդները իրաժարվեն անմիտ ցույցերից, պետությունների միջամտության պատրանքներից, վերջ դնեն հուզումներին: Նելիդովը խնդրում է Խրիմյանին՝ օգտագործել իր ողջ հեղինակությունը արևմտահայերի վրա ներգործելու համար:

Դամանճան բովանդակություն ուներ կաթողիկոսին ուղղած Գորեմիկինի գրությունը, որում հաղորդվում էր մեծ տերությունների՝ հայաբնակ վիլայեթներում բարենրոգումներ իրականացնելու նախագծի, սուլթանի տված համաձայնության և հայկական գավառներից հասնող վրդովեցուցիչ լուրերի մասին՝ հայ և նուսուլման բնակչության շրջանում տեղի ունեցող այրունահեղության վերաբերյալ: «Ի Տիգրանակերտ, ի Զեյթուն, ի Կարին, հայք գորեք ամենուրեք ենյալ են դյուրող անկարգությանց... Դայթ Կովկասու համակրությամբ մեծավ վերաբերեին ապստամբ գործողության համազգայնոց յուրյանց ի Փոքր Ասիա, հայքայելով գնոսա նյութական օժանդակություն»<sup>1</sup>: Վրտաքին գործոց նախարար իշխան Լոբանով - Ռոստովսկին իր Ենթակայի միջոցով հորդորում է Խրիմյանին կոնդակով դիմել մի կողմից արևմտահայերին, որպեսզի հեռու մնան «հեղափոխական ճեօնարկներից» (այսինքն - ազատագրական շարժումներից), «Վասն կարճնան հիշյալ խռովությանց», մյուս կողմից՝ արևելահայերին, որ «անպատշաճ պաշտպանությամբ» չսատարեն արևմտահայ ազգակիցներին: Տարական արտաքին գործոց նախարարը, փաստորեն, ցանկանում էր իր ձեռքին գործիք դարձնել հայոց կաթողիկոսին, նրա միջոցով ազդել հայության երկու հատվածների վրա կարծեցյալ «հեղափոխական շարժումներից», իրականում ինքնապաշտպանական մարտերից իրաժարվելու, ազգի գոյատևումը ապահովող ելույթներից գերծ մնալու համար: Նույն ժամանակ Բ.Դուռն իր կողմից պահանջում էր պատրիարք Իզմիրյանից կոնդակով դիմել ժողովրդին, հորդորել՝ հեռու մնալ հեղափոխական շարժումներից: Պատրիարքը կտրականապես մերժում է նման առաջարկը և այդ մասին հաղորդում կաթողիկոսին. «Այդպիսի իրավեր մը շատ անիրավ պիտի ըլլար և նույնիսկ բռություն պիտի ունենար

1. ՀՀ Կրթության մասին օրենք, ֆ. 56, գ. 14, զ. 52, թ. 2:

հանիբավի թափված այնքան անմեղ արյուններուն պատասխանատվությունը գոկերու վրա բողնելու և ջարդերն կարգադրող և գործադրողները ի չքննելու հանելու աշխարհի առջև ... Զարմանք, որ այս կոնդակի պահանջ մը տարբեր ծեներով կը կրկնվի այսօր և սակայն բան մը ըըլլար վերջ տալու կոտորածոց, բռնի կրոնափոխությանց, սրբապղծությանց և անհանգստությանց, որք կշարունակվեն»<sup>2</sup>: Պատահում էին դեպքեր, երբ ցարական պաշտոնյաները, անսալով բուրք աստիճանավորների բողոքներին, արգելում էին կարուտյալների օգտին հանգանակած դրանց հանճնել ըստ պատկանելվույն, պատճառաբանելով, որ այն առաջպատճեն է հեղափոխական կոմիտեների գործունեության համար. «Ինչ ցավալի բան կինի, երբ օսմանյան կառավարության բողոքանաց վրա արգելվի Զեր վեհափառության կամ Ռուսաստանի ներազնեից իրենց ողորմութեան լուման դրկել արկածյալ արենակցաց, ինչպես որ Կարնո ռուսական հյուպատոս պարոն Մաքսիմով՝ աշուշտ, այդպիսի բողոքի հետևանոք, նույնիսկ Զեր վեհափառության իրամանով Կարնո առաջնորդին ուղարկած 2000 ռուբլի ողորմության գումարն ետ դարձուցեր է, իբրև դրան մը՝ հեղափոխության հատկացյալ»<sup>2</sup>: Իզմիրյանը խնդրում է կաթողիկոսին՝ բոլոր միջոցները ծեռք առնել, հերքել այդ մեղադրանքները և «սովորանց ժողովրդյան տրվելիք պատառ մը հաց» հասցնել: Նա առաջարկում է նաև՝ դիմել ողջ քիչտոնյա աշխարհի մարդասիրությանը, արևմտահայության գոյատևումը ապահովելու համար:

Կ.Պոլսի պատրիարքին անհանգստություն է պատճառում նաև մի այլ հանգանանք. կոտորածներից փրկված, Կ.Պոլսի փողոցներում անտեր մնացած 40.000 որբ մանուկներին միսիոններու հավաքագրում են, բացում որբանոցներ, հեռացնում իրենց ազգությունից, տալիս ապագային դաստիարակություն: Վշտանալով հանդերձ, կաթողիկոսը ցուցաբերում է լայնախոհություն՝ հեռու կրոնական նեղմությունից և անհանդուրժականությունից, համաճարդկային չափանիշներ. «Փողոցներու մեջ անտեր մնացած որբեր իրավունք ունին ժողովել այդ մարդասերներ, երբ մեր մարդասերներ պակասում և կարող չեն այդափի ահագին զոհողություն անել: Վերցուցեք այժմ կրոնի խնդիրներ, զի այժմ ոգեպահիկ հացի խնդիրն է հաղթանա-

1. ՀՀ Կրթության մասին օրենք, ֆ. 56, գ. 17, զ. 55, թ. 135:

2. Նայն տեղամ, թ. 136-137:

կող»<sup>1</sup>, պատվիրում է կաթողիկոսը պատրիարքին, նկարագրելով իր կաշկանդվածությունը և կախվածությունը ցարւուկան բյուրոկրատիայից:

Ականջալուր լինելով բազմաթիվ դիմումների, հայոց կաթողիկոսը չէր կարող անտարբեր ննալ: Նա ծեռնարկում է քազմաթիվ քայլեր, դիմում տարբեր աստիճանի ցարական պաշտոնյաների, որպեսզի ամեն տարի կատարվի համահայկական հանգանակություն, որի հայրայթած գումարներով հնարավոր կլիներ հոգալ Արևմտյան Հայաստանի մազապուրժ գաղթականների հոգսերը: Առանձնապես ուշադրություն է գրավում կաթողիկոսի դիմումը Ռուսաստանի Արտաքին գործոց նախարարության գործերի կառավարչին: Իր և ողջ հայության անունից շնորհակալություն հայտնելով վերջինին, որ նրա նախագահությամբ գումարված նիստում թույլ է տրվել «թուրքահայ տառապյալ հոտի օգտին» հանգանակություն սկսելու համար, կաթողիկոսն անում է հետաքրքիր առաջարկություններ: «Ժամանակավոր թերեւացումը չի վճռի ոչ գաղթական փախստականների բարեկեցության խնդիրը, ոչ էլ մնացածների գոյատևման հարցը, քանի որ նրանց ունեցվածքը կոտորածների ժամանակ հափշտակվում է նույունմանների կողմից»<sup>2</sup>:

Գաղթականների վիճակն անընդհատ վատթարանում է, որովհետև անհնարին է դառնում նրանց վերադարձը հայրենի եզերք: Այդ հանգամանքը, ըստ Խրիմյանի, բացասաբար կանդրադառնա Ռուսաստանի Արևելյան քաղաքականության ապագայի վրա, քանի որ նա կկորցնի իր ամենահավատարին հենարանը Փոքր Ասիայում: «Ռուսաստանին սահմանակից վայրերում՝ Արևմտյան Հայաստանում բնակվող միակ քրիստոնյա ժողովրդի վերջնական բնաջնջումը կամ թվաքանակի նվազումը կարող է ունենալ վտանգավոր հետևանքներ: Զերդ գերազանցությունը, ավելի քան որևէ մեկը, կարող է ծշգրիտ որոշել այն հնարավոր հետևանքները, եթե Ռուսաստանի սահմանակից նահանգները վերածվեն նույունմանական և եվրոպական գաղութարարների հետ խառը բնակչության»<sup>3</sup>: Կաթողիկոսն առաջարկում էր առաջին հերթին բարենորոգումներն իրականացնել այդ նահանգներում, բարելավել քրիստոնյա բնակչության հողօգտագործման եղա-

1. Գ.Աթ, Խրիմյանի թ., գ. 26:

2. ՀՀ Կողման, թ. 56, ց. 14, գ. 52, թ. 7:

3. Խայր անդամ:

## Մերժի ԽՐԻՍՏՅԱՆ Հասարակական-քաղաքական գործունեությունը

նակը, հաստատել առնվազն երկու կամ երեքամյա ժամկետ, որի ընթացքում գաղթականները պահպանում են սեփականատիրական իրավունքները հողի և ունեցվածքի նկատմամբ, մինչև հնարավոր դառնա նրանց վերադարձը հայրենի օջախներ: Արևմտյան Հայաստանի կյանքի քաջ իմացությունը իրավունք էր տալիս կաթողիկոսին պնդել, որ Բ.Դուան բարենորոգումների ծրագիրը կմնա մեռած տառ, եթե դրանք իրագործվեն թուրք պաշտոնյանների կողմից: Նա բարենորոգումների իրականցումը կապում էր ռուսական բանակի բարձրաստիճան սպայական կազմի վերահսկողության հետ, ճանավանդ մեծ տերությունների հյուպատոսների խիստ անբավարար քանակի դեպքում: «Ռուս սպանների մեջ կամ բազմաթիվ անձնավորություններ, որոնք քաջ գիտակ են տեղական պայմաններին և փորձառություն ունեն ասիական ժողովուրդների կառավարման մեջ: Ցանկալի կլիներ, որ հայկական նահանգների նահանգապետերը նշանակվեն եվրոպական պետությունների համաձայնությամբ հինգ տարուց ոչ պակաս ժամկետով»<sup>1</sup>: Օգտվելով ռուս աստիճանավորին դիմելու պատեհությունից, Խրիմյանը նրա ուշադրությունը իրավունք է մի այլ կարևոր հարցի վրա ևս: Նա տեղյակ էր, որ Թուրքիան ցանկանում է վերաքննել (ինա՞ վերացնել) 1863 -ին հաստատված արևմտահայ ազգային սահմանադրությունը, այդ պատճառով նա ռուս աստիճանավորին մատնանշում է այդ սահմանադրության 60 և 61 -րդ հոդվածները, որոնք վերաբերում են արևմտահայերի մասնակցությանը Եջմիածնի կաթողիկոսական ընտրություններին: Ըստ Խրիմյանի, այդ հոդվածները չեն համապատասխանում ոչ Ռուսաստանի կողմից հաստատված հայ երեխեցու կանոնադրությանը, ոչ էլ հայ եկեղեցու և ժողովրդի շահերին ընդհանրապես: Հայոց եկեղեցու կանոնակարգով նախատեսված էր կաթողիկոսի ընտրությունը կազմակերպել Եջմիածնի Մայր տաճարում՝ հայկական յուրաքանչյուր հոգևոր թեմից ընտրված երկու պատգամավորների (կրոնական և աշխարհիկ) մասնակցությամբ: Արևելյան թեմերը յուրաքանչյուրն ընտրում էին իրենց պատվիրակներին, իսկ արևմտահայ թեմերի իրավունքը ուժնահարվում էր. Կ.Պոլսի ազգային ժողովը դառնում էր ողջ արևմտահայության կամքի արտահայտիչ և Եջմիածնի ճանապարհում միայն երկու պատվիրակ: Արևմտյան Հայաստանի թեմերը, փաստորեն, գրկվում

1. ՀՀ Կողման, թ. 56, ց. 14, գ. 52, թ. 8-9:

Ին իրենց կամքն արտահայտելու իրավունքից: Խրիմյանի ընտրության ժամանակ ռուս պետական գործիչների բանակցությունների հետևանքով արևմտահայ բոլոր թեմերը մասնակցեցին կաթողիկոսական ընտրություններին, բայց կաթողիկոսն աշխատում էր այդ հանգամանքը հաստատել հայ եկեղեցու կանոնակարգով, բանակցություններ վարել Բ.Դուռ հետ՝ փոփոխելու արևմտահայ սահմանադրության 60 և 61 -րդ հոդվածները. «Դարկ է պարտավոր Բ.Դուռն, զի մի լիցի խոչընդուռն պատգամավորաց առ ի լցուցանել զպարտիս յուրյանց առաջիկա գտանելու ի ժողովի Ս. Էջմիածնի, վասն ընտրելու զկաթողիկոսն, զի այս իրավունք վավերացյալ է իմիջիայլոց և 62-րդ հոդվածովն դաշնադրությանն Բեռլինի»<sup>1</sup>: Անենայն հայոց կաթողիկոսի կապը, ազդեցությունը և հեղինակությունը արևմտահայ թեմերի հետ ուժեղացնելու և բարձրացնելու նպատակով, վեհափառն առաջարկում էր՝ կաթողիկոսին վերապահել նաև արևմտահայերի ամուսնական և հոգևորդատական գործերը լուծելու իրավունքը: Նա համոզված էր, որ «Զանք Դրանն ուղղեալ են ի քակտումն հոդս միության, որ շաղկապէ գիտն մեր արռողջություն Ս. Գրիգորի և ի ջլատումն առհասարակ հեղինակության եկեղեցվո»: Քանի որ Բ.Դուռը Արևմտյան Հայաստանի հոգևոր առաջնորդների մի պատկառելի խնճի կանչել էր Պոլիս և պահում էր իր վերահսկողության տակ, կաթողիկոսը բանակցություններ էր վարում Ռուսաստանի արտաքին գործոց նախարարության գործերի կառավարչի հետ՝ բացակայող եպիսկոպոսների փոխարեն Էջմիածնից Արևմտյան Հայաստան ուղարկել ուրիշ հոգևոր գործիչների: Բանակցությունների արդյունքը մեզ հայտնի չէ, արխիվային փաստաթղթերը բացակայում են<sup>2</sup>:

Արևմտահայ գաղթականները կաթողիկոսի ամենօրյա հոգածության առարկան են: Էջմիածնի մայր տաճարի սեղանատունը, Պարսկաստանից Հայաստան ծգվող ճանապարհին գտնվող վանքերի վանահայրերը հատուկ հրահանգ են ստանում կաթողիկոսից՝ պատսպարել գաղթականներին, հոգալ նրանց օթևանի և սնունդի հոգերը: Կովկասի հայկական վանքերն ու եկեղեցիները, նրանց կից հոգաբարձությունները սերտ հարաբերություններ էին պաշտպանում վեհափա-

1. ՀՀ ԿռՊԱ, ֆ. 56, գ. 14, զ. 52, թ. 5:

2. Սեկ դար ամբ 1995-ի ապրիլին կաթողիկոսական բնարարությունների ժամանակ բարբառական արգելեց աշխարհիկ պատզամավորների զարաւոր Էջմիածնի: Խրիմյանի հետագա հայութը նայում էր դեպի ասպամ:

ով հետ և կատարում էին նրա բոլոր հանձնարարությունները: Վիճակը այլ էր Պարսկաստանի սահմանագլխին գտնվող համեմատաբար աղքատ վանքերում: Այդ վանահայրերին Խրիմյանը մշտապես ուղարկում էր որոշակի գումար՝ հրահանգելով դրանով հոգալ գաղթականների հոգերը: Դատուկ հրահանգով Դովիհաննես վարդապետ Բագունին ուղարկում է Ս. Թադէի վանքի վանահայր: Խրիմյանը պատվիրում է վանահայրը. «Ուշադրություն դարձնել ժողովրդյան զարգացման և բարոյական դաստիարակության, որպես և նոցա պաշտպանության ընդունակ ամենայն զրկանաց և կամայական պահանջմանց պարսիկ տիրապետողաց: ...Զնոռանաք աշխատել ամեն կերպ, որ գաղթականներ այլևս այս կամ այն կողմ չանցնին, զի շատ թշվառ վիճակի պիտի հանդիպեն և ամեն կերպով զուրկ պիտի մնան միխթարութենե»<sup>1</sup>: Սակայն վանահայրը թերանում է իր պարտականությունների մեջ, դրսկորում քրիստոնյա վանահորը ոչ վայել վերաբերմունք գաղթականների նկատմամբ: Նրանց հյուրընկալելու և օթևան տալու փոխարեն, պարսից սարբազների օգնությամբ զաղթականներին վանքից դուրս է հանում: Այդ մասին իմանում է վեհափառ հայրապետը և անձանք նամակ է գրում խոտորյալ վարդապետին, պարսպուն նրա այդ ընթացքը. «Այժմ բացարձակ հրաման կուտամ Ձեզ, որ հանված գաղթականները պետք է տեղափորվեն վանուց մեջ, մինչև գարնան նոցա համար ուրիշ տնօրինություն կլինի»<sup>2</sup>: Խրիմյանը զայրանում է, որ վանահայրը չարաչար է գործադրել իր վստահությունը և գգուշացնում, որ այդ ընթացքի համար նրան կիեռացնի վանահայրության պատասխանատու պաշտոնից: Ուղարկելով պատկառելի մի գումար, նա պատվիրում է Դովիհաննես Բագունուն՝ ետ կանչել արտաքսված գաղթականներին, խոստանալով հանգանակել և վանահոր ծեռքը հասցնել նոր գումարներ և վանքի վերաշինության, և գաղթականների հոգեւերը հոգալու համար: Արխիվային փաստաթղթերը պերճախոս վկայություն են, որ վերոհիշյալ վանահայրը երկար ժամանակ շարունակում էր մնալ կաթողիկոսի ուշադրության կենտրոնում, առավելապես գաղթականների կացությունը փոքր ինչ բարելավելու համար:

1. ՀՀ ԿռՊԱ, ֆ. 56, գ. 14, զ. 52, թ. 5:

2. Նույն տեղում, թ. 1:

\* \* \*

Կոտորածներից մագապուրծ արևմտահայության օգնելու, քաղաքակիրթ աշխարհի ուշադրությունը Բ.Ռուս վարած հակահայկական քաղաքականության վրա իրավիրելու նպատակով եռամդուն գործունեություն է ծավալում ամենայն հայոց կաթողիկոսության պաշտոնական օրգան «Արարատ» ամսագիրը, որի բովանդակության փոփոխությունը Խորհմանի կաթողիկոս օծվելուց հետո ակներև է դառնում, երբ համեմատում ենք ամսագրի բովանդակությունը նախընթաց շրջանի հետ: Չուտ կրոնական բովանդակություն ունեցող ամսագիրը, իր հիմնական գործը կատարելուց բացի, բարձրացնում էր ժամանակի հասարակական հմտելության հարցեր: Կարևոր տեղ է գրավում կաթողիկոսի գործունեության լուսաբանումը սովորական օգնություն հասցնելու գործում: «Մուրճի» խմբագիր Ավ. Արասիսանյանը գոհունակությամբ նշում է, որ Մկրտիչ Խորհմանը հայ կաթողիկոսներից առաջինն էր, որ հաշվետվություն էր տալիս ժողովրդին, թե հանգանակած գումարները և նվիրատվությունները ինչպես են օգտագործվել: 1894, 95 և 96 թվերի ողջ ընթացքում «Արարատը» շարունակում էր հրատարակել հայ նվիրատունների ցուցակը, հայրապետական օրինությունն էր հաղորդում ժողովրդին օգնող անձանց, պատմում Մայր Աքռորդ Նորին վեհափառության կողմից նշանակված հանճնաժողովի ծավալած գործունեության, սովորական օգնություն հասցնելու մասին<sup>2</sup>:

Առանձնապես հետաքրքիր են արևմտահայության վիճակը նկարագրող հոդվածները, արևմտահայ հոգևորականների կրած տառապանքների նկարագրությունները, նրանց գործունեության վերիանումը: Ամսագիրը հոդվածներ է նվիրում Սասունի ինքնապաշտպանական նարտերին, նրան մասնակից հայ հայրենասեր հոգևորականներին, նշում, որ կաթողիկոսական դիվանը լի է պաշտոնական գեկուցագործությունը: Հրատարակված նյութերում բացահայտվում է ռուսական պետության այդ շրջանի հայամետ քաղաքականությունը: Ամսագիրն արտատպում է ռուսական եկեղեցական նախուլում տպված հոդվածները հայ եկեղեցու, մասնավորապես Թուրքիայի տիրապետության տակ գտնվող եկեղեցիների և հոգևորականների իրավիճակի մասին:

1. Մուրճ, 1894, N 3, էջ 488:

2. Արարատ, 1894, N 6, էջ 169-170:

«Եկեղեցական համբավաբեր» («Церковный вестник») ամսագիրը գրեթե ամեն ամիս բողոքի իր ծայնն է բարձրացնում արևմտահայերի կոտորածների արիթով: «Տաճիկների և քրիստոնյաների թշնամության պատճառները օսմանյան տերության մեջ»<sup>1</sup> խորագիրը կրող հոդվածը քննարկում է արևմտահայ ժողովրդի կացության հարցերը 19-րդ դարասկզբից, անդրադառնում բուրքական կայսրության եվրոպականացման ճիգերին, արևմտահայերի կացությանը Ղրիմի պատերազմի և 1877-78 թթ. ռուս-բուրքական պատերազմի ժամանակ, անդրադառնում է նաև դարի վերջին տասնամյակում սանձազերծած կոտորածներին: Ռուսական հոգևոր մանուլը հոդվածներ է տպում նաև եվրոպական քոյլը Եկեղեցիների ծավալած հայանպատ գործունեության վերաբերյալ և իր վերաբերմունքն է արտահայտում: 1896 թ. ապրիլին «Արարատը» արտատպում է նույն թվի «Церковный вестник»-ի N 11-ից մի հոդված, որի ռուս հեղինակը պատմում է Անգլիայում հօգուտ հայերի գործող մի հոգևորական հանձնաժողովի մասին, որը կոչով դիմել էր ողջ աշխարհի քրիստոնյաներին՝ «առանց դավանանքի խտրության աղոթել հայոց համար», կազմելով և եվրոպական բոլոր լեզուներով թարգմանելով այդ աղոթքի տեքստը, ուղարկելով այն բոլոր Եկեղեցիներին և համայնքներին: Ռուս հոդվածագիրը շատ տեղին քննադադար է այդ վարվելակերպը, իրավացիորեն նշելով, որ անգլիացիները աղոթելուց առաջ պետք է իշխեն, թե ինչպես իրենց քաղաքական առաջնորդները բեղինի կոնգրեսից առաջ անգլո-բուրքական պայմանագրով վիճեցրին Ման Ստեֆանոյի դաշնագրի հայկական հարցին վերաբերող հոդվածների իրականացումը և անգլո-ռուս մրցակցության պատճառով Անգլիան «Եսական քաղաքականությամբ քանից մեծ ազատման գործի արգասիքը»<sup>2</sup>: «Արարատը» ուներ «Եկեղեցական քրոնիկոն» բաժինը, ուր քննարկում էր այլ հոգևոր օրգաններից Հայաստանին և հայ եկեղեցուն վերաբերող նյութերը: Այդ առումով ուշագրավ է Արևմտյան Հայաստանում գործունեություն ծավալած գերմանացի պաստոր Ռոդենի հոդվածը, որը «Christlich Welt» թերթում քննադադար է Գերմանիային և եվրոպական մյուս պետություններին հայկական կոտորածների նկատմամբ ցուցաբերած անտարբերության, հայերին ապստանքություն բարձրացնելու մեջ մեղադրելու համար: Պատորը առանց երկնչելու ժամանում

1. Արարատ, 1894, N 10, էջ 383-384:

2. Նոյմ տեղամ, 1896, N 4, էջ 167-168:

է այդ բոլորը. «Աննշան թվով մարդիկ, հետին ծայրահեղության մեջ, ճարահասոյալ գենք են ծեռք ծգել ինքնապաշտպանության համար, նոքա նիայն անմեղ զոհեր են եղել և մի ընդհանուր հեղափոխության կամ ապստամբության մասին խոսք լինել չի կարող: ...Եվրոպական պետությունները, Գերմանիան ամենից առաջ Բեռլինի դաշնադրության 61-րդ հոդվածը ամոթալի կերպով խախտել են»<sup>1</sup>:

1895 -ի վերջերից «Արարատը» անընդմեջ լուրեր է տպում արևմտահայության իրավիճակի վերաբերյալ: Փետրվար ամսվա (1896) խմբագրական հոդվածում գովեստի արտահայտություններ են հնչում արևմտահայ հոգևորականների տոկունության և անվեհերության մասին: Բարձր գնահատականի է արժանանում Կ.Պոլսի հայոց պատրիարք Մատթեոս Իզմիրլյանը, որ քաջ հովիվ հանդիսացավ իր հոտին, արժանացավ ամենից համակրանաց և «Հայրապետական առողից «քաջարթուն» մականվան»<sup>2</sup>:

Անսագրում իրար են հաջորդում տարբեր վայրերից ստացված հոգևոր առաջնորդների գեկուցագրերը կոտորածների մասին: Ուշագրավ է այն փաստը, որ ամսագիրը առանձնահատուկ վերաբերմունք է ցուցաբերում ժողովրդի կազմակերպած ինքնապաշտպանական մարտերի նկատմամբ, գովեստով նշում, որ այդ վայրերում հայությունը ոչ թե հլու-հնագան կոտորվել է, այլ բարձր է պահել իր նարդկային արժանապատվությունը: Այդ իրադարձությունների մասին լուրերի հրատարակությունը ինքնանպատակ չէր. վավերագրեր հրատարակելուց առաջ ամսագրի խմբագրությունը նշում է, որ դրա նպատակն է ապագայի պատմաբաններին օգնել շարադրելու դարավերջի հայոց պատմությունը, անմահացնելով այն հերոսների և նահատակների անունները, ովքեր զոհվեցին հանուն ազգի և եկեղեցու<sup>3</sup>: Նույն համարում լույս է տեսնում Վանի ինքնապաշտպանական մարտերի և կոտորածների մասին հեռագրի գույժը, իսկ երկու ամիս անց՝ օգոստոսին արտասպակում է ռուսական «Հօօօտի» լրագրի «Ականատեսի» պատմածը ծավալուն նյութը: Վանի ինքնապաշտպանական մարտերին ամսագիրն անդրադառնում է մի քանի անգամ. հունիս, օգոստոս, նոյեմբեր, դեկտեմբեր ամիսներին՝ տարբեր հոդվածներով, տարբեր նկատառումներով, բայց ամեն դեպքում ընդգծվում է նույն

1. Արարատ, 1896, N 4, էջ 368:

2. Նայեն անդամ, 1896, N 2, էջ 87:

3. Նայեն անդամ, N 6, էջ 286:

միտքը, «Եթե չլիներ ընդդիմությունը, երբեք տարակոյս չկա, որ բոլոր Վանա ժողովուրդը հոռեգույն կերպով վիճակակից պիտի լիներ Հայկավանքի և գյուղերու ու գավառներու ժողովրդյան»<sup>4</sup>: Խմբագրականներուն առանց ավելորդության շեշտվում է. «Անենայն ծնշում ընդդիմություն է առաջ բերում, ամենայն հալածանք՝ ապստամբություն է ծնեցնում»<sup>5</sup>: Խմբագրականներից բացի ամսագիրը լույս է ընծայում վավերագրեր՝ արևմտահայերի կոտորածների և ինքնապաշտպանական մարտերի մասին: Յամենատելով հրատարակված վավերագրերը ՇՇ ԿՊԿԱ -ի տարբեր ֆոնդերում մեզ հասած վավերագրերի հետ, պարզում ենք, որ դրանք Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերի հոգևոր առաջնորդների գեկուցագրերն են՝ ուղղված ամենայն հայոց կաթողիկոսին, որի հանձնարարությամբ էլ հրատարակվում էին այդ նյութերը: Լավ ճանաչելով կաթողիկոսի ըմբռատ ոգին, տեղի հոգևոր առաջնորդները առանձնահատուկ գովեստով պատմում են ինքնապաշտպանական մարտերի, թշնամուն դիմակայող հերոսների սիրանքների մասին: Այսպես, Եդեսիայից ոչ հեռու Կարմունճ գյուղի հայ քաջերը «կրցած են դիմադրել իրենց վրա 4-5 անգամ հարձակում ընող զորաց և բարբարոս թուրքերու»<sup>6</sup>:

Գովեստով է պատմվում նաև Արարեկիրի թեմի Ծագ գյուղի մի հայ երիտասարդի մասին, որին հաջողվում է միայնակ, ընդամենը մի հրացանով պաշտպանել և ապահովել գյուղի բնակիչների նահանջը<sup>7</sup>: Տոկուն ընդդիմության համար գովեստով են հիշատակվում Վասպուրականի Հայոց Զոր գավառի Ննդստան գյուղի բնակիչները, որոնք 2-3 օր հետ են մղում թուրք և քուրդ հրոսակներին, միայն խարեւությամբ նրանք հանձնվում են և կոտորվում<sup>8</sup>: Առանձնապես ուժեղ էր ընդդիմությունը Շատախի գավառի կենտրոն Թաղ գյուղաքաղաքում: Յարձակվոր թուրքերը կասկածում են, թե ինքնապաշտպանների մեջ կան փանփուշտավոր հրացաններ ունեցող օտարահպատակներ (իմա՝ արևելահայեր), սակայն պարզվում է, որ դիմադրուները բոլորը տեղացիներ են, որոնք զգալով վերահաս աղետը, գերադասում են պատվավոր մահը և գենքը ձեռքին, համախմբվելով մի ընդարձակ տան

1. Արարատ, 1896 թ., N 11, էջ 530:

2. Նայեն անդամ, N 9, էջ 418:

3. Նայեն անդամ, N 6, էջ 290:

4. Նայեն անդամ, N 7, էջ 333:

5. Նայեն անդամ, N 12, էջ 583:

մեջ, պաշտպանվում են երկար ժամանակ: Ամեն անգամ նման նկարագրություններից հետո, տեղեկագրերի հեղինակներն ավելացնում էին, որ ինքնապաշտպանների շնորհիվ զոհվածների թիվը համեմատաբար փոքր է<sup>1</sup>: Կաթողիկոսի հանձնարարությամբ «Արարատը» լուրիեր է հրապարակում Կ.Պոլսի հայոց պատրիարք Իզմիրլյանի մասին: Վերջինիս նամակներից Խրիմյանը տեղեկանում է, թե ինչ անելանելի պայմանների մեջ է ինքը և Ազգային ժողովը, որը Բ.Ռուս հրամանով դադարել է նիստեր գումարելուց: Իզմիրլյանը սերտ նամակագրական կապ է պահպանում կաթողիկոսի հետ, խնդրում նրա օգնությունը՝ թալանված ու պղծված արևմտահայ եկեղեցիներին: Մկրտիչ Խրիմյանը ամսագրի միջոցով դիմում է և արևելահայությանը, և գաղթաշխարի մեծահարուստներին՝ օգնության ծեռք մեկնել արևմտահայ եկեղեցիներին, ուղարկել հոգևոր գրականություն, եկեղեցական անորներ և սրբազն մասունքներ, գումար հատկացնել ավերված եկեղեցիների վերակառուցման համար: Կաթողիկոսն ինքը տալիս է առաջին օրինակը՝ Մայր Աթոռից ուղարկում է պահանջված իրերը:

Կոտորածների ժամանակ մահմերական մոլեռանդ ամբոխի առաջին հարվածն իր վրա է կրում հայ հոգևորականությունը, որոնցից փրկվածները բռնի կրոնափոխ էին արվում: Նրանց թիվն այնքան մեծ էր, որ հավատափոխ քահանաների՝ վերստին իրենց հավատին դառնալու խնդիրը դառնում է օրակարգի հարց: Պատրիարքի հարցապնդմանը Խրիմյանը տալիս է հատու պատասխան, հեռագրում պատրիարքին՝ տեղում անել անհրաժեշտ կարգադրություն<sup>2</sup>:

Կունտահայ գավառի հոգևոր առաջնորդների մեծ մասը իրեն աքսորական գտնվում է Կ.Պոլսում, թափուր է Կիլիկիայի կաթողիկոսական գահը, որովհետև Բ.Ռուսը չի վավերացնում կաթողիկոս ընտրված, իր համար քաղաքականապես անբարեհույս Գրիգորիս Ալեաքայանի ընտրությունը: Պատրիարքը խնդրում է կաթողիկոսի միջամտությունը<sup>3</sup>: Աստիճանաբար սեղմվում է պատրիարքի գործունեության ոլորտը: Բ.Ռուսը ամեն ինչ անում էր, որպեսզի պատրիարքը ստիպված հրաժարական տար: Ինչքան հնարավոր է, դիմադրում է Իզմիրլյանը, սերտ հարաբերություններ է հաստատում Կ.Պոլսի մեծ տերությունների դեսպանների հետ, հաճախակի դիմում նրանց օգնությա-

1. Արարատ, 1896, N 8, էջ 382:

2. Նային տեղում, N 3, էջ 140:

3. ՀՀ Կողման, ֆ. 56, գ. 17, զ. 74, թ. 4-5:

նը, բայց երբ զգաց, որ այլև անհնարին է որևէ արդյունքի հասնել, հրաժարական ներկայացրեց Բ.Ռուսը: Թուրքական կառավարությունը շտապեց ընդունել նրա հրաժարականը, մտադրվելով աքսորել նրան Տրիպոլի: Մեծ տերությունների դեսպանների խորհրդով նա ետ կանգնեց այդ քայլից: «Արարատը» այդ ամենի մասին հաղորդում է իր ընթերցողներին, ավելացնելով, որ թուրք կառավարությունը, վերացնելով հայոց ազգային սահմանադրությունը, արգելում է կատարել պատրիարքական ընտրություն: Սուլթանական իրադեմ համապատասխան նի քանի հայազգի պաշտոնյաներ, Չովհաննես Նուրյանի գլխավորությամբ, ընտրում են պատրիարքական տեղապահ: «Չափատարմահպատակ» հայերից կազմված այդ ժողովը տեղապահ ընտրեց Բարդուղիմեոս Եպիսկոպոս Չամիչյանին<sup>1</sup>: Սուլթանը անմիջապես վավերացրեց նրա ընտրությունը: Ծնորհակալական ճարի ժամանակ հաճոյակատար Եպիսկոպոսը հայտնեց, որ ինքը սուլթանի ստրուկն է և իր համար «թե այս և թե այն կյանքում միակ երջանկությունը սուլթանին ծառայելն է և հայոց միակ ապաստարանը երկրի վրա սուլթանի գահն է»<sup>2</sup>: «Արարատը» արգահատանքով է խոսում այդ մասին, նշում, որ հայ Եպիսկոպոսը քծնանքով համբուրում է իր ազգակիցներին կոտորող ծեռքը: Կրոնական ամսագիրը հայենադավ և ազգուրաց Եպիսկոպոսին սպառնում էր հանդերձյալ կյանքի, ահեղ դատաստանի և դժոխքի պատիժներով:

\* \* \*

Խրիմյանի կաթողիկոսության ժամանակաշրջանը հարուստ էր տագնապալի իրադարձություններով ոչ միայն արևմտահայերի, այլև արևելահայերի համար: Ազգային-ազատագրական շարժումներն անհամգություն էին առաջացնում ոչ միայն սուլթանական պետական գործիչների, այլև ցարական բարձրաստիճան պաշտոնյաների մոտ: 1890-ականների վերջին առավել ընդգծվեց ցարիզնի հակահայկական քաղաքականությունը:

Շարունակվում և ավարտին է հասցվում Մակար կաթողիկոսի օրոք սկսված պետական հալածանքը հայկական դպրոցների նկատմամբ:

1. 1869-72pp. Բարբառիմեսս Չամիչյանը Բրատևայի Խօնար առաջնորդն էր, նրա վեճ Խանդուն պայքար էր մղամ ժամանակի պատրիարք Մկրտիչ Խրիմյանը և նրան պաաստանատվարաց էր կանչում Ազգային ժողովի առաջ:

2. Արարատ, 1896թ., N 8, էջ 381:

Ցարական բյուրոկրատիային խիստ անհանգստացնում էր, որ հայ եկեղեցական ծխական դպրոցները ազգային ինքնագիտակցության արմատավորողներն են, հայկական «սեպարատիզմի և հեղափոխության» օջախները:

1895-ին Կովկասի քաղաքական մասի կառավարչապետ Շերեմետ-կը առաջարկություններ ներկայացրեց ցարական արքունիքին հայկական դպրոցները Եջմիածնի ենթակայությունից հանելու և Կովկասի ուսումնական վարչության տնօրինությանը հանձնելու մասին<sup>1</sup>: Մկրտիչ Խրիմյանը խնդրեց երկարաձգել ուսուցական ցենզի ժամկետը և մերժվեց: Ընդունվեց Շերեմետկի առաջարկը՝ այն հայկական դպրոցները, որոնք չեն պահպում եկեղեցու ծահսերով, ենթարկել Կովկասի ուսումնական մասի վարչությանը: Կառավարչապետի օգնական Տատիշչեկ կաթողիկոսին տեղեկացրեց մերժման պատճառը. «Դայկական դպրոցների մեծամասնությունը պահպում են ...հասարակական հանգանակությունների, բարեգործական ընկերությունների նպաստների և այլ աղբյուրների հաշվին»<sup>2</sup>: Իրադարձությունների ընթացքի մասին «Արարատը» հաղորդում է ընթերցողներին. «Դիմնված այն տեղեկությունների վրա, որ ոստիկանությունը հավաքել է անցյալ տարի մեր դպրոցների պահպանության աղբյուրների մասին, նորին վեհափառությանն առաջարկվեցավ 168 դպրոց հանձնել Կովկասյան ուսումնական վարչությանը, առարկությանը, թե այդ դպրոցները պահպանվում են ի հաշիվ հասարակության և ոչ եկեղեցու»<sup>3</sup>: Այդ հարցով հայոց հայրապետը երկու անգամ դիմեց ներքին գործերի նախարար Գորեմիկինին: Այդ գրություններում Խրիմյանը հաստատում էր դպրոցի նկատմամար ունեցած եկեղեցու իրավունքները: Ցարական աստիճանավորները 168 դպրոցի ցուցակի մեջ էին մտցրել նաև այնպիսի դպրոցներ, որոնք պահպում էին բացառապես եկեղեցու միջոցներով, դրանց շարքում նույնիսկ Վաղարշապատի ծխական դպրոցը: Այն հանգամանքը, որ նշված բոլոր դպրոցները գտնվում էին հայ եկեղեցուն պատկանող շենքերուն, իրավունք էին տալիս Խրիմյանին դրանք համարել եկեղեցական դպրոցներ: Մինչ կաթողիկոսն սպասում էր իր դիմումների պատասխանին, իշխանությունները ծեռնամուխ եղան ցարական իրամանի իրագործմանը: Վերը նշված 168 դպրոցից բացի

1. Վ. Երկամյան, Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրեյիստան, էջ 198:

2. ՀՀ ՊՐԻՎ. ք. 56. գ. 3. գ. 1999, թ. 14:

3. Արարատ, 1896, Ն 1. էջ 39-40:

տեղերի ոստիկանական վարչությունների կարգադրությամբ փակվում են բազմաթիվ այլ դպրոցներ: Մինչ այդ նրանք հրահանգ էին ստացել հայտնաբերել ցուցակից բացի այլ դպրոցներ: Իրեւ պատասխան քայլ կաթողիկոսը պատվիրում է թեմերին՝ ոչ մի դպրոց չիանձնել ուսումնական վարչությանը, ծգրիտ տվյալներ հավաքել դպրոցների թվի և նրանց կատարած ծախսերի, պահպող միջոցների մասին: 1896 թ. փետրվարի 10 -ի կոնդակով կաթողիկոսը հրահանգեց կազմել փակված դպրոցների, նրանց պատկանող գույքերի ցուցակները, մանրանասն տեղեկագրեր կազմել նրանց գոյության միջոցների մասին: Շարունակվեցին բանակցությունները ցարական արքունիքի հետ: Նիկոլայ 2 -րդի թագադրության հանդեսին ներկա լինելու հատուկ իրավեր ստացած Աստրախանի հոգևոր առաջնորդ Արիստակես Սեղրակյանին Խրիմյանը հրահանգեց իր անունից բանակցություններ վարել ներքին գործոց նախարարի հետ դպրոցական խնդիրների վերաբերյալ<sup>1</sup>: Բանակցությունները արդյունք չտվին: Օտար դավանությունների հոգևոր դեպարտամենտի դիրեկտոր Մոսալովը տվեց մերժողական պատասխան, որոշակիորեն հայտնելով, որ փակված եկեղեցական դպրոցները նոր ուսումնական տարում՝ սեպտեմբերին չպետք է վերաբացվեն: Արիստակես Սեղրակյանն շտապեց այդ լուրը հեռագրել կաթողիկոսին<sup>2</sup>:

Դակահայկական հալածանքները առավել խստացան, եթե Կովկասի կառավարչապետ նշանակվեց իշխան Գոլիցինը: Կաթողիկոսության պաշտոնական օրգան «Արարատը», որ միշտ ազատ էր եղել գրաքննությունից, 1897 թ. սեպտեմբերից ընկավ գրաքննության զսպաշափիկի մեջ: Ամսագրի տիտղոսաթերթին սովորականի նման գրվող «Դրամանաւ ամենայն հայոց կաթողիկոսի» արտահայտությունը փոխարինվեց «Թույլատրվում է գրաքննության կազմից» (ձօզօլեն պեհցորօն) արտահայտությամբ: Ամսագրում հրատարակվող հոդվածները դարձան խիստ գգույշ և երկշուտ: Նույնիսկ հարկ եղած տեղեկատվությունը ամբողջությամբ չէր հասնում ընթերցողներին: Դադարեցին Արևմտյան Զայաստանի և արևմտահայ ժողովորդի ողբերգական կացության վերաբերյալ հոդվածների հրատարակությունը: Խոսք չկար այլևս ինքնապաշտպանական մարտերի մասին: Արևմտյան Զայաստանին վերաբերող հոդվածները փոխարինվում են Կ. Պոլ-

1. Արարատ, 1896, Ն 3. էջ 133:

2. Նոյյան անդամութ, Ն 4. էջ 191:

սի հայոց պատրիարքի գործունեության թռուցիկ վկայություններով։ Այդ ընթացքում Գոլիցինը մի քանի անգամ եղավ Մայր Աթոռում, բանակցություններ վարեց կաթողիկոսի հետ<sup>1</sup>։ Խրիմյանն, անտես առնելով տարվա եղանակները, մի քանի անգամ՝ թե ձմեռվա սառնամանիքին և թե ամռան տապին մեկնեց Թիֆլիս, հանդիպումներ ունենալու կառավարչապետի և նրա օգնականների հետ։ Սակայն անսագրից հնարավոր չէր ոչ մի տեղեկություն ստանալ հանդիպումների արդյունքների մասին։ Ցարական գրաքննիչը թույլ էր տալիս միայն նշել, որ էջմիածին է ժամանել Կովկասի կառավարչապետը, կամ Թիֆլիս է ուղևորվել ամենայն հայոց կաթողիկոսը։

1897 թ. հունիսի 2 -ին ցարը հաստատեց Պետական խորհրդի որոշումը հայկական եկեղեցական դպրոցները ժողովրդական լուսավորության տնօրինության հանձնելու մասին<sup>2</sup>։ Դրանով հայկական դպրոցները կորցնում էին իրենց ազգային դիմագիծը, որովհետև հայերեն էին դասավանդվելու միայն կրոնն ու հայոց լեզուն, իսկ մյուս առարկաների դասավանդումը կատարվելու էր ռուսերենով։ Կաթողիկոսը ոչ մի կարգադրություն չարեց, իսկ տեղական դպրոցները պետության ներկայացուցիչներին տվեցին խուսափողական պատասխան։ Գոլիցինի թափած ջանքերը չտվին սպասված արդյունքը, թեև փակված հայկական դպրոցների փոխարեն ոչ մի նոր դպրոց չբացվեց։ Կաթողիկոսը չէր կարող հաշտվել նման իրավիճակի հետ։ Նա շարունակեց բանակցությունները։ 1898 թ. հունվարին «Արարատը» հայտնում է ընթերցողներին, որ 1897 թ. դեկտեմբերի 24-ին «Վեհափառ հայրապետը կարևոր գործերի մասին» մեկնեց Թիֆլիս։ Մեկնելուց առաջ նա հանդիպում է ունենում Մայր Աթոռի միաբանության հետ և խմբայլոց նկատում՝ «Յուր բազմահեղ կյանքի ընթացքում շատ անգամ առիթ է եղել հատկապես տարվա այս անպատճի եղանակին ճանապարհորդելու, բայց ինքը, ինչպես ամեն անգամ, այս անգամ ևս հոժարությամբ հպատակվում է նախախնամության կամքին և այս դժվարին ուղեգնացությունը հանձն է առնում դեպի Ս. Եկեղեցին և իր սիրեցյալ հոտն ունեցած պարտքը վճարելու ձգտումով»<sup>3</sup>։ Թիֆլիսում կաթողիկոսը մնաց ամսից ավելի և մի քանի հանդիպումներ ունեցավ Գոլիցինի, նրա օգնական գեներալ Ֆրեյզեի, Կովկասի ու-

1. Արարատ. 1897, N 9-10, էջ 439-441։

2. Վ. Երկամյան, նշլ. աշխ., էջ 207։

3. Արարատ. 1898, N 1, էջ 34։

սումնական նաև գլխավոր խորհրդական Յանովսկու հետ։ Անսագիրը տեղեկություն է հաղորդում այդ հանդիպումների մասին, սակայն զանց առնելով բովանդակային կողմը, նշում միայն, թե որ հանդիպումը ինչքան ժամանակ է տևել<sup>4</sup>։

Փակված դպրոցների համար բանակցությունները շարունակվեցին նաև 1898 -ի վերջին, 1899 -ի սկզբին, որոնց ընթացքում կաթողիկոսը հանդիպումներ է ունենում ոչ միայն Կովկասի կառավարչապետի, այլև Գանձակի նահանգապետ Կիրեևի, Թիֆլիսի ռեալական դպրոցի տեսուչ Տերյուտինի, գեներալ-լեյտենանտ Ակալոնի, գաղտնի խորհրդական Պրիբիլի և այլոց հետ։ Բանակցությունները որևէ շշափելի արդյունքի չեն հասցում։ Ուղղակի ցարական տարրեր աստիճանավորները և հայ եկեղեցու հովվապետը հետախուզական աշխատանք էին տանում վճռական մարտից առաջ<sup>5</sup>։

Զնայած ցարական բյուրոկրատիայի արգելքներին, բացվում էին թեմական նոր դպրոցներ։ Կովկասահայության ուշադրությունը բեռվեց առանձնապես Բաքվում թեմական դպրոց բացելու փաստի վրա։ Կովկասի այդ երկրորդ հայաշատ քաղաքում Խրիմյանը վաղուց եր ցանկանում բացել թեմական դպրոց։ Թեմի կենտրոնը՝ Շամախին էր, որը հայաթափ էր լինում հաճախակի երկրաշարժների հետևանքով։ Տեղի հայությունը գաղթում էր կամ աստիճանաբար հզրացող Բաքվու, կամ՝ Թիֆլիս։ Բաքվում թեմական դպրոց բացելու աշխատանքները նախապատրաստելու համար կաթողիկոսը Բաքու ուղարկեց Խորեն Ստեփանեին։ 1897 թ. հունվարին մեկ անսվա ընթացքում վերջինիս հաջողվեց ծավալել եռանդուն գործունեություն և հանգանակել 275.000 ռուբլու ստորագրություն։ Սպասվում էր կաթողիկոսի այցը Բաքվու՝ դպրոցը բացելու նպատակով։ Գորեմիկինը ստանալով կովկասյան չինովնիկների ահազանգերը Խորեն Ստեփանեի գործունեության մասին, նամակով դիմեց Խրիմյանին՝ պահանջելով Բաքվից ետ կանչել նրան, ուղարկել Պրիմի վանքերից մեկը։ Կաթողիկոսն ստիպված կատարեց մինիստրի հրահանգը<sup>6</sup>։

1. Արարատ. 1898, N 1, էջ 37, N 2, էջ 84։

2. Արարատ. 1899, N 1, էջ 18-20։

3. Վ. Երկամյան, նշլ. աշխ., էջ 214։ Բաքվում թեմական դպրոց բացելու խնդիրը ենասահմանութեալ և միայն 1906-ի վերջին և 1907-ի սկզբին ստեղծվեցին նախապայմաններ դպրոց բացելու համար։ Կարպիկոս Կանգալը 1907-ին հայտնում էր, որ Շամախու թեմական դպրոցի բացումը կատարված առաջամատք էր կամ դպրոցի բացումը, գարծական հովատարքյան տակ (Արարատ, 1906թ., N 12, էջ 782)։ Շամախու ամայանաբար պատճենագիրը կարստիկոսի կրնականը և կրնականաբար տեղափակութեան են բարու։

Չնայած իշխանությունների արգելքներին, որոշ ժամանակ անց կաթողիկոսը մեկնեց Բաքու, ուր արժանացավ արտակարգ ընդունելության: 1898 թ. փետրվարին, երբ կաթողիկոսը Թիֆլիսում բանակցություններ էր վարում Գոլիցինի հետ, նրան է այցելում Բաքվից եկած հայ պատվիրակությունը՝ խնդրելով վեհափառին ժամանել Բաքու: Փետրվարի 4-ին կաթողիկոսը գնացքով հասնում է Գանձակ, ուր տեղի հայությունը, քաղաքագլուխը, գավառապետը և ոստիկանապետը կայարանում դիմավորում և ճանապարհում են դեպի Բաքու: Փետրվարի 5-ին Խրիմյանը Բաքվում էր: Քաղաքագլուխ Բելյավսկին, մանուկի ներկայացուցիչները, տեղի հայությունը արտակարգ դիմավորում են կաթողիկոսին, առաջինները՝ ի պաշտոնե և երկրորդը՝ սրտի ջերմությամբ: Բաքվի հայ մեծահարուստները, անգլիական Վիշառ ընկերությունը, Նորել ընկերությունը նրա պատվին կազմակերպում են շքեղ ընդունելություններ և կատարում առատ նվիրատվություններ արևմտահայ գաղթականների օգտին: Կաթողիկոսի Բալախանի այցելած ժամանակ նավթարդյունաբերողները այդ օրվա ողջ հասույթը նվիրաբերում են կաթողիկոսին, իսկ մեծահարուստ Առաքել Շատուրյանը խոստանում է տարիներ շարունակ փետրվարի 9-ից 15-ի արդյունքը նվիրել է Էջմիածնի վանքին<sup>1</sup>: Այդ հանգանակություններն ու նվիրատվությունները Խրիմյանի վայելած մեծ ժողովրդականության ապացույց են:

Բաքվում եղած ժամանակ կաթողիկոսի ուշադրությունը ըևեռվեց մշակների կյանքի ծանր պայմանների վրա: Տարբեր վայրերից գաղթած տարբեր ազգությունների՝ սոցիալական ամենացածր աստիճանի վրա գտնվող այդ ստվար շերտը արժանացավ ժողովրդանվեր կաթողիկոսի ուշադրությանը, կարեկցանքին և օգնությանը: Բաքվում նրան հյուրընկալած տան դռները բաց էին մշակների հոծ զանգվածի առաջ: Նրանց օգնության հարցը բարձրացրեց կաթողիկոսը եկեղեցիներում ունեցած բոլոր քարոզների ժամանակ:

Խրիմյանը անընդհատ անմիջական շփման մեջ էր ժողովրդի հետ: Չնայելով առաջացած տարիքին, 1898 թ. հուլիսի վերջին նա կատարում է մի երկարատև ուղևորություն՝ Տաք, Գորիս, Շուշի, Գանձասար, Անարաս, Դարձյալ Շուշի, Գորիս ուղերթով: Մեծ մասամբ ծիրով, նաև կառքով, կաթողիկոսն անցնում է պատմական Սյունիքի

1. Արարտա, 1898, N 2, էջ 84: Երկար ժամանակ հայ մեծահարուստ իսապարեց իր խոստանը և իր ծախսավոր էջմիածնի ճնմարանում պահեց մի քանի ուսանողներ:

և Արցախի հայկական գյուղերով, հանդիպումներ ունենում ժողովրդի հետ, միջոցներ ծեղած առնում ավերված վաճքերը վերակառուցելու, նրանց տնտեսական վիճակը բարելավելու ուղղությամբ<sup>2</sup>: Բոլոր վայրերում նա այցելում է նաև մուսուլմանական հոգևոր հաստատությունները, հանդիպումներ ունենում նրանց հոգևոր պետերի հետ, սեր և համերաշխություն քարոզում տարբեր ազգություններին, տարբեր կրոնների և դավանանքների անձանց:

Կաթողիկոսը մեծ ջանքեր բափեց հատկապես Մուտմի, Սաղմոսավանք, Ղաղարծին, Խոր վիրապ Վաճքերի վերակառուցման աշխատանքներին: Այսպես, «Արարատը» իր ընթերցողներին ծանոթացնում է Սաղմոսավանքի նորոգման աշխատանքներին, որը իրականացրեց կաթողիկոսը եպիսկոպոս Գրիգորիս Աղվանյանի կտակած գումարին հավելում կատարելով, գյուղացիների համար դաշտից դեպի գյուղ տանող և գյուղամիջյան ճանապարհները նորոգեց, կառուցեց անդնդախոր ծորից գյուղ տանող ճանապարհը, որը հասավ մինչև Արայի լեռան ստորոտը, դրանով օգնելով գյուղացիներին հունձի, կալու ցանքի ժամանակ հեշտությամբ երթևելով դեպի արտերը: Խրիմյան կաթողիկոսը ամենուրեք օգնության էր հասնում ժողովրդին: 1894-ի վերջին ուժգին երկրաշարժից ավերվել էին Ախալքալակի բազմաթիվ հայկական գյուղեր: Մայր Աթոռի միջոցներից մի պատկառելի գումար հասցնելով աղետյալներին, կաթողիկոսը միաժամանակ պատվիրում էր Վիրահայոց հոգևոր առաջնորդին՝ վիճակային արդյունքներից 1000 ռուբլի նպաստ հասցնել նրանց, բոլոր թեմերին հրահանգում է հանգանակություն բանալ այդ կարիքները հոգալու համար<sup>3</sup>:

Նման գործունեություն ժավալեց Խրիմյանը Շամախի քաղաքի և նրա շրջակա 23 հայկական գյուղերի երկրաշարժից ավերված բնակավայրերի վերակառուցման, նրանց բնակչների կյանքի ապահովության համար: Խրիմյանի հատուկ կոնդակով Մայր Աթոռից և Սինողից անմիջապես նպաստ է առաջնում տուժածներին, իսկ Բաքվի կենտրոնը հրահանգ է ստանում եկեղեցական գումարներից մի քանի անգամ ուղարկել Շամախին և շրջակա գյուղերի բնակչությանը<sup>3</sup>:

1. Արարտա, 1898, N 8, էջ 349, N 9, էջ 395-400:

2. Նոյեմ անգամ, 1899, N 12, էջ 505:

3. Նոյեմ անգամ, 1902թ., N 2, էջ 134:

\* \* \*

Դարավերջի տասնամյակին շարունակվում էր ցարական բյուրոկրատիայի հայկական դպրոցներ փակելու ծրագրված աշխատանքը: 168 դպրոց փակելուց հետո հերթ հասավ 30-ի չափ բաց մնացած եկեղեցական ծխական դպրոցներին: Անդրկովկասում ոչ մի հայկական տարրական դպրոց չմնաց: Դրան պատասխան գործողություն՝ կաթողիկոսի հրամանը. եկեղեցու իրավասությանը ենթարկել դպրոցական շենքերը և գույքը:

Կառավարչապետ Գոլիցինը դիմեց ներքին գործերի նախարարին բույլտվություն ստանալու հայկական դպրոցների գույքը գրավելու համար: Մինհատրների կոմիտեն 1898 թ. մարտի 17-ին քննարկեց այդ հարցը և դրական որոշումով ներկայացրեց ցարի հավանությանը: Նիկոլայ 2-րդը մարտի 26-ին հաստատեց Մինհատրների կոմիտեի որոշումը՝ հայկական դպրոցների գույքը Կովկասի ուսումնական վարչության տնօրինությանը հանձնելու մասին: Այդ որոշմանը ցարի կամ ուսունական վարչության որենքի դեմ: Բայց գործը դրանով չափարտվեց: Դեռևս բաց էին հոգևորականներ պատրաստելու կոչված դպրոցները՝ Մայր Աթոռի ճեմարանը և Ներսիսյան հոգևոր դպրոցը: Ուսումնական վարչությունը կաթողիկոսից պահանջեց մշակել նոր կամոնադրություն ճեմարանի և թեմական դպրոցների համար: Նոր - Նախիջևանի թեմական դպրոցի կամոնադրության օրինակով կազմված իր նախագծում հսրիմյանը փաստարկում և ապացուցում էր հայոց պատմության դասավանդման անհրաժեշտությունը բոլոր տիպի դպրոցներում: Պատմության դասերի փորձով հայ աշակերտներն ու ուսանողները գիտակցված կերպով կունենան ուսական կողմնորոշում, քանի որ հենց Ուսաստանն էր վերջ դրել «հայերի դարավոր տանջանքներին, որոնց մասին գրույցներն էլ կազմուն են Յայաստանի ամբողջ պատմությունը»<sup>1</sup>:

Ցարական բյուրոկրատիան լավ ընթանելով կաթողիկոսի մտադրությունը՝ տարրական դպրոցները փակելուց հետո թեմական նոր դպրոցներ բացելու մասին, ամեն մի միջոց գործադրում էր արգելելու նոր թեմական դպրոցների բացումը, ինչպես տեսանք Բաքվի օրի-

նակով: Ակսվեց դպրոցական գույքի գրավումը ոստիկանական տեղական պաշտոնյաների կողմից: Այդ իրադրությունը հուսահատության հասցրեց կաթողիկոսին, էջմիածնի հոգևոր հայութերին, որոնք, ինչոր կարծ միջոցի թեաթրաֆի լինելուց հետո, դարձյալ շտկեցին իրենց ողնաշարը: Դուսալքությունն աստիճանաբար տեղի տվեց, եկեղեցիներն սկսեցին հրաժարվել իրենց իրավասությունից դուրս եկած դպրոցները ֆինանսավորելուց: Այդ հարցերում կաթողիկոսին թիկունք էր կանգնում առանձնապես Մայր Աթոռի հայրենանվեր եպիսկոպոսներից մեկը՝ Սուքիաս Պարզյանը, որը դեռևս Մակարի կաթողիկոսության օրոք ցարական բյուրոկրատիային ցույց տված անհնազանդության համար աքսորվել էր Օրյոլ և ազգաւոր միայն Խրիմյանի միջնորդությամբ, վերջինիս կաթողիկոս օծվելուց հետո: Կաթողիկոսի հրամանով տեղական դպրոցների հոգաբարձությունները հրաժարվում էին իրենց անշարժ գույքը հանձնել Կովկասի ուսումնական վարչությանը և սկսվում էին երկարատև դատական գործընթացները: Եկեղեցին վարձում էր պատկառելի իրավաբանների, որոնք հայց էին ներկայացնում ցարական լուսավորության նախարարությանը սեփականության իրավունքը ուսումնահարելու համար: «Երդվյալ հավատարմատար Սոկրատ Սելիք-Աղայանը որպես Վրաստանի և Խմերերի հայ լուսավորչական թեմի կոնսիստորիայի հավատարմատար գանգատ ներկայացրեց Թիֆլիսի նահանգական դատարանին լուսավորության մինիստրության դեմ՝ հանձին Կովկասյան ուսումնական շրջանի հոգաբարձուի, պահանջելով, որ ճանաչվի Ախալցխա քաղաքի Ս. Փրկիչ Եկեղեցու սեփականության իրավունքը անշարժ կավածքի վրա»<sup>2</sup>: Դատը շահում է Եկեղեցին, որովհետև օտար դավանությունների կանոնադրության 1213 և 1214 հոդվածների հիման վրա հայոց Եկեղեցիների, վանքերի ու պահպանության համար նշանակված բոլոր կալվածքները մնում են հայ Եկեղեցուն և ոչ թե գանձարանի սեփականություն: Բազմաթիվ գործեր են քննարկվում նաև կառավարչական Սենատի քաղաքացիական վճռաբեկ ատյանում: Ակսված ծգծվող դատավարությունների ընթացքում շահում էր մեծ մասամբ հայ Եկեղեցին: Փաստորեն 1898 թ. մարտի 26-ի որոշումը որևէ արդյունքի չէր հասցրել ցարական բյուրոկրատիային: Անհրաժեշտ էր ծեռնարկել այլ միջոցներ: Ցարական պետական ապարատը գտավ Ելքը:

1. Արարատ, 1902, N գ.-ի, էջ 249:

1899 թ. մարտին Գոլիցինի գրասենյակը գաղտնի գեկուցագիր ներկայացրեց կառավարությանը հայ Եկեղեցու ողջ ունեցվածքը բռնադրավելու նասին, գեկուցագրին կցված էր և նախագիծը: Ներքին գործերի մինիստր Գորենիկինը մի շարք մինիստրների ներկայացրեց կառավարչապետի առաջարկություններն ու նախագիծը: Ֆինանսների մինիստր Վիտտեն բացասական պատասխան տվեց գեկուցագրին, պատճառաբանելով, որ ոտնձգությունը հայ Եկեղեցու շարժական և անշարժ գույքի նկատմանը անհարկի հուզումներ կառաջացնի ողջ աշխարհի հայության մեջ: Բացասական պատասխան ստացվեց նաև արտաքին գործերի մինիստր Մուրավյովից, որը մարտին ու ապրիլին գրած երկու նամակներով արժեքավոր ապացույցներ էր բերում նաև միջոցառման անպատեհության նասին: Սակայն Գոլիցինը չընկրկեց:

1900 թ. մայիսին տեղի ունեցավ հատուկ կոմիտեի նիստ, որին մասնակցում էին մի շարք մինիստրներ՝ ֆինանսների, հողագործության և պետական գույքի, արդարադատության, ներքին և արտաքին գործերի և Կովկասի կառավարչապետը: Թօնարկելով հայ եկեղեցու ունեցվածքի բռնագրավման հարցը, հաշվի առնելով թեր ու դեմ կարծիքները, հատուկ կոմիտեն անժամանակ հաճարեց հայ եկեղեցու գույքի բռնագրավումը, իետաձգելով այն պատեհ առիթի:

Չնայած ցարական բյուրոկրատիայի խիստ գաղտնապահությանը, անհայտ ուղիներով հանրությանը հայտնի դարձավ հայ Եկեղեցու ուժմ նախապատրաստվող հարվածի մասին: Կ.Պոլսի «Բյուզանդիանը» անգլիական մանուկից քաղվածքներ կատարեց և ահազանգեց հայությանը: Կառավարչապետը ցանկանում էր արագացնել որոշման ընդունումը, որպեսզի հայ ժողովուրդն ու Եկեղեցին անպատրաստ իշեն դիմություն:

Ամենայն հայոց կարողիկոսը վերահաս վտանգից խուսափելու համար ծեռնարկեց միջոցառումների մի շարք. աշխատանքներ տար-վեցին ծիփ դեմոկրատական սկզբունքները ուժեղացնելու, սեփական և կենեցու ունեցվածքի հարցերով ժողովրդին շահագրգռելու ուղղությամբ: 1900 թ. դեկտեմբերի 4-ին լուս տեսավ կարողիկոսի կոն-դակը, որով ստեղծվում էր հատուկ հանձնաժողով՝ Մայր Աթոռի միա-քաններից, Էջմիածնի ճեմարանի աշխարհական ուսուցիչներից՝ ծխա-կան կանոնադրությունը կազմելու նպատակով: Կոնդակի համաձայն, ունանաժողովն օգտագործեց սովորութով հաստատված տարրեր կա-յուններ. 1836 թ. «Պոլոյքեն»-ն, թենական և ծխական ուսումնա-

Իանների կանոնադրությունը, հայրապետական տարբեր կոնդակներ, Պետերուրգի և Մոսկվայի հայ Եկեղեցապատկան ստացվածքների կառավարման կանոնադրությունը և մշակեց մի կանոնադրություն, որը «արձանագրումն է տիրող կարգերի և գտված ամենայն հա- Վատարիմ ոգլո նախնավանդ կարգաց և կանոնաց սուրբ Եկեղեցվո ներո, որ ժողովրդականության ոգին է» (Կոնդակի խոսքերը):

1902 թ. մարտ-ապրիլ ամիսներին հրատարակվեց նոր մշակված կանոնադրության նախագիծը<sup>1</sup>, որը պետք է քննարկվեր և համապատասխան առաջարկություններով վերամշակված ներկայացվեր կաթողիկոսի հաստատությանը: Ներկայացված նախագծով ազգային կրթության գործը վերապահվում էր ծխական համայնքի կողմից ընտրված ժողովին:

Նախագծի հրատարակությունն արագացրեց իրադարձությունների ընթացքը: Գոլիցինն ահազանգեց մայրաքաղաք, հայտնելով, որ նախագիծը շրջանցում է բարձրագույն կանոնադրությունը և հայ հոգ-կորականության ու մտավորականությանն է հանճնում ժողովրդի տար-րական կրթության գործը: Ներքին գործերի նինիստր Միայագինի սպա-նությունից հետո նրա տեղը գրաղեցրած Պլեվեն թիկունք կանգնեց կառավարչապետի առաջարկություններին: 1903 թ. հունիսի 12 -ին ընդունվեց ցարական նոր օրենքը հայ եկեղեցու ողջ գույքի բռնագ-րավման մասին: Այդ օրենքը «աճրողջությանը ուղղված էր հայ ժո-ղովրդի և նրա մշակույթի դեմ: Դա նի արտակարգ պատժամիջոց էր ժողովրդի նկատմանը, որի միակ պաշտոնական ներկայացուցիչը փաստորեն եկեղեցին էր. Եթե վերջինս հնազանդվեր ու դառնար հլու կանակատար, ապա ցարական բյուրոկրատիայի կարծիքով ժողո-վուրդը կդիմագրկվեր և ոչինչ անել այլևս չէր կարող: Գրավելով ե-կեղեցու ունեցվածքը և դրա փոխարեն հոգկորականությանը տալով նյութական փոխհատուցում, ցարիզմը նրան ցանկանում էր դնել պե-տական նպաստ ստացող պաշտոններյան վիճակում»<sup>2</sup>, - այդպիսի գնահատական է տալիս 1903 թ. հունիսի 12 -ի օրենքին հայ մշա-կույթի լավագույն հետազոտող Վ. Երկանյանը: Ցարական բարձրա-գույն հրամանը կաթողիկոսի կարգադրությանը չհրապարակվեց հայ մամուլում: Միայն պաշտոնական «Կավկազ»-ը տպեց բարձրագույն հրա-մանը: Դայոց հայրապետը իր թերացումը բացարձի ցարի հետ հան-

1. Արարտ, 1902, № գ.-ի, լ. 209-215:

2. Տ. Երկարյան, 624. աշխ., էջ 239-240.

դիպելու և նրա հետ այդ հարցերը քննարկելու միտումով։ Միայն այն բանից հետո, եթե Պլեվեն հեռագրով հայտնեց Խրիմյանին, որ հրամանի իրագործնան հապաղումը ցարի կողմից կղիտվի իրեւ անհնարինություն, կաթողիկոսի պաշտոնական օրգան «Արարատը» օգոստոս-սեպտեմբեր միացյալ համարներում (որը լուս տեսավ սեպտեմբերի վերջին) հրապարակեց հունիսի 12-ի օրենքը հայերեն և ռուսերեն<sup>1</sup>։ Լուս տեսավ նաև ներքին գործերի մինիստր Պլեվենի հրամանը 1903 թ. հունիսի 30-ի ամսաթվով «Կանոններ հայ լուսավորչական եկեղեցու կալվածքները և դրանգլուխները պատշաճավոր մինիստրությունների տեսչությանը հանձնելու կարգի մասին»։ Օգոստոս և սեպտեմբեր ամիսներին երկու անգամ ներքին գործոց նախարարը հատուկ գրությանը դիմեց կաթողիկոսին, պահանջելով օրենքի անհապաղ գործադրությունը և ներժելով իր միջնորդությունը Նիկոլայ 2-րդի մոտ կաթողիկոսի հանդիպման համար<sup>2</sup>։ Այդ ընթացքում լուս չտեսան կաթողիկոսական պաշտոնական օրգանի հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր ամիսների համարները։

Օրենքը հանրությանը հայտնի դառնալուց հետո հայ հասարակության մեջ սկսվեց ընդգույնների և հոգումների երկարատև ընթացք։ Տարերային ժողովրդական շարժումը ոգեստու Մայր Աքորի միաբանությանը, ընդհանրապես հայ հոգևորականության ու նրա հայրապետին։ Տարբեր վայրերից Մայր Աքոր էին հասնում բազմաթիվ հանրագրեր՝ մեծաքանակ ստորագրություններով։ Բոլորը պահանջում էին կաթողիկոսից չենթարկվել կայսերական իրամանին։ Ազդեցիկ ցույցեր եղան Ալեքսանդրապոլում, Երևանում, Գանձակում և այլուր։ Կաթողիկոսն ապրեց իր դիմադրական ոգու երկրորդ երիտասարդությունը։ Նրան սատար կանգնեցին ազգային կուսակցությունները, ողջ Սինոդը և հայրենանվեր բազմաթիվ հոգևորականներ Սուքիաս Պարզյանի դեկապարությանը<sup>3</sup>։ 1903 թ. օգոստոսի 9-ին Սինոդի անդամները և ռուսահայոց թեմական առաջնորդները հավաքվեցին ու քննարկեցին և 1903 թ. հունիսի 12-ի բարձրագույն հրամանը, և ներքին գործոց մինիստրի հեռագիրը հայ եկեղեցու ունեցվածքի հանձննան կանոնների վերաբերյալ։ Համարելով այդ որոշումներն

1. Արարատ, 1903, N Ը-Թ, էջ 678-687։

2. ՀՀ ԿԹՊԱ, ֆ. 57, գ. 256, թ. 12-14։

3. Անհնագամդրյան համար նա երկրորդ անգամ արտորից, այս անգամ Օքնիքուր։ Նման պատմի արժանացան բազմաթիվ հոգևորականներ։

անարդարացի, միաժամանակ չցանկանալով ներկայանալ իրեւ անհնագանդ հոգևորականներ, պատմության և ժողովրդի առաջ չմեղանչելու պատճառաբանությամբ, նրանք հրաժարական տվին իրենց հոգևոր պաշտոններից։ Պարզյանի հետ միասին այդ փաստաթուղթն սոորագրեցին Արիստակես Սեղրակյանը՝ Աստրախանի թեմի հոգևոր առաջնորդ, Գևորգ Սուրենյանցը՝ Խներեթիայի թեմի հոգևոր առաջնորդ, Արիստակես Դավթյանը, Գրիգոր Գառնակերյանը և Սինոդի մյուս անդամները, ընդհանուր թվով 9 բարձրաստիճան հոգևորական<sup>1</sup>։

Կաթողիկոսը ցարի հետ հանդիպման մերժումն ստանալուց հետո մի քանի անգամ հատուկ գրություններով դիմեց Նիկոլայ 2 -րդին։ Առաջին անգամ հնագանդության արտաքին քողի տակ վեհափառ բացատրություններ է տալիս կայսերական մեծությանը, հայտնելով, որ ինքը իրավունք չունի տնօրինել հայ եկեղեցու ունեցվածքը, որովետև ոչ թե դրա տերն է, այլ ավանդապահ և չի կարելի այն հանձնել ցարական պետությանը, որովետև այդ ունեցվածքը առաջացել է ոչ միայն ռուսահայոց, այլ ողջ աշխարհում սփռված հայության նվիրատվություններով<sup>2</sup>։

Հայաստանի Հանրապետության Պատմության կենտրոնական պետական արխիվում պահպանվել են կաթողիկոսի՝ ցարին ուղղված մի քանի նամակներ՝ իրենց տարբերակներով։ Դրանցից մի քանիսը գրված են կաթողիկոսի կողմից, մի մասն է՝ այլ ծեռագրով, սակայն նրանց վրա ուղղումներ կատարվել են կաթողիկոսի ծեռքով։ Ակնհայտ է, որ այդ կարևոր գործի համար կաթողիկոսի մոտ աշխատել են մի շարք անձնավորություններ՝ իրավաբաններ, պատմաբաններ, անվանի հասարակական գործիչներ։ Նամակներից մեկում Խրիմյանն առանց թաքցնելու իր դժգոհությունը, բողոքում է Կովկասի կառավարչապետ Գոլիցինի հակահայկական գործելակերպից, բացահայտ նշում, որ այդ գործն սկսվել է Նիկոլայ 2-րդի «գահ բարձրանալու օրից, երբ կարծես թե հայ ազգի և եկեղեցու ճակատագիրը հեղաշրջվեց դեպի վատը»<sup>3</sup>։ Կառավարչապետի գրպարտությունների և հակահայկական գործունեության զոհը դարձան և արգելվեցին բարեկարգական ընկերությունը և նրա մասնաճյուղերը, մի ընկերություն, որը «որդին հաց էր մատակարարում, թշվարին՝ ապրուստ և պատս-

1. ՀՀ ԿԹՊԱ, ֆ. 57, գ. 256, թ. 13։

2. Դաւիթ Խալուկ, թ. 32, գ. 299, թ. 20-22։

3. Դաւիթ Խալուկ, թ. 299, թ. 8։

պարան»:Գոլիցինի գործած չարիքներից մատնանշվում է նաև հրատարական ընկերության փակումը: Ընկերության ծավալած գործունեության շնորհիվ «մտավոր բարոյական լուս էր տարածվում մեր ասիական խավար մթնոլորտում ապրող հասարակության մեջ»<sup>1:</sup> Ռուսաստանի պատմության մեջ ընդգծելով հայազգի հոգևորականների և գինվորականների կատարած նշանավոր գործերը, որոնց ներկա միապետը մոռացության է տվել, դժգոհ կաթողիկոսը դիմում է ցարին իրեն ռուսական ազատելու խնդրանքով, նպատակ ունենալով ամենայն հայոց կաթողիկոսի նստավայրը տեղափոխել այնպիսի մի երկիր, որ կկարողանար բարեխսդորեն կատարել իր խնամքին հանձնված հայ ժողովրդի և եկեղեցու հայրապետի պարտականությունները:

Պահպանված գրություններից առանձնապես ուշադրություն է գրավում մի ծավալուն փաստաթուղթ՝ հայերեն և ռուսերեն տարբերակներով և կրում է «Նորին կայերական մեծությանը. ամենախոնարի խոնդիր ի ծայրագույն պատրիարք-կաթողիկոս» խորագիրը<sup>2:</sup> Այս գրված է 1903 թ. դեկտեմբերի 12-ին, բարձրագույն հրամանից վեց ամիս անց: Մինչ այդ կաթողիկոսի դիմում-նամակները, ահազանգերը, նույնիսկ ինչ-որ ծևով մեղադրականները որևէ արդյունք չեն տվել: Սա կաթողիկոսի վերջին և ամենածավալուն փորձն էր: Փաստաթուղթը կրում է Խորիմյանի ստորագրությունը, բայց չենք տարակուսում, որ այն պատկանում է պրոֆեսիոնալ իրավաբանի և գիտակ պատմաբանի գրչին: Այդ հանգանանքը չի զրկում տվյալ փաստաթուղթը Խորիմյանի հեղինակությանը վերագրելուց, քանի որ այն կազմվել է կաթողիկոսի անմիջական հրահանգներով:

Փաստաթուղթն սկսվում է պատմական ակնարկով, մատնանշվում է արքունիքի կողմից կազմված հայ եկեղեցու կամոնադրությունը՝ «Պոլոյենի»-ն, որի ոգուն ու տառին անգամ անհարիր է 1903 թ. հունիսի 12 -ի բարձրագույն հրամանը: «Այս եղանակ գործողությանց իշխանության երկրիս չէ համեմատ օրինաց, խախտել գիրավուն իմ որպես պատասխանատու պետի եկեղեցվո, դրժե սկզբուն նվիրապետության և խանգարել զկարգապահություն»<sup>3:</sup> Կաթողիկոսն իր անհամածայնությունն է արտահայտում ցարական բյուրոկրատիային,

1. ՀՀ ԿՊԴԱ. թ. 57, գ. 299, թ. 8:

2. Նոյն տեղում, թ. 56, գ. 14, գ. 73, էջ 3-34:

3. Նոյն տեղում, էջ 5:

որը միջամտում էր հայ եկեղեցու ներքին գործերին, խախտում էր եկեղեցու պետի իրավունքները և հակասության մեջ էր մտնում ցառիզմի կողմից հաստատված օրենքների հետ: Խորիմյանը հետահայաց մատնանշում էր 1891 թ. Ներսես արքեպիսկոպոսի, 1897 -ին՝ Սիմոնի ամերաներ Նահապետ և Վահան Վարդապետների աքսորի մասին, հայտնում, որ նրանք չեն կատարել ոչ մի հանցանք, որի համար արժանի լինեն նաև պատժի: Խոկ եթե կարիք կար պատժի, ապա այն պետք է տրվեր կաթողիկոսի կողմից: Կետ առ կետ Խորիմյանը մատնանշում է իր և ողջ հայ հոգևորականության ոտնահարված իրավունքների մասին: Ի սկզբանե անտի, նույնիսկ 1836 թ. կանոնադրությամբ «դատական վճռահատությունը ամուսնական գործոց ճանաչե գծայրագույն իրավունս պատրիարք կաթողիկոսի: ...Այդ կարգ ձեռներեցությամբ դատախազի Սիմոնի 1899 ամի փոխվեցավ»<sup>1:</sup> և կառավարիչ սենատի 4-րդ դեպարտամենտը ներքին գործոց նախարարության հետ միասին ուսնահարեց հայ եկեղեցու իրավունքները, սեփականելով այդ գործը: Կաթողիկոսն անդրադառնում է նաև Կովկասի ուսումնական մասի վարչությանը, որի գործունեությունը նպատականդիված էր «տևարացնել զուտումն կրոնագիտության Դայոց ի միջանակարգն և ի ստորին իսկ վարժարանն երկրիս, որով եկեղեցին զրկե ի հնարից վճարելուց զպարտիս յուր նվիրականս»: Կաթողիկոսը բողոքում է նաև 1897 թ. «Արարատի» վրա նախնական գրաքննություն հաստատելու համար, մինչեւ դա կաթողիկոսի իրավասությանն է պատկանում: Առանձնապես ուժգին է գրված հայ եկեղեցու իրավունքները հայկական դպրոցների, կրթության և լուսավորության բնագավառում ուսնահարելու բաժնը: Խորիմյանը իրավացիորեն գտնում է, որ ռուսական կայսրության տարածքում հայ դպրոցը բարեփոխել է իր ծրագիրը, հարստացրել «համեմատ ժամանակակից պահանջմանց մանկավարժության», ռուսերենի ուսուցումը բարձրացրել անհրաժշտ մակարդակի, ավելացրել «ուսմունք հաճրօգուտք»: Սակայն բարձրագույն հրամանով եկեղեցուց խվեց իր հոտի դաստիարակության գործը և «1896 ամի ի հունվար ամսեանն չմնալով ավարտուն ուսումնական տարվույն ի փակել դպրոցս ի ծեռն ոստիկանաց»: Կաթողիկոսն ապացուցում էր, որ դպրոցների «բռնի եղանակով փակումը կարի ծանր էր և գեղջուցաներ ժողովրդյանն հայոց»<sup>2:</sup> Խորի-

1. ՀՀ ԿՊԴԱ. թ. 56, գ. 14, գ. 73, էջ 8-10:

2. Նոյն տեղում, թ. 14:

յանը ծգտում էր ապացուցել, որ հայկական դպրոցները՝ «տարրական լուսավորության սերմնարանները», նեծ գործ են կատարում երկրաճառում ռուսերենի տարածման համար:

Ուշադրություն է գրավում Խրիմյանի բողոքը 1898թ. մարտի 26-ի բարձրագույն հրամանի դեմ, որը դիվանագիտորեն ներկայացվում է իրեն «Ուսումնարանական վարչության» կողմից նյութված չարիք, որի համաձայն հայոց վանքերին և եկեղեցներին պատկանող դպրոցների գույքին պետք է տիրանար վերոհիշյալ վարչությունը: Խրիմյան արտահայտություններով հայոց հայրապետը կայսեր ուշադրությունն էր հրավիրում այն հանգամանքի վրա, որ այդ հրամանն իր ներքին իմաստով հակասության մեջ էր նստնում ցարական գլխավոր օրենքների և իմքերի իմքը ներկայացնող մասնավոր սեփականության անձեռնմխելիության օրենքի հետ: Դենց դրա շնորհիվ հայ եկեղեցին կարողացավ «պահանջել ի ծեռն դատարանաց զկալվածս եկեղեցեաց և վանորեից յապօրինի տիրապետութենե Ուսումնարանական վարչության Կովկասու»<sup>1</sup>:

Խրիմյանը քայլ առ քայլ ռուսական պետության հակահայկական միջոցառումները ներկայացնում էր իրեն առանձին նախարարությունների, վարչությունների, Կովկասի կառավարչապետի ապօրինի գործելակերպ, որոնց դեմ իր բողոքն էր ուղղում հայ եկեղեցու գլուխը, ապավիճելով ցարի «արդարանութությանը»: Սակայն Վերջին 1903 թ. հունիսի 12-ի օրենքը կաթողիկոսը ներկայացնում է իրեն նախարարների խորհրդի որոշում և դարձյալ բողոքում է, որ այդ բոլոր միջոցառումներն ուղղված են հայ եկեղեցու գոյությանը, նունիսկ հայ ժողովրդի կենսամակարդակին, որովհետև այդ հրամաններով նազովում է «քրիստոնեական բարեգործություն» կատարելու շնորհներից և իրավունքներից: Դայ եկեղեցու ունեցվածքը առաջացել է բազմաթիվ նվիրատվություններից, հանգանակություններից, բարեգործություններից: Զրկել եկեղեցուն այդ միջոցներից նշանակում էր հարցականի տակ դնել նրա գոյությունն ընդհանրապես: Այս բոլոր փաստարկներով կաթողիկոսը կարծես ցանկանում էր հաճողել Նիկոլայ 2-րդին, որ իր կողմից ստորագրված բարձրագույն հրամանը բնավ էլ նրա կամքի արտահայտությունը չէ, այլ նրա նախարարների ապօրինի գործունեության: Վկայակոչելով Եկատերինա 2-րդի 1768

թ. հուլիսի 30-ի բարձրագույն հրովարտակը հայ եկեղեցու և հովազանի իրավունքների մասին, դիմադրության ուղին բռնած հայրապետը արդարացնում է իր գործողությունները, ներկայացնելով դրանք իրեն սրբազն իրավունք և պարտականություն: Փաստաթթում վկայակոչվում է նաև Նիկոլայ առաջինի հավանությանն արժանացած «Պոլոյեն» -ն, որն արգելում է «միջամուտ լինել ի գործս եկեղեցվո Դայաստանեայց առանց գիտության պատրիարքին»: Խրիմյանը պաշտպանում էր հայոց եկեղեցու և նրա գլխի իրավունքները պետական ապարատի ոտնձգություններից: Նա բողոքում էր, որ կառավարությունը և նախարարների խորհրդը հայոց եկեղեցու հարցերը քննարկել են առանց կաթողիկոսի, հաշվի չեն նստել նրա կարծիքի հետ, չեն խորհրդակցել նրա հետ: Մատնանշելով հայ հայրենասերների և հայոց եկեղեցու ռուսական կողմնորոշման փաստը, կաթողիկոսը ժխտում է ներքին գործոց նախարար Պլեվեի և Կովկասի կառավարչապետ Գոլիցինի մեղադրանքները իր անհնազանության վերաբերյալ և ընդգծում. «Ժողովուրդ հայոց ծգտի ի միություն ընդազգին ռուսաց ի մի մարմին պետական, ...հոժարությամբ ռուսանի վարժարանս պետության և բարձր դասը նրա, դաստիարակյալք ի ծեռն գրականության և պատմության ռուսաց»:

Դայ ժողովրդի ռուսական կողմնորոշմանը կաթողիկոսը հակարում է ռուսական պաշտոնյաների հակահայ ընթացքին, մատնանշում, որ հայերի առաջ «իսպառ փակեալ են դրունք պետական ծառայության և չկարին այլևս սպասավոր լինել թագավորին յուրյանց: Ոչ պատմություն և ոչ իրողություն արդարացուցանեն զայսիահի ընթացս վարչության Կովկասու»<sup>1</sup>: Փաստաթթուրը մի մեղադրական էր ուղղված ցարական բյուրոկրատիայի դեմ, նպատակամղված՝ պաշտպանել հայ եկեղեցու նվիրատվական իրավունքները, ընդգծել հայ ժողովրդի և նրա նտավորականության դերը ողջ ռուսական կայսրության տարածքում: Ժխտելով «հայկական սեպարատիզմի» սնամեջ գաղափարը, Խրիմյանը հայ Երիտասարդության հեղափոխական նկրտումները բացատրում է բացառապես ժամանակի շնչով, Ռուսաստանում և Եվրոպայում տարածված գաղափարներով: Այդ ծավալուն փաստարուղն ավարտվում է մի համառոտ ամփոփումով, որի մեջ կաթողիկոսը ճշմարտացի գնահատական է տալիս 19-րդ դարի

1. ՀՀ ԿԹՊԱ. ֆ. 56. գ. 14. գ. 73. լց. 16:

1. ՀՀ ԿԹՊԱ. ֆ. 56. գ. 14. գ. 73. լց. 30:

Վերջի և 20-րդ դարի սկզբի ցարական կառավարության վարած քաղաքականությանը հայ ժողովրդի և եկեղեցու նկատմամբ. «Օրենսդրությունը 2 հունիսի 1897 ամի, 26 մարտի 1898 ամի և 12 հունիսի 1903 չքիսին ընդհանուր վիճակե երկրի և ոչ ի տրամադրութենե ժողովրդյան»<sup>1</sup>: Իր նեղադրականից ցարին գերծ պահելու նպատակով, նրբին դիվանագիտությամբ Խրիմյանը նկատում է, որ այդ ընդունված որոշումներն արտահայտում են ոչ թե ռուսական կառավարության կարծիքը, այլ «կանխակալ կարծեաց առանձին պաշտոնեց վարչության երկրիս»: Այդ պաշտոնյաններն են, որ ոտնահարում են հայ ժողովրդի և նրա հոգեւոր պետի իրավունքները: Չանձին հայոց վեհափառի ցարական պաշտոնյաները տեսնում էին ոչ թե **ամենայն հայոց կարողիկոսին**, այլ իրենց հավասար, կամ նույնիսկ ստորին աստիճանի վրա մի պաշտոնյայի, որն իրավունք չունի անմիջապես, առանց միջնորդի, հարաբերության մեջ մտնելու ցարի հետ, որն իր բոլոր խնդիրները պետք է լուծի տարբեր աստիճանավորների միջոցով: Պաշտպանելով իր ժողովրդի, եկեղեցու և իր պատիվը, Խրիմյանը վճռականորեն հերքում է բոլոր ամբաստանությունները հայ եկեղեցու հակապետական գործունեության վերաբերյալ, առաջարկում Պետերբուրգում «գումարել զխորհուրդ մի առանձին նախագահությամբ անդամոց ուրուք բարձրագույն պետական հաստատությանց, որ վայելիցե հատուկ վստահություն Զերդ մեծության և հրամայեսջիք տալ ինձ իրավուն մասնակցություն ի նիստս հիշատակյալ խորհրդու առ ի քննել և կշռադատել զիննիրս. զորս ի վեր անդր գրեցաք, ի վերազնել օրենսդրությունս վերջին ամաց և բացատրե, եթե ցորչափ համեմատք են այսոքիկ նպատակաց կառավարության, վիճակի Շայաստանեաց եկեղեցվո, զգացմանց հոգևորականության և հոտի նորին»<sup>2</sup>: Խրիմյանը հույս ուներ, որ այս ժավալուն բացատրագիրը ինչոր պարզություն կմտցներ գործի մեջ, ինքը հնարավորություն կստանար անձամբ ներկայանալ ցարին և տալ անհրաժեշտ բացատրություններ: Սակայն հույսները չարդարացան: Այս գրությանը ևս հետևեց արքայական լռությունը, ստացվեցին միայն ներքին գործոց նախարարի և կառավարչապետի պատասխանները, ըստ որոնց ինքնակալը պահանջում էր անհապաղ գործադրել բարձրագույն իրամանը: Նման

վարվելակերպով ցարը հասկացնում էր կաթողիկոսին, որ նա իսկապես իրավունք չունի անմիջապես դիմել իրեն:

Իր վրա վերցնելով ողջ պատասխանատվությունը, կաթողիկոսը իրահանգեց բոլոր թեմական առաջնորդներին՝ ոչինչ չհանձնել ցարական պաշտոնյաներին, իսկ բռնության դեպքում՝ տեղեկացնել իրեն:

Ալեկոծվեց ողջ աշխարհի հայությունը, ոտքի ելավ պաշտպանելու իր ժողովրդի, նրա եկեղեցու ուժնահարված շահերը: Նամակների, առաջարկությունների հսկա հոսք էին կաթողիկոսի ստացած ամենօրյա գրությունները<sup>3</sup>: Դրանցից ուշագրավ են արևմտահայ հոգևորականներից ստացված բողոքները՝ կաթողիկոսին և դիմունները՝ անմիջապես ցարին<sup>4</sup>: Այդ գրություններն ստորագրել են Կ.Պոլսի հայոց պատրիարք Մաղաքիա Օրմանյանը, կրոնական ժողովի անդամները, բարձրաստիճան հոգևորականներ՝ Գրիգորիս, Եղիշիկ, Մեսրոպ արքեպիսկոպոսները, նույնիսկ Բարդուղիմես Եպիսկոպոս Չամիչյանը: Այդ գրություններով նրանք ապացուցում էին, որ հայ եկեղեցու ունեցվածքը միայն էջմիածնին և ռուսահայոց չի պատկանում, այլ ողջ աշխարհում սփոված հայությանը, որի միջոցներով էլ ծեռք է բերվել այն: Ուստի և ցարական արքունիքը իրավունք չունի տնօրինել այն: Միաժամանակ առաջարկություններ եղան կաթողիկոսի նստավայրը Էջմիածնից փոխադրել արտասահման: Եվրոպայի թեմի հոգեոր առաջնորդ Գևորգ Յուրուցյանը հանդես էր գալիս այլ առաջարկությամբ: Աստիճանաբար վաճառել եկեղեցապատկան կալվածքները, փոխարկել դրամի և պահպանել որևէ քաղաքակիրք երկրի բանկային համակարգում (տվյալ դեպքում՝ Լոնդոնում): «Անզոր ազգաց համար մանավանդ այդպիսի երկիրներու մեջ ամենամեծ գենք պիտի լինել խորագիտություն», - մտորում էր Եպիսկոպոսը, մատնացույց անելով հրեաներին, որոնք միշտ «խելացի գտնված են պատահականության հանդեպ»<sup>5</sup>:

Գրություններ ուղարկել և ստանալ դրամց պատասխանները, կապ պահպանել և պետական պաշտոնյաների, և հասարակական գործիչների հետ, - դրամք կազմում էին կաթողիկոսի գործունեության մի մասը: Մյուսը՝ առավել նշանակալիցը, նրա ամենօրյա աշխատանքն

1. ՀՀ ԿԹՄԱ, ֆ. 56, գ. 14, զ. 73, լք 32:

2. Նոյն տեղում, լք 34:

3. Նոյն տեղում, թ. 29:

եր ժողովրդի մեջ, Անդրկովկասի հայարնակ վայրերում: Կաթողիկոսը ամենօրյա կապի մեջ էր տեղերի հոգևոր առաջնորդների, շարքային քահանաների հետ և գիտեր, թե որ վայրում ժողովուրդը ինչպես է դիմավորում եկեղեցու գույքը ցուցակագրելու եկած ցարական պաշտոնյաներին: Անդրկովկասի հայարնակ վայրերը ննան էին գործող հրաբուխների: Ժողովրդի հետ միասին կաթողիկոսին սատար եղան ազգային կուսակցությունները՝ հայ հեղափոխական դաշնակցությունը, ինչպատճեն ՀՅԴ-ի կատարած մեծ գործը: Այդ կուսակցությունն իր ծեռքը վերցրեց ժողովրդի դիմադրությունը կազմակերպելու գործը: Նրանց անմիջական մասնակցությամբ տեղի ունեցավ Ալեքսանդրապոլի ցույցը, որն ազդանշան ծառայեց ողջ հայության համար: 84-ամյա կաթողիկոսը, որի ներկայությամբ եղել էր ցույցը, «երիտասարդացած, իին հերոսական օրերը հիշելով տիտանի պես ծառացավ ամենի բռնապետության դեմ ու տվավ իր խիզախ պատասանը - «Չեմ կարող»... Չքացավ Ամենայն հայոց խոնարի հայրապետը և բեմ նետվեցավ Ամենայն հայոց Դայրիկը, իինավուրց հեղափոխականը, Վասպուրականի արծվաթև մարտնչողը»<sup>1</sup>: Կուսակցության պատմագրի այս չափազանցված գնահատականը հավաստում է հայոց հայրապետի այդ ժամանակաշրջանում ծավալած հերոսական և ազգանվեր ընթացքի մասին: Վարանդյանը բարձր գնահատելով կուսակցության գործունեությունը, պատշաճ գնահատական է տալիս կաթողիկոսի և կուսակցության միասնական գործակցությանը. «Կաթողիկոս և հեղափոխական կոմիտե նույնացան: Երկու տարբեր մարմիններ և մեկ հոգի»<sup>2</sup>:

Դաշնակցական Ռոստոմը ստանձնեց դիմադրության դեկավարությունը: Գույքի չհանձննան մասին կաթողիկոսի հրահանգը տեղերում ստացվելուն գուգընթաց բարձրացավ համաժողովրդական զայրույթի իններորդ ալիքը: Դուզումները տարածվեցին ողջ Անդրկովկասի հայարնակ վայրերում: Դիշատակության արժանի են նաև Կարսի, Գանձակի, Էջմիածնի, Բաքվի, Երևանի, Ալավերդու շրջանի գյուղերի հուզումները: Շարժման դեկավարների հետ ծերբակալվեցին և Ռուսաստան աքսորվեցին բազմաթիվ հոգևորականներ՝ վարդապետներ

և նույնիսկ եափսկոպոսներ: Իր հերթին կաթողիկոսը Սևանի վանք աքսորեց Աստրախանի և Ստավրոպոլի երեք հայ քահանաների, որոնք կամովին մասնակցել էին Եկեղեցական գույքի հանձնանը կառավարական պաշտոնյաներին: Տարբեր ուժգնություններով այդ շարժումները շարունակվեցին երկու տարի: Դրանք, փաստորեն, արևելահայության ազգային-ազատագրական շարժման դրսւորումներն էին:

Այդ շարժումներին ուղիղ համեմատական սաստկանում էին հակահայկական հալածանքները: Ցարական պաշտոնյաները ի դեմս էջմիածնի կաթողիկոսի և Մայր Աթոռի միաբանության տեսնում էին հեղափոխականորեն տրամադրված մի մարմին, որը զենք, զինամթերք և դրամական միջոցներ է հայքայթում հեղափոխականների համար: Խիստ հսկողություն սահմանվեց վանքերի և Մայր Աթոռի վրա: Ցարական պաշտոնյաները հանկարծակի, անակնկալ խուզարկում էին Մայր Աթոռի հյուրանոցը և տարբեր վանքեր: Էջմիածնի գավառապետը մի խումբ ոստիկաններով 1904թ. հունիսի 22-ի գիշերը մտնում է Էջմիածնի վանքի հյուրանոց «մարդասպաններ և ավազակներ» որոնելու նպատակով, ոչինչ չի գտնում և ծեռնունայն հեռանում է՝ հայինելով ողջ հայ հոգևորականությանը, նույնիսկ կաթողիկոսին:<sup>3</sup> Դեպքի մասին կաթողիկոսին տեղեկացնում է վանքի հյուրանոցի հյուրներն արեղան: Այդ առիթով կաթողիկոսը դիմում է Երևանի նահանգապետին, բողոքում, որ «այսօրինակ դեպք չեն առաջին նվազ, հորժան տեղական գավառական պաշտոնեայք բույլ տան ի ներկայություն խուզարկելի կամ քննելի անձանց հայինել և անվանարկել զանբողջ հոգևորականություն հայոց», և պահանջում նահանգապետից արգելել գավառական վարչության անդամների ապօրինի քայլերը: Նման դիմումները բարձրաստիճան պետական պաշտոնյաները հաճախ բողոքում էին անհետևանք, երբեմն՝ առերես դիտողություն անում տեղական աստիճանավորին, և արդարանում հայոց հայրապետի մոտ, մեղքը զցելով ստորին պաշտոնյաների ապաշնորհության վրա:

Երկու տարի շարունակվող համաժողովրդական պայքարը ցարական կառավարության արտաքին և ներքին այլ բարդ իրադրությունների շղթայի մեջ տվեց դրական արդյունք: Ներքին գործերի նա-

1. Մ. Վարանյան, «ՀՅ Դաշնակցության պատմություն», Երևան, 1992թ., էջ 278:

2. Նույն տեղում:

1. ՀՀ ԿՊԴԸ, ֆ. 56, գ. 14, գ. 78, թ. 146-147:

2. Դայն ակադ. թ. 150:

Խարար Պլեվեի սպանությունը, Կովկասի մի շարք նահանգների և գավառների տարբեր աստիճանավորների սպանությունները, նահափորձ Կովկասի կառավարչապետ Գոլիցինի դեմ, ստիպեցին Նորին կայսերական մեծությանը՝ ունկնդրել արքունիքում ցարական նախարարների շրջանում հայտնված այլ կարծիքների: Աստիճանարար մեղմանում են խստությունները: «Արարատը» 1905թ. հաղորդում էր, որ աքսորից վերադառնում են Թոնաս, Բենիկ և Խորեն վարդապետները: Աքսորավայրում գտնվող Ներսես արքեահիսկոպոսը կաթողիկոսի կողմից նշանակվում է Բեսարաբիայի թեմի հոգևոր առաջնորդ և Մեսրոպ վարդապետ Մովսիսյանի հետ գործուղվում է Պետերբուրգ՝ կաթողիկոսական խնդիրն անմիջապես ներքին գործոց նախարարին մատուցելու նպատակով: Ռուս-ճապոնական պատերազմում կրած պարտությունը, ողջ Ռուսաստանում քննկած հեղափոխական շարժումները ցարական բարձր աստիճանավորներին դարձրին առավել «գրասիր» և «հայասեր»: Ակսեցին մշակվել միջոցառումներ, հայերին հեղափոխական շարժումներից հետ պահելու նպատակով օգտագործել հայ եկեղեցու ազդեցությունը ժողովրդի վրա և նրան սիրաշահելու նպատակով բարձրացնելու հայոց հայրապետի և եկեղեցու հեղինակությունը: Ռուս հետազոտողներից մեկը գնահատելով Գոլիցինի և Նիկոլայ 2-րդի վարած քաղաքականությունը, իրավացիորեն նշում է: «Գոլիցինը ցարական բարեհանությամբ հարձակվեց այն հեղինակության դեմ, որի վրա փորձ չէին արել հարձակվելու երբեք նույնիսկ թուրքերը և պարսիկները: Նա իր ոստիկանական թաթը դրեց հայ եկեղեցու ունեցվածքի վրա: Դա ունեցավ խիստ բացասական ազդեցություն, քանի որ ողջ բարեգործությունը, ազգային մշակույթի և լուսավորության զարգացումը սերտորեն կապված է հայ եկեղեցու հետ և երբեք, ոչ մի մոլուզմանական գաղանություն չի համարձակվել խախտել այդ հեղինակությունը, ծեռք տալ նրա ունեցվածքին: Միայն ուղղափառ ռուս ցարը, «քրիստոնյաների պաշտպանը» թույլ տվեց իր կամակատարին այդպես կոպտորեն ներխուժել այդ բնագավառը»<sup>1</sup>:

Ցարիզմը ընտրեց փոքր ազգություններին հեղափոխական շարժումներից հետ պահելու ոչ ամենահարմար եղանակը: Ցարական աստիճանավորները դեռևս 1904թ. սկսեցին իրահրել հայ-ադրբեյջանական ընդհարումներ:

1. С. Любаш, Последние Романовы, Ленинград-Москва, 1924г., стр. 198-199.

\* \* \*

Ազգամիջյան ընդհարումներն Անդրկովկասում շիկացրին մթնոլորտը: Կաթողիկոսը կատարված իրադարձությունների նկատմամբ անտարբեր ականատես չեղ կարող լինել: Դայարնակ բազմաթիվ վայրերից, տեղի հոգևոր առաջնորդներից և բոլոր խավերի անձանցից ստացված հաղորդումները պատմում էին գործված ոճիրների և անմարդկային արարքների մասին: Առանձնապես սահմուկեցուցիչ էին Բաքվից և Գանձակից ստացվող լուրերը: Արդեն առաջացած տարիքում գտնվող կաթողիկոսը դարձյալ ուղևորվում է Թիֆլիս, այնտեղից Բաքու գնալու մտադրությամբ: Թիֆլիսում կայացած խորիդակցության ժամանակ որոշվում է Բաքու ուղարկել Շուսիկ եպիսկոպոսին և Միփրար վարդապետին՝ գեներալ-ադյուտանտ իշխան Ամիլախսվարիի ուղեկցությամբ:

Թիֆլիսում հայոց հայրապետին այցելեցին տեղի մահմեդական հոգևորականության ղեկավարները, ցավակցություն հայտնեցին կատարված իրադարձությունների համար: Կաթողիկոսության պաշտոնական ամսագրում լույս տեսած խմբագրական հոդվածները, որոնց հեղինակը խմբագիր Եղիշե ծայրագույն վարդապետ Մուրադյանն էր, նշում էին, որ կատարված քստմելի արարքները արտաքին իրահրումների արդյունք են: «Միևնույն երկրի զավակները, դարավոր դրացիներն ու խաղաղ աշխատող եղբայրները» մի նոր Բարդուղիմեսոյսան գիշեր արարեցին Բաքվում, որի զոհը դարձան հարյուրավոր անմեղներ. «Կովկասյան մամուլի բոլոր թղթակիցներն իրենց անգոր հայտարեցին նկարագրելու այն, ինչ որ տեղի էր ունեցել այդ շեն ու հարուստ քաղաքում... Բաքուն մոռացնել տվավ շատ ու շատ արյունոտ էջեր իին ու նորագույն պատմություննից»<sup>1</sup>: Աղետը չսահմանափակվեց միայն Բաքվով: Այն բռնկվեց ողջ Անդրկովկասում: Կովկասյան բարարների ծեռքով կատարված արյունալի խրախճանքը շարունակվեց համարյա բոլոր հայարնակ վայրերում: Չնայած հայ հոգևորականները բարձր կանգնած կրոնական մոլեռանդությունից համերաշխություն և եղբայրություն էին քարոզում, մուսուլմանական տգետ ամբոխը հեշտությամբ գործիք էր դառնում «գաղտնի, մթին ուժերի», իրականում բավականին հայտնի ցարական տարբեր աստիճանավորների ծեռքին: Առանձնապես նշվում էին Գանձակի նա-

1. Արարատ. 1905. Ն 2. Էջ 129:

հանգապետ Տակայշվիլու, Շամշադինի գավառապետ Ռենտի և այլոց անունները, որոնք հրահրում էին կովկասյան թաթարներին՝ կոտորելու հայերին<sup>1</sup>: Արցախի թեմի առաջնորդ Աշոտ Եպիսկոպոսը ուղղակի մեղադրում է ցարական իշխանություններին և՝ անգրծության համար և՝ որ հրահրում են տեղի թաթարներին Շուշիի, Վարանդայի և Խաչենի հայկական գյուղերի վրա հարձակումներ գործելու համար: Տակայշվիլու անունը մի քանի անգամ նշվում է կաթողիկոսին ուղղված և նրա կողմից ուղարկված տարրեր գրությունների մեջ: Ամեն անգամ Գանձակի նահանգապետը մեղադրվում էր իր վարած հակահայկական քաղաքականության համար, առաջարկվում էր փոխել նրան և իր օգնական Յացկիչին, որոնք ամեն կերպ աշխատում էին ծախողել հայերի ինքնապաշտպանությունը: Խրիմյանի հրահանգով Գանձակի հոգևոր փոխանորդ Կյուրեղ Վարդապետը և քաղաքագլուխ Տեր-Պետրոսյանը դիմում են փոխարքային, որպեսզի նրա ստորադաս աստիճանավորները չխոչընդոտեն հայերի ինքնապաշտպանության կազմակերպմանը և թույլտվություն էին խնդրում հայերից կազմել ժողովրդական միլիցիայի ջոկատներ, թեկուց և ոռու սպաների հրամանատարությամբ: Միայն այդ միջոցով հնարավոր կլիներ պաշտպանել նահանգի խաղաղությունը:

Իր պատվիրակների և անձամբ իր՝ կաթողիկոսի մասնակցությամբ հանդիպումներ էին լինում նուսուլման հոգևորականության հետ: Քանից համատեղ հայտարարությամբ հանդես են գալիս Կովկասի Շեյխուլ-խլամը և ամենայն հայոց կաթողիկոսը՝ համերաշխություն հորորելով երկու դարավոր հարեան ժողովուրդների միջև: Դիվանագիտական այդ քայլերից առանձին, Խրիմյանը իր ներկայացուցիչ թեմական առաջնորդների և վաճահայրերի միջոցով կազմակերպում էր հայ բնակչության ինքնապաշտպանությունը: Տարբեր վայրերից ինքնապաշտպանական ջոկատները դիմում են կաթողիկոսին, խնդրելով միջոցներ ծեռնարկել, դրամ տրամադրել ինքնապաշտպանության կազմակերպման համար: Զանգեզուրի ինքնապաշտպանական հանձնաժողովի անդամները և Սյունյաց փոխանորդ Ներսես վարդապետ Մելիք-Թանգյանը դիմում են կաթողիկոսին՝ 1000ռ. խնդիրքով, զինամթերք ծեռք բերելու համար<sup>2</sup>: Կաթողիկոսի ստացած հեռագրերը բոլոր վայրերից ունենալ նույն բովանդակությունը՝ միջոցներ հայրա-

1. ՀՀ Կ.Պ.Մ.Ա. ֆ. 56, գ. 14, գ. 299, թ. 1, 5:

2. Նայեմ տեղամ, թ. 10:

թել գենք գնելու, ինքնապաշտպանությունը կազմակերպելու համար: Լոռուց ստացվում է մի մեծ հեռագիր: «Դապաղելը կորուստ է, օգնեցեք և միջամտեք, գոնե մի քանի հարյուր բերդանկա հրացան յուր փամփուշտներով»<sup>1</sup>: Մի այլ տեղ հնչում էր կտրուկ պահանջ. «Մենք պահանջում ենք գենք մեր փողով: Մեր պատիվն ու գույքը և ոռուսաց կառավարության մեծ վարկը պահելու համար»<sup>2</sup>: Այդ հեռագիր պահանջը ստորագրել էին Օծուն, Ծաթեր, Մղարթ, Ղաչղան, Դագվի և Աքորի գյուղերի 254 բնակիչներ: Յեռագրում հաղորդվում էր նաև Շնող և Շահնազար հայկական գյուղերը բոլոր խուժանի կողմից հրդեհելու մասին: Տեղերից ստացված ոչ մի դիմում ու հեռագիր անպատասխան չի մնում: Կաթողիկոսը ամեն անգամ ինչոր ձևով օգնության է հասնում ինքնապաշտպաններին:

Ալեկոծված Կովկասը խաղաղեցնելու համար Նիկոլայ 2-րդը Կովկասում վերականգնեց փոխարքայությունը: Առաջին փոխարքա նշանակվեց ճարախիկ և փորձված դիվանագետ կոմս Միհսայիլ Խլարինովիչ Վորոնցով-Դաշկովը: Ամենայն հայոց կաթողիկոսը դարձյալ մեկնեց Թիֆլիս, նոր փոխարքային դիմավորելու և բանակցություններ վարելու հայ ժողովրդին հուզող տարրեր խնդիրների շուրջ:

Հակահայկական քաղաքականությունն աստիճանաբար մեղմանում էր: Ցարական արքունիքում ավելի բարձր էին հնչում 1903թ. նույն էր: Ցարական արքունիքում ավելի բարձր էին կարծիքների ծայները: Նորին մեծությունն ստիպված էր հաշվի նստել այդ կարծիքների հետ, իսկ նորընտիր փոխարքան Կովկասից հայտնեց իր կարծիքը. «Չի կարելի ապազգայնացնել մի ժողովրդի, որը գոյություն ունի մի քանի հազարամյակ, ունի պատմություն, ... Ունի ինքնատիպ մշակույթ, գրականություն, թերթեր, թատրոն»<sup>3</sup>: Փոխարքայի գալուստն արագացրեց կանություն, թերթեր, թատրոն: Փոխարքայի գալուստն արագացրեց վերդարձնելու մասին:

1905թ. օգոստոսի 1-ին Նիկոլայ 2-րդը ստորագրեց նոր հրաման հունիսի 12-ի օրենքի մասին: Դայ ժողովրդի բոլոր խավերի մղած գործով պահանջվեց հաղթանակով: Եկեղեցուն վերադարձվեց կրթապայքարը պսակվեց հաղթանակով: Եկեղեցական կալվածքները վերդարձնելու մասին:

Լուրջ կայծակի արագությամբ տարածվեց ողջ աշխարհում սփոված

1. ՀՀ Կ.Պ.Մ.Ա. ֆ. 56, գ. 14, գ. 299, թ. 75-77:

2. Նույն տեղամ:

3. ՀՀ Կ.Պ.Մ.Ա. ֆ. 56, գ. 14, գ. 299, թ. 279:

հայության մեջ: Տարբեր վայրերից ստացված շնորհավորական հեռագրերն ընդգծում էին կաթողիկոսի դիմադրական ոգին և արիությունը: Ստացված բոլոր հեռագրերի բովանդակությունը կարող է արտահայտել ֆրանսահայ մտավորական Արշակ Չոպանյանի հեռագիրը. «Ձեր վեհափառության կորովի և քաջ ընթացքը, ինչպես աճքող ազգի համար դիմադրությունը հաջողությանք պսակվեցան: Դանեցք ընդունել անգամ մը ևս խորին հիացման հավաստիքը»<sup>1</sup>:

Այդ հաղթանակը չի անզստացրեց Խրիմյանին: Կովկասահայությունը լողում էր արյան ծովում: Անհրաժեշտ էր մի կողմից ներքին կարգով կազմակերպել ժողովրդի ինքնապաշտպանությունը, իսկ մյուս կողմից անընդհատ դիմումներով ստիպել նոր փոխարքային գործնական միջոցառումներ մշակել և գործադրել՝ վերջ տալու ազգամիջյան ընդհարումները:

Ե՛վ անմիջական տեսակցություններով, և փոխարքային հղած բազմաթիվ գործություններով Խրիմյանը պաշտպանում էր Անդրկովկասի հայության շահերը, փոխարքայի ուշադրությունը հրավիրում այն փաստի վրա, որ կովկասահայությունը կորցնում է իր հավատը օրինական, պետական պաշտպանության նկատմամբ, լցում է ժողովրդի համբերության բաժակը, և նա ստիպված դիմում է ակտիվ գործողությունների՝ սեփական ուժերով կազմակերպում իր ինքնապաշտպանությունը: Խրիմյանի սրափ աչքը նկատում էր, որ ինքնապաշտպանության համար ձեռք առնված միջոցառումները ցարական աստիճանավորների կողմից դիտվում էին իրեւ օրինականության խախտումներ և բողոքում էր փոխարքային. «Եթե մի շարք հարձակումների, հարյուրավոր գոհերի դիմաց իմ հոտը պատասխանում է թեկուզ մի գործողությամբ, ապա դրա համար նա ծանր պատիժ է կրում»<sup>2</sup>: Ազգամիջյան ընդհարումների մեջը կաթողիկոսը նրբանկատորեն վերագրում է տեղական աստիճանավորներին և հորդորում փոխարքային՝ կանխել դրանց հակահայկական գոծողությունները: Փոխարքան իր հերինակությունը կովկասում բարձրացնելու նպատակով, գործնական քայլերի է դիմում ընդհարումներին վերջ տալու համար: Նրա հրահանգով 1906թ. փետրվարի 15-ին պետք է տեղի ունենար խորհրդակցություն, որին մասնակցելու էին 25 հոգի կովկասյան թաթարներից և 25 -ը՝ հայ հասարակության ներկայացուցիչներից: Այդ պատ-

վիրակությունների անդամները պետք է լինեն ընդհարումների վայրերից՝ Երևանից, Գանձակից, Նախիջևանից, Ալեքսանդրապոլից, Կարսից, Թիֆլիսից, Բարումից, Բաքվից, Նուխուց, Շուշից, Ղազախից, Ախալցխայից և Արդվինից: Դա պատվիրակության ցուցակը կաթողիկոսը գեներալ Մալամայի միջոցով ուղարկում է փոխարքային, մասնամասն բացատրություններ տալով ընտրված յուրաքանչյուր անձի վերաբերյալ, նշելով, որ նրանք հարգված ճարդիկ են՝ մտավորականներ, զինվորականներ, հոգևորականներ, ազգային կուսակցությունների անդամներ: Դա պատվիրակության յուրաքանչյուր անդամին ներկայացնելուց հետո Խրիմյանն իր դիտողություններն է հայտնում մահմեդական պատվիրակության կազմի մասին: 25 հայ պատվիրակների դիմաց հակառակ կողմը ներկայացնում էր 20 հոգի շիա դավանանքի անձերից և 10՝ սյունի դավանանքին պատկանողներից: Կարողիկոսը նկատում է, որ սյուննի մահմեդականները հայերի հետ չեն ընդհարվել և պահպանել են բարի դրացիական հարաբերություններ, իսկ ուժերի հարաբերակցությունը պահպանելու համար նա առաջարկում է 25 լուսավորչական դավանանքի հայերի հետ միասին խորհրդակցությանը մասնակցեն 5 հայ կաթողիկներ:

Փոխարքայի ծերնարկած միջոցառումները չեն բավարարում կաթողիկոսին: Ծանր և աղետալի վիճակում հայտնված արևելահայերին անհրաժեշտ էր շոշափելի օգնություն: Թիֆլիսում եղած ժամանակ կաթողիկոսն ստեղծեց հայ-թաթարական ընդհարումների ժամանակ տուժածներին օգնող մի հանձնաժողով՝ բաղկացած 13 անձից<sup>3</sup>: Հանձնաժողովի նախագահը վիրահայոց հոգևոր առաջնորդ Գարեգին եպիսկոպոսն էր, անդամները՝ անվանի մտավորականներ և հասարակական գործիչներ (Ավետիս Ահարոնյան, Յամբարձուն Առաքելյան, Լևոն Սարգսյան, իշխան Ալեքսանդր Արդության, բժիշկներ Ալեքսանդր Խատիսյան, Կարապետ Ստեփանոսյան և ուրիշներ: Խրիմյանը ամենայն հայոց հայրապետի ահազանգն է հնչեցնում ի սփյուռք ցրված հայության շրջաններում: Նրա կոնդակները թոշում են ամենուրեք, օգնության հրավեր է հնչում բոլոր գաղթօջախներին՝ արևելահայության վերքերին սպեղանի դնելու համար: Առանձին կոնդակներ են հղվում հայ մեծահարուստներին, Պետերբուրգի հայ եկեղեցիների խորհրդի նախագահին և անդամներին, Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի

1. ՀՀ ԿՐԴ. Ֆ. 56. գ. 14. զ. 229, թ. 13, 16, 78-79:

2. ՀԿԴ Ակադ. գ. 91. թ. 43:

հոգևոր առաջնորդներին, իրահանգելով՝ բացել հանգանակություն, շամքեր գոծադրել աղետյաներին օգնություն հասցնելու համար<sup>1</sup>: Կաթողիկոսի կոչին առաջինն արձագանքեց Յայ Բարեգործականի Ընդհանուր նախագահ Պողոս Նուբար փաշան, որը 350 անգլիական ոսկի (1920թ.), այն ժամանակվա համար պատկառելի գումար հասցրեց «կովկասահայ թշվառացյալ եղբայրներին»<sup>2</sup>: Դեռավոր Ամերիկայի մի շարք քաղաքներից՝ Բուստոն, Լյու Շոր, Բրայտոն, Մերձավոր Արևելքից՝ Ալեքսանդրիա, Եգիպտոս, Եթովպիա, Ռուսաստանի (Յալթա, Սոգոնկ, Աստրախան) հայ գաղթօջախներից, նույնիսկ Մանջուրիայի (Խարբինի) հայ գաղութից գումարներ են առաքվում տուժածներին օգնություն ցույց տալու համար<sup>3</sup>: Խրիմյանի վայելած մեծ ժողովրդականության շնորհիվ հաջողվեց հավաքել նշանակալի չափով օգնություն:

\* \* \*

Արևելահայերի հոգսերը երեք ետին պլան չեն մղում արևմտահայության ծանր վիճակի կարգավորման մտահոգությունները: Խրիմյանը տեղյակ էր արևմտահայությանը հուզող բոլոր խնդիրներին: 1907-ին սովոր դարձյալ մոլեգնում էր Արևմտյան Յայաստանում: Կաթողիկոսը դիմում է Կովկասի փոխարքային և նրա օգնական Միջկելիչին՝ թույլ տալ ընդիհանուր հանգանակություն բացել ողջ Կովկասում «հօգուտ թուրքահայ սովյալների», խոստանալով հանգանակած գումարները տեղ հասցնել Կ.Պոլսի ռուսական դեսպանության միջոցով: Այդ խոստումը նպատակ ուներ հեռացնել իրենց վրայից ցարական բյուրոկրատիայի կասկածները, թե հայոց հայրապետը օգնություն՝ զենք ու զինամքերը է հասցնում արևմտահայ հեղափոխականներին<sup>4</sup>:

Խրիմյանն անմիջական և անընդհատ կապ է պաշտպանում Կ.Պոլսի պատրիարք Մաղաքիա Օրմանյանի հետ և պահանջում. «Դեռագրով անմիջապես ճգրիտ և մանրամասն տեղեկություններ տվեք յուրաքանչյուր գավառում տիրող սովոր մասին: Մտադրություն ունինք օգնելու»<sup>5</sup>:

1. ՀՀ Կ.Պ.Ա. ֆ. 56, գ. 14, զ. 229, թ. 82, 83, 84, 85:

2. Նոյեմ աեզրմ, զ. 91, թ. 43:

3. Նոյեմ աեզրմ, զ. 79, թ. 187, զ. 88, թ. 1-3, զ. 91, թ. 5, 55, 81:

4. Նոյեմ աեզրմ, զ. 79, թ. 57, 58:

5. Նոյեմ աեզրմ, զ. 94, թ. 11:

Կաթողիկոսի ամենօրյա հոգածության օբյեկտները ոչ միայն արևմտահայ սովյալներն են, այլև կրթական գործը, դպրոցական շինարարության խնդիրները, մշակութային գործիչների և մտավորականների կյանքի բարեկավման հարցերը: Կաթողիկոսության ողջ ընթացքում Խրիմյանը սերտ հարաբերություններ է ունեցել արևմտահայ մշակութային տարրեր գործիչների հետ: Վաճեցի Յամբարձում Երանյանը, երկու աչքով կույր անձնվեր գործիչը, որ իր ողջ կյանքն աննացորդ նվիրել է վաճեցի որք երեխանների համար իր կողմից ստեղծված «խնաճատար» որբանոցին և իր անունը կրող Երանյան վարժարանին, ամեն րապես իր թիկունքին զգացել է կաթողիկոսի սատար կանգնած անձը: Խրիմյանն ամեն տարի նրան ուղարկել է որոշակի գումարներ, որոնք գործադրվել են նշված հաստատությունների համար<sup>6</sup>: Սակայն Երանյանը միակը չէր: Կաթողիկոսի ուշադրությանն են արժանացել նաև Վաճի Սանդիստյան իգական վարժարանի ուսուցչություններն ու հոգաբարձուները: Ֆինանսական օգնությունից բացի հայոց հայրապետը այդ դպրոցին օգնում էր իր խորհուրդներով՝ նրանց հետ մանրամասն քննարկելով դասավանդվող առարկաների, նրանց ժամերի և ուսուցչական կազմի խնդիրները<sup>7</sup>:

Առանձին ուսումնական հաստատություններից բացի, կաթողիկոսի խնաքն ու հոգատարությունն են զգում ողջ Վասպուրականի դպրոցներն ու որբանոցները: Վաճի առաջնորդական տեղապահ Ներսես ծայրագույն վարդապետը իր նամակներով շնորհակալություն է հայտնում կաթողիկոսին և Սանդիստյան վարժարանի, և Սալճապատի որբանոցի որբուիներին անհրաժեշտ օգնություն ցույց տալու համար: Խրիմյանը կազմակերպում է նրանց առաքվող օգնության գործը Ամերիկայի հայ համայնքի կողմից<sup>8</sup>: Վաճի դպրոցների նկատմամբ ուշադրությունը կաթողիկոսին ուղեցել է մինչև իր կյանքի վերջը: Կառուցվող ամեն մի դպրոցական շենք ավարտվել է նրա օգնության ջանքերով:

1903 թ. դժվարին օրերին Խրիմյանն իր մեջ գտել է ուժ և կարողություն օգնություն ցույց տալու Վաճի կենտրոնական վարժարանի շինարարությանը, որը կիսակառուց էր և վերահաս ձնուան

1. ՀՀ Կ.Պ.Ա. ֆ. 56, գ. 14, զ. 60, թ. 18-19, 84:

2. Նոյեմ աեզրմ, թ. 21, 83:

3. Նոյեմ աեզրմ, թ. 79, թ. 135, 140:

պայմաններում կարող էր լրիվ քայլայվել և առավել դժվարացնել գործը: Նյութական օգնություն ստանալուց հետո իրենց շնորհակալությունն են հայտնում կաթողիկոսին հոգաբարձու Մկրտիչ Մաքսա-պետյանը և Վասպուրականի առաջնորդական տեղապահ Սահակ Եպիսկոպոս Բագրատունին<sup>1</sup>:

Միայն Վասպուրականը և Վանը չեին կաթողիկոսի հոգածության կենտրոնները: Սղերդի հոգևոր առաջնորդ Փասեն վարդապետ Կլայցին օգնություն է խնդրում կաթողիկոսից հանուն իր վիճակի «եկեղեցյաց, վարժարանաց, որբանոցաց և կարուտելոց», նպաստ խնդրելով «թե ի հոգևոր, թե ի կրթական և թե ի նյութական»<sup>2</sup>: Սպասված գումարն ստանալուց հետո հոգևոր առաջնորդը իր շնորհակալությունն է հղում կաթողիկոսին<sup>3</sup>:

Դերսիմի վիճակի հոգևոր առաջնորդ Կորյուն վարդապետ Ելիդարամյանը իր երախտագիտությունն է հայտնում կաթողիկոսին, որ նրա հոգածությանն են արժանացել Չմշկածագի և Չարսանջակի հարստահարված ժողովուրդը: Վերջինիս ուղարկած գումարով նորոգվել են վիճակի 55 կիսավեր եկեղեցի: Այդ վիճակի 27.000 հայեր տեղում բարեկարգված վարժարանների շնորհիվ կարող են փորկվել քրդալեզու դառնալու վտանգից: Խրիմյանի կազմակերպած հայ մեծահարուստների հանգանակած դրամներով հնարավոր է դառնում վարժարաններ բացել, ժողովորդին «շնորհելով հայություն, սուրբ կրոն և զլեզու մայրենի»<sup>4</sup>:

Կրթական և լուսավորական գործից բացի կաթողիկոսի հոգածությունը կենտրոնանում է հարստահարվող ժողովորդի վիճակը բարեկարգելու, ազատազրկված գործիչներին ազատելու խնդիրների վրա:

Խրիմյանն անընդհատ նամակագրական կապ է պահպանում Մշո Ս. Կարապետ վանքի վանահայր Վարդան վարդապետ Յակոբյանի հետ: Յեղափոխական վանահայրը (Յեսու մականունով) գործուն մասնակցություն էր ունեցել 1894 և 1904թթ. Սասունի ապստամբություններին, իր ողջ ուժերը ներդրել Սասունի հայաբափությունն արգելելու վրա: Երկրորդ ապստամբության պարտությունից հետո հայրենասեր վանահայրը ծավալուն նամակով դիմում է կաթողիկոսին, նկարագ-

րում «Բաղիջո կուսակալության» հայության թշվար կացությունը, ելք որոնում և խնդրում կաթողիկոսին դիմել ռուսական ցարին՝ մեծ տերությունների հետ միասին, բարենորոգումներ կատարել Արևմտյան Հայաստանում, ապա թե ոչ նա գուշակում էր մռայլ ապագա<sup>1</sup>: (Ցավոք, ճիշտ էին նրա կանխատեսումները): Հայոց կաթողիկոսը ուժերը ներածին չափով օգնության ծեռք է մեկնում իր նախկին սամին, միջոցներ ուղարկում գաղթի ճանապարհը բռնած տարրոնահայությանը իր հայրենի հողի վրա պահելու համար, Ս. Կարապետի ավերված վանքը նորոգելու համար:

Կռանձին անձանցից բացի Խրիմյանը մշտական կապ է պահպանում Կ. Պոլսի պատրիարք Մաղաքիա Օրմանյանի հետ: Արևմտահայությանը հուզող բոլոր խնդիրները դառնում են նրանց քննարկումների նյութը: Կաթողիկոսի կողմից խոհենության և զգուշության համար դրվագող պատրիարքից, հարկ եղած ժամանակ պահանջվում են նաև վճռական գործողությունները: Մի փոքրիկ փաստ. 1896թ. Վանի ինքնապաշտպանական մարտերի հենց առաջին օրը՝ հունիսի 1-ին Սաադեդին փաշայի հրամանով ծերբակալվեց ուսուցչուի Զարուի Դերոյանը իր մոր և Յայնկույսների քահանա Ավետիս Շաղոյանի հետ: Վերջին երկուսը որոշ ժամանակից հետո ազատվում են, իսկ ուսուցչուին մեկ ամիս մնալուց հետո, առանց դատ ու դատաստանի աքսորվում է Դանասկոս, ուր մնում է մինչև 1907թ.: Զարուի ազատության համար կաթողիկոսը դիմում է Օրմանյանին, պահանջելով գործի դնել ողջ հնարամտությունը աքսորյալին Վան վերադարձնելու համար<sup>2</sup>: Պատրիարքն արդարանում է կաթողիկոսի մոտ, հաղորդելով, որ այդ երկար տարիների ընթացքում ինքը հոգածություն է ցուցաբերել ազսորված ուսուցչուի նկատմանը, սակայն իր ջանքերը հաջողությամբ չեն պսակվել: «Պարագաներու հույժ աննպաստ հետևանքով» յոթամյա բերդագելության դատապարտված Զարուին, ազատվել է Արդարության նախարարության կողմից՝ պայմանով, որ նրա բնակության վայրը դարձյալ մնա Դամասկոսի կուսակալությունը: Կաթողիկոսի համառ պահանջներին պատրիարքը խոստանում է օգտագործել ամեն մի միջոց Դերոյանին Վան վերադարձնելու համար:

Մի այլ առիթով կաթողիկոսը դիմում է Օրմանյանին Արևմտյան

1. ՀՀ ԿԹՊԱ, ֆ. 56, գ. 14, զ. 60, թ. 31, 51, 52, 73:

2. Դային տեղամ. թ. 32:

3. Դային տեղամ. թ. 77:

4. Դային տեղամ. թ. 33, 76:

1. ՀՀ ԿԹՊԱ, ֆ. 56, գ. 14, զ. 60, թ. 59, 79:

2. Դային տեղամ. թ. 79, թ. 124:

Հայաստանի Արծափ գյուղը քուրդ ցեղապետ Ահմեդի հարստահարություններից ազատելու պահանջով։ Նա ստիպում է Կ.Պոլսի պատրիարքին դրա համար թագրիր ներկայացնել Բ.Դուանը։ Պահանջներին ի պատասխան հայտնում են վեհափառ հայրապետին, որ իր դիմումների արդյունքը եղել է այն, որ Կարճո կուսակալության «Պայազետի տեղապահը» հաղորդել է, որ կայսերական հրամանով վերոհիշյալ ցեղապետը Կարինից ուղարկվել է «Մշո կողմերը ցկյանս մնալու համար»<sup>1</sup>։ Պատասխանն ապշեցուցիչ էր։ Թուրքական արքունիքը քուրդ ցեղապետին իր պատժելու նպատակով հայաբնակ մի վայրից տեղափոխում է մի այլ վայր՝ ավելի խիտ հայկական բնակչությամբ։ Խրիմյանի հոգածությունը տարածվում էր նաև Պարսկաստանի հայ բնակչության վրա։ Կաթողիկոսն անձանք հարաբերության մեջ էր մտնում բարձրաստիճան պարսիկ պաշտոնյանների հետ, պաշտպանելով իր հոտի շահերը։

Հայաբնակ Դարաշամք գյուղը ենթարկվում էր պարսից վարժագար ցեղերի հարձակումներին։ Տեղի առաջնորդ Մաղաքիա եպիսկոպոս Տերունյանը, Նախավկայի վանքի վանահայր Վարդապետ Ռշտունին բողոքում են հայոց կաթողիկոսին։ Իուսահատված հոգևոր առաջնորդը հրաժարական է ներկայացնում։ Խրիմյանը դիմում է Թավրիզի Ամիր Նիզամին, հանդես գալիս ի պաշտպանություն դարաշամբցիների, հասնում դրական արդյունքի և ստիպում եպիսկոպոսին։ Ետ վերցնել հրաժարականը<sup>2</sup>։ Խրիմյանին են դիմում նաև Նոր Ջուլայի բնակիչները։ Ազգային կենտրոնական վարժարանի հոգաբարձուները, բողոքելով իրենց հարևան պարսիկներից, որոնք գրավել են դպրոցի կալվածքը։ Չիգան գյուղը, դպրոցը գրկել հասույթներից։ Այս անգամ Խրիմյանը օգտագործելով առիթը՝ պարսից շահի այցելությունը Եջմիածին, նրան է դիմում և բանավոր, և գրավոր, ու Պարսկաստանում ապրող հայության համար ապահովում գոյատևելու համեմատաբար տանելի պայմաններ<sup>3</sup>։

Արխիվում պահպանվող այդ փաստաթղթերը հավաստում են Մկրտիչ Ա Վանեցի կաթողիկոսի ժողովրդանվեր ամենօրյա գործունեությունը ի բարօրություն իր հոտի։

1. ՀՀ Կրտ. վ. 56, գ. 14, գ. 60, թ. 44:

2. Նոյեմ տեղամամ. գ. 69, թ. 1, 2, 3:

3. Նոյեմ տեղամամ. թ. 12:

\* \* \*

Նա եկեղեցու կալվածքները վերադարձնելու, հայ-թաթարական ընդհարումներն ընդհատելու և խաղաղության վերահաստատման մեջ մեծ էին ամենայն հայոց կաթողիկոսի ջանքերը։ Նա գործակեց ազգային բոլոր կուսակցությունների, հասարակության տարբեր շերտերի հետ, բանակցություններ վարեց ցարական տարբեր աստիճանավորների, մուսուլման տարբեր հոգևորականների հետ։ Նրա անմիջական ջանքերի շնորհիվ 1905թ. նոյեմբերին վերացավ կաթողիկոսության օրգանի՝ «Արարատի» նախնական գրաքննությունը։ Այդ իրավունքը դարձյալ վերապահվեց կաթողիկոսին։ 1903-1905թթ. արևելահայ ազատագրական շարժումների մեջ արժանավոր տեղ գրավեցին մի շարք հայրենասեր հոգևորականներ։ Օգտվելով մամուլի ազատության հրովարտակից, «Արարատի» խմբագիր Եղիշէ ծայրագույն վարդապետ Մուրադյանը իր իսկ թարգմանությամբ «Արարատում» հրատարակեց ռուս պատմաբան Ամֆիտեատրովի հայկական հարցին նվիրված հոդվածը, «Մարդիկ, տիպեր և փաստեր» խորագրով, ուր դատապարտվում էր ցարական արքունիքի դարավերջի թուրքամետ քաղաքականությունը, հայ հասարակությանը լսելի էր դառնում Ուսւաստանի արժանավոր զավակների անկեղծ խոսքը։ 1905-1906թթ. «Արարատի» վրա գգացվում էր հեղափոխական հովերի ազդեցությունը։ Հոգևորականության քննադատությանը գրավվում էր նույն հոգևորականության արմատական-առաջադիմական հոսանքը, պահանջում բարեկավել դպրոցական ծրագիրը։ «Որքան ազատ է բնությունը, նույնքան ազատ պետք է լինի դպրոցը և բնական, կենսալի նրա ծրագիրը։ Դպրոցի ծրագիրը, նրա դասընթացը ոչ թե մեծագույն և աննպատակ առարկաներով պետք է խճողված լինեն, այլ պետք է զրայվեն բնության, մարդու կյանքի և նրա հոգու պահանջների ուսումնասիրությամբ»<sup>4</sup>։

Նոր ժամանակների շունչն էին կրում այն փորձերը, որ ծեռնարկում էր Մայր Արքուն «Հայաստանեայց եկեղեցվո» նոր սահմանադրություն ստեղծելու ուղղությամբ։ «Արարատը» գրախոսական է հրատարակում Արմեն վարդապետ Ղլտճյանի «Նախագիծ Հայաստանեայց եկեղեցվո սահմանադրության» հոդվածը, նշելով, որ Մինորի կազմած նախագծի հետ այս մեկը ևս պետք է ուղարկել թեմական ժողովներին

1. Այսաւա. 1906. Ն Բ. էջ 112:

քննարկելու համար, որպեսզի հաշվի առնվի հասարակության ամենալայն խավերի «կարծիքն ու պահանջը»։ Այդ միջոցառումները նախապատրաստում էին եկեղեցական ընդհանուր ժողով հրավիրելու գործը, որպեսզի «եկեղեցին կրկին վերածվի ավետարանական համայնքի և ոչ թե ոստիկանական կազմակերպված բյուրոկրատական իշխանություն հիշեցնի»<sup>1</sup>։ Նախապատրաստական մի քանի հոդվածներից հետո, 1906թ. մայիսին «Արարատում» տպվում է Սկրտիչ Խրիմյանի կոնդակը պատգամավորական ժողով հրավիրելու մասին։ Կոնդակում կաթողիկոսն արտահայտում էր իր ցանկությունը՝ «վերականգնել Հայաստանեայց եկեղեցվո դարերի ընթացքուն սրբությանը պահպանված իրավունքը նրա պաշտոնյաների վերաբերմանը»։ Ժողովուրդն իրավունք էր ստանում իր ներկայացուցիչների միջոցով մասնակցել ոչ միայն կաթողիկոսական և քահանայական ընտրություններին, այլև թեմական առաջնորդների, հաջորդների, գործակալների և հոգևոր վարչական հաստատությունների ընտրության։ Դայ ազգաբանակչության վիճակագրական ծցգրիտ տեղեկությունների բացակայության պատճառով կաթողիկոսը կարգադրում է վերոհիշյալ ընտրությունները կատարել կաթողիկոսական ընտրության եղանակով՝ ընդհանուր և անմիջական քվեարկությամբ։ Գերագնահատելով կոնդակը, «Արարատի» խմբագիրն այն համարում է հայ եկեղեցու «բաղձակի արշալույս», «վերածնության մի դարագլուխ և մի պայծառ էջ մեր վերջին տարիների տիսուր և արյունոտ պատմության մեջ»<sup>2</sup>։

Մայիսի 10-ի կոնդակին հաջորդեց հունիսի 17-ի կոնդակը, որը ժողովորդին տակիս էր լայն իրավունքներ քննարկելու դպրոցական և տնտեսական հարցեր։

Այդ կոնդակների հրապարակումից հետո հրաժարական ներկայացրին վիրահայոց թեմի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Սաքունյանը, Արցախի թեմի առաջնորդ Աշոտ Եպիսկոպոս Շահյանը, Աստրախանի թեմակալ Արխստակես արքեպիսկոպոս Սեղրակյանը և Շամախու առաջնորդ Անանիա Եպիսկոպոսը։ Կաթողիկոսի կոնդակով օգոստոսի 15-ին հրավիրվելիք պատգամավորական, Կենտրոնական ժողովը քննարկելու էր եկեղեցու ժողովրդականացման հարցը, գրադարձությունը էր դպրոցական, տնտեսական, ընտրական և այլ խնդիրներով։ Սակայն սպասելիքները չիրականացան։

1. Արարատ. 1906, N 4, էջ 252։

2. Դարձ անդամ. N 5, էջ 382։

Դայ հեղափոխական Դաշնակցությունը՝ արևելահայ իրականության մեջ մեծ հեղինակություն վայելող ազգային կուսակցությունը, որ 1903թ. հայ եկեղեցու կալվածքները բռնագրավելու ժամանակ կազմակերպել էր ժողովրդի դիմադրությունը, հաջորդությամբ իրականացրել էր հայության ինքնապաշտպանությունը հայ-թաթարական ընդհարումների ժամանակ, իր ծեռքը վերցրեց կենտրոնական պատգամավորական ժողովը դեկավարելու գործը։ Ժողովը բացվեց 1906թ. օգոստոսի 16-ին։ Ծերունի կաթողիկոսը հանդես եկավ բացման խոսքով, հաջորդություն մաղթեց պատգամավորներին և հեռացավ։ Ժողովի նախագահը ընտրվեց Սիմոն Զավարյանը։ Իր ծեռքը վերցնելով ժողովի դեկավարությունը, Դաշնակցությունը ցանկացավ եկեղեցական և դպրոցական գործերը կարգավորելու համար իրավիրված ժողովին տալ նախապաղամենտի տեսք։ Էջմիածնի միաբանությունը և ժողովին պատգամավոր ընտրված ուսուցիչները բողոքեցին։ Սակայն ... 1905թ. հեղափոխության շրջովիները հասել էին նաև Հայաստան։ Էջմիածնի միջոցներով տեղ հասած, նրա սեղանից օգտվող և նրա հյուրանոցում հյուրընկալվող պատգամավորները, հեղաշրջնան նոլուցքով, քննադատության ողջ պլան ուղղեցին հայ եկեղեցու և նրա սպասավորների դեմ։ Դա կարելի էր ընդունել, եթե քննադատությունը հետապնդեր վերանորոգչական և ոչ ոչնչացող նպատակներ։ Ժողովի արդյունքները հետագայում ամփոփեց «Արարատի» նոր խմբագիրը՝ Խրիմյանի կողմից նշանակված գիտնական վարդապետ (ապագայի կաթողիկոս) Գարեգին Ջովենիյանը։ Նա դատապարտեց ԴՅԴ-ի վարչակերպը՝ հայ եկեղեցու հայրենասիրական, ազգապահպան գործունեության ժխտումը։ «Նորին Սրբությունը սպասում էր, թե կերպունական ժողովը միջոցներ պիտի ցույց տա կարգավորելու մեր դպրոցական և տնտեսական գործերը չափավորության սահմանների մեջ, բայց նրա անդամները իրենց բոլոր ուժը լարել էին միայն անվանաբեկ անելու եկեղեցու հեղինակությունն ու ոչնչացնելու նրա սպասավորության նշանակությունը։ ... Մարդիկ եկել էին հեղափոխնելու անեն ինչ և այդ գգտումն այնպիսի մի ուղղություն էր ստանում, որ հայոց եկեղեցու կենսունակությունն արձատից կտրել էր սպասում»<sup>1</sup>։

Ժողովի ժամանակ հնչած ելույթները պարունակում էին բազմաթիվ հարցեր, սակայն հեռու էին դպրոցական խնդիրների քննարկումից։

1. Արարատ. 1907, N 1, էջ 33-39։

## Եմա ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ժողովում հնչած հակակառավարական ելույթները հաճգեցրին նրան, որ նահանգապետի իրամանով ոստիկանությունը ցրեց այն: Օգոստոսի 30-ին ժողովը փակվեց, սակայն բազմաթիվ խնդիրներ մնացին չքննարկված: Դայ ուսուցչությունն սպասում և պատրաստվում էր երկրորդ Կենտրոնական ժողով իրավիրելուն, որը նվիրված լիներ բացառապես ուսումնական հարցերի քննարկմանը: Խոկ մինչ այդ «Արարատը» իրատարակում է 1907թ. փետրվարի 9-ի ամսաթիվը կրող կաթողիկոսական կոնդակը, ուր տեղ էին գտնել «Դայոց Եկեղեցական տարրական դպրոցների ժամանակավոր կանոնները»: Կաթողիկոսի իրամանով այս կանոնները պետք է քննարկեին թեմերում, արվեին համապատասխան առաջարկություններ ու լրացումներ և նոր միայն սկսեին գործադրվել: Սակայն դարձյալ միջանտեց ցարական բյուրոկրատիան: Փոխարքայի իրահանգով վարչական մարմիններն սկսեցին աշխատել դպրոցական կանոնների նոր նախագծի վրա: Դայոց հայրապետն ստիպված էր 1907թ. մարտի 23-ին իրատարակել լրացուցիչ կոնդակ, ուր պատվիրում էր իր կողմից առաջարկված տարրական Եկեղեցական դպրոցների կանոնները թողնել առանց կիրարկան մինչև նոր տնօրինություն<sup>1</sup>:

\* \* \*

Ուշադրության արժանի է Խրիմյանի կաթողիկոսական գործունեության այն շրջանը, ուր նա գործում դեր է խաղում Կովկասի մահմեդականների խսլամական արմատականությունը (ֆոնդումենտալիզմը) և մոլեռանդությունը ժխտելու, չափավորելու և նրա հասցրած վեասներից իր ժողովրդին գերծ պահելու համար: Ոգեսրված ցարական կառավարության խսլամանետ քաղաքականությամբ, Անդրկովկասի մահմեդականները տարածաշրջանի դեկավարության նախաձեռնությամբ 1905թ. հոկտեմբերի 14-ին իրավիրում են հատուկ խորհրդակցություն, քննարկելու համար Անդրկովկասի մահմեդական ընակչության կրոնական պահանջմունքները բավարարելու խնդիրը: Խորհրդակցության մասնակիցները «Շյարքի Ռուս» լրագրի խմբագիր Մահմեդ աղա Շախտախտինսկու դեկավարությամբ, կազմում են մի պետիցիա՝ ուղղված Կովկասի փոխարքային, ուր բազմաթիվ «ապացույցներով» փաստարկում և պահանջում են «խղճի ազատության»

## Մերժի ԽՐԻՍՅԱՆ

կարգախոսով հնարավորություն տրվի բոլոր քաղաքացիներին՝ ցանկացած դեպքում քրիստոնեությունից անցնել մահմեդական կրոնին, գտնելով, որ հակառակ դեպքում ոռւսական կայսրության տարածքում ոտնահարվում են մուսուլմանների իրավունքները: Այդ պետիցիային կցելով իր խնդրանքը, Կովկասի փոխարքան հոկտեմբերի 18-ին դիմում է հայոց կաթողիկոսին, խնդրելով նրան՝ կարծիք հայտնել պետիցիայի վերաբերյալ<sup>2</sup>: Կաթողիկոսի պատասխանը փոխարքային ուղարկում է մեծ ուշացումով՝ 1906թ. մայիսի 6-ին: Ներողություն խնդրելով հապալման համար, Խրիմյանը մանրամասն քննարկում է և մատնանշում Կովկասի մուսուլմանների պահանջների անհեթթությունը: Վերջիններս հայտնում են, որ 1856թ. «Դատոր Դումայունով» Թուրքիայում ստեղծվել է դավանանքի ազատություն և խսլամը դավանող յուրաքանչյուր ոք կարող է ընդունել քրիստոնեական կրոնը: Կյանքի ամենամեծ մասը թուրքական կայսրությունում ապրած Խրիմյանը հերքում է այդ փաստը, ընդհակառակը՝ ընդգծում է, որ ողջ տարածքում ընթանում է բռնի մահմեդականացում: Նա ընդգծում է, որ խսլամի հետևողներն իրենց կրոնը տարածել են հրովոր սրով, խորշակի նման ոչնչացրել իրենց ճանապարհին հանդիպող ամեն մի առաջադիմական ուսուունք: Պետիցիայի հեղինակները մատնացույց են անում, որ Ղորանը և Ավետարանը (քրիստոնեությունը և խսլանը) ծագել են իրեական կրոնից, այն տարբերությամբ, որ խսլամը հարմար է ասխական ժողովուրդների հոգեբանությանը, իսկ քրիստոնեությունը՝ Եվրոպական ժողովուրդների: Խնչպես Ս. Նալբանդյանն էր ընդգծում, որ Ավետարանից կարող էր ազատության լույս ծագել, իսկ Ղորանից՝ երբեք, Խրիմյանը ևս ապացուցում է. «Խսլամն հավուրց ծագման յուրո ուժնահարեց զգաղափար ազատության, խղճի և բռնությամբ սրո հարթեց զյուր ուղին»<sup>3</sup>: Փաստերով Խրիմյանն ապացուցում է, որ Անդրկովկասի ժամանակակից մահմեդականները շատ չեն հեռացել արտասահմանյան (Թուրքիա) ազգակիցներից: Դրանց հավաստումն է Գանձակի, Նախշենի և Բաքվի թաթարների կազմակերպած նախճիրը հայերի նկատմամբ, երբ նրանց տեղի քրիստոնյաներին «սպառնալյոք նահու և տանջանաց հարկեցան զնահմեդականությունը ընդունել»<sup>3</sup>: Պետիցիայի հեղինակները հարկ եղած

1. Արարատ. 1907, N 4, էջ 299:

2. Նայի տեղում, թ. 156:

3. Նայի տեղում:

## Եմա ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

դեպքում նշում են, թե իսլամը քրիստոնեության մեջ առաջին բողոքականությունն է, սակայն մոռանում են, որ անընդհատ շեփորում են «իսլամն ամեն ինչից վեր» գաղափարը:

Դայոց հայրապետը ժխտում է բոլոր համեմատությունները իսլամի և քրիստոնեության միջև, ապացուցում, որ իսլամի մուտքը մի քանի դարով արգելակեց քաղաքակրթության զարգացումը: Սակայն, բոլոր դեպքերում, Խորհմյանը վեր էր կանգնում կրոնական անհանդուրժողականության գաղափարից, դատապարտում կրոնական մոլեռանդությունը բոլոր դավանանքների մեջ և գործնական առաջարկություններ ներկայացնում փոխարքային: Եթե քրիստոնյան ցանկություն է արտահայտում իսլամ ընդունելու համար, պետք է քննարկել, արդյոք կա՞ն հարակից պատճառներ՝ բռնադատում, նյութական շահագրգություն, գայթակղություն, մարմնական և աշխարհիկ այլ ցանկություններ: Կաթողիկոսն առաջարկում է բոլոր կրոնների և դավանանքների լիակատար ազատություն: «Զի ամենայն հպատակք՝ որպես քրիստոնեայք, այնպես և մահմեդականք՝ հավասարք իցեն առաջի օրինաց և ոչինչ լինի բռնադատություն ի վերա խղճի մտաց ուրուք, որով և ընծայեցի արժանի հարգ մահմեդական կրոնին, որպես և ամենայն քրիստոնեական դավանությանց: ... Սահմանել օրենս հաղագս գգուշությամբ քննել զամենայն դիպվածս դարձի քրիստոնեին իսլամն, ապա և ենթարկելո դատական պատասխանատվության ամենայն խստությամբ օրինաց, որոց խարեւությամբ, սպառնալեռ կամ բռնությամբ ի մոլորություն ածեալ իցե զտկարն և զբերեամիտն»<sup>1</sup>: Արտահայտելով իր նվիրվածությունը քրիստոնեական գաղափարին, վեհափառը անհաշտություն և քննադատական վերաբերմունք է դրսւում կրոնական մոլեռանդության նկատմամբ, ընդգծում իր հավատարմությունը համանարդկային բարձր անանց արժեքներին:

Դավատարմությունը քրիստոնեական գաղափարների նկատմամբ կաթողիկոսի համար չէր նշանակում հավատարմություն քրիստոնեական ծեսերին և դոգմաներին: Ամեն մի կոնկրետ առիթով նա իր վերաբերմունքն էր արտահայտում հայ եկեղեցու տարբեր ծիսակարգերին, աշխատելով դրանք համապատասխանեցնել ժամանակի ոգուն՝ ելակետ ունենալով հայ հավատացյալների անաղարտությունը և մաքրությունը: Խորհմյան կաթողիկոսի այդ ուղղությամբ կատարած

## Մկրտիչ ԽՐԻՍՅԱՆ. Հասարակական-քաղաքական գործունեությունը

քայլերից ամենակարևորը նրա կողմից նախաձեռնած այրի քահանաների կրկնակի ամուսնության թույլտվության խնդիրն էր: Առաջին հայացքից թվում է ոչ կարևոր և երկրորդական մի հարց: Ըստ հայ եկեղեցու ծիսակարգի՝ քահանայի առաջին կնոջ մահվան դեպքում նա իրավունք չուներ ամուսնանալ երկրորդ անգամ: Այդ հանգամանքը այրի քահանաներին մղում էր անվայել արաքների, անբարոյականության, ցոփ կենցաղի. դա անվանարկում և բարոյազրկում էր հայ եկեղեցին: Դաշվի առնելով հարցի կարևորությունը, 1906թ. սեպտեմբերի 12-ին կաթողիկոսը նանակ հղեց թեմական առաջնորդներին, Կ.Պոլսի և Երուսաղեմի հայոց պատրիարքներին, Կիլիկիայի կաթողիկոսին: Մինչ այդ՝ Խորհմյանն ինքուրույն վճռել էր ամուսնալուծության հարցը, շեղվել իր նախորդների դրած արգելքից: «Արարատի» խճբագիրը դրական է արտահայտվում կաթողիկոսի այդ վճռի վերաբերյալ. «Դայ եկեղեցին գոհությամբ նվիրագործեց իր սուրբ հայրապետի հայացքն ու վճիռներն այս նասին, ինչ որ կիհաստատե, թե իայ եկեղեցին համար հակակրոն չէ ամուսնալուծումի սկզբունքին օրինաց կարգ անցնիլը»<sup>1</sup>: Այժմ դրվում էր քահանաների կրկնամուսնության խնդիրը և կաթողիկոսը այս անգամ չուզեց միայնակ վճռել հայ հոգևորականությանը վերաբերող այդ կենսական հարցը: Արևելահայ և արևմտահայ պարբերականները բազմաթիվ հոդվածներ նվիրեցին այդ խնդիրի քննարկմանը: Արևմտահայ աշխարհիկ լրագրողները պահանջում են «պարկեշտ, պատվաբեր հոգևորականներ»: Դողվածագիրներ Բ. Քեչեանը, Յ. Դացունին, Ա. Սանյանը տարբեր դիրքերից առաջարկություններ արին: Սակայն հայ եկեղեցու 4 գլխավոր նվիրապետությունների հոգևոր գլուխները առանց քննարկման տվին բացասական և ոչ մի բանով չիմնավորված պատասխան: «Արարատի» խճբագիրը քննադատեց այդ պատասխանները, ընդգծելով, որ հայ եկեղեցու հոգևոր պետերը հաշվի չեն առել ժողովրդի ծայնը, անտեսել են այն: Ալեօպորդ կաթողիկոսի համար բացասական պատասխանն անընդունելի էր, սակայն տարիքը, առողջությունը տեսան իրենց գործը: Սպառված եռանդով նա այլևս չդիմադրեց: Այրի քահանաների կրկնամուսնության հարցը նա ինքնուրույն չվճռեց և ակամա համակերպեց մերժողական պատասխանին:

1. Արարատ, 1906, N 12, էջ 825:

1. ՀՀ Կոմիտ, ֆ. 56, գ. 14, գ. 220, թ. 156:

Օրեցօր սաստկացող թուրքական հալածանքներին ի պատասխան, 1904թ. Սասունը դարձյալ սկսեց ինքնապաշտպանական մարտերը: Սակայն ուժերը խփառ անհավասար էին, և չնայած սասունցիների ու հայուկների՝ ժողովրդական վրիժառուների անօրինակ սխրանքներին, արևմտահայ ազատագրական շարժումը դարձյալ տեղատվություն ապրեց: Օսմանյան կառավարությունը նոր ուժով շարունակեց հայկական կոտորածները և այդ քաջ արծվաբոյնը հայրափառ անելու քաղաքականությունը: Խորինյանը, որ ուշի-ուշով հետևում էր այդ իրադարձություններին, ծեռնարկեց նոր քայլեր հայրենակիցների վերքերին սպեղանի դնելու հանար: 1904թ. ամռանը նա պատվիրակություն ուղարկեց Եվրոպա՝ Բեռլինի դաշնագիրն ստորագրած պետությունների բարձրագույն ատյանները: Պատվիրակությունը բաղկացած էր երկու բարձրաստիճան հոգևորականներից: Ամերիկայի թեմի հայոց առաջնորդ Եպիսկոպոս Սարաջյանը և պարսկա-հնդկական թեմի առաջնորդ Եպիսկոպոս Այվատյանը (Խորինյանի նախկին սանը, Կ. Պոլսի Այվատյան գերդաստանի արժանավոր շառավիղը): Իրենց ծեռքին ունենալով կաթողիկոսի դիմումներն ուղղված վերոհիշյալ պետությունների կառավարություններին, նրանք եղան Լոնդոնում, Բեռլինում, Փարիզում, Յունայնում, Պետերբուրգում և Վաշինգտոնում, հանդիպումներ ունեցան տեղերի բարձրաստիճան պետական այրերի հետ: Յանդիպումների ընթացքում նրանք բողոքում էին մեծ պետությունների՝ հայերի նկատմամբ ցուցաբերած անտարեր դիրքորոշման համար, նշում, որ Սասունում, Մուշում, Ալաշկերտում և Վասպուրականում թուրքական բռնությունների և վայրագությունների դեմ մեծ պետությունները գործնական միջամտություն չեն կատարում: Ամենուրեք նրանք ընդգծում էին, որ հայերը ոչ թե անկախության են ծգտում, այլ պահանջում են գոյության տարրական իրավունքներ: Այս անգամ ևս մեծ պետությունների քաղաքական այրերը բավարարվեցին ցավակցական ժեստերով և սփոփանքի արտահայտություններով, ինչու մնալով իրական քայլերից<sup>1</sup>:

Մկրտիչ Խորինյան կաթողիկոսի վերջին գործը Եղավ Լահեի (Դառայի) խաղաղության 2-րդ կոնֆերանսին (1907թ. մայիս-հոկտեմբեր)

1. Այս մասին ավելի մատրամասմ՝ Հքաշիկ Միմոնյան, Անդրանիկի Ժամանակը, գիրք Ա. Երևան  
1996, էջ 199-203:

իր անունից հայոց պատվիրակություն ուղարկել՝ համապատասխան փաստաթղթերով, խնդրելով քննարկել հայոց բարենորոգումների հարցը<sup>1</sup>: Պատվիրակության կազմում էին Եվրոպայի թեմի հոգևոր առաջնորդ Գլորգ Եպիսկոպոս Յուլիոնյանը, Ավետիս Ահարոնյանը և Հովհ. Շահնազարը: Ավելի քան երկու ամս պատվիրակությունը Լահեռում հանդիպումներ ունեցավ Եվրոպական մեծ տերությունների ներկայացուցիչների հետ, նրանց ներկայացրեց կաթողիկոսի հղած փաստաթղթերը: Լահե եկան նաև Ֆրանսիայի հայասեր հասարակական գործիչներ Վիլյոր Բերարը և Պիեր Քիյարը: Նրանք ևս ջանալեցին համոզելու դեսպանախորհրդին հայկական բարենորոգումների հարցի քննարկման համար: Մեծ տերությունների ներկայացուցիչները առանձին- առանձին սիրալիր ընդունելություններով պատվեցին հայ պատվիրակներին, սակայն հայկական բարենորոգումների հարցը չդարձրին կրնֆերանսի քննարկման առարկա: Պատվիրակության անդամները նանրանասն հաշվետվություններով կաթողիկոսին հաղորդակից են դարձնում իրադարձությունների ընթացքին<sup>2</sup>, նրան ուղարկելով յոթ տերությունների պատվիրակների պատասխանները իրենց դիմումներին: Այդ մերժումից հուզված Խրիմյանը դիմում է Անգլիայի թագավոր Էդուարդին և Ռուսաստանի ցար Նիկոլայ 2-րդին: Նաճակների բովանդակությունը համարյա նույնն է: Շնորհակալություն հայտնելով ինքնակալներին իրքն քրիստոնյաների պաշտպանի, Խրիմյանը նրանց ուշադրությունը հրավիրում է արևմտահայերի ծանր իրավիճակի վրա. «20-րդ դարի սկզբում երկրագործական Դայաստանում վերածնվում է ծորտատիրությունը: Թուրքական կառավարությունը չի ծեռնարկում որևէ միջոց: Ընդհակառակը, ուրիշ պետություններից գաղթած նուևուլմաններին՝ մուհաջիրներին բնակեցնելով հայկական գյուղերում, խորացնում է հայ բնակչության տառապանքը, գրկում նրան վերջին հողակտորից»<sup>3</sup>: Տալով արևմտահայության թշվառ վիճակի մանրանասն նկարագիրը, կաթողիկոսը գտնում է, որ այդ բոլորի մասին հանգամանալից տեղյակ են պահում ցարին ռուս գործակալները: Նա խնդրում է Նիկոլայ 2-րդից իր ուշադրությունը դարձնել արևմտահայության ոլրալի կացության վրա, գտնելով, որ միայն ռուսական հզոր պետությունն է ի վիճակի ազդել թուրքական պե-

1. Альбер Вандаль, Армяне и турецкие реформы, стр. 5.

2. ՀՀ ԿՊՄԱՆ, թ. 56, գ. 14, զ. 96, պ. 2-10:

3. АВПР ф. Политархив, д. 3456 (Պատմա-բանասիրական հանդես, 1993թ., N 1-2, էջ 167):

տական ապարատի վրա: Ալեօնարդ կաթողիկոսը, որն ամբողջ կյանքում պայքարել էր ազատության, եղբայրության և հավասարության համար, այժմ իր հուսով լի աչքերը հառել էր քրիստոնյա պետությունների տիրակալներին (Ռուսաստանի և Անգլիայի) և նրանցից էր հայում իր ժողովրդի փրկությունը: Նա, որ գրել էր «թագավորների ժողով» պոեմը և մերկացնում էր այս աշխարհի հզորների քաղաքականությունը, գործի էր դնում դիվանագիտական բոլոր հնարները՝ իր ժողովրդի ֆիզիկական ապահովության համար: Չստանալով տիրակալներից որևէ պատասխան, դառնացած, հուսահատ, կյանքի 9-րդ տասնամյակում, 87 տարեկան հասակում, Խրիմյանը կնքեց իր մահկանացուն, չտեսավ իր ժողովրդի առավել մղջավանջային օրերը, նրա այգաբացը և հայ պետականության վերածնունդը:



## Ամիկովում

Մկրտիչ Խրիմյանը 19-րդ դարի երկրորդ կեսի հայ հասարակական կյանքի ականավոր դեմքերից է: Ողջ գիտակից կյանքը նա անմնացրող նվիրաբերեց հայ ժողովրդին: Գործունեության լայն ասպարեզ ունենալու համար 34 տարեկանում կուսակրոնություն ընդունեց: Առաջին գործիչն էր, որ գուտտենբերգյան հրաշագործությունը՝ տպագրական մեքենան, գործարկեց արևմտահայ մութ հորիզոններում, առաջին լույսի ճառագայթը սփոթեց խավարի թագավորությունում:

Նա վերականգնեց հայկական վանքերի հին, բարի ավանդույթը, եղավ Խորենացու, Եղիշեի, Կողբացու՝ մեր միջնադարյան հայրերի հայապահպան գործի շարունակողը նոր, գուցե ավելի դժմի պայմաններում: Վանական ամուլ շրջապատում՝ Վարագա մենաստանում, ապա Սուլբ Կարապետի վանքերում լույս տեսան «Արծիվ Վասպուրականի» և «Արծիվ Տարոնո» ամսագիրն ու երկարաթերթը: Դայր և ծագ Արծիվների թոհշքի ասպարեզը դարձավ ողջ Արևմտյան Դայաստանը: Իր ծավալած ժողովրդանվեր գործունեության համար տարոնահայության կողմից Խրիմյանն արժանացավ «Դայրիկ» փաղաքական պատվանունին, որն արժանապատվությանը կրեց ողջ կյանքի ընթացքում:

Ժողովրդանվեր գործունեության գնահատականի արտահայտությունն էր 1869-ին Կ.Պոլսի պատրիարք ընտրվելը: Արևմտահայ ժողովուրդը ընծությամբ ճանապարհեց ազգընտիր պատրիարքին, հուսալով նրա միջոցով լուծել իր ազգային խնդիրները: Նորընտիր պատրիարքը Ազգային ժողովի և գործադիր Վարչության առջև դրեց Ազգային Սահմանադրությունը արևմտահայ գավառներում գործադրելու պահանջը: Առաջին անգամ գավառական հարստահարությունների հարցը դարձավ Ազգային ժողովի քննարկման խնդիր: Մայրաքաղաքի աղայական-էֆենդիական դասը և պահպանողական հոգևորականությունը ընդունացան պատրիարքի ժողովրդավար ընթացքին և նրան դնելով գործունեության ծանր պայմանների մեջ՝ ստիպեցին հրաժարական ներկայացնել Ազգային ժողովին և Բ.Դուանը:

Դրաժմակած պատրիարքը գործուն մասնակցություն ունեցավ

համակայսերական և հայ-հասարակական կյանքին: Միդիատյան սահմանադրության գործադրման ժամանակ, նրա հեղինակի և հայ գործակցի՝ Գրիգոր Օսյանի հանձնարարությամբ, նա մշակեց և Բ. Դուռ ներկայացրեց «Ծրագիր բարենորդմանց» նախագիծը քրդական ցեղերի կյանքը բարելավելու և քրիստոնյա ժողովուրդների համար անվտանգ դարձնելու միտումով:

Թուրքական սենատի (մեջիսի) անդամ ընտրված Խրիմյանը զայրույթով ու ցասումով ընդունեց հարազատ քաղաքի շուկայի հրդեհման լուրը և նրա հոգում ժայթքեց ցավի ու տառապանքի հրարուխը՝ «Վանգույժը», որի տրամաբանական շարունակությունը եղավ 1877-78թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ քրդական ցեղերի կողմից սանձազերծված Ալաշկերտի հովտի հայության կոտորածների առթիվ երկնած «Շայգույժը»: Այդ երկու գույժերում հեղինակը ողբի, ցավի ու տառապանքի հետ միասին՝ զենքի է կոչում իր ժողովրդին, զգուշացնելով հայությանը, որ «անզեն ու անասպար» ապրելու դեպքում կկոտորվի ավագակ հարկանների կողմից: Այդ «գույժերի» պատճառով նա պատճվեց Բ. Դուռ կողմից, հեռացվեց Սենատի անդամությունից:

Խրիմյանի խորհրդով պատրիարք Ներսես Վարժապետյանը հարաբերության մեջ մտավ ռուսական մեծ իշխան Միխայիլ Նիկոլաևիչի հետ՝ Սան Ստեֆանովի ռուս-թուրքական դաշնագրում հայ ժողովրդին ինքնավարություն տալու հարցը բարձրացնելու համար: Այդ ջանքերի գնահատականն էր պատրիարքարանի կողմից՝ եվրոպական պետությունների և Բեռլինի վեհաժողովին հայկական հարցը ներկայացնող պատվիրակության ղեկավար ընտրվելը:

Դուռսահարված վեհաժողովի ընթացքից և արդյունքից, մեծ տերությունների վարած քաղաքականությունից հանգելով «իրավունքը ուժի մեջ է» կարգախոսին, ժողովրդի հետ ունեցած անմիջական հանդիպումների ժամանակ Խրիմյանն արծարծեց «Երկարե շերեփի» գաղափարը, գովեստով արտահայտվելով Զեյթունի երկարահանքերի մասին, երկար, որից կարող են ծուլել և գութան, և գենք:

Այդ մտայնությամբ երկար տարիների բացակայությունից հետո նա վերադարձավ հայրենի Վասպուրական, որպես սահմանադրապես ընտրված հոգևոր առաջնորդ և եռանդուն նախակցություն ունեցավ հայկական գավառներում խմորվող ազատագրական շարժումներին ու ստեղծված կազմակերպություններին: Գործակցելով ռուսական

փոխհյուպատոս հայազգի Կոստանդին Կամսարականի, Վանուու հաստատված Միացյալ ընկերության տեսուչ Մկրտիչ Փորթուգալյանի հետ, սերտ նամակագրական կապ պահպանելով Սեբաստիայի, Երզրումի հասարակական գործիչների հետ, Խրիմյանն իր վրա հրավիրեց Բ. Դուռ գաղտնի գործակալների ուշադրությունը, և նրա ներկայությունը վտանգավոր համարվեց այդ հայաշատ կենտրոնում: Բ. Դուռ հրամանով Խրիմյանը կանչվեց Կ. Պոլիս, փաստացի աքսոր:

Օսմանյան մայրաքաղաքում Խրիմյանը ծավալեց լեզար և անլեզար գործունեություն: Լեզար՝ Ազգային ժողովում կրոնական ժողովի ատենապետությունն էր, ուր իր ելույթներով Ազգային երեսփոխանների և Բ. Դուռ ուշադրությունն էր հրավիրում հայ ժողովրդի վիճակի օրըստօրե վատթարացման վրա: Անլեզար՝ նա կապող օղակ դարձավ Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներից Կ. Պոլիս խույս տված ազատագրական շարժման գործիչների միջև: Առանց բացառության, նա վայելում էր բոլորի վստահությունը:

1890թ. Գում-Գարուի ցույցից հետո Կ. Պոլիս եկեղեցական համագումար ժողովը Խրիմյանի ղեկավարությամբ և երեք հայրենասեր եպիսկոպոսների (Գ. Ալեարծյան, Գ. Սրվանծյանց, Մ. Իզմիրլյան) նասնակցությամբ կազմեց և Բ. Դուռ ներկայացրեց մի տեղեկագիր, որով պահանջում էր Կ. Պոլիս աքսորված հայրենասեր հոգևորականների վերադարձը հայկական գավառներ; 61-րդ հոդվածի կատարման երաշխիքները: Մատնացոյց էր արվուն Բ. Դուռ՝ հայ եկեղեցու գործերին միջանտելու քաղաքականությունը, թուրքական գրաքննության ուժեղացումը նույնիսկ հոգևոր գրականության նկատմամբ: Այդ տեղեկագրի պատճառով Խրիմյանին աքսորեցին, այս անգամ Երուսաղեմ, Գ. Սրվանծյանցը այլև ընտրվեց կրոնական ժողովի դերասանակետ, իսկ Ազգային ժողովի երեսփոխաններ ընտրված Ալեարծյանը և Իզմիրլյանը Բ. Դուռ կողմից չվավերացվեցին իրենց պաշտոնում:

1892թ. մայիսի 5-ին Եջմիածնում կայացած կաթողիկոսական ընտրություններում աքսորական Խրիմյանը միաձայն ընտրվեց Ամենայն Հայոց կաթողիկոս: Բ. Դուռ երկարատև քաշքանությունից և 17 ամիս անց, 1893թ. սեպտեմբերի 26-ին Եջմիածնում օծվեց կաթողիկոս: Խրիմյանի կաթողիկոսական շրջանը եղավ հայ ժողովրդի պատմության ծանր կաթողիկոսական շրջանը եղավ հայ ժողովրդի պատմության ծանր ժամանակահատված: 1895-96թթ. Արդուլ Համիդի սանձագրծած հայ ժամանակական կոտորածները մի կողմից, ցարական կառավարության ասկական

տիճանական հարծակումը, սկզբում՝ հայկական դպրոցների, մշակութային և բարեգործական ընկերությունների, ապա հայ Եկեղեցու շարժական և անշարժ գույքը հարջունիս բռնագրավելու օրենքը նյութ կողմից, նոր ուժ ու կորով հաղորդեցին ալեգարդ կաթողիկոսին: Ազգային կուսակցությունների սատարումով նա իր լուման ներդրեց հայապահպանության այդ դժնի պայքարում, երբ մի կայսրությունում խոշտանգվում էր ժողովրդի զավակների մատոնին: Նրապատճեն՝ իրահա:

Չնայած առաջացած տարիքին, նա օգտագործեց հարմար պահերն ու առիթները իր ժողովրդի փրկության խնդիրը միջազգային ատյաններում բարձրացնելու համար: Մահվանից մի քանի ամիս առաջ նա պատվիրակություն ուղարկեց Լահեի (Դաագա) խաղաղության կոնֆերանսին հայկական հարցը քննարկելու խնդրանքով, ապա դիմումներ հղեց Անգլիայի թագավորին և ոռւսական ցարին: Նա կնքեց իր մահկանացուն 1907թ. հոկտեմբերի 29-ին, երբ իր ժողովրդի «անդեկ ու անառագաստ նավը» չէր գտել մի խառար համարված:

93 տարի է նեզ բաժանում նրա ճահիվանից: Նրա կյանքի և գործունեության ուսումնասիրությունը, նրա՝ հայրենիքին և իր ժողովրդին բոլորանվեր ծառայելու օրինակը այսօր էլ վարակիչ է, դաստիարակիչ ներ և գալիք սերունդների համար: Իրավամբ նա արժանացել է իր ժամանակի և հետագա սերունդների հարգանքին, սիրուն և պատկառանքին: Ժամանակի հոլովույրում նրա հիշատակը ոչ թե խանրում է, այլ պայծառանում, որովհետև, իսկապես, Օրմանյանի խոսքերով՝ «Ինքն գտիչն և ստեղծիչն եղած է ազգասիրական և հայրենասիրական գգացումներուն, որոնցմով ազգը տոգորվեցավ 50-60 տարիներեւ ի վեր»<sup>1</sup>:

Նրա ծնունդից 150 տարի անց մեր ժամանակի հայ եկեղեցու արժանավոր հայրապետ Վազգեն Առաջինը Խրիմյանի անունը փառավորում է անթառամ պսակով և գնահատում նրան «իբրև անծնաղիք քաջ Հովվապետ, իբրև Դաստիարակ հայ շինականի, իբրև Նվազող հայոց դարավոր Վշտի, իբրև Ռահվիրա հայրենյաց ազատության»։ Եվ հասկանալի է, որ այսօր էլ նա մեզ հետ է, անկախ պետականություն կերտելու դժվարին ճանապարհին «նրա ոգին կսպառնի հայոց աշխարհի երկնականարին ներքև, հավատք և հույս ներշնչելով մեր ժողովրդին, լուսավոր նոր հորիզոններ բանալով դեպի ապագան»<sup>2</sup>։

## Օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ՑՈՒՑԱԿ

Արխիվ

- 1.1. Եղիշեցի Զարեսիյ անվան գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ): Թորոս Սպատյանի ֆոնդ, XII բաժին, գ. 3348, 3355, 3356, 3367, 3370, 3372, 3383, 3386, 3387:

Գյուտ Աղանյանի ֆոնդ, գ. 541, 542:

Համբարձում Սովորեցածի ֆոնդ, գ. 182, թ. 10, 11, 13, 39, 45, 49:

Սկրտիչ Խորիմյանի ֆոնդ, գ. 1, 4, 6, 14, 26, էջ 43, 51, 54 աշ, 63, 64, 65, 71, գ. 141, էջ 7, էջ 11-17, 25, 26, 27, 30, 31: գ. 142, էջ 2, 3, գ. 143, էջ 8, 111, 127, 144, գ. 149, էջ 7, գ. 371, 372, 373, 388, 390:

Գարեգին Սրբանձույանի ֆոնդ, II բաժին, գ. 391, 402, 410, 415, 466, V բաժին, գ. 4:

1.2. Հայաստանի Հարժապետության պետական կենտրոնական պատմական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՊԿՊՍ)

ֆ. 56 ցուցակ 1-2, գ. 46, թ. 1, 2, 3, 14, 14ա, 16, 35, 49, 50-51, 58, ցուցակ 3, գ. 199, թ. 14, ցուցակ 14, գ. 7, թ. 30, գ. 52, թ. 2, 5, 7, 8-9, գ. 54, թ. 25, գ. 60, թ. 18-19, 31, 32, 33, 44, 51, 59, 73, 76, 77, 79, 84, 211, գ. 69, թ. 1, 2, 3, 12, գ. 73, թ. 3-34, գ. 78, թ. 146-147, 150, գ. 79, թ. 57, 58, 124, 135, 140 187, գ. 88, թ. 1-3, գ. 94, թ. 5, 11, 43, 55, 81, գ. 96, թ. 2-10, գ. 125, թ. 12, 18, 19-22, 25, գ. 229, թ. 1, 5, 10, 13, 16, 75-77, 78-79, 80-81, 82, 83, 84, 85:

ցուցակ 17, գ. 55, թ. 94, 135, 136-137, գ. 72, թ. 12, գ. 74, թ. 4-5:

ֆ. 57 ցուցակ 1, գ. 172, թ. 3, գ. 256, թ. 12-14, 32, գ. 267, թ. 55, 56, 67, 69, 71, գ. 299, թ. 6, 8, 10, 20-22, 25, 27-29, 33:

1.3. Հին Ճեղագրերի ինստիտուտ (Մատենադարան), արխիվ. Ակրտիչ Խորիմյանի ֆոնդ

1.4. Архив Внешней Политики России (аяսուհետև АВПР)

ф. Политархив, л.167, л. 2-4, л. 962, л. 497-499: д.1625 л. 2-3, 108, д. 3456.

ф. Посольство в Константинополе, д. 1568, л. 7,10, 12, 14, 20, 24, 29-30, 31, 34, 36-37, 38-39, 41-42, 45-46, 49, 119.

ф. Армянские дела, д. 119, л. 17, 18օբ , 41, 47, Д. 135, л.17-19, д. 154, л. 3-10, д. 167, л. 2-4, д.191 л. 5,14.

1.5. Центральный Государственный Военно-исторический архив (аяսուհետև ՇԳՎИԱ) ф. 450 (Турция), д. 98, л. 37, д. 99, л. 117, д. 102, л. <sup>ա.6</sup>

### **Ձեռագիր սկզբնաղբյուրներ**

Մ. Մաշտոցի անվան մատենադարանի ձեռագրեր

- 1.6 Եթոազիր 4180, Երեմիա Տևկանց, Տոհմային հիշատակարաններ, հ. III, IV:  
 1.7 Եթոազիր 4177, Երեմիա Տևկանց, Տոհմային հիշատակարաններ, հ. V, VI:  
 1.8 Եթոազիր 3721, Երեմիա Տևկանց, Տոհմային հիշատակարաններ, հ. VII:  
 1.9 Եթոազիր 4179, Երեմիա Տևկանց, Տոհմային հիշատակարաններ, հ. VIII:  
 1.10 Եթոազիր 4182, Երեմիա Տևկանց, Տոհմային հիշատակարաններ, հ. XI:

1. ԱՐ. Օրմանյան, Ազգականութ, հ. III:

2. Եցմիածին, 1971, N 2, էջ 3:

## **Տպագիր սկզբնաղբյուրներ**

- 2.1. Ստենագրութիւնը Ազգային ժողովո, Կ. Պոլիս, 1860-1870թթ.:
- 2.2. Ստենագրութիւնը Ազգային ժողովո, Կ. Պոլիս, 1870-1874թթ.:
- 2.3. Ստենագրութիւնը Ազգային ժողովո, Կ. Պոլիս, 1878թ.:
- 2.4. Ստենագրութիւնը Ազգային ժողովո, Կ. Պոլիս, 1886-1888թթ.:
- 2.5. Ստենագրութիւնը Ազգային ժողովո, Կ. Պոլիս, 1888-1890թթ.:
- 2.6. Ստենագրութիւնը Ազգային ժողովո, Կ. Պոլիս, 1890-1896թթ.:
- 2.7. Մմենային հայոց հայրիկ (Համավասպուրական հայրենակցական միություն. Ա. Խրիմյանի նամակները Յ. Ջյուրյանի առաջարկով), Պոսթըն, 1957 թ.:
- 2.8. Դիվան հայոց պատմության, հ. ԺԳ, Հարստահարությունները Տաճկաստանում, Գ. Աղասյանի հրատարակությամբ, Թիֆլիս, 1915 թ.:
- 2.9. Գеноциդ արման և Օսմանու կամաց պատմություն, Ա. Հերսիսյան, Երևան, 1982 թ.
- 2.10. Ակրտիչ Խրիմյան, Հրահրակ Արքաթեան, Կ. Պոլիս, 1850 թ.:
- 2.11. Ակրտիչ Խրիմյան, Հրահրակ Երկրին Ավետեաց, Կ. Պոլիս, 1851 թ.:
- 2.12. Ակրտիչ Խրիմյան, Մարգարիտ արքայութեան Երկնից, Կ. Պոլիս, 1866 թ.:
- 2.13. Ակրտիչ Խրիմյան, Թիսուսի Վերջին շաբաթ և խաչ ճառ, Կ. Պոլիս, 1876 թ.:
- 2.14. Ակրտիչ Խրիմյան, Ժամանակ և խորհուրդ իւր, Կ. Պոլիս, 1876 թ.:
- 2.15. Ակրտիչ Խրիմյան, Դրախտի ընտանիք, Կ. Պոլիս, 1876 թ.:
- 2.16. Ակրտիչ Խրիմյան, Վանգոյդ, Կ. Պոլիս, 1877 թ.:
- 2.17. Ակրտիչ Խրիմյան, Հայգոյդ, Կ. Պոլիս, 1877 թ.:
- 2.18. Ակրտիչ Խրիմյան, Սիրաք և Սամվել, Կ. Պոլիս, 1878 թ.:
- 2.19. Ակրտիչ Խրիմյան, Պապիկ և Թոռոսիկ, Էջմիածին, 1894 թ.:
- 2.20. Ակրտիչ Խրիմյան, Վերջալույսի ձայներ, Էջմիածին, 1901 թ.:
- 2.21. Ակրտիչ Խրիմյան, Բարենորոգմանց ծրագիր, Էջմածին, 1909 թ.:
- 2.22. Ակրտիչ Խրիմյան, Մմբողջական Երկեր, Լյոյ Յորը, 1929 թ.:
- 2.23. Խրիմյան Հայրիկ, Երկեր, Երևան, 1992 թ.:

## **Գրականություն հայերեն**

- 3.1. Ալպոյաջան Ա., Պատմություն Սալաթիո հայոց, Պեյրութ, 1961 թ.:
- 3.2. Աղայան Ծ. Պ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1979 թ.:
- 3.3. Աճեմյան Հայկ, Հայոց Հայրիկ, Թավրիզ, 1929 թ.:
- 3.4. Ամբաստանություն Վանա Պոլոս վարդապետին վրա, Կ. Պոլիս, 1874 թ.:
- 3.5. Առաքելյան Հ., Խրիմյան Հայրիկի կաթողիկոսական ընտրությունը, Թիֆլիս, 1893 թ.:
- 3.6. Ավետյան Ա., Հայ ազգային ազատագրական հիսնամյա (1870-1920) Հուշամատյան և գորավար Սեղրակի, Փարիզ, 1954 թ.:
- 3.7. Արփիարյան Ա., Հայաստան և Կ. Պոլիս (Նոր կյանք, Լոնդոն, 1899, NN 12, 13, 14, 15, 16, 17, 18):
- 3.8. Արփիարյան Ա., Ժամանակակից պատմության էջեր, Կ. Պոլիս պահպանողական վարչությունները (Նոր կյանք, Լոնդոն, 1898 թ., NN 1, 2, 3, 5, 7, 15):
- 3.9. Բարիսուղարյան Վ., Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն, Երևան, 1985 թ.:
- 3.10. Բդեյան Սիսակ, Բդեյան Սարգիս, Հարազատ պատմություն Տարոնո, Գահիրե, 1962 թ.:

- 3.11. Գաբրիելյան Ա. Ա., Խրիմյան Հայրիկ, Լյոյ Յորը, 1892 թ.:
- 3.12. Գալոյան Գ. Ա., Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը Բեռլինի 1878 թ. վեհաժողովին նախորդող ժամանակաշրջանում (Լրաբեր հաս. գիտ., 1996, N 3):
- 3.13. Գալոյան Գ. Ա., Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը 1878 թ. Բեռլինի վեհաժողովում (Լրաբեր հաս. գիտ., 1997 թ., N 1):
- 3.14. Գյողայան Գ., Հայ քաղաքական մտքի զարգացումը և Հ. Յաշնակցությունը, Փարիզ, 1927 թ.:
- 3.15. Գյողայան Գ., Խրիմյան հայրիկ (Գաղափարների աշխարհը), Պեյրութ, 1954 թ.:
- 3.16. Գյուլվանդայան Ար., Նոր կյանքի արշալույսին (Հայրենիք, Բոստոն, 1938 թ., N 1, 2):
- 3.17. Գևորգյան Լիդա, «Սուրճ» ամսագիրը, Երևան, 1982 թ.:
- 3.18. Գևորգյան Լիդա, Գրիգոր Արծրունին և նրա «Սշակոր», Երևան, 1996 թ.:
- 3.19. Ղարբիկյան Արտօնական շարժման օրերեն, Փարիզ, 1947 թ.:
- 3.20. Երամյան Հ., Հուշարձան Վան Վասպուրականի, հ. Ա., Ալեքսանդրիա, 1929 թ.:
- 3.21. Երկանյան Վահե, Պայքար հայկական նոր դպրոցի համար Սնորկովկասում, Երևան 1970 թ.:
- 3.22. Թերզիապաշյան Ա., Արծիվը իր բույսին մեջ, Փարիզ, 1938 թ.:
- 3.23. Թեգ (Թորգոն Եպիսկոպոս Գուշակյան) Խրիմյան Հայրիկ, Փարիզ, 1925:
- 3.24. Թումայան Կ., Պատմություն Արևելյան խնդրո և առաջնորդ հայկական հարցին, Լոնդոն, 1905, հ. Ա և Բ:
- 3.25. Լեռ, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. Ա, Փարիզ, 1934 թ.:
- 3.26. Խան-Ազատ Ուութեն, Հիշողություններ Խրիմյանի մասին, Թիֆլիս, 1908 թ.:
- 3.27. Խառայոյան Ա. Ա., Արևմտահայ մամուլը և գրավնությունը Օսմանյան Թուրքիայում, Երևան, 1989 թ.:
- 3.28. Խառայոյան Ա. Ա., Հասարակական միտքը Զմյուռնիայի հայ պարբերական մամուլը (1840-1900 թթ.), Երևան, 1995 թ.:
- 3.29. Խորշուոյան Լենգորուշ, Հայկական հարցը, Երևան, 1995 թ.:
- 3.30. Խրիմյան և գործը յուր կամ հերցումն ամբաստանագրի Պողոս Վարդապետի, Կ. Պոլիս, 1874 թ.:
- 3.31. Սերենց, Կաթողիկոսություն և Խրիմյան, Թիֆլիս, 1884 թ.:
- 3.32. Սոցիկյան Ա., Հայոց Հայրիկը, Ֆրենքն, 1917 թ.:
- 3.33. Մրագիկ կազմակերպական կանոնագրի Օսմանյան Հայաստանի, Կ. Պոլիս, 1878 թ.:
- 3.34. Կարապետյան Լուսիկ, Հովհաննես Թումանյանի հասարակական գործունեությունը, Երևան, 1992 թ.:
- 3.35. Կիրակոսյան Զոն, Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը 19-րդ դարի 70-ական թթ., Երևան, 1978 թ.:
- 3.36. Կիրակոսյան Զոն, Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը 19-րդ դարի 80-ական թթ., Երևան, 1980 թ.:
- 3.37. Կոստանդյան Է., Գարեգին Արքանձույանց, Կյանքը և գործունեությունը, Երևան, 1979 թ.:
- 3.38. Հակոբյան Ա. Ա., Զմյուռնիայի պարբերական մամուլը (1839-1861 թթ.), Երևան, 1984 թ.:
- 3.39. Հակոբյան Ա. Ա., Զմյուռնիայի պարբերական մամուլը (1861-1880 թթ.), Երևան, 1987 թ.:

- 3.40. Համբարյան Ս. Ա., Սգբարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում, Երևան, 1965 թ.:
- 3.41. Համբարյան Ս. Ա., Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայության պատագրության ուղիների մասին, Երևան, 1990 թ.:
- 3.42. Հայ ժողովրդի պահմություն, հ. III (Վ. Պարսամյանի խմբ.), Երևան, 1967 թ.:
- 3.43. Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, Երևան, 1981 թ.:
- 3.44. Հովհաննեսյան Մշոտ, Նալբանդյանը և կրած ժամանակը, հ. 1, Երևան, 1955 թ.:
- 3.45. Հովհաննեսյան Ռաֆիկ, Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը (19-րդ դարի 70-80-ական թթ.), Երևան, 1965 թ.:
- 3.46. Ղազարյան Հ., Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870 թթ., Երևան, 1967 թ.:
- 3.47. Շաղարենկյան Յ., Վեհափառ Հայրիկը, Թիֆլիս, 1893 թ.:
- 3.48. Շանկույսան Հ., Հիշտակներ հայկական ձգնաժամեն, մասն Ա, Բ, Գ, Կ. Պոլիս, 1913 թ.:
- 3.49. Մալումյան Խաչատրու, Խրիմյան (Կենսագրական տեսություն), Թիֆլիս, 1892 թ.:
- 3.50. Մանուկյան Միոն, Հայոց Հայրիկ (1820-1907 թթ.), Պուենոս Այրես, 1957 թ.:
- 3.51. Մարկոսյան Ս., Արևմտահայության վիճակը 19-րդ դարի վերջին, Երևան, 1968 թ.:
- 3.52. Միփրարյան Ս., 19-րդ դարի երկրորդ կեսի արևելահայ պարբերական մամուլի պատմությունից, Երևան, 1976 թ.:
- 3.53. Մուշեղ Եպիփառոս, Մանչեսթրի հայ գաղութը, Պութոն, 1911 թ.:
- 3.54. Մուրադյան Դ. Ա., Հայաստանը ոռուսական առաջին ուսուցիչի տարիներին, Երևան, 1964 թ.:
- 3.55. Ներսիսյան Ս. Գ., Հայ ժողովրդի պայքարը թուրքական բռնապետության դեմ, Երևան, 1955 թ.:
- 3.56. Ներսիսյան Ս. Գ., Խրիմյան Հայրիկի դիմումը նիկոլայ II-ին (1907) և արխիվային այլ նյութեր (Պատմա-բանասիրական հանդես, Երևան, 1994 թ., N 1-2):
- 3.57. Նշկյան Յ. Ա., Սոսահին կայծեր, Պայքարի տպարան, 1930 թ.:
- 3.58. Չերազ Մինաս, Թե ինչ շահեցածք Պեղյինի կոնգրեսեն, Կ. Պոլիս, 1878 թ.:
- 3.59. Չերազ Մինաս, Հայաստան և Խոտայի, Կ. Պոլիս, 1879 թ.:
- 3.60. Չերազ Մինաս, Հայկական խնդիր, Վենետիկ, 1917 թ.:
- 3.61. Չոպանյան Արշակ, Ղեմքեր (Ալկրտիչ Խրիմյան), Փարիզ, 1924 թ.:
- 3.62. Չորմիսյան Լ., Համապատկեր արևմտահայ մեկ դարու պատմության, հ. Բ., Պեյրութ, 1974 թ.:
- 3.63. Պալճյան Կարապետ (Վազգեն Ա.), Խրիմյան Հայրիկ որպես դաստիարակ, Պուլքե, 1943 թ.:
- 3.64. Պարույրյան Հ., Ըստիր Երկեր, հ. 1, Երևան 1954 թ.:
- 3.65. Պեյլերյան Արթուր, Թուրքական նոր տեսություններ հայկական հարցի մասին (Պատմա-բանասիրական հանդես, Երևան, 1997 թ., N 1):
- 3.66. Պողոսյան Հ., Սասուի պատմություն, Երևան, 1980 թ.:
- 3.67. Պողոսյան Հ., Կասպարականի պատմությունից (1850-1900), Երևան, 1988 թ.:
- 3.68. Պողոսյան Ս. Կ., Գոյատևման պայքարի քառուղիներում, Երևան, 1988 թ.:
- 3.69. Պողոսյան Ս. Կ., Քրդերը և հայկական հարցը, Երևան, 1991 թ.:
- 3.70. Սասուի Կ., Ջուրտերու և հայերու ազատագրական շարժումներու փոլերը և անոնց փոխհարաբերությունները (Հայրենիք, Բուստոն, 1929 թ., N 1, 2, 1930 թ., N 3, 4, 5, 6):
- 3.71. Սասուի Կ. Ջուրդ ազգային շարժումները և հայ-քրդական հարաբերությունները (ՃԵ դարեն մինչև մեր օրերը), Պեյրութ, 1969 թ.:
- 3.72. Սասուի Կ., Պատմություն Տարոնի աշխարհի, Պեյրութ, 1957 թ.:
- 3.73. Սարուխան Ս., Հայկական խնդիրն և Սզգային Սահմանադրությունը Թուրքիայում (1860-1910), հ. Ա, Թիֆլիս, 1912 թ.:
- 3.74. Սարուխանյան Նորայր, Հայկական հարցը մինչխորհրդային հայ հասարակական-քաղաքական մտքի և պատմագրության մեջ, Երևան, 1997 թ.:
- 3.75. Սիմոնյան Հրաչիկ, Անդրանիկի ժամանակը, գիրք Ա, Երևան, 1996 թ.:
- 3.76. Վարանյան Ս., Հայկական շարժման նախապատմությունը, հ. 1, 2, Ժնև, 1912թ., 1913 թ.:
- 3.77. Վարանյան Ս., Հ.Յ. Դաշեակցության պատմություն, Փարիզ, 1932 թ., Երևան, 1992 թ.:
- 3.78. Վարդանյան Հ., Արևմտահայերի ազատագրության հարցը և հայ հասարակական-քաղաքական հոսանքները 19-րդ դարի վերջին քառորդում, Երևան, 1967 թ.:
- 3.79. Տեր-Ալրոտիչյան Երվանդ, Գանձեր Վասպուրականի, Պուրոն, 1966 թ.:
- 3.80. Րաֆֆի, Երկեր մողովածու, հ. 9, Երևան, 1958 թ.:
- 3.81. Փափազյան Ստեփան, Պատգամավորի մը հուշատետրը (Անահիտ, Փարիզ, 1906 թ., N 10-11-12):
- 3.82. Փոյայան Անդրանիկի, Խրիմյան Հայրիկ, Սյու Յորը, 1957 թ.:
- 3.83. Օրմանյան Ս. Սզգապատում, հ. Գ, Երուսաղեմ, 1927 թ.:
- 3.84. Ֆրանզյան Ե., Հայ միտքը. Խրիմյան Հայրիկ, Գահիրե, 1925 թ.:

### Ոլուսերեն

- 3.85. Ամֆիթատրով Ա. Վ. Արմանսկի վայրը, СПБ, 1906г.
- 3.86. Բրատская помошь пострадавшим в Турции армянам, Москва, 1896г. II изд., 1898г.
- 3.87. Վանձալ Ալբեր, Արմանе и турецкие реформы, перевод с французского М. Я. Алавердянц, СПБ, 1908г.
- 3.88. Գոլոբործոկ Ի. Ի., Տуրция, II изд., Москва, 1908г.
- 3.89. Ջկվիլեգով Ալ., Будущее Турецкой Армении, Москва, 1911г.
- 3.90. Երեմս Դ. Ե., Этногенез турок, Москва, 1971г.
- 3.91. История дипломатии, т. 2, Москва, 1963г.
- 3.92. Կամսարակ Կ., Вторжение шейха Обейдуллы в Персию в 1880г. (Сборник материалов по Азии, выпуск XI), СПБ, 1884г.
- 3.93. Լյուօն Ս., Последние Романовы, Ленинград-Москва, 1924г.
- 3.94. Положение армян в Турции до вмешательства держав, Москва, 1896г.
- 3.95. Շերեմետ Վ. Ի., Օսմанская империя и западная Европа, вторая третья XIX в., Москва, 1986г.

### Պարբերական մամուլ

- 4.1. Ազգատմարտ, Երևան, 1994 թ., N 49:
- 4.2. Անահիտ, Փարիզ, 1906 թ., N 10, 11, 12, 1907, N 6-7-8-9, 10, 11, 12:
- 4.3. Ասպարեզ, Լու Սնջենես, 1996 թ., N 10240:
- 4.4. Արարատ, Էջմիածին, 1872 թ., N 9, 10, 11, 1893-1907 թթ.:

- 4.5. Արծուի Վասպուրական, Կ. Պոլիս, 1855-1856 թթ.:
- 4.6. Արծուի Վասպուրական, Վարազ, 1858-1864 թթ.:
- 4.7. Արծուիկ Տարոնե, Մր. Կարապետ, 1863-1865 թթ.:
- 4.8. Արշալույս Արարատյան, Զմյուռնիա, 1873 թ., N 986:
- 4.9. Բանբեր Երևանի համալսարանի, 1970 թ., N 1:
- 4.10 Երկիր, Երևան 1994 թ., N 250:
- 4.11. Էջմիածին, Էջմիածին, 1981 թ., N 7, 1986 N 3-4, 1992 թ., N 4-5:
- 4.12. Ժամանակ, Կ. Պոլիս, 1864 թ., N 27, 38, 39, 41, 42, 45, 46:
- 4.13. Լենինյան ուղի, Երևան, 1990 թ., N 6:
- 4.14. Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 1990 թ., N 8, 1991 թ., N 3, 1996 թ., N 3, 1997 թ., N 1, 3, 1998 թ., N 2, 1999 թ., N 1:
- 4.15. Կոռուսկ, Թիֆլիս, 1860 թ., N 12:
- 4.16. Կոռուսկ Հայոց աշխարհի, Թիֆլիս, 1861 թ., N 2:
- 4.17. Հայրենիք, Թոստոն, 1929 թ., N 1, 2, 1930, N 3, 4, 5, 6, 1938, N 1, 2:
- 4.18. Հյուսիսափայլ, Սոսկվա, 1860 թ., N 11:
- 4.19. Մանզուրի Եֆքիար, Կ. Պոլիս, 1869 թ., N 892, 895, 898, 902, 918, 921, 923:
- 4.20. Մասիս, Կ. Պոլիս, 1871 թ., N 1059, 1065, 1166:
- 4.21. Մեղու, Կ. Պոլիս, 1862 թ., N 176, 177, 178, 179, 1863 թ., N 179, 208, 210, 212:
- 4.22. Մշակ, Թիֆլիս, 1873 թ., N 35, 46, 1874 թ., N 10, 1877 թ., N 87, 1878 թ., N 48, 120, 125, 215, 1881 թ., N 30, 120, 121, 122, 123:
- 4.23 Նոր կյանք, Լուսոն, 1898 թ., N 1, 2, 3, 5, 7, 15, 1899 թ., N 12, 13, 14, 15, 16, 17, 18:
- 4.24. Պատմա-բանասիրական հանդես, Երևան, 1988 թ., N 2, 1993 թ., N 12, 1994 թ., N 1-2:
- 4.25. Փորձ, Թիֆլիս, 1877 թ., N 4, 1879 թ., N 4:
- 4.26. Փուլց, Կ. Պոլիս, 1872 թ., N 733:
- 4.27. Կավказ, Տիֆլիս, 1893 թ., N 160, 192, 238, 258:
- 4.28. Նորու օբզրուն, Տիֆլիս, 1884 թ., N 41, 117:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	5	
<b>ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ.</b>		
ՄԿՐՏԻՉ ԽՐԻՍՏԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲԱՆԿՈՐՈՒՄԸ.....	39	
<b>ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ.</b>		
Մ. ԽՐԻՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՐԱԳՈՒՄ.....	59	
<b>ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ.</b>		
Մ. ԽՐԻՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐՈՆՈՒՄ.....	111	
<b>ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ.</b>		
ԿՈՍԱՆԴՐԱՌՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԸ.....	151	
<b>ԳԼՈՒԽ ՔԻՆԳԵՐՈՐԴ.</b>		
Մ. ԽՐԻՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՐԱՎԱՐՎԵԼՈՒՑ ՔԵՏԸ.....	201	
<b>ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ.</b>		
ՄԿՐՏԻՉ ԽՐԻՍՏԱՆԸ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՀՈԳԵՎՈՐ ԱՌԱՋՆՈՐԴ.....	279	
<b>ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ.</b>		
ՎՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ.....	349	
<b>Ամփոփում.</b> .....		437
Օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցուցակ.....	441	

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
ИНСТИТУТ ИСТОРИИ

ЭММА АШТОВНА КОСТАНДЯН  
**МКРТЬЧ ХРИМЯН**  
Общественно-политическая  
деятельность

ԵՍՍԱ ԱՇՈՏԻ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ  
ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄՅԱՆ  
Հաստարակական-քաղաքական  
գործունեությունը

Խմբագիր՝ պատմ. զիտ. դոկտ., պրոֆեսոր ԱԼԲԵՐՏ ԱՐՄԵՆԻԿԻ ԽԱՊՈՅԱՅՆ  
Տեխնիկական խմբագիր՝ ՄԻՔԱՅԵԼ ՄԻՐԻԶՅԱՆ  
Սրբագրիչ՝ ՆԱՐԻՆԵ ՍԱՆՈՅԱՆ

Հրատարակչության տնօրեն՝ ՍՈԿՐԱՏ ՄԿՐՏՅԱՆ  
Հրատարակչության խմբագիր՝ ՄԱՃԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Տպագրություն՝ օֆսեր  
Թուրքը՝ օֆսեր  
Չափը՝ 60x84/16  
Ծավալը՝ 28 տպ. մամոլ  
Տպաքանակը՝ 1000  
Գինը՝ պայմանագրային

«ԶԱԿԱՎԱԿ-97» հրատարակչություն,  
Երևան, Մարշալ Բաղրամյան 3: Հեռ. 56-30-82  
«Զանգակ-97» հրատարակչության տպարան,  
Երևան, Վարդանանց փակուղի 8:  
E-mail: zangak@arminco.com